Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1979

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ԵՐԿԵՐ

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՍԻԱՄԱՆԹՈ

ԵՐԿԵՐ

Ар 1
Ս 47

Կազմեց, առաջաբանները,
ծանոթագրությունները և բառարանները գրեց
ՀԵԿՏՈՐ ՌՇՏՈՒՆԻՆ

Խմբագիր՝ Լ. Ռ. ԳԱԼԱՑԿԱՆ

70304 (562)
Ս. Վ. ———————— 79 «Տ»
705 (01) 79

© «Սովետական գրող» հրատարակչություն,
կազմողի, առաջաբանի, ծանոթագրությունների,
բառարանի համար, 1979

ՍԻԱՄԱՆԹՈ

ԵՐԿԵՐ

ՍԻԱՄԱՆԹՈ

Ատոմ Յարճանյան

Քսաներորդ դարի սկզբից նկատելի բեկում է առաջանում հայ պոեզիայում։ Ազգային և եվրոպական մոդեռն արվեստի խաչաձևման հողի վրա ակնառու է դառնում սիմվոլիզմի հայկական գպրոցի ձևավորումը, որ բնութագրվում է գեղարվեստական մեծ բովանդակությամբ և գրական ուրույն տեխնիկայով, դրամատիկ քնարականությամբ ու ազգային ճակատագրի փիլիսոփայությամբ։

Սիամանթոն գրական զարգացման այս նոր էտապի առաջին խոշորագույն ներկայացուցիչն էր, բանաստեղծական նորագույն և բարդ երևույթներից մեկը, Իսահակյանի բնութագրությամբ՝ «ունիկում համաշխարհային պոեզիայում»։ Բովանդակության իմաստով նրա պոեզիան մի ծառացում էր 20-րդ դարի կեղծ արդարության դեմ, հայ ժողովրդի դարավոր փոթորկումների ընդվզում։ Սանդգործական տարրերի տրագիկ լիցքավորումը և հույզերի մեծ խտացումը ստեղծում էր խոսքի շեքսպիրյան թափ և պոեզիայի նաբոկյան շնչառություն։

***

Սիամանթոն (Ատոմ Յարճանյանը) ծնվել է 1878-ի օգոստոսի 15-ին, Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում։ Այստեղ ապրել է մինչև տասներեք տարեկան հասակը։ Հետո առհավետ բաժանվել է իր երգերի բուն ակունքից։ Կյանքը նրան նետել է եզերքից եզերք՝ Պոլսից Եգիպտոս, Ժնև, Փարիզ, Բոստոն և այլուր։ Գրական-հասարակական տարբեր միջավայրերն իրենց ազդեցությունն ունենալով բանաստեղծի տաղանդի ու աշխարհայացքի ձևավորման վրա, ավելի բյուրեղացրել են հայրենի եզերքի կարոտն ու սերը։

Ակնում՝ մեր «երկրորդ Գողթնում», պահպանվել էին ժողովրդի դարավոր ավանդությունները և բանարվեստը։ Մայրը Սիամանթոյին օրորել է անտունի օրորներով։ Ա. Ջոպանյանը այցելել է Յարճանյանների ընտանիքը՝ անտունիներ գրի առնելու։ Այստեղ է ապագա քերթողը թոթովել մեսրոպյան այբուբենը, ստացել բանաստեղծական անունի մկրտությունը՝ Գ. Սրվանձտյանի կողմից։

1891-ին Սիամանթոն տեղափոխվելով Պոլիս, սովորում է Ռ. Գերպերյանի դպրոցում։ Սկսվում է գրական առաջին փորձերի շրջանը։ Սակայն մեղեդիներ

թաթավող պատանու հոգին լցվում է վրեժի աղաղակներով, երբ 1894—96-ի եղեռնը ներխուժում է Պոլիս, և նա ականատես է լինում ջարդի զարհուրանքներին։

Այնուհետև՝ ծնվում, Փարիզում գրական նոր հոսանքների աշխարհում բանաստեղծին հուզել են հայրենի եղերքը և իր ժողովրդի բախտը, նա ապրել է հեռուներից եկող հիշատակներով, ժամանակի հետ մեծացող հայրենի հողի ցավով։ Առաջին իսկ գործերով («Դյուցազներեն», Փարիզ, 1902) ճանաչվել է իբրև «հոյակապ և հրաբորբոք տաղանդ» (Վարուժան)։

Պայմանների ծայրահեղ վատթարացումը, հիվանդությունը, հոր մահը, խոր տարսափն ու կարիքը ոչ թե հուսալքում, այլ արտասովոր լիցք են տալիս երիտասարդին՝ շարժելով նրա մեջ ներթաքույց զորություններ։ Նա ստեղծում է «Հայորդիներ» երեք շարքը և «Հոգեվարքի և հույսի ջահերը» (Փարիզ, 1907)։

1908-ին թուրքական պետական հեղաշրջումից հետո նա վերադառնում է Պոլիս, ուր վերադարձել էին նաև տարագիր գրողներից շատերը, իսկ 1909-ին տեղափոխվում է Ամերիկայի Բոստոն քաղաքը։ Նոր տպավորությունները և հայրենի երկրի կարոտը ծնունդ են տալիս «Հայրենի հրավեր» շարքին (1910)։

1913-ին բանաստեղծն ուղևորվում է Կովկաս, տեսնում Արարատյան դաշտը, Մասիսը, Էջմիածինը, Օշականը, իրագործելով իր վաղեմի երազանքը։ Այստեղ ծնվում է «Սուրբ Մեսրոպ» պոեմը, ամրանում են կապերը Թումանյանի, Իսահակյանի, Շիրվանզադեի և արևելահայ ականավոր գրողների հետ։ 1914-ին վերադառնալով Պոլիս, Սիամանթոն, ինչպես արևմտահայ գրողների մեծ մասը, ընկնում է ծուղակը. սկսվում է արևմտահայ մտավորականության բարբարոսական շարքը։

* * *

«Դյուցազներեն»-ը և «Հայորդիներ»-ը ծառայեցին որպես յուրօրինակ գրական մանիֆեստ. հեղինակը ձգտում է մեծացնել պոեզիայի ներգործությունը զանգվածների վրա, հաղորդելով նրան հեթանոս առնականություն և հոգեկան ուժ, բացահայտելով ժողովրդի ներզորությունը, վրեժի շանթեր դարձող արցունքների ուժը։ Այսպիսով, հուսահատության օրերին Սիամանթոն երգեց հույս, արիություն և մաքառում, պոեզիա բերելով առաջավոր սկզբունքներ, բանաստեղծի, մարդու, քաղաքացու մասին։

Սիամանթոյի ցայտուն ու ռելիեֆ պատկերների շարքը, ֆանտաստիկան ու ռոմանտիկան կտրված չեն իրականությունից, այլ բխում են արյունոտ հողից, մահվան տենդում տառապող ժողովրդի երազանքից ու ազատասիրական գաղափարների գեղեցկությունից։ Իրականությունից է գալիս թեկուզ՝ ըմբոստացումի ապառաժներեն ճակատներն արյունած և աչվներեն անասելի արճավիրք արձակող ռահվիրաների հեթանոս պատկերը։ Նրա հերոսները գեղեցիկ են իրենց հեթանոս ուժով, իբրև ժողովրդի հույսի մարմնացումներ։

Սիամանթոյի գրական սկզբունքներն իրենց հետագա զարգացումն են գտնում «Հայորդիներ»-ում։ Այստեղ կրկին բարձրացվում է ազատագրական պայքարի թեման, բանաստեղծը պահանջում է, որ պոեզիան պայքարի և ճաղատակի ճայսեր ներշնչի զանգվածներին, գաղափարի «փարոսներ հրդեհի» տարածիր հայության ուղիների վրա։ Հերոսականության, հեթանոս առնականության սկզբունքը նա դարձնում է բանաստեղծության հիմք, հաղորդելով նրան ցասման և պայքարի ոգի։ Այստեղ է, որ գրականագետ Սիմոն Երեմյանը Սիամանթոյին համեմատել է անանիկ բանաստեղծ Եփեսացի Կալլինոսի հետ, որը ժողովրդին սպառազինում էր քնարով։

Եթե «Դյուցազներեն»-ում ցասման ու պայքարի տրամադրությունն է գերակշռում, ապա «Հայորդիներ»-ում՝ հոգեկան ապրումները։ Միաժամանակ ճնշված ժողովրդի թեման հագենում է քաղաքական բովանդակությամբ, հասնում գեղարվեստական լայն ընդհանրացման։ Հայ ժողովրդի օրինակով նա բարձրացնում է դարաշրջանի ամենասուր պրոբլեմը, իմպերիալիզմի դեմ կանգնած փոքր ժողովուրդների ողբերգությունը։ Հայկական ջարդերը դիտվում են իբրև մարդկության դեմ կատարված ոճիր, ճայ արյունը գալիս է «նույնիսկ բովանդակ մարդկության պատմությունը թրջելու»։

Բանաստեղծը դատապարտում է իմպերիալիզմը, մեծ տերությունների ազգակուլ քաղաքականությունը, ջարդերի կողքին դնելով ճնշված ժողովուրդների մշակույթի ոչնչացման համարձակ բարբարոսությունը։

Բայց այսօր, բայց այսօր, դեռ ուրիշ անագորույն թշնամիներ,
Եկան քու Ազգիդ աստվածադիր և դարավոր հիմնաքարերը կոտրտելու...

Ինչպես «Դյուցազներեն»-ում, այնպես էլ «Հայորդիներ»-ում, մշակվում են հեթանոս հոսանքի մի քանի սկզբունքները, որոնք իրենց հետագա զարգացումն են ստանում Վարուժանի, Շանթի և Թեքեյանի գործերում։ Վերագնահատվում են հեթանոս դարերի պատմությունից եկող քաջագործությունը, քրիստոնեական համակերպությանը և հասարակության օտարաստրուկ շերտերին հակադրվող ըմբոստությունը, ինչպես և բնական, ազատ, առողջ ու գեղնցիկ կյանքով ապրելու ձգտումների գեղեցկությունը։ Քերթողը դրա մեջ է տեսնում ժողովրդի ազատության և հոգևոր վերածնության հիմքը։

Հեթանոս արիության այդ սկզբունքով է փառաբանվում կովկասյան ժողովուրդների միասնությունը պայքարում, ռուսական առաջին հեղափոխությունը, շղթաների «զայրագին փշրտումը», որ բնութագրվում է իբրև «ոսկեղեն դարագլուխ» և երկաթեղեն ճարված ցարիզմի անխորտակելի օրենքներին («Կովկաս»)։

Սիամանթոն համոզված է, որ ժողովուրդը կարող է լուծել իր ազատության հարցը։ Նա կանխագուշակում է (ինչպես Բայրոնն էր կանխագուշակում հույն ժողովրդի վերաբերյալ), որ հայ ժողովուրդն իր ազատությունը չի կարող նվաճել, եթե պայքարի հեթանոս ուղու փոխարեն եվրոպական մեծ տերությունների հանդեպ քրիստոնեական աղերսանքի ուղին բռնի։

Հայրենիքի թեման ստանում է անհատականացած ձև։ Հայաստանի ավերակների ֆոնի վրա բացվում է հավիտենական աղետների և մաքառման աշխարհը, որի կենտրոնում է բանաստեղծի կերպարը։ Նրա ձայնը հնչում է մերթ երկրի ավերակներից, մերթ փախստականների բերանից, մերթ բանտերից ու կախաղաններից։ Բազմերանգվում են զգացմունքները, էլեգիական թախիծ, վիրավոր երազներ, հեթանոս ուժի պոռթկումներ հաջորդում են միմյանց։

Ահա «Հողին ձայնը». հողն իր ավերակի բերանները հորիզոններին դարձրած խոսում է մահազանգերի մրրկումի նման՝ ցասումով ու տագնապով։ Ո՞ւր է տանում պատմական ընթացքը, ինչո՞ւ է ուղին այդչափ արյունոտ, արդյո՞ք սա չի նշանակում վերջնական բնաջնջում։ Այս հարցերը բզկտում են բանաստեղծի ուղեղը։

«Լինել-չլինելու» պրոբլեմը զարգանում է շեքսպիրյան թափով։ Շիկանում է պատմական ճակատագրի հարցը։ Թոկոտն, արյունվա հայորդիներ փախչում են

հայրենիքից։ Երբեմն քերթողը պատկերում է հովվի խաղաղ սրինգը, շրաղացի սպիտակ նվագները, աղբյուր գնացող մարմարիոն հարսեր և հողագործի ուսին գերանդիներ՝ հույսի նման շողացող։ Սակայն ցորենի դաշտերը փոխվում են գերեզմանների, աղբյուրի երգը՝ մահվան, հաց արարող շրաղացը՝ գազազի, իսկ մայր բնությունը փոթորկվում է, և ծառերը կմախքների նման՝

— Հողմերու ժամուն, գիրա՜ր, գիրա՜ր, գիրա՜ր կոչախեն»—

Այսպես, Սիամանթոյի պոեզիան զարգանում է ներքին հակադիր ուժերի, հակասական տարերքների բախումով, շիկացնելով զգացմունքը և միտքը։ Միմյանց քով են բերվում ցորյանի ծովերը և կախաղանը, կյանքը և եղեռնը, որ արտացոլվում է մինչև իսկ քնարական հերոսի դեմքի վրա, ձայնի և խոսքի մեջ։

Ձայնը դողդոջ էր, սիրտը սիրով լեցուն, ոտվանները մխրատպատ
և ինքն իր գաղափարեն գեղեցիկ...

Պուշկինը Բայրոնի «Պարիզինն» պոեմի գլխավոր արժեքը տեսնում է նրա ողբերգական ուժի մեջ։ Նույնը կարելի է ասել Սիամանթոյի ստեղծագործության մասին։ Նրա հերոսին բնորոշ է բարդ, հակասական հոգեվիճակներ։ Աչքերում վրեժի կայծը վրեժի արցունքի և աղոթքների առեղության գոռումների են փոխվում, բռունցքներում կայծեր և բառերի հետ ապառաժներ են շարժվում։

Մաքառող հայորդին դարերի խորքից բերել է հեթանոս ոգու ուժն ու հպարտությունը։ Նա մեռնելու պատրաստ գյուղացի է կամ աշխատավոր։ Սարկության շրթան կամովին ժողովրդի ուսից իր ուսերին է առել և դեպի կախաղան է գնում աշտարակի պես կանգուն, ցավով սպառազեն, մահը ոտքերի տակ և հայացքն առաջերին։

* * *

Սիամանթոյի գրական մեթոդի բնորոշումը տվել են Արշակ Չոպանյանը և Վարուժանը։ Նթե առաջինը գտնում է, որ «Յարճանյանը իբրև ճշմարիտ արևելյան միտք, անխառնորեն ռոմանտիկ է»[1], ապա Վարուժանը նրա ռոմանտիզմը տեսնում է սիմվոլիզմի մեջ, քանի որ վերջինիս հիմքը ռոմանտիզմն է. «Քերթողը խորհրդապաշտ է ու միստիք։ Իբրև խորհրդապաշտ կրնթանա Անրի տը Ռենիեի, Մորիս Մեթերլինգի և Վերհարնի ճամփով։ Այս վերջինիս հետ այն սերտ աղերսն ունի, որ երկուքին ալ խորհրդապաշտությունը (symbolisme) ծագում ունի վիպական դպրոցեն՝ romantisme-ենն»[2]։

Սիամանթոն իր գրական կրթությամբ գալիս է եվրոպական սիմվոլիզմի դպրոցից, որ ավելի ցայտուն է երևում «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ում։ Քերթվածների այս շարքի ստեղծագործական պատմությունն սկսվում է գրական փորձերի (1888—1900) և արևմտաեվրոպական մոդեռն արվեստի ուսումնասիրության շրջանից։

Նրա առաջին բանաստեղծությունները ներթափանցված են գրական նոր հոսանքի անկումային միտումներով, ապա «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ի վրա երևում է առաջատեմ կողմերի ազդեցությունը։ Մեծատառանդ սիմվոլիստների բանաստեղծական աշխարհում Սիամանթոն տեսավ իր հայրենիքին հարազատ

[1] Արշակ Չոպանյան, «Դեմքեր», Փարիզ, 1929, էջ 128։

[2] «Գրական ասուլիսներ», Կ. Պոլիս, 1913, Ջ., «Յարճանյանի քերթողությունը», էջ 31։

տարերքը։ Վերհարնի սարսափի և ցնորքի, Մետերլինկի վերահաս աղետի կանխազուշակման, Բոդլերի մեռելային շարագուշակ ուրվականների և Վերլենի խեղճությունված կյանքի թախիծների աշխարհում նա գտավ իր արյունաներկ հայրենիքի պատկերը։ Եվ յուրացրեց աշխարհն ամբողջության մեջ արտացոլելու և գեղեցիկը վերստեղծելու արվեստը՝ խոսքի մոդության գաղտնիքներով։

Նթե «Յավերուն ցավենն»-ի մեջ նման ազդեցությունները երևում են «անմարս» վիճակում՝ դիակների և մահվան հեղձուցիչ մթնոլորտում, ապա «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ում այդ մոտիվները ձերբազատվում են անկումային սեհոումից, մռայլը փարատվում է հույսի ջահերով։

«Հոգեվարքի և հույսի ջահեր»-ը ցավի և ոգորման երգեր են, հայկական ջարդերի պատմական իրողության գեղարվեստական տարեգրություններ։ Այդ երգերով Սիամանթոն հանդես է գալիս իբրև ամենամեծ ողբերգակը հայ պոեզիայում։

Քերթողի ազգային ողբերգությունը համամարդկային է իր մարդասիրական բնույթով։ Այն լեցուն է արժանապատվությամբ և սրտի խորքից նաբեկյան ուժով պոռթկացող վշտով ու ցասումով։

Ողբերգությունը, ազգային աղետը պատկերվում է վրձնի հակայական շարժումներով։ Տեղի է ունենում արվեստի հետաքրքիր երևույթ։ Քաղաքական անցքերի նկարագրական ձևին, որ հատուկ է եղել այդ թեմայի աբծարծումներին, ամբողջովին փոխարինում են հոգեկան վերապրումները։

Բանաստեղծի երևակայությունը ճախրում է պատմության խորքերից մինչև ժամանակակից անցքերը, մինչև Հայաստանի պետականության կորուստը և պատմական բախտի խաղերը։ Մերկացվում է հայի «արդարության սպանությունը» և ցասման բարձրական ուժը բախվում է իր հակադիր ուժի մեծությանը՝ եղեռնին։ Բարձր շիկացման է հասնում դրամատիզմը, ստեղծվում է հույզերի աներևակայելի մրրկոտ ընթացք։

Եվ սպանյալ Արդարությունը Հպարտության,
Դժոխային աստվածներեն իբր վրեժ
Իր կտրված ոսկի գլուխն իր ձեռքին մեջ,
Տիեզերքի մոխիրներովը՝ կարծես կուզե այս գիշեր
Մոլեգնորեն սա՛ անատնական մարդկությունը մրրկել...[3]

Սակայն այս դանթեականը լուսավորվում է ցասման կամ երդիծանքի ուժով, ներթափանցվում հայրենիքի բախտորոշ հարցերով։ Հեղինակը գիտում է ժողովրդի հեթանոս ուժին, մայր հողին՝ ճանաչել ժողովրդի ներդրությունը, նրա միջոցով հաղթահարել ներքին հոգնածությունը, ստաբուցությունը, գարնանացնել դալկացող պայքարի և հաղթանակի հույսը, վերածնության ջահեր վառել հասարակական կյանքի և գրականության հորիզոնում — ահա քերթողի գրական դավանանքը։

Սիամանթոն մեծ ուժով է դրսևորել մարգիայնորեն գեղեցիկը ողբերգության մեջ։ Նրա պոեզիան այրվում է ազնիվ ցասման հրով։ Աստվածներից անարգված Պրոմեթեսի նման նա ընդվզում է մարգիային անարգարության դեմ։ Անկման

[3] Քերթվածը բերված է Սիամանթոյի սեպագրերից («Գրականության և արվեստի թանգարան, Սիամանթոյի Ֆոնդ»)։

վիհերում պոռթկում է վրեժը, շառաչում բարոյական ապտակը, ճախրում վիրավոր ոգին, որով ազգային վիշտը հեթանոս ուժ և վեհություն է ստանում՝ հույսի շահերով լուսավորելով հոգեվարքը։

Խելագարեցնող վիշտը սանձահարվում է կամքի ուժով։ Հերոսը մեկնում է մարտադաշտ սրբազան ոգևորությամբ՝ մահվան դեմ հանելով անցյալի վրեժն ու գալիքի իղձերը։ Սա ապրելու կամքն է, մոխիրներից հառնող հեթանոս ոգին՝ իր գեղարվեստական ձևի մեջ։

Այդպիսի գեղեցիկ մի խտացում է բանաստեղծի և հերոսի հանդիպումը («Ես երգելով կուզեմ մեռնիլ»)։ Ցուրաքանչյուր պատկերում բախումով զարգացող հույզ, խոհ, տրամադրություն, հուզաշխարհի խոր բացահայտում, ահա թե ինչով է բնութագրվում սիամանթոյական արվեստը։ Հերոսը ժպտուն է և միաժամանակ՝ ահավոր, նրա մարմնի ձևերում քանդակված է հեթանոս զորություն, բայց գլուխը նման է սգավոր կիսաստվածի արյունոտ սրտի։

Զարգանում են հոգեվիճակների բացահայտման անուղղակի միջոցները, լուության արվեստը հասնում է անկրկնելի էֆեկտի։ Միմյանց հանգիպած բանաստեղծը և հերոսը բառ չունեն ասելու ավերակված հայրենիքի, մորթված սերունդների, կործանված երջանկության մասին։ Նրանց հայացքներն իրար մեջ նույն ճակատագրի խորհուրդն են փնտրում, նույն հիշատակը, նույն ցավը՝ առանց խոսքի («ժամերով լռին էր, լռին էր»)։ Սակայն ներքին, հոգեբանական տրամաբանությամբ զարգացող լուության պատկերը հասնում է զգացմունքների պոռթկման՝ ընդամենը հինգ բառում.

Հիշատակի հեծեծանքներ մեր աչքերը թրջեցին...

Սաստկացող խռովքի միջից այլակերպվում են շրջապատող առարկաները։ Որքան ենթաբնագիրը մեծ, նույնքան ճշմարտացի է պատկերը։

Եվ լամպարիս կապույտ լույսը, սեղանիս վրան,
Այլևս արյուններու նման վար կթորար...

Սակայն պատկերը չի վերջանում արցունքի միջից բացվող արյան տեսիլքով։ Գրոհող փոթորկում հույզերը ստանում են անակնկալ ընթացք։ Մինչդեռ բանաստեղծը գժգունում է, ինչպես երազ, հերոսը խզում է վերհուշերի շղթան և ոտքի է կանգնում։ Ցավը երկուսի համար էլ նույնն է, բայց տարբեր են բանաստեղծն ու հերոսը։ Մեկը սրտի մարդ է, մյուսը՝ զենքի, մեկը մտքի զինվոր է, մյուսը՝ պատերազմի։ Երկուսն էլ այրվում են նույն կրակով և երկուսի հակադրությամբ սինթեզվում է մարդկայնորեն գեղեցիկը։ Այսուամենայնիվ կյանքն ավելի գեղեցիկ է. բանաստեղծի ազատության երազը դժգունում է իրական հերոսության փայլատակումից.

Եվ տե՛ս, հասակես վար անբիծ սուրս մերկ է, մերկությամբը
Գերմարդկային վճիռներուն։

Գրոհն իր ուժն ստանում է կյանքից։ Զինվորը, հերոսը իրենց հերթին գրականության մեջ են փնտրում ոգեշնչող իդեալներ, բարոյական այնպիսի ուժ, որ կարողանա նրանց բարձրացնել կենսակործան ուժերի դեմ։

«Քու երգերեդ երգ մը տո՛ւր ինձ, երգ մը, ես երգելո՛վ կուզեմ մեռնիլ...»։

Սիամանթոյի բանաստեղծական աշխարհի բարդ հակասությունը պայմանավորված է նաև նրա գրական դավանանքով։ Մի կողմից գրողի կոչումը ստիպում է նրան խոսել արյունոտ իրականության մասին, մտքերը սևեռել միշտ նույն հարցերին, մյուս կողմից ներքին գեղագիտական մղումով նա զգում է թեմայի կրկնության վտանգը և նոր մոտիվների պահանջ. արեգակի զորությունը, աստվածների ծննդավայր արևելքը, մեհենական անտառները, վարդակարմիր առավոտը, գեղեցկությունն ու վայելքը։ Նրան հոգեհարազատ են Քուչակը և միջնադարյան տաղերգուները՝ իրենց սիրո և ուրախության երգերով։ Այդ երևում է նաև սիրո և դարնան երգերի սևագրերից։ Սակայն քերթողի ներքին մղումը կամ գեղագիտական իդեալը կախման մեջ է դրվում գաղափարաբանական իդեալից։ Նա մինչև իսկ նվաստություն է համարում ազգային սգի օրերին զվարճանքի երգեր, եսանվեր սեր հնչեցնել։ Նա ձգտում է արձագանքել միայն ժամանակի ցավերին, վճռում է հայրենիքից զատ ուրիշ բան չերգել այնքան ժամանակ, քանի դեռ չի բացվել «արդարության առավոտը», քանի դեռ արշալույսն էլ «ցեղիս արյունին նման հողին խորերն է իջած»։ Սրանով էլ բանաստեղծի ճախրանքները սահմանափակվում են և նա ապրում է պոեզիայի և իրականության դրաման.

Այսպես, իմ ճշմարտասեր հոգիս, ձեր ճշմարիտ ցավին համար կարմիր մայրանններու մեջ խամրեցավ...

կամ ... Եվ բանաստեղծի աչվներս արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն է որ կտեսնեն...

Իդեալի և իրականության դրաման բանաստեղծն ապրում է ամբողջ կյանքում։ Զգայուն, գեղեցիկն անհունորեն ընկալող և նրանով հրձվող արվեստագետը, այնուամենայնիվ, փորձում է իր ներքին իդեալները մարմնավորել արվեստում։ Նրա բանաստեղծական հյուսվածքները երանգավորվում են ժողովրդական կենցաղի, երջանկավետ առավոտների, բուրաստանների, հստակահոս աղբյուրների, մարմարիրան հարսերի, սիրո և կյանքի պատկերներով։ Սակայն դա երազի փութանցիկ նայվածքն է իրականության վրա։

Սիամանթոյի պոեզիայում ամեն երազ խզվում է արյունոտ իրականությամբ։ Գեղեցիկ անուրջներում արթնանում է վերհուշը, մանկության հուշերում՝ արհավիրքը, երազում՝ կործանված երջանկության երազը։ Արյունոտ իրականությունը հետապնդում է նրան ամենուրեք։ Քերթողը ցանկանում է վերջ ի վերջո փրկել իր ներքին գեղեցկությունը դրսի ավերածությունից։ Եվ որքան մեծ է երազի և իրականության բախումը, նույնքան մեծ է դրաման։

Այնուամենայնիվ քերթողը իրենից անկախ, մի ներքին մղումով, ձգտում է հնչեցնել ժողովրդական կենսուրախ երգը։ Մռայլ հյուսվածքի միջով անցնում է լուսավոր պատկերների շղթան, թվում է խավարով լցված հոգու մեջ՝ լույսի անձրև է տեղում։ Գծագրվում են հայրենի աղբյուրը, աշխատող ու երգող մարդը, պարզ ու անաղարտ աշխարհի ժպիտը։

Էմոցիոնալ ու փիլիսոփայական բովանդակության հարստացման հետ Սիամանթոյի պոեզիան ձգտում է պարզության ու հստակության։ Արտաքնապես բարդ ու խրթին թվացող բանաստեղծությունները իրականում փայլում են ներքին պարզությամբ և ժողովրդական ակունքներից եկող բյուրեղային ձևերով։ Անկեղծությունն ստանում է կախարդական հմայք, խոսքը, թվում է, ուղղակի սրտից է պոռթկում։ Եվ մի ամբողջ շարք գործեր աչքի են ընկնում իրրև գրական գոհար-

ներ։ Նկատի ունենալով Սիամանթոյի նման գործերը, ֆրանսիացի գրող Պոլ Դեֆյոյը գրում է. «Քանի-քանի բանաստեղծություններ տոգորված են հանճարով»[1]։

«Հոգեվարքի և հույսի ջահեր»-ում առանձնապես ուշագրավ է մանկության հուշերի արտացոլքը, որով Սիամանթոն հարազատ է դառնում Մեծարենցին ու Տերյանին։ Սակայն նրա մեղմ գույների տակ անթեղված է ահռելի վիշտը, որ հանկարծորեն դուրս է պոռթկում՝ հատկապես քերթվածի վերջում։ Ոճային այս առանձնահատկությամբ նա տարբերվում է իր գրչակիցներից։

Ահա հայրենի աղբյուրի ձայնը, որ հնչում է բանաստեղծի ականջին, խոսում ուղեղի միջից։ Բառերը հնչում են կարոտի կսկիծով, հնչում իբրև սրտից պոկված զգացմունքի բյուրեղներ։ Ստեղծվում է հայրենի աղբյուրի և մանկության կերպարը։ Արվեստի հրաշքով վերադառնում են երջանկության օրերը։ Հընչում են մանկության քայլերը, որ սպասված հույսին կուզեն հասնել, ճախրում է արբեցած ոգին, ճախրում են ցնորքները։ Եվ հեքիաթային այս աշխարհը, այս էլեգորագոն հանկարծորեն ներկվում է արյունով, և սիրո մրմունջները փոխվում են ատելության։ Սկզբում կասկածը, որ գալիս է պղտորելու երազի պայծառությունը, ապա և արյունոտ իրականությունը, հանկարծորեն խուժում են երազի մեջ՝ երջանիկ երգը վրեժի աղաղակների փոխելով։ Այսպես է ծնվում մի ամբողջ ժողովրդի մեծ ողբերգությունը։

Դեռ վճի՞տ են արդյոք սա ջուրերդ ճին օրերու,
Եվ քու ձայնը դեռ ե՞րգ մըն է, թե աղաղակ մը վրեժի...

***

1909-ին Կիլիկիայի հայկական ջարդերի լուրը նորից ցնցում է հայ իրականությունը։

Կանգնելով եղեռական անցքերի առաջ, Սիամանթոն ստեղծագործական ակներև դժվարություններ է ապրում։ Ինչպե՞ս երգել շարունակ նույնը, որ «դաժան մթնվեան թախիծ» չլինի։ Այնուամենայնիվ նրա պատկերներն անկրկնելի են, ամեն անգամ նա գտնում է իրականության ընկալման նոր տեսանկյուն և նույն թեմայի սահմաններում սխրանքներ գործում։

«Կարմիր լուրեր բարեկամես» գրքում սիամանթոյական տեսիլները ոչ թե երևակայական են, այլ իրական։ Կյանքի փաստերն այնքան են ցնցող և այնքան արատ, որ գեղարվեստական հնարանքի կարիք թվում է չի էլ զգացվում։ Կատարված անցքերը, իբրև պատրաստի սյուժեներ, ներխուժում են ստեղծագործություն և հեղինակին մնում է՝ «ճայելին բլլալ հայ արյունին», իր որբ ցեղի և «զավանան մարդկության զարհուրահարներն արտացոլող հայելին բանալ» աշխարհի առաջ։

Կյանքի իրական անցքերին այսքան ընդհուպ մոտենալու ձգտումը նոր բնույթ է տալիս ստեղծագործությանը։

Բանաստեղծությունն ստանում է էպիկական բնույթ, հագենում մահասարսուռ տեսարաններով։ Բացվում է եղեռական մի աշխարհ, որի հանդեպ գժգոհում են դանթեական սարսափները։ Մոխիրի և թոչող հոգիների մահապար և մահ, անծայրածիր մահ։ Այս ֆոնի վրա բարբարոսները կույսի գանձերով արյուն են խմում, անասնորեն ավերում և հնձում են հայ կյանքն արմատից, հայ կնոջն ստիպում են իր ձեռքով սպանել իր զավակին.

Ինչպես որ զայն ծնար, պե՛տք է այնպես մահացնես։

Եղերական այս սադիզմն արտացոլվում է ամբողջ շարքում։

Այսպես արդար, անմեղ հայ մարդիկ մեռնում են՝ տիեզերքն անիծելով։ Եվ բանաստեղծին մնում է արտահայտել ժողովրդի սրտից գուրս պոռթկացող ցասման տարերքը.

Ո՞վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ...

Ցասման կրակով, սարկազմով է պատկերվում մոլեռանդ ամբոխի արյան անհագուրդ ծարավը։

«Կարմիր լուրեր»-ում պատկերվում է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեկան շարդի ողբերգությունը։ Նկուղում պատսպարված փախստականները խեղդում են մի երեխա՝ նրա ճիչով չմատնվելու համար։ Ապառաժյա լռությունը վերականգնվում է.

Լռությունն այս անգամ նկուղին մեջ մութիկ մ'էր։

Արտաքին լռության մեջ բարձրացել է հոգեկան մրրիկը, արթնացել է խիզճը, ամոթը, ինքնապարսավումը։

Ես ոտքդ մը կարծեցի որ բոլորս մեկ արժանապես մահացանք...։

«Կարմիր լուրեր»-ում սրվում է հայ ժողովրդի գոյատևման պրոբլեմը։ Ջնայած անծայրածիր մահերին, եղեռնի ֆոնի վրա հնչում են կյանքի ձայներ, մաքառման ու հաղթանակի նվագներ։ Արտացոլվում են հեթանոս արիության իրական փաստեր, ժողովրդի ինքնապաշտպանության գրվածներ։

Սիամանթոն, մերկացնելով Թուրքիայի ու եվրոպական մեծ տերությունների քաղաքականությունը, անարգանքի սյունին է գամում շարպարանքին։

Կրակեցե՛ք, որ խեղճ խուժանը նահանջի, կրակեցեք մինչև որ՝
Ծովում վրա քնացող ռազմանավերն օտար,
Արդարության անդնդախոր իրենց քունեն թերևս
Ոտքե մը արթննան...։

Այս սարկազմով և բարձր հումանիզմով նա կանգնում է աշխարհի ամենաառաջավոր գրողների շարքում։

Սիամանթոն ապրում է գաղափարական զարգացման հարատև առաջընթաց։ Նա հետզհետե ավելի խոր է նայում անցյալին, իրականությանը և գալիքին։ Մաքառման կոչերից անցնում է տեսական ու սիստեմատիկ դիմադրության գաղափարին, ապագային նայում է նոր ակնկալություններով։ Նա համոզված է, որ չի կորչելու այն ժողովուրդը, որը գիտի արիաբար մաքառել ու տանջել։

Կոյանման փիլիսոփայությամբ գեղարվեստական արտահայտությունն է ստացել նաև հայ գյուղացու կերպարում, որ մարմնացնում է ժողովրդի կենսական ուժի և հաստատության գաղափարը։ Իր տարորը թողած, գիշերն ամբողջ մաքառե-

[1] «La Revue», Փարիզ, 1918, № 15—16։

լով գեսի ահեղ ալիքների դեմ՝ զավակին հասցնում է Միշերկրականի ափերը՝ փրկելով միակ նույսը ավերակված ճայ գյուղի։

Այսպիսով, հայ ժողովրդի փրկությունը քերթողը այստեղ էլ տեսնում է ոչ թե Եվրոպայի խոստումների մեջ, այլ արիության, կենսունակության, մաքառման, ապրելու և տեսելու հզոր կամքի մեջ։

* * *

«Կարմիր լուրեր»-ի զարհուրանքներին հաջորդող ժամանակավոր խաղաղության շրջանում գրական շարժման ավանգարդը, որ կանգնած էր արվեստի զարգացման 20-րդ դարի ուղիների վրա, առաջադրում էր նոր պահանջներ։ Հայրենիքը «զմեզ մեր անձեն հեռացուցած է», գրում է Վարուժանը, «նույն մոտիվը, նույն մաշված անիվն է, որ կդառնա ու կդառնա»։ Միշտ արյուն, ավեր, աղետավոր ընթացք, մինչդեռ ժողովուրդը ծարավ է լույսի և գեղեցկության, կյանքի ու երջանկության։ Այդ կապակցությամբ հետաքրքրական է ֆրանսիական գրող Պոլ Դեֆյոյի խոսքը Սիմանթոյին նվիրված ուսումնասիրության մեջ։ Նա նկատում է, որ «հայրենասիրական թեմաները ծնունդ են տալիս բավական սառը մի պոեզիայի, եթե հանդես չի գալիս քնարական, մի տարր»։ Քնարերգության այս պահանջը հաշվի էր առնում բանաստեղծը։ Սահմանադրությունը խթանել էր հայրենադարձությունը, պահանջվում էր փոխել գոյապայքարի զենքը։ Յուրաքանչյուր նյարդով իր դարին կապված Սիմանթոն հաշվի է առնում նաև օրվա հրամայականը։ Այս իմաստով նա քաղաքացի բանաստեղծ է, դյուրազգաց քնար ժամանակի հողմերի դիմաց։

Բանաստեղծը կռահում է, որ պայքարից ավելի այժմ հարկավոր է իմաստության և հանճարի զենք, հողին ու ջրին զանգվածեղ կառչում։ Համախմբվելու, հավաքական ուժ կազմելու այդ իդեալի ծնունդն է «Հայրենի հրավեր»-ը։

Քերթվածների այս նոր շարքը իր ակունքներով հասնում է անտունիներին, Քուչակին, ժողովրդի պատմական բախտին ձուլված պանդխտական երգերին, որոնք հնչել են միջնադարից մինչև նոր ժամանակները՝ զուգորդվել հայ դրականության ընթացքին՝ Բաֆֆու երկերից մինչև Չոհրապ, Թումանյան, Իսահակյան, Վարուժան, Տերյան։

«Հայրենի հրավեր»-ում, նորովի մշակված պանդխտական այս մոտիվներում, մարմնանում են դարավոր կյանքի ուժն ու պոեզիան։ Բարձրանում է երեք հարյուր հազար նահատակների ձայնը։ Հոգեպես մեռածներին հակադրվում են անմահները.

— Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք...։

Պատմական-փիլիսոփայական հիմք ունեցող այս ընդհանրացման հետ նոր բացատրություն է տրված հայրենիքի գաղափարին։ Հայրենիքը միայն աշխարհագրական հասկացողություն չէ, այլև արյունակիցների նվիրյալ ամբողջություն։ Հայրենիքը որդու վերադարձին հոգեվարքի մեջ սպասող հայրն է, եղբայրը, թոռների շուրջը որբացած հարսն ու աղջիկներն են, հայրենի դաշտերը, որոնք պանդխտին կանչում են դրամատիկ սիրով, պարսավանքով ու պաղատանքով.

Վերադարձե՛ք, որդիներ՛, ձեր գուբանին և արորին ժանգը նորեն սրբելու։

Հայրենիքն այն սերն է, որով միաձուլվում է ազգը, այն մեծ սերը, որով առնչվում է «Հայրենի հրավեր»-ը։ Հայրենիքը, վերջապես, մարդը ինքն է, իր էությունը։ Հեռանալ ինքն իրենից, նշանակում է կորցնել իր բովանդակությունը, անմարդկայնանալ։ Այսպիսով՝ հայրենիքը մարդկային եսի և արյունակցական կապերի մի ամբողջություն է.— կոնցեպցիա, որ զարգացվում է «Տասներկու կոչ»-ում։

Սոցիալ-հոգեբանական այս հողի վրա ստեղծվում են անհատականացված քնարական հերոսներ, որոնք առանձնանում են ժողովրդական մտածելակերպով ու հոգեբանությամբ, տեսանելի և ցայտուն ներաշխարհով։ Այդ պատճառով էլ ժամանակին շատ բարձր է գնահատվել «Հայրենի հրավեր»-ը։ «Այս հատորը քերթողին գլուխգործոցն ըլլալ կթվի ինծի,— գրում է Դ. Վարուժանը,— հոն մարդկային այնպիսի բան մը կա՝ որ սահմանված է մարդ էակին հետ ապրելու»[5]։

«Հայրենի հրավեր»-ում զարգացվում է հեթանոս կյանքի, հողի և մարդու կենսափիլիսոփայությունը, նրա կենսասիրական առողջ բնազդը, համախմբվելու, հավաքական ուժ կազմելու գաղափարը։ Համազգային մի իդեալ, որ այնպես համարձակորեն բարձրացնում է քերթողը 20-րդ դարի սկզբում։

Բացվում է կյանքի պոեզիան իրական գույների ամբողջ հարստությամբ։ Դեզարվեստական խոր արտահայտություն են ստանում հայ մարդու կամքի և հավատքի հեթանոս ուժը, չմայրացած հարսերի սիրո ծարավը։ Հարազատի կանչը հնչում է այնպես առինքնող, որ ի զորու լինի ստիպել պանդուխտին անմիջապես տուն դառնալու որոշում ընդունելու։ Այդ նույն ձևով են հյուսվել նաև բուն Ակնի ժողովրդական երգերը, որից օգտվել է բանաստեղծը։

Սիմանթոն չի սահմանափակվում ժողովրդական կյանքի արտաքին երևույթներով, այլ ձգտում է ազգային ինքնատիպության։ Դա բերում է կենդանի շունչ և թարմություն, կյանքով լիցքավորված պոեզիա։ Քերթողը դրսևորում է անհուն սեր ու կարոտ ժողովրդական արժեքների հանդեպ։ Հենց այդ սերն էլ նրա ռոմանտիզմը մոտեցնում է ազգային ակունքներին։

Ազգային ակունքներից է գալիս «Հարսին երազը», դարձյալ Արևմտահայաստանի պատմական իրականությամբ շնչող մի գործ, որ դրամատիզմի բուռն ընթացքով հիշեցնում է Դուրյանի «Տրտունջք»-ը։

Զգալով ազգային ինքնատիպության՝ Սիմանթոն օգտագործում է ոչ միայն կյանքի առանձին կողմերը, այլև բանաբվեստը, որ մշակվում է ժողովրդայնության ներքին էության խոր մեկնաբանությամբ։ Օրինակ, հարսի նամակն այնքան հարազատ է կյանքին, որ իր մեջ խտացնում է հազարավոր Զարդարներ (Չոհրապի «Այրին»)։

«—Ու տարիներով միանավորիկ պատուհանիս առջև նստած՝
Ես քու ճանփուդ կնայիմ, իմ սրտահատոր հեռավորս...»

Միանավորիկ. մոգական ինչպիսի ուժ է դրել բանաստեղծը տրամադրության և կենդանի իրականության երանգը կրող այս մեկ բառում։

Քնարական հերոսն այքի առաջ է բերում «սրտահատոր» հեռավորին հրաժեշտի թախիծներով, բարի խոստումներով, սիրո արցունքներով, մեկնողի նեռից

[5] «Գրական ասուլիսներ», Կ. Պոլիս, 1913, Զ., էջ 28։

կժով շուր սրսկելու մանրապատումներով, որոնք հյուսված են Ակնի կոլորիտային գույներով։ Մեր առջև բացվում է գեղատի հարսի կանացի ներաշխարհը։ Մայրության վիրավոր երազներ, թառամող շահելության և արցունքներ, որ հոսում են «աստղերի պես» գեղեցիկ, աստղերի պես տիեզերական։ Հուսահատ արցունքներ, որ թափվում են մի ամբողջ ժողովրդի ճակատագրի ծանրությամբ։

Մեծ խտության է հասնում հայ ժողովրդական երգին բնորոշ հուզմունքը։ Գույները ոչ թե անպատակ կուտակվում են, այլ յուրաքանչյուր երանգ առաջ է մղում մյուսին, մի նոր, առավել բարձր աստիճանի հասցնելով հիմնական հույզը և գաղափարը։ Հեռավորին սպասող հայ կնոջ համբերությունն սպասվում է ներքին մեծ պայքարով, հոգեկան սուր ելևէջներով։ Մերթ խռովահույզ ընդվզում, մերթ ծնկաչոք աղոթք, մերթ համբերության փորձություն և արցունք, մերթ արձակ մազերը հողմերին տված՝ մոլեգին բողոք և ընդվզում առ աստված.

«Ա՛լ կբավե, քու ծարավեդ ես իմ ծամերս փետտե՞լ կուզեմ,
...Հիշատակիդ ետևեն հովերուն պես կհառաչեմ...»։

Եվ ապա հնչում է հարսի կարոտի կանչը, իբրև ողբերգական ազազակ.
Վերադարձի՛ր, մեր տնակին սեմին վրա, ես քու ճամփուդ կսպասեմ...

Թվում է լսում ենք նրա բառերի սրտագին ղողանջը, թվում է տեսնում ենք այդ կնոջը տան սեմին կանգնած՝ հաստատուն ու անդավաճան, համբերող ու աշխատ, իր միամիտ, իր բարի հավատքով, հզոր ու հավերժական, իբրև օջախի անշեջ կրակ, իբրև ժողովրդի չմեռնող-չմարող հույսի խորհրդանիշ։

Հոգեկան ալեկոծության այս ընթացքը ի վերջո գառնում է շարադրյա, առնելով գերեզմանի հողն իր գլխին մաղող դևի կերպարանք։ Սակայն հենց ոգեներգության այդ մեծությունն էլ վկայում է հայ մարդու աշխարհիկ կյանքի ծարավը, էենասիրության հեթանոս ուժն ու գեղեցկությունը։

Այսպիսով, «Հայրենի հրավեր»-ը ոչ միայն հայրենագարձություն, այլև աշխարհիկ կյանքի և վայելքի, կամքի և ուժի հրավեր է՝ ավերված տունը շենացնելու, հողը ծաղկեցնելու։ «Հայրենի հրավեր»-ը միաժամանակ էենասիրական հուժկու մի կանչ է։

***

«Հայրենի հրավեր»-ից հետո Սիամանթոն ստեղծեց նոր գործեր և լույս ընծայեց «Սուրբ Մեսրոպ» պոեմը։ Դա լուսեղեն ցնորքների և վերելքի մի շրջան էր, երբ արվեստի հրաշքներ էին գործում և՛ Կոմիտասը, և՛ Վարուժանը, և՛ պոլսահայ բոլոր մեծատաղանդ ուժերը։ Զապել Եսայանը, խոսելով 1915-թ նախորդող այդ շրջանի մասին, ասել է. «Եթե անկողմնակալ ոգիով քննենք այն, ինչ իրականացավ 5—6 տարիներու ընթացքին... կարելի է հրաշք մը նկատել»[6]։

Հեթանոս այդ հոսանքը մի առաջավոր գրական շարժում էր, որն ուղղված էր ազգային խնդիրների դեմ, հանուն ազգային ազատագրության և վերածնության։

[6] «Գրական երեկոներ», Թիֆլիս, 1916, էջ 36։

Սրագրային այդ առաջադրանքով է գրված «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ»-ը, որ լույս ընծայվեց հեթանոս հոսանքի հանգանակը հանդիսացող «Նավասարդ» տարեգրքում (1914) և իր գաղափարաբանությամբ կապված է «Սուրբ Մեսրոպ» պոեմին։ Անահիտ աստվածուհու կերպարը բարձրանում է իբրև մեր նախնիների զորության, աշխարհիկ կյանքի և էենասիրության սիմվոլ, իբրև առաջնորդ ծնող մայր։ Դիմելով պատմական անցյալին, Սիամանթոն տեսավ այդ առաջնորդը՝ ստեղծելով «Սուրբ Մեսրոպ» պոեմը՝ ժողովրդի ճակատագրի փիլիսոփայությամբ հագեցած ամենախորունկ երկերից մեկը հայ գրականության մեջ։

Հետաքրքրական է, որ Մաշտոցին նվիրված երկերում գրեթե բոլոր հայ գրողները (Նալբանդյան, Բաֆֆի, Լեո, Դեմիրճյան, Պ. Սևակ և այլն) կրոնի սքեմի ներքո տեսել են քաղաքական առաջնորդին։ Մաշտոցի գործը Լեոն համարում է հայ ժողովրդի առաջին մեծ հաղթանակը, ավելին, քան Տիգրանների հաղթանակը։

Հայ պետականության մոտալուտ կործանման պայմաններում, երբ մի կողմից Պարսկաստանը, մյուս կողմից Բյուզանդիան, երկու հզոր ախոյաններ՝ շտապում էին վերջ տալ հայ ժողովրդի ինքնությանը, ծավալվեց հոգևոր-մշակութային այն շարժումը, որ պատնեշեց ճակատագրի պատուհասը։

Պոեմում դրսևորվում է տառերի բախտորոշ դերը պետականություն չունեցող ժողովրդի համար։ Օտարի լծի տակ մի այբուբեն, որ Անտուան Մեյին «գլուխ-գործոց» է համարել, համազոր եղավ կորստից փրկվելուն, եղավ հող հայրենի, որի վրա ծաղկեց ազգային մշակույթը, եղավ ինքնության այն սաղմը, որ, ինչպես ասել է Չարենցը, տարրալուծել չկարողացավ ոչ մի թուրք, եղավ մորկի պես բարձրացող սրտի անհուն անտառ, որի ամեն մի ծառը պատնեշ եղավ դարերի պատուհասին։

Մաշտոցի կերպարը բացահայտվում է Հայաստանի պետականության անկման զուգահեռ։ Բացահայտվում է հանճարը։ Քանի որ վտանգը մոտենում էր մշակութային գոյությանը, Մաշտոցը պայքարը տեղափոխում է հենց նույն հողի՝ **լույսի անիվների վրա.**

Դուն լույսի անիվ, դուն ճավատի հրավեր...

Սա պատմական այն ճշմարտությունն է, որ Մաշտոցի առաջնորդությամբ ժողովուրդը շարունակեց գոյատևել, առաջ գնալով ոչ թե **ռազմի, այլ լույսի անիվների վրա։**

Այս անարյուն պայքարի թեզը պոեմը կապում է «Հայրենի հրավեր»-ի հետ։ Իմաստության և լույսի գաղափարը փիլիսոփայորեն առնչվում է գոյապայքարի մյուս ձևին՝ հայրենագարձության, հայրենի երկիրը շենացնելու հրավերների հետ։ Այսպիսով «Սուրբ Մեսրոպ» պոեմը գալիս է հաստատելու «Հայրենի հրավեր»-ում ընտրած համախմբման և էենասիրության ուղու ճշմարտությունը։

Հինգերորդ դարի պատմական իրողության շունչը մարմնավորելու նպատակով Սիամանթոն դիմել է Նարեկացուն, որ օգնել է Մաշտոցի կերպարի և պոեմի կառուցվածքի գեղարվեստական խնդրի լուծմանը։ Եթե «Մատյան ողբերգության» պոեմի հերոսն իբրև երկրպագու դիմում է աստծուն և խնդրում մեղքերից մաքրող

լույս, նույն եղանակով Սիամանթոն դիմում է Մաշտոցին կամ Մաշտոցը՝ աստծուն, լույս խնդրելով հայոց գիրն ստեղծելու համար։

Իմ անդայիր ճոտիս համար լո՞ւյս կաղերսեմ...

Պատմական ճշմարտության խոր մեկնաբանությամբ հագեցած, պատկերների հեղեղը ստիպում է կանգ առնել և հիանալ բանաստեղծական մտքի փայլատակումներով։ Ինչպես Նարեկացին, Սիամանթոն էլ նույն երևույթը բնութագրում է անսպառ նրբերանգներով, միշտ նոր մեկնաբանությամբ.

Մեսրո՛պ, հայ դարերուն դիմաց կեցող՝
Դուն աղամանդյա ապառաժ...
...Ոսկեդարու աղամանդյա՞ բանալի,
Դուն հայ դպրությանց անշրջանակ լուսամուտ...

Բանաստեղծական խռովահույզ տարերքը, երևակայության ճախրանքները Սիամանթոյին հարազատ են դարձնում Նարեկացուն։ Դա նկատել է Վարուժանը. «Սիամանթոն վերադիրներու գրիչ մըն է, ինչպես իր վարպետը՝ Նարեկացին»[7]։

***

Սիամանթոյի պոեզիան օրինաչափ երևույթ և շքեղ թռիչք էր՝ պայմանավորված ազգային գրականության ու արվեստի զարգացման աստիճանով։ Նա նոր ոճի ուսուցիչ էր, հայկական սիմվոլիզմի հեթանոս ուղղության նախապատրաստողը։ Նրա հսկայական պաթոսը, առնական ոգու թախիծն ու կորովը, ազատագրական ոյլքարի և վայելքի կենսասիրությունը տրամաբանական հետևողականությամբ զարգանում են քերթվածների բոլոր շարքերում։

Սիամանթոյի արվեստում խտանում են ապրումները, ամեն ինչ շիկանում, լցվում է կրակով ու լույսով։ Երևակայության ճախրանքում ամեն ինչ փոխվում է պոեզիայի, տոգորվում գեղագիտական ապրումով. կոտորածը, հայրենի խրճիթը, երկիրն ու երկինքը դառնում է երգ, դառնում է խոհ ու փիլիսոփայություն։

Այս առինքնող, կենսահույզ երգով էլ մեծ ու անպարփակ է Սիամանթոն։

[7] Դ. Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 373։

ԴՅՈՒՅԱԶՆՈՐԵՆ

Ամբա՜ն արշալույսներ կան որ
տակավին չեն ծագած...

ՌԻԳ-ՎԵԴԱ

ՀՈՒՅՍԻՆ ՃԱՄՓԱՆ

Ու անոնք, հսկայաձև ռահվիրաները մարմարեղեն Հույսին,
Լմբոստացումներու ապառաժներեն իրենց ճակատներն արյունած,
Բայց աչվքներեն անասելի արհավիրք մը արձակելով
Ու իրենց փշրող ակռաներուն տակ հրաշեկ դաշույններ տրորելեն՝
Ավերակներու քառուղիի մը վրա, այս իրիկուն
Դժգունությանս հետ երես երեսի, ինծի ըսին.

«Ո՜վ դուն, որ քու մատվքներովդ աչվքներդ փորեր՝
Այս ընդվզումի ու խոլ երիվարումներու պահուն
Վճռական փոթորկումներուն անտարբեր՝
Այսպես շրթունքներդ դեպի ցավը կարկառած՝
Ու բազուկներդ, պաղատանքի մեջ, հոգնածորեն դեպի վեր,
Առավոտե առավոտ ու իրիկվընե իրիկուն,
Անշա՜րժ, մեզի համար զոհվածներուն վրա, եղբոր մը պես, բայց վայրապար՝
Քու վերք դարձած նայվածքներուդ բոլոր արյունը տվիր...

«Ո՜, նախ քու փորված բիբերդ անհուն,
Մեր պաշտամունքի ջահերուն դարձո՛ւր,
Ու մտածումովդ մեզի ունկնդրե,
Գիտենք որ դուն երազող մըն ես ու այլուրներեն սթափեցար,
Ոգեվարներու աղերսող հոնդյուններեն հրավիրված,
Ու իրենց քարուքանդ մարմիններուն գալարանքեն սարսափահար,

Անոնց վրա քու երգերուդ եղերական հանգիստին հետ,
Ձեռվընտրուդ հանգչեցնող անդորրությունը տարածելու...։

«Բայց նվիրական ցավը ինքն իր մեջը ձգե՛,
Ո՞վ դուն, ողջակիզումներու ուխտված սպիտա՞կ տղա,
Երբեք պետք չէ խաղաղությունը խռովել ինկածներուն,
Եթե նույնիսկ նայվածքներուդ արյունին աղբյուրներովն ալ ըլլա։
Ու դուն մտածումովդ այսուհետև, հավերժապես
Փառքերու ճակատագրին սահմանված
Աստվածային մարմարներու զանգվածներեն՝
Քու ձևերուդ իմաստությանը համեմատ,
Եթե կուզես, Տառապանքը, դարերուն համար, քանդակե.
Բայց մի՛ մոռնար, Անոր աչվընտրն ու բերանը ու հոգին տարփորեն,
Ընդվզումի ստինքներուն կարկառելու...։

«Ու հետո ու մանավանդ ըլլալու համար Ան՝ որ պետք է ըլլալ վերջապես,
Այս մաքառումի ու ակնկալության օրերուն,
Ամբողջ երկիրը, ստվերիդ մեջեն, հոգիիդ հետ, առանձին,
Հորիզոնե հորիզոն քալե՛ դուն,
Ավաններեն, ու դաշտերեն, ու արտերեն անծայրածիր,
Դեպի քաղաքներն, ու գյուղերն, ու հնձաններն հեռավոր.
Ու քայլիդ վրա անխոնջորեն նորեն վերադարձիր,
Եվ մոլեգնաբար Մահը հոտոտե՛,
Գիտե՞ս որ պետք է բախվիլ անկե,
Բանալու համար մեծ ճամփաները Հույսին,
Որպեսզի, վերջապես, երազին երիվարները փոթորկանման
Մեր կամքին ձեռվընտրեն դյուցազնաբար վարվելեն՝
Հաղթանակին կատարներուն վրա արձանանան...։

«Ու վայրկյան մը մթաստվերին մեջեն,
Եթե կրնաս, անհունորեն ետիդ դարձիր,
Ու տես մեռելներուն հողեն ժայթքումն հանկարծակուն
Որ գերեզմաններուն ու քանդված քաղաքներուն տակեն,
Մեկենիմեկ փրկության ոգումներեն շնչավորված՝
Մեր ետևեն, այս իրիկուն, տենդոտորեն ոտքի՝
Դեպի Հույսին բացաստանները պիտի քալեն։

Ու անոնց հավատքին հրայրքը նայե՛ ու սիրտ ա՛ռ,
Տե՛ս իրենց ծանր քարերն ու սև խաչերը փայտե
Հողեն հոգնած ուսերնուն վրա,
Տե՛ս իրենց պատանքներն իրարու արյունե կարմիր՝
Խավարներու հովերուն տարածած,
Ու տե՛ս, տե՛ս, բոլորն ալ մեկմեկու առջև կարծես թե ծնրադիր, տե՛ս,
Իրարու համար անգամ մը ևս մեռնելու երդումները կընեն...։

«Ու ամենքն ալ հոն պիտի ըլլան, այսօր, մեզի հետ,
Անոնք, որ կույր են ու անոնք, որ անկար,
Ու անոնք, որ իրենց վիզերը խելահեղորեն
Մեկմեկու հոգիի համար
Դեպի Եղեռնը երկարեցին...։
Ու անոնք ալ, որ մեր վարպետներն եղան ընդվզումէ,
Որոնց խոսքերը մեր խոսքերն են, այս իրիկուն,
Ու իրենց հոգին մեր պաշտամունքն առ հավետ։

Ու տակավին ամբոխը կա անոնց՝ որոնց սարսափին աղեկ որ չընդհարեցար դուն,
Միայն մենք գիտենք թե անոնց մարմինները որչա՞փ ամեհի են,
Ու իրենց աչվընտրն ու շարժումները որչա՞փ ահարկու...
Ու այն արյունը որ եղբայրներու գլխատումեն իրենց մտքովն ըմպեցին
Օ՜, անոնց գանգերուն մեջը՝ հաղթանակներու ծարավեն դինով արծիվներու
Անսահման թևաբախումները բացավ...

«Ու դեռ մայրերը կան, արգասաբեր ու հերարձակ,
Որ վերը, վրաններուն մեջը դաշտավայրին,
Իրենց հուռթի ու լայն ու լուսավոր կողերուն տակ,
Մեր վաղորդայնները նորեն փառավորելու համար
Մոլեգին Դյուցազներու կարմիր երկունքը կապրին...։

«Բայց հիմա որ առավոտը պայծառորեն մոտեցավ,
Ու դուն մեր հոգիները ճանչցար,
Ո՞վ երազելեն ոգեվարող եղբա՜յր,

Եկո՛ւր, որպեսզի մեր շրթունքները քու շրթունքներդ ընդունին...։
Վայրկյանի մը ու հավերժության մը համար...։
Ու դեռ Արյունին նվիրական պղծումեն չկարմրած՝
Սա՛ փայլակե սուրը կորիճորեն ձեռքդ ա՛ռ,
Ու անով մեր ամենուն սուրերը ա՛յս աստղերուն մաքրությանը տակ,
Երդումներուն երդումը ընելե խաչաձևե՛...
Ու գեթ անգամի մը համար՝ ինքնիրմեդ դուրս գահավիժելեն՝
Եթե հրնաս, մեզի հետ քալե՛։ Ահավասիկ Ճամփան»։

ԱՍՏՎԱԾԱՑՈՒՄԸ

Ըմբոստացողներու ամբոխը երբ առավոտին մեջեն խելահեղորեն կհառաչանար
Դեպի բախումները նորանոր ու Նպատակը սրբազան,
Տեղափոխվող անտառներու զարհուրանքը տարածելեն՝
Ու նվաճելով հորիզոնները, սարսափահար,
Հանկարծ երկու Ձևեր, դաժանորեն սպառազեն,
Իրենց սուրերը արեգակին՝ ու ծանրադեմ մեզի ըսին.

«Եղբայրներ, այսօր օրերուն Օրն է, ու գիտենք որ պատրաստ եք դուք Արհավիրքին,
Բայց մեր երկաթե դաստակներն անոր կուրծքին աղեղելե առաջ,
Սա՛ կործանված տաճարին խաչքարերուն վրա,
Հոն, ուր Անոնց ոսկերոտին կհավերժանա,
Փառքերու աստվածացումին ունկնդրեցե՛ք,
Զոր մեր ձայները ձեզի համար՝ ու անոնց հոգիին՝ պիտի երգեն։

«Ո՞վ դուք, որ ձեր գարուններն, ձեր արշալույսներն ու հոգիներն անհուն՝
Մեր ամենուն փրկությանը համար
Ա՛յնչափ այլասիրորեն արյունելով անմահացաք,
Ու անցաք Իդեալին գագաթներեն, ազատարար խոյանքներով,
Մտածումնիդ ու աչվընիդ անընկճելի Հույսին կարկառած,

Բոլոր մեր ցավը ու բոլոր քայքայումը մեր սև օրերուն
Ձեր ներսիդին մոլեգնաբար տառապելեն...
Ու ձեր նայվածքին ու հավատքին փայլակները գերբնական,
Ազատության նորածին որբի մեր խեղճ աչքերը լուսավորելեն՝
Հոս, մեր ամենուն հոգիին մեջ, ձեր պատգամները քանդակեցին...։

«Անձնուրացումի ու ադամանդե փառքի այդ օրերեն ի վեր,
Սա չորս կողմի լեռնաշղթաները բոլոր,
Իրենց ճակատներուն վրա քանդվող մրրիկներուն պես,
Ձեր անունները սարսափագին՝
Դողահար կողերուն խորը կապրին...

. . . . . .

. . . . . .

Դուք էիք որ կործանումի ու փրկության երկաթե ժամերուն
Շղթայազերծումներու ահազանգերը հնչեցուցիք
Պատնեշներեն պատնեշներն ու, ահեղապես, աշտարակե աշտարակ,
Ու բանտերեն, բերդերեն, ու թիարաններեն անդին
Դեպի քաղաքները Ստրկության...
«Ու երբ, գիշեր մը, անձնազոհումներու եղերական ժամը վրանիդ ինկավ,
Դո՛ւք, ազատության ճանապարհները մեզի համար հարթելե հետո,
Ձեր ձեռվընեռով, ավա՜ղ, մեր անկարեկիր նայվածքներուն դիմաց՝
Ձեր վաղվան խարույկները պատրաստեցիք...

«Ուրեմն փա՜ռք, և օրհնությո՜ւն ձեզի,
Դուք մեր Կուռքերը մարմարեղեն ու մեր Դպրքերը պայծառ,
Դո՛ւք՝ Հսկանե՛ր, դո՛ւք՝ Առաքյալնե՛ր, դո՛ւք՝ Ահավորնե՛ր բոլոր,
Փա՜ռք և օրհնությո՜ւն ձեզի.
Հոս, ձեր հողին առջևը ծնրադիր ու աչքերնիս աղոթքով լեցուն,
Ձեր պատանքները մտքերնուս մեջ երկյուղածորեն քակելեն՝
Թույլ տվե՛ք որ՝ մեր բերանները ձեր դյուցազնի գանգերուն՝
Ընդունինք ձեր կմախքները մեր ուխտվածի իրաններուն վրա,
Ու ձեզի խնկե՛նք աչվընուս մեջի Վրեժեն սառած արյունը Ցավին,
Որպեսզի երբ համառորեն շարունակենք հառաջանալ,
Ձեր մահերուն հաճախանքն ա՛լ չի կառչի մեր քայլերուն...
«Փա՜ռք և օրհնությո՜ւն ձեզի, նորեն ու նորեն,

Ու հիմա կբաժնվինք ձեզմե՝ ավետելեն՝
Թե ձեր բազուկները ձեր ընդվզումի զավկրներուն բազուկներն են այսուհետև,

Ու ձեր հավատքը մոլեգնությունն է անոնց՝
Որ մոխրակույտերու ու դիակի մինչև աստղերը բրգավորումներեն խելահեղած,

Սա չորս կողմի բոլոր առապարներեն, բլուրներեն ու ապառաժներեն վեր,

Ձեր ապտվածացումը օրհներգելով պիտի երիվարեն, ահավասի՜կ,
Ո՞վ գիտե, գեպի ո՞ր հաղթանակները կամ դեպի ո՞ր պարտությունները փառավոր...»։

ԱՐՇԱԼՈՒՅՍՆԵՐԸ

Ու արհավիրքով լեցուն Մեռելները այն ապառաժուտ բլուրներու տակեն,

Որոնց վրա ըմբոստացումի մեր կարավանը կլեռնավորվեր,
Հանկարծ իրենց մերկ բազուկները դեպի մեզի տարածելեն,
Նորեն կյանքը վերագտածի իրենց երգերը ցնորաբեր,
Ամենքը մեկ, անշարժ ու երկյուղած ու մղձավանջային,
Տարօրինակ երջանկությունով մը երգեցին...։

«Օ՜, կա՜նգ առեք ձեր վերելքին վրա, ո՞վ դյուցազունները վազվան,
Ու մտիկ ըրե՜ք անոնց, որոնք փառքի օր մը մահն անարգեցին
Ձեզի ու մեր ամենուն համար...
Մենք, մեռելներս, ձեզի հետ ենք այս առավոտ,
Այլևս մեր բազուկի ոսկորներուն ճաքճատյունները, գիտե՜նք, դիվային,

Սրունքներնուս երկայնքն է վար ու ձեր ականջին,
Մահագուժորեն պիտի չի հնչեն...։
Քանզի մեր կմախքները՝ ալ դագաղներեն ու ավերակներեն դուրս,
Սա՛ ծաղիկներուն նման, վերեն հորդող լույսերուն տակ,
Օ՜, ավետի՜ս ձեզի, ավետի՜ս ձեզի, ալ կսկսին պայծառորեն մսավորվիլ...։

«Ու նորեն մեր այսչափ ատեն,
Խավարով ու հողով ու հուսահատությունով լեցուն,
Մեր կոպերուն տակ, այս պահուն,
Մեր նայվածքները լիճերու նման կբացվին,
Ու մեր խեղճ շրթունքները մահեն տրորված,
Օ՜, դիցացե՜ք, ձեր հրավառ ճակատներուն եղբայրությանը պետք ունին...։

«Մեր գերեզմանի քարերն ու խաչերն արյունլվա,
Որոնք մեր մահը ու այս կյանքը մեզի հետ ապրեցան,
Սպասեցեք որ ձեր դյուցազնի գլուխներն անոնց վրա
Դեթ վայրկյան մը զարհուրանքեն իրենց խոնջենքը հանգչեցնեն...։

Նորեն կըսենք, մենք անոնք ենք, որոնք օր մը փրկանքի
Իրենց կյանքը ձեզի համար Եղեռնին տվին...
Ու անոնք դարձյալ, որոնց դուք ձեր այսօրվան երգերովն ամեհի,
Ավերակներու ծանրությանը տակ ուր ցավին հետ վատաբար կկքեինք,

Ձեր արարչագործ շունչովը մեզի կյանքը տվիք։

«Ուրեմն ձեր երգերը մեր երգերը թո՜ղ ըլլան,
Բայց թո՜ւյլ տվեք, որ ձեր ամեն մեկուն պատյանեն մերկացած սուրը պողպատե,
Սա՛ մեր քարուտ, ու դաժան, ու մութ ու անողորմ ճամփան,
Միածանի մը հանգույն մինչև Նպատակը լուսավորե...»։

Ու ես բլուրներուն վերեն ու դաշտավայրին վրա,
Անհունորեն ոտքի՜, ինչպես աշտարակ մը գրանիտե,
Տեսա որ, բյուրավո՜ր ու բյուրավո՜ր ծննդաբեր մայրերը սեահեր
Իրենց նորածին զավակները ձեռքերնուն մեջ ու խելահեղորեն դեպի վե՜ր

Արյունոտած հորիզոններուն ամբարցուցին,
Ջանոնք առավոտին ճառագայթներուն խորը մխրճելով,
Աստվածածին լույսերուն մեջ մկրտելու համար...։
Ու բոլորը մեկ իրենց ջինջ ու ծանր ձայնովն այսպես երգեցին...
«Ո՞վ դո՜ւք, նորածիններ, որ մեր մարմարե կողերուն մայրությենեն ստեղծվեցաք,

Ձեր կյանքին առջև փակ աչվրները սա լույսերովը ողողելեն՝
Խմեցե՛ք նախ այդ շողերեն որ արյունն է ձեր փառավոր հայրերուն,
Ու հետո ամեն օր մեր առույգ ստինքներուն կաթը կենդանարար,
Ձեր ամեն մեկը պիտի ընե այնպես, ինչպես որ ձեր հայրերը մեզի համար

Սա դաշտերուն մեջը անձնուրացորեն եղան...։
Ուրեմն Օվսաննա՜ ձեզի, դո՜ւք՝ մեր միսը, ու դո՜ւք՝ մեր հոգին,
Ու Օվսաննա անոնց, որոնք զձեզ մեզ համար փառքի օր մը ստեղծեցին...»։

Երգերը դադրեցան, մինչդեռ հանկարծ՝ հայտնվեցավ որ,
Անդին, անծայրածիր ու հեռավոր արտերուն վրա,
Բոլոր երիտասարդ ու լայն ու հուժկու հերկողները մեր վաղնջական հողերուն,

Իրենց խելահեղ եզներն երկաթներուն լծած, ու համառորեն,
Ադամանդյա արգասավոր Արշալույսները կարորեն...։

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Մարմարի ո՞ր ապառաժներեն արդյոք իրենց իրանները կառուցին...
Ու ո՞ր գինիեն, ո՞ր թույնեն և կամ ո՞ր արյունեն հրավառ,
Այսպես իրենց աչվրներն ու մտածումը սա՛ խենթությանը հանդեցան...

Ո՞ր սալերուն վրա ու ի՛նչ կռաններով այս արշավանքի գիշերվանը համար,
Իրենց սա՛ կայծակներու հանգույն սուրերը կարողացան դարբնելու...
Ու վերջապես, ըսե՛ք, ո՞ր խավարներուն երկինքեն է որ նվաճելով սանձեցին,

Այս բյուրավոր երկաթե երիվարներն ահարկու...

Ու հորիզոններուն ու հողերուն բոլոր գոտիներեն,
Այսպես, վայրագորեն ու քինահույզորեն ու հաղթականորեն,

Եկա՜ն, եկա՜ն, եկա՜ն Անոնք, իրենց դուլթովը դժոխային
Սասանելեն դաշտավայրը, ուր մենք բոլորս առավոտին լույսերեն գինով,

Վճռական օրվանը համար՝ որ «օրերուն Օրն է» ըսին,
Իրենց խառնվեցանք զանգվածելու համար այդ Փոթորիկն ապերասան,

Որուն անողոք ճամփան, արդեն մեր ամենուն ալ ճամփան էր...։

Ու երբ լուսինը եղերականորեն դեպի երկինք կամբառնար,
Խավարներուն անդունդները իր հրդեհներն անտառելեն՝
Հանկարծ՝ հորիզոնին վրա, Ուրվական մը, թերևս արքա մը՝ մեր հին փառքի օրերեն,

Որ հողեն հառնած ըլլալու եղերական երևույթն ուներ,
Իր խույրը ձեռքը՝ զրահը արեգակի նման կուրծքին՝
Ու իր վահանը ըմբոստներուն դեմը բռնելեն,
Կույր աստվածի՛ մը հանդիսավորությանը համեմատ, ծանրադեմ, ըսավ.

«Ձավակնե՛ր, նախ սպասեցեք որ իմ խավարյալ աչքերուս մեջեն, դարերե ի վեր,
Գերեզմաններեն լեցված դեղին հողը վրա թափելեն, ձեզի խոսիմ...

. . . . . .

«Ու ահավասի՛կ, ձեր հոգիները կճանչնամ ձեր ճակատներուն բոցեն,
Ու ցեղիս արյունին ձեր մեջ եռալը երջանկորեն մտիկ ըրի...
Գիտեմ ձեր ցավը, որուն մոլեգին ծնունդն է ձեր ըմբոստացումն այսօրվան...
Իմացա, գլուխս ձեռքերուս մեջ ու դագաղիս տախտակներուն արմնկած,
Իմացա բոլոր ճիշերն ու հծծյուններն Անմեղներու անագորույն կոտորածին...
Ու սերունդներուս սրտերեն հոսած արյունը կրակե,
Ավա՜ղ, հողին մեջեն սուզվելով իջա՜վ, եկա՜վ, իմ խեղճ ճակատս թրջելու...։
«Բայց արշավելե առաջ, նախ՝ հորիզոններուն առագաստեցե՛ք
Սա՛ դրոշը՝ որ Դրոշն եղավ ձեր հայրերու Հաղթանակին,
Ու ձեր քայլերն շտապելու և հոգինիդ դեռ փոթորկելու համար,

Ոսկեշեփորիս ունկնդրեցե՛ք որ շունչիս մեջեն մեր Վրեժը պիտի
հնչե...։

«Ուրե՜մն, Հառա՜ջ, Հառա՜ջ, ո՜վ Ըմբոստացումի զավկրներս
արյունաբիբ,
Ես գիտեմ, որ կյանքին հանգիստն ու խաղաղությունը այս
երկնքին տակ,
Ձեր հաղթանակեն վերադարձին ցնծությունով պիտի երգեք...»։

Ու հրեղեն Անցյալին տեսիլքն իր ոսկեկուռ պատանքը ուսին,
Հորիզոնին մեջեն հանդարտությամբ անհայտացավ,
Մինչդեռ գերագույն խոովքին փողերը ռազմին համար հնչեցին,
Ու ձիերը մեր երկաթե ազդրերուն տակը ծառացան.
. . . . . Ու գունդերը բախվելեն՝ Վրեժին ու Եղեռնին,
Մարմին մարմինի ընդխառնումը փոթորկեցավ։
Օ՜, այն ընդհարումները օրեր ի բուն, մեկմեկու վրա փլչող
իրաններու...
Ու պաղատանքներն ու գալարումները, զոր մեր կրակներն
անոնցմե կկորզեին,
Ու դեռ անապատում ճարճատյունը հոշոտվող լանջքերուն...
Ու ագռավներուն բազմությունը, սև անտառի մը այնչափ նման,
Որ հարատև՝ իրիկվընե իրիկուն՝
Մեր սուրերեն ինկած դիակներուն վրա խավարին պես
կտապալվեր...։

Գիշեր մը, արյունաուշտ կատաղանքի ու կորուստի գիշեր,
Ուր ամեն դի արյունին ազատարար սահանքները մեր ձեռքերովը
պեզվեցան...
Քանի՜ քանի՜ վիրավոր մարտիկներ
Իրենց հերոսի փառավոր պարտությենեն ամոթահար,
Մեր բոլորին առջև, սարսափին տակ ու թշնամիին դիմաց
Նորեն ապարդյունորեն չի մեռնելու համար,
Իրենց քանդված մարմինները դեպի զմեզ շարժելեն՝
«Հաղթանակի՜ն, Հաղթանակի՜ն, Հաղթանակի՜ն...»
Մոլեգնաբար որոտալեն,
Իրենց պողպատե սուրերը ակռաներուն տակ փշրելով՝ կյանքեն
հուսալի՜ց մահացան...։

Այսպես մեր՝ արհավիրքի կարավանները կամքի զորավորներուն,
Պղինձե ու կապարե աննվաճելի պատնեշներն եզան,
Որոնց դիմաց Ոճիրն իր մարմինը բախելեն պարտասած՝
Օր մը, վախճանական անկումի շարաշուք օր,
Իր ձեռվընեռովն իր ոսկրակույտերը քաղաքներու նման,
Մեր փառքի պատվանդանին տակն ահավոր,
Գերիաբար ծունկի եկած՝ կնդրուկի տեղ հրկիզեց...
Եվ արծաթյա առավոտի մը ընդմեջեն,
Մեր կարմիր քղամիդներովն անհունորեն փաթթված,
Բոլորովին համրաբար ու հաղթական՝ ռազմադաշտը նկատելու
համար՝

Մեր խոլական երիվարներն թշնամիին բեկոքներուն վրա,
Փոթորկին պես ու քառաբշավ արձակելե հետո...
Դարավանդի մը գագաթը բարձրացանք,
Տարփորեն, մեր ոընգունքներն Ազատության հաբիզոնին՝
Ալ վերջապես Եղեռնին ծովատարած տաք արյունը հոտոտելու...։

ՀԱՂԹԱՆԱԿԵՆ ՀԵՏՈ

Բայց մեկը, դարավանդին վրա, իր արյունաթաթավ քղամիդը
հովուն

Ու իր շահին բոցովը մեռելակույտերը լուսավորելեն,
Իր կերպարանքը դեպի մեզ՝ քաղցրաբար ըսավ.
«Եղբայրնե՛ր, թեև գիտեմ որ ձեր անձնվերի՝ ճակատներն այս
պահուն,

Խավարներեն նոր ծնանող սա՛ արշալույսին դիմաց,
Հաղթանակին հուրերովը կաղամանդվին...
Թեև գիտեմ որ ձեր աչվընները տակավին
Ծովատարած Արյունին նկատումեն չարբեցան,
Բայց այսօր Հանգրվանին վրա, մեր մայրերուն գիրկը ժամանելս
առաջ,

Եկե՛ք, նախ մեր ուսերուն արյունոտած վերարկուներովը հրավառ,
Այս փառքերու Փառքին գագաթեն, անմիջապես,

Գանգերու, բազուկի ու տրորված իրաններու,
Գթությո՞ւն հայցող սա փլատակները պատանքենք.
Ու հողին ընդերքը հաղթանակին լուրովը լուսավորելու համար
Բոլորդ մեկ ձեր սուրերուն կրակը անոր խորքը մխրճելեն՝
Թաղեցե՛ք զանոնք անոր մեջ, ուրկե մեզի մեր հաղթանակը բերին...
Ու հետո, վերջապես, ինծի հետևեցեք դեպի քավությունը սա
մրրկոտ ջուրին՝

Որ մեր հայրերուն դիակներովը բեռնավորված,
Իր արհավիրքեն զանոնք այնչափ ատեն սա ապառաժներուն
դիմացը կփշրեր...

Եկե՛ք ձեր արյունոտ դաստակներն հուժկու,
Իմ արյունոտ դաստակներուս հետ,
Անոր սրբագործող ալիքներուն մեջը մաքրելու,
Քանզի, այն իդեալը՝ զոր մեր երիտասարդի մտածումը պայծառ,
Մեր դարավոր հողին համար սրբորեն քանդակեց,
Երբեք, և ճշմարիտ, ճշմարիտ կըսեմ ձեզի,
Այլևս ո՛չ հաղթանակներու ազատաբեր սուրերուն,
Ու ոչ ալ արյունին ահեղությանը պետք ունի»։
Իր խոսքերն ավարտեցան, մինչդեռ,
Առտվան հովին թևերուն հետ, որ ոգևարները կսարսեր,
Գիշախանձ անգղերու փոթորկի մը այնչա՛փ նման,
Մեր վերարկուներն իրենց կարմիր նախճիրին տակ
Բովանդակ ռազմադաշտը մեր նայվածքներեն դիապատեցին...։
Ու մեր ձեռքերեն արձակված սուրերը բյուրավոր
Հեռավոր հողին վրա կայծակի պես սուզվեցան։

ՀԱՆԳՐՎԱՆԸ ԵՎ ՎԱՂՈՐԴԱՅՆԸ

Բացաստաններու ընդմեջեն երբ մարտախումբը դեպի հանգրվանը
կընթանար,

Վճռական ու համառ գնացքովն այն մարդերուն
Որոնց ուղիին վրա ուրիշ նոր ու մեծ Երազներ իրենց թևերը
կբանան...

Հանկարծ՝ լայն ու արգավանդ առավոտի մը նման՝ մեր մայրերուն
ծագումը հայտնվեցավ,

Որոնք սնուցանող կուրծքերնին իրենց քողերեն մերկացուցած՝
Արմավենիի ոստերով բեռնավոր, մեր ճակատներուն համար,
Մեր սպասումեն գինով ու մեր կարոտեն արբշիռ, այսպես երգեցին.

«Զավակնե՛ր, նախ մեզի մոտեցեք, վասնզի գիտենք որ,
Ձեր հոգնած ու խռովյալ ու հաղթական
Ճակատներն ազատաբեր հերոսի,
Այլևս հիմա մեր մայրական լուսեղեն ծոցերուն,
Հանգչեցնող քաղցրությանը պետք ունին...։

«Ու ահա՛վասիկ շուշաններն անբասիր,
Ձեր դեռ արյունլվա ոտվրներուն տակ,
Արշալույսին հետ, ձեր փառավորումին համար,
Մեր մայրական ձեռվրներովն հնձված...։

«Ու ահավա՛սիկ արծաթյա խնկամանները սրբազան,
Ինչպես վաղնջական ու մաքրակրոն քրմուհիներ,
Այսպես մեր անշա՛րժ ձեռվրներուն բարձունքեն,
Թո՛ղ ձեր հաղթողի կերպարանքներուն առջև՝
Մեր պաշտամունքն արտաբուրեն...։

«Ու ահա՛վասիկ մեր հինավուրց հնձաններուն
Աստվածային ու անապակ գինին՝
Զոր ձեր հագուրդին համեմատ,
Այս տոնական ու ցնծության օրերուն,
Մեր հողե սափորներեն պիտի ըմպեք...

«Ու ահավա՛սիկ հոսանքը կրակե արյունին՝
Սև ու հանդիսական ու աննվաճելի ցուլերուն,
Զոր ձեր հայրերու հոգիին ու ձեր աստվածացումին համար
Անոնց գերեզմանաքարերուն վրա, այս առավոտ,
Մեր զորավոր ու սպիտակ ձեռվրները զոհեցին։

«Ու ահավա՛սիկ, ոսկիե որաները ավետարանական ցորյանին...
Ու հեռուներեն արգասավոր դաշտերուն տարածվումը անսահման,
Ահավա՛սիկ գարունեն բարձրացող հողին հոտը կենսաբեր,

Ու ահա՛վասիկ նորեն լայն շարժումները սերմնացաններուն...
Ու ահա՛վասիկ հոտերուն տողանցումը բլուրներեն վեր,
Ու ծաղիկներու ածուներ ձեր սպիտակ վրաններուն համար։

Սրգերը դադրեցան, և հայ մայրերն իրենց զավակներուն հետ,
Սրբազան Արարատներուն դեմ ծնրադիր ու բազուկնին դեպի վեր,
Հաղթանակը տոնելե առաջ, նախ ազատության Հողին համար,
Դարերու անձայն սուգեն հետո՝ իրենց պաշտամունքը մատուցին։

Առավոտ մը նորեն, նույն զավակները նույն իգեատանջ ու
դարավոր ցեղին,
Բոլորս մեկ պայծառորեն մեկնեցանք հանգրվանեն,
Մինչդե՛ռ մեր երիտասարդի երկաթե ուսերը կլայենային...
Արդարության և Զորության և Լույսի վաղորդայնին՝
Գրանիտե հավիտենական ու ճշմարիտ Ոստաններուն
Աստվածադիր հիմնաքարերը կարենալ կրելու համար...։

1899--1901

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Ա և Բ

ԴԱՐԵՐՈՒ ՎՐԵԺ

Հույսերու երկաթե սանդուխին կատարներեն է որ ավետիս
կարձակեմ,
Մոխիրներու, դիակներու և վշտերու հովիտներեն է որ հասա ի քեզ,
Եվ, ավա՜ղ, քղամիդիս թեղանիքներեն իմ շքեղ ցեղիս արյունը
ահավասի՛կ դեռ կթորա...
Բայց քայլերս անխոնջ են և կամքս գերազոր և ձայնս դաժանորեն
ամեհի...
Գլուխս սուգերեն և վրեժեն և ճակատագրեն թեև ալեհեր,
Բայց, տե՛ս, աչքերս դյուցազնի մը աչքերուն չափ կարմիր և
կերպարանքս է սոսկատեսիլ։
Իմաստությանս և ցասումիս արեգակին տակ իմ հուժկու իրանս
անկյունաքար,
Այլևս չուզեր այդ սեռոտի փառքը հավերժորեն իր վրա կրել։
Եվ պազատանքի, ազոթքի, լաց ու կոծի և ողբի այն մատյաններուն
մեջ,
Որ դար առ դար իմ սերունդներս իրենց արյունը և տառապանքն
են լացեր,
Մեկ կոչմ նետեցի ես զանոնք, պարտութենե ստրկացում և
ազաչանքե արցունք չերթալու համար...
Եվ մատաժումովս և զայրույթովս ձեր ցավերուն ամենախոր
արմատները չափեցի.
Տեսա՛ որ ձեր փրկությունն մուրացողի բոբիկ ոտքերն ավերակներու
մոխիրներեն այրեցան...

Տեսա՛ որ դուք արցունքին մեջ երջանիկ էիք և կենսաբեր կռիվին դեմ ահաբեկ...
Տեսա՛ որ արդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը մոլեգնաբար հափշտակել։
Եվ այսօր, ս·հավասի՛կ, իմ անկշռելի բարկությունս իր բոլոր հուրերը վառեց...

«Ահա՛ քեզ ալ կդիմեմ, եկո՛ւր՝ և ճամփուս վրա ոտքի՝ երգե՛ որ արձակե՛մ,
Ճամփուս վրա ռազմերգե՛ որ քինահույզորեն և առհավետ արձակեմ
Իմ հավատքի զավկրներուս վայրենալանջ երիվարները փոթորկապար...
Լսե՛, որ գաղափարիս փարոսները հրդեհեմ չորս ծագերուն դիմաց,
Լսե՛, որ թավալե՛մ ապառաժներուս կույտերը անիրավության կուրծքերուն,
Եվ ոտքի հանեմ հողիս հրեղեն և ըմբոստ մարտիկներուն հետ,
Քինախնդրության և սարսափի բանակներուս արշավանքն ալ ահեղաշար...
Լսե՛, որ շեփորներս հինավուրց հերոսներու հագագովը շեփորել տամ...
Լսե՛, որ երկաթներս կռանեմ և պողպատներս շողացնեմ,
Լսե՛, որ ես ալ իմ արյունախում նժույգս շքեղորեն թամբեմ,
Լսե՛, որ անոր սմբակները ձորերեն վեր՝ լեռնե ի լեռ միայն կայծեն...
Երգե՛, ահա, բոլորին արյունը արև է դարձեր և կամքերն ու դաստակներն է պղնձվեր.
Երգե՛, Եղբայրությունը տոնվեցավ և շունչերն ու հոգիները նույն դարերու վրեժովը պսակվեցան...
Ահա՛ թափվող արցունքները ե՛տ դարձան և կուրծքերու կոծումը դադրեցավ,
Ահա՛ բոլորը մե՛կ, բոլորը մե՛կ, իմ Գերիշխանի թևերուս տակ հառաջացան.
Արբեցո՛ւր զանոնք դեռ, եթե կրնաս, և արժանաբար դյուցազներգե՛ զիս, ո՛վ քնարավոր,
Ես գիտեմ որ քու տավիղդ Հայրենիքին ծարավն ունի, ինչպես վրեժն այնքա՛ն դարերու...
Ուրեմն լարերդ զենիթին շանթերեն հափշտակե, տրցակ առ տրցակ,

Բարձրացո՛ւր ձեռքերդ և զանոնք գիշերվան կապույտներու կամարին կարկառե՛,
Եվ փառազարդե գլուխս առավոտյան աստղերու բույլով մը լուսածոր,
Խնկարկե՛ զիս և անմահության տաճարներուն էն փառակերտը կառուցո՛ւր,
Ծնրադրե՛ և պաշտե՛ զիս՝ և երբ ժամը հասնի՝ ողջակիզվե՛ ինծի համար,
Եվ փշրե՛ քու հողեղենի ճակատդ իմ կոթողիս մարմարներուն դիմաց,
Որովհետև ես ե՛մ, ես ե՛մ, ե՛ս եմ, իմ անունս է Պայքար և վախճանս Հաղթանակ։

1902 ԺԵՆ

ՀՈՂԻՆ ՁԱՅՆԸ

Լսե՛ք, ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և ատելության ընկերներ,
Որ նորեն տառապանքի, հույսի և քանդումի քաղաքներուն վրա,
Այս իրիկուն, ինծի կըսեն, թե բոցավառվող սուրերու հետ պիտի իյնա,
Ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և ատելության ընկերներ։

Ու խոսող ձայնը հավիտենական, մաքառումներու Հողին ձայնն էր,
Որ իր ավերակե բերանները դեպի վեր՝ հորիզոններուն,
Մահազանգերու երկաթեղեն մրրկումի մը հանգույն՝
Վրեժով ու ցասումով առլցված, գերագույն մարտահրավերը կաղաղակեր...
Ու ահավասի՛կ ձեզի մահաբույր արձագանքն իր փրկարար խոսքերուն.

— Ո՞վ քաղաքներես և երկինքես հալածված թափառական զավկրներ,
Մտիկ ըրե՛ք, այս իրիկուն, ձեր հինավուրց և արգավանդ և այրի հողին՝
Ատելությունով, հեծկլտանքով և հոգեվարքով հղի,
Սա քինահույզ ու արյունոտ ու հուսահատ հրավերը պաղատագին...

Եվ եթե կուզեք որ ձեր վաղնջական ազգը դեռ տեւ,
Եթե կուզեք որ երկիրը անգամ մըն ալ ինքն իր մեջը չի քանդվի,
Եթե կուզեք որ ազատության հերոսները իմ կողերես նորեն ծնին,
Եթե կուզեք որ արհավրալից գետերս դիակներով բեռցված չի թավալին...

Եթե կուզեք որ աստղերս բացվին և բլուրներս ծաղկանան...
Եթե կուզեք որ աղբյուրներս երազներու պես ճառագայթեն...
Եթե կուզեք որ բարեբեր դաշտերս նորեն իրենց ցորյանները ծովացնեն...

Եթե կուզեք որ մայրության կաթովս ձեր այգիները ոռոգեմ,
Եթե կուզեք որ արշալույսներս մերկանան և արեգակներս ծագին...
Եթե կուզեք որ հովիտներս այլևս մահվան շունչին տակ չի հեծկլտան...

Եթե կուզեք որ սերունդներս բարգավաճին և իմ այրիի դեմքս գեթ առավոտ մը ժպտի...

Եթե կուզեք որ խաղաղությունը ձեր երդիքներուն տակ արձանանա,
Եթե կուզեք որ ձերիններուն տաք արյունը ճամփաներուս քարերեն վար ա՛լ չի հոսի,

Եթե կուզեք որ ձեր Վրեժը լուծվի և ձեր Ատելությունը հափրանա...
Եթե կուզեք որ Արդարությունը տիրապետե և իր ոստանը կառուցվի,

Եթե կուզեք որ Հայկաշենն և Արմավիրը, Տիգրանակերտն ու Արտաշատը վերականգնին,
Եթե կուզեք որ ձեր հոգիները զորանան և ձեր ճակատները լուսավորվին...

Եթե կուզեք որ դաժան խղճի խայթը ձեր ամենուն առջև գերեզմաններ չի փորե...

Ինծի հասե՛ք այն ատեն, մոլեգնաբար և գունդ առ գունդ,
Բազուկներնիդ ըմբոստացումի երկաթեղեն հովերուն
Եվ ճակատներնիդ բոլոր բախումներուն կարկառած՝
Եվ աղաղակեցեք ճգնաժամերու մահաշուք օրերուն համար սահմանված,
Արիացումին անդառնալի ընդվզումներու, հուսադրող, սպառազինող, հաղթանակող՝
Ձեր սրտոտ և կատաղի կոչերն Ատելության,
Աղաղակեցե՛ք զանոնք որոտումի գոռումներով ապերասան,
Դաշտավայրե դաշտավայր, քաղաքե քաղաք և հոգիե հոգի,

Վասնզի գիտեմ որ այս վճռական ընդհարումներեն հետո,
Թշնամիս ոսկորներեն, հաղթանակին կոթողներն ահարկու,
Ահագնաբար, ճակտիս վրան, ձեր ձեռքերովն, աշտարակվին պիտի...

«Օգնություն աղաղակեցե՛ք ձեր հոգիին բարկության շունչովը բովանդակ,
Ու թող ցանուցիր զավկրներուս ամբոխներն հայկական
Իրարու զանգվածվին, եղբայրանան, հրահրվին,
Ձեր վրեժի մահաշունչ կոչին պատգամներուն տակ,
Ու թո՛ղ ձեր դաստակները կայծակներու նման գալարվին,
Ու գլուխներնիդ արյունով և հույսով խենթենան...
Ու թող ձեր մերկացուցած սուրերը փայլատակեն,
Երիվարներու դռույթեն արձակված բոցերուն հետ,
Ու ձեր ջահերը թո՛ղ իրենց արևները տարածեն,
Լազմադաշտե ռազմադաշտ ու կատարե կատար.
Օ՜, օգնությա՜ն, օգնությա՜ն, օգնությա՜ն արշավեցե՛ք.
Զավկրներուս սիրույն և Արշալույսներու հողին փրկության համար...

Ու որպեսզի ձեր հոգիներն արիանան և ձեր իրանները մարմարվին...

Որպեսզի Ատելությունը ձեր սրտին մեջը ծովանա,
Որպեսզի ձեր քայլերը վճռվին ու ձեր կամքը փոթորկի,
Որպեսզի ձեր հողին մահը գեթ անգամ մը ձեր ուղեղը դաշունե...
Որպեսզի ձեր բազուկները զարնեն ու ձեր կուրծքերը պղնձանան,
Տեսե՛ք անգամ մը օգնություն հայցող կարավանները իմ մոռցված զավկրներուս,

Ու անոնց մարմինները օրերուն ոճիրներեն քարուքանդ,
Ու անոնց որբ հոգիներն ձեր լքումներեն վիրավոր,
Ու անոնց աքսորանքի շտապը իմ դժվարին բլուրներես ի վեր,
Տեսե՛ք, անոնց նայվածքները վերահաս մահեն զարհուրածչ
Ու անոնց աղոթքը ու ճիչը ու պաղատանքը նորակոծ,
Նորեն ու նորեն հուսալով և անձկագին դեպի ձեզ ակնդետ,
Ձեր բոլորեն, ո՜վ հալածական և հեռավոր և տարագիր զավկրներ,
Ձեր բոլորեն պաշտպանության շարժում մը կամ կաթիլ մը արյուն,
Կամ քանի մը զորավոր կյանք, հույսով և հուսահատությունով սպառազեն,

Ձեր բոլորն իրավամբ և եղբայրաբար կոպասեն...

«Աճապարեցե՛ք, ձեզի՞ եմ, որովհետև բոլոր կյանքերը պիտի
ջախջախվին,
Բոլոր ամոլները պիտի այրիանան ու բոլոր այրիները պիտի
մահանան,
Բոլոր նորածինները իրենց խանձարուրներուն արյունոտ
ծալքերուն տակեն,
Իրենց կյանքին անգիտակ աչվրները մահվան մեջը պիտի բանան...
Ու դեռ բոլոր դիակները անգամ մըն ալ և վայրագորեն
Իրենց կտավե պատանքներուն ընդմեջեն պիտի հոշոտվին, պիտի
սրածվին...
Ու բոլոր արգասաբեր արտերն ու խարտյաշ հունձքերն
վաղորդայնին,
Այգեստաններուն ու ծաղկադաշտերուն հետ բոլորը մեկ պիտի
մոխրանան...
Աճապարեցե՛ք, բոլոր կաթողիկեները իրենց գմբեթներովը պիտի
թավալին,
Ու բոլոր քաղաքները քաղաքներուն և գյուղերը գյուղերուն տակ,
Ու բերդերն ու պատնեշներն ու աշտարակներն դարավոր՝ այս
բոլորին վրա...
Աճապարեցե՛ք, ո՞վ վրեժխնդրության օրերու զավկրներս անվեհեր
Դեպի ձեր հողը նվիրական, ձեր նիզակները ցցած ու ձեր
կուրծքերը բացած՝
Ձեր վահանը կռիվներու հովին, ու ճակատամուխ երկաթներնիդ
ճոճելեն,
Աճապարեցե՛ք, ու վայրագաբար ու փոթորկապես ու
քինահույզորեն,
Դեպի անառիկ ապառաժներն իմ հավիտենական կողերուս...

«Ու այս ալ ըսած թող ըլլամ ձեզի, ո՞վ վարանոտ զավկրներ
Թե վրեժխնդիր ու սուրբ ատելություններեն վերջն է միայն,
Որ սրբազան ու աստվածային Սերը Կյանքին,
Իմ անսահման ու մայրական կուրծքիս վրա պիտի ապրի...
Որովհետև, ավա՜ղ, միայն ես գիտեմ թե արյունի ի՞նչ անագորույն
սահանքներ
Իմ յոթը խավերուս աղջամուղջներուն խորը սուզվելով

Հաստատության հիմունքները անողորմաբար ոռոգեցին...
Միայն ես գիտեմ, իրարու հետևե, անվերջորեն, հոգիիս խորը
մխրճվող
Կիսաբաց դագաղներուն ճարճատյունն ահաբեկիչ...
Միայն ես իմացա բոլոր անպատմելի հոնդյունները
ոգեվարներուն...
Բոլոր աղաղակներն անոնց, որոնք փրկվիլ ուզեցին,
Բոլոր ցավատանջ կարկառումը այն ամենուն,
Որոնք դեռ վայրկյան մը արեգա՜կը, արեգա՜կը պաղատեցան...
Միայն ես իմացա բոլոր անձկությունը իրար դեռ տարփորեն
պաշտողներուն,
Բոլոր կողկողանքը զավկրներե բաժնվող արդեն այրի մայրերուն...
Ու այս բոլորին մեջեն ահագնալից կրճտյունը փշրվող
ոսկորներուն...
Ու իրաններե անջատվող գլուխներուն վայրէջքը ցնորական,
Միայն ես իմացա, երբ կառափնատներու բարձրերեն իմ ճակտիս
վրա ինկան...
Ու վերջապես միայն ես գիտեմ կուտակումները այն կմախքներուն,
Որոնք սրտիս խորքերուն մեջը, ո՞ր ժամանակեն ի վեր, ո՞ր
ժամանակեն ի վեր...
Այնչա՜փ մրրկոտորեն արմատացա՜ն, անտառվեցա՜ն...»։
Եվ հետո Հողը քաղցրությամբ՝ մաքառողներուն համար՝ սա
ավետիսը տվավ...
«Բայց հիմա, ո՞վ դուք որ համառորեն մարմինիս ու հոգիիս
կառչած եք,
Դուք Հավատարիմները, Դուք Ուխտվածները, դուք իմ
Հարազատներս անբասիր,
Դուք որ իմ ցավերս ապրեցաք ու ձեր արյունը ինծի համար
անխնա բաշխեցիք,
Դուք որ դասալքումներու դժխեմ վատությունը չի ճանչցաք,
Ձեզի եմ, սրտապնդվեցե՛ք, հուսադրվեցե՛ք, խաչակնքվեցե՛ք,
Քանզի, իրենց փախուստներեն խղճահարված ձեր եղբայրները
բոլոր,
Ահավասի՛կ կհասնին, Ատելությենե հրաշացած ու Սիրով արբշիռ,
Եվ արշալույսին հուրերուն մեջեն իրենց երկաթյա ձեռքերը ձեր
ձեռքերը կփնտրեն...»։

1902 Փարիզ

ԶՂՋՈՒՄԻՆ ԹԱՓՈՐԸ

Ըմբոստացումի և ավերումի խրիկվան մը սուրերուն մեջեն՝
Երբ Հերոսներու աստվածային արյունը՝ հողին հեծկլտացող
կուրծքեն ի վեր,
Հաղթության և հույսի կարմիր արեգակի մը նման կբարձրանար,
Հանկարծ զարհուրյալներուն, շփոթածներուն և մենավորներուն
խուճապը սկսավ,
Քաղաքներեն և ավաններեն գուրս, հովիտներեն, բլուրներեն և
գետերեն անդին,
Դեպի անստույգ հանգրվանները մահացնող օտարացումներուն...

Ու հազարավորներ էին անոնք, հազարավորներ ու հազարավորներ՝
Որ մեկեն ի մեկ աղետաձայներեն զարհուրած դեռ չէին կրցեր
իրենց քայլերը վճռել,
Իրենց դաստակներն ու սուրերը գալարելու, թշնամիները նայվածք
նայվածքի ճակատելեն,
Եվ այս բոլորը խելահեղված՝ մոխրի, հոգեվարքի և լացուկոծի
քառուղիներեն անցան,
Անոնց հետ որ ավա՜ղ կոտրտվելով, մեռնելով, ջախջախվելով,
արյունվելով կշտապեին,
Իրենց մազերը անգթորեն փետտելով և կորսված զավկրներու
ի խնդիր...
Եվ օրերով և խավարներով սահմանե սահման խուճապեցին,
Եվ կային որ ֆիզամեռ մարմիններ ուսերնուն վրա և գետնաքարշ՝
կփախչեին,
Կային որ իրենց հաշմված ձեռքերեն և տրորված սրունքներեն
մաս առ մաս,
Ճամփաներու քարերուն, հողակույտերուն և մացառներուն վրա,
Սղերակոտորեն, արյունոտած լաթերու պես՝ թափթփելով՝
կշտապեին,
Ընթզումի շառաչներուն և հրդեհված քաղաքներուն առջեն...
Զարհուրելի արշավանքովը անապատներու այն փոթորկին...
Որուն վայրագությանը վրա, քալող անտառներու հանգույն
կայծակները կտապալվին...

Երկրին բոլոր ծայրերեն ելուժեին ասոնք, բազուկներին
հովերուն՝
Եվ չի մոտեցող գզնությունները պազատագին տարածված,
Կույրերու խավարշտին և անգիտակից խուռներամի մը այնչա՜փ
նման
Որ զայրագին ու մոլեգնած ու առխարխափ,
Ապառաժներու անագորույն քախումներուն պիտի վազեր...

Բայց Մեկը որուն մտածումը մոլորածներու աչս մգձավանջեն
կխենթենար,
Որուն հոգին կ'արյունոտվեր և որուն ծիքտը իր նեքսիդին
իր կշտամբ կձայներ,
Ամբոխին առջև աշտարակվելով՝ անոր վազքը դադրեցուց, և
ծանրադեմ ըսավ.
Իր խոսքերը իր Կամքին և իր Հավատքին չափ անձնուրաց էին և
զորավոր,
Իր շունչը սրտոտ, նայվածքները պղտոր և իր հսկայի ճակատը
բոցավառ
Եվ քայլերը դասեցան և վազքը դադրեցավ և կամքերը պրկվիլ
սկսան՝ երբ Անիկա կխոսեր...

«Դեպի ո՞ւ, դեպի ո՞ւ, դեպի ե՛ւ, և ասե՛ք, դեռ ո՞ր Հույսին և ո՞ր գթության
Մահացու, անողորմ ու մարդկային այդ ապառաժներուն դիմաց,
Այսպես պիտի երթանք կարավան առ կարավան, խելահեղաբար և
բազկատարած՝
Մեր իրաններն ու մեր ճակատներն անոնց հանդեպ, անգամ մըն
ալ կոտրտելու...
Ասե՛ք, դեպի ո՞ր օգնությունը և դեպի ո՞ր արյունարբու
թշնամիները պիտի քալենք...
Դեպի ո՞ր շնորհին և ո՞ր մարդասիրության թունավոր բաժակներուն
Պիտի երթանք մեր ծարավեն սառած շրթունքները կաքկառելու...
Ո՞ր անողոք աստվածության և ո՞ր անողոք խորանին
կհառաջանանք,
Մեր պաշտամունքը, մեր ոգյունը և մեր արցունքը անոնց առջև
թափելու...

Ո՞ր բարբարոսության և ո՞ր բռնապետին անողորմ ճիրաններեն,
Մենք մեր կյանքին՝ մեր հոգին և մեր հողին փրկանքը կհուսանք,
Ո՞ր արեգակին, ո՞ր գիշերին և ո՞ր հորիզոնին տակ՝
Այսպես կերթանք մեր փախուստեն ամոթահարի մարմինները գերեզմանելու...
Ո՞ր անդունդին բերաններեն և ո՞ր ժայռին կատարներեն, այս իրիկուն,
Պիտի երթանք, մեր ստրուկի ձեռվընեռովը մեր աչվընները փակած՝
Վատերու պես դեպի անէացումին խորխորատները գահավիժելու...
Մինչդե՜ռ անդին, մինչդեռ անդին, մեր բոլորին համար՝ մեր ամենուն սիրույն,
Մաքառումի, քանդումի և հույսի հողին վրա,
Ազատության չահակիրները ընդվզումի բոցերեն աստվածացած՝
Եվ իրենց դյուցազնի Կամքեն ամենազոր, գերագույն կռիվներու Կռիվը կմղեն...

«Ձեզի եմ, դեպի ե՛տ, դեպի ե՛տ, դեպի ե՛տ արշավենք,
Մեր թմրութենեն և մեր սարսափեն առնաբար սթափվելով,
Եվ թո՛ղ մեր տեղափոխվող ծովի զարհուրանքը թշնամիները խիզախ,
Թո՛ղ մեր ակռաները զանոնք հոշոտեն և մեր բռունցքները վայրագորեն հարվածեն,
Թո՛ղ մեր ձեռքերը ճամփաներու հրաքարերովը զինվին,
Թո՛ղ մեր քայլերը հնչեն և մեր վրեժի և քաղցի աղաղակը որոտա,
Թո՛ղ մեր կարավանը մեր հառաջապահ եղբայրները պատնիշե,
Թո՛ղ մեր թևերը դուռներուն ետևը լքված մեր զավկընեռուն երկարին,
Թո՛ղ մեր բերանները զանոնք համբուրեն և վաղորդայնին հույսը զանոնք օրորե,
Թո՛ղ մեր ատելության և մաքառումի ձայները զանոնք կազդուրեն,
Թո՛ղ մեր այսօրվան քայլերը վաղվան կռիվին մեջ անոնց քայլերը որոշեն,
Եվ թո՛ղ մեր ճակատին, մեր մտածումին և մեր հոգին վերքերն անոնց համար
Էմբոստացումի և ազատության խորհրդանիշերը հանդիսանան...
«Ուրեմն դեպի ե՛տ, դեպի ե՛տ, որովհետև, ճշմարի՛տ, ճշմարի՛տ կըսեմ ձեզի,

Հայրենիքի այս լեռներեն, դաշտերեն, այգիներեն և հովիտներեն անդին,
Ուրիշ ամե՛ն աղբյուր, ամե՛ն աղբյուր, մեր բերաններուն մեջ իր թույնը պիտի վազցնե,
Բոլոր դռները ու բոլոր անցքերը ու բոլոր ուղիները մեր առջև պիտի խափանվին...
Բոլոր հույսի աստղերը մեզի համար պիտի խեղդվին և ամեն արև պիտի խավարի...
Մեր հացին ալյուրը մերիններուն փշրված ոսկորներեն պիտի շաղվին...
Մեր նախնիքներուն փառավոր անունը մեր անունին տակ պիտի փճանա,
Ու վերջապես բոլոր օտարության երդիքները՝ երկաթակույտերու ծանրությունով մը ծանր՝
Անողորմաբար, մեր գլուխներուն և մեր ուսերուն վրա պիտի փլչին...»։

Պատգամաբերը իր խոսքերը դադրեցուց իր խումբերուն հետ հառաջանալով,
Երբ զղջումի թափորը դեպի երկիր՝ ծնրադիր և դողդոջուն, պաղատեցավ...
«Թողությո՛ւն մեզի, թողությո՛ւն մեր բոլորին, թողությո՛ւն, ո՞վ մայր-երկիր,
Որ քու ցավերդ, քու նայվածքներդ և քու սուրբ կռիվդ լքելով, քեզի դիմաց մեղանչեցինք,
Ընդունե մեզի, քանզի մեր մարմիններն ու մեր մտածումը, այս իրիկուն,
Քու դյուցազնական Առաքյալներդ իրենց շունչերովը զորացուցին...
Ու մեր հուսահատութենեն՝ մեր առջև հաղթության հույսը կառուցվեցավ...
Ընդունե մեզի, գիտենք որ քու փրկությանդ մեջն է Փրկությունը մեր ամենուն...»։

Եվ հիմա բովանդակ թափորը վեռական՝ հորիզոնե հորիզոն՝ դեպի հողը կխոյանար,
Մինչդեռ ատելության և սիրո և զղջումի արցունքները անոնց աչքերեն կհոսեին...

1902 Մարիզ

ԱՆԴՐԱՆԻԿ

Ինքն էր որ Ծրագիս մարմարյա եզերքներուն վրա, այս գիշեր,
Ազատաժի մը նման անհաղթելիորեն ոտքի,
Իր ըմբոստացողի հրեղեն գլուխն աստղերուն մեջ մխրճելեն,
Ու իր ձեռքը ատելության սուրերովը զինած,
Հողին փրկության սիրովը հրաշացած եղբոր մը նման,
Որ եղբոր մը օտարացումեն իր հոգին կարյունի,
Խոսեցավ ինծի Ան, և իր բառերը իրարու ետևե, և կարգ առ կարգ,
Խիստ էին և քաղցր և ճշմարիտ և քինահույզ և առնական...

«Եվ ահավասիկ ես եմ, ո՞վ մեղկության ու անշարժության զավակ,
Որ աղմկահույզորեն՝ այս իրիկուն հեռուներեն կուգամ,
Քու երազուն և անտարբեր ու անգործոն ու եսական ու տկար,
Եբիտասարդի մարմինդ ու էությունդ ու հոգիդ,
Բազուկիս հարվածովը ու սուրերուս շառաչին հետ,
Կոփվներու հարկադրիչ ժամերուն համար, վերջնականապես
ցնցելու...

Ունկնդրե իմ ձայնիս որ այս վճռականության օրերուն
Մեր ցեղին, մեր վրեժին ու մեր արյունին աղաղակն է ահարկու,
Ու խառնվե՛, քնկերացի՛ր, եղբայրացի՛ր, սա՛ մեր հզորագույն
ամբոխին հետ՝

Եթե դեռ քու հոգիիդ մեջ ազատության որևէ կայծ վառ մնաց,
Եթե դեռ քու քաղցկներդ քաջությունը ունին թշնամիներ
հարվածելու,
Եթե սիրտդ գեթ անգամ մը խոցոտվեցավ մեր մայր-հողին
մահացումեն,
Եթե ցեղիդ տառապանքեն ու անմեղներու կոտորածին
մղձավանջեն,
Քու ներսիդիդ ատելության ու բարկության անտառները
բարձրացան...
Եթե դուն դեռ կյանքիդ մեջը պիտի կրնաս նպատակի մը
փութիվ,
Եթե դեռ քու աչվրներդ այդ անօգուտ արցունքներեն չկուրացան...
Եթե դուն քու աղոթքներդ Ատելության գոռոմներու փոխեցիր,
Եթե ցեղիդ ազգական ու արեգակի արյունին

Երակներուդ ու գլխիդ մեջ բորբոքվիլը դեռ կզգաս,
Եթե դեռ Արամին, Տիգրանին, Արտաշեսին և Վարդանին,
Հաղթանակող զորությունեն քու մեջդ շունչ մը մնաց,
Դյուցազնական քայլերեն քու երազողի նայվածքներուդ առջև,
Անձնվիրության, վրեժի և ազատության ճանապարհ մը բացվեցավ,
Ոտքի՛ կեցիր այն ատեն, եղբայրացի՛ր խումբերուն ու մրրկվե՛
անոնց հետ,
Որովհետև, գիտցիր որ այս զոհաբերումի, ընդվզումի և հույսի
օրերուն,
Մեր ամեն մեկուն համար անկողնի մեջ հոգի տալը
վատություն է վատություններուն...»

Հանկարծ խումբերը հեռացան արևածագին կրակներուն միջեն,
Ու իրենց կամավորի գիտակից ու վճռական քայլերուն հնչյունը
երկաթյա,
Մարմարակույտեր փշրող անհամար կռաններու հնչյունը ուներ...
Մինչդեռ թշնամիներեն անջատված գլուխներ ջահերու պես
ելբոցավառեին՝
Իրենց ուսերուն վրա բարձրացուցած սուրերուն կատաքներեն...
Եվ ես այն ատեն՝ նախանձությամբ ու տարփանքով հողին վրա
ծնրադիր՝
Իրենց հերոսի քայլերուն հետքը երկյուղածորեն համբուրեցի...

1903 Փարիզ

ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ո՞վ մարանչումներու և զորության արքայական հանգ,
Ներե որ ակնածությամբ՝ և եղբոր մը պես դեպի քեզ հառաչանամ,
Եվ իմ տառապողի և տարփավորի կարմիր քնարովս այս իրիկուն,
Քու չտատղվանքդ ու փառաբորումդ երգեմ քեզ պաշտողներուն
համար։

Թեև իմ շունչս կարող չըլլա քո հաղթանակի փառքդ շեփորելու,
Թեև իմ քնկճվածիկ մտածումս քու անունիդ կատաքներուն երբեք
չբարձրանա,

Թեև հոգիս անարժան ըլլա քու հերոսի հոգիդ խորասուզելու...
Թեև խորհուրդներս ըլլան աղքատ և ձևերս անպաճույճ,
Թեև քեզի համար կառուցած խորանս ըլլա անսուրբ և ծխած
խունկս օտար,
Թեև ես խեղճ լացող մը միայն եղած ըլլամ Հայրենիքիս
մոխիրներուն առջև,
Թեև իմ քայլերս քու քայլերուդ ճամփաները ստրկորեն
անգիտանան,
Թեև բազուկներս ու կուրծքս խուսափած ըլլան քու կռիվիդ
սրբավայրերեն,
Թեև ճակատս մինչև այսօր ընդվզումի կայծ մը հղացած չըլլա...
Բայց ներե՜ պարտվածիս, ներե՜ եղբորդ որ այս իրիկուն զքեզ
երկրպագե,
Հորիզոններեն քալող քու արձանակերպ ստվերիդ խենթի մը պես
կառչելով,
Ու թող քու հերոսի շունչիդ հովերեն գինովնամ,
Թո՛ղ քու մտածումիդ և անցյալիդ պատկերներեն այլակերպվիմ,
Թո՛ղ քու դյուցազնի արփաթև անունեդ եղեգի մը պես դողդոջեմ,
Թո՛ղ քու հավատքովդ լվացվիմ և և քու հրամանովդ
հառաջանամ...
Որովհետև թերևս այս բոլորը, քու աչքերուդ ու կերպարանքիդ
քաղցրությանը հետ հրեշտակային
Ու իդեալիդ ու հաղթանակներուդ մարտապատկերին հետ,
Թերևս իմ արյունս հրավառեն, կորուսյալի քայլերս ուղղեն, թերևս
բազուկներս ու կուրծքս երկաթեն...
Դուն տարիներով ու տարիներով սարսափանքը եղար մեր թշնամիի
խուժաններուն,
Դուն՝ որուն արդարության սուրը եղեռնին վրա շանթի մը պես
կշողար,
Դուն՝ որուն նայվածքներուն հրամանին տակ բարբարոսները
պաղատելեն կծնրադրեին,
Դուն՝ որուն քայլերուն և զենքերուն շառաչումեն ռազմագունդեր
նահանջեցին...
Դուն՝ հայրենիքին սրտապնդող արեգակն էիր դժբախտներուն
համար.
Եվ միանգամայն փոթորկանման աղջամուղջը թշնամիներն
ահաբեկող...

Դուն այն կամքի ու հույսի մարգարեն էիր որուն հոգիին ի տես,
Բոլոր Սասունն ու Մուշը ու Բաղեշը հավատքովդ հաղորդվեցան...
Դուն անտիրական ժողովուրդին պաշտպանն էիր ամենազոր,
Դուն՝ քաղաքներուն ու բոլոր երդիքներուն խաղաղությունը եղար,
Եվ անընկճելի հսկողը ճակատագրեն ու ոճիրներեն դատապարտյալ
անմեղ կյանքերուն,
Դուն բարեբեր դաշտն էիր ու պտղատու այգին ոսկեվառ,
Դուն այն ավազանն էիր պայծառ՝ որուն վրա բոլորս տարփանքով
գլխահակ,
Մեր ապագա օրերուն արշալույսներն ընդնշմարեցինք...
Դուն մեկը եղար հիմնաքարերեն ազատության այս ապարանքին,
Որուն վրա այլևս բյուրավոր ու հաղթական բազուկներ,
Անխոնջորեն, մարմարյա զանգվածներ կբարձրացնեն...։

Եվ առավոտ մը, մեր հեռավոր ու սևահեր ու տրտում քույրերն,
քու անունիդ քաղցրությանը ի լոր,
Զքեզ երկյուղածորեն և սրբությամբ իրենց ԱՂԲՅՈՒՐԸ
անվանեցին...
Ու հրաշափառ ծերունիներ քու փառքիդ և արևիդ համար,
Հսկումներու ծնրադրեցին պատարագներու առջև արտասվելեն...։
Ու վերջապես դուն, ո՜վ անկորնչելի, բովանդակ ցեղիդ
գոյությանը վրա
Անդորրությունը տարածելեն՝ վերահաս աղետքները կամքիդ
բոցովը ցրեցիր...։
Ու քեզի հետ էին ու քեզի հետ ինկան քու քառասուն զինակիցներդ
փառահեղ,
Անոնք որոնց հոգիներն քու խոսքիդ ու քու արարքիդ ծարավովը
կայրեին,
Անոնք որոնց շունչը քու շունչիդ հովերեն էր որ կհպարտանար,
Անոնք խնկարկու և շքեղ քահանաներն եղան քու ազատագրման
կրոնքիդ,
Անոնք իրենք իրենց մեջ քու իշխանական անձիդ տիրապետումը
կապրեին,
Անոնք քու գաղափարովդ գինով էին ու քու զորությամբդ
զորական.
Ու գիտցան ու կարողացան ըմբոստացումի առավոտյան մը
զարհուրանքին մեջ,

Իրենց արիական արյունը խառնելու թշնամիին մեղապարտ
արյունին հետ...

Ու դեռ քու կինդ կար, աստվածային ու մաքրակրոն Սոսեն՝
Որ հրացանդ ու սուրդ իր հոլանի ուսերուն վրա կրեց,
Ու քու հաղթական ու արքայական գլուխդ, ցավի ժամերուդ,
Իր սփոփարար ու գորովագութ ու սիրատոչոր կուրծքին վրա...
Ու հետո եղբայրներդ կային և մանավանդ զավակներդ իրենց
հորը հետ սրբորեն ըմբոստ,
Իրենց արյունը որ Վարդանյաններու արյունն էր հրաշեկ,
Ազգին համար և արցունքոտ նայվածքներուդ առջև, հպարտությամբ
հոսեցուցին...

Բայց ըսեմ քեզի, ո՜վ եղբայր, ո՜վ հերոս, ո՜վ Աղբյուր,
Ու թող քու ոսկիե ոսկորներդ հողին ծոցին մեջ լուսավորվին,
Թո՛ղ քու ճակատդ իր ցավեն ու հոգնութենեն նոր հույսով մը
ժաղկի.

Ու թող քու վրեժդ ու ցասումդ այլևս առհավետ հափրանան...
Վասնզի քու վայրագ դահիճդ քու զինվորներուդ արդար ձեռքովն
պզնձյա,
Փառքի և պարծանքի անմոռաց օր մը անպքաբար գլխատվեցավ...
Եվ դեռ ուրիշներ բարձրացան, ուրիշներ զինվորվեցան, ուրիշներ
մեռան,
Քու հավատքիդ Գողգոթային վրա, քու լեռներուդ դիմաց, քու
պաշտպանյաններուդ պաշտպան,
Որոնց աշավախումբերեն արյունաբբու թշնամիները նորեն
դզրդեցան,
Որոնց երևումը քու մահեդ անմխիթար երիտասարդները նորեն
ծառացուց...
Ու անհամարներ կան այսպես, կատաղաբար ու վճռականորեն
ոտքի,
Հողին տարփանքովն արբշիռ ու ազատության մտածումովն
սպառազեն...

Ավա՜ղ, չեմ գիտեր թե ո՞ւր է որ իր բոլոր փառավորությամբը
կհավերժանա,
Քու տիտանյան մարմինդ արևանման գլուխդ անչատված,
Ո՞ր վրեժխնդիր, ո՞ր քինահույզ և ո՞ր բարեկամ աստղին տակ

Բայց քու անունդ, ո՜վ զորութենե և հավատքե հրաշագեղ Սերոբ,
Քու անունդ կտարածվի, կգահակալվի և կարշալույսվի,
Մեր հոգիներուն տրտմությանը և հայրենիքին բոլոր անկյուններուն
վրա,
Ինչպես աստվածառաք և անճառելի և աննվաճ Անունը Հույսին...

1904 Ալեքսան

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Եվ արյունոտ Արարատին կատարներուն ստորոտեն,
Անոր ըմբոստացողի մրրկոտ շունչը այսօր նորեն կհնչեր

Եվ երեկ, ո՜վ դուն, տառապանքե ու մաքառումե աստվածացած
սրբազան Սերունի,
Քու հեռավոր ու անձկալից վեհարանիդ պատշգամներեն,
Բազուկներովդ թշնամիին ոհմակներուն վրա սարսեցուցած,
Քու ընդվզումիդ բոցավառ և օրհնեալ ջահերեդ՝ այսօր,
Մեր ամենուն պաշտամունքով և անձնվիրությամբ առլցված աչքերը...
Նորեն քեզի կդառնան, նորեն քեզի կուխտավորվին...
Ոտքի կանգնե՜, վեհափառ, ոտքի կանգնե, ո՜վ քաղցրորեն Հայրիկ,
Եվ հուսադրե զմեզ, քու ավետարանական խոսքերուդ զորությանը
ծարավը ունինք,
Նորեն զմեզ փոթորկե՜, նորեն զմեզ գինովցո՜ւր, նորեն զմեզ
խրախուսե՜,
Որովհետև այլևս՝ մաքառումներե ի վեր, այլևսի արյուններե
ի վեր,

Զավկրներուդ մտածումը, նայվածքները և հոգին
Ըմբոստացումին ուխտված ճանապարհին քարերուն վրա,
Քու բացակա քայլերուդ և ոսկիե զավազանիդ հնչյունին
սպասեցին...

Բայց դուն չեկար, Հայրիկ, չծուեցար, չծնրադրեցիր, ինչպես
երբեմն՝

Հայրենիքի անասելի սրածումներուն, քաղաքներու ավերումներուն,
Դաշտերու և ավաններու մոխրացումներուն և դիակի շեղջակույտերուն առջև,

Չեկա՛ր և չհոտոտեցիր և չխենթացար մեր արյունին ծովացումներեն...

Չեկա՛ր ու չշարժեցիր քու հարազատ զավկրներուդ սուրերուն հետ՝
Քու նախկին և օրհնեալ և արդար սուրդ Վասպուրականի...
Չքալեցիր անոնց հետ, ինչ հոգ, դեպի պարտություն կամ հաղթանակ,

Եվ չկրցար կառուցանել ազատության այն ոստաններն անվկանդ,
Որ քու ձեռքովդ միայն կերտելու էին սահմանված...

Մինչդեռ այն գաղափարը և կրակը որ զավկրներուդ արյունը օր մը հրահրեց
Քու նայվածքեդ էր բխած և քու ազատաշունչ խոսքերեդ արշալույսված...

Եվ միայն կոտորումներու և քանդումի արհավրալից օրերուն,
Ցդավոր տաճարիդ խորաններուն առջև հաղթվածի մը պես ծնրադիր,

Քու հպարտ, քու հոյակապ, քու հարուստ, քու հանճարեղ ճակատդ պայծառ,
Անոնց խաչքարերուն դիմաց, ցավիդ խորութենեն զգայախաբ,
Եվ աստծուդ գթությանը ի խնդիր, ավա՜ղ, ապարդյունորեն արյունեցիր...

Բայց խորանները և գմբեթներն իրենց քարե խավարը հավերժացուցին,
Եվ լությունը երկաթեղեն անձրևի մը նման քու չքնաղ հասակիդ վրա տեղաց...

Եվ զորության ու հաղթանակի Աստվածդ՝ անշուշտ
Քու պարտվածի արցունքներուդ վրա, դառնությամբ մը ժպտեցավ...

Եվ այսպես ցեղիդ փրկարար ցավը փոխանակ զքեզ ընդվզումին մեջ աշտարակելու,

Քեզ աղոթելու, արտասվելու, պաղատելու խոնարհեցուց,
Մինչդեռ արժան էր որ դուրս գայիր կռիվին մեջ ու կռիվին համար,

Քու լուսավորչի գավազանդ ձեռքդ և մարգարտյա հողաթափդ ոտքիդ,

Քու սքեմիդ և սաղավարտիդ ընկճող վեհությամբն փառավոր,
Եվ քու խոսքիդ կախարդանքեն, քու ձայնիդ որոտումեն, քու նայվածքիդ փայլակներեն...

Բովանդակ զավկրներդ, ամբոխ առ ամբոխ և խելահեղաբար,
Պիտի՝ խուժեին լեռնավորվիլ քու լուսեղեն ձեռքերուդ և պատվանդանիդ տակ,

Եվ քու մեկ պատգամդ, քու օրհնությունդ, քու մեկ քայլդ պիտի բավեր,

Իբրև մեր ամենուն մտածումին վարդապետը՝ և մաքառումին վաղնջական ոահվիրան,

Որպեսզի կամքերը սուրերուն հետ վառեին, որպեսզի քայլերը հառաջանային,

Որպեսզի թշնամիները զարհուրեին, որպեսզի հաղթանակները մարմարվեին...

Բայց այսօր, բայց այսօր, դեռ ուրիշ անագորույն թշնամիներ,
Եկան քու Ազգիդ աստվածադիր և դարավոր հիմնաքարերը կոտրտելու,

Եվ դուն, օ՜, փառք քեզի, ցեղիդ սիրուն զոհվելու համար դեպի առաջ խոյանալեն,

Ըմբոստացար, և ցասումով ու բարկությամբ անիծեցիր զանոնք.
Եվ սրբազան երդումը կարդացիր մինչև մահ կամովին և խրոխտաբար քալելու...

Դիմադրե՛, ո՜վ տառապանքի և մաքառումի անընկճելի ապառաժ,
Ահավասիկ որ տաճարներուդ սրբավեմ գավիթները թրջվեցան...
Քու դյուցազնական և մարտիրոս զավկրներուդ արյունովը ոսկեվառ,

Ահավասիկ որ սրտերն ուխտվեցան, և ձեռքերը բարձրացան,
Ահավասիկ որ ատելությունը կքալե սրբազան սիրուն հետ թև թևի.
Ոտքի կեցիր, ոտքի կեցիր, ո՜վ գաղափարի և ազատության ջահակիր,

Որովհետև քեզի հետ ենք. Հայրիկ, քեզի հետ ենք, մարդարե, քեզի հետ ենք, Վեհափառ,

Տե՛ս, քու ցիրուցան զավկերներդ կործանումի ձայներեն
ըմբոստացած,
Բոլորը մեկ դեպի նոր ու փրկարար Շավարշանները կքալին,
Եվ Բզնունյաց ծովը, մրրիկովն իր ալիքներուն, քու կիրպարտանդ
կաղերսե,
Ոտքի կեցի՛ր մեզի հետ, ոտքի կեցիր տիրաբար, ո՜վ հերոսական
Հայաստիկ,
Եվ քու երբեմնի սուրդ և այսօրվան խաչդ նվիրական՝
Երկուքը մեկ այերին մեջ ամբարձնելով, Աստծուդ նալվածքներուն
գալարե,
Եվ դառնությամբ կամ քաղցրությամբ Անոր հարցուր որ ընտրե...
Ես գիտեմ որ Հրեղենը արշալույսին մեջեն պիտի գոռա . . . .
. . . . . .
. . . . . .
— «Ելթի՛վ, քու հինավուրց Սուրդ այսօր նորեն մերկացո՛ւր»...
. . . . . .
. . . . . .
Եվ արյունոտ Ճրարատին կատարներուն ստորոտեն,
Անոր ըմբոստացողի մրրիկոտ շունչը հավիտենապես պիտի հնչե...

1904 Փաբիզ

ԿՈՎԿԱՍ

(Նվեր կովկասահայ ընկերներուս)

Ի՞նչ ոսկեղեն դարագլուխ է այս, և շքիաներու ի՞նչ զայրագին
փշրտում.
Ի՞նչ ընդհարում ճակատ ճակատի, և հավատքի ի՞նչ հաղթանակ.
Ի՞նչ երկաթեփուռ հարված բռնապետության անխախտելի
օրենքներուն.
Ի՞նչ արյունի հեղեղում քեզ անարժան թշնամիդ վայրագ
շարքերեն,

Եվ պիսակի ու բացված լանջքերու ի՞նչ արդարաշա՞ր մեռելակույտ,
Մեր բոլորին վրիժածարավ աչվրներուն առջև...

Կովկա՜ս, հաղթականորեն դո՛ւն եղար, որ հայտնություններուն
գերագույնը ըրիր.
Քու բազուկներուն հուրին մեջն էր գետնահարող զորությունը
Ցեղին,
Քու մտածումիդ մեջն էր, որ ծնավ կարմիր արևը հուսահատյալ
Հաղթության,
Քու արյունիդ մեջն էր, որ վառեցավ ճշմարիտ արյունը երազված
Ընդվզումին.
Եվ այսպես իրիկուն մը քու զինավառ ձեռքերդ ազատության
աստղերուն նիզակվեցան,
Թշնամի երկինքներուն չարիքի կամարներեն կորզելու
Քիչ մը լույս, քիչ մը կյանք, քիչ մը սեր և քիչ մը երազ՝
Քու խռովյալ սերունդիդ և ի քեզ ակնդետ ու տառապող եղբայրնե-
րուդ համար

Ո՜, փառք քեզի, և փառք շանթամարտ հպարտությանը քու
լեռներուդ,
Կարծես անոնց ապառաժներուն հավիտենական տարրերեն են
կառուցված՝
Անպարտելի հասակները քու սահեր ու հրաշվի որդիներուդ,
Քու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գիշերական
Անոնց զինվորյալի կուրծքերուն մեջ իր հսկայական հեքը դրավ.
Քու հովիտներդ Անոնց քայլերուն առջև Հույսին ճամփաներուն պես
կանանչացան...

Եվ քու հազմերդ Անոնց շունչին մեջեն փրկության ժամը
շեփորեցին։

Քու ծոցիդ մեջն է, քու սրտիդ վրան է, քու արեգակիդ տակն է,
Եվ հարազատ և անպարտելի և անվեհեր զանգվածը մեր հինավուրց
Ազգին,

Մեր նսեմացյալ ճակատները այդտեղ էր, որ վերջապես իրենց
մութեն պայծառացան,

Այդտե՛ղ էր, որ սկսավ պայքարի սուրերուն ամենեն արդարը շողալ,
Այդտե՛ղ էր, որ ժողովուրդը իր իրավունքը իր կռուփովը պահանջեց,

Այդտե՛ղ էր, որ Ան չի լացավ, չի ծնրադրեց և իր գլուխը հողին չի հասավ,
Այդտե՛ղ էր, որ կատաղությամբ զարկավ և հպարտորեն զարնվեցավ,
Այդտե՛ղ էր, որ արդարություն որոտացողի իր ճակատը փառակերտ՝
Արևմուտքի աշխարհներուն դիմաց ջահերու պես ցոլացուց,
Այդտե՛ղ էր, որ իր անեծքի և պժգանքի թուքը թագակրին նետեց,
Եվ այդտե՛ղ էր, որ վերջապես Անիրավությունը օր մը ամոթահար պարտվեցավ,
Եվ քեզի համար, այդտե՛ղ է, որ այսուհետև կոթողները Փառքին,
Մարմար առ մարմար սերունդիդ ձեռքերովը պիտի բարձրանան...

Զա՛րկ, Կովկա՛ս, ավերակյալ ու արցունքոտ Հայաստանին աչքերը քեզի կնային.
Ան գիտե, որ քու թշնամիդ ատելությունը իր թշնամիներեն է որ կբխի,
Երբ իր գերեզմանին մոխիրը իր գուժկան հովերուն հետ եկավ ճամփաներդ սգավորել,
Երբ իր արյունը եկավ քու եղբայրական տանդ սեմերը թրջել,
Երբ իր կոտրտած բազուկը քու կորիճի ձեռքերուդ ի խնդիր քեզի դողդոջեցավ,
Թշնամին նույնն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի բազուկեն զարհուրած՝
Կուզե զայն ջախջախել, կարենալ տոնելու համար վերջնական մահացումը մեր Ցեղին...
Ուրեմն զա՛րկ, Կովկա՛ս, թեև գիտեմ որ քու ասպետական ձեռքերուդ հարվածին անարժան է նա,
Զա՛րկ, թեև գիտեմ որ քու սուրիդ վեհությունը պետք չէ՛ր արատավորել
Այդ անբաններու խուժանին թունավոր ու պժգալից արյունեն...
Զա՛րկ, թեև գիտեմ որ հերոսները հերոսներու միայն կրնան ընդհարվիլ,
Զա՛րկ, սա անարգ ճակատագիրը ջախջախելու և Ջարիքն ըմբերանալու համար,
Զա՛րկ, որովհետև ամե՛ն Հույս զքեզ կհուսա և ամեն Սպասա զքեզ կսպասի,

Զա՛րկ, վասնզի ամեն Ազատություն ու ամեն Արև քու հարվածիդ կայծերեն պիտի ծնանին.
Զա՛րկ, Քու անթառամ սիրույդ և ատելությանդ չափին խորությանը համեմատ.
Զա՛րկ, զա՛րկ, ահավասիկ հորիզոնները կկապույտնան, ահավասիկ առավոտները կճեղքվին,
Զա՛րկ, ազատաբեր հարվածիդ շռինդը Մասիսեն ի Տավրոս և մինչև Հայրենիքին խորերը կթնդա։

1905 ծեն

ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐ

Եվ այսպես ձեր արդարակշիռ և երկաթեղեն ձեռքերն անպարտելի,
Ձեր զինավառ ու կրակոտ կուրծքերեն կատաղաբար մեկնելով՝
Դավադրությունն և Ոճիրը անողորմ հարվածով մը դեպի հողը կմխրճեն...
Ո՜հ, ինչպե՞ս մոտենալ ձեր Սարսափին, ինչպե՞ս երգել, ինչպե՞ս ջատագովել, ինչպե՞ս շեփորել ձեզ,
Դուք ինքնիշխան և գերագույն դատավորներդ բոլոր արյունքերան բռնապետներուն...
Ու նույնիսկ չեմ գիտեր ձեր զարհուրանքի և պակուցումի անուններն ահավոր,
Որովհետև ձեր հաղթական անցքը Ճշմարտապետության ճամփուն վրայեն,
Այնչա՛փ արագ է, այնչա՛փ խորտակիչ, այնչափ կուրցնող և այնչա՛փ ավերիչ.
Որչա՛փ անցքը խավարակուռ անտառները մոխրացնող վայրկենական կայծակներուն...
Դուք մեր տառապանքին և մեր կռիվին երկարատև տարիներեն ի վեր,
Աննվաճելի պարիսպները հանդիսացաք մեր քայլերը կոտորող բոլոր թշնամիներուն հանդեպ՝

Տեսա՛ն, որ ձեր անխնա սուրը սուրն էր անխուսափելի
ճակատագրին,
Տեսա՛ն, որ ձեր դաշույնները, մեղապարտ վիզերու ի խնդիր, նորեն
կշողան,
Տեսա՛ն, որ ձեր բռունցքին հարվածներուն տակ մատնիչներու
կզակները կկափկափեն...
Տեսա՛ն, որ ձեր կապարե գնդակները մարմինե մարմին և ուղեղե
ուղեղ կանցնին...
Տեսա՛ն, որ իրենց ծոծրակներեն և սրտերեն, մեր ծարավի աչքերուն
առջև, իրենց արյունն է որ կժայթքի,
Հեղեղորե՛ն, հեղեղորե՛ն, իրենց հեռավոր գահակալներն ու
մահադեմ թագակիրները թրջելով...
Տեսա՛ն որ իրենց ոսկորները կջախջախվին և իրենց ողնաշարերը
կաղոցվին,
Տեսա՛ն թե այն գլուխները որ գիշերներով մեր ցեղին անէացումը
հղացան,
Տեսա՛ն որ ձեր պղինձե կրունկներուն զորությունը տակ է, որ
կխմորվին....
Տեսա՛ն որ այսպես, քաղաքե քաղաք և հրապարակե հրապարակ և
հորիզոնե հորիզոն,
Ձեր հանկարծական երևումը, ձեր բազկահարված և ձեր հարուցած
խռովքն անմեկին,
Բոլոր դավաճանները դիակնացուց, բոլոր Վասակները հողեց և
մարդակեր ամբոխներ քարացուց...

Բայց դեռ մա՛հ պետք է որոտանք, մա՛հ պետք է համասփռենք,
մա՛հ պետք է մրրկենք,
Այն ատելության և ամբարշտության չարաշուք պալատներուն վրա,
Որոնց զանգվածներուն տակ իբր հիմնաքար մեր ցեղին մտածումը
և մարմինը և հոգին է, որ կհևա...
Որոնց որմերը մեր արյունովն են շաղախված և մեր ոսկորներովը
կառուցված...
Որոնց աղբյուրները մեր անօգուտ արցունքներն են առատ,
Եվ գինովության ու եղեռնի բաժակները ձեռքե ձեռք դարձող, մեր
արյունովն աղցված...
Մահ պետք է համասփռենք հոն, ուր մեր ստրուկի ծնրադիր
պաղատանքները չի հասան.

Եվ բռնակալության քաղաքներուն և անոնց հրապարակներուն վրա,
Երբ մեր դիակը փողոտվելեն մեր տաք արյունը կհոտոտվեր...
Ահավասիկ որ ձեր խրոխտ հասակները միս-մինակ և հերոսաբար
աշտարակվեցան...
Ձեր քայլերը մեռելապատ փողոցներուն մեջ Վրեժին աղաղակը
գոռացուցին,
Ձեր սուրերուն հալածանքեն բոլոր դավաճանները եղբայրադավ-
ներուն հետ գերեզմանվեցան,
Ու ձեր ճակատ ճակատի և անվեհեր ու անվախ ու հպարտ երևումեն,
Ծնրադիր խուժանը վատերուն՝ ձեր ոտքերուն կառչելով իրենց
կյանքը հայցեցին...
Ու դեռ երեկ, ձեր ահաբեկչի ռումբերը մարդասպաններու
թափորներ մոխրացուցին...
Բարբարոսներու այդ խելացնոր ոհմակներուն մեջ վար թավալող
արեգակներու նման պայթելով...
Այսպես, ձեր արդարախույզի արյունասևեռ լապտերները ձեր
ձեռքերեն առկախ,
Բոլոր խավարչտին և եղեռնական հոգիներուն զոցված դուռներեն
ներս խուժեցիք,
Ինչպես եղնմտանքը, որուն ճշմարտագետ նայվածքը վախճան մըն
է միանգամայն...
Դուք օրենքը եղաք եղեռնապաշտ Ջարիքին ուսերուն վրա հսկող,
Եվ հայրենի ամեն հուզում, ամեն խռովք, ամեն հեռ ու ամեն վրեժ,
Ձեր նժարին մեջ կշռվեցավ և ձեր արդարասպաս ատյանին սեղանին
վրա հայտնվեցավ...
Դուք ո՛չ զինակիցներ ունեցաք և ո՛չ ձեր հավատքին վրա իշխողներ,
Դուք, դուք ձեր անձն էիք անսահմանորեն և ձեր արփաթև հոգին,
Ձեր ԵՍը գերագույն մարդուն եսն է ամեն զորությենե գերիվեր,
Ձեր վճիռը ամեն վճռի մահավճիռն է անողոք,
Եվ վա՜յ անոնց, որոնք ձեր կարմիր և մահացու կնիքովը
կխարանվին...

Եվ մինչև այսօր մեր բոլոր թշնամիները տեսան որ ձեր
վրիժաձայնը զարհուրաբերի,
Արդարությունի ձայնն էր աստվածազոլ՝ ինչպես ձայնը
Աղատության,

Բայց ուր ձեր սուրերուն բոցը մարդասպանները սառեցուց և անոնց
ակռաները զահանդանքի կրճտել տվավ...
Մա՜հ այդ թագակիր, բայց արդեն ահաբեկյալ և կիսամեռ
դահճապետներուն,
Վասնզի, իրենք, այդ արյունկզակ և դիվահար բռնավորները
վախճանավոր,
Զարհուրանքով լսեցին ձեր ձայնը, ձեր բարկությունը, ձեր
ցասումը, ձեր զայրույթն ահավոր...
Եվ իրենց խորտակյալ և դալգաղակերպ գահերը շարժեցան,
Ուժանակներու գոռումեն, ինչպես գոռումեն փրկարար ռումբերուն,
Ձեր վերահաս երևումը իրենց սրտերը կմահազանգե և իրենց
ոճրագործի ուղեղները կարյունե,
Իրենց կմախաձև ձեռքերը այլևս մահվան սարսուռովն է որ
կդողդոջեն...
Իրենց գիշերասարսափ երազներուն մեջ ձեր անձը իր երկաթե
քինահույզ քայլերովն է որ կարշավե...
Եվ ահավասիկ իրենց դարավոր դուռները ահագնաբար և պատե ի
պատ կծեծվին,
Եվ ահավասիկ իրենց պատուհաններուն բոլոր փեղկերը հառաջացող
վտանգեն իրենց վրա ահեղությամբ մը փակվելով՝
Դուրսեն եկող ամեն հույս կչքանա իրենց համար և խավարին մեջ
Մահն է, որ անոնց հոգիեն ի վեր կկառչի...
Ուրեմն, ոտքի՜, նորեն ոտքի՜, նորեն ոտքի՜, Հայորդինե՜ր,
Դյուցազուննե՜ր, Ազատաբերնե՜ր,
Ոտքի՜, և օդերուն մեջ թո՜ղ ցնդին, օդերուն մեջ թո՜ղ մոխրանան,
Մեր դահիճներուն սա՜ պատժապարտ պալատներն արյունաթոր...

1905 ԺԵԼ

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Եվ ստվեր մը ընդերկար մենախոսեց գիշերվան ժամերուն մեջ
կանգուն՝
Ձայնը դողդոջ էր, սիրտը սիրով լեցուն, ոտվրները մոխրապատ և
ինքը իր գաղափարեն գեղեցիկ՝

Նայվածքներեն և արցունք կհոսեր և կայծեր կարձակվեին և հոգին
շքեղորեն ցեղին՝ հոգին էր,
Եվ այսօր կուզեր իր տառապանքին և զոհը ըլլալ և իր իդեալին
հերոսը միանգամայն...

«Հայրենիքիս վրեժին խոսքերը և տառապանքիս տարիները ուղեղիս
մեջ՝
Քալեցի՜ և քալեցի՜, հոգնած, ըմբոստ, ճշմարտախնդիր ու մինակ,
Արյունի քաղաքներեն ուրիշ քաղաքներ և գյուղերե ի գյուղ...
Ձայն չկար։ Մեռելություն ամենուրեք և ավերակներ լեռնակուտակ,
Ամեն երդիք իր տնվորին վրա կործանված և ամեն աղբյուր իր
երջանիկ երգին...
Արոտավայրեր արյունով ոռոգված և հնձաններ գերեզմանոցներու
նման,
Ճամփաներուն վրա որբերու լաց ու կոծ, և այրիներ, և դառնագեմ
հուսահատներ,
Անագորույն օրենքին դեմ ըմբոստներ և ջախջախված նորածիններ
գետեզերքի քարերուն դեմ...
Արդարություն պաղատողներ և ուրիշներ, որ տակավին
խաչափայտերու կփաթթվին...
Դիակնե՜ր և դիակնե՜ր, որոնց գլուխները միայն մոխիրներեն դուրս
են ցցված՝
Հունձքերուն վրա դիակնե՜ր, դիակնե՜ր ավազաններուն երեսը և
դիակնե՜ր իմ սարսափահար ոտքերուս տակ...
Շղթայակապներ բանտին դուռներուն քով և մեռելներ համառող
պատերուն դեմ կանգուն...
Կիսամեռներու ձեռքեր՝ դեռ կյանքին արեգակը դառնությամբ
աղերսող,
Ուրիշներ որ կուզեին դեռ ապրիլ մահվան ճանապարհեն ալ
անդին...
Եվ ուրիշներ սիրված հողին համար անգամ մըն ալ իրենց արցունքը
վար կուլային»...

«Ո՜վ անեզրություն դիակներու, ի՜նչ չափով քեզ կրնայի չափել,
Արյուն է որ կբուրե և ես թափառականս, արյուն է որ կշնչեմ...
Եվ ոտքերս տխրաքայլ, ո՞ր ժամանակեն ի վեր, կարմիր հողին
կկպչին...

Մարդ չէ ծնած այստեղ կարծես և ոչ ալ մարդ է մեռած՝
Այլ շարաշուք բնությունն է, որ իր կողեն դիակներ է դուրս նետեր...
Եվ երկինքը իր աստղերեն վար իր արյունն է, որ մեր բոլորի վրա
կտարափե...

Տասը տարվան ճանապարհո՞ւդ, ո՞ւր ես այսօր, ո՞ւր է ճամփաս,
Ո՞ւր է սուրս, ո՞ւր վերարկուս, ո՞ւր է լապտերն իմ սարսափի...
Նպատակս պարտվեցա՞վ, թե արժանի չեմ անոր խոսքին...
Ի՞նչ կնճիռ է այս կնճիռը, որ ճակատիս վրան ակոսվեցավ,
Խղճի խա՞յթն է, որ փորեց զայն թե ժամանակն բռնակալ...
Ո՞ւր են այն Փարոսները, որոնց լույսերեն գինովնալով հասա եկա։
Ե՞րբ մարեցան։ Ո՛չ, դեռ կվառին, առաջացի՛ր, դեռ կվառին,
Ըսին ինծի։ Ջուրի ձայն մը, կճանչնամ քեզ, սարսափահար
Եփրատն ես դուն,

Ահավասիկ Վանա ծովը։— Առաջացի՛ր, ըսին ինծի, Արարատեն ալ
անդին»...

«Ատելությո՞ւն, ատելությո՞ւն, վերջապես քու փոթորկիդ թափն
իմացա...

Ահավասի՛կ կյանքի ձայներ, պայքարի փայլ և դիակներ օդերուն
մեջ....

Ահավասի՛կ կովին շեփորը, ո՞վ Մասիս, որ աջ ծագեդ
կարձագանքվի...

Բզկտե ուրեմն պատանքներդ անցյալներու սուգերուն մեջ
բաժանելեն,

Եվ թող գլխեդ անցնող ամպերն աչքերուդ արյունը ցամքեցնեն...
Նույն ցեղն է՛ որ ոտքի ելավ, նույն ցեղն է՛ որ կզարնե՛, նույն
ցեղն է որ այսօր կապրի,

Եվ ի՞նչ նախճիր, ի՞նչ սրածում, ի՞նչ հաղթական ճակատամարտ...
Ի՞նչ պաղատանք, ի՞նչ քավություն թշնամիին անասնական
խաժամուժեն...

Եվ եղբայրներս են, որ կձայնեն. «Գթությունը մենք չե՛նք ճանչնար,
միայն վրեժն է ճշմարիտ»։

Ձեզի՞ փառքը, ձե՞զ ապագան, ձե՞զ պատմությունը ոսկետառ,
Տասը տարվան արյունը ունինք մեր ցավին քով ծովատարած,
Եվ այսօր է որ սրբեցինք մեր ճակատին մուրն ստրկության,
Արշալույսներ պիտի ծնին, ծագկատատանե՛ր, ձեր ճակատները
պսակող...

Եվ հայրենիքն ահավասի՛կ ձեզի զրկեց իր չորս ծայրեն իր
զավակները զինավառ,

Հարվածեցե՛ք, հարվածեցե՛ք, մինչև որ Արդարությունը ձեզ
բոլորիդ համբուրե»....

«Ո՞վ եք դուք, որ այս գիշեր կունկնդրեք մենախոսիս վշտերուն,
Մտածումիս մեջ իմ ամոթես ես սկսա կատաղությամբ արտասվիլ...
Ո՞ւր կարշավե՛ք, ո՞վ եք դուք, եղբա՞յր, ընկե՞ր, թե զինակի՞ց,
Օ՜, ես ալ ճանչցա Տառապանքը, ո՞ւր կարշավեք, զիս ալ առե՛ք,
զիս ալ տարե՛ք ձեզի հետ»...

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԿՈՉ

Դառ՜ապես կուլար մենախոսը, իր սուրը, իր ճակատը և իր
մենությունը հողին հակած՝

Աղետավորորեն կուլար տառապանքի և պայքարի ճակատագիրներն
իր հայրենի երկու հողերուն,

Եվ հսկայատեսիլ մեկը, ծանրորեն զինյալ, իր հրաշող խումբերեն
անջատվելով,

Քայլը դղրդող, ձայնը բարբարոս, շունչը անսպառ, և քաղցրությամբ
ըսավ իրեն...

«Աբցունքներուդ շիթերը և սարսափդ և հառաչանքներդ գետնեն
վեր բարձրացուր,

Ց՜վ հեռավոր, ո՜վ տանջված, ո՜վ հայրենատաք և իմաստուն
եղբայր,

Եվ ոտքի կեցիր հասակիս քով, որպեսզի հոգիիդ վերքերը
մտածումովս հայրորեն քրքրեմ...

Գիշերվան կապույտին մեջեն մենախոսիդ հեծեծանքները ես
դառնությամբ իմացա,

Եվ կտեսնեմ որ քու մեջդ, տարիները, տառապանքի և պայքարի
ապառաժներ են ծնուցեր.

Սրբե՛ աչքերդդ, եղբայր և ոտքերուդ մոխիրը թոթափե և սարդ
ամեհորեն բարձրացուր,

Ու հառաջացի՛ր, որպեսզի բոլորս ալ հայրենիքին Արյունը քու
ճակտիդ վրայեն համբուրենք...
Որովհետև դուն մե՛րն ես այսուհետև, ինչպես քուկդ են և մեր
դրոշը և մեր ճամփան...

«Եվ երգերովդ կրկնե մեզի, ինչ որ Հայաստանի մեռելակոծ
հողմերը քեզի պատմեցին,
Երգե՛ արցունքներու հովիտին, հուսահատ քաղաքներուն և
ջախջախված ժողովուրդին համար,
Երգե՛ և Եղբայրության հրավերդ և քու կարմիր Կոչդ Ատելության,
Աղաղակե՛ և մեռելներուն և ընկճվածներուն և վրեժին և դեռ քնած
զորություններուն,
Ջատագովե զանոնք, որոնք առաջ են անցեր, և փնտրե զանոնք,
որոնք անստույգ մութին մեջ կխեղդվին...
Երգե՛ նույնիսկ անոնք, որ պարտվեցան, անոնք որ մեռան և
անոնք, որ պիտի ծնին,
Եվ խարազանե՛ անգթորեն բոլոր հայրենադրուժները և
դավաճանները, եթե դեռ կապրին...։

«Հողին խորերեն ես այստեղ հասած, և շունչդ հիշատակին և
անցյալին բուրմունքն ունի,
Օ՜, աչքերուդ մեջ հարյուր հազար զոհերու հոգեվարքին
խենթեցնող մահանկարը կընդնշմարեմ...
Լսե՛ անոնց գալարումը, անոնց հոգեդարձը, անոնց մեռյալի
քրքիջը և կտակը զոր քեզ ըրին,
Լսե՛ անոնց դիակներուն մխրճումը հողին մեջ, քաղաք առ քաղաք,
առա՛նց դագաղի և առանց պատանքի...
Ռազմակոչե՛ բոլոր անոնք, որոնց մեջ դեռ Հույսը իր մարմարե
թևերը չէ բացեր,
Հրահրե այն բոլորը, որոնք ցեղին այս արփաթև վերածնումը
կանգիտանան,
Եվ թշնամին զարհուրեցո՛ւր, և մեր աչքերուն մեջեն տե՛ս
պայծառությունը մեր Նպատակին,
Եվ այս բոլորեն հետո հառաջացի՛ր, փառքին շրթունքները քե՛զ ալ
կուզեն համբուրել»...
Ոտքի էր մարտախումբերուն քով, իր անդրիակերպ հասակովը
բոլորովին սարսռուն...

Նայվածքին մեջ ցողեր կայծին երջանկության և դեմքին վրա ժպիտ
մը անպատմելի,
Վասնզի տեսած էր, որ սիրտը հազարավոր կուրծքերու տակ նույն
վրեժը կորոտար,
Եվ խոսեցավ վարդագույն այգին մեջ և երեկի ուխտանվեր
Դագաղներուն դիմաց...

«Հարությո՜ւն ձեզ մեռյալներ, հարությո՜ւն ձեզ, պարտվածներ,
հարությո՜ւն ձեզ, հուսահատներ,
Եվ դուն, ո՜վ մոխիրներու և մարտիրոսության անծայրածիր և
մոռացյալ հայրենավայր,
Ո՜վ հայրենիք, ո՜վ սքողյալ Հույս, ո՜վ երկաթակամ Սպասում,
ո՜վ Ապագա,
Եվ դուք, հեռավորներ, ապերախտներ, տարագիրներ, մոլորյալներ,
զայրացկոտներ,
Ձեզի ե՛մ, ձեզի է իմ աղաղակս, իմ ռազմակոչս, իմ հրավերս, իմ
քարոզս ազատագոռ,
Ձեզի եմ, անարև լեռներ, թառամած բլուրներ, ոսկորներու
հովիտներ և կածաններ չուառության,
Քեզի եմ, Պատմություն՝ արդարադատ կամ ստապատիր,
դյուցազներգակ կամ ստրկաբան,
Քեզի եմ, տրտմաթափիծ անցյալ, գերեզմանակերպ հիշատակ
և դուն վեհաշուք Ցեղ,
Կռիվներու վրիժազանգերն ահավասի՛կ արհավիրքով և ժամ առ ժամ
կհնչեն...
Արթնացե՛ք, հրազինվեցե՛ք, հույսով գերազորվեցե՛ք և
հուսահատության մուրճերովը հարվածեցե՛ք...
Յոթը գարերու մահացնող ճակատագիրը այսօր մեր
գարշապարներուն տակ կփշրվի...
Ազատության մուրացկանները գերեզմանվեցան սա՛ անողորմ
ըմբոստները ծնցնելու համար,
Եվ Դահիճները ասոնց առջև կսարսռան, ինչպես թշնամին ասոնց
առջև ծնրադիր է որ կոգևարվի...

«Եվ դուք, մտածումի վարպետներ, իմաստության մատյաններնիդ
փոշիներուն հանձնեցե՛ք,

Եվ ձգեցե՛ք ձեր արժեքները, ձեր խորհուրդները, ձեր կանոնները
և ձեր երազանքի սրահներեն դուրս ելե՛ք,
Եվ լայնաձեռն ցանեցե՛ք պայքարի հողին վրա՝ ինչ որ ունիք
հերոսական, ինչ որ ունիք ազատաշունչ...
Եվ դուն միքիչ վեղարավոր, քու քառաթև խաչիդ եռկու թևերը
փշրելեն՝ զինվե՛ անով,
Թշնամիդ և խոնարհություն հրամայող Աստծուդ առջևը ծառանալու
համար...
Եվ դուն անթվելի թշվառության և անօրինակ տառապանքի տրտում
ժողովուրդ,
Բոլորդ մեկտեղ դուրս նետվեցե՛ք ամե՛ն դուռե, ամե՛ն քաղաքե,
ամեն գյուղե, և ամեն աստղի տակե,
Որովհետև ալ կրավե՛ որչափ որ մեր թշնամին իր ափերովը
— Օ՜ դժոխային բաժակ—
Մերիններուն ազնվական արյունը, մեր սեղանին առջև նստած՝
գազանաբար խմեց...
Ալ կրավե որչափ որ անոնց պատրաստ դաշույնները եկան մեր
բերաններուն մեջ մխրճելու...
Ամեն ստրկության, ամեն ծնրադրումի և ամեն աղաչանքի մինչև
մրուրն այլևս քամեցինք...
Օ՜, ալ կրավե սևաթոիչ ագռավներուն երկաթե կռինչը մեր ցավոտ
երդիքներուն վրա,
Օ՜, ալ բավ է, թո՛ղ ժանիքավոր անգղերը քիչ մըն ալ ուրիշ կուրծքեր
կտցահարեն...
Թող քիչ մըն ալ թշնամիին արյունը գա մեր այգին ոռոգել և մեր
սրունքները թրջել...
Թող քիչ մըն ալ մեր առջև թշնամիին կմախքները դիզվին, ինչպես
արմատախիլ անտառներ...

«Թեև գիտեմ որ Ատելության կոչս ահավոր է և ռազմի հրավերս
ամենհական,
Բայց յոթը գար է, որ մայրագույթ Հայրենիքը մեր հաղթական
այցելությանը կսպասե,
Եվ դեռ մտիկ ըրեք, ըմբռստ և Անվրեժ Տարոնն է որ իմ մեջես
կգոռա,
Արյունլվա Վասպուրականին մահվան հոտը ահավոռիկ և մոխիրի
մրրիկներն Ակնա հովիտներուն,

Ահավոռիկ ասպետական ձեռքը Կիլիկիո, որ ձեզի կմեկնի և
ապառաժե կուրծքը բարձրաբերձ Կարինին,
Ահավոռի՛կ հազարավոր ավերակներու անեծքը Հայրենիքին
պատգամին մեջ արյունագծված...
Եվ շունչիս մեջ մահամերձի հոնդյուն, նզովքի խոսքեր, պայքարի
վճիռ, և ապրելու անսահման սեր կա...

Գ

Հերոսի մը համար ամենագեղեցիկ կյանքը այն է մահվան համար հատուցնալ, մարտնչելով։

ՖՐԵԴԵՐԻՔ ՆԻՑՇԵ

ՈՐԲԵՐՈՒ ՃԱԿԱՏԱԳՐԵՆ

Զարհուրելի՜ անցյալ, մոխիրներուն վրա ծնաք և ավերակներեն քալեցիք.
Երբ սուրեն զարնված Հայրենիքն իր բերանը հասնող իր արյունին մեջը կխեղդվեր՝
Բնության դժխեմ օրենքն օր մը զձեզ մարդկության ճիրաններուն մեջ դրավ,
Եվ այսպես՝ արևին և կյանքին կարմիր լույսը շփոթեցիք ձերիններուն արյունին հետ...
Սարսափներուն հառեցավ ձեր մաքուր հայացքը, ծաղիկներու և ժպիտի փունջերուն տեղ։
Հոգեվարքի ի՜նչ հեծեծանքներ և ի՜նչ օգնություն պաղատող եղերական ճիչեր,
Ի՜նչ գալարում, ի՜նչ մազերու փետտում, ի՜նչ կոծ, և ի՜նչ մահաձայն լաց,
Ի՜նչ արցունքներու հոսումներ, ի՜նչ աղերսանք, և քանի՜ քանի՜ կորված գլուխներ,
Եկան՝ ձեր մանկական վճիտ աչքերուն առջևեն գլորվելու...
Ոսկորներու փշրո՜ւմը՝ լսեցիք, ձեր ծնած տանը սեմերուն վրա,
Գիշերներո՜վ՝ շտապորեն, կացիններու կայծարձակ հարվածներուն տակ...։
Եվ հովերը դժբախտ քաղաքներեն՝ այրված մեռելներու մահվան հոտը ձեզ բերին։
Ոչի՜նչ չհասկցաք, բայց ձեր ծնող ուղեղներուն մեջ սարսափը և վրեժը իրենց հիշատակները ցանեցին,
Եվ թերևս ապագա հերոսություններու ահավորագույն հունգը իր տեղն ինկավ...

Գիտեմ որ, երբ ձեր խանձարուրներուն մեջեն շարժեցիք ձեր ձեռքերն շուշանափայլ,
Անոնք մահվան վարդերուն պես կարմրեցան ձեր մայրերուն արյունեն խսկ,
Եվ համբույրի, օրորներու, գգվանքի և սիրո քաղցրությանը տեղ,
Ո՜վ գիտե, թերևս կաթիլ մը արյուն էր, որ ինկավ ձեր աչքերուն և ձեր բերաններուն մեջ...։
Ա՜հ, սարսափներու ցնորաբեր օրեր, ե՞րբ պիտի մեռնիք հիշատակներուս դուռներուն առջև, ե՞րբ...

Դուք դժոխքներու պատիժներուն մեջ ծնած անմեղ և քաղցրադեմ հրեշտակներ,
Օրերով լացիք, հեծկլտացիք՝ անծանոթին չարությանը դեմ անզո՜ր մերկություններ,
Բայց լսող չի կար։ Ձեզ համբուրող բերանը իր համբույրին մեջ էր ոգեվարած...
Չարակամ և անգիտակից բնությունը կար միայն, մեղավոր մարդկության անասնությանը հետ...
Չի՜ հասկցաք թե ինչո՞ւ ժպիտի տեղ արցունք էր որ ծաղկեցավ ձեր աչքերուն մեջ,
Ինչո՞ւ ձեր բնածին առհավությունը չճանչցված սերերու կրակն կարո՞տն ուներ։
Ինչո՞ւ լռեցին թռչուններուն գեղգեղները և ինչո՞ւ հեռավոր ու սև ոռնումները սաստկացան...
Ինչո՞ւ առվակներուն ջուրերը լուսավոր և երջանիկ փրփուրներ չունեին...
Ինչո՞ւ ձեզ ստեղծող մարմինները սրածվեցան ձեր օրորոցներուն առջև,
Ինչո՞ւ գրացի գերեզմանոցին մեջ կիսամեռներուն մարմինները պարիսպներու պես բարձրացան...
Եվ ինչո՞ւ ժրաջան ու բարեկենցաղ գյուղերը իրենց դաշտերուն և մանգաղին հետ մոխրացան։

Օրեր անցա՜ն... մահը հոգնեցավ, և արևմուտքեն կեղծուպատիր ձեռքեր,
Ձեզի՝ իրենց անգութ սրբության մատյանը բերին, բաժին մը չոր հացի հետ։

Ու խելագարություն՝ սկսան ձեր մատաղ հոգիներուն մեջ իրենց
ստրության սերմերը ցանել։
Աստվածներու խորհուրդին և անունին խոսեցան և փրկության
դուռներ ցուցուցին...։
Իրր ողորմություն՝ ցնցոտի՛ մը նետեցին ձեր մերկ և ազազուն
մարմիններուն վրա,
Ճանցեր հյուսեցին ձեր անբիծ կարապի անմեղությունը վանդակելու
համար.
Եվ թշնամիին սուրերուն տեղ՝ իրենց շահախնդիր և մեղավոր
խաչերը շարժեցին...
Իրենց պիղծ ծոցերը և իրենց արծաթը զոհերուն համար միայն
բաց էր,
Իրենց բարի ժպիտը կեղծ էր, իրենց խոստումը մահաբույր և
նայվածքնին ծածկամիտ,
Իրենց բուրվառին մեջ մեր արյունն էր, որ խունկի փոխան
կծխար...
Իրենց սկիհը մեր արցունքովը լեցված էր, և այն հացը զոր ձեր առջև
նետեցին,
Մեր թշվառության և մեր տառապանքին վարձատրության արժեքն
էր անգութ։
Քրիստոսին խոսքը ծամածռեցին ստրկության օրենքներն
օրհնաբանելով՝
Եվ ուզեցին ձեր դողդոջ կյանքերուն վրա արևմուտքի
սակարաններուն հիմնաքարերը շարել...։

Ջարհուրելի՛ անցյալ, երբ մոխիրներուն վրա ծնաք և
կարմիրներե՛ն քալեցիք,
Բայց այսօր գիտեք, թե ինչո՞ւ համար մեր արյունը ծով առ ծով՝
Տարիներով՝ և անխնա և ստրկորեն և հերոսաբար ձեր ծնած հողը
ողողեց...
Ցեղը ապրի՛լ կուզեր, իր շղթաները իր ոտքերուն տակ թափե՛լ
կուզեր,
Իր կապանքները փշրե՛լ կուզեր, իր աչքերը սրբե՛լ, իր ձայնը
որոտալ.
Ապրի՛լ կուզեր, ստեղծել կուզեր, պայծառորեն վերածնիլ կուզեր։
Որովհետև ի՛նքն ալ նախահայր էր և գեղեցկության և զգացումի՛ և
ազգերո՛ւ,

Որովհետև հպարտ էր իր անցյալե՛ն, իր մտածումե՛ն, իր ուժեն,
և իր կարմիր փառքեն,
Որովհետև ինքն ա՛լ իր ոսկի ձայնը ունեցած էր հնօրյա
մարդկության մրրկին մեջ...
Որովհետև ինքն ա՛լ երգած էր, ինքն ալ հաղթած, ինքն ա՛լ
ճարտարակերտած և ոստաններ կառուցած...
Ինքն ալ եղած էր ջահակի՛ր, սերմնացան, գաղափարապա՛շտ և
արքա՛, և ոչնչացնո՛ւ։
Եվ վերստին ապրի՛լ կուզեր, գեղեցկանալ և իրականանալ կուզեր,
կյա՛նք կուզեր հափշտակել, կյա՛նք, կյա՛նք....
Ձեր ձեռքերը օտարին հպումեն ետ քաշեցեք, մերինները պատրաստ
են և զինաբարձ.
Անոնք մեր փլատակներուն վրա իրենց եսամոլի դավաճան ու կեղծ
քարոզը կուզեն ցանել։
Այսուհետև ձեզի հետ ենք մենք, ո՞վ մահվան արգանդեն կյանքին
մեջ ծնանող Որբեր,
Մեր արգար մտածումը ձեր սիրույն համար ըմբոստ է, և մեր սուրը
ձեր սիրույն համար պիտի ապրի՛.
Մեր ճշմարիտ սուրը և մեր դրոշը պիտի ապրի՛ն, որովհետև
կամքերնիս կարմիր է և վրեժնիս անպարտելի,
Մեր սուրը պիտի՛ ապրի, կյանքն ստեղծելու ու գաղափարին գահ
մը կառուցանելու համար...
Մեր սուրը պիտի՛ ապրի՝ փրկության և ազատության արեգակներուն
ի խնդիր՝
Կյանքի՛ն համար, հույսի՛ն համար, արգասաբեր հողին և մայրական
Հայաստանին համար։

ՍՐԱՅՄԱՀ

Ո՞վ նախնական և անխոով ու բարի առավոտներու հայկական
դաշտեր,
Եվ գուք, հրաշե՛կ արտեր, հարո՞ւստ մրգաստաններ և կենսաժպիտ
արոտներ,

Դուք՝ մարմարաթափալ ձորեր,, բուրաստաններ և ազնիվ ու
պտղալից այգիներ.
Դուք՝ որ մոռացումներու անապակ գինին կստեղծիք և մեր առօրյա
սուրբ հացը հավերժական,
Դուք՝ բույսի, թռչուններու, ծաղիկներու և գեղգեղներու անճառելի
դրախտավայրեր՝
Ներեն՝ այսօր, վերհուշումիս, լքյալ սուգիս և ցնորքիս մենավոր
ժամուն,
Զձեզ կոդեկոչեմ, դառնորեն զձեզ կապրիմ և հուսահատորեն զձեզ
կարտասվեմ...։

Կապույտ անսահմանեն հրեղեն արշալույսն իր շուշանները կբանա,
Եվ ահավասի՛կ հպարտ աքաղաղը իր արծաթեղեն ձայնը հնչեցուց։
Գյուղե գյուղ կոչնակները կհնչեին։ Ներդաշնակ սրինգ մը հրավերներ
կցնծար...
Եվ հոտերը բլուրներեն վեր կտարածվեին՝ ժիր ու գործոն մեղուներու
պարսերուն հետ։

Եվ խաղաղությունը կերգե։ Ծաղիկները կբսարսուան։ Կոկոնները
սրբուհիներու նայվածքներ են կարծես։
Իմացա՞ծ եք սպիտակ ձայնը ջրաղացին, բերրիության և աշխատան-
քի հարաշարժ մարմին,
Որ սանձակարոտ ձորին կոհակներեն իր հլու և անխոնջ անիվները
կդարձնե...
Ո՞ր ժամանակեն ի վեր, քաղաքներուն և գյուղերուն, իր ալյուրին
օրհնությունը ջամբելով...։
Առուները մամուռներու մետաքսին մեջեն մանկահասակ մերկու-
թյուններու նման կհոսին...
Եվ բուխերիկներեն, ատրուշաններու հանգույն, առավոտյան ծուխը
իր խունկը կծխե։
Մարմարիրան և գեղանի հարսեր, կուժը ձեռվընին, աղբյուրներու
ադամանդին կերթան...
Ուրիշներ վարդի թուփին կմոտենան, սոխակին հետ իրենց նորածին
սերն երգելու։

Հուզքի հունձքերու և ավետարանական և երջանիկ եզանակն է որ
կենք։

Բնությունը հզի է, և երկրագործները իրենց հանճարի ճիգեն և
պտուղեն գինով՝
Դաշտերուն շուրջը կխոնարհին։ Գերանդիները ուսերուն վրա,
հույսերու պես կշողան։
Անգաստանը պիտի սկսի։ Հունձքերու օրհնության արշալույսն է
այսօր։

Աղոթք մը, բնության համար, բարերար բնության համար,
շրթունքներեկ թո՛ղ թռչի,
Թո՛ղ հողը իր բյուրապատիկ ցորյանը պարգևե մեզ և աշխարհի չորս
ծայրերու մարդկության,
Եվ դրացիին և բարեկամին և թշնամիին և չարին և անծանոթին...
Ամեն քաղց թո՛ղ հագցնա և ամեն ծարավ թո՛ղ պայծառ ջուրեն
իր պապակն հագեցնե...

Այսպես՝ փառաբանությունը կտաճարվի... հյուսիսեն հարավ և
արևելքեն արևմուտք,
Ամեն ցեղի, ամեն կարգի, ամեն դասի, ամեն դաշտի և ամեն
հունձքի առատությանը համար։
Աղոթքները կսրբանան, կքաղցրանան, կմաքրվին և խունկի
մշուշին մեջեն,
Ուրախության ժպիտներ, արդար հողագործին կերպարանքը հույսով
կարևազարդեն։

Հովին խորհուրդեն դեռ կանգուն հասկերը անգամ մըն ալ գիրար
կհամբուրեն։
Մանգաղները կշարժին... և ոսկեվառ ծովե՞ր, ծովե՞ր, ծովե՞ր են
որ կհնձվին.
Եվ խուրձ առ խուրձ, որաններն, արգասաբեր իրիկունին ստվերնե-
րուն մեջեն,
Անձրևված աստղի հույլերու նման, արտե արտ, անշարժ կխոկան...։

Օրը տարաժամած է և վաղորդայնին բացած վարդին և երգերուն
հետ,
Հուժկու եզներ, կալերուն շուրջը զույգ զույգ, հրաշագործ ցորյանը
պիտի կամնեն։
Ջրաղացները պիտի շարժին, թոնիրը պիտի վառի։

Ահավասիկ բոլո՛ր իմաստը, բոլո՛ր պատճառն ահավասիկ,
Բոլո՛ր օրենքը, նպատակը, մաքրությունը և մեծությունը չի
հասկցված կյանքին...։

Ո՞վ տառապանքիս օտար մտածումներ, այս իրիկուն բոլորդ մեկ
հեռացե՛ք ինձմե...։

Եվ ապերջանիկ երազս մոխիրներու մեջ է որ իր վիրավոր
նայվածքները բացավ...
Տեսե՛ք անցյալի ոսկի դաշտերն անծայրածիր՝ գերեզմանոցներու
ահավոր տեսիլքն ունին,
Եվ քանդված աղբյուրներուն ջուրերը, մահամերձի հեծեծանքին
այնչափ նման...
Կերթան՝ ողբացող առուներուն հետ սոսկումի ավերակներուն սևը
թրջելու։
Ցորյանի հասկերուն անհուն բարությանը տեղ՝ դեղին տատասկներ
են բուսեր,
Եվ պտղատու այգիներուն վրա, երկաթե ագռավներուն մութ կռինչը
կմահանա...
Դժխեմ ու նիհար ծառերը հորիզոններուն մեջ, իրենց բազուկները
տարածած,
Անթվելի մեռելներու կմախքներուն նման, հողմերու ժամուն,
զիրա՞ր, զիրա՞ր, զիրա՞ր կշախշախեն...։

Ջարաշուք մրրիկը, գիշերին ճամփաներեն, անտառի մը նման
կփախչի,
Իր վազքին բարկությանը տակ, կիսավեր գյուղակներ և տանիքներ
տապալելեն՝
Եվ հոգաթումբեր և դագաղներ կբանա, այերին մեջ թռչունները
խեղդելով...
Մինչդեռ քարայրներեն գիշատիչ գազաններուն վայնասունը կարծես
մահը կմահերգե...։

Այլևս հունձք չի կա, սերմնացան չի կա, ոչ ալ վարելահող...
Անոթի եղնները տրտմորեն կբառաչեն։ Բուսականությունը
ծաղիկներուն հետ կմեռնի։
Արորը գոմին մեկ անկյունը նոր և անգտանելի գարունին կսպասե։

Աքաղաղն այլևս չիրգեր։ Արշալույսն ալ կարծես ցնդիս արյունին
նման, հողին խորերն է իջած...

Թշվառության անթիվ թափորներ, ամեն կողմե, դեպի դաշտերը
կուխտավորվին,
Եղերականորեն կուրծք կոծելով, աղոթքներ հյուսելով, անհուսութե-
նեն հուսալով,
Ու նախկին աբշալույսներու անդաստանները կտոնեն, կպաղատին,
կարյունին,
«Անոթի ենք, Տե՛ր, գթա՛, բնություն, գթա՛, մարդի՛ր, անոթի ենք,
մարդկությո՛ւն, անոթի ենք...»։
Ջուրերուն հոսանքը աղորապանին մեռելն առած կտանի,
Եվ ցնորական ջրաղացը, ապարդյունորեն թափուր դագաղի մը
նման կդառնա...
Շրջականներուն սարսափը, աղաղակը և մահացումն աղալով՝
Իր երկանաքարն և անիվները կրծելեն, ցնորաշարժորեն կդառնա...

Ջարհուրյալ աչքերով նորածիններ, ցամաքած ստինքներ կծծեն,
Օ՜հ, հայ մայրերուն տեսիլքը, մայրերուն դեռ չի կուրացած աչքերը
այս բոլորին դիմաց,
Ա՜հ, ո՞ւր է ճամփան, ո՞ւր է վիհը, ո՞ւր է մոռացումը, ո՞ւր է փոսն
ահատեսիլ,
Բայց մահը չի՛ գար, չի՛ գար մահը, սպասված փրկությանը նման
չի՛ գար...։

Դողդոջուն և ծերացյալ կիներ, սև լաչակներուն տակեն հեծեծելով՝
Իրենց տանը ավերակին մոխիրներեն, արևծագին բարբարոս
արյուններուն տակ՝
Իրենց կործանումին մոխիրներեն, փայտե տաշտերու առաջ
ժրաջանորեն ծնրադիր,
Սովամահներուն համար, աճապարանքով, բաժին մը հաց կթխեն...։

Եվ կոտրատած մարմիններով մուրացկաններու չվառական
բազմություններ,
Ցավագին ճանապարհներուն վրա ուրվականներու պես կդեգերին,
Եվ թշնամին և բարեկամին և բարեպաշտին դուռները բախելեն
հուսակտուր...։

Անգամ մը ևս կանցնին, նորեն կուգան, գարձյալ կմուրան, անգամ մըն ալ կմեռնին...։
Լսեցե՛ք սա ողբուկոծը, պաղատանքը, աղերսը, անոթի՜ ենք, անոթի ենք...։
Կան որ մազերնին կփետտեն, կան որ արցունքնին կապարներու պես վար կթափեն,
Կան որ մարդերի՜ լությանը պատանքներուն տակ ինքզինքնին արդեն մեռյալ կհուսան...
Կան որ իրենց արյունաթաթախ եղունգներովը նորեն քարացած հողը կփորեն...։

Կան որ գերեզմանափոսերուն մեջ այլևս իրարու վրա, դիակ առ դիակ կիյնան...
Կան որ անդունդներուն մեջ դեռ բույսեր և արմատներ փնտրելու համառ հույսն ունին,
Կան որ ահավորապես սկսան պարել սոսկատեսիլ խենթության հետ թևթև...
Եվ ուրիշներ, ո՜վ զարհուրանք, ահավասիկ, անթաղ սպառող մեռելներուն կմոտենան...։

Ո՜վ տառապանքիս թշնամի մտածումներ, այս իրիկուն բոլորդ մեկ հեռացե՛ք ինձմե...։

ԲԱՆՏԵՐՈՒՆ ԽՈՐԵՐԵՆ

Այսօր յոթը լարերն իմ բարկության և մարտնչումի քնարիս,
Եվ հեծեծանքս և մտածումս և եղբայրական աչքերս և հավատքս մոլեռանդ
Ձեզի կբերեմ, ձեզի կխնկեմ, ձեզի կմատուցանեմ, ո՜վ կենդանի մեռյալներ,
Ո՜վ թիապա՜ռներ, ո՜վ աքսորյալնե՜ր, հայրենակարո՜տներ, կալանավո՜ռներ,

Դուք որ մահվան մեջ կապրիք և կյանքին մեջ ամեն վայրկյան կմեռնիք
Դուք, որոնց արդար սուրերուն տեղ այսօր՝ ձեր վրա ծանրածանր շղթաներն են որ կփայլին...
Դուք, որոնց աչքերուն վրեժի կայծը, վրեժի չի թափվող արցունքներու փոխվեցավ,
Եվ, ափսո՜ս, դեռ չի գար, դեռ չեկավ, լայնածիր հույսն անդարբառ,
Ձեր անդրակարոտ և անեղբայր հոգիներուն առջեր ժպտելու...
Եվ տարիներով իրիկունները, շքեղորեն, հայրենիքին վրա արյունեցան,
Եվ մարտիրոսներու և թշնամիի և հերոսներու արյուններեն կարմիր,
Տարիներով արշալույսները ծաղկեցան և մոխիրին և անշեջ հավատքին վրա,
Բայց ճառագայթը մը չեկավ, հոգի մը չեկավ, երկու շրթունքներ չեկան,
Ձեր մութին մեջ շավիղ մը երկարելու կամ փրկության խոսք մը փսփսալու...

Գիտեմ թե ի՜նչ ապառաժյա խավար է որ կլեցվի ձեր զնդաններուն մեջն անողորմ,
Եվ ի՜նչ դաժան երազներ կուգան իրենց ժանիքներով ձեր ուղեղը բզկտելու...
Ի՜նչ տառապանք և ի՜նչ սեր, ի՜նչ ինքնամբրկում և ի՜նչ հառաչանք ձեր ներսիդին,
Ի՜նչ հույսի երկինքներ, ի՜նչ ձայն և ի՜նչ քրքիջ և ի՜նչ լություն,
Ձեր հոգիին մեջ կարգ առ կարգ և տարվե տարի և հավիտենապես կթավալին.
Եվ կսկսիք երազել, ձեր գլխուն բովանդակ ցավը ձեր դողդոջուն ձեռքերուն հանձնած...
Ահավասիկ որ ձեր ազատ քայլերն կանաչ մարգագետիններ կկոխոտեն,
Եվ գերագույն կապույտը, երկնքեն վար, լիճերու պես, դեպի ձեզ, կհոսի...
Ձեր աչքերը հողին հովիտներուն գեղեցկություններեն կարցունքոտվին,
Եվ ծարավի բերաններնիդ հայրենական աղբյուրներու հատակ ջուրին կմոտենան...

Ցորյանի գաշտերն, ծով առ ծով, ձեր աչքերուն տակ, կյանքին հացը կալնծփեն...

Եվ ձեր այգին իր առատ աշուններու քաղցրությունը ձեզ կընծայէ...

Լռություն մը մահասարսուռ։ Երկու քայլ ևս և արևնե՛ր, արևնե՛ր պիտի ծագին...

Վերջուններդ կեռաւ։ Տեղ մը կարոտ համբույր մը ուրիշ համբույրի մը կսպասե,

Տեղ մը արցունքներ կան, որ կուզեն ուրիշ արցունքներու մեջ իրենց հուրը թափել...

Տեղ մը բազուկներ կան ձեր հոգնած գլխուն շուրջը իրը պսակ բոլորվող,

Տեղ մը թոնիր մը կա, երդիք մը, հիշատակ մը, ծառ մը, աղբյուր մը որ կվազե և առվակ մը որ կփախչի....

Տեղ մը սիրտեր կան, գորովներ կան, գարուններ կան, և կյանքը կա վերջապես։

Եվ գուրը բախտին հովեն կբացվի և խարխափելով ներս կմտնեք...

Սեմին վրա դեռ քանի մը կաթիլ արյուն և ծիծեռնակի մը երգը տանիքին կտուրին մեջեն...

Եվ սոփերներ ծերադիր ու բազկատարած որ անհավատալի բանի մը կսպասեն։

Եվ ահա անդնդախոր ճիչ մը ձեր անօգնական և հրաշալի հոգիեն,

Եվ, ո՛վ սոսկում, անշրջան և անվերջ շռինդը ձեր տասնամյա շղթաներուն,

Որ ձեզի հետ կարթնանա և ձեր ոսկորներուն վրա իր օղակները կատաղորեն իրարու կզարնե...

Ավա՜ղ, ավա՜ղ և հովիտ և հայրենիք և աղբյուր և հիշատակ և համբույր,

Նորեն բերդերուն և բանտերուն եղեռնական գազանիքին խորը կմխրճին,

Եվ ժամանակը հոգ է միայն որ իր ատանցքին վրա այլևս չի թավալիր,

Հոգ է միայն հեծեծանքներու հեծեծանքին անհունապես աղետալին...

Հոգ է ատերարամեության մորմոքը, լռին լաց ու կոծը, չի՛ մեռնող կյանքը և չի՛ ծնող մահը...

Հոգ է որ ազատության ակնապիշ աչքը գերեզմանի հողովը կլեցվի...

Հոգ է որ արցունքը բիբերեն ե՛տ կդառնա, ուղեղին մեջ հոսելու համար...

Հոգ է որ անհոգությամբ միսեր կխարանեն և անհոգությամբ ոսկորներ կփշրեն,

Հոգ է այլուրին ծարավը, գիտցվածին անգոյությունը, և փախուստը կարմիր փորձություններուն,

Այդ որմերուն տակն են, հիմնաքարերուն հավասար, և մութին մեջ խեղդամահ՝

Անոնք որ օր մը, փառքի օր մը, պատմության օր մը, օր մը հերոսության,

Ջարիքին օրենքները պատռեցին արդարության առավոտի մը ի խնդիր,

Անոնք որ իրենց անձը զոհել ուզեցին Գաղափարին խորանին առջևը կանգուն,

Անոնք որ թշնամիի սուրին դիմաց մեր կյանքին համար, իրենց սուրը շողացուցին,

Անոնք որ ցեղին սարկության շղթաները, ցեղին ուսեն՝ իրենց ուսերուն վրա վերցուցին...։

Ո՞ւր են ուրեմն, ո՞ւր են մեր բազուկները, մեր կամքերը, մեր մուրճերը, մեր հարվածներն ազատաբեր,

Ո՞ւր է մեր սերը, ո՞ւր է մեր խիղճը, մեր վազքը, մեր զայրույթը շանթածրար,

Եվ ե՞րբ, ե՞րբ պիտի վար շրջենք, ե՞րբ պիտի խորտակենք, ե՞րբ պիտի փշրենք,

Մահվան դուռներեն այդ բանտերուն, երթալ հափշտակելու, երթալ համբուրելու համար,

Այդ հավիտենական հերոսները, որոնք մեր կյանքը իրենց կյանքեն անհունապես ավելի սիրեցին...

Որոնց մեջ թերևս երեկվան սերը մեռնի, վաղվան անեծքը ծնեցնելու համար...

Ուրեմն ո՞ւր եք, Բռունցքներ, ո՞ւր եք Բարկություններ, ո՞ւր եք Խորտակիչներ, ո՞ւր եք, ո՞ւր...։

ԿԱՌԱՎԱՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԵՆ

Մահակիր սյուները մթնաշաղին մեջեն եղեռնաբար կբարձրանան,
Պայծառ, սրտոտ և նվիրական որդիներուն համար տրտմաթախիծ Հայրենիքին,
Կարինեն Գազատիա և Մարզվան և Պոլիսեն Իզմիր և Երզրա...
Եվ ամեն անգամ որ արևակերպ հերոսի մը հոնդյունը հովերուն մեջ մեռավ,
Հեթանոս խուժանը կատաղորեն վարն էր, հրապարակին վրա, ցեխին մեջ և ցեխն ապականելով...
Եվ ցնծութենե կոռնար, Ալլահին հրավերեն և ատելության ծափերեն մոլեգին։
Բայց ո՞վ էր որ պիտի ողբար քո բարոյականդ, ո՞վ խավարի և ավերի ժողովուրդ,
Դուն որ դահիճներուն առջև կծնրադրես և հերոսներուն համար պսակ հյուսել չես գիտեր...
Ո՞վ պիտի սգա քո անբերրի դարերուդ բարբարոս արշավը Ելլադաեն ի Հայաստան,
Ո՞վ պիտի կենցաղացնե քու գործած ավերակներդ և գեղեցկությունները զոր փոշիացուցիր...
Եվ ո՞վ պիտի բերե իդեապաշտության մրրկոտ ջահը, քու կյանքիդ ճանապարհին վրա, հերոսաբար սարսելու...
Եթե ոչ Հայորդին, որուն հստակ մտածումը, Արևմուտքին իդեալները ձեր դիմաց ապարդյունորեն ցոլացուց...
Եվ որուն արյունը եկավ նույնիսկ Մարդկության բովանդակ Պատմությունը թրջելու...
Որպեսզի կարմիր լույսը վերջապես զձեզ թափանցեր, և դժխեմ սուրին տեղ ձիթենիին ճյուղը բռնեիք...

Ահավոր անկյունե մը անդոհական թիարանին դուռը իր ծխնիին վրա կճռնչե...
Կիսամութին մեջ մահաձայն շռինդ մը քարերուն վրա դաժանորեն կդարբնվի,
Եվ սվիններ և սուրեր կմերկանան, և հիշոցներ ու նզովքներ ամեն դի,
Հսկաներ դուրս կաշտարակվին, անընկճելի և շքեղ և անվեհեր,

Իրենց ըմբոստ ուսերեն առկախ երկաթները ազատարար զանգերու պես մեկզմեկու ընդհարելեն...
Դեպի ստույգ մահը կքալեն, ցեղին ցավովը սպառազեն և մոտավոր մահեն զորավոր...

. . . . . .

Ո՞վ գերագույն եղբայրներ, առավոտը քաղցրո՞ւրեն քաղցր է, և ամենագութ աստղերը կտարաժամին...
Եվ երկնակամարեն ծորացող լույսը, այսօր, ձեր հերոսի հոգեվարքին համար է սահմանված...
Հիմա հովեր պիտի անցնին տառապանքով հեծեծուն, արյունով կարմիր, մոխիրով սպիտակ...
Հայրենիքեն փախչող հովեր պիտի անցնին, կարոտով, արցունքով, և հիշատակով բեռնավոր,
Եվ հողին տրտմութենեն տրտում՝ տատրակները իրենց փետուրներուն շուշանը վար պիտի թափեն...
Եվ սրարշավ արծիվներ ձեր հերոսի մահագույժը կատարե կատար պիտի պատգամեն...
Մինչդեռ չարաշուք խուժանը վարեն, թերևս, մա՜հ պիտի որոտա գաղափարի զոհերուդ...
Եվ ահա կմախակերպ սյուներուն առջև կանգ առին, մահը ոտքերնուն տակ և հայացքնին աստղերուն,
Եվ որոտումին պես խոսեցան, իրենց բռունցքին մեջ կայծակներ ծրարած և բառերնուն հետ ապառաժներ շարժելեն...

— Նախ դո՜ւն ետ թավալե, ստրկության և չարիքի արյունախում խուժա՜ն,
Դո՜ւն որուն բերանեն դեռ մեր ցեղին արյունն է, որ աչքերնուս առջև վար կկաթկթի...
Դո՜ւն որ մեր հացովն ես սնած ու մեր դարբնած սուրերը մեր սրտին ուղղած...
Դո՜ւն որ քու անիմաստ գոյությունդ մեր կենսագործությանը և մեր ճիգին կպարտիս,
Դո՜ւն որ մեր աշխատավոր բազուկին և մեր լուսավոր ճակատին պտուղները քաղեցիր,
Դո՜ւն որ դաշտե՜ր մոխրացուցիր և մենք որ անխոնջորեն զանոնք արշալույսներու՞ վերածեցինք...

Գո՛ւն որ մահ սերմանեցիր և մենք որ ցեղովին գեղեցկություն
և բարություն ծնցուցինք...
Գո՛ւն, բարբարոսության անխիղճ գործոն, ե՛տ քաշվե, ե՛տ թավալե,
ե՛տ խավարվե...
Թող մեր վերջին հայացքը պայծառ մեռնի՝ մեր ոգեվարի
գալարումին արժանի չես դուն...
Եվ գիտք, դատավորնե՛ր, դահիճնե՛ր, և դուն, մեռելատի՛պ
Մարդասպան,
Լսե՛նք ձեզի, այս ժամը ձեր զարհուրանքի ժամն է, Հայրենիքին
կողը նոր հերոսներու երկունքին կսարսռա...

Այլևս օրենք չի կա, ազատակամ ու խիզախ մահը, մահն է ձեր
դարավոր բռնության,
Կործանողներու կործանումը փոթորիկներու պես, անշրպետներեն
պիտի հասնի, պիտի գա,
Միայն Գաղափարն է, որ ո՛չ մահ ունի, ո՛չ դատավոր, ո՛չ
գերեզման, և ո՛չ դագաղ։
Եվ հիմա զմեզ խեղդող չվանը մեզի տվե՛ք, մեզի տվե՛ք,
դահճապետնե՛ր, դահիճնե՛ր,
Եվ կեցցե՛ն Ըմբոստները, կեցցե՛ն Ըմբոստները, կեցցե՛ն, և
կեցցե՛ Հայաստան...»։

. . . . . .

Հեթանոս խուժանը անհետացավ, ինչպես դիակներ պղնձե հովերուն
շունչեն հալածական,
Եվ անցնող ալեփյուռները իրենց մայրական լացը լացին, անցնող
թռչուններն իրենց երգը երգեցին,
Անցնող ճառագայթներն իրենց ոսկիե պսակը և դափնին
հյուսեցին,
Անցնող եղբայրը և լուին և անխոս հոգիները իրենց զարհուրելի
վրեժները հղացան...
Ու ձեր մարմինները, ո՛վ Ահավորներ, ո՛վ Ճշմարիտներ, ո՛վ
գերագո՛ւյն եղբայրներ,
Ձեր մարմինները օդին մեջ առկախ և ձեր մեծաբաց աչքերը
հայրենի աստղերուն,
Օրերով և գիշերներով, երկու սյուներուն մեջտեղ քինահույզ,
ճոճեցան և ճոճեցան,
Եվ ձեր վերջին խոսքերը, անտառին նման ուռճացավ...
«Կեցցե՛ն Ըմբոստները և կեցցե՛ Հայաստան...»։

ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՋԱՀԵՐ

Արյունը և եղբայրակցությունը
ամենամեծ ուժերն են։

Գ. ԷՍՔԻԼԵՍ

1. ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼՔ

Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դո՜ւրս,
Եվ բարբարոսներն արյուններով կդառնան,
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայեն,
Ագռավներու բազմություններ կանցնին վերերեն,
Արյունոտ բերաններով ու գինովի քրքիջներով...
Յամաքահով մը կիսամեռները զայրույթով կխեղդե,
Ու պառավներու անձայն կարավաններ
Շտապով կփախչին լայն ճամփաներեն...։
Գիշերին մեջեն արյուններուն ալիքը կբարձրանա
Ծառերուն հետ շատրվաններ ուրվագծելով,
Ու ամեն կողմե սոսկումով կսուրան հալածված՝
Նախիրները հրդեհվող ցորյաններուն մեջեն...
Փողոցներուն մեջ մորթված սերունդներ կտեսնեմ,
Եվ ամբոխներ անպատմելի սրածությենե դարձող,
Արեադարձային տաքություն մը կբարձրանա
Հրդեհի տրված ազնվական քաղաքներեն...
Ու մարմարի ծանրությունով իջնող ձյունին տակ,
Ավերակներուն և մեռելներուն մենությունը կմտի,
Օ՜, մա՛հ ըրեք սա սայլերուն ճռնչյունն ահավոր,
Իրենց վրա դիզված դիակներուն տակ,
Ու սգավոր մարդերուն աղոթքներն արցունքոտ,
Որ կածանե մը դեպի համայնափոսերը կերկարին,

Մտիկ ըրե՞ք հոգեվարքներուն ձայները վերջին,
Հովին հարվածներուն մեջ որ ծառերը կշարդե,
Օ՜, մի՛ մոտենաք, մի՛ մոտենաք, մի՛ մոտենաք,
Զբլլա որ մոտենաք գերեզմաննոցներուն և ծովուն,
Կարմիր ջուրերուն վրա նավեր կնշմարեմ հեռուն,
Մեռելներու լուտակումներ անոնց մեջ կան,
Ու ցավեն դալարվող ալիքներուն վրա
Գանգեր ու սրունքներ ինծի կերևան...

Մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք
Փոթորիկին գոչը ծովուն ալիքներուն մեջ,
Կոտորա՞ծ, կոտորա՞ծ, կոտորա՞ծ...
Մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք
Մահաձայն ոռնումը զարհուրյալ շուներուն,
Հովիտներեն ու գերեզմաններեն ինծի հասնող,
Օ՜, պատուհանները փակեցեք ու աչքերնիդ ալ,
Կոտորա՞ծ, կոտորա՞ծ, կոտորա՞ծ...։

2. ԱՎԵՐՈՒՄԻ ԳԻՇԵՐ

Բոլոր վիրավոր ու մահաբաղձ հոգիներն այս իրիկուն,
Վերջալույսին մոխիրներուն վրա հուսահատորեն հակած՝
Իրենց սարսափն ու վերահաս աղետքը կուլան...
Ու ցավերե անմխիթար մայրեր,
Երիտասարդ ու շքեղ հսկաներու համար,
Իրենց խելակորույս գլուխները դագաղներու բախելեն,
Հավիտենական ու վաղաժամ կորուստը կարյունվին...
Օ՜, իրիկո՜ւն ու գերեզմա՜ն, գերեզմա՜ն այս բոլորին,
Ու արյուն ու մոխիր ու արցունք մեր անզոր հոգիներուն համար...։
Ահաբեկյալ քաղաքին լույսերն աչվրներու նման կկուրանան,
Ու [illegible]ներուն և հոգիներուն խորը, վտանգին և դիշերին
զարհուրանքը կալեկոծվի...

Մեռելասպաս սենյակներու մեջ ծեր կիներ,
Ճակատագրին անողորմ ժամերեն դողդոջուն,
Աճապարանքով մարտիրոսված հերոսներու մարմինները
կպատանքեն...
Մինչդեռ հեռուներեն աղեխարշ ձայներ մեզի կպաղատին՝
«Եղբայրնե՞ր, ընկերնե՞ր, օ՜, օգնության հասեք, բազուկներ
կապեցեք,
Որովհետև այս գիշեր, ատելության և ավերումի գիշեր,
Սրածումներու անարդար շեփորը քաղքին վրա նորեն պիտի
հնչե...»։
Ու ձայները կխեղդվին ու ձայները կուլան ու ձայները
կմեռնին...։
Կյանքեն դատապարտյալ ու մեռելաստվեր որբեր
Խելահեղորեն գերեզմանված մայրեր կփնտրեն,
Ու աղետաբեր մահազանգեր հրդեհվող գմբեթներու կատարներեն,
Կիսամեռներուն ու մաքառողներուն վրա անողորմաբար
կմրրկվին...
Եվ օրորոցներու մեջեն պայծառ ու սրտակեղեք անմեղություններ,
Հեռավոր աստղերուն մայրությունը նկատելեն,
Ինքզինքին և իրենց շուրջը երկաթվող եղեռնը կանգիտանան...
Ուրիշներ, իրենց երազին մեջ, Ազատության բացաստաններեն
կանցնին,
Հույսին Շուշանները քաղելեն և մեկմեկու գորովագութ ժպտելով...
Ուրիշներ, աստվածային ջուրերուն առջև և ապահովության
ապառաժներուն կոթնած,
Երջանկորեն, կենդանարար Արեգակին ծննդյանը կսպասեն...։
Ուրիշներ, բարօրության արծաթյա քնարը ձեռվընին,
Ու ծաղիկներ իրենց կույսի մազերուն մեջ և կուրծքերուն վրա,
Կյանքին փառքը և ապրելու Գեղեցկությունը կերգեն...
Ուրիշներ՝ կարոտակեզ՝ Փրկության ձեռքերը համբուրելու կվազեն...
Ու շատեր ծառերուն ու հովերուն գալարումները կունկնդրեն,
Անոնց մեջեն օգնության հասնող բազուկներ և շունչեր անրջելով...
Բայց ավա՜ղ, երազները կմեռնին, երազները կմոխրանան,
Եվ եղեռնական կես-գիշերը և ոսկորե Մահը երկինքներեն վար
թավալող գերեզմաննոցի մը նման...
Քարուքանդ քաղաքին ու մենավոր ու մարտիրոս հոգիս վրան
կշրջին...։

3. ԹԱՂՈՒՄ

Հուսահատորեն ու պանդխտորեն անտառը վերադարձա
Իմ վախճանած բարեկամս համբուրելու համար,
Ու բոլոր եղնիկներուն ու կարապներուն հետ,
Որ լիճերուն ու հոգիիս տխրությունը կհասկնան,
Թաղումը ըրինք բարեկամիս, ձմռան կես-գիշերի մը մեջեն...
Օ՜, իր մարմինը որչափ ծանր էր իմ՝ կյանքեն հոգնած ուսերուս համար,
Ու Մահը ո՜րչափ հեռու իմ այլաբաղձությունով իրեն կարկառվող տղու աչքերես...
Աստվածային ու անբասիր կարապները թաղումը տոնեցին,
Ու ես՝ եղնիկներուն հետ տաժանագինորեն գերեզմանը փորեցի,
Անտառին բոլոր ծառերը հուղարկավորներ եղան...
Ու մահվան հովը՝ անոնց անծանոթ ու երկաթյա բուրվառը...
Ու մոտավոր ու հեռավոր քաղաքներուն բոլոր մահազանգերը նվիրական,
Երկարորեն, մահագուժորեն ու բարեպաշտորեն,
Արևեն այրի ու ամայի գիշերին մեջ ըսին թե՝
Բարեկամ մը անտառներու եղնիկներուն ու լիճերու կարապներուն,
Ու երկայն ու ահավոր ծառերուն ու հովերուն հետ,
Երկյուղածությունով իր բարեկամը կթաղեն
Դիտեք թե հեռավոր ու մոտավոր քաղաքները բոլոր,
Ըրերուն ու մարդերուն ոճիրներեն քանդվեցան.
Կարապներն ու խարտյաշ եղնիկները հովերուն մեջ խեղդվեցան...
Ջանգակները հին եկեղեցիներու փառքերուն հետ լռեցին,
Բայց իմ հոգիս, բայց իմ սգավոր հոգիս,
Այս բոլորին թաղումներեն ու մահացումներեն վիրավոր՝
Անտառներուն սարսափին մեջը բանտարկված մնաց...

4. ԱՐՅՈՒՆ

Դժգունորեն հույսին բոլոր շուշանները թափեցան,
Ըրերուն անգթության մարմարներեն ի վար,
Մահագուժորեն և անդադար,
Եվ արբշիռ և ուխտված հոգիներն այլևս հանեցին

Իրենց հաղթանակի և երազի վերարկուն երկար,
Գերեզմանվող իրիկուններուն հետ,
Եվ ավերումի համայնապատկերին դիմաց։
Գարուններուն խենթեցնող գեղեցկությանը տեղ,
Տրտմության երկաթե ձյուն մըն է, որ կհոսի
Մեր բոլորին անմխիթար որբությանը վրա,
Ու կարծեմ արհավիրալից ու քինահույզ ջուլհակներ
Հեռավոր ու մթին արվարձանի մը մեջ այսօր,
Աճապարանքով, բոլորը մեկեն,
Մեր սև օրերուն խոնավ պատանքը կհյուսեն...
Մինչդեռ անագորույն և անարև հոկտեմբերներ,
Սառած լուսնկային հետ միանակ,
Տարիներե ի վեր, ամե՜ն գիշեր, ամե՜ն գիշեր,
Կյանքին անհուսությունը կանձրևեն մեր վրա։
Ավա՜ղ, առաջ արշալույս մը կար, որ քաղցրությամբ կծագեր,
Եվ իմ հավիտենական երազս երջանկորեն
Անկեց ինծի՝ մտածումիս համար ծաղկադաշտեր կհորիներ,
Եվ պսակներ իմ բաց ճակատիս և քնարիս մանկական,
Ավա՜ղ, առաջ արշալույս մը կար որ բուրաստանի մը նման կծաղկեր,
Երբ անմեղության ավազանը հայելին էր իմ հոգիիս,
Երբ լիճերուն եղեզներն իմ շունչիս մեջեն խաղաղությունը կերգեին...
Երբ մայրական Հույսին ստինքները հափրացումն էին շրթունքներուս,
Երբ ադամանդե լուսնկան առաքյալս էր և մտածումս ահագին։
Եվ կապույտ խորությունն անրջային ջուրերուն,
Աստվածային ապարանքն էր իմ դողդոջուն և պատանի ստվերիս...
Բայց այսո՜ր, բայց այսո՜ր, ես այս ամենուն առջևեն,
Սարսափահար և աչվրներս փակած կփախչիմ...
Վասնզի գիտեմ որ բոլոր արշալույսները Նվիրական հողին,
Տարիներե՜ ի վեր, մեր արյունեն են կարմիր...

5. ԱՓ ՄԸ ՄՈԽԻՐ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Ա

Ավա՜ղ, ապաքանքի մը պես մեծ էիր և շքեղ,
Ու դա՝ երդիքներուդ սպիտակ կատարեն,
Ասդղաթորան գիշերներու լույսին հետ,
Վարեն, ահեղավազ Եփրատին կունկնդրեի...։

Բ

Արցունքո՜վ, արցունքո՜վ լեցի որ ավերակ առ ավերակ
Քու լայնանիստ պատերդ իրարու վրա կործանեցին,
Սարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արյունի...
Ջրեղ եղերող պարտեզիդ ծաղկըներուն վրա։

Գ

Ու մոխրացա՜վ այն սենյակը կապույտ,
Որուն որմերուն ետև և գորգերուն վրա
Իմ երջանիկ մանկությունս կհրճվեր,
Եվ կյանքս կաճեր և հոգիս իր թևերը կառներ...

Դ

Փշրեցա՜վ, ուրեմն, այն հայելին ոսկեծիր,
Որուն եթերային խորությանը մեջ,
Երազներս, հույսերս, սերերս և կամքս կարմիր,
Տարիներով, մտածումիս հետ, ցոլացին...։

Ե

Ու բակին մեջ երգող աղբյուրը մեռա՜վ,
Ու կոտրեցա՜ն պարտեզիս ուռին և թթենին,
Եվ այն առվակը, որ ծառերուն մեջեն կհոսեր,
Ցամքեցա՜վ, ըսե՛ ո՞ւր է, ցամքեցա՜վ, ցամքեցա՜վ...

Զ

Օ՜, այն վանդակին կերազեմ հաճախ,
Որուն մեջ գորշագույն կաքավս, առավոտուն,
Արևածագին հետ և վարդի թուփերուն դիմաց,
Զարթնումի ժամուս՝ հստակորեն կկարգեր...։

Է

Հայրենի՜ տուն, հավատա՛ որ մահես հետո,
Քու ավերակներուդ սևին վրա իմ հոգիս
Պիտի գա, որպես տատրակ մը տարագիր,
Իր դժբախտի երգն և արցունքն լալու...։

Ը

Բայց ո՜վ պիտի բերե, ո՜վ պիտի բերե, ըսե՛,
Քու սրբազան մոխիրեդ ափ մը մոխիր,
Մահվանս օրը, իմ տրտում դագաղիս մեջ,
Հայրենիքս երգողի իմ աճյունին խառնելու...

Թ

Ափ մը մոխի՜ր աճյունիս հետ, Հայրենի տուն,
Ափ մը մոխի՜ր քու մոխիրեդ, ո՜վ պիտի բերե,
Քու հիշատակե՛դ, քու ցավե՛դ, քու անցյալե՛դ,
Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...։

6. ՀՓՇԱՏԱԿ

Ահավասիկ որ նոճիներու խավարներուն մեջ՝
Վերջալույսի և մահաբերմի այս ժամուն
Ագռավներու եղերավոր երամներ մեռելաձայն,
Մտածումիս և վաղորդայնիս գերեզմանները կողբերկեն...

Եվ ի՞նչ է այդ աղաղակը զոր կողբաք՝
Իմ գանգիս և երազներուս հսկայական որմերուն ետև...
Ի՞նչ է այդ զողանչը զոր կհնչեցնեք,
Ի՞նչ է այդ պատանքը զոր չորս հովերուն կառագաստեք...
Ի՞նչ է այդ արյունը զոր ձեր բախումներովը կործանարար,
Իմ հոգիիս մեջը կշրվեցեք...
Եվ ի՞նչ կոցահարում և ի՞նչ խավարչտին թևաթափ,
Ի՞նչ փոթորիկ ու ի՞նչ բազմություն իմ անհունի ներսիդիս...
Ի՞նչ մեռելախումբ անտառներու հանգույն ոտքի՝
Եվ դեղին հողի ի՞նչ ցնորական սրսկում...

Օ՜, փառք քեզի, ո՜վ անցյալներու Հիշատակ,
Ահավասիկ որ իմ առջև կմերկանաս,
Ինչպես հողին արշալույսը փոթորիկներուն առջև,
Բայց, կդողդոջե՜մ. մեղա՜ քեզ, ո՜վ մահագույժ ներկա,
Անցյալիս գեղեցկությունը վերապրելու ուժը կպակսի ինծի...
Ու նորեն, երազներու ուխտված մարմնիս վրան,
Արյունով թրջված պատանքներուդ խոնավությունը կզգամ,
Ու չարազոր ձեռվըներ երկաթեղեն ծանրությամբ,
Կմոտենա՜ն, կմոտենա՜ն արտևանունքներս փակելու,
Ու բազուկներս, որ ատենով հաղթանակներու արեգակին
գալարվեցան...
Այսօր չախչախված՝ արտիս սերերուն վրա կխաչաձևվին...։
Ըսե՜ք, ըսե՜ք, ո՞վ պիտի բերե հիշատակներուս աստվածային
աղբյուրներեն
Այն բաժակ մը ջուրը կենդանարար,
Որ հայրենացավս պիտի ամոքեր՝ բոցավառ մահաջերմս մարելեն...
Ու խե՜ղճ ճակատս, ի՞նչ մեծադիր երազներու ավերակ,
Պիտի զովացներ իմ անցյալիս աշխարհներուն վերերևումեն...
Օ՜հ, բաժակ մը ջո՜ւր, բաժակ մը ջո՜ւր, բաժակ մը ջո՜ւր,
Իմ հիշատակիս և հոգիս հայրենական աղբյուրներեն,
Վասնզի, Մահը ուսերուս վրան է այս իրիկուն,
Ու մտիկ ըրեք, ակռաներս մահագուժորեն կկրճտեն...։

7. ԳԹՈՒԹՅՈՒՆ

Տե՛ր, հիվանդներուն և լքվածներուն սնարեն
Ոճրագործներդ ու իրենց սուրերուն սարսափը հեռացո՛ւր,
Եվ ջուրերդ թո՛ղ քիչ մը իրենց կատաղությենեն հանդարտին,
Որպեսզի մահապարտները աքսորանքի նավերուն մեջ,
Թեև քեզի անիծելով, բայց գոնե խաղաղությամբ ոգեվարին...
Ես թշվառներու անհամար տանիքներ գիտեմ,
Որոնց տակ ազնվական սերունդներ բազկատարած՝
Քու ավետարանական ու խարտյաշ ցորյանիդ,
Ու սպիտակ ու երբեք չի հասնող գթությանդ կսպասեն...
Ջարիքիդ ոգիներն, ահավասիկ, դաշտերը հրդեհեցին...
Ու ահա արյունը Արարատին կատարները կարմրցուց...
Ու ահավասիկ որ դժոխային մանգաղներդ ոսկիե,
Անմեղներու վիզերուն ի խնդիր հորիզոնին մեջ կգալարվին...
Մինչդեռ՝ եղեմներուդ բոլոր հրեշտակներն անդին,
Անձրևներե ու արեգակներե հուսքի հողերուն վրա,
Քու ձեռքերովդ օրհնված ամբարներու մեջեն,
Օ՜, անգթորե՜ն, անգթորե՜ն, անգթորե՜ն,
Մոլախինդի ու կարմիր թույնի հունաբերե,
Մեր բոլորին համար վաղվան մահը սերմանեցին։

8. ԱՆԴՐՇԻՐԻՄՅԱՆ ԱՂԱՂԱԿ

Ավա՜ղ, ավա՜ղ, ընկեր, այն օրեն, երբ քու կյանքիդ լույսերը
հոգիիս առջև մարեցան,
Ես իմ մեռելվորի և սև օրերու վերարկուս ուսերուս վրան նետեցի,
Գերեզմանի մը պես խոր, պատանքի մը պես ցրտին և ցավի մը պես
հավերժական...
Եվ զողդոջուն ճակատագիրն այդ ժամեն՝ տառապանքիս առջևը
ծնրադիր,
Քու մահդ և իմ օրերուս անհուսությունը կնշերերգե...

Հանախ, հեռավոր ձայնդ հողին խորերեն արյունածաղկի մը պես
կբարձրանա...
Քու հերոսակերպ ուրվականիդ հետ և ասիկա՝ խստադեմ՝ ինծի հետ
կքալե,
Պարտվածի ձեռքերս ձեռքերուն մեջ՝ և իր բերանը իմ տրտմության
բերանիս՝
Կխոսի ինծի, և իր բառերը և մթին են, և՛ զայրացկոտ, և՛ ամեհի...
«Ընկե՛ր, խորտակե խաչդ սա՛ քու հոգնած և ապաժամ քնարիդ հետ,
Եվ գլուխդ հողաթմբիս՝ մտիկ ըրե շիրիմներեն հասնող աղաղակին,
Վասնզի անոնց ահեղությունն ամեն բան է ապրողներուդ համար...
Դիտցի՛ր, ո՛չ մեկ հույս կմեռնի և ո՛չ մեկ գարուն կթառամի
այստեղ,
Ատելության ո՛չ մեկ ճիչ և սիրո ո՛չ մեկ մրմունջ մարած է դեռ,
Ապագայի ամեն արև մեր ընդերքներուն մեջեն է որ թավալելով
կանցնի,
Եվ կյանքի ամեն գաղափար մեր արահետներեն է որ դեպի ձեզ
կհասնե,
Մեր կոպերը արտասուքի տեղ զարհուրանք է որ կարտահոսեն...
Եվ մեր մոխիրին հոտը հորիզոնին մեջ թշնամիին մոտալուտ մահը
կծանուցանե,
Դիտես որ ամեն հերոս մեր վրեժին համար է որ կծնի,
Եվ ամեն ազնվազարմ զոհ մեր սիրույն համար կոգեվարի...
Հրաշագեղ Վասպուրականին և հպարտ Կարինին ու ըմբոստ
Զեյթունին և Սասունին
Բովանդակ ցասումը մեր ալիքներուն մեջեն է, որ ձեր բազուկները
շարժել կուտա...
Եվ վերջապես ոսկետառ Պատմությունը մեր խավարներեն է որ
կխոսի
Եվ Քեզ և Մարդկության և Դարերուն և Ջարիքի ճակատին...
Այստեղ է որ ձեր ապարդյուն ոսկորները օրերեն փշրված պիտի
գան...
Գոնե թող հերոսներու մահվան բոցովը լուսավորված վար մխրճին...
Ընկե՛ր, սիրույդ և արցունքիդ արժեքը ինչո՞վ պետք էր նժարել,
Դուն որ զիս իզուր կյանքին մեջը և ես որ մեռյալ զքեզ կորոնեմ
գեռ,
Ա՜ռ այն սուրը որ օր մը իբր խորհրդանիշը իմ անձնուրաց
անցյալիս,

Եկար կայծակի բեկորի մը նման շիրիմիս վրան ցցելու,
Վերցո՛ւր զայն, աչ ձեռքիդ մեջ, վստահ և ամրապինդ, վերցո՛ւր,
Ու սուրա՜, սիրելիս, պերճորեն, զվարթորեն, կտրիճորեն սուրա՜,
Հոն, ուր ես գաղափարիս և գաղափարիդ համար. առավոտ մը,
արյունիս մեջն ինկա...»

9. ՄԵՌԵԼՈՅԻ ՕՐ

Գիտեք թե ի՞նչ սոսկումի և արյունի հեղեղներ են, ո՛վ բարեկամ
հոգիներ,
Որ այսօր իմ հայրենիքե որբի և ցավերե սգավորի աչվրներուս
մեջը կարտահոսվին...
Անցյալներու ի՞նչ հիշատակ և սիրված մեռելներու ի՞նչ ահեղաբեր
հաքությո՞ւն,
Ո՞րչափ պատանքներ տխրագին ձեռքերովս կարված և
գերեզմաններեն դեղին,
Որ ահեղորեն, հայրենական վրաններու պես, ուսերուս վրան
կառագաստվին...
Ի՞նչ խորտակում դագաղներու և ի՞նչ խլրտում ոտքի կեցող
ոսկորներու...
Եվ մանավանդ ի՞նչ կարոտի համբույրներ, ի՞նչ ողջագուրում և
ի՞նչ սեր՝
Շրթնաթափ բերաններու դեմ և ավերյալ աչքերու և փշրված
կուրծքերու...
Եվ մանկության օրերու ինչ օրորներ և ինչ գգվանք, ինչ խոստում և
ինչ հրավեր,
Որ այս առավոտ մեռելոցի օր, երկրիս մեռելները մահազանգերու
շունչերովը ինծի կուղղեն...

Եվ ահավասի՛կ մահազանգերն են, աղետավոր մահազանգերը
գիշերվան մեջ,
Եվ իրենց խենթությունը և կոչը և քրքիջը և հարվածը որ
մտածումիս կկառչին...
Եվ ահավասի՛կ իրենց երկաթաքայլ հովը հին մահերը վիրատին
գուժող,

Եվ ահավասի՛կ ավերածներուն հողը և ցավերու մոխիրն, որ
անապատ առ անապատ,
Ամեն մեկ զոդանջե, ավազակույտերու նման հորիզոնները
կալեկոծեն...
Եվ ադոռներու արյունաթաթախ թեւեր պատերուս վրան
կմահածփին,
Անգղի ոգիներու հետ իրենց բերաններեն նորածիններ և
գլուխներ առկախ...
Ու հեծկլտանք և վրեժի ահեղագոչ ձայն և սիրո մրմունջ և
ատելության որոտմունք,
Եվ գերեզմանի հող և խաչերու փշրանք և գամբանաքարեր,
Հողերեն իրարու ետևե հանկարծորեն հառնող տեսիլքներու հետ...
Եվ ահա ինչ որ՝ կմախքե բերաններն այս առավոտ մոլեգնաբար
որոտացին...
— Եղբա՛յր, զավա՛կ, ընկե՛ր, ոտքի՛ կեցիր, այսօր անոգուտ
վերհուշումներու օր,
Հեռացուր քու հուսահատ ձեռքերդ սա՛ ճակատիդ վաղանցուկ
խորհուրդներեն,
Եվ բարկությամբ մտիկ ըրե սա՛ ավերյալ քաղաքներուն, որոնք
իրենց անվրեժ
Հեծեծանքի և աղոթքի ստրկական զոդանջները իրարու
կփոխանցեն...
Ոտքի՛ կեցիր, երազներդ կոխոտելով և աչքերդ հրավառելեն, ոտքի՛,
Ու ձեռքովդ հափշտակե՛ բոլոր շղթաներն այդ սև գանգերուն,
Եվ բազուկներուդ բոլոր թափովը փոթորկե անոնց երկաթները
թշնամիին վրա...
Քու վրեժիդ հեղեղին և ատելությանդ մոնչյունին զորությանը
համեմատ,
Վանքի և մեռելներս և ողջերդ, արցունքի տեղ, այսուհետև
Միշտ քինաշարժ և անդադրում մրրկումի պետք ունինք...

10. ԱՐՅՈՒՆ Է ՈՐ ԿՏԵՍՆԵՍ

Մոռացումներու մոխիրին մեջն է որ զքեզ պատանքեցի,
Ո՛վ երկրայելի, եռանվեր ու անոտի Սեր,

Եվ չի հաճեցա հյուսել խարտյաշ եղեգներեն ո՛չ գափնի և ո՛չ
պսակ,
Ու ո՛չ ալ գոզգոզ երգ մը, քեզի համար, իմ ազատածուի քնարես...

Ո՛չ ալ զքեզ դեռ երգեցի, ո՛վ երկինքներու անդորրական կապույտ,
Ո՛չ ալ զքեզ՝ Արեգակ, զորությո՛ւն, կյանքի և աճումի օվկիան,
Ո՛չ ալ զքեզ՝ Արևելք, առտվածներու և քուրմերու ծննդավայր,
Պատմությանց կոթող, իմաստության խորություն և վայելքի
խորան...
Ո՛չ ալ զձեզ՝ Արևմուտքի խղեապաշտ Ոստաններ, ուր Մեծերը
կծնանին...
Ո՛չ ալ զձեզ՝ մեհենական անտառներ և փլատակվող բարկությունք
սարսափահար ծովերու...
Եվ վարդակարմիր և հոլանի և անբասիր առավոտ,
Կամ ոսկիներու իրիկուն, մեռելական աշնանամուտ և անապատի
անեզրությո՛ւն...

Իսկ օր մըն ալ, երազիս մեջ, Քերթողահայր մը, ինծի ըսավ.
— Կհասկնամ ես քու ցավդ, վասնզի ես ալ կյանքեն եկա անցա...
«Զավա՛կ՝ և գիտես որ իմ քնարիս պարտեզներեն վարդի թերթեր
հոսեցուցի...
«Եվ տարփավորներն անոնց բուրմունքեն գիշերներով գինովցան,
«Բայց ծաղիկները գոսացան, ինչպես մեռավ իմ աշունս ալ
մեծափառ...

«Ես գինին երգեցի իր ոսկեվառ բաժակին մեջ հրակայլակ,
«Եվ բլբուլին հայրենացավը տավիղիս թելերեն սրտիս մեջը
կյանքեցաց...
«Խունկեր մատուցի՝ մոլեգնորեն պաշտված աստվածներու
պատվանդանին,
«Եվ տառապանքս մոռնալու համար, կերպարանքս մոխիրով
պատեցի...

«Մարմնին ձևերն երգեցի, գերեզմանեն սերած և գերեզմանին
ընծա,
«Ու ծերադիր պաղատեցա և գոզացի շրթունքի մը և երկու աչքերու
ոգեկ...

«Երցունքն երգեցի, վերջապես, հոգիներն հորդող և նայվածքներու հեծեծանք,
«Եվ օր մը այսպես մեռա՝ Հեղգությունս ձեր բոլորին բաժին ձգած...»։

Բայց քու գերեզմանդ ի վեր, Քե՛ր-Ողորմայր, ըսի,
հերոսություններու օրեր հասան,
Ուրքերուս տակ ավերակնե՛ր եմ տեսած, և լուսամուտես դուրս՝
հազարավոր մեռցվածներ...
Եվ սուրե՛ր շողացին... ձգեցե՛ք զիս, ո՛վ տկարություն կապանքներ,
դեռ սուրեր կշողան,
Եվ բանաստեղծի աչքերես արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն է որ
կտեսնեն...։

11. ՀԱԳԵՍՈՒԹՅՈՒՆ

Հոգիս վրա լուսինը կձյունե...

Օ՜, դեպի խավարներն ու Մոռացումը քալե,
Ով հոգնած ու դանդաղ ու ծանր ուխտավոր,
Աղբյուրներու սա՛ պայծառ տղուն հետ առանձին.
Ան՝ հոն տեղերը մարմարե մեհյաններ գիտե,
Ուր հինավուրց աստվածները՝ ազնվորեն զորավոր,
Քու հոգնությունդ կհասկնան...
Ու մարդկորեն անոր մեծ ցավը կապրին...։
Ավա՜ղ, մինչև ե՞րբ մեր մարմինները տարփավոր
Այսչափ տենդորեն պիտի գալարվին...
Դեպի փայտե դագաղները դարավոր՝
Հավիտենական ու ապարդյուն կյանքին,
Վերջապես իրիկուն մը մխրճվելու համար...
— Թեև այնչա՜փ չարաշուքորեն—
Արհավիրքով լեցուն բայց փրկարար ծոցը հողին։
Դիտեմ, աքեմիդ մեջի վանականի իրանդ ոսկիե,

Շատ ապրած Աստվածի մը խոնջենքն ունի.
Ուրեմն եկո՛ւր սա խարտյաշ ու խորունկ ու լուռ ու մերկ հարսերեն լեցված՝
Մեր գինիի նվիրական սափորն ա՛լ վար դնենք,
Թեև ան մեր երգերուն խենթությունը կըլլար...
Ու այն բոլոր արշալույսե ծաղիկները որ քաղեցինք,
Անկարելի պաշտամունքին համար...
Այս բոլորը ձգենք, մեր կուրծքերուն ադամանդե խաչերուն հետ,
Ո՞վ բարեկամ ու բախտակից ու հոյակապ քրմապետ,
Այնպես չէ՞, ես ալ այս բոլորը ճանչցա,
Քեզի հետ ա՛յնչափ ապարդյունորեն,
Իմ սիրահար տղու խոլաթեև իրիկուններուս մեջեն,
Հոգնած և արյունոտ ճակատիս դիմաց, անհունորեն, առհավետ...։
Ու արդեն ավազներու մոգերն աստղերուն տակ ըսին թե,
Հողին բոլոր գինիները ա՛լ մոլախինդ պիտի ըլլան,
Ու բոլոր կապույտ շուշաններն ալ ձեր Հույսի ծաղկանոցին,
Ամենը մեկ, հանկարծորեն ագռավներու պիտի փոխվին...
Ու ինտո գիտես որ բոլոր օձերը փեթակներուն տակ,
Մեզի համար այն սև՜ անձրևներեն ի վեր, հիմակ,
Մահագուժորեն վաղվան մեղրը կպատրաստեն,
Ու դեռ կարծեմ թե գետնափորերուն մեջ է որ
Բոլոր բրուտները, մեռելներու հողերեն,
Ո՞ր ժամանակեն ի վեր ապրողներուն համար մինչև այսօր
Ջրի կուժեր կշինեն...
Ու այն լամպարը որով ցնորքը կհսկենք մեր կտավե վրանին տակ,
Ահավասի՛կ, քեզի կըսեմ, Արշալույսեն դեռ շատ առաջ պիտի մարի...։
Օ՜, թեդ թեխս անցուր ու խարխափելեն քալե՛,
Ո՞վ ծանր ու դանդաղ ու հոգնած ուխտավոր,
Որովհետև վաղորդայնը անգթորեն սուտ է...
Ու մեր զգայախաբի ոտվրներն ալ հոգնած,
Կյանքին մինչև Իրիկունները երթալու համար։
Դեպի խավարն ու Մոռացումը թափանցե՛,
Ջուրերու երիտասարդ զավակին հետ առանձին,
Ու քու տարագիր ճամփորդի տառապանքդ բոլոր,
Ու այն աղջամուղջի դարերը զոր օրերն ուսերուդ վրա հարկեցին...։
Այդ բոլորը ամենը մեկ ինծի տուր...

Ու միսիդ պատանքներն ալ հոգիս վրան նետե...
Թեզ թեին անցուր ու քալե Ցավին հետ հայրորեն,
Անոր վիրավոր եղնիկի աչվրներն իմաստուն,
Կյանքին բոլոր ճամփաները գիտեն...
Հոգիս վրա լուսինը կձյունե...»

12. ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲՅՈՒՐ

Արշալույսիս և հույսիս օրերուն էր որ զքեզ ապրեցա,
Ո՜վ, հայրենի և քաղցրահամ աղբյուր,
Եվ քու լուսավառ ձայնդ դեռ ինծի կխոսի,
Իմ հոգնածի և հուսահատի ուղեղիս մեջեն...
Քու ադամանդյա վազգդ հորդառատ,
Հոգիս խավարչտին ավերակներուն վրա,
Այնչափ ատենե ի վեր հիշատակներս ու անցյալս կուլա...
Չեմ մոռցած զքեզ, ո՜վ հեռավոր ու եղբայրական աղբյուր,
Կհիշեմ, երբ կուգայի թրջել քու ջուրիդ խորհուրդներուն առջև,
Իմ երջանիկ տղու աչվրներս ու ճակատս պայծառ,
Եվ դուն գորովագութ՝ ազատության մտածումին նման,
Իմ արևս ու կյանքս ու հոգիս կքաղցրացնեիր...
Երբ իմ թևերս դեռ չէին կոտրտած սա՜ հուսահատության
սպառազինները,
Երբ նայվածքներս ուրախությենե կփակեի,
Երազված հաղթանակներու արեգակին ի տես...
Չեմ մոռցած այն առվակը ոսկիե մամուռով,
Որ քու երգիդ հոսանքին առջև կակոսվեր,
Եվ ես մանկական քայլերովս՝ երազելեն՝
Իրեն ճամփեն տարփանքով ու գինովությամբ կերթայի,
Ինչպես կերթան անոնք որ սպասված Հույսին կուգեն հասնել...»
Բայց դեռ կհոսի՞ս արդյոք, ո՜վ հայրենի աղբյուր,
Այնչափ հստակ, որչափ էր Արշալույսն իմ անցյալիս,
Դեռ վճի՞տ են արդյոք սա ջուրերդ հին օրերու,
Եվ քու ձայնդ դեռ ե՞րգ մըն է թե ապաղակ մը վրնջի...

Եվ չեկա՞ն արդյոք, ըսե՛, չեկա՞ն, մեր արհավիրքի օրերուն մեջ,
Դառնացնելու քու պայծառությունդ ադամանդե,
Իմիններուս անմեղ արյունեն՝ քանի մը կաթիլ արյուն,
Որոնց հոսանքներեն, ավա՜ղ, ավա՜ղ, իմ մտածումս պարտվածի,
Սուգե ու սարսուռե ու սարսափե անբուժելիորե՛ն խենթացա՜վ...»

13. ԱՐՑԱՐԻՆՔՆԵՐՍ

Ա

Եվ մաքրաթև երազիս հետ միևնակ էի, հովիտներուն մեջ հայրենի,
Քայլերս էին թեթև, ինչպես քայլերը խարտիշագեղ եղնիկին,
Եվ զվարթությամբ կվազեի, կապույտեն և օրերեն բոլորովին գինով,
Աչքերս ոսկիով և հույսով՝ և հոգիս ասավածներով լեցուն...

Բ

Եվ ահա բարեբեր Ամառն իր պտուղները զամբյուղ առ զամբյուղ,
Մեր պարտեզին ծառերեն դեպի հողը և գետի գիս կընծայեր,
Եվ ես լուսությամբ՝ գեղուզեզ ուրիշ ներգաշնակ հասակեն,
Երգերս ստեղծելու համար խարհրդավոր սրինգիս ճյուղը կկտրեի...

Գ

Կերգեի... Ադամանդյա առվակն և թռչուններն հայրենագեղ,
Աստվածային աղբյուրներուն հստակահոս մեղեդիներն անգագրուս,
Եվ առավոտյան գեփյուռը, քրոջական գորովներու այնչափ նման,
Այս բոլորն իմ երջանիկ երգերուս թոթռվումին կձայնակցեին...

Դ

Այս գիշեր երազիս մեջ, ձեռքս առի զքեզ, ո՜վ քաղցրախոս Սրինգ,
Շրթունքներս զքեզ ճանչցան՝ ինչպես համբույր մը հին օրերու,

Բայց շունչս՝ հիշատակներու զարթնումեն, հանկարծորեն մեռավ,
Եվ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ, արցունքներս էին որ
ինկան վրա...։

14. ՁԵՌՔԵՐԴ ԻՆՁ ԵՐԿԱՐԵ

Իմաստության և խորհուրդներու շքեղ լամպարս մինչև այսօր,
Մատյաններու և թիվերու մշուշին մեջ,
Եվ ճակատիս ու հոգիիս հոգնությանը հանդեպ՝
Եղբա՛յր, մինչև այսօր, կրսեմ, իր մահը միայն վառեց...։

Ու ձեռքս այրեցավ մտածումիս անբերրի կրակեն,
Ու նպատակիս ճանապարհն անհունորեն անհունացավ...։
Ըմբոստի կամքս պայքարին սարսափեն կմոխրանա՝
Եղբա՛յր, և այն երդումը զոր արևծագի մը մեջեն քեզի մրմնջեցի,
Ժամանակին հավերժական շրջանին երկաթե օրենքեն,
Սկսավ, տերև առ տերև, կյանքիս աշունին հետ, դեպի հողը
թափիլ...։
Ինծի կարկառե ձեռքդ և ուղղե՛ նայվածքդ տառապագին նայվածքիս,
Երկարե՛ ձեռքդ, որպեսզի զորավորի երակներուդ արյունը կարմիր,
Իմ օտարացյալի արյունս գոնե կայծով մը գարնանացնե...
Ես գիտեմ որ սիրտս քու սրտիդ եղբայրորեն պիտի խոսի,
Երբ նայվածքներդ գան իմ նայվածքներուս մեջ՝
Նախկին բարեկամի մեր կորուսյալ ժպիտները փնտրելու։

Եվ գիտեմ թե, ի՞նչ է ցեխը և ի՞նչ է Ոսկին,
Ստրուկներուն օրորոցն է և անկողինը և դագաղն է այն,
Եվ Ոսկին՝ ըմբոստներուն և մեծերուն գահն է,
Եվ հոգին է, և օրվան հացը, և բաժակին ջուրը, և պսակն անոնց
ճակտին...։

Ձեռքներդ ի՞նձ երկարե՛, դեռ իմիններս անպիղծ են՝
Եվ եկուր որպեսզի նայվածք նայվածքի դեմ,

Ես՝ ի քեզ՝ հերոսն սքանչանամ Հայրենիքին նվիրված,
Եվ դուն՝ քնարիս մրրկաթև լարերեն թերևս ճանչնաս,
Այն հին օրերու ընկերը՝ որ Յեղիս և ձեր բոլորին անչափելի
ցավերեն
Փորձեց բարկության և ընդվզումի պղինձները հնչեցնել...։

15. ԽԱՎԱՐ

Ու ես պիտի մեկնիմ տրտմությանս և ստվերիս հետ մենավոր,
Արշալույսի մը կամ վերջալույսի մը արյուններու ժամուն,
Իմ ատելութենե ու սերե ու ընդվզումե ամբոխյալ հոգիս՝
Անոնց հույսի լույսերեն վերջին անգամ մըն ալ թրջելով...
Ու քեզի կձգեմ, ո՞վ հերոսական ընկեր և մտածումի եղբայր,
Այն մետաքսե ծիրանեգույն վերարկուս երկար,
Որուն ծալքերուն մեջն իմ տառապանքս և ըմբոստացումս կարմիր՝
Օրերով ու խավարներով ապարդյունորեն պտտցուցի...
Եվ սա՛ լուսեղեն առավոտին քովը պիտի դնեմ քեզի համար,
Իմ կաղնիե ցուպս հաստատուն և դարերու ավանդ՝
Որ տարիներով հոգնությունս ինծի հետ, ճամփաներուն վրա,
Եղբոր մը պես և բարեկամի մը նման բաժնեց...
Եվ ահավասի՛կ հողե սափորս հրաշագեղ զոր ես թրծեցի
Ջուրերուն ամենեն քաղցրահամովն առցուն,
Եվ ահավասի՛կ խաղողի ոսկեղեն ողկույզ մը ծանրակշիռ,
Հայրենական այգիներուս արևներուն տակ հասունցած...
Եվ ահավասի՛կ հոգիս խարտյաշ ցորյանեն բաժին մը հաց,
Որ ծաղկազարդ զամբյուղիս մեջն այսօր,
Երազիս անտառներուն քով, ջուրին եզերքը դրի...
Եվ ահավասի՛կ դեռ երեսնոսե անվարժ քնարս աղմկահույզ,
Որ պարտութենես, օր մը, իմ դողդոջուն ձեռքերուս մեջ
ջախջախվեցավ....
Եվ ահավասի՛կ, վերջապես քեզի՝ իմ վաղնջական սուրս
պողպատյա,
Որովհետև իմ հաղթվածի բազուկներս անարժան են անոր բռնին,

Ահավասի՛կ որ թշնամիներու արյունին ծարավեն, մինչև այսօր,
Իր ոսկիե պատյանին մեջ կատաղութենեն կկայծկլտա...
Եվ դո՜ւն, ընկե՛ր, արդեն գիտես արիաբար քալել՝
Մեծ նպատակին այն ազատաբեր ճամփաներեն.
Ուրկե քու երկաթեղեն քայլերդ, հազարավորներու քայլերու հետ,
Հաղթանակներու խոստացված հնչյունը պիտի հնչեցնեն...
Բայց եկո՛ւր, և ահավասիկ ինչ որ քեզմե պիտի խնդրեմ,
Եկո՛ւր և քու բարեկամի ու սիրվածի՝ մատվրներովդ գորովածանը,
Այն երկու կաթիլ լույսը որոնք աչվրներս հույսով և
հպարտությունով կադամանդեն,
Եկո՛ւր զանոնք հավերժության մը համար դեպի խավարը փակելու...
Որովհետև, Հույսին ձայնեն՝ ինչպես ձայնեն Փրկության, կամ
ձայնեն Տառապանքին...
Կրնա ըլլալ որ իմ մեռյալի աչվրներս՝ նորեն արցունքոտին...։

16. ԾԱՐԱՎ

Ա

Հոգիս վերջալույսին մահը մտիկ կընե,
Ցարշարանքի հեռավոր հողին վրա ծնրադիր,
Հոգիս վերջալույսին ու հողին վերքերը կխմե...
Եվ իր մեջ դեռ արցունքին անձրևումը կզգա...

Բ

Ու ջարդված կյանքերուն աստղերը բոլոր՝
Ավերված աչվրներու այնչա՜փ նման,
Սրտիս ավազաններուն մեջն այս իրիկուն՝
Հուսահատութենե և սպասումե կոգեվարին...

Գ

Ու բոլոր մեռածներուն ուրվականներն այս գիշեր,
Աչքերուս և հոգիս հետ Արշալույսը պիտի սպասեն...
Հրպեսզի կյանքերնուս ծարավն հագեցնելու համար՝
Թերևս վերեն իրենց վրա կաթիլ մը լո՜ւս իյնա...

17. ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒԶԵՄ ՄԵՌՆԻՎ

Ա

Սպասումիս և Հույսիս քաղցրությանը հետ միևակ էի այդ
՛իրիկուն,
Եվ Փրկության ու Տառապանքի նժարովը՝ Հայրենիքին բախտը
կկշռեի...
Երբ՝ հեռակա տանս դուռը, գիշերվան սարսափին մեջեն,
ուժգնապես բախեցին.
Եվ ժպտուն՝ ընկեր մը ներս մտավ, շքեղորեն գեղեցիկ,
եղբայրաղեմ և ահավոր...

Բ

Երիտասարդ էր։ Աչվրներուն կայծը երկնքի աստղերեն էր որ
կծորեր,
Եվ հասակին ձևերը մարմարներու զորություններեն էր կերտված...
Մտածումը մարդկային արդարության էջերեն հստակորեն
ջահավառյալ...
Ճակտին վրա իրենց ցավի և բարության ծաղկներն ունեին։

Գ

Մտերմաբար քով քովի, Հայրենիքին տապառանքեն կխոսեինք,
Իր ծանրախոհ գլուխը սգավոր կիսաստվածի մը արյունոտ սրտին
կնմաներ...
Նայվածքները նայվածքներուս մեջ, նույն ճակատագրին
խորհրդանիշը փնտրեցին...
Եվ մեր տրտում ժպիտները հոգին հոգի մեզմորեն ճառագայթվեցան։

Դ

Ժամերով լռին էր։ Լռին էի։ Հիշատակի հեծեծանքներ մեր աչքերը
թրջեցին...
Եվ լամպարիս կապույտ լույսը, սեղանիս վրան, այլևս
արյուններու նման վար կթորար...
Տժգունեցա ես՝ ինչպես երազ մը որ առավոտին երևումեն
կանհետի...
Բայց ինք՝ հերոսատիպ և հպարտ, ձեռքս ձեռքին մեջ՝ ոտքի՝ ինծի
ըսավ...

Ե

— «Այս իրիկուն՝ հավատքի և հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր,
Երիվարս թամբած եմ արդեն՝ և կյանքի ու կռվի տենդեն՝ դուռիդ
առջևը կվրնջե...
Եվ տե՛ս հասակես վար անբիծ սուրս մերկ է, մերկությամբը
գերմարդկային վճիռներուն։
Ճակատդ շրթունքիս մոտեցո՛ւր... հավատքի և հրաժեշտի
իրիկունս է, ընկե՛ր։

Զ

«Եվ դուն սա՛ մաքրափայլ թերթերուդ վրան, ցեղին ցավը և ցեղին
ուժը բանաստեղծե,
Ապագա սերունդներուն և մեր անցյալին տխրությանն ի նվեր.
Ես որբ մըն եմ և ըմբոստ մը, մնա՛ս բարյավ, կորուսյալներս
փնտրելո՛ւ կերթամ...
Քու երգերեդ երգ մը տո՛ւր ինձ, երգ մը, ես երգելո՛վ կուզեմ
մեռնիլ...»։

18. ՍՈՒՐԻՍ ԿԱՅԾԵՐՈՒՆ ԱՌՋԵՎ

Անցյա՛լ, անցյա՛լ և իր օրերն և իր արևն անդորրության,
Երբ դահլիճին կապույտ պատերեն, տիրականորեն առկախ,
Քու պաշտպանի հպարտ նայվածքներովդ ադամանդե,
Իմ մանկական հոգիս հույսով կծորեիր, երկյուղներս հալածելեն։

Նախնիքներես մինչև ինձ քու շողյուններդ ահա՛ կերկարին,
Ո՛վ իշխանական, ահավոր, ճշմարիտ և բարեկամ Սուր,
Ու սնարիս, երազներուս և կյանքիս երջանկությանցը մեջեն
Միշտ մահավճիռը դատած եմ քեզ դարանակալ ոճիրին...

Եվ կսիրեմ զքեզ, դուն, Արդարություն և Բարբարոս,
Դո՛ւն որուն կայծկլտուքը սոսկում մըն է և խրախույս մը
միանգամայն,
Դո՛ւն, որուն ժանգը անքավելի պարտություն մը ամոթաբեր,
Դո՛ւն, որուն դաղտիրը ստրկացում մըն է զքեզ պաշտող
ձեռքերուն...։

Թեև քու ոսկեքանդակ պատյանդ արտացոլումն է կյանքիդ,
Բայց դուն մերկությանդ մեջ միայն կրնաս աստվածորեն
գեղեցկանալ...
Պատյանեդ դո՛ւրս միայն քու ծարավդ կհագենա և ցասումդ
կամոքի...
Անկեց դո՛ւրս միայն քու տիրոջդ ճակատը պիտի կրնայիր պսակել...

Եվ այսպես մերկ՝ ինչպես հիմա, իմ դողդոջուն և զայրացկոտ
ձեռքերուս մեջն հաճախ,
Քու լռության կայծերովդ երգերուն է՛ն հաղթականը կերգես,
Եվ շարժումեդ և շունչեդ և շողյունեդ ահավասի՛կ որ դուրս
կժայթքի,
Եվ կռվին քաջությունը, ազատության բուրմունքը և փառքը կտրիճ
մարդուն...

Բայց, խորհրդավոր սուսեր, զարհուրանքով կտեսնեմ որ այլևս
կատես զիս,
Այսօր մահվան և կյանքի օր, հարվածի և վրեժի և պատիժներու օր,
Եվ երբ քու կայծակնակերպ հասակդ շրթունքներուս կտանիմ կամ
ձեռքովս քեզ կշոյեմ...
Բարկությանդ կայծերը, աչքերուս մեջեն, նզովներուն է՛ն ահեղը
ինձ կուղղեն...։

Մեղա՛, մեղա՛ և ըսե՛, ի՞նչ գրերով է գրված իմ ճակատագիրս
քու ճշմարտությանդ վրան,

Արդյոք սարուկի՞ թե հաղթողի արյունս է որ քու վրադ պիտի
ցոլա...
Թե հայրենիքիս անիծապարտ թշնամիներուն սև արյունն է որ
պիտի վազե,
Քու բերանեդ դարվար, աղբյուրներո՜ւ նման և հորդահոսան...։
Մերկացի՜ր, մերկացի՜ր, մերկացի՜ր, օրերուն Օրն է, ո՜վ իմ սուրս
աղետավոր...։

19. ՀՈՒՅՍԻՆ ՀԱՄԱՐ

Ա

Գաղափարներու ո՞ր հովիտներեն պիտի գաս և ե՞րբ պիտի
լուսանաս, ո՜վ Հույս,
Ե՞րբ, որպեսզի ես ալ իմ երկու ձեռքերս, կարոտեն ու սպասումեն
դողդոջուն,
Արշալույսիդ ջրքումներուն երկարեմ, կյա՜նք պաղատողի մը պես,
երկարե՜մ...
Անոնց հոսանքին առջև, իմ ազատության առաջին նայվածքս
բանալու համար։

Բ

Եվ ի՜նչ ծովերեն խոր հուզում պիտի թափես մեր հոգիներուն
աշխարհներեն ներս,
Ի՜նչ կենդանիներ պիտի շնչվին մեր վշտակոծ ու գժգունած այտերեն,
Ո՜րչափ ժպիտ պիտի ծաղկի, հրեշտակորե՜ն, ո՜րչափ ժպիտ մեր
աչքերուն մեջ,
Ո՜րչափ հասուն պիտի մեռնի, ո՜րչափ արյուն և ո՜րչափ արցունք
պիտի ցամքին...։

Գ

Մոխիրներու հողը ծաղկաստան մը պիտի դառնա, դրախտային և
անթառամ,
Եվ բազմահազար աղբյուրները, իրենց հեծեծանքը՝ հովիտներուն
հետ՝ երգերու պիտի փոխեն,
Սև անձրևներուն տեղ՝ հայրենի աստղերեն, կապույտ եթերն է որ
վար պիտի թորա,
Եվ գառնուկներ պիտի ծնին առավոտին եզերքը և մարմանդներուն
վրա...։

Դ

Գեղուհիներու է՛ն գեղանին քու քղանցքիդ առջև իր խունկը և իր
ծաղիկը պիտի թափե,
Եվ կեղծիքին տաճարները պիտի քանդենք՝ քու Տաճարդ կերտելու
համար.
Ժպիտե այրի ցեղը վերջապես կանաչ պիտի հագնի, և դառնասիրտ
թշնամին՝ սև...
Եվ գերեզմանները, մեր քայլերուն տակ, կմախքի անտառներ՝,
դանդաղորեն պիտի շարժին։

Ե

Երազուն ճակատիս համար՝ ամառվան տերևանքեն պսակենք
պիտի հորինեմ,
Եվ ծիածանե վերարկու, հովերուն հետ, ուսերուս վրա, արծվի մը
պես պիտի ծփա...
Ու երենոսի սրինգս՝ շունչիս, կամ գեղաքանդակ քնարս՝ ձեռքս
առած,
Ոսկիե դաշխուրանիս, աստվածներու գինիեն, գինի՜, գինի՜, գինի՜
պիտի քմպեմ...։

Զ

Եվ հետո ես՝ ցնծությամբ և Հույսերու կարմիր Ջահերը,
հոսապաշտորեն պիտի վառեմ...

Եվ անտառներուն համանվագը, քու փառքիդ համար մրրիկներ
պիտի երգե,
Սուրերը, մեր ծունկերուն դիմաց կոտրտելեն՝ արյունոտ կամ
անբիծ, անցյալին պիտի նետենք,
Եվ Հայ զինվորին պղինձե շեփորը պիտի պատռի՝ հաղթանակի
Ռազմերգին որոտումեն...։

20. ԱՍՊԵՏԻՆ ԵՐԳԸ

Ա

Արևն ելավ, երիվար, և մեկնումի ժամն է այս,
Սպասե՛ որ ոտքս անցընեմ ասպանդակեդ շողարձակ,
Աչքերուդ մեջն իմաստուն՝ Նպատակս կկարդամ,
Օ՜հ, ինչ ցնծություն ցնծությունս, օրհնյա՛լ ըլլաս երիվար...

Բ

Երիտասարդ իրանս դեռ թեթև է և ճկուն,
Վարավանդիդ վրան ես՝ արծվի մը պես պիտի թռչիմ...
Եվ ոսկեգարին զոր ես քեզի առատորեն ջամբեցի,
Մարմնույդ մեջը հրավառեց կենդանություն մը խոլաթև։

Գ

Միշտ քառարշավ պիտի սուրաս, ո՜վ երիվար,
Եվ պղնձե պայտերեդ կայծեր են որ պիտի ծաղկին,
Ու մեր վաղը թո՛ղ զմեզ հերոսներու պես արբեցնե,
Ու հով խմենք, հովուն նման անհունորեն թևավոր։

Դ

Անջրպետն անծայրածիր թռիչքիդ առջև կմեռնի,
Ու քաղաքներն մեղավոր քայլերուդ տակը կխոնարհին,

Ագռավներու սև երամներ քու հոսանքիդ դողահար,
Ամպերուն մեջ, ամպերուն մեջը կապաստանվին։

Ե

Կարծես վարն է տրտում հողը ու մենք վերն ենք աստղերուն հետ,
Դուն ո՜չ անդունդ կճանչնաս ո՜չ առապար,
Արգելք չի կա, խութ չի կա քու արշավդ կասեցնող,
Եվ անհամբեր՝ նպատակին կատարներուն կուզես կառչիլ։

Զ

Երիվարս արագասույր, ո՜վ իմ կուռքս մարմարեղեն,
Գիտես որ ես զքեզ հոգևո՜ն է որ կպաշտեմ,
Գաղափարիս բոցերեն երազկոտ ճակատս կայրի՜...
Նպատակիս նետե՛ զիս, ես քայլերուդ գերի՜ն եմ։

Է

Ես քայլերուդ գերի՜ն եմ, ո՜վ դուն որդիդ մրրիկներու,
Արագաթռիչ երիվար, քինախնդիր՝ պետք է սուրա՛ս,
Ես ապարդյուն դադարը ցասումներովս կատեմ,
Կատարները մեզի են և հաղթանակը քուկդ է...։

Ը

Քու կաթնաթույր մարմինդ կյանքիդ կրակեն կեռա,
Եվ քու ագիդ ջրվեժ մըն է, գավակեդ վար մրրկահոս,
Աչքերուդ մեջն երկու, բռնկած աստղեր կշողան,
Ու պայտերուդ դռույթը զարհուրանք է որ կկռանե։

Թ

Քեզի ըսի որ ես քու ազատածարավ գերին եմ,
Սա սահմանեն դեպի հարավ երազաբար հասցո՜ւր զիս,
Արարատին փառքերեն, Արագածեն ալ՝ անդին,
Մենք արևներ պիտի հագնինք և արյունն՝ը, սուրա՛ դուն։

Ժ

Մտրակ չունիմ ձեռքերուս մեջն, ազատ ես դուն,
Ես միմիայն լանջքիդ վրան շուշանափայլ,
Մատվրներուս քաղցրությունն է որ կթափեմ,
Մեղրերու պես՝ մխիթար վրան հորդահոս։

ԺԱ

Ո՛չ սանձ ունիս, ո՛չ երասան երախիդ,
Առատ բաշիդ ալի՛ք մը վարս ձեռքերուս մեջը կբավե,
Ոտվրներս զքեզ գրկող ասպանդակի պետք չունին,
Միայն թամբդ է քու վրադ, արծաթ թամբդ մարգարտահեռ։

ԺԲ

Ես հայրենի հովիտներուն կարո՞տն ունիմ, կարո՞տն ունիմ,
Բայց աստղածոր երկնքին տակ կանգ մի՛ առներ, երիվար,
Քարայրներուն առջևն ստվերի մը պես, պե՛տք է անցնիս
Անտառներեն, հնձաններեն, այգիներեն ալ անդին։

ԳԺ

Եվ ո՞վ գիտե, թերևս, գեղուհի մը, պուրակի մը եզերքեն,
Ոսկի ողկույզ մը և սափորով՝ ումպ մը գինի մատուցանե,
Թերևս հոգիս հասկնա և քրոջ մը պես ինծի ժպտի... .
Բայց չե՛մ ուզեր ես երազել, կանգ մի՛ առներ, երիվար։

ԺԴ

Ծննդավայրիս դրախտային ծմակներեն պիտի անցնիս,
Բլբուլին խո՛սքը, բլբուլին խո՛սքը կուզեի խմել...
Վարդին բուրմունքը տարինե՛ր պանդխտորեն երազեցի...
Կարո՞տ ունիմ, կարո՞տ, բայց մի՛ կենար, կանգ մի՛ առներ։

ԺԵ

Ճամփուս վրա թերևս հին մեռելներ ոտքի ելլեն,
Իրենց պատանքը ուսերուն և ձեռքերնին ինձ երկարվող,

Ու մոտենան տառապյալիս՝ ականջես վար փսփսալու,
Իրենց սերերն ու վրեժնին անմոռաց, բայց մի՛ կենար, երիվար։

ԺԶ

Ես կսոսկամ ավերակներեն և անկարող ցավերեն,
Կանգ մի՛ առներ քաղաքներու մոխիրին քով,
Օ՜, արցունքը, ուրիշին արցունքը դիս անգթորեն կխեղդե,
Ուրիշին ցավը, ուրիշին կոծը դիս խենթության կտանի։

ԺԷ

Օ՜, կանգ մի՛ առներ, դիակներուն դեմ այս ցիրուցան,
Հեռու փախի՛ր գերեզմաններեն և սպիտակ շիրիմներեն,
Որովհետև ինծի համար, կարելի չէ, քեզի կըսեմ, երիվար,
Հայրենիքիս մահացումը, մահվանը միջ անգամ մըն ալ սևեռել։

ԺԸ

Ահավասի՛կ բնությունը ուր ես օր մը ծնեցա,
Թարթիչներս կթրջվին արտասուքի կաթիլներով,
Բայց չե՛մ ուզեր զանոնք թափել, կանգ մի՛ առներ,
Սրաթռիչ երիվար, նպատակս տկարություն չի ճանչնար։

ԺԹ

Ահավասի՛կ Եփրատին ձայնը։ Ինչ կորոտաս, ո՞վ Եփրատ,
Քու ձավակդ է քովեդ անցնողը, ինչո՞ւ ջրերդ մթին են,
Քու որդիդ եմ, մոռցա՞ր զիս, մի՛ մրրկիր, մոռցա՞ր զիս,
Ես քեզի հետ կուզեմ սուրալ, ալիքնե՛րդ կոտորե՛...

Ի

Օ՜, մանկությանս հիշատակն է, որ կարյունիմ եռ հիմա,
Պարմանի՛ մը երազկոտ ափերուդ վրա թափառուն,
Հույսով զեղուն, արևով խենթ, և անուրջով երջանիկ,
Բայց ի՛նչ կըսեմ... կանգ մի՛ առներ, լուսաթռիչ երիվար։

ԻԱ

Տե՛ս շքեղ աշունը, որ շուրջերնիս տարտամորեն կմեռնի,
Ահավասի՛կ դեղին տերև մը ճակտիս վրան թեկուզ վար,

Խորհրդանի՞շն է մահվանս թե պսակումը հավատքիս,
Բայց ի՞նչ փույթ մեզ, դուն վրնջե՛ Եփրատին հետ սուրալեն։

ԻԲ

Թերևս վերջին տերևն էր ժանտատեսիլ ճակատագրին,
Որ մեր վրան ինկավ վար, բայց ի՞նչ փույթ մեզ՝ կանգ մի՛ առներ,
Հոգին բոլոր ծագերեն այս խոսքն է որ կկրկնեն...
«Կանգ մի՛ առներ, կանգ մի՛ առներ ազատարշավ Գաղափար»։

ԻԳ

Ա՜հ կպաշտե՞մ ես զքեզ, ահավասի՛կ որ աստեղորե՞ն կթռչիս,
Կայծակին չափ արագ ես և անոր չափ ալ ազատ,
Հովին մեջեն հովին հետ, արծիվներ ենք ճախրի մեջ,
Ես ասպետդ եմ և գերիդ, նպատակիս բարձրացո՛ւր զիս։

ԻԴ

Ապառաժին կատարներեն ամեհորեն ամպամած,
Տե՛ս ջրվեժները, ջրվեժները վար կնետվին,
Մարմինիդ պես անգայտ է անոնց հորձանքն սպիտակ,
Եվ վազքիդ պես բարբարոս իրենց էջքը տիրական։

ԻԵ

Բայց ինչո՞ւ քու մարմինդ, մարմնույս տակը սարսռաց.
Ի՞նչ կա, ըսե՛, ո՞վ դյուցազուն, ինչո՞ւ համար մռայլեցար,
Ա՜հ, աչվրներդ ինձմե դարձո՛ւր, հուզյալ աչքերդ հեռացո՛ւր,
Հորիզոններ միայն կտրե՛, կպաղատի՞մ, երիվար...

ԻԶ

Աղերսանքներն ես իմացա, լաց ու կոծեր ու ողբեր,
Խրճիթներե, փլատակե, քաղաքներե մեզ հասնող,
Բայց ի՞նչ օգուտ ցավին առջև անզորորեն կանգ առնել,
Միայն պետք է փրկել զանի, կանգ մի՛ առներ, երիվար։

ԻԷ

Հոգեվարքին մեջեն անցանք, աչվրներնիս անարցունք,
Սրտազինվե՛, երիվար, կանգ մի՛ առներ, մի՛ առներ,
Այսուհետև ես հույսին ջահերն է որ պիտի վառեմ,
Դագաղը մա՛հ է մեզ համար, կանգ մի՛ առներ, երիվար...

ԻԸ

Ես լսեցի քառասմբակ շքեղ մարմնիդ կատարեն,
Որ կայծարձակ պայտերդ, մեր վազքին մեջն մինչև այսօր,
Քանի՞ անգամ, քանի՞ անգամ ոսկորներ էր որ փշրեցին,
Եվ բաց կոպերը գանգերուն, ինձ նայեցան, տեսա՞ր դուն...

ԻԹ

Ես լսեցի քեզի կըսեմ, երկաթներեդ՝ ճարճատյունը կմախքներու,
Բայց լռեցի։ Ես անխոս եմ։ Կանգ մի՛ առներ, երիվար,
Հոգիին մեջ հեծեծանքս ես կթաղեմ անդնդախոր,
Թո՛ղ զայրույթս միայն ապրի՛, կանգ մի՛ առներ, երիվար։

Լ

Մի՛ վարանի՛ր, ո՞վ սպիտակ բարբարոս մարմարյա,
Կյանքին ցավը արցունքով չէ՛ որ կանհետի,
Իդեալը պիտի հնչե՛, պիտի հնչե իդեալը իր զանգերն ցասումի,
Կոտնկները մեզ պիտի կանչեն, անոնց երգին հետևի՛ր...

ԼԱ

Բայց ո՞ւր է ճամփադ, ի՞նչ է այս, ցնորեցա՞ր ո՞վ նժույգ,
Ա՜հ, մոխիրներ են, մոխրադաշտե՞ր, ավերակնե՞ր են ասոնք,
Մշուշին պես գորշ փոշին մեր շունչերը կսպառե,
Ճեղքե՛, անցիր, զարհուրանքի այս լեռներն, ճեղքե՛ անցիր,
երիվար։

ԼԲ

Օ՜, վե՜ր առ ճակատդ, վեր աչքերդ որ ձեռքովս փակե՜մ զանոնք,
Կանգ մի՛ առներ, Կարմի՜րն է, Կարմիրն է, Կարմիրն ահեղ
արյունին։
Ես իմ գլխիս ծածանող վարշամակս վա՜ր քաշեցի...
Կանգ մի՛ առներ, ի՞նչ օգուտ կար մեր անօգուտ հառաչեն։

ԼԳ

Իմ քնարս ցավերուս հետ ժամանակով արյո՜ւն լացավ,
Այսուհետև լացը կատե՜մ, դուն ես միայն իմ Ոգին,
Փառապանծ ես և մարտաշունչ, ես իշխանդ եմ և գերիդ,
Քու ձևերդ էր որ պաշտվեցավ Ելլադայի փառքերեն...

ԼԴ

Հովին ձայնը շեփոր մըն է որ կհնչե հեռուներեն,
Անտառները ոտքի ելան պատերազմի վաշտերու պես,
Դուլթիդ ոտակ կատաղի հին հույսերն իրը հսկաներ կզարթնուն...
Հին օրենքը կփշրի՛, հին արցունքը կթափի՛, հին ձայները
կմեռնին...

ԼԵ

Լուսածագին՝ վազքիդ մեջ, լեռնադաշտի մը վրա,
Նո՜ր ըմբոստներ պիտի տեսնենք, նո՜ր հսկաներ, նոր հերոսներ
Որդիները տառապանքին, որ թշնամության այս դարուն հետ,
Արյունին մեջ են ծնած, և անոր մեջ զայրացած և արյունո՜վ
կուզեն մեռնիլ։

ԼԶ

Եվ երբ տեսնենք ծովացումը մրրկազեն վաշտերուն,
Անոնց հետ էր որ պիտի քալենք Նպատակին ճանապարհին...
Եվ ես փա՜ռքը պիտի երգեմ և պսակումը մարտիկներուն,
Զի բամբիռս պիտի հնչե և ջահերս ալ պիտի վառին։

ԼԷ

Օ՜, արշալույսը ծաղկեցա՜վ, ես ասպետդ եմ և գերիդ,
Ջառիվերը դժվարին է բայց հագագդ հողմաշունչ,
Պետք է թռչիլ, ճիգ մըն ալ, հուրերուն հետ առավոտին,
Կանգ մի՛ առներ, ես ծարա՜վ եմ ինչպես և դուն հաղթության։

ԼԸ

Տրոփյուն մ՚ա՛լ, վերջին ցայտ մ՚ալ, գերի՜դ եմ ես,
Տես ի՜նչ թիվ է, ի՜նչ թափոր, ի՜նչ երջանիկ զորություն,
Ազատության առվիրանները, ցուրերովնին կենսաշոգ,
Առավոտին լույսերուն մեջ Եղբայրությունը կոռնեն...

ԼԹ

Կա՜նգ ա՜ռ այստեղ... և օրհնյա՜լ ըլլաս, ասոլվածավայել երիվար,
Իդեալին ի տես մտածումս և հոգիս արցունքներով ծանրացան...
Հաղթանակը մեծ Օրենքն է անկշռելի գեղեցկության,
Ահավասի՛կ՝ հո՜ն, վեց դարերն՝ մռայլորեն հրազինված։

Խ

Պիտի զքեզ ասպազինեմ։ Ես զինվեցա։ Ջահս ուսիս՝ կվառի,
Փոթորկի պես քալել կուզեմ։ Արդարությամբ բեռնավոր՝
Արշալույսին հուրերուն տակ՝ Հողը մե՜րկ է և ծարա՜վ,
Եվ մեր վազքեն հսկա Հույսն է որ իր կայծերը պիտի ցանե...։

1897—1907

21. ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ԵՐԱԶ

Կարևան ու կոտորումներու իրիկուն,
Հոգիս վրեժի շատրվան մըն է նորեն կատաղորեն դեպի վեր,
Ու տերևներ հուսահատ հոգիներու նման՝
Ավազաններուն պայծառությանը մեջ ու մեր բոլորին վրա կի՛նան,
Անդունդներու մեջեն սրածումներու ձայն,
Ու դեպի հոն օգնության աճապարող,

Արդեն մեռնող ճիշեր, արդեն մեռնող կյանքեր։
Ու նորեն այս դիշեր,
Տաճարներուն մեջ անմեղներու դիակներ անհամար.
Ու տանիքիս վրա տեղատարափ մը երկաթյա,
Հրդեհներու մրրիկ մը գանգիս տակ,
Ու տեղափոխվող ջուրերուն վրան
Խաչված նահատակներ կերևան...
Ու անձրևի ու պատուհասի իրիկունով՝
Վերահաս խողխողումներու արհավիրք մը քաղաքն քաղաք...
Ու հոգիիս մեջ դժոխային երկյուղ մը կմրրկի...
Պարապ դագաղ մը իմ խե՜ղճ ձեռվընիներուս հպումին տակ,
Ու մարմարյա անսահման սանդուխներու կատարներեն...
Օ՜, օգնության եկե՜ք, գլխատված մարմիններ դեպի զիս
կարշավեն...
Բայց, ո՜վ դուք երեկոներու և չարչարանքի եղբայրական հոգիներ,
Փոթորիկին և բարբարոսներու խուժումեն առաջ, այս գիշեր,
Համառորեն ու արիաբար դուք ձեր ճամփան վճռեցի՜ք...։

1903

22. ՀՈԳԵՎԱՐՔԻ ԻՐԻԿՈՒՆ

Սոսկումներու անտառին բոլոր ծառերն անհունորեն,
Ջիրենք հալածող ահավոր ցամաքահովեն,
Իրարու մեջեն դեպի ջուրերն եղերական
Խելահեղորեն քալել կսկսին...։
Ու բոլոր տրտմած անասունները հեռավոր ճամփաներուն,
Անշարժ իրարու ետևե,
Ջյունին մեջեն, լուսնին դիմաց ոռնալ սկսան...։
Ինծի այնպես կուգա որ՝ սովալլուկ բորենիներ,
Գերեզմաննոցին անկյունը,
Աճապարանքով,
Հողեն հանված մեր մեռելները բզկտեցին...
Ու ալիքները մինչև աշտարակը բարձրացան...
Այրի աղավնիները մոլեգնաբար ահաբեկելով.
Ու կամուրջներուն տակի բոլոր թափառիկները,

Հովերուն մեջեն, հուսահատորեն,
Թիարանին դռներն ապաստանեցան։
Ո՞վ գիտե, հովերը ե՞րբ, ե՞րբ պիտի դադրին,
Ու մինչև ե՞րբ աղաղակները պիտի շարունակվին
Լքված անասուններուն,
Հեռավոր ճամփաներեն անդին։
Փլած կամուրջի մը հարսնևորները կանցնին...
Ու փայտե սրունքներով կույրեր կաճապարեն
Ջրանցքին քարափներեն, տաժանորեն դեպի վար,
Վերջապես հասնելու համար
Սահանքներուն բերանը,
Ուրկե՝ խեղդվողներուն ձայները բոլոր մեկեն
«Օգնությո՜ւն, օգնությո՜ւն» կ՚աղաղակեն...
Ու կարծեմ թե բոլոր կրոնավորները վանքերուն
Այս իրիկուն,
Երկարորեն աղոթելե ա՛լ հուսահատ
Բոլորը մեկ՝ մոլախինդե գինով՝ կվախճանին։
Ու դարմանատան բոլոր անբուժները,
Մութ երկնքին վրա անօգուտորեն ու երջանկորեն
Գիշերներով իրենց հույսին աստղերը փնտրեցին...։
Ո՞վ գիտե, հովերը ե՞րբ, ե՞րբ պիտի դադրին,
Ու մինչև ե՞րբ նայվածքները պիտի շարունակվին
Լքված հիվանդներուն,
Ժամանակներե ի վեր արդեն մեռած աստղերեն անդին։
Ու այս բոլորին, այս ամենուն
Հոգեվարքներն ամբողջովին,
Ու ցավերը տրտմած անասուններուն,
Դանդաղորեն, իմ ներսիդիս կսուզվին...։

23. ԱՂՈԹՔ

Կարապները թունավորված լիճերեն, այս իրիկուն հուսահատորեն
գաղթեցին,
Ու տրտում քույրեր, թիարանին պատերուն տակ, եղբայրներ
կ՚երազեն...

Շուշանով ծաղկած դաշտերուն վրա պատերազմները վերջացան,
Ու գետնափորերու մեջեն գեղեցկուհիներ դագաղներու կհետևին,
Եվ իրենց դեմքերը հողին ծռած՝ երգեցին...

«Օ՜ աճապարեցեք, մեր ցավագին միսերը սառեցան այս անիրավ
խավարներեն...
Աճապարեցեք դեպի մատուռն, ուր կյանքն ավելի գթած պիտի
ըլլա.
Գերեզմաննոցին մատուռն, ուր մեր եղբայրը կքնանա...»։

Հոգիիս մեջ այրի կարապ մը կտանջվի,
Ու հոն նոր թաղված մեռելներուն վրա
Աչվրներես վար՝ արյուն անձրև մը կտեղա...
Անդամալույծներու բազմությունները կանցնին սրտիս
ճամփաներեն,

Ու բոբիկ ոտքերով կույրեր անոնց հետ՝
Աղոթողի մը պատահելու աստվածային հույսով...
Եվ անապատներու կարմիր շուներն ամբողջ գիշեր մը լացին,
Հուսահատորեն ավազներուն վրա ողբալե հետո,
Անծանոթ ցավի մը համար՝ որ չի հասկցվիր...
Ու մտածումիս փոթորիկը անձրևին հետ դադրեցավ.
Սառած ջուրերուն տակ ալիքներն անգթորեն բանտարկվեցան.
Հսկայական կաղնիներուն տերևները, վիրավորված թռչուններու
նման,

Հոգեվարքի ճիչերով վար ինկան.
Եվ խավարչտին գիշերն անհունորեն ամայացավ,
Ու մենավոր ու արյունոտ լուսընկային հետ,
Մարմարյա անշարժ ու բյուրավոր արձաններու պես՝
Մեր հողին բոլոր մեռելներն իրարու համար աղոթքի ելան...

1903

24. ՀԱՆԳԻՍՏԻ ԻՐԻԿՈՒՆ

Բոլոր խարտյաշ իշխանուհիները պորփյուրե պալատներուն,
Տոնի երկայն վերարկուներով,
Ապրիլի կեսօրի մը մեջեն,

Իրենց արծաթե կողովները ծաղիկով լեցուն,
Այցի գացին գյուղի անձկոտ աղքատներուն։
Գիշեր մը ամբողջ անհունորեն,
Հիվանդներու քով հսկեցի.
Ու անտառին մեջ թափառող բոլոր կույրերն,
Երկյուղածաբար, այս իրիկուն,
Մարմարե բագինն առաջնորդեցի։
Թիապարտները ամայի պարտեզին մեջ կպտտին,
Իրենց շղթաները լուռին տակ հնչեցնելով,
Ու քաղցրորեն, սահող գետերու կխորհին,
Ջհնձված կանաչ դաշտերու,
Ու մայրերու, որ իրենց ծաղիկներ ու լամպար մը կպատրաստեն...։
Հեռավոր ջուրի մը եղերքը քանի մը դագաղ գամեցին,
Հավիտենական ոսկի մուրճերովը խենթության։
Ու կարծեմ թե բոլոր գթության քույրերն
Ճերմակ կտավներ կկարեն,
Անձրևի իրիկուն մը,
Վրանի մը տակ, ուր վիրավորներ նայվածք նայվածքի կքնանան...։
Մառախուղին մեջեն գառնուկներու խումբ մը անցավ,
Որ հիմա, տխուր, դեպի սպանդանոց կաքսորվի,
Անդամահատվող անմեղ, պայծառ տղաքներու ճիչերով...
Ու բարեկամներս թունավոր ծաղիկներ քաղեցին,
Իմ հեռավոր գերեզմանս զարդարելու համար։
Ու փոթորկի գիշեր մը թշնամիի մը ձեռքը եղբայրաբար սեղմեցի,
Հյուծախտավոր աղջիկ մը համբուրելե առաջ։
Օ՜, քայց ես լամպարս հիմա պիտի մարեմ,
Ու բոլոր փեղկերը պատուհաններուն՝
Ամենը մեկ պիտի փակեմ շտապով,
Ագռավներու բոլոր քրքիջներուն դիմաց՝
Որ խավարին մեջեն, ա՜ֆնչափ մահագուժորեն,
Այս իրիկուն դեպի հոգիս կթևեն...։
Ու վաղը քեզի հետ արյունոտ գետը նավարկե՛նք,
Արշալույսեն առաջ, արյունոտ գետը նավարկե՛նք,
Հասնելու համար, ո՞ւր, չեմ գիտեր, թերևս հոն,
Ուր դուն ալ, ու ես ալ, ու ամենքս ալ Հանգիստը պիտի գտնենք։

25. ԳԻՇԵՐ ՄԸ

Ավերումի գիշեր....
Հեռուներեն մահազանգակի ցնորաբեր ձա՜յն։
Սպանդանոցի խորունկ վախ մը դռներուն ետև,
Ու գետնափորներու մեջ մոխրի վրա աղոթող այրի կիներ
ծնրադիր...
Դուրսը թիարանի պատրական լռություն մը կհավերժանա.
Ու քարանձավներեն ստվերներ վար կթավալին՝
Գինով ոճրագործի այսահար ամբոխներու նման...
Բոլոր պատուհաններուն լույսերն ավրված աչքերու տանջանքն
ունին...
Ու կարծես բոլոր աստղերն ալ խավարին մեջ կխեղդվին։
Օ՜, պետք է գթալ այն մենավոր հոգիներուն որ կվախնան՝
Ջուրի մը խորը տեսնված ծաղիկներու կերպարանքներով,
Ու մանավանդ անոնց, որոնք այլուր ըլլալ կուզեն,
Հիվանդ անդամալույծներու այլաբաղձություններով թրթռուն։
Բոլոր ամուրիները հողեն հանված մարմիններու սարսափն ունին,
Ու բոլոր նորածինները հեռավոր մայրեր կերազեն...
Օ՜, այդ բոլոր որբ հոգիներն որ իրարու մեջ կնային
Քնաշրջիկներու խոլական ու հայցող նայվածքներով,
Անկարող իրարու մեջ ապաստան մը գտնելու...
Ու այնքան նման այն մահամերձներուն,
Որ մեկմեկու նայվածքի տակ իրենք իրենց մահը կտեսնեն...։
Ավերումի ցնորաբեր գիշե՜ր...։
Ու տարօրինակ երազ մը գյուղացիներն հաճախեց.
Ուխտավորներու երկայն վերարկուներով,
Գետին ափերեն, դաժանորեն մեռելական,
Ոտքերնին բոբիկ,
Ու իրենց ձեռքերն արծաթե խնկամաններ բռնած՝
Շա՜տ բարեպաշտորեն,
Դեպի փրկարար Ուխտը ճամփա կելլեն։
Հավիտենական վախեն զգայախաբ,
Ամբողջ գյուղն երազի մեջեն, խաչակնքելով կփախչի,
Կույր ոչխարներու ճերմակ հոտերուն նման
Որ փոթորկի գիշեր մը, աճապարանքով ջուրե մը պիտի անցնին...

Ավերումի ու արյունի գիշե՜ր...
Օ՜, նայեցեք,
Եփրատին զահանդական եզերքներեն
Բորենիի աչվրներով մարդակերներուն շտապը՝
Երազին վրայեն, ձորերն ի վեր,
Անհունորեն, դեպի գյուղ...
Օ՜, այն ընդհարումներն ոսկորի ու սուրերու,
Որ իրենց գիշատողի շարժումներեն
Խուլորեն կարձագանքվին
Լեռներուն տակն ահարկու։
Ու իրենց նայվածքներն մանավանդ,
Ու ակռաներնուն խշրտուքը սղոցվող մարմարի,
Ու մրրկումը զանգվածեղ խուժանին,
Որ տեղափոխվող անտառներու ցնորքն ունի...
Ու բոլորը մեկ Արյունը կերգեն...
Ու բառերը իրենց հովազի բերաններեն մթին,
Հանկարծորեն կտրված վերքերու նման,
Քարերուն վրա ծանրորեն կիյնան...։

Ավերումի ու արյունի գիշե՜ր...
Օ՜, բոլորդ մեկտեղ անմիջապես աղոթքի կեցեք,
Ո՜վ դատապարտվածներու ցավագին եղբայրներ.
Ինծի այնպես կուգա որ ամբողջ գյուղը սարսափահար արթնացավ...
Ու հիմա բոլոր մարմիններն իրարու կփաթթվին,
Բոլոր նայվածքները իրար կպաղատի՜ն...
Ու բոլոր բազուկներն խելահեղորեն պարապը կերկննան...։
Ու ամենը մեկ, մահագուժորեն «Աստվա՜ծ, Աստվա՜ծ, Աստվա՜ծ»
Կաղաղակեն...

Ավերումի անդառնալի գիշե՜ր...
Ագռավներու հանդիսավոր խենթություն մը գյուղին վրա...
Ու արծիվներու ճերմակ ուրվականներ անոնց հետ։
Բոլոր թաղերն ածխահանքերու երևույթն ունին,
Ու օդին մեջ արյունի ու մոխիրի նախճիր մը կհնա...
Դիակնե՜ր, դիակնե՜ր, ու մարմիններե բաժանված գլուխներ,
Դևերու ամեհի ու անձայն նայվածքներով,
Ահեղորեն, սև պատերու երկայնքն ի վեր կաշտարակվին...

Օ՜, լսե՛ք, հոգեվարքներուն հեծկլտանքը այս բոլորին մեջեն...
Կարապներու սպիտակ կոտորածի մը անչափ նման,
Ու կիսամեռներուն մտածումը որ իրար կճանչնան...
Ու անոնք, որ իրար փրկել պիտի ուզեին,
Կույսերու նման որ ձյունի օր մը, վանքերու մեջ կգլխատվին...։
Կարծես խավարներուն հավերժության մեջերեն
Հեռավոր դահիճներ արյունի սահանքը բացեր են,
Աշուններու բոլոր դժգույն հոգիներուն վրա,
Ու այգիներուն բոլոր պայծառ ավազաններուն մեջ,
Ուր հիմա անգամի մը համար,
Արյունին ոգեկոչող հավաքումին տակ,
Տիրական Մահը, Մտածումները ու բոլոր չբացատրված Սերերը
Նայվածք նայվածքի պիտի գան...
Գերեզմաննոցներուն վրա, արշալույսին մեջեն,
Հինավուրց ուրվականներն այսպես երգեցին.

«Խաղաղությո՜ւն անոնց որ գերեզման չունեցան,
Ու խաղաղությո՜ւն անոնց ալ որ հոգեվարքն կտանջվին...»։

1899 Փարիզ

26. ՀՈԳԻՍ

Ահավասի՛կ հոգիիս ջահերը որ վայրկյան առ վայրկյան,
Մտածումս կարեգաթեն՝ զանիկա խավարին մեջ սուզելի հետո...
Հոգիս ա՜ն է որ բյուրավոր անգամ ձեր ամենուն ցավն ապրեցավ,
Ա՜ն է որ անդունդի մը մեջ՝ իր մոխրին վրա ծնրադիր՝
Հարազատ ու շղթայակապ քույրերու աքսորը կուլա...
Հոգիս այն վա՛յրն է, ուրկե արյունոտուշ լուսին մը բարձրացավ
Անմեղներու կոտորածեն ծովացյալ դաշտի մը վրա...
Ու ա՜յն հողմակոծ անտառն է, որուն ավազաններուն շուրջ՝
Ս՜, եղբայրական արյունի հեղեղներ կհոսին...
Հոգիս այն երկիրն է, ուր որբ և սևահեր տղաներու բազմություններ,
Անարդար սուրերու շողյուններեն հալածական,
Ազեխարշ ճիչերով փլատակներու մեջեն կփախչին...

Հոգիս այն երկինքն է, ուրկե հույսին բոլոր աստղերը թափեցան,
Ու այն մարմարակերտ տաճարն, ուր կյանքը ծունկի եկած՝
Խելահեղորեն Ամենագութ մահը կպաղատի...
Հոգիս Ավետարան մըն է, որուն վրա դժգույն ու հուսահատ ձեռքեր
Անկարելի քավության մը համար, ապարդյունորեն, դեղին թերթեր
կթղթատեն...

Հոգիիս մեջ երբեմն արշալույսներ կարյունին,
Եվ պաղատողաղաղակներու անասելի համանվագ մը կորոտա.
Հոն սրածումներու աշխարհը մը կա, ուր սարսափահար կյանքեր,
Ձեր շարժումին, ձեր օգնության, ձեր ձայնին կսպասեն...
Հոգիիս մեջ հերոսներու ծնունդ մը կա և մեռելներու թափոր մը
միանգամայն...

Հոգիս այսօր անձրև մըն է մորթազերծված դիակներու վրա,
Ու նայվածք մըն է, որ բոլոր անտիրական դագաղները կթափանցե,
Հոգիս բարկության ու ցասումի հով մըն է այս գիշեր,
Որուն վազքին տակ արյունարբու ռազմագունդերը պիտի
նահանջեն...

Ու բոլոր գերեզմաննոցները, իրենց խորերեն, ահագնաբար,
Ձեր նայվածքներուն առջև՝ դեպի վե՛ր պիտի շրջին...
Որպեսզի վերջապես ճանչնաք, ո՜վ անկարեկիր ներկաներ,
Այն բոլոր մարտիրոսները որ ձեր բոլորին համար,
Անձնվիրության և կամքի առավոտ մը ինկան...
Հոգիս մահատեսիլ աշուն մըն է որ այս ամենուն վրա
Իր մշուշը և իր տերևներուն հոգեվարքը կարսկե.
Բայց հոգիս և Կարմիր Հուսահատ մըն է որ անընկճելի Հույսին
համար՝
Առաքյալի մը պես դեպի արգասաբեր Մահը պիտի թևե...։

1904 Փարիզ

27. ՄԱՀԵՐԳ

Լսե՛ք, դեպի ո՞ր Մահը դաժանորեն եղերական,
Մեր հոգիները՝ հողին փառքեն վիրավոր՝
Ու անոր ցնորքի ճամփաներեն դժգունած,

Ո՞ր հեռավոր հորիզոններեն սգավոր՝
Տրտմորեն պիտի երթան։

Եբենոսե ու երկաթե մարմիններով,
Գիշերվան թռչունները բոլորը մեկեն,
Անծանոթ ծովերու դարավոր՝
Մարմարե ու գրանիտե ափերեն,
Չեմ գիտեր ե՛րբ, քարայրի մը մեջ գետնափոր,
Մութեն արյունած իրենց Ցավը մեռելական,
Գիշեր մը, փոթորիկներու ամեհի գիշեր,
Վայրագորեն մահերգելու եկան.
Օ՜, բոլոր այն ոսկորի ու բացված թևերու
Ընդհարումները կմախական,
Որ իրենց գիշատողի զահանդող մարմիններեն,
Ծանրորեն կարձագանքվեին,
Քարերուն տակ ահարկու.
Ու արյունը որ կհոսեր հրաշեկ,
Դեպի հանդարտ հոգեվարքներն անհուն,
Աչվրներուս ահաբեկ։
Ու իրենց մահերգը շտապվող, այսահար,
Ու իրենց նայվածքները ոճիրով լեցուն,
Ու հազերնին արյունոտ ու անհատակ,
Ու իրենց բերանները թունավորված գինովի,
Ու ակռաներուն ձայնը փշրվող մարմարի,
Ու թևերնուն թափը՝ քարայրին մեջ մթին,
Փոթորիկ մը անվայրափակ...
Այս բոլորը մարմնույս վրան,
Խավարին մեջ, անձավին տակ՝
Անվերջորեն սրսկեցին։
Ու իրենց լացե՛րը դիվային ու գինով,
Ուրկե գետինը ինկած հոգիս իր վախեն,
Աչքերը վեր՝ ինծի համար,
Իր վիրավոր աչքերը դեպի վեր՝
Կույսի մը պես դողահար,
Հողին վրա ծունկի եկած կաղոթեր...։
Ու ես, անմխիթար,
Հեռավոր հոգիներու պայծառ լացն իմ վրաս,

Ուրիշ անծանոթ հորիզոններե,
Դիշերներով իմացա։
Ու մահագույժ զանգակներու,
Ոսկեհնչուն հսկա քայլերը ցնորաբեր՝
Ոգեկոչող ու դիվական,
Ու քարայրին պարապը՝ քալող ուրվական՝
Մարմնույս վրա ահագնապես փոթորկեցան.
Թերևս դագաղի մը հիշատակին՝
Որուն վրա արծաթ մուրճերը չի հնչեցին,
Վերջապես գամելու համար
Վրդովված անմեղությունը մոռացումին։
Ու ալ չեմ գիտեր ո՞ւր տարին,
Անբիծ մարմինս անիրավորեն լքված,
Հողին բոլոր ապարդյուն փառքերեն վիրավոր,
Ու իր արյունի բոլոր ճամփաներեն դժգունած...
Հետո հոգիս թռչուններուն հետ գիշակեր,
Խելահեղորեն գերեզմանե գերեզման,
Ամեն գիշեր,
Մութեն արյունած իրենց Ցավովը հպարտ,
Խենթության մահերգներն աքսորեցին
Հորիզոնե հորիզոն,
Ձեր արևներեն ու հողեն հուսահատ,
Հոգիներուն կյանքին։

Գիտե՞ք, դեպի ո՞ր Մահը դաժանորեն եղերական՝
Երբ ձեր հոգիները հողին փառքեն ալ վիրավոր,
Ու իր երկար օրերեն հոգնած՝
Ո՞ր հեռավոր միջոցներեն սգավոր,
Դժգունորեն պիտի երթան։

28. ՈՐԲԵՐԸ

Ու դարձյալ հոգիս քառուղիներեն կանցնին,
Մահապարտներու պաղատող նայվածքներով,
Ապաշխարանքի կերոններ ձեռվրնին,

Ու պաշտամունքի բուրվառներ դանդաղորեն խնկարկելով։
Օ՜, իրենց կարավանը դժգույն միստիկ ուխտավորի,
Որ ա՜յնչափ երկյուղած ու մահագույժ ու խոհուն
Դեպի նվիրումը աստվածային Ցավին, անհունորեն կերկարի,
Այս գիշեր, հսկումեն հետո, Մեռելոցի իրիկուն։
Օ՜, անոնք հոն բոլորն ալ իրենց մահերը պիտի ճանչնան,
Հոգիիս անդնդային մեռելաստանին վրա,
Անսահմանորեն իրարու հետ, ճակատ ճակատի...
Ու արդեն, խելակորույս բոլորը մեկ,
Գերեզմաններուն վրա ծունկի եկած՝
Մեռելներու հաճախանքեն իրենց հոգիներն ահաբեկ,
Որ գլուխնին ձեռվընուն մեջ ու աչվընին փակած
Իրենց ցավին տարփավորի արյունը կուլան...։

Օ՜, չըլլա որ երբեք այս գիշեր իմին վրաս մտածեք...

Աստվա՜ծ, մտիկ ըրեք սա ընդհարումները մարմիններու,
Ու բոլոր որբերը որ ա՜լ կփաթթվին
Փոթորկորեն գերեզմաններեն բարձրացող ամեհի կմախքներուն...
Ու այն բոլորին ճիչերը որ իրար կճանչնան...
Ու անոնցը որ խենթորեն իրար կփնտռեն...
Ու դեռ իրարու ետևե,
Բացվող հողերուն մրրկումը ասոնց հետ,
Ու անոնց աղերսը որ դեռ իրար կուզեն...
Ու երդումները անոնց որ ա՜լ իրար պիտի պաշտեն առհավետ...
Ու անոնք որ իրար երբեք չճանչցան...
Ու դեռ անոնք որ մեկմեկու մեջ՝ ինքզինքնին պիտի գտնեին,
Ու անոնք որ վերջապես այս գիշեր, այնչափ չարաշուքորեն իրարու բախեցան,

Ու փախո՜ւստը անոնց, այս ամենուն, այս բոլորին
Իրարու մեջե, մահագուժորեն վայրագ ու խոլական,
Դեպի ո՜ր հեռավոր հորիզոններեն իմ հոգիին
Կամ դեպի ո՜ր Աստվածը թերևս ավելի ոճրական,
Ալ վերջապես, եղբայրաբար ըսեք,
Այսպես իրարու մեջե, բոլորը մեկ պիտի երթան...։

Չըլլա՜ որ այս իրիկուն երբե՜ք իմին վրաս մտածեք։

1900 Փարիզ

29. ՔՆԱՐԻՍ ԼԱՐԵՐԸ ԴԵՌ ԹԱՑ ԵՆ

Ա

Դո՜ւն, դառնապես տրտում քույր, և դո՜ւն, պատուհասյալ պարմանի,
Քաղցրորեն երկուքդ մեկ բանաստեղծի շրթունքներուս հառաջացեք,
Ճշմարիտ է որ անսուտ բերանս ձեր ճակտին որբ վարդերուն վրա՝
Հեռուներեն հասնող եղբոր մը կրակե կարոտն է որ պիտի
համբուրե...։

Բ

Տարիներով և խավարներով ձեր մահացու ցավն իմ խարսիր ցավս եղավ,
Ու տառապանքիս տիեզերքին մեջ՝ ձեր արցունքն իրր անձրև,
հոգիիս վրա իջեցավ։
Ձեր հեծեծանքներն մահվան հովերուն պես մենավորի լուսամուտիս
փեղկերը կոտրտելու եկան...։
Եվ անհնարին սոսկումներ ապրեցա՞ն անտառին մեջ որ ձեր
հայրերուն ոսկորներեն էր կազմված...։

Գ

Բարբարոսներեն թափված արյունը, կյանքիս առջև, այն
կմախքատեսիլ ավազանն էր,
Որուն խորերը, ես քանի՜ անգամ մաքառումի և ուխտի արդար
ընկերներուս հետ,
Իմ նորավարժ քնարս, գրիչս, սուգերու սրինգս և անքիծ սուրս
արծաթյա,
Նկա, եղերականորեն ահավոր մկրտության մը համար, անոր մեջը
թաթխեցու...։

Դ

Այսպես, իմ ճշմարտասեր հոգիս, ձեր ճշմարիտ ցավին համար
կարմիր մատյաններուս մեջը խամրեցավ...։

Եվ քանի՜ քանի՜ արեգակներ մեռան, բայց քնարիս լարերը դեռ
թա՜ց են, եղբայրնե՛ր, դեռ իր լարերը թա՜ց են,
Ա՜հ, գթացեք մատվրներուս, եվ թո՜ղ երգերս մրրկին, թո՜ղ
արցունքս թորա, թո՜ղ շեփորս հերոսներուն իր հրավերն որոտա...
Որովհետև Արդարության առավոտը դաժանորեն հեռու է, և
իդեալիս երկինքներն՝ անհատակ...

30. ԳԱՂԱՓԱՐԻՆ

Արևին հուրն քեզ ընծա,
Ընծա բերին արյունն իրենց գարունին,
Ոսկորներու կուտակումներ կնդրուկի պես վառեցին,
Արցունք և ցավ, ցասում և հույս ծով առ ծով
Եկան հոսվիլ ոտքերուդ տակ...
Ո՜վ գաղափար, ո՜վ դյուցազուն, ո՜վ հսկա։
Հովերուն հևքն ու մրրիկներն իրրև թև՝
Քեզ ընծայեց բնությունն ազատագութ,
Եվ ժամե ժամ հաղթությունը քեզ տվավ,
Աստվածեղեն անմահություն մարմարյա...
Եվ երբ օր մը զենիթեն նժույգիդ վրան բարբարոս,
Ամեհորեն նպատակիդ արշավեցիր,
Մտածումիդ մեծությանն ի խնդիր՝
Մարտիրոսված մեռելներն հանկարծ նորեն բարձրացան
Ու իրենց ոսկի ոսկորներն ուխտվածի,
Անգամ մը ևս աչքիդ առջև փշրելեն,
Բոլորը մեկ, ես լսեցի, ըսին քեզի...
— Հառաջացի՛ր, հառաջացի՛ր, Գաղափար,
Թեև ճիշտ է, դու հաղթեցիր,
Բայց պարտությունն իրր օրենք
Տիեզերքի ժանտ շրջանին,
Հայուն համար, չարիքին հետ դեռ կսպասե։
Եվ կաղերսենք մենք քեզի, որ՝
Կամքերուն կարմիր մուրճը ձեռքիդ մեջ,

Կայծակներու անտառներեն անդադար,
Արարատին կատարներն իբրև սալ,
Դուն՝ ռազմեն հասնող ռազմիկներուդ համար,
Նորեն համառորեն, ոսկիաշեն սուսերներդ դարբնես...
Եվ քեզ՝ վճիտ Գաղափար,
Մեռյալներեդ խոսք մը ևս...
Խոսք մը ևս անոնցմե որ դրոշիդ փառքին համար
Իրենց հոգուն արյունը քեզ նվիրեցին.
Մի՛ մոռնար դուն, շեղբերուն վրա սուսերուդ
Կարմիր կամքիդ վճիռն այսպես կայծագրել...
«Արդարության ադամանդի օրերուն,
«Ո՜վ անքննելի և եղերական պողպատներ,
«Ձիթենիի կանաչագեղ ոստեր եղեք...
«Եվ շանթերո՜ւ, շանթերո՜ւ, շանթերո՜ւ պես՝
«Պետք է շողա՜ք, պետք է շողա՜ք այն ատեն,
«Երբ հայ արյունը անմեղորեն օր մը հոսի...»։

31. ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ՏԵՍԻԼՆԵՐ ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐԸ

Երազիս մեջ ուրվականներն ինծի ըսին...
— Քու վերմակիդ սև ծածկույթովը մետաքսե,
Իբր պատանք՝ փաթթվե դուն, պարմա՜նի,
Եվ մահճիդ տախտակներեն,
Դո՜ւն քու դագաղդ սղոցե՛...։
Որովհետև այս գիշեր վերջին կացինը պիտի փայլի...
Վերջին սուրերը, սրերուն դեմ, ետին անմեղը պիտի զոհեն...։
Պատանքվե դուն, ո՜վ բանաստեղծ, ծածկույթովը վերմակիդ...։

Եվ երենոսե իմ սեղանիս վրա դրին
Երկու ձեռքեր Ուրվականի,
Իմ սեղանիս վրա դրին

Հսկա բաժակ մը ահատեսիլ...։

— Ըսե՛, ինծի, ես գոչեցի, ո՞վ դուն բյուրեղ բարկութիւն,
Դուն՝ որ դևերու աչքերուն չափ ես վճիտ,
Եվ ցավերուս նման խոհուն...
Ըսե՛, դուն ինձ, ո՞վ ոսկեձուլ դաշխուրան,
Դուն արևեն և աստղերեն կռանված...
Ըսե՛, դուն ինձ, ո՞վ անկարելի ըմպելարան,
Դուն ոսկորի և մտածման բոլորակ,
Ըսե՛, դուն ինձ, ո՞վ դուն սափոր սոսկումի,
Անցյալներուս աճյուններեն թրծված...։

Ըսե՛ք դուք ինձ, ի՞նչ նյութ ալ ձեզ կերտած ըլլա,
Ոսկի, բյուրեղ կամ ափ մը հող՝
Ըսեք ինծի՝ ի՞նչ է հեղուկն այդ փրփրուն,
Որ սեղանիս վրա մթին
Վերջալույսի մը նման կեռա՞...

— Ըսե՛ք ինծի, ես գոչեցի. դո՛ւն հրեշտակ, դո՛ւն
Ուրվական կամ Քիմեռ,
Իմ որբությանս այդ բաժակը մատուակող
Գիշերային անքննելի՞ Ուրվականներ,
Ըսե՛ք ինծի, ո՞վ եք դուք. և մի՛ թափեք, այլևս,
Իմ մահիճիս մետաքսե սև ծածկույթին վրա,
Գերեզմանի այդ ծա՞նր հողեն, մի՛ սրսկեք...
Ալ մի՛ թափեք դեղին հողեն այդ դիվական...
Ա՜հ, ես բուրմունքը այդ հողին
Կարոտներովս՝ արդեն ճանչցա... ալ մի՛ թափեք, ո՞վ եք դուք...

Եվ իր մութ թևերն ուրվականն ահավոր՝
Գիշերին դեմ, իբր գիշեր մը տարածելով՝ ըսավ ինծի...։
— Սև ծածկոցդ իբր պատանք քու ուսիդ
Մտածումեդ ընկճված քու սեղանիդ մոտեցի՛ր,
Դո՛ւն հեռավո՛ր, դո՛ւն ցավագի՛ն, դո՛ւն Քնարի՛ ստքուկ,
Եվ սափորն այդ ահատեսիլ, ի ձեռին,

Աշխարհներեն ուրիշ աշխարհ, և Արդարութենե Արդարություն,
Անխոնջորեն, ժո՛ւռ եկուր դուն,
Եվ բախե՛ դուն ամեն դուռ, և կրծոտե ամեն սի՛րտ,
Քու քնարովդ՝ մրրկին պես իմ խոսքերս երգելով...։

— Ահա՛ ձեզի իմ Ցեղես. վերջին սափորն իր արյունին...
Ըմպեցե՛ք զայն ցմրուր. եթե դուք դեռ ծարավ եք...։—

1911

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԵՍ

«Թարթիչներս կթրջվին արտասուքի կաթիլներով
Բայց չե՛մ ուզեր զանոնք թափիլ, կուզե՛մ մի առներ».

ՍՈՒԳ

Դուն թախծադեմ անծանոթս կամ դուն հոգիի բարեկամ,
Որ խրախճանքի այսօրվան ճամփաներեն կանցնիք,
Ունկնդրեցե՛ք սա մենության և սուգի խոսքերուս։
Գիտեմ որ ձեր անմեղ ոտքերը դեռ թաց են ձերիններուն արյունեն...
Եվ ազատության այն վսեմ վարդը որ ձեր ցեղին ցավերեն՝
Այս դժբախտ երկնքին տակ, օր մը, վերջապե՛ս ծաղկեցավ,
Ծտար ձեռքեր հասած են՝ ծիծաղելով զայն քաղելու...։
Բայց թո՛ւյլ տվեք որ անոր աստվածային բուրմունքեն
Անխտիր՝ ամեն մարդ, երկյուղածությամբ և լիապես գինովնա...։
Թո՛ւյլ տվեք որ ձեր մուրճերովը քանդակված Արդարության
դիցուհիին առջև,
Եվ հեռավորը և դրացին և ապերախտը գան՝ իրենց խունկը ծխելու։
Թո՛ւյլ տվեք դուք, ո՜վ հպարտ և հերոսական սերմնացաններ,
Որ ձեր ոսկիե արորներեն բուսած հասկերը բերուն,
Ուրիշներ, ձեր մանգաղներովը, իրենց համար, զանոնք հնձեն...։
Որովհետև գիտեմ որ, եթե անգետ Ցարիքեն է որ հալածվելով
կմեռնիք,
Բայց միանգամայն դուք ծնած եք իմաստուն և բերրի Բարիքներուն
համար։
Խրախճանքի պողոտաներեն, Տառապանքին պես տրտո՜ւմ, անցե՛ք,
Եվ խնայեցեք երջանիկներուն որ չի կրնան ձեր աչքերուն մեջը
կարդալ

Այն զարհուրելի պատկերը, որ դիակի ու մոխիրի ցոլացումներն
ունի...
Խնայեցեք անցորդին՝ արդար կամ ոճրապարտ, որ ձեր աչքերուն չի
նայի...
Վասնզի հայ հոգիին տառապանքը միշտ հայ նայվածքներուն մեջը
դտած եմ ես։
Այսպես խրախճանքի քառուղիներեն բոլորդ մեկ անցեք.
Բայց զվարթության ո՛չ մեկ բիծ և ո՛չ մեկ շիթ արցունքի,
Պետք չէ՛ որ գան մեր տրտմության վեհությունը պղծելու...
Որովհետև պարտվածին համար արցունքը վատություն է,
Եվ հաղթողին համար սնոտի ժպիտը՝ կնճիռ...։

Դուն, շղարշներովդ մահագուժորեն գիշերված հայ գեղուհի,
Եվ դուն, պարմանի, որ դիմագծեդ ցեղիդ սուգը սրտիդ մեջը կհոսի,
Առանց զայրույթի և շտապով սա՛ ճամփաներեն անցե՛ք,
Պիտի ըսեք թե որչա՜փ լույս է այս և ի՜նչ հեգնական մեռելաթաղ...
Ի՜նչ խաժամուժ և ի՜նչ պարեր, ի՜նչ ցնծություն և ի՜նչ խնջույք
ամեն դի...
Մեր կարմիր պատրանքները, հաղթանակներու դրոշներն են կարծես,
Եվ մեր վճիտ եղբայրներուն ոսկորները սրինգներու
վերածված...
Ահավասի՜կ որ անոնց մեջեն ուրիշները արտասվոր երգեր է որ
կերգեն...։
Բայց մի՛ սարսափիր, ինձ անծանոթ քույր կամ ճակատագրի
եղբայր,
Եվ ճշմարտության աստղերը զննելով՝ հուսադրվե՛ և հառաջացի՛ր,
Կյանքին օրենքը դեռ այսպես է, մարդերն չի կրցան մարդերն
ըմբռնել...։
Եվ այս իրիկուն ձեր տանը դուռներեն, թշվառորեն աղքատ կամ
մարմարակերտ,
Բոլորդ մեկ, արեգակին մահեն առաջ, ձեր սեմերեն ներս մտե՛ք,
Եվ անդորրությամբ փակեցե՛ք դավաճան փեղկերը ձեր
պատուհաններուն,
Փակեցե՛ք զանոնք անկարեկիր և մեղավոր Ոստանին դիմաց,
Փակեցե՛ք զանոնք և մարդկության և ձեր աստծուն երեսին...
Եվ գիտեմ որ ձեր հստակ հոգիին մեկ ահավոր հեծեծանքեն,
Ձեր սեղանին վրա վառող ճրագն իսկ պիտի մարի...։

1909 Հուլիս 10

Եվ արցունքներն իրեն կապույտ աչքերուն մեջ խեղդելով,
Մոխրագաշտի մը վրա ուր հայ կյանքը դեռ կմեռներ,
Այսպես պատմեց մեր սարսափին ականատես Գերմանուհին.

Այս անպատմելի պատմությունը որ ձեզ կբնեմ,
Ես իմ անգութ աչքերովս այս մարդկային,
Իմ անվտանգ տնակիս գեհենագիր լուսամուտեն,
Ակռաներս կրճտելով ու զայրույթիս զարհուրելի...
Այս աչքերովս անդթորեն մարդկային, ես տեսա։
Մոխրակույտի վերածված Պարտեզ քաղաքին մեջն էր։
Դիակները դիզված էին մինչև կատարները ծառերուն,
Եվ ջուրերեն, աղբյուրներեն, առուներեն, ճամփաներեն,
Ձեր արյունին կարկաչյունն ըմբոստաձայն...
Դեռ ականջիս իր վրեժն ահավասիկ որ կխոսի...

Օ՜ չի սոսկաք երբ անպատմելի պատմությունս ձեզի պատմեմ...
Թող մարդերը հասկնան մարդուն ոճիրը մարդուն դեմ,
Երկու օրվան արևին տակ, գերեզմանին ճամփուն վրա
Մարդուն չարիքը մարդուն դեմ,
Թո՜ղ աշխարհիս բոլոր սրտերն իմանան...։
Այդ մահաշուք առավոտը կիրակի էր,
Դիակներուն վրա ծագող առաջին և անօգուտ կիրակին,
Երբ սենյակիս մեջը, իրիկունեն մինչև արշալույս,
Դաշունահար աղջկան մը հոգեվարքին վրա ծռած՝
Արցունքներովս անոր մահը կթրջեի...
Հոնկարծ հեռուեն սև խուժան մը անասնական
Քսան հարսներ իրենց հետ՝ մոլեգնորեն մտրակելով,
Ճվայտության երգերով, այգիի մը մեջ կանգնեցան։

Ես կիսամեռ խեղճ աղջիկն իր խշտյակին վրա լքած,
Դժոխհայաց պատուհանիս պատշգամին մոտեցա...։
Այգիին մեջ սև խուժանն անտառվեցավ։

Վայրենի մը՝ հարսներուն— Պետք է պարե՛ք, որոտաց,
Պետք է պարե՛ք, երբ մեր թմբուկը հնչե։
Եվ մտրակներն սկսան մահակարոտ հայ կիներուն
Մարմիններուն վրա կատաղությամբ մը շառաչել...
Քսան հարսներն ձեռք ձեռքի, իրենց շուրջպարն սկսան...
Աչվրներեն իրենց արցունքը վերքերու պես կհոսեր,
Ա՜հ, ես ո՞րչափ նախանձեցա իմ դրացի վիրավորիս,
Որովհետև լսեցի որ հոնդյունով մը հանդարտ,
Տիեզերքն անիծելեն, խեղճ հայուհին գեղադեմ,
Իր տատրակի շուշան հոգուն դեպի աստղերը թև տվավ...
Ունայնորեն կռուփներս ամբոխին դեմ շարժեցի։
«Պե՜տք է պարեք, կոռնար խուժանը մոլեգին,
Մինչև ձեր մահը պե՜տք է պարեք, դո՜ւք անհավատ գեղեցիկներ,
Կուրծքերնիդ բաց՝ պե՜տք է պարե՛ք, մեզ ժպտելով և անտրտունջ...
Հոգնությունը ձեզ համար չէ, ո՜չ ալ ամոթը ձեզ համար,
Ստրուկներ եք, պե՜տք է պարեք, և մերկանդամ և հոլանի,
Մինչև ձեր մահը պե՜տք է պարեք պագշոտորեն և ցոփությամբ,
Մեր աչքերը ծարավի են ձեր ձևերուն և ձեր մահվան...»։

Քսան հարսներն գեղադեմ, գետին ինկան պարտասած...
«Ոտքի՜ ելեք», գոռացին, մերկ սուրերնին օձերու պես շարժելով...
Հետո մեկը սափորով մը քարյուղ բերավ խուժանին...
Ո՜վ մարդկային արդարություն, թո՜ղ ես թքնեմ քու ճակատիդ...
Քսան հարսներն շտապով այդ հեղուկովն օծեցին...

«Պե՜տք է պարեք, որոտաց, ահավասի՜կ ձեզի բուրմունք մը, որ
Արաբիան իսկ չունի...»,
Հետո ջահով մը բռնկցուցին մերկ մարմինները հարսներուն։
Եվ ածխացած գլխակները պարին մեջեն դեպի մահը գլորեցան...

Զարհուրանքիս՝ պատուհանիս փեղկերը՝ փոթորկի մը պես փակելով՝
Իմ մենավոր մեռյալիս մոտենալով հարցուցի.
Ինչպե՞ս փոյթդ այս աչքերս, ինչպե՞ս փորել, ըսե՛ ինձ...։

. . . . . .

ՔԱՎԵՐԹՅՈՒՆԸ

Արհավիրքի առավոտ մը, աստվածավախ այդ ծերունին,
Դալարագեղ իր այգիին ավազանին վրա հակած,
Անոր բյուրեղ ջուրերուն մեջը վճիտ,
Իր անցյալին դեռ չի քաված մեղքերեն մին հոն տեսավ...
Ու իր աչքերը փակելով՝ հեծեծանքով մը հիշեց
Այն անիծյալ օրն՝ երբ գարնան պես երիտասարդ,
Նելահեղիչ գեղեցկությամբ հայ կնոջ մը սիրուն համար,
Այդ անիծյալ օրն՝ իր աղոթքն՝ իր աստծուն չէր նվիրած...

Եվ դավաճան ավազանը, արյուններու այդ օրվան հետ,
Ծերունիին աչքին առջև պայծառությամբ մը նկարեց
Անջնջելի ձևերն այն դեռատի և սպիտակ աղջկան,
Որուն մարմար մերկությենեն չարախաբյալ,
Իր առօրյա աղոթքն, իր աստծուն չէր ըրած։
Եվ պետք էր քավել, վերջապե՜ս, միակ մեղքը հին օրերու.
Որովհետև հողին կյանքը սկսած էր իր ցնորքը գիշերել,
Մահվան փոսը կփորվեր հանցանքին պես անդնդախոր...
Արդար ժամը հնչած էր ալ, պետք էր փրկել իր հոգին.
Եվ ծերունին հաստատաքայլ՝ հիշատակին հաղթանակող՝
Զարհուրելի հրամանի մը համար, իր ապարանքը բարձրացավ...։
Ժիր ծառաներ շտապով սրահի մը մեջը շքեղ,
Մետաքսահյուս գորգի մը վրա ուր նկարված սոխակներն՝
Ցնորաբույր վարդին ի տես իրենց սերը կուլային...
Սև սատափե թիկնաթոռ մը զետեղեցին։
Եվ ծերունին շուշանաթույր պատմուճանով մը փաթթված,
Աղոթելով և ծանրորեն բազկաթոռին մոտեցավ։
Իր բազմանդամ ընտանիքեն մինչև թոռներն իր նորածին,
Գարուններուն պես ծաղկապատ գորգին վրա ծնրադիր,
Այս ծիսական տոնին համար անոր շուրջը շարվեցան...։

Պահ մը հետո երկու խափշիկ՝ խարտյաշ տղեկ մը Տարսոն քաղքեն,
Ապարանքին մառանին մեջ ուր նոր ոճիրը պիտի ծներ,
Ոսկեպատյան սուրի մը հետ հայ պարմանին մերկացուցին...

Եվ անմիջական ու ահավոր գալարումներ հոգեվարքի,
Ապարանքն իր հիմերեն մինչև տանիքը սարսեցուց։

Վերը՝ կին մը գեղամարմին, շղարշի մը մեջ անդրիացած,
Սրահեն ներս՝ ակնածությամբ ծերունիին գնաց ըսավ.
— Հրամաննիդ կատարված է և ձեր ոտքին փոշին իսկ չեմ...
Ո՞ր ձեռքերն կրնան ձեզի քավիչ բաժակը մատուցանել...—

— Անտարակույս վերջին պտուղն այն հանցապարտ հայ աղջկան,
Որուն համար ես երկնքիս հավերժությունը կորսնցուցի։
Ահեղ մարդուն թոռներեն մին, արծաթ ափսե մը ի ձեռին,
Որուն մեջի ոսկի բաժակն, ո՜վ դժբախտներ, ձեր բոլորին
պարտությունն էր...։

Երջանկագեմ իր մեծ հորը շրթունքներուն մոտեցուց զայն,
Եվ անդողդոջ ծերունին բազկաթոռին վրա անշարժ,
Այդ մետաղն ակռաներովն մոլեգնությամբ մը սեղմելով,
Իր երազած արքայության սեմին առջևը՝ ժպտուն,
Հանդարտորեն, սրահին մեջ, իր սև հոգին ավանդեց...։

Բայց ո՜չ մեկ կաթիլ այդ արյունեն, Արդարության սպասարկու
եղբայրնե՜ր,
Ո՜չ մեկ կաթիլ չի թափեցավ պատմուճանին վրա շուշան,
Հանկարծամահ ծերունիին այդ անհագուրդ բերանեն
Ո՜չ մեկ կաթիլ, ոչ մեկ կաթիլ, կաղաղակե՜մ ես ձեզի...։

ՁԱՎԱԿԸ

Դյուզացնություն մը պատմեմ քեզի և բոպե մը սրտազինվե՜...
Հայ հողագործ մը կռիվներու և արյունի կոչին ի լուր,
Արծվի մը պես՝ ձիուն վրա, դեպի իր գյուղն արշավեց։
Զգեց եղներն հաղթամարմին որ բարկությամբ բառաչեն,
Իրենց հերկած հողերուն հրկիզվիլը դիտելով...
Ու ձգեց իր նորաբույս սրբությունները ցորյաններուն,
Զգեց խոփը, ձգե՜ց բահը, ձգեց արորն իր մեծապարգև,
Զգե՜ց հույսն հին օրերու, ձգե՜ց հողն իր հայրենի,
Եվ աշխատանքի երգերուն տեղ անդորրաշունչ,

Սկսավ ան, գենուզենքի կաքմիր երգ մը որոտալով.
Ձիուն վրա սպառազեն, երթալ իր գյուղը փրկելու...։

Իրիկուն էր։
Արեգակն իր մահովը հորիզոններն եղեռնորեն կներկեր...
Երբ հողագործն հերոսական՝ դաշտե ի դաշտ արշավելով,
Անպատմելի սարսափով մը իր սեմին առջևը կանգ առավ...
Բայց մոխրակույտեր միայն տեսավ և դիակներ ամեն դի...
Տեսա՛վ իր կինը սիրակարոտ՝ դռանը ետին դաշունահար,
Թշնամիեն քակված ծամերն և մերկ ուսերն սպիտակ,
Ցոցեն հոսող իր նվիրական արյան մեջը թաթավուն...
Տեսա՛վ զավակն որ իր մորկանը նայվածքներուն վրա ծռած՝
Անոր մահվան արցունքներուն վերջին շիթերը կհամբուրեր...
Գյուղին ծայրեն բարբարոսներն ժամանումեն այս՝ ընդվզած՝
Ու իր ահեղ ձիուն վրնջյունեն և դռույթեն ամեհի՝
Բոլորը մեկ սկսան, ոտքի ելած աղաղակել...
— Անգամ մըն ալ պե՛տք է քալել, դեռ շունչեր կան որ կշնչեն։
Ո՞վ էր այն մարդն սպառազեն որ մեր վրան գրոհել ուզեց.
Մոխիրները պետք է դեռ անգամ մըն ալ մոխրացնել...։
Դեռ ձայներ կան, դեռ շշուկ կա, մահամերձներ դեռ կան որ
Կհամառին այս նորեկեն իրենց վրեժը պաղատիլ...
Մենք գերեզմանո՛ց ուզեցինք և դեռ կյանքեր կան այնտեղ,
Մենք ամենքս մոխի՛ր կուզենք և մա՛հ կուզենք, անհավատներ...—
Այս ձայներն եկան հասան հայ կորիճին՝ որ մինակ
Իր դեռատի զավակին հետ, ցասումով լի, սև խուժանը կդիտեր,
Հանկարծ ինքը կայծակնացայտ պայթյունով մը հրազենի
Հազարավոր խաժամուժն այս՝ մրրկի մը պես ետ մղեց...
Բայց մինակ էր... հեծեծողներ միայն կային և դիակներ ամեն դի.
Եվ խուժանը ամայությանց ավազին պես վերսկսավ՝
Դեպի այս գյուղն ավերակյալ անգամ մը ևս արշավել...։
Բայց պետք էր փրկել իր զավակը, ո՞ր դիպվածեն ազատված,
Ո՞ր գաղտնիքեն, ո՞ր բախտեն, ո՞ր օրենքեն, ո՞ր չարիքեն...
Եվ խելակորույս գիրկն առավ տաք դիակն իր կնոջ,
Եվ իր զավկին մեջքեն բռնած դեպի գետափը իջավ...։
Պետք էր փրկել իր որդին, հետին Հույան Նոր օրերու...
Եվ գիտեր որ մարդուն ահեղ կռվին հետ դեռ բնության կռիվը
կար...

Պե՞տք էր հաղթել գոնե անոր և իր որդին ազատել,
Պետք էր հաղթել բնության, ուրիշ ոչ մեկ հույս չի կար...

Մարդեն նվազ չարակամ այդ մութ ուժը տիտանյան,
Գիտի գթար... բնությունը մարդուս մա՛յրն է վերջապես...
Եվ արմատախիլ կաղնիի մը պես որ մրրկեն կտարվի,
Այսպես որդին ձեռքն առած և մեռյալ կինը քարշերով,
Ահեղավազ Սիհունին ջուրերուն մեջը խոյացավ...։
Զգեց դիակն իր կնոջ որ ալիքներն ահեղ՝
Իրենց կուրծքին վրա առած անոր թաղումը կատարեն.
Եվ ջուրերն, իր կինը, փրփուրներովն իրենց,
Վերջին լոգանքի մը համար, անոր արյունը լվալով
Քարե ի քար բախելեն, դագաղի մը պես ցնորական,
Իր սիրակեզ աչքերուն առջևեն գայն սահեցուցին...։
Մինչ հողագործն առյուծի մը պես փոթորկաբաշ՝
Որ իր կյանքին կորյունը բերանն առած կսուրա,
Այսպես գոտիին իր որդուն՝ ակռաներովը փարած,
Ձեռքերովը ջուրերուն երկաթ ուժին հաղթելեն,
Մոնչելով և լողալեն իր զավակը փրկե՞լ կուզեր։
Երբեմն ձեռքովն իր հուժկու ջուրերեն վեր բռնած գայն՝
Իր իրանովն ալիքները փշրելեն դեպի ծովափը կհուզվեր...։
Գիշերն ի բուն բնության հետ կատաղությամբ մաքառեցավ,
Եվ ուղեկից դիակներ հաճախ եկան իր վրայեն սահելու...
Բայց ինք հզոր՝ իր զավակը, եղեգի մը ճյուղին նման,
Ակռաներովն կամ մեկ ձեռքովը զորությամբ մը գերմարդկային,
Ջուրերեն վեր, դեպի ասողերը կարկառելեն...
Փրկել ուխտեց միակ Հույսն ավերակյալ իր Գյուղին...։
Միջերկրականն անծայրածիր արևին հետ, աչքին առջևը
ծագեցավ...։
Հանգրվանին հասած էր։ Երբ զավակն խենթի մը պես հողին վրա
համբուրեց...։
Հանկարծ ճանչցավ իր մեռյալ կինն որ ապառաժի մը կառչած,
Հասած էր հոն կարծես՝ արշալույսին շողերուն հետ շառագույն,
Ինքն ևս իր փրկված զավակին ժամանումը ողջունելու...։

ԼՈԳԱՆՔԸ

Իր մարմինը սպիտակ էր...
Ինչպես է ձյունն աստվածընծա Տաղրոսներուն,
Եվ իր երկու աչքերուն մեջն ահավոր՝

Բարբարոս սեր մը անհագուրդ կվառեր։
Բայց սևահեր այս գեղուհին ամուլ էր,
Ստինքները դեռ չոր էին մաքուր կաթեն,
Եվ իր կողերեն չէր ծնած այն պտուղը ազնվական կամ
ոճրագործ՝

Որուն համար բոլոր մայրերը կսպասեն...։
Ու գինովությամբ բայց վայրապար կցանկանար
Այրություններ խոժոռադեմ և արգավանդ,
Բնության դեմ հաղթանակող։
Դաժանագեղ կնությունն այս կանգիտանար,
Թե մեծ օրենքը իր երկաթե գաղտնիքն ունի...
Բայց կախարդուհի մը չարաշուք,
Ավերումի այս օրերս, իրեն ըսավ...

— Որպեսզի քու ամլությունդ ադամանդյա,
Պայծառորեն և առհավետ պտղավորվի...
Ոկուր քեզի հին իմաստուն Դարերուն
Միակ դարմանը ես իմ ձեռքովս մատուցանեմ։

Եվ անգթության ավանդավեպը պատմեց...
Մինչ վհուկը՝ գեղեցկուհվույն աչքերուն մեջ՝
Իր աչքերը շանթերու պես, մոլեգնությամբ մը կմխրճեր։
Հետո բերին մեր հանդարտ գյուղեն հեռավոր՝
Յոթ կույսեր վեշտասնամյա
(Ա՜հ, ճակատագիրնիդ կտեսնեմ, որ եղերականորեն նման է,
Ո՞վ խե՜ղճ քույրերս, այսչափ ատեն իմ մահերգած ճակատագրիս,
Այսպես բերին մեր հանդարտ գյուղեն առաքինի և հեռավոր՝
Յոթը կույսեր վեշտասնամյա՝ մահվան դողեն դողդոջուն,
Ներս մտցուցին զանոնք լոգարանի մը մարմարակերտ դռներեն,
Ուր արդարության արեգակին ճաճանչները վերեն,
Արցունքի պես անոնց վրա կանձրևեին...։
Եվ շտապով տախտակե տաշտ մը հոն դրին,
Ու անոր շուրջը զարդարեցին շուշաններով սպիտակ,
Մինչդեռ հեռուն, վարագույրի մը ետևեն,
Կրոնավոր մը մութ աղոթք մը կկարդար...
Հանկարծ այսպես՝ գեղեցկուհին զվարթությամբ մը զարհուրելի,
Իր ոսկեհյուս շղարշները լայնածավալ,

Իր ուսերեն իր նաժիշտին ուսերուն վրա նետելով՝
Խաղաղությամբ մը մերկացավ...։

Սև դահիճները դաշույններով շողարձակ,
Անխղճորեն խողխողեցին յոթը կույսերը մեր գյուղին...
Եվ երբ ամուլ գեղեցկուհին, աչվրները դեպի երկինք,
Տաշտին մեջը արձանացած՝ ոտքի վրա կանգնեցավ,
Հայ կույսերուն տաք արյունը վարդակարմիր...
Սկսավ իր մերկ և անխռով ոտքերեն
Մինչև իրեն ամուլ արգանդը բարձրանալ...։

ԴԱՀՈՒՅՆԸ

Մի՛ սարսափիր, սիրելիս, և ոչ ալ իսկ այս նամակես,
Եվ քնարիդ լարերուն հետ՝ հայ հողին պես արյունոտ,
Եղբայրության մեր Իդեալին ձիթենվո ոստերն ալ վճիտ,
Այս բոլորին բոցերեն անգամ մը ևս թո՛ղ այրին...։
Մի՛ սարսափիր, սիրելիս, և ոչ ալ իսկ այս նամակես։

-- Հրամանիս պետք է անսա՛ս՝ դուն մեծահարուստ հայուհի,
Ահավասի՛կ որ մարմինդ աչքիս առջևը մերկ է,
Ինչպես վարդի թուփերը դրախտային պարտեզներուս...
Կամ ձյունաթույր շատրվանս որ առավոտեն իրիկուն,
Ավազանիս մակերեսեն, հասակիդ պես վեր կցայտի...
Դուն գիտես որ ես քու տե՛րդ եմ և աստվածդ և արքադ,
Ունայնորեն մի պաղատիր, հիմա որդիդ պիտի գա,
Պետք է անսա՛ս հրամանիս, եթե դժոխք ալ ղրկեմ քեզ։
Ահավասիկ հյուրերս որ կհասնին մեր մոտակա քաղաքեն,
Ահավասիկ դրացիներ, կոչնականներ, բարեկամներ որ այսօր,
Հրավերս հարգելով հաճած են հոս բազմելու...։
Այս մեծահարուստ կնոջը գոհարատուփն ինձ բերեք...
Որպեսզի ես իմ ձեռքովս, շքեղորեն զայն զարդարեմ...
Փղոսկրե սեղանը ատոր համար է պատրաստ,

Այստեղ բերեք գոհարատուփը, ա՜հ, որչափ ծանր է, որչափ ծա՜նր,
Բարեկամներ, հոս նայեցեք, ի՜նչ հեղեղ է այս գոհարներու.
Քիչ մնաց որ ճաճանչներեն, արևն իսկ ամչնալով խավարեր...։
Մոտեցի՛ր որ նախ քու դաստակներդ հանցապարտի,
Ապարանջաններովդ այս մեծարժեք, լուսազարդեմ...
Տե՛ս թե ինչպես գեղեցկացար, տե՛ս սա օղերդ սուտակե,
Տե՛ս թե ինչպես ականջեդ վար իբր աստղեր վար կհոսին։
Ձեռքերդ ինձ երկարե՛ որ մատվրներդ մեկ առ մեկ,
Սա՛ զմրուխտե, հակինթե մատնիներովդ օղակեմ,
Ա՜խ, կարծես թե արդեն քու զավակիդ արյունն է որ հակինթներեդ,
Քու մայրական ձեռքեդ ի վար ծունկիդ վրան կհոսի...։
Չէ, աղալանքը ես չեմ սիրեր, պետք է անսա՛ս հրամանիս,
Արցունքներդ քեզի պահե, հեծեծանքիդ պետք չունիմ։
Ահավասիկ քառամանյակդ որ կուրծքիդ դեմ կշողա,
Մահիկն ի՛նչ է, ի՜նչ է մահիկն ատոր քով...
Ծոծրակեդ վար մինչև կուրծքդ մարմարյա,
Առավակի մը պես անոր հուրը տե՛ս թե ինչպես կսահի...
Մազերուդ մեջ պետք է ցանեմ որչափ որ կա սա՛ տուփիդ մեջ՝
Եվ մարգարիտ և ակնեղեն և մեղեսիկ և շափյուղա...
Պետք է ըլլաս դուն այսօր հազար անգամ ավելի պերճ՝
Ինչպես որ չէ՛ սա երկինքն աստեղազարդ գիշերներուն...
Ջարդասեղներդ ձեռքդ ա՜ռ և վարսակալներովդ ականակուռ,
Նա մազերուդ զայրույթն, իմ աչքերես, անմիջապես ամփոփե...
Մարդարտահյուս հողաթափներ կամ ոսկիե մուճակներ,
Ո՞րը կընտրես, վերջին ժամն է, քեզ անարժան այս ճոխության,
Ձավկիդ ճի՞չը քեզ հուզեց, չէ՛, արտասուքը քեզ կարգիլեմ...
Ահավասի՛կ որ բերին զայն, եթե կուզես վերջին անգամ մը ես,
Որպեսզի իր լացուկոծը մահեն առաջ դադարի,
Եթե կուզես վերջին անգամ, քու կաթովդ քու զավակդ դիեցուր...
Չէ՛, մի՛ համբուրեր, երբե՛ք համբույր, մահեն առաջ համբույր
չի՛ կա,
Արժանի չե՛ք ո՛չ համբույրի, ո՛չ գթության, ո՛չ գորովի,
Ինչպես որ դուն զայն ծնար, պե՛տք է այնպես մահացնես...։

Ա՜հ, կպաղատի՛մ, բարեկամնե՛ր, սրտակիցնե՛ր, դրացինե՛ր,
Տեսե՛ք ինչպես իր աչքերը հորն աչքերուն պես կվառին.
Այս ինչ ըմբոստ նայվածք է, հոս նայեցե՛ք, կոչնականներ,

Սա՛ աչքերո՛ւն նայեցեք, սա՛ բիբերուն, շանթերու պես
կշողշողան...
Հորն աչքերն են կարծես գերեզմանեն փայլատակող...։
Ես քու հայրդ այս առավոտ իր Դաշույնովն սպանեցի...
Հազիվ թե դուն ծնած օրեդ երկու գարուն ես բոլորած...
Քե՞զ կտակեց իր վրեժը, քե՞զ կտակեց, սև՛ պտուղ...
Կրոնակից բարեկամներ, Մարգարեին սիրո՛ւն համար դուք
վճռեցե՛ք,
Այս Դաշույնը որ ձեռքիս մեջ կտեսնեք, ո՞ր կայծակեն դարբնված,
Այս Դաշույնը սա՛ հայ կնոջ ննջարանին մեկ անկյունեն ես գտա...
Որո՞ւ համար պահած էին այր ու կին այս մետաղն սոսկատեսիլ...
Որո՞ւ համար, դուք ըսեք, անտարակույս մեզի համար, կասկած
չի կա...

— Անտարակույս մեզի համար, Աստվա՜ծ փրկած է զմեզ,— գոռաց
տրահը մոլեգին...

— Սա սեղանը որուն վրա գոհարատուփդ բացի,
Հայ ոճիրին քավությանն իբր խորան թո՛ղ ծառայե՛,
Եվ թաղուհվո ճոխությենեդ կարոտդ ա՜ռ, անհավետ,
Ես իմ աչդար ձեռքերովս այդ բոլորը հյուրերուս մեջ պիտի
բաժնեմ...

— Հազար ապրի՜ մեր պետը, հազար ապրի,— բոլորը մեկ գոռացին,

— Ակնթարթ մը ևս ու պետք է որ ամեն ինչ ավարտի...
Ա՛ռ դաշույնդ և խրե՛ զավկիդ կուրծքին և կայծակի մը պես աբագ,
Կուրծքի՛ն ուղղե՛, իր սրտին որ քու սիրտդ է նույն ատեն...
Դեռ ո՞ր հույսին կսպասես, ո՞ր հավատքին, ո՞ր հարության,
Կուրծքի՛ն խրե, քեզ կրսեմ. բոլորս մեկ անհամբեր,
Մեր իրիկվան սո՛ւրբ աղոթքին կսպասենք...
Ի՜նչ կդողաս, անօգուտ է, խրե՛ կուրծքին քեզ կրսեմ...
Եվ Հայուհին իր Դաշույնը դեպի Երկինք երկու անգամ ճոճելե վերջ՝
Զարհուրելի մռնչյուն մը արձակելով՝ աչքերը բաց՝ մահացավ...
Բայց արյունկզակ երիտասարդ մը, մեռյալ կնոջ աչ բաղուկեն
անմիջապես բռնելով
Անշնչացած մորը ձեռքովն այդ՝ յոթը անգամ, զավկին՝ սիրտը
հարվածեց...։

ԽԱՉԸ

Քստմնելի դրվագ մը ևս... բայց ձեռքերս կդողդոջեն...
Աչքերուս չափ սարսափ տեսած այս խեղճ ձեռքերս կդողդոջեն...
Բայց ներե ինձ այսօր ալ, հին հույսերու բարեկամս մտերիմ,
Ներե ինծի որ նորեն գամ ձեր թախիծը խռովել,
Անգամ մը ևս կուզեմ հայելին ըլլալ հայ արյունին.
Քու առջևդ զետեղված՝ և որբ ցեղիս և դավաճան մարդկության,
Ջարհուրանքներ արտացոլող հայելին բանալ ձեր առջև,
Թեև ձեռքերս սարսռան, չորացած ճյուղի մը նման...։

Եկեղեցվո բակին մեջն էր։
Մայր մը իրեն միակ զավկին ի խնդիր, կոտորածի, կատաղության
այս օրերուն,
Հեծեծելով՝ ինքն իր ձեռքով իր ծամերը կփետտեր...։
Բայց ո՞վ էր որ պիտի լսեր այս հեգ կնոջ աղերսանքին,
Ամեն հոգի իր վերքն ուներ...։ Ամեն մայր իր մեռելին քով՝
Կտավի մը կտորեն, ասեղն անգամ մը իր արցունքը սրբելով՝
Կտավի մը կտորեն, իրեններեն մեկուն համար, սև պատանք մը
կկարեր...։
Ու խելացնոր այս խեղճ կինը բոլոր սրտերը գոց գտավ,
Ժամուն մեջը, գետին ինկած, եղունգներովը չոր քարերը
ճանկռտելեն,
Իր Աստծուն կաղաղակեր. «Որդիս կուզեմ կամ մահս, որդիս
կուզեմ կամ մահս»։
Մոմեր վառեց, խունկեր ծխեց և ակռաները կրճտելով,
Իր զավակը պահանջեց աղոթատան խուլ գմբեթեն...
Իր Աստուծմեն հույսը կտրեց և մտածեց թշնամիեն պաղատիլ
զայն...
Գնաց անոնց ոտքերն ընկավ և սուրերնին համբուրեց...
Իր զավակը կպաղատեր, իր աչքերուն, իր հոգիին փոխարեն...
Եկեղեցվո բակին մեջն՝ արյունկզակ խաժամուժ մը խառնված էր,
Կողոպուտե, կոտորածե, ավերներե ետ դարձող,
Եվ այրիներու, մեռելներու և որբերու վրանին տակ, բորենիի պես
շրջելով,
Եկած էին զոհերուն քով, իրենց սուրերն սրբելու...

— Քու զավա՞կդ,— ըսին մորը,— ատկեց դյուրին ի՞նչ բան կա...։
Այն չէ՞ միթե քու որդիդ բարձրահասակ և հրաշվի...
Որ երեկվան կռիվին մեջ ձեզ պաշտպանել փորձելն ետք,
Ուզեց անցնիլ ուրիշ գյուղեր, ուրիշ վայրեր փրկելու...
Քու զավակդ եկեղեցվո գավիթին մեջ, առավոտեն մինչև հիմա,
Իր զենքերուն զորությանը և քեզ համար դեռ կաղոթե,
Անհոգ եղիր... հիմա կարգը իրեն եկավ, ինքն ալ այսօր կազատի։

Բոլորը մեկ շուրջանակի հավաքվեցան իրենց վճիռը տալու...
Խուլ մրմունջներ, ձեռքի շարժում, սպառնալիք, զենքերու ձայն.
Հետո քրքիջ մը այս բոլորեն, ագռավներու մահագուշակ կռինչին
պես,
Ծափերու հետ նոր որոշումը կատաղությամբ ողջունեցին...
Եվ խեղճ մորն եկան ըսին գետնեն բարև մը տալով անոր...։

— Շապիկդ հանե՛ և մեզ տուր ու դուն այստեղ սպասե՛,
Բաճկոնակդ կամ շապիկդ շուտ մը հանե և մեզ տուր...
Եկեղեցվո բակին մեջն այս՝ ուրիշ պատիժ քեզ չի վայլեր,
Ի՞նչ նրբահյուս մետաքս է այս, ծաղիկներ կան վրան բանված...
. . . . . .
Պահ մը հետո, բարբարոսները, գավիթեն դուրս խուժելով՝
Արյունթաթավ շապիկն՝ եկան մորը ցույց տալու...։
— Ըսե՛, այս չէ՞ քու շապիկդ. միայն իր գույնն է փոխած...
Ճանչցա՞ր հոտեն, ի՞նչ մայր ես դուն, գոնե անգամ մը հոտոտե
զայն.
Մի՛ բարկանար, սուրբ խորանին վրան էր որ քու զավակդ
զոհեցինք...
Ծրագներ կային հոն վառված և սփոռցներ սպիտակ...
Հիմա խաչդ պիտի գծենք... բևեռները հո՛ս բերեք.
Ո՞ւր են մուրճերը, շտապեցե՛ք, որ շապիկը չի չորնա...
Ամբոխեն մին երգ մ'երգելով, աթոռի մը վրա ոտքի,
Աղոթատան պատին վրա, ցնորակոծ մորը առջև,
Ջավկին արյամբը թաթավուն այդ շապիկովն քստմնելի,
Ծափերու մեջ բարձրացավ, Մեղավոր խաչը նկարելու...
Վրաններուն տակ դողահար, թշվառները բոլորը մեկ,
Սկսան իրենց ձեռքերովն, առանց ձայնի, իրենց աչքերը փակել...
Երբ անդին մեկը, ցուցամատը գծված խաչին ուղղելով՝ մորը կըսեր.

— Սունկի եկո՛ւ և աղոթք, ծունկի եկո՛ւ անմիջապես.
Քրիստոսին ի՞նչպես ջրիք, ասկեց ավելի մեծ սրբությո՞ւն,
Սունկի եկո՛ւ, հիմար կին, ծունկի եկո՛ւ զավկիդ առջև և աղոթք.
Այս բևեռներն ու մուրճերը քեզ համար են.
Մենք պատրաստ ենք քեզ խաչելու... հավատաք ունի՞ս դուն
հարությանը...
Իսկ եթե ո՛չ, ծունկի ինկիր զավկիդ առջև, և աղոթք, և աղոթք,
հիմար կին...

ԻՐԵՆՑ ԵՐԳԸ

Ու իրենցմե մին զոչեց՝ արյունախում խուժանն այսպես իր շուրջն
հավաքելով.
— Տեսե՛ք, արդարներու կարավանին սարսափն է այս ահավասի՛կ,
Որ ճոխակյաց և թշնամի քաղաքներուն կատարներեն է որ կանցնի,
Ջորքերուս զենքերը կվառին և տոնի ակռաներնին կկրճտեն.
Ես դիակներ կցանեմ ստրկության երդիքներուն վրա,
Իրենց անհավատի վատութենեն հափշտակած մարմիններս են
ատոնք,
Ասված իսա՛վ որպեսզի անհավատին հովիտները գերեզմաններու
վերածեմ,
Բավ որպեսզի մանուկները սրածեմ և սպիտակ կույսերը
կատաղությամբս թարշամեմ...
Եվ ես այդ օդերուն մեջ կմախքի և կյանքի բախումներ հորինեցի,
Օդերո՛ւն մեջ մոխիրի և թռչող հոգիներու մահապար...
Օդերո՛ւն մեջ արյունի կայլակ և կոուփներու հարված...
Ու ճիչեր բզկտված իրաններու սրտերեն...
Եվ ճարճատյուն հուրերես փշրվող ոսկորներու,
Եվ անօգուտ օգնության աղաղակ, և արցունքի աղբյուրներ...
Եվ օդերուն մեջ, աստղերուն պես, կտրված գլուխներ ես տրսկեցի...
Եվ մա՜հ տարածեցի, անծայրածիր մա՜հ, ինչպես են կարավաններն
դա՛ ամպերուն...
Ի՞նչ հրամանի է որ դուն կոպասես, հրամանը քուկդ է,
Ջա՜ղթ, փշրե՛ և կե՛ր և խմե՛ և պարե՛ և սրբեցի՛ք...

Եվ հազար անգամ զարկ և փշրե եթե բազուկդ խոնջենք չունի,
Անհավատին և օրերը և ոսկիները և արևը մեզն են միայն։
Կյանքին գինին և երազը և անարդար արյունը մեր սեմերուն առջև
թող թափին։
Ուրիշ մը կըսե իր մոլեգին և սպառազեն ձիուն.
— Արշավե՛, կրակե ձիս, արշավե՜ հեղատրոփ.
Մի՛ խնայեր ոչ կուրծքերուն և ո՛չ կյանքին,
Պայտերդ շանթերեն են դարբնվեր, երկնքի շանթերեն,
Ուրեմն մխրճե՛ սմբակներդ ստրուկներու սրտերուն մեջ,
Անոնց ազատության պատրանքները ցրվե՛ քու բոլոր թափովդ,
Եվ թող որ փրփուրները արփիափայլ ագիիդ,
Մեր գործած ավերը և մոխիրները, մեր ետևեն լուսավորեն։
Արշավե՛, ով ձիս, արշավե՛ անխոնջորեն և սրարշավ...
Տե՛ս իմ սուրս, տե՛ս սուրս որ բաշիդ վրան կշողա...
Օրհնության ապարոշս ես իմ գլխիս փաթթեցի...
Իմ սուրս էր որ սև հոգիները հնձելեն...
Ճշմարիտներուն համար երկինքներուն ճամփան բացավ...։
Հրճվե՛, նժույգս, հրճվե՛, ահավասիկ մարմարաթույր լանջերդ
առատ...
Արդարությամբ թափել տված արյունես իսկ կարմրեցավ...։
Ուրիշ մը իր շեփորեն իրեններուն կգոռա...
— Մեզի համար կյանքը՝ անոնց մահը թո՛ղ ըլլա և կյանքն անոնց՝
մեր մահը...
Միակ օրերն են, օրհնյալ օրերն այս՝ միակ օրերը մեզ համար,
Հնչեցուցեք ձեր փողերուն հրամանն արդար,
Կտեսնեմ որ ձեր ճակատները կվառին,
Եվ Տավրոսի հովիտներն անհավատին դիակներովը լեցուն,
Ոռոգվելու համար դեռ արյունի՛, արյունի՛, արյուններու պետք
ունին...։
Ի՜նչ հոգ իշխան, ի՜նչ հոգ մեզի իշխանություն,
Օրենք չի կա։ Ուժն է միայն ստրուկներուն արքան...
Խմեցե՛ք սա բաժակես, թարմագեղ կույսերուն արյունն է այս...։
Վայրկյանը կփախչի, արդարությունն իր ճանապարհը կփոխե...
Խմեցեք՝ սա բաժակը կույսի մը գանգեն այս առավոտ եմ
պատրաստած...
Ի՜նչ է ոսկին, ի՜նչ է արծաթն, ի՜նչ է աղամանդն ասոր քով...

Գինիներու սրբազանը լեցուցած եմ այս գանգին մեջ. խմեցե՛ք
այս բաժակեա։
Ես ծունցա և մեր գյուղին առվակներեն՝ խմեցի զայն անհագուրդ...։
Եվ բարբարոսները՝ սև մտքերեն դարերուն ամենազոր և չարիքեն
կրոնքներու,
Սրերով և կատաղությամբ կոտորեցին՝ անասնորեն ավերեցին,
արմատներեն հնձեցին...
Սարդերուն կյանքը և դաշտերուն բարիքը և անմեղությունն
աշխատանքին...
Ու դեռ իրենց երգը դիակներն իսկ թո՛ղ հողին մեջը սարսեցնե՛...
Բայց միայն ողջերն են անշարժ, սա քարերուն հետ միայն
մարդերը չեն լար, միայն մարդերն անշարժ են...
Մի՞ն գութը անգութ է, միայն գաղափարը տարակուսանք,
միայն հավատքն է հիմարությո՛ւն...։

ԿՈՒՅՐԸ

Ցույլին ծայրովն արյան ծարավ ամբոխին մեջ իր ճամփան
ճեղքելով՝
Սպիտակով պատմուճանված, մեռելաքայլ՝ անոնց առջևը
կանգնեցավ...

— Ինձ նայեցեք, ես օտար չե՛մ, ես ալ ձեզ պես հավատացյալ,
Ութսունամյա ծերունի՝ խավարեն դուրս ես հորիզոն չունեցա...
Փայտիս վրա խարխափելով, աշխարհներ ալ եթե քալեմ,
Ինձի համար կեցած տեղես տարբերություն բնավ չունի։
Ամեն վայելք ձեզ համար է, կրնաք վճռել և պատժել,
Եվ ձեր զոհը ձեր ձեռքովն իսկ դուք կարող եք մորթազերծել...
Ինչ որ օրենքը կհրամայե արդարության այս օրերուն։
Չեմ գիտեր թե ի՞նչպես է կերպարանքն իսկ անհավատին,
Ո՞ր հրեշին, ո՞ր գեռունին, ո՞ր սև օձին կնմանի,
Ո՞րչափ կուզեմ ձեռքերովս գոնե մեռել մը շոշափել...
Մոխիրներուն հոտը առի, հազար ապրի՞ք, օրհնյալներ,
Քալած պահուս մուճակներս հանկա՛րծ հողին կկպչին...
Ես գիտեմ թե ինչ է այդ... արդեն հոտեն կճանչնամ,

Բայց մեղավորին այդ արյունը որչափ տա՞ք է, ճամփաներեն
կարծես կրակ կհոսի...

— Ինծի ըսին թե դուք արդեն անոնց տներն ամբողջովին այրեցիք...
Հետի՛ն դաշտն ալ, հետի՛ն գոմն ալ, խրճիթներուն հետ և գյուղերուն
ու քաղաքին...
Բայց ե՞ս ինչպես վայելեմ, ծնած օրես այս քարացած կոպերովս,
Միայն ականջս է երջանիկ, փառք Աստուծո որ գոնե,
Ութ օր է ի վեր կիմանամ հոգեվարքի, հեծեծանքի աղաղակներն՝
Որ ստապաշտ բերաններեն, ձմռան ծովուն մրրկին պես...
Շնորհիվ ձեր հաղթության, մեր քաղքին մեջ բարձրացավ.
Միայն ականջս է երջանիկ, մնացյալն ինձ ցնորք է...
Որչափ կուզեմ ես ալ ձեզ պես սուր մ'ունենալ և շարժել զայն.
Մանուկներո՞ւն, մե՞րկ կիներո՞ւն, ինձ տարեկից ծերերո՞ւն մեջ,
Որչափ կուզեմ սուր մը շարժել և եղեգի պես հնձել զանոնք...։
Ամեն վայելք ձեզ համար է, միայն ես եմ որ կուրությանս մեջ
լողալով,
Ես ինքզինքս իսկ անկարող եմ գոնե բոպե մը դխտելու։
Աղբյուր չի կա՞ այս կողմերն որ աչքերս քիչ մը լվամ,
Բարկութենես աչվրներս բացվի՛լ կուզեն. տեսնե՛լ կուզեմ,
տեսնե՛լ կուզեմ...
Ո՞ւր եք դիզած դիակները... եթե զավակս այստեղ ըլլար,
Անտարակույս իր ծերունի հորը վրան պիտի գթար,
Բայց անցյալ օր ես զինքը՝ ոտքեն գլուխ զինել տալով,
Օրհնությամբս օծելե ետք՝ սուրբ կռիվին ղրկեցի,
Չի կա՞ ձեր մեջ, հազա՞րներ եք, բարեկամ մը, դրացի մը որ այսօր,
Իր դաշույնը ձեռքիս մեջը դնելով՝ խարտյաշ աղջիկ մը ինձ
հանձներ...
Ես ալ կուզեմ բարիքին մեջ բաժին առնել, կույր ըլլալս պատճառ
մը չէ...
Որ սուրբ օրենքն անարգելով՝ արքայությունես ալ զրկվիմ,
Խարտյաշ աղջիկ մը ինձ բերեք որուն մարմինը թարմ ըլլա,
Աղավնիի մսին նման... իմ ձեռքերս դեռ անվարժ են...
Խարտյաշ աղջիկ մը, լսող չի կա՞, և դաշույն մը աջ ձեռքիս...։

Պահ մը հետո երիտասարդ մը՝ հայ կույսի մը ծամեն բռնած,

Նույր հրեշին ակնածանքով մը մոտենալով, եկավ քսավ...
— Զավակդ իմ բարեկամս է և հայրս ալ քեզ հին ծանոթ,
Թերևս դուն իմ ձայնես կարենաս զիս գուշակել...
Ժամանակով ես Սուրբ գիրքեն ընթերցումնե՛ր ըրած եմ քեզ...
Այս աղջիկն ես ինձ համար ընտրած էի սա մոտակա գյուղերեն,
Բայց հավատքի դեռ չեկավ, ու կմերժե իմ կինս ըլլալ...
Եվ աչքերեն ես կըսոսկամ, կրնա օր մը, գիշեր ատեն, անկողնիս
մեջ զիս խեղդել...
Հազա՜ր ափսոս որ կույր ես, բայց ձեռքերովդ իր մարմինը նախ
շոշափե,
Տե՛ս իր ձևերն մանկամարդի, մտրուկի մը պես գեռ կրակոտ,
Ահավասիկ քու առջևդ է մարգագետնին վրա մերկ,
Ոունկի նստե ճիշտ այդտեղ, ահա՛ այդպես, ծալապատիկ.
Հանգի՞ստ ես հոգ,
Աջ ձեռքդ ինձ երկարե, ահավասի՛կ գաշուլնս, ա՜հ, կտեսնեմ որ
անվարժ ես,
Չէ՛, այդպես չէ որ կբռնեն, բթամատդ բունին վրա,
Քոլոր ուժովը բազուկիդ, մեկ հարվածը ես կհասցամ պիտի բավե...

Երբ մերկ մարմինն աղջկան, ալիքի մը պես կատաղի. մարգին վրա
կփրփրեր...
Հանկարծորեն կարմիր ձեռքեր զայն բռնեցին, որբ կարապին
ճերմակ թռիչն այդ՝ հողին գամող՝
Եվ լաչակովն իր սգավորի, անոր կապույտ նայվածքները կապելով...
Ձեռք մըն ալ եկավ, բերանն վրա, կույսին ճիշերն կոկորդին մեջ
մեռցնելու...
Եվ ծերունին թեզանիքներն վեր շրջելեն՝ խռպոտ ձայնով մը ըսավ.
— Հազար ապրի՛ք։ Կարծեմ թե ես պատրաստ եմ։ Արդյոք
դաշուլնս կդողա՞...
Սիրտը ո՞ւր է, զավակներս, ո՞ր շատի կ'ուզեմ սրտին ուղղել, ո՞ւր է
սիրտն այս աղջկան...

— Սպասե՛, որ ձեռքդ ճշտեմ, ահավասիկ, ձախ ստինքեն քիչ մը
վա՛ր...
. . . . . .

Եվ ատոմածային արյունն անոթիրական հայ աղջկան...

Բոցավառված ծաղիկներու փունջի մը պես,
Երբ իր սրտեն դեպի դեմքը դժոխածին ծերունիին ժայթքեցավ,
Թշվառական ութսունամյան ոտքի ելած՝ ամբոխին մեջ աղաղակեց՝

— Ա՜խ, կարծեմ թե լույսը տեսա՜, ես այսօր իսկ լույսը տեսա...
Կարծես կոպերս կբացվին. մեռա՞վ աղջիկը, շո՛ւտ ըսեք,
Իմ քարացած աչվերներուս սև թաղանթն անոսրացա՜վ...
Ահավասիկ թե ի՞նչ է բարիքը. զավակներս, արդյոք լո՞ւյսն էր որ
տեսա...։

ԹԹԵՆԻՆ

Ու ինչպիսի՜ անողոք մխիթարության մը համար էր որ,
Ձեռքերնուս մեջ, ձեզմե հասած, քանի մը ծրար ցնցոտիներ,
Երկու ընկեր մեռած գյուղե մը, ուրիշ գյուղ մը կգալեինք...
Երբ ճամփուն վրա պատահեցանք ծեր կնոջ մը կորաքամակ,
Որ հացի պարկ մը ուսեն կախ և ցուպի մը վրա հենած
Եկավ մեզի, իր ցավին հետ, դանդաղությամբ մը մոտեցավ։

— Առավոտեն մինչև հիմա մինավորիկ կթափառիմ,
Այրած տանս մոխիրները փնտրելու...
Ութ օր եղավ որ մեր գյուղը դրացիներն ավերեցին,
Իմ մեծ որդիս կռիվին մեջ իբր կտրիճ մեռավ, ըսին.
Բայց վերջին լոգանքն ես ըրի, առվակի մը ջրերեն...
Եվ հին օրերու դրացի, բայց այսօրվան թշնամիներ,
Սերությանս, աղերսանքիս, արցունքներիս գթալով,
Բարեկամներու նման—ալ բարեկամ չէ՛ր մնացեր— ելան եկան,
Նարնջենիի այգիի մը մեջ, օր մը հետո, անոր դիակը թաղելու...
Աչքերուս մեջն ալ արցունք չի մնաց որ՝
Հոգեհատոր թոռնիկիս մահը՝ նստած ես լայի...
Ութ օր է որ խենթի մը պես վրանե վրան կը շրջիմ...
Ո՞չ քուն ունիմ, ո՞չ արթուն, միայն գինքը կերազեմ...

Թո՛ղ աշխարհս քանդեին, բայց Թոռնիկս ինձի մնար...
Թոռանս տեղը զի՛ս մեռցուցեք, զի՛ս մեռցուցեք, գոռացի, լսող
չեղավ...։
Աղաչանքիս լսող չեղավ... և կիսամեռ պատանին...
Դիակներու սահմանված սայլին մեջը նետելով՝
Վանքին ճամփեն հեռացուցին, ա՜խ իր աչքերը, իր աչքերը դեռ
կտեսնեմ...։
Երկար ատեն աչքերը բաց, հոգին տալով, ինձ նայեցավ,
[illegible] դեռ կիմանամ, ճռնչելով կթավալի...
Ջարհուրելի հեծկլտուք մը կնոջ մարմինը ցնցեց,
Բայց իր արցունքը կուլ տալով, ինձ նայելեն, դեռ ըսավ.

— Ա՛լ տուն չի կա, տնվոր չի կա, մահվանս հետ մինակ եմ,
Գնաք էր տեսնել իմ տնակս, ի՞նչ բարիքի օջախ էր...
Գառնուկներուս, հավերուս և աքաղաղիս հետ ճերմակ,
Բոլո՛ր մեկ, բոլո՛ր մեկ գոմին մեջն այրվեցան...
Աշնան համար, ամբարիս մեջ, ափ մը ցորեն ունեի,
Եվ երդիքիս կտուրին տակ մեղուներու երկու փեթակ,
Այս բոլորը, օրվան մը մեջ, մեր գյուղին հետ վառեցին...։
Բուխերիկս, շինված օրեն ամեն առտու կմխար...
Ի՞նչ կուզեին այս բոլորեն, ի՞նչ կուզեին, դուք ըսեք...
Աչ կողմերնիդ նայեցեք, ահավասիկ ավերակը տնակիս.
Տեսե՛ք աղբյուրս որ քարուքանդ պատին տակեն առու կազմած...։
Ծաղիկներուս փոխարեն, մոխիրնե՛րս ջրել կերթա...
Բայց այս բոլորը Թոռնիկիս քով ի՞նչ կարժեն...
Ա՜հ, երկու քարեր տվեք ինձի որ ձեռքս առած գլխիս զարնեմ...
Թթենիս ալ կտրտեր են, մահը գլխիս, թթենիս ալ կտրտեր են.
Ես Թոռանս ծնած օրը տնկած եմ զայն, թթենիս ալ կտրտեր են.
Վա՜խ, իր հիշատակն, հասակին պես աչքիս առջև կբարձրանար,
Յոթը տարին նոր բոլորեց, և ես արդեն իր շուքին տակ..
Գրկիս մեջ Թոռնիկս առած իրեն օրորը կերգեի...
Թթենիս ալ կտրտեր են, հո՛ս նայեցեք, իր արմատեն թթենիս ալ
սղոցեր են...
Դիակներուն սայլը ո՞ւր է, դիակներուն սայլը ո՞ւր է, ես իր
ճռինչը կիմանամ ..
Ես ալ կուզեմ մեջը նետվիլ, Թոռանս քով, սայլին մեջը դեռ տեղ մը
կա՞ր...։

Տեսարանն ահավոր էր։ Թշվառ կինը թթենիին սղոցված ճյուղին
փաթթված...։
Գետին ինկավ...։ Ես չի կրցա իմ հեծեծանքս զսպել...
Մինչ՝ մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհին՝
Ինձ ուղեկից ընկերուհիս՝ մանկան մը պես սկսավ լալ...։

ԽԵՂԴԱՄԱՀ

Ու գետնափոր նկուղին մեջ քառասուն անձ՝
Արջառներու սարսափահար հոտի մը պես,
Որ ավազահողմին հարվածներեն կհալածվի,
Մահվան դիմաց դողահար և մեկզմեկ ջախջախելով՝
Ջորս պատերուն մեջը խավարչտին՝ խռնվեցանք...։
Ապառաժի լռություն մը իր սարսափովը կծանրանար,
Շշուկ չի կար, շնչող չի կար, շրթունքները փակ էին,
Եվ ամենուս նայվածքները քստմնելի և դիվային,
Մեկզմեկու վրա հառած՝ մեկզմեկու մահ կուզեին...։
Արևծագ մը մինչ արևծագն հաջորդ,
Այսպես անձայն և անոթի, գերեզմանի քարերուն պես՝
Մենք մեր մարմնույն վրա, մեր սարսափն երկաթեցինք...
Ու մեր թաքուն կատաղանքն և կարոտը կոտորելու մտածումով՝
Մեզմե շատերն սկսան մոլեգնորեն իրենց մատները կրծոտել...
Եվ ապառաժյա լռությունը անհունին պես մեր աչքերուն
կերկարեր...։
Բայց արևին տակ՝ հազարավոր անասնադեմ բարբարոսներ՝
Բերրի դաշտերն ու գյուղերն ավերելե դեռ չի հոգնած,
Մեր թաքստոցը փնտրելով՝ մեր մահը դեռ կուզեին...։
Եվ գետնափորին մութերուն մեջը մահացնոր՝
Մենք սարսափո՛վ, սարսափո՛վ, սարսափո՛վ էր որ լսեցինք,
Հրազենի, նիզակներու, սվիններու և սուրերու
Կայծակնապար շառաչյունն որ արևին տակ կվառեր...
Ու դիակնե՛ր, դիակնե՛ր մեր նկուղին երդիքներուն վրա,
Արմատախիլ ծառերու պես, սրսփանքով վար կիյնային,

Հոգեվարքի հանդյուններ, մերթ ամեհի և մերթ խուլ՝
Պատերեն ներս, նկուղին մեջ կուգային մեզ ցնորել։
Եվ հողապատ ձեղունեն, որ մեր վրան դադաղի մը պես կփակվեր,
Վերը հոսող տաք արյունը հորդառատ՝ ծակտիքներեն վար
սուզվելով...

Սկսավ ալ կաթի՛լ կաթի՛լ մեր դեմքերուն վրան ծորիլ...։
Բայց նորածին մը նորեն սուր ճիչով մը սկսավ լալ,
Մեր դավաճանն անտարակույս այդ անմեղը պիտի ըլլար,
Որոշման մը, եղեռնի մը, ոճիրի մը հույսը միայն կար մեզի,
Երբ իր մայրն հեծեծանքով մը, ալ վերջապես փսփսաց...

— Աստված մեզի թո՛ղ գթա, ստինքներս պարապ են,
Ա՛լ կաթիլ մը կաթ չունիմ, մինչև արյունս ծծել տվի...։
Ալ՛ կաթիլ մը կաթ չունիմ, ինչ որ կուզեք վճռեցե՛ք...

— Պետք է խեղդե՛լ, ըսավ մեկը իր բազուկն բարկությամբ մը
երկարելով,
— Պետք է խեղդե՛լ... փսփսացինք քառասուն անձ նույն ատեն...
— Նախ և առաջ զիս խեղդեցեք և հետո իմ զավակս...
— Ձայնը առին, տանիքն արդեն բրիչներով կփորեն...
— Բոլորս մեկ մատնվեցանք, արդեն տանիքը կփորեն...
Արդեն հողը վար կթափի, լույսը արդեն կերևա...
— Կպաղատի՛մ, խեղդեցե՛ք զիս, ահավասիկ իմ կոկորդս և
կոկորդն իմ զավակիս...

Ու հայ մայրն իր զգին հետ՝ զավկին վիզը մութին մեջեն մեզ
երկարեց...

Խավարին մեջ երկու բազուկ օձերու պես գալարվելեն,
Մանկան վիզը գտնելով՝ ահեղությամբ մը զայն սեղմեցին...։
Լռությունն այս անգամ նկուղին մեջ մրրիկ մ'էր։
Ես բոպե մը կարծեցի որ բոլորս մեկ արժանապես մահացանք...։
Պահ մը հետո խաբված մարդու հայհոյներով տղմաթաթավ,
Զգացինք որ արյունախում խուժանը հուսահատած, կհեռանար...։
Փրկությո՞ւն էր մեզի համար։ Ստրուկները կփրկվի՞ն։ Այսպե՞ս
պետք էր փրկվիլ...

Ու ամեն օր այդ խեղճ կինը կիսամերկ՝ ճամփաներուն վրա կեցած,
Անծանոթի՛ն, անցորդի՛ն, թշնամի՛ն և օտարի՛ն
Քղանցքներուն փաթթվելով խենթի մը պես կաղաչակե...

— Սա՛ ձեռքերս կտեսնե՞ք, կտեսնե՞ք սա ձեռքերս,
Ես էի որ ասոնցմով, նկուղին մեջ, իմ նորածինս խեղդեցի...
Հավատացե՛ք, ես էի որ զայն խեղդեցի, ի՞նչ անարդար մարդեր եք։
Դուք ալ գոնե զի՛ս խեղդեցեք, իմ ձեռքերս անզոր են.
Ես էի որ նորածինս նկուղին մեջ բոլոր ուժովս խեղդեցի...
Սիրտ չունի՞ք դուք, խեղդեցեք զիս, իմ ձեռքերս ա՛լ ուժ չունին...։

ՀԱՂԹԱՆԱԿ ՄԸ

— Քաղաքին մուտքն այս առավոտ պետք է բանալ,
Պատվարներն ու պատնեշներն ե՛տ շրջելով,
Պետք է բոլոր սգավորներն, այրիներն ու որբերն աբտաավաթոր,
Մեր սերերուն և սուրերուն ապաստանին...
Պետք է քալել դեռ գյուղե գյուղ, փլատակե փլատակ,
Ու եղբայրական ձեռքերով՝ ժպիտներով հուսատու,
Ի մի խմբել անօգնական գյուղացիներն ցավակոծ,
Կռվի կոչել և հավատքի մը զորությամբը զրահել զանոնք.
Կյանքը սիրելն արդեն հաղթանակին միակ քայլն է։
Բոլոր անոնք որոնք չունին շեկ կտոր մը երկաթի,
Կամ բազուկներ բարկաշարժ կատաղությամբ զարնելու,
Թո՛ղ խումբ առ խումբ մեր սեմերեն ներս մտնեն...
Ջոք-Մարզվանն հարուստ է կրակներով և կտրիճով...,
Պատվարներն ու պատնեշներն ե՛տ շրջեցե՛ք...
Ահավասիկ փախստականներն մահատեսիլ՝ կհասնին...
Ա՜հ, ի՞նչ աղիողորմ ու ցավագին կարավան,
Մարմիններ կան որ թև չունին...
Եվ իրաններ, առանց ծունկի, փորի վրա զարհուրանքով մը կսողան...
Եվ ջախջախված ծնոտներով ծերունիներ «Օգնությո՛ւն մեզ»
կաղաղակեն,
Անտիրական հարյուր գյուղե տեսեք ի՞նչպես մեզ կհասնին...
Տեսե՛ք հարսներն ու կույսերը հզումներե ամոթահար...
Տեսե՛ք մայրերն, որոնց անքայլ որդիներն մատղաշ՝
Սուրի դժխեմ հարվածներով իրենց ծունկին վրան իսկ՝

Կացիններով կոտորվեցան...
Բոլորդ մեկ ներս մտեք, դեռ թշնամին չի հասած,
Բայց արցունքներն այս օրերուն համար չեն...
Պետք է զինվիք ամեն բանով, կայծքարերով կամ բահերով.
Գերանդին ալ, բրիչն ալ և երկաթ կոթն արորին,
Կրնան զմեզ հաղթանակին մոտեցնել։
Ես չեմ ուզեր լացի ձայներ հոս իմանալ,
Հուսահատներն թող հանդարտին և համբույրնե՛ր խիզախներուն...
Բավակա՛ն է որչափ որ մուրացիկներու նման,
Այս բոլորին առջևը, ձեռքերնիս բաց, ծնրադիր,
Պաղատեցանք, սիրտ կոծեցինք մեր աչքերը փորելեն...։
Ինչ որ տեսանք այս օրերս, դարերն իսկ չեն տեսած,
Եվ ո՛չ ալ իսկ պատմությունն հին բարբարոս օրերու,
Դեռ չէ կրցեր արյունծարավ այս ահավոր մարդկության
Ճակտին վրա ու հոգվույն մեջ
Այսչափ արյո՛ւն, այսչափ ոսկո՛ր հեղեղել...
Մեր վճիռը վճիռ է. եղբայրության մեր կոչերը սրտառատ,
Թշնամիներն քրքիջներով ընդունեցին...։
Այսուհետև, հավատացե՛ք. մեր վճիռը վճիռ է.
Երկու հարյուր երիտասարդ ձեր վշտերովն սպառազեն,
Ձեր բոլորին ճակատագիրը մահեն ի կյա՛նք պիտի ուղղեն,
Զոք-Մարզվանն յոթն օրե ի վեր շարունակ,
Առանց ջուրի սև ծարավե մը կծյուրեր...
Աղբյուրները ափերնուս մեջ Հայ արյունը հոսեցուցին.
Եվ նարնջենիի դաշտերեն, կայծակներուն պես փախչող,
Առվակներուն ադամանդյա ուղղությունն
Թշնամիներն դեպ արևելք դարձուցին...։
Բայց կռիվով մը մենք խլեցինք վերջապես գետի մը վազքեն
հորդառատ,
Առու մը ջուր, որուն վրա հազարավոր պապակածներ,
Իրենց գլուխը հակած, տեսե՛ք ի՞նչպես անկից կըմպեն...։
Յոթն օր էր որ սա՛ ծառերուն տերևները ծծելեն,
Մեր լեզուները քիմքերնուս հետ արյունեցան...
Յո՛թն օր է որ չոր հացի տեղ մոխրեն շաղված խմոր կերանք,
Յո՛թն օր է որ արշալույսեն մինչ իրիկուն և վերջալույսեն առավոտ,
Պատնեշներուն վրա ոտքի՝ չորս կողմերեն թշնամիներն ե՛ւ
մղեցինք,

Որովհետև և ո՛չ մեկ կոչ եղբայրության, ո՛չ մեկ հրավեր
զինադադարի,
Դեռ չի կրցան այս դժբախտներուն երկաթ մրրիկը կասեցնել...։
Ու մարմինը հաշտության պատգամատար մեր՝ ռազմիկին,
Դաշույններով կատաղությամբ խոցոտված,
Ու խաղաղության իր ճերմակ դրոշն իբրև պատանք,
Առավոտ մը իբր ընծա, ետ ղրկեցին...։
Յո՛թն օր է որ մոլեգնորեն գրոհ կուտան մեր վրա,
Ու միմիայն անգիտակից և ողբալի զոհեր տալով կնահանջեն...
Բայց ի՞նչ է կա՛ն քր և կորովը այդ վատոգի ոհմակին,
Որ Գաղափարի և Գեղեցկության համար չէ՛ որ կշարժի,
Այս երկբայելի և չի հասկցված կրոնքներու ժանտին համար
կմոնչե
Կամ զողության, կողոպուտի և ավերի իր վաղանցուկ հույսերուն...։

Բոլո՛ր պղինձն, բոլոր կապարն, բոլոր թիթեղն և արույրն այս
քաղաքին
Հնոցներու մեջ հրավառ, մեր կիներն քաջարի, գնդակներու,
սվիններու վերածեցին։
Ամեն ոք իր զենքերն կրակի պես թո՛ղ ձեռքն առնե,
Ահավասիկ որ ծովուն պես դեպի զմեզ կալեծփին,
Մեր բոպեները դարեր կարժեն, դարեր կարժեն։
Կրակեցե՛ք, կրակեցե՛ք, հեռուներեն Հույսը մեզի կնայի...
Ինչպես ըսին. այս առավոտ իրենց թիվն է հիսուն հազար...
Պատնեշները բարձրացեք և հարավեն և հյուսիսեն,
Տարերային տարափներով՝ կրակեցե՛ք՝ կրակեցեք անխնա, այլևս
մեր խիզճն հանդարտ է.
Մեր հոգիներն ըմբոստ՝ մեր հայրենիքն հողակույտ, մեր ապագան
աղիտավոր,
Կրակեցե՛ք, ձեր զոհերն առաքինի և աշխատասիրաշտ քաղքցիները
չեն երբե՛ք։
Այլ ցեցե՛րն են և ցեխակույտն՝ այսչափ ատեն մեր երազած
Եղբայրության...։
Ապարոշի՞ն ուղղեցե՛ք, այն որ ձեռքը դրոշ մ'ունի և ձիու մը վրա
բազմած,
Քարոզներովն իր կարմիր՝ խեղճ խուժանը խենթեցուց...։

Ապարոշի՜ն, ապարոշի՜ն... ահավասի՛կ որ ուզեղն իր ուսին վրա
կհոսի.
Դրոշին հետ իր դիակն երիվարեն վար ինկավ...
Կրակեցե՛ք որ խեղճ խուժանը նահանջե, կրակեցեք մինչև որ՝
Ծովուն վրա քնացող ռազմանավերն օտար,
Արդարության անդնդախոր իրենց քունեն թերևս բոպե մը
արթննան...։
Կրակեցե՛ք, իրենց խուճապն սկսավ, դիակները կոխոտելով
կփախչին...
Կրակեցե՛ք, կրակեցե՛ք... բայց... բայց... ես արդեն կմեռնիմ...
Ես իմ սրտես զարնվեցա... իմ մարմինս ձեզի պատնեշ...
Հաղթանակը մեզի է, կրակեցե՛ք, Աստեղաբիբ Եղբայրներ...։

ԲՆՈՒԹՅԱՆ ԼԱՅԸ

(Սիհուն)

Քե՛զ, չարազոր օրենքներու և անչափելի անարդարության
այսօրվան մարդկություն,
Եվ քե՛զ, մարդկություն՝ որ եղբայրության ապառնիին տիրացող
ոսկեղեն հսկան պիտի ըլլաս,
Ձեր երկուքին համար, ես՝ արևելքներու և արևներու իդեապաշտ
և ըմբոստ քնարավորս,
Ցավակոծ ցեղիս բարկության բոցը և իր ավերված աշխատանքին
մրրկե բողոքը պիտի բերեմ...։
Բայց ի՞նչ արցունքով արժան էր իմ սոսկումներու նոր սուգս
արտասվել,
Ի՞նչ բառերով և ի՞նչ մուրճերով ատելությանցս ու սիրույս
աշտարակները կռանել,
Ի՞նչ պատանքներով և որպիսի՜ եղերական քողերով այսուհետև
մեռելվորի պես գիշերվել,
Ո՞ր գաղափարին երգերը շափորել, ո՞ր պատգամը սանձարձակել
կամ ո՞ր քարոզը կարմիր...

Ա՜հ, տառապանքեդ խենթեցած ժողովուրդ, այսօր իմ տաղանդիս
աղքատությունն ինձ ներես,
Վասնզի ապաժառանգ քնարս, Բնության Լացը մարդկային
չարիքին վրա կարենալ երգելու համար,
Իր լարերուն վրա ո՛չ Անոր իմաստության նշույլն ունի, ո՛չ անեծքին
հուրը և ո՛չ քաղցրությունն իր գութին,
Եվ մոլ՛ի ըրե հոգիի մը այն ձայնին՝ որ սարսափե ի սարսափ
շրջելով ինծի խոսեցավ...
— Միհո՜ւն, արյունե և երկաթե ալիքներուդ վրան հազարավոր
մարմիններ կտեսնեմ....
Կան՝ որ ապառաժներուդ հանդեպ կփշրվին, կան՝ մեկզմեկ
գերեզմանելով կընթանան,
Կան՝ որ կարոտեն հոգեդարձ կընեն. կան՝ որ նույնիսկ մեռնիլ չեն
կարող,
Կան՝ որ արգավանդ քաղաքներուն հետ այրվող սիրեցյալներու
սրբազան սերը կաղաղակեն,
Կան՝ որ մեռցնելե առաջ վատորեն մեռնելու անքավելի չարիքեն
կտառապին ..
Կիսամեռներ կան որ իրենց հետ թավալող մեռյալներեն՝
ձեռնատարած մա՛հ կաղերսեն...։
Եվ մահացվածներ՝ որ սև մահեն կենդանություն և լո՛ւյս
կպաղատին...։
Կան՝ որ եղերականորեն հեծեծելու դեռ շարաշուք կարողությունն
ունին...
Եվ հոգիներ կան հովերուն հետ վայող և հովեր կան հոգիներուն
վրա մայրերուն պես արտասվող...։
Կան՝ որ խաստացված Հույսին Հայելիներուն մեջ գերեզմաններ
և մոխիրներ միայն տեսան...։
Կան՝ որ Եղբայրության հուզիչ հեռանկարին առջև մտածումով
ծերացիր՝ դեռ կաղթեն...
Կան՝ որ Ազատության չքնաղ ծաղիկը հազիվ համբուրեցին և
կուզեին դեռ հավերժորեն համբուրել...
Կան՝ որ Հավասարության ադամանդե բաժակեն իրենք իրենց
արյունն իսկ ըմպեցին...
Եվ շուրերեն ձեռքեր կբարձրանան թռչող թռչունին, թափող տերևին,
սուրացող հոգմին կառչելու...

Նայվածքներ կան որ արևին ճաճանչեն, անգութ կապույտեն,
արյունլվա Հույսեն դեռ կհուսան...
Կան՝ որ ալիքներուն հետ շրջելով գետափի ավազին, ճերմակ
խիճերուն կամ դողդոջ խոտին կուզեն կապվիլ,
Կան՝ որ իրենց դյուղին և գութանին հրկիզվիլը հովերուն հետ
հասնող մոխիրին հոտեն կճանչնան...։
Կան՝ որ իրենց հերկած դաշտերուն, արդասաբեր այգիներուն
փախուստը նշմարելով մահվան մեջ իսկ կխենթանան...
Մայրեր կան որ իրենց նորածիններուն խանձարուրը սրբության մը
հանգույն սրտներնուն վրա սեղմած՝
Անոնց հեռավոր և կորուսյալ հայրերը կկանչեն, իրենց կյանքին
մաքուր պտուղը նորեն կյանքին դարձնելու հույսով...։
Կան՝ որ թաքուն գորովներ կհեծեծեն՝ և անկարելի սերեր կան որ
դեռ երջանկության հետ կարծես կխոսին...։
Կան՝ որ գարնան առավոտներու ծաղկեպատ գերեզմաններուն
կուզեին հասնիլ...
Կան՝ որ չոր տախտակե դագաղի մը վրա հիշատակի համար
նետված ափ մը հողը կսպասեն...
Կան՝ մեկզմեկու նայվածքի մեջ ակնապիշ և անթարթ իրենք իրենց
մահը կդիտեն...։
Կան՝ որոնց փորված աչքերին հրաշեկ արյունը շատրվաններու պես
վազաժամ աստղերուն կժայթքի...
Կտրված գլուխներ կան որ ահավոր մոգականությամբ մը իրենք
իրենց մարմինը կփնտրեն...։
Բազմություններ կան որ իրենցմե խուսափող աստվածային
Ցամաքին կուզեն հպիլ...։
Ուրիշներ օգնությո՞ւն կհայցեն անշարժ լեռներեն և խոսքեր
կուղղեն աշխարհակալ մարդկության,
Կան՝ որ շառաչող ալիքներուն հետ կթավալին մեկզմեկու վզի
փաթթված մահվան մեջ դեռ ղիրար պաշտելով,
Գթության ձեռքերեն փակվիլ տենչացող, բայց չփակվող բաց
նայվածքներ կան անհամար,
Եվ այս բոլորին վրա ալիքները աշխատասեր քաղաքներու
ռճիրներեն նոր մեռելներ դեռ կբերեն,
Եվ Սիհունը—ո՞վ սարսափ—ահավասի՛կ որ արյունին հոսանքներեն
կսկսի այլևս թանձրանալ...

1909

Եվ զոհերուն հեծեծանքը, աղաղակը և աղերսը հողեն դեպի երկինք
փոթորկորեն ամբարձող անտառի մը կնմանի...։
Բայց դեռ մայրեր կան՝ որ դաժան ժպիտով մը իրենց ազատված
զավակներուն կմտածեն,
Անոնց ստեղծագործ կորովին, ամենաժաման կամքին և խոստումին
և մաքուր երդումին...
Մինչդեռ մահը անոնց աչքերուն մեջ իր վերջնական մութը
կխտացնե,
Հայ մայրերը հետին անգամ մը սև արեգակին և ապագային
դաժանորեն ժպտելով՝
Այլևս ալիքներուն հետ կմեռնին, Գաղափարի բոլոր որդիներուն
պայծառ և պատրաստ կամքին մտածելով...։

1909

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՎԵՐ

ՏԱՄՆԵՐԿՈՒ ԿՈՉ ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅՐԸ ՀՈԳԵՎԱՐՔ

«— Վերջին նամակն ինծի տվեք որ արցունքներս սրբե՛մ...։
Ա՜հ, ուրկի՞ց է որ կբխիք, ո՞ր անդունդեն, ո՞ր աղբյուրեն...
Դո՜ւք մարգարտի ու մարմարի հորդահոսան փշրանքնե՜ր,
Ալ աչքերուս խեղճ կոպերն խոցոտեցան,
Ամբողջ կյա՜նքս, ամբողջ արև՜ս, ամբողջ ուղե՜ղս այսօր լացի...
Վերջին նամակն ինծի տվեք... որ աչքերս ձեզմե ծածկեմ...։
Մթնշաղի հավախոսին ո՞վ արթուն է ձեր մեջեն.
Ա՜հ, արշալույսին բարութի՜ւնը, բարութիւնն այս առավոտ,
Սոխակները սիրահարի պես՝ բոլորը մեկ կուլային,
Ու վանդակին կապույտ կաքավը ձյունին կարոտը կերգեր...։
Բայց ինչո՞ւ դեռ չի բերիք մեր պարտեզին վարդերեն,
Որդուս ձեռքովը տնկված վարդատունկեն քանի մը վա՜րդ...
Ու թերթիկներն այդ շուշան ճակտիս վրան թափեցե՜ք.
Գլխուս վրա՜ն, մազերո՜ւս մեջ, սրտիս վրան սրսկեցե՜ք.
Ա՜հ, կարծես թե հրեշտակի փետուրներ են որ կթափին...
Ի՜նչ սրբազան բուրմունք է այս, արքայության հոտը կառնեմ.
Սրսկեցե՜ք, սրսկեցե՜ք, ալ պատանքի պետք չունիմ...։
Սրսկեցե՜ք, ես իր հոգին ու հասակը հստակությամբ կտեսնեմ...
Ահավասիկ առջևս է, դիս չե՞ս ճանչնար, մոտեցիր, իմ սիրեցյալ զավակս,
Ես քու հա՜յրդ եմ, բազուկներուս մեջը նետվե, բերանդ ինձ մոտեցո՜ւր,

Քու ծարավեդ ծերացեր եմ, ես քու հայրդ եմ մահաշերմես դողդոջուն...

. . . . . .

Ա՜հ, այդ վարդերեն սրսկեցե՜ք, ի՜նչ երջանիկ երազ էր այս.
Շունչս որչափ կարճ է այսօր, բայց ո՞վ կրնա մրրկին մեջը շնչել...
Կռունկները կռնչելով ի՜նչպես անցան հովերուն հետ,
Մեր երդիքին վրայեն ի՜նչպես անցան, առանց խաբրի՜կ մը բերելու,
Բայց ես գիտեմ որ կարավանն այս իրիկուն կհասնի...
Երազիս մեջ ես տեսա, իր մետաքսե վարշամակը գլխին էր,
Ձեր բոլորիդ համար ընծաներու երկու բեռներ,
Ու կարմիր ձին հանգարտությամբ սպիտակին կհետևեր...։
Ա՜հ, սա՛ պատուհանը բացեք, սա՛ փեղկերը ե՛տ շրջեցեք,
Լուսաղբյուրին ճանապարհեն ահավասիկ կարավանը կերկարի...
Զորիներուն բոժոժի ձայնն իբր ավետիս կհնչե,
Բայց մայրամուտն ալ մոտեցավ, բոլոր՝ամպերն ալ սկսան կարմրիլ,
Արեգակն արյան նման մեր դաշտերը կոռոգե...
Թռչուններն ալ բոլորը մեկ, մեռելներու պես լռեցին...
Ու սև գիշերն սկսավ, անապատի ավազին պես վա՛ր հոսի՛լ...։
Ա՜հ, աչվրներուս հետին լույսը կարծես ինձմե կխլեն...
Ճրագները վառեցե՜ք, ճրագները վառեցեք... ինչո՞ւ կուլաք դուք այսպես,
Պանդխտության վերջին օրն է... կարավանը կմոտենա...
Զորիներուն բոժոժին ձայնը կիմանամ... սա փեղկերը նորեն բացե՜ք...։
Ինչո՞ւ կուլաք, շունչս սկսավ սպառիլ։ Մրրի՜կ կա, մրրի՜կ...
Բոլոր ծառերն սկսան, կմախքի պես, մեկզմեկու դեմ փշրվի՜լ...
Ոտքի ելե՜ք բոլորդ մեկ, ոտքի ելեք, դիմավորել չե՞ք երթար...
Կարավանը մոտեցեր է։ Ինչո՞ւ անշարժ նստեր եք,
«Օգնությո՜ւն մեզ, օգնությո՜ւն մեզ, օգնությո՜ւն մեզ» կաղաղակեն...
Եթե դիակս ալ ըլլա, չորսերնիդ մեկ, ձեր ուսերուն վրան առած,
Եթե դիակս ալ ըլլա, պետք է որդիս, այս իրիկուն, աչքերս բա՜ց դիմավորեմ...»

. . . . . .

ՀԱՐՍԻՆ ԵՐԱԶԸ

«— Ու տարիներով մինավորիկ՝ պատուհանիս առջև նստած՝
Ես քու ճամփուդ կնայիմ, իմ սրտահատոր հեռավորս,
Ու այս գրովս կուզեմ քեզի իմ մարմինիս ու մտքերուս
Անտեր սարսուռն անգամ մըն ալ երգելու...
Ա՜հ մեկնած օրվանդ արեգակը չե՞ս հիշեր,
Արցունքիս չափ առատ էր և համբույրիս չափ հրաշո՜ւնչ,
Խոստումներուդ չափ բարի՜ էր և քու դարձիդ չափ արագ,
Մեկնած օրվանդ արեգակը և աղոթքներս չե՞ս հիշեր,
Երբ ջրին կուժն ես քու ձիուդ շուքին վրան սրսկեցի...
Որպեսզի քու առջևդ ծովերն ե՛տ դառնային՝
Եվ ցամաքը ոտքերուդ տակը ծաղկոտեր...։
Ա՜հ, մեկնած օրվանդ արեգակը սև՜ գիշերի փոխվեցավ...
Ու սպասումիս արցունքները տարիներու տարափին տակ,
Աչվրներես, այտիս վրան, աստղերու պես հոսելով
Անոնց վարդերն ահավասիկ որ այրեցի՜ն...։
Ա՜լ կբավե, քու ծարավիդ ես իմ ծամերս փե՜տտել կուզեմ,
Քու բաժակիդ գինիեն դեռ գինո՜վ եմ...
Ու բացակա պերճ հասակիդ սգավոր։
Հիշատակիդ ետևեն հովերուն պես կհառաչեմ,
Եվ ժամուն դուռը ծնկվըներս խոցոտելեն,
Արևմուտքին դառնալով՝ կպաղատիմ...

— Ծովերն օր մը ծայրե ի ծայր թո՜ղ ցամաքին,
Ու ակնթարթ մը երկու աշխարհը թո՜ղ իրարու մոտենան...
Այնուհետև արքայության ու արևի ա՜լ պետք չունիմ—.
Վերադարձի՜ր մեր տնակին սեմին վրա, ես քու ճամփուդ կսպասեմ,
Ձեռքս պարապ քու ձեռքերեդ, սևերովս քե՜զ կերազեմ...
Վերադարձի՜ր, մեր պարտեզին պտուղներուն պես անուշ,
Սրտիս սերը քեզի համար իր համբույրը կպահե։
Ա՜հ, իմ կաթնաթույր կողերս դեռ մայրություն չի ճանչցան...
Եվ հարսանեկան իմ ոսկեթել քողերովս
Դեռ չի կրցա խանձարուր մը զարդարել...
Ու օրորանի մը առջև նստած դեռ չերգեցի՜, դեռ չերգեցի՜
Հայ մայրերուն մաքուր օրորն երկնային...։

Վերադարձիր, ա՜լ կարոտս կատար չունի,
Երբ սև գիշերն այսպե՜ս կուգա իր պատանքները քակել..
Երբ բուերը բակին մեջը իրարու դեմ կվայեն,
Երբ հեծեծանքս կհատնի և արցունքներս կարյունին...
Լքված հարսի երազներուս մեջ մենավոր,
Ես իմ ձեռքովս, դևի մը պես, ալ կսկսիմ,
Գլխուս վրան՝ իմ մոտավոր գերեզմանիս հողը մաղե՜լ...—»։

ԵՂԲԱՅՐՆ ԻՐ ԵՂԲՈՐԸ

«Ներե՜, եղբայր, որ այսօր և քու սիրտդ և հոգիդ,
Մահվան գուժով մը փլատակի մը վերածեմ...
Մեր մայրը մեռավ այս իրիկուն,
Իր աչքերը պատուհանին դեմ սևեռուն,
Ես էի որ, ո՜վ սարսա՜փ, քիչ մը առաջ, ձեռքերովս որդիական,
Մեր մորկանը երկու աչքերը հուսավառ,
Քու ճանապարհեդ հեռավոր, դեպի մահը փակեցի...
Բայց մինչև իր շունչը վերջին,
Հետին սարսուռն հոգեվարքի...
Իր ահավոր գալարումը կյանքեն ի մահ,
Իր թռիչքն ատելության այս աստղերեն,
Դեպի ունայնը մթին...
Քու աչքերուդ, քու հասակիդ ի խնդիր,
Այս իրիկվան արեգակին մոխիրին հետ՝
Իր աչքերը մայրամուտին լույսերովը թաթավուն,
Քեզ տեսնելով, քեզ հուսալով, քեզ օրհնելով խավարեցան...։
Եվ ես թշվառս՝ ես եղբայրդ՝ իբր զավակ,
Ես քու տեղդ, խելակորույս, այդ աչքերն փակեցի...

Եվ սնարին վրա դրի,
Գառնուկներուս ճերմակ ճարպեն,
Իր ձեռքերովն անցյալ տարի պատրաստված
Երկու մոմեր և դավաճա՜ն և դողահա՜ր,
Եվ խնկամանը որով Ծնունդը կտոնեինք,
Իր արծաթե մազերուն դեմ, գլխուն վրա,

Ահավասիկ որ կծխա՞...։
Ա՜հ, կխեղդվի՞մ, կխեղդվի՞մ,
Տունն ամբողջ մահվան բույրովն ամպոտեցա՜ւ...
Տունն ամբողջ տիեզերք մ'է մեռելական,
Ուր միմիայն իմ հոգիս կա կենդանի,
Որ դիակի մը վրան՝ ինկած,
Բարձունքներու մրրկին պես կհեծեծե...։
Մինակ եմ ես... տունն ամբողջ ամպոտած է...
Մահվան բույրովն զարհուրելի...

Կես գիշեր է և սոսկումիս մեջ կգրեմ,
Երբ դրացի, սև լաչակով սգավոր,
Քանի մը կին լացի եկան...
Անոնցմե մին, այրի կին մը գառնադեմ,
Մեր մեյալ մորն անշունչ մարմույն վրա ինկած՝
Կտավի մը կտորեն, լույսովն երկու մոմերուն...
Անոր պատանքը կշափե...
Եվ ժրաջան երկու հարսներ տրտմաբեն,
Մեր մորկանը վերջին լոգանքը տալու համար,
Շտապելով՝ մեր աղբյուրեն ջուր կկրեն...։

Վաղն առավոտ ուռենիեն որ քու ձեռքդ է բուսեր,
Երկու ճյուղեր պիտի կտրեմ...
Արտասուքիդ իբր հիշատակ, հողակույտին տանելու...։
Եվ ես թշվառս՝ գերեզմաննոցեն վաղն առավոտ պիտի դառնամ
Հին օրերու մեր այս թափո՞ւր տնակին...
Երկու դռներն իբր դապաղ,
Ես իմ վրա՞ս, ես իմ վրա՞ս, խնձիի մը պես փակիլու...—։

ՄՈՐ ՄԸ ԵՐԱԶԸ

«Երազս քեզ այսօր գրեմ...։ Մեռելոցի կես գիշերն էր...։
Չորս եղբայրներդ հանկարծակի՝ իմ առջևս ծունկի ինկան...
Ո՛չ պատանք կար իրենց վրա և ոչ ոք հետը մեր,

Խավարին մեջ սրսփալով, և աչքերնին մեկ մեկ անգունք,
Եկան իրենց մորկանն առջև հիշատակներ արտասվելու...»։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու արշալո՜ւյս...
Այսօր նորեն չորսերնիս մեկ, մեր հողերեն դուրս ելած՝
Մրրկին հետ, քեզի եկանք, տանդ դռնակը բախելու...
Մի՛ սարսափիր, օտարներ չենք, և մրափիդ մեջ մենավոր,
Սպասե որ մեռելոցի իրիկունով գոնե քու դեմքդ գիտենք։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու սրբությո՜ւն...
Հողին տակեն, մեր խեղճ գյուղին գերեզմաննոց,
Ես քեզ համար իմ պրտիկես սիրո ծաղիկը ծաղկեցուցի...։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու քաջությո՜ւն...
Ես քեզ համար իմ աչքերես, երկու սափո՜ր արտասուքի...։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու երջանկությո՜ւն...
Ես քեզ համար իմ հոգիես հույսի վարդեր հրավառ։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու հերոսական արիությո՜ւն...
Իսկ ես ալ իմ կրծոսկրես պաշտպանության երկու զրա՜հ...։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու դու աննման գեղեցկությո՜ւն,
Ո՞ր լեսափ խորշում ճակտիդ վրան, ըսավ եղբայրդ երեց...

Ի՜նչպես կրնաս երդիքիդ տակ միս-մենակդ տառապիլ...
Յոթը տարի, յոթն անգամ տանդ դռնակը ծեծեցինք,
Բայց այս գիշեր միայն բաց էր... ո՞ր ճամփորդին կսպասես...։
Տե՛ս հյուղակդ դագաղներու կույտի մը պես կշարժի...
Տերևները, տե՛ս, կթափին, ծառերն ի վար, մրրկեն,
Առվակին մեջ աղավնիներն անմեղությամբ կմեռնին,
Ու սև օձերն, սեմին վրա, մեր շոր արյունը դեռ կլիզեն...։
Պարտեզիդ մեջ ո՜չ կանաչ կա, ո՜չ պտուղ կա, ո՜չ տատասկ...
Չորսերնիս մեկ, ամբողջ տնակը ժուռ եկանք,
Մեր կոտրած սուրերն, ի տես մեզի, անգամ մըն ալ շոշշոշացին...։
Մառանն արդեն գատարկ էր... և գոմին մեջ՝
Ճերմակ գառնուկ մը, մայելով, իր կճղակները կկրծեր...։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու առատությո՜ւն,
Ի՜նչպես կապրիս, ի՜նչպես կապրիս տնակիդ մեջը թափո՜ւր։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու գուրգուրա՜նք, հին օրերու գթությո՜ւն,
Ի՜նչպես կապրիս, ի՜նչպես կապրիս տնակիդ մեջը թափո՜ւր։

Չորսերնին մեկ լռեցին... բայց անունդ երբ ես տվի՝
Երազիս մեջ՝ մրրկին պես իմ արձակած հեծեծանքես,
Չորսերնին մեկ, գլուխնին կախ, խենթերու պես սկսան լալ...։
Բայց ձեր եղբայրը դեռ ողջ է, ան որ ձեր մահը չի տեսավ,
Ձեր փոքր եղբայրը դեռ ողջ է, անոր համար միայն կապրիմ...։
Այս խոսքերս որ լսեցին, չորսերնին մեկ իրենց կողերը կոտրտելով,
Մեռելներու սև արցունքն ահավոր, աչքերուս մեջ թափելեն՝
— Եղբա՜յր մ'ունինք, եղբա՜յր մ'ունինք, մենք կյանքին մեջ եղբա՜յր մ'ունինք,
Մայրի՜կ, մայրի՜կ... նոր օրերո՜ւ, նոր հույսերո՜ւ թշվառություն.
Ի՜նչպես այլևս մենք մեր հողին վերադառնանք, ի՜նչպես դառնանք...։

ԿԱՂԱՆԴԻ ԻՐԻԿՈՒՆ

Թախիծներու մեջ թաղված հի՜ն օրերու իրիկուն,
Անբուժելի կարոտներովս՝ կվերհիշեմ զքեզ այսօր։
Ձյունն երկինքեն շուշանի պես անդորրությամբ կթորա,
Դեռ իմ ցեղիս արյուններեն և ավերեն չի կարմրած հողին վրան,
Ձյունն աստղերեն և Աստվածեն՝ մարգարտի պես կհեղեղի,
Եվ բարյացակամ ու զվարթուն ու լուսաբույր լուսնկան,
Երդիքներուն կամ սպիտակ բարդիներուն կատարեն,
Իր մեծափառ և մտերիմ ժպիտովն հուսալից՝
Ճոխակյացին և անպերճին լուսամուտեն՝ ներս կնայի...
Մարդերը դեռ երջանի՜կ են...։ Մարդերը դեռ Բնությանը բարիքին հետ՝

Մեկզմեկու նայվածքի մեջ՝ յուրաքանչյուրն իր դրախտը կտեսնե...։
Նոր տարիի իրիկունն է։ Ամեն երդիք իր խրախճանքի ժամն ունի,
Թոնիրին շուրջ, որուն վրա այգիներուն մրգեղենները կբուրեն,
Քառասուն անձ՝ մեկ տան զավակ՝ բոլորակի նստեր են։
Ամեն հոգի իր առջևն ցնծությամբ մը կսկսի
Իր արծաթյա աշտանակին կապույտ ճրագը վառել,
Որովհետև այդ պահուն, երազներու ծաղկեպսակ ճամփաներեն,
Հավերժահարսը կաթնամարմին, մերկ ոտքերով՝ Հույսը ձեռքին՝ կմոտենա։

Ու մեծ մայրը կսկսի տնեցիներն իրենց տնովն օրհնելու։
— «Խաղաղություն մեր այս տարվա մեռյալին, խաղաղություն ձեր բոլորին,
Խաղաղությո՜ւն աշխարհներու անգութներուն և ձեր սիրտը ձեզ ապավեն»։
Հետո ոտքի՝ մատաղաշ կույսերն ու հարսները համբուրելով՝ անոնց կըսե.
— Վաղն առավոտ՝ արևածագին՝ կուժն ուսերուդ ջրի գացեք,
Մեն մի տարի իր առաջին արևին հետ՝ իր բարիքը կբերե,
Որպեսզի ձեր օրերը ջրին նման երկար ըլլան և արևին պես պայծառ,
Վաղն առավոտ՝ մթնշաղին՝ այգուն երդն երգելով՝
Ջրի գացեք։ Նոր տարիին, աղբյուրներեն, ակնթարթ մը՝ ոսկի է որ կվազե...։

Բայց այս օրերն ու երազները մոխրացնող չարիքներեն ի վեր,
Ձյունն երկինքեն և աստղերեն և Աստվածեն,
Գերեզմանին քարերուն պես եղերական, վար կթափի...
Եվ լուսնկին մահիկը մահվան մանգաղի նման՝
Ինքն իր դեմքն արյուններուն մեջ տեսնելեն զարհուրած,
Կարծես թե իր մեղքին համար ամպերուն մեջ կդողդողա...
Սև կաղանդի իրիկունով՝ տնեցիներ՝ տանիքին տակ այս պահուս,
Դագաղի մը վրա հսկող սգակիրներ են բոլորն ալ,
Երգող չի՜ կա։ Ժպիտ չի՜ կա։ Համբույր չի՜ կա։ Օրհնությունները մարած են։
Հարսին հույսը մահացեր է և աղջիկներն աղիողորմ կամ գեղանի,
Անկարելի և անստույգ սրտերու է որ կմտածեն...։
Խեղճ ճրագ մը թոնիրին վրա, մանկան մը պես կմեռնի...։

Եվ մեծ մորը հեծեծանքին ամբողջ սերունդը կսկսի լալ...։
Հովը դուրսը անհնարին մորմոքներով կշառաչե,
Մեռյալներու կարավաններ կարծես կուգան շար ի շար,
Հիշատակի մը համար, ամեն մեկն իր տնակին գոց դռնակը
ծեծելու...։
Հուսահատ մը, ափ մը մոխիր ծունկերուն տակ, դեպի երկինք
նայելեն,
Իր բացակա մերձավորին մտածելով դեռ կսկսի աղոթել...։
Մինչ՝ պատմության աղբյուրներն ավերակին տակ կկոծեն...
Եվ ավանդության ոսկիին տեղ՝ մարդերուն դեմ՝ միայն անե՜ծք
կհոսի։

ՍԵՐ

«Արցունքներս ո՞ր գորովի գրկին մեջն ես լացեի...
Եվ ո՞ր հոգիին հանձնեի իմ այս սիրտս զոզոջուն,
Գիշերն ունիմ մորմոքումիս միայն վկա,
Երբ աստղերուն անդորրությանը տակ նստած՝
Կսկսիմ ես փնտրել նայվածքներով խելացնոր,
Անթիվներու թվին մեջեն Անոր աստղն ինձ անծանոթ,
Որ՝ աստղիս հետ, ապահո՜վ եմ, սրտիս համար է ծներ...
Բայց բնությունը գարուններուս դեմ բռնավոր՝
Առաքինի իրանիս շուշաններն այս կուսական,
Իր անօրեն օրենքին կրակներովը կայրե...։
Միայն հույսին ես ժպտեցա, միայն անոր՝ անծանոթին,
Որ պիտի գար տիրանալու, շքեղությանցն իմ մարմինիս...
Մինչև այսօր և ո՛չ մեկ ձեռք ինձ չընծայեց,
Սիրո վարդն այն վարդերեն նվիրական,
Որ երգումներով՝ աբեծագին հետ քաղված՝ կուրծքիս վրան,
Երազիս մեջ, գուրգուրանքիս տակ թառամեր...։
Ո՛չ մեկ համբույր ես չի ճանչցա, որ գար ճակտիս՝
Դեմ դրոշմել գինովության առեղծվածն այն անասելի,
Որուն համար գեղեցկությունս, գիտեմ՝ իրեն խորան պիտի ըլլար...։
Ո՛չ մեկ ժպիտ, ո՛չ մեկ նայվածք և ո՛չ մեկ բառ տարփանքի,
Դեռ չեն եկած ալեկոծել վճիտ սիրտս սիրածոր...

Եվ այսպես լուռ, աստղերուն տակ, սարսուռներուս մտածելեն,
Իմ գաղտնիքիս ես անգետ, սոխակի մը պես սերը կերգեմ...։
Նորեն երկինք կնայիմ, միշտ աստղերը խուզարկելով՝
Եվ երբ տեսնեմ որ բյուրավոր այդ ոսկեշող վարդերեն մին,
Հանկարծորեն, գլխուս վրան, կապույտին մեջը կմեռնի...
Զարհուրանքով՝ կհարցնեմ ես. ինծի...
— Ո՞վ գիտե թե որո՞ւն աստղն էր որ մոխրացավ այս պահուս,
Անո՞ր արդյոք որ Ճակատագրեն իմ սիրույս էր սահմանված,—

Հետո այսպես իմ քաղցրահաս մազերս ուսերես վար...
Արմունկներս ծունկվընեներուս վրա հենած՝
Եվ իմ երկու ձեռքերուս՝
Մարմար թասի մը ձևը տալով՝
Հեծեծա՜նքով սիրույս կայծերն անոր մեջն ես կարտասվիմ...։

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԵՆ ԱՊԱՇԱՎ

«Ծառահարյուր հազարավոր նահատակներս ահավասի՛կ,
Արարատյան հողերուն տակ շար ի շար,
Մինչև այսօր ձեզ կսպասենք, դուք որ կռվեն խուսափեցաք,
Դուք որ զմեզ կոխոտելով, մեր վրեժին անվրեժ,
Մեր ցասումին անտարբեր,
Մեր արյունին դեմ առ դեմ, ձեր աչքերը փակելեն,
Մեր մարմինները կիսամեռ, իբր անգո՜ւթ թշնամիներ,
Ձեր ոտքերովն կոխոտելեն հեռացաք...։
Հոնդյունները մեր հոգեվարքին, չի կրցան ձեր խե՜ղճ խուճապը
կասեցնել,
Եվ ձեր սուրերը, վատերու պես, ձեր ետևը նետելեն,
Ձեր կործանվող քաղաքներեն խուճապեցիք...։
— Ձեզնե շատերը մեզ մայրերս բոցերուն մեջը թողուցին...
— Ձեզնե շատերն իրենց հայրն իսկ կռիվին մեջ ուրացան...
— Ամուսինս ստվերի մը պես կանհետանար,
Մինչ մեր որդին նորածին, դահիճները տապարներով՝
Իմ մերկացված ծունկիս վրան,
Կարապի՜ մը պես կոտորեցին...։

— Ես եղբայր մունեի, հողին տակեն դեռ կհիշեմ,
Պատվույս համար նախ զիս մեռցուց,
Եվ հետո ինք մարտնչելով մահացավ...։
— Իմ զավակս յոթը գյուղեր յոթը գիշեր պաշտպանեց,
Ջավակիս հետ, այդ գյուղերը, կարծեմ այսօր դեռ կապրին...։
— Վատերուն մեջ վատն ես եղա, թշնամիին հանդիման,
Երբ գթություն պաղատելով ես իմ վիզս երկարեցի...
— Ես իմ հայրս չե՞մ մոռանար... ես իմ հայրս չեմ մոռանար,
Այդ ալևոր ծերունին, ավանդական դյուցազնի պես,
Մոտավորին, հեռավորին, անծանոթին սիրույն համար,
Երկար օրեր մաքառելեն մեծ Գաղափարը լուսավորեց...։
— Տասը տարու տղեկ մը կար մեր քաղքին մեջ,
— Մեռյալ մորս նման ես, ո՞րչափ նման ես անոր, ըսավ ինծի,
Եվ իր մարմինը պատնեշ ըրած, ոտքերուս տակն ինկավ,
Օր մը հետո, իր գիակն արցունքներուս հետ թաղեցի...։
— Ոչ ո՞ք չեկավ զիս մեռցնել...
Գեղեցկությունս գերմարդկային՝ սոսկում կազդեր...
Բայց աչքերուս տեսածներեն՝ առավոտ մը թարշամեցա...
— Ո՞ւր են անոնք որոնք փախան, իբր տարագիր կամ ստրուկ...
Ազատության ձայները մեր ոսկերքը խենթեցուցին...
Գարուններու ծաղիկները այնչափ հո՞ծ են, այնչափ խո՞ր,
Կարծես իրենց արմատները մեր սրտերուն կերկարին...
Իրենց բույրը՞վար սուզվելով մեր աչքերը կարբեցնե...
Առուները կկարկաչեն... ես կլսեմ...
Եվ ո՞վ գիտե վերը՝ մեր աղբյուրը որչա՞փ ջինջ է,
Գառնուկները ծներ են և մեր վրայեն մայելով՝ ճարակելու կվազեն...
Արձագանքը կիմանա՞ք, տեսեք ինչպես կոստոստեն...
— Թռչունն ե՞ր, թռչունն ե՞ր, իմ կարոտես ես մոխիրի
կվերածվիմ...
— Խնձորենին ծաղկեր է... և մեկը կա որ ինձ համար,
Իմ աչքերուս սերեն կուրցած... մինավորի՞կը կարտա՞սվե...
— Ես փրկության երգերուն ձայնը վաղո՞ւց է որ լսեր եմ...
Ատելությունը մոխիրներուն տակ մեռեր է...
Բայց ո՞ւր են անոնք որ հեռացան...
Ըսե՞ք ինծի, մե՞նք ենք մեռյալ, թե անոնք...
— Ծերունիի իմաստությանս հավատացե՞ք,
Այն որ կռիվը չի սիրեց, արժանի չէ այս օրվան...

Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք։
Անմահությունն մեզի է և ապաշավն անօգուտ,
Ի՞նչ փույթ մեզի եթե մեր ոսկորներեն կերտված՝
Ազատության տաճարներու խորանին
Ծնրադրելու դեռ չեկան...։
Ես կլսեմ ձայները երիտասա՛րդ կամքերուն,
Որոնք ո՛չ փախուստ են ճանաչեր և ո՛չ ալ երդիքն օտար,
Ապագան ալ անոնցն է, Արշալույսն ալ Երջանկության...
Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք...—»։

ՄԱՅՐԸ ԻՐ ԶԱՎԱԿԻՆ

«Դաքուր սիրույս և մարմինիս դո՛ւն պտուղս անդրանիկ,
Ես էի որ կողերուս մեջ սրբության մը պես քեզ կրեցի...
Էութենես քայլ առավ քու գոյությունդ տարագիր,
Եվ ստինքներս՝ երկու գարուն իրենց կաթովը մարգարտե,
Երիտասարդ այդ հասակիդ կտրիճ տեսիլքը տվին։
Ես էի որ իմ կյանքս բերրի պարտեզ մը ըրի,
Ուր քու կյանքդ անմեղորեն աճեցավ...։

Իմ արցունքս քեզ ոռոգեց, ժպիտներս իբրև արև,
Իմ համբույրս իբր օծում, շրթունքներս իբր շուշան,
Եվ օրորներս՝ երգիս մեջեն իբր զեփյուռ...
Այս բոլորն ես անխտիր և լիուլի քե՞զ շամբեցի։
Օրորոցիդ առջև՝ լուսնկին պես և գեղանի՞ և արթո՞ւն։
Գիշերներու շարոգիներն քու անուրջիդ վարդաստանեն
Ես էի որ իմ միամիտ աղոթքներովս հալածեցի...։
Ես էի որ քու ծնունդդ առած գարունիդ գինովությանը մեջեն,
Առաջի հեղ, ես էի որ մեր երդիքին վրա ոտքի՝
Քու առաջին նայվածքդ արևին դե՞մը բացի...
Եվ բնության այդ հրեղեն հեղեղին տակ,
Քու նորածինի ծիծաղդ այտիդ վրա՝
Ես էի որ առաջին հեղ Աստծուս հետը տեսա...։
Ա՜հ դեռ կհիշեմ մեկնած օրվանդ այն աշունը անձրևոտ
Երբ տերևները ծառերեն, արցունքներուս հետ կիյնային...
Եվ տարիները դեռ տարիներու ետևեն դադաղներու պես կանցնին.

Բայց ոչ արցունքս դադրեցավ ոչ տերևներն իրենց մահեն...։
Հիշատակես ես կսոսկամ... երբ դռանը կնայիմ,
Ջորս սևադեմ մեռելկիր ճաղ մը իրենց ուսերուն,
Հորդ մարմինը մինչև այսօր, դեռ, կարծես,
Շտապաքայլ իր տնակեն դուրս կհանեն...։
Այն օրերեն ես իմ գլխիս իմ մոխիրս կշափեմ,
Ու դուն այդպես դեռ տարագիր,
Այդ դռնակեն մինչև այսօր ներս չի մտար,
Բայց ես կամքիս կրակներովը Աստծուս դեմ պիտի կռվիմ...։
Կյանքի՜ն փարած, հույսի՜ն փարած, և արևիս և արևի՜դ՝
Մահվանս դեմ, մոր մը ուժովը պիտի կռվիմ...
Ես կյա՜նք կուզեմ, զավա՜կս, ապրի՜լ կուզեմ, ապրի՜լ կուզեմ...։
Իմ մարմինս այս տնակեն գերեզմաննոց պիտի չերթա,
Մինչև որ դուն առավոտ մը նույն սեմերեն ներս չի մտնես...»։

ԱՌԱՔՅԱԼԸ

«Եղբայրնե՛ր, ես ճակատագրիս հավատարիմ,
Մաքառումին ուղիեն՝ Մտածումին մոտեցա,
Եվ այն օրերուն ահավոր, մեն մի սուր որ կփշրվեր
Մարտիկներու ոտքերուն տակ,
Մե՛ն մի շղթա որ օղակ օղակ՝
Մեր ուսերեն դեպի հողը կհոսվեր,
Ես՝ այս նոր օրվան Արշալույսին, մանկան մը պես կժպտեի...։
Մարտադաշտին վրա մեռած ընկերներուս քով ծնրադիր,
Անոնց շրթունքն հպարտությամբ համբուրելեն,
Կօրհնեի ձեզ, զի դուք անոր ծնունդ տվիք...։
Փա՜ռք կուտայի ես ձեր ոսկեղեն կողերուն,
Ո՜վ հայ մայրեր որ մեզ ծնաք։
Բայց երբ ավերն ու արցունքը դադրեցան,
Երբ Արդարությունը սկսավ շուշանի մը նման ծաղկիլ,
Երբ Ապագան կլուսնա և Նոր Կյանքը կծնի,
Ինչո՞ւ համար կհամենաք Ասպետներու ջահեն հետո,
Մտածումի և մեծության ջահերն ալ դուք վառելու...։
Դո՛ւք, Արվեստներու և Գիտության վարդապետնե՛ր,
Երգասաքեր Երազներու կամ Արժեքի ստեղծիչ,
Դո՛ւք, արհեստավոր, Ճարտարագետ, Ոստանակերտ կամ Հմուտ,
Դո՛ւք, Իմաստության տիրապետ կամ Գյուտերու խուզարկու,
Դո՛ւք որ կյանքը կկորզեք և հոծ նյութեն և գաղտնիքեն,
Կռիվեն վերջ՝ որոնումի և մտածման դաշտերը ձեզ կսպասեն...։
Բոլորդ մեկ ձեր ճակատներովը ծանրախոհ,
Հեռուներեն՝ Հայրենիքին վերկենցաղմանը հառաջացեք՝
Դարերու սև խավարեն՝ լույսի ճամփան արորելու։
Սերունդնե՜ր կան իմաստության ծարավի,
Ուղեղներ կան երիտասարդ՝ սերմնացանին սպասող,
Քաղաքներ կան որ կհեծեն ավերին տակ ահարկու,
Եվ հողը կա դեռ, հղի պերճանքներով բեռնավոր,
Թաքուն հույսի և հուրերու շտեմարան...։
Ա՜հ, գեթ անգամ մը դուք ձեր սրտին դիմեցեք,
Եվ ձեր միտքը Մարդկութենեն պտղավորված՝
Ձեր սրբազան ճանապարհն իր Լույսովը պիտի գծեմ։

ՈՐԴԻՆ-ԻՐ ՀՈՐԸ

«Հայր իմ, դեռ մինչև ո՞ր արեգակդ ես՝ քու որդիդ՝ քեզ՝ անծանոթ,
Եվ դուն իբրև օտարական պիտի ապրինք...։
Եվ քու արյունդ երակներուս մեջ թող եռա,
Թո՛ղ աչքերուս մեջն ես՝ մինչև այսօր ցոլացնեմ
Հիշատակն աչքերուդ,
Թո՛ղ իմ սիրտս քո սիրույդ համար ողողվի...։
Թո՛ղ հասակս սկսի քու հասակիդ հար ու նման
Պարմանիի պայծառությամբս ուռճանալ...։
Թո՛ղ երազներս քեզմով լեցվին,
Թո՛ղ իմ միտքս իր թևերովն, վայրապար,
Թռիչ առնե, իր ստեղծիչը որոնելու...
Այս ամենը ցնորքներ են ինծի համար,
Մինչև որ քու շրթունքներդ հայրական՝
Չի մոտենա՜ն, իրենց հուրովն, այս ճակատս սպիտակ,
Չի մոտենա՜ն այս ճակատս՝ երազիս մեջ համբուրելու։

Հա՜յր իմ, ես այն ճյուղն եմ զորավոր, դալարագեղ այն ծառին,
Որ հոգնությանդ օրերուն քու նեցուկդ պիտի ըլլա...։

Ես այն ջո՜ւրն եմ, հպարտության ապառաժեն դո՜ւրս ցայտող,
Որ ծարավիդ ժամանակ՝
Բաժակներուդ ադամանդեն պիտի հորդի՜...
Ես փեթակիդ այն ժիրաժիր մեղո՜ւն եմ,
Որ դառնության օրերուդ՝
Պնակիդ մեջ՝ իր ոսկեղեն մեղրը պիտի հյութե...

Ես դալարի՜ք եմ, ծաղկաստա՜նդ եմ, քու այգիդ եմ...։
Ես այն վայրն եմ, ուր հոգնած հայր մը պետք է հանգչի...։

Ես այն լարն եմ տիեզերքի այն տավիղին,
Որ միմիայն որդին գիտե իր հորն համար հնչեցնել...։

Ես Օվասիսդ եմ, հովանիդ եմ արևին տակ,
Ես արեգա՜կդ եմ քու հույզերու կամ մրրկի օրերուդ...։

Ես էությունդ եմ և սկիզբն եմ քու վախճանիդ,
Իմ մեջն է որ դուն ինքդ՝ կյանքեդ հետո՝ պիտի ապրիս...։

Ի՜նչ առհավություն, ի՜նչ խորհուրդ, ի՜նչ գաղտնիք...։
Ինծի ըսին թե՝ աչքերուս մեջ, քու կերպարանքդ կարտացոլա...
Եվ բիբերուս մեջն ես քու դեմքդ նշխարներո՜ւ պես կպահեմ,
Բայց չե՜մ ուզեր իմ կարոտես, արցունքներովս ,պղտորել զայն,
Մինչև որ քե՜զ գրկելով՝ իմ սարսուռես չարտասվեմ...»։

ԱՅԳԵԿՈՒԹՔ

«Աշունը որչա՜փ առատ եղավ այս տարի...
Իր արևներն ու օրհնությունը դյուցազնական,
Մեր ցավերեն, մոխիրներեն ու մահերեն հետո՝
Անհունորեն դաշտ ու հովիտ, գյուղ ու քաղաք,
Անքննելի ճոխություններով պարուրեր են։
Կգրեմ քեզ՝ այն տեսիլքն տարօրինակ զոր ես տեսա...։

Այգեկութքի արշալույսն էր այս առավոտ,
Հին օրերու նույն աղբյուրն, հնձանին դեմ՝
Մեր մանկության հայելին եղած ավազանին մեջը կերգեր,
Այնպես երգ մը որ միմիայն որբությունը կհասկնա...։
Այգիներու մեջ, ողկույզները որթերեն վար,
Տարագրին ճամփաներուն դեմ սպասող՝
Հույսեն վառված սրտերուն պես կայրեին...։
Եվ բյուրավոր հատիկները ամենօրհնյալ խաղողին,
Հայրենիքիդ կապույտին տակ վերածաղկող՝
Գիշերներու աստղերուն չափ էին անթիվ...։
Թթենիին կատարեն, կարոտակեզ կռունկներ,
Իրենց կանչը երգելով, դեպի արտերը իջան։
Այգիներուն խորերեն ցնծության ձայնը կզեղուր,
Արտերուն մեջ իրենց հնձած ցորյանին շուրջ՝
Հայ հարսներն կալերուն դեմ ամբողջ օրը պարեցին...։
Այգեկութի առավոտն այս՝ մեր առաջին զարթոնքն էր...
Տարիներու մեր սոսկումեն և սուգեն ետք՝
Հարությունն էր կարծես այսօր և մարդերուն և բնության...։
Այս աշխատանքի և գինովության օրեն հետո,
Երբ գիշերն թավիշներու նման ինկավ...
Եվ ոսկեղեն ողկույզները կհանգչեին դաշտերուն մեջը բլուր բլուր,
Աղբյուրին քով ուր դուն ինձմե, առավոտ մը, համբույրով մը
բաժնվեցար...։

Ես քու քույրդ՝ վճիտ աչքով Որբուհի,
Հանկարծորեն, կարծես մեր վախճանած հայրը տեսա...։
Ես՝ սարսափես դողդոջուն... ինք գորովեն զիս գրկելով,
Իր ձեռքերն մազերուս մեջ մխրճելեն...
Ցնծութենեն կամ հին հույսեն հեծեծելով ըսավ ինծի.
— Աղջի՜կ, թերևս դուն չի կրնաս զիս ճանչնալ...
Բայց իմ հոգուս ու սրտիկիս սուրբ պտուղն ես...
Շատերուն պես, ես ալ օր մը, ձեր բոլորին համար մեռա...
Եվ ծնած օրեդ և արևեդ մինչև այսօր,
Այս այն տարին է՝ առաջին,
Ուր հայության այգիներուն որթատունկերը կարմիր,
Գրի՜ եղբորդ, առանց արյան են ծլեր...։
Հին քաղցրությանց ստվերն այս՝ հստակ աչքերս թրջեց,
Եվ մութին մեջ, իր պատանքովն աստղերուն տակ հեռանալեն,

Ուրվականը ետ դառնալով՝— իրա՞վ, արդյոք մեր հայրն էր—
Ուրվականը ետ դառնալով՝ այգեկութքեն գարձողներու թափորներուն
ևս ըսավ.

— Հին օրերու դրացինե՛ր և ուխտավորնե՛ր աշխատանքի,
Օրհնյա՛լ ըլլաք, երգեցե՛ք, օրհնյա՛լ ըլլաք բոլորդ ալ,
Եվ հավատացե՛ք ավետիսիս, գարուններու ձեր նոր գինին,
Արդարության և ձեր կամքին օրենքին տակ,
Այսուհետև ձեր սափորեն կամ արծաթե դաշխուրանեն,
Հավատացե՛ք, առանց արյան պիտի խմեք...»։

ՀԱՅ ԴԱՇՏԵՐՈՒՆ ՊԱՂԱՏԱՆՔԸ

«— Արարատյան աշխարհներեն մինչ հովիտներն Եփրատյան,
Մեր ընդերքներեն բարձրացող պաղատանքն ու պարսավը ձե՛զ
կուղղենք,

Կյանքին հանդեպ դրուժանե՛ր, հեռացողնե՛ր, կամ երկչոտնե՛ր,
Հալածական կամ աքսորյալ, դո՛ւն վտարանդի կամ տարագիր,
Ո՞ւր եք, և ո՞ւր են ձեր բազուկները որ մեր կողերը կարորեին...
Ո՞ւր եք և դուք հին օրերու անկաշառ և անկնճիռ ճակատներ,
Երբ ձեր քրտինքն հուժկու և վեհ հողագործի,
Մարգարտի պես կուգար հոսիլ ծալքերուն մեջը մեր ակոսին,
Հին օրերու ձեռվընե՛ր, ո՞ւր եք դուք, ձեռքեր՝ օրհնյալ,
Ձեռքեր անպի՛ղծ, ձեռքեր հուրի՛ և արգավանդ,
Ձեռքեր բարի՛ և բեղմնավոր, ձեռքեր վսե՛մ և վճռակա՛ն,
Երբ ցորյանին սրբազան սերմը ձեր ափին մեջ,
Հալած ոսկու հեղեղի պես լայնաբուռն կցանեիք...։
Ու գութանին երգը կերգեիք... և ձեր եզներն հաղթամարմին,
Իրենց երկաթը շանթերու պես մեր ընդերքը մխրճելեն...
Արտավարե արտավար, հպարտորեն բառաչելով կհերկեին...
Ու ներդաշնակ անձրևներն և արևը, մեծ օրենքին կշիռներուն
համեմատ,

Կիջնեին ձեր հոգին հանձնած հատիկները բեղմնավորել...։

Եվ երբ ամառը կծներ կամ աշունին մահեն առաջ՝
Քաղաքներեն և գյուղերեն՝ գերանդիով, մանգաղներով բեռնավոր,
Հազարներով կուգայիք, հայ դաշտերեն Մարդկությանն իբր ընծա,
Անխտրական ցորյանին հասուն հասկերն հնձելու...։
Բայց քանի գարուն և աղաչավո՞ր աշուններ եկան անցան,
Եվ անծաղիկ ու անպտուղ մեր անսահմանը ձեզ կսպասե...
Ա՜հ, գթացեք հայրենական և հավատարիմ ձեր հողերուն,
Գթացե՛ք այն այրիներուն և վարդի նման որբերուն,
Որ առավոտեն հուսաբեկ և իրիկունեն եղերական,
Իրենց կուրծքերը կոծելով՝ մեր քարացած սև կողերեն,
Երկու բո՛ւռ հունձք, ա՛փ մը ցորյան կպաղատին...։
Ու հայ դաշտեն կհեռանան, կյանքին օրենքն անիծելով՝
Եվ բնությունն ալ, իր բարիքն ալ, իր բերքերն ալ անմատույց։

Հազարավոր տարիներու դուք անարժան ժառանգորդներ,
Օտարության և մոլության ճամփաներեն մեզի դարձեք,
Հույսեն խաբված կամ աղետեն հալածական բայց չարիքին
հաղթահարող՝

Աշխատողներ՝ բոլորդ մեկ ձեր բարեգութ բնությանը գրկին եկեք.
Ամեն բարիք մեր լանջքերեն և լեռներեն կծնանի...
Ամեն մետաղ մեր խավին տակ հրաշանյութ իր գանձն ունի...
Մեզմե միայն կրնաք կորզել Հույսին ոսկին և գինիներն Երազին...
Հաղթանակները մենք կուտանք ու պարտությունները մեզի են...
Վերադարձե՛ք, որդինե՛ր, ձեր գութանին և արորին ժանգը նորեն
սրբելու.

Թո՛ղ նորեն ձեր հնադարյան հայրենի հողը ծաղկոտի...
Թո՛ղ ձեր հունձքերն հովտե հովիտ՝ ծովերուն պես տարածվին...
Թո՛ղ կալերն ու որաները, բլուրեն վեր, լուսնեկին հետ բարձրանան,
Թո՛ղ հայ հովիվն, մարգերուն մեջ, իր նախահորը նման,
Իր սրինգին սարսուռներովը իր հլու հոտը հմայե...
Ձորին վրա ջրաղացը խաղաղությամբ թո՛ղ շարժի...
Ու առատությունը թո՛ղ նորեն գա մեր արտերուն վրա լացող,
Հայկյան ցեղի պղտոր աչքերը լուսավառել...
Ամեն բարիք և մարդկային չարիքներու ամեն դարման,
Մեր խորհուրդեն, մեր խավերեն, մեր օրենքեն պետք է հոսալ...
Ու այսպես՝ Ձիթենիին ոստերուն հետ աստվածաբույր,
Սուրն ալ մեզմե կծնանի, սրբությունն ալ Ցորյանին...»։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

ՆԵՐԲՈՂԱԿԱՆ

Օշականի ամենասո՛ւրբ գերեզման,
Հանճարի հող՝ ուրկեց այսօր,
Տասնևհինգ մրրիկյան դարերու
Պատմություն մը պերճաշուք,
Արևելքեն Արևմուտք, երկու Հայքն բովանդակ,
Դեպի զքեզ, ազատորե՛ն աղոթելու կշարժե...

Օշականի անհո՛ւն մեռյալ,
Դուն բյուրավոր ճյուղերով,
Ոսկեհոս գետ գիտության,
Մտքի Փրկիչ, հույսի Հսկա, կյանքի Կեդրոն,
Դուն անվախճա՛ն փոշիացյալ,
Դուն ջահերու անմարելի շտեմարան,
Ուրկեց ուղեղս, մանկությանս օրերուն,
Ես՝ աղքատորեն եկա վառել...։

Օշականի վսեմական վարդապետ,
Դուն վեհիմաստ վանական և Աստծո՛ բաժակ,
Դուն Հիսուսի բազմաբուրյան պատմուճան,
Խոսքի՛ աղբյուր, բանի՛ բարձունք,
Կարողությանց անվե՛րջ կատար,
Դուն իմաստի ավազան և աղոթքի կապույտ անձրև,
Ափ մը հողեդ ամբողջ երկինք մը դեռ կբուրե...

Օշականի Դուն անկորուստ կրոնական,
Անապատին մե՛ջ մխրճվող ճգնավոր,
Դուն անբասիր և մեհյանական մենակյաց,
Խունկի՛ անտառ, կնդրուկներո՛ւ բուրաստան,
Քրիստոսի ազնիվ խոսքին դուն տիրական տարածիչ,
Եվ գրանիտյա ուղղափառ սյուն,
Եվ մտքի գմբեթ և հոգիի անծայրածիր հորիզոն,
Դո՛ւն շնորհքի աշնանային շատրվան,
Քու հավատքե՛դ հավատացյալ՝ ե՛ս ալ լացի...։

Օշականի մեջ անմա՛հորեն մահացյալ,
Անճառելի և անդրանիկ դաստիարակ,
Ես՝ երազային երեխա մը վեցամյա,
Այբբենարանդ ի ձեռին, անմեղորեն զայն հեգելով
Առաջին խաչը, ճակտես սրտիս,
Հավատա՛ ինձ, ո՛վ հայությո՛ւն...
Պատկերիդ դեմ է որ հաներ ՝եմ...
Եվ լսե՛ այսօր, թոթովախոս ծաղկոցի
Շուշանմարմին մանուկներեն՝
Մինչև ծերերն հողաբույր,
Քու Սուրբ անունդ կօրհներգեն...։
Օշականի հանճարանի՛ստ հողակույտ,
Եկեղեցվո խորանին քով անշուքո՛րեն մրափող՝
Եվ Եհովայի պատգամախոս մեծ Մատյանին
Դուն սրբագիր թարգմանիչ,
Ոսկեդարու ադամանդյա՛ բանալի,
Դուն հայ դպրության անշրջանակ լուսամուտ,
Դուն լեզվի կաճառ, գեղեցկությա՛ն իշխան,
Դուն ճեմարան մարմարային մտածումի,
Ներե՛ որ քու աշակերտդ արբեցյալ,
Տասնևհինգ դարեր հետո զքե՛զ պաշտե...։

Օշականեն մեզի հսկող Մտքի Աստված,
Դուն հասողության հիմնաքար,
Աստղերեն մեզ լույս լեցնող ոսկեհասակ աշտարակ.
Ուր մեր ուղեղը մեզ կժպտի...
Դուն մտածման ծարավներու արծաթյա ծով,

Զուն Տարոնածին հսկա՜ Մովսես,
Դուն անհպելի մատենագիր մայր-բարբառի,
Թո՛ղ իմ գանգս, վերջալույսիս,
Քնարիս հետ, մոխիրովս առլցուն,
Հուղարկավորներս՝ խնկատուփի մը փոխարեն
Հողակույտիդ վրա վառեն...։

ՍՈՒՐԲԻՆ ԱՂՈԹՔԸ

«Լո՛ւյս տուր ինծի, Աստվա՜ծ անհերքելի,
Տիեզերքի անմեկնելի ճարտարապետ,
Ճակատագրի է ճանաչման ստեղծի՛չ,
Շունչի՛ մրրիկ, կեդրոնական կարողություն,
Սուրբ սեղանիդ սարկավագն Մեսրոպ՝
Իր մշուշապատ մեծ երազին՝
Քու ձեռքերեդ հստակությո՛ւն կաղերսե...։

«Օգնե՛ ինծի, մեծապարգև՛ իմաստություն,
Ես՝ անցուպ հովիվ մեծ քարոզիդ,
Ես՝ եղկելի մահկանացու, ես դժգույն տնտես
Հայկազնյան ահեղ ցեղին...
Ես՝ տգետ դպիր և անվավեր վարդապետ,
Ես՝ անծածան դրոշ հավատացյալ ամբոխներուդ,
Ես՝ անօժիտ վերծանո՛ղ և անանձրև այգեպան,
Ես՝ կույր աղբյուր և կորաքամակ ճանապարհորդ,
Ես՝ անարժան օրհնաբան անվերջ փառքիդ,
Իմ անդպիր հոտիս համար լո՛ւյս կաղերսեմ...։

«Օգնե՛ ինծի, Աստվա՜ծ բյուրեղ...
Ես՝ ողորմելի որոնիչ և անհետևանք խուզարկու,
Ես անքանքար քննիչ և անբերբի հյուլե,
Ես անաստիճան ճգնավոր և անթռիչ հռետոր,
Դառնաժպիտ թափառական և աշակերտ անքանքարուն,

Երազատես մոլորյալ և անտաղանդ անրջող,
Ես սահմանափակ պատուհան և փակյալ դուռ,
Ես իմ հոգիիս հանդեպ փշրող երկա՜թ ալիք,
Ես գերեզմա՜նի պահապան և մեռելո՛ց հաշվակալ,
Ես հրեղեն հացիդ կարո՜տ ցորենաքաղ...
Ես աներդիկ գիշերող և անսափոր ծարավի,
Ես մենավոր մշակ տատասկներու մեջ կորուսյալ,
Ես անճառագայթ աղջամուղջ, ես՝ անլար քնար,
Դեռ անբարբառ Հայկազնյաց հոգիին՝
Բացատրության Բանալի՜մը կաղերսեմ...

«Օգնե՛ ինծի, Տարրերու հայր,
Ես աչք աղոտ և տեսողություն անթափանց,
Ունայնամիտ ունկնդիր և չարալուր ականջ,
Աններդաշնակ երաժիշտ և մեղկաձայն երգիչ...։
Ես՝ անհողագործ դաշտորա, շտեմարան թափուր,
Սեղանասպաս անհաց և ցամաքյալ գինեբաշխ,
Ես՝ անկոչ հրավիրյալ Հիսուսական հարսանիքին,
Ես անձեթ լուսարար և անմատյան մտածող,
Ես անգորով գգվիչ և սիրազուրկ սիրահար,
Ես անհրապույր քարոզիչ և քարկոծյալ քրիստոնյա,
Օժիտաբեր աղքատ և անուսի հարստ...
Ես անհամբույր շրթունք և հոգեզուրկ հեծեծող,
Ես սի՛րտ անսեր և կուսություն անկատար,
Ես անբևեռ քալող և երերուն ուղևոր...
Քու փրկության փարոսներեդ կաթի՛լ մը լույս տուր ինծի...
Իվ երկնային ցուներուդ հետ հոգեկան
Կյանքին դռները դրախտին պես թող բացվին...։

«Օգնե՛ ինծի, անծի՛ր Աստված...
Ես անկարկաջ առվակ և խափանյալ ջրվեժ...
Ես ուսուցիչ անտա և վարանյալ վարդապետ,
Ես դպրության դեռ անպսակ տնօրեն,
Ես խղճերու հանդեպ ինկո՛ղ վարագույր...
Ես որմ մթաշեն, գեհենական բանտարկյալ,
Ես շյուղ կորուսյալ, հո՜ւնտ անպարգև...
Մացառապատ կածան, օձապտույտ գետնուղի...

Ես անհյուրընկալ օթևան և անբազմոց մահամերձ...
Լապտերիդ լույսը մի՛ մերժիր ինձ...։

«Օգնե՛ ինծի, համագումար Սկզբունք,
Մկրտության ես անմյուռոն ավազան,
Ես աղոթքի կիսակործան գավիթ,
Ես արորազուրկ հողագործ, անգերանդի հնձող,
Ես անբույր օծանող և դառնահամ յուղ,
Ես անբալասան բժիշկ և անբեհեզ վիրակապ,
Ես կոտրած կանթեղ և պապակյալ պատրույգ,
Ես հողմակոծ անտառ և արտասվաթոր ուռենի...
Ես անտաշ ատաղձ և բորբոսյալ գերան,
Ես հողաշեն բուրվառ և անծխելի խունկ,
Ես անողկույզ որթատունկ և վարակյալ վարսակ,
Ես անճշմարիտ ճակատ և անուղիղ ձեռք,
Ես անկարող կարգավոր և աննշխար քահանա,
Ես մենության մեջ մխացող անկարավան անապատ,
Այցելությո՛ւն տուր ինծի...։

«Օգնե՛ ինծի, ո՛վ անբաղդատ օրենք,
Ես վարանոտ մարդ և հուսահատ անձ...
Ես ահաբեկ անհատ և շվարած շնչավոր,
Ես տարակույսին մեջ տատանող հողմահալած
Անլսելի աղաղակ և անարձագանք շեփոր...
Ես գուն տերև՝ աշուններեն վա՛ր ինկող...
Ես չորացյալ ճյուղ և անհոտավետ վարդենի,
Ես ուշիմության ուրվական,
Ես կարճիմաստ իմացական և խոնարհած խելք,
Եկեղեցիդ կամարներուն տակ հեծեծող՝
Քրիստոնյա ժողովուրդիդ դեմ հանդիման
Ես Աստվածաշունչ մեծ Մատյանիդ
Օտարալեզու ընթերցող և անհարազատ թարգմանիչ...։

«Օգնե՛ ինծի, անծայրածիր Ծանոթություն,
Գերազոր Տեր, անհուն հնարիչ,
Լույսի զենիթ, անկնճիռ իմաստ,
Ջուր երկնային, անանջրպետ հոգի,

Անհաշիվ բաշխող, երազնելու սահանք,
Ճանաչումի քու ծածկոցդ լուսեղեն
Իմ կործանյալ ուսիս վրան թող ծածանի,
Եվ՝ հսկումներու, հեծեծանքի, աղոթքներու
Այս իրիկվան, քառասներորդ գիշերին՝
Աստվա՛ծ անհեղլի, Աստվա՛ծ անափունք,
Արարչագործ ձեռքդ իմ ուղեղիս երկարե,
Հոն իմ գյուտս խմորելու...»։

ՏԵՍԻԼՔԸ

Ո՛վ հրաշալիք, ո՛վ հավատքի աննյութական հուր,
Ո՛վ զարմանագործ զորություն,
Ո՛վ բոցեղեն բժժանք, ո՛վ անլույծ խորհուրդ,
Ահավասիկ Քերովբե մը՝ մրափին մեջ Մեսրոպին,
Իր աջ ձեռքովն լուսագիծ՝
Ակնթարթ մը՝ մենաստանին որմին վրա,
Հայկազնյան Այբբենարանը տառագրեց...։
Հանկարծ՝ Սուրբը, մեծ Տեսիլքեն ցնորաշարժ,
Մեռյալի մը պես ընդոստ ոտքի,
Փետուր գրիչն և տախտակն ի ձեռին,
Հրաշքին տակ արտասվելով,
Որմին առջև անհունորեն ծնրադրեց...։

ԳՅՈՒՏԻՆ ՓԱՌՔԸ

Մեսրո՛պ, հայ դարերուն դիմաց կեցող՝
Դուն ադամանդյա ապառաժ,
Դո՛ւն մանուկներու մերկ ուղեղեն
Մինչև հանճարը ցոլքեր ցանող,
Գիտակցությանց անգյո՛ւտ փարոս...

Դուն որուն կոփյունը կռանին,
Ժամերուն պես, բոպեին հետ անգադար,
Իմացական թանգարանի՜ն արձանները մեզ կձուլե...
Դուն աննինջ հսկող, դուն Տիտանյան տեսնող,
Դուն օրորոցեն մինչ գերեզման,
Մեր մեն մի խոսքին մեն մի շունչին,
Գեղեցկաձայն բացատրիչ...
Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
Դուն անբավ բավիղ տեղողության,
Դուն գոյացության արգավանդ հայր,
Դուն լույսի անիվ, դուն հավատքի հրավեր,
Դուն հայրենի հողին վրա մրրկին պես բարձրացող
Անտա՜ռ անհուն, անտա՜ռ սրտի,
Որուն մեն մի հաստատաբուն ծառերն հսկա,
Մեկ մեկ քնար, մեկ մեկ փանդիռ են մեր շունչին...
Մեկ մեկ շեփոր մեր հագագին ռազմական,
Մեկ մեկ պատնեշ ճակատագրի՜ պատուհասին...
Դուն անվատնելի ցորյանի դաշտ, դուն ձրի՜ հաց,
Դուն հունձք հարուստ,՝և դուն հնձան հրաշեկ,
Դուն արբեցության և գինիի ավազան,
Որուն մեջ ե՛ս ալ ոսկի սափորս եմ մխրճեր...
Արևներու ծարավես խենթ...

Դուն մեծաթափանց նայվածքներով առաքյալ,
Դուն էիր որ զքեզ երգող ցեղդ այսօրվան,
Հելլեններեն և հանճարեղ և հրավառ
Ու աշխարհակալ մեծ Հռովմի որդիներեն,
Ու հրապաշտ պարսիկներեն դրացի,
Մայր-բառբառիդ հիմնաքարովն հակինթ,
Հայկազունյաց մեր շառավիղն ազատեցիր...։
Դուն երկրո՛րդ Աստված,
Եվ մտածման Դուն առաջի՛ն արարիչ...։
Դուն բեղո՛ւն բարիք, սրտի՛ աղբյուր,
Գույներու գանձ, գթության՛նց գահ,
Դուն թռչող դարերն մեկզմեկու կամարող
Կամուրջ անգիծ, ուրկից ցեղդ միլիոններով՝
Կամ պերճորեն կամ վատաբար,

Կյանքեն ի մահ, կուգա կանցնի...։
Դուն Հելլեններեն հռչակված,
Մեծատիտղոս Ակումիտ,
Ո՜վ մենակյաց, ո՜վ Մագիստրոս, ահավասիկ
Երկու Հայքերն «Օվսաննա՜ քեզ» կգոռան...
Եվ Օվսաննա Վաղարշապատի Հայրապետին՝
Սահակ Պարթև զուգակշիռ արքանյակիդ,
Եվ Վռամշապուհ Արքային,
Որովհետև քու մեծ գյուտիդ զորավիգ,
Մեկն իր խաչին, մյուսն իր Սուրին համազոր
Քու քայլերուդ հետ՝ քալելով՝
Արարատյան արշալույսին,
Դպրության դուռը մեզ բացին...։

Ա՜հ, ամբողջ արյունը Քու ուղեղիդ,
Ի՜նչ տենդերե որպիսի՜ տենդ,
Եվ սարսուռներե ի՜նչ սարսուռ,
Ի՜նչ գեհենական գալարումե գալարում,
Եվ վարանքե վարանք և վարկածե ի վարկած,
Եվ ծովային ծփանքներե ի ծփանք,
Այլակերպիչ նժարե մը ուրիշ նժար,
Եվ կշիռե ի կշիռ, զքե՜զ տարավ...
Ու մեն մի հյուլեն քու հոգիիդ,
Մեն մի ճաճանչը քու աչքերուդ,
Մեն մի կաթիլը քու հանճարիդ կայծերուն,
Հողմային հևքդ և խոլ թափը թռիչներուդ,
Աղոթքներուդ հորձանքներն հրեղեն,
Քառասուն օր՝ տիվ և գիշեր,
Մենության մեջ, մեռյալի մը պես մենավոր,
Զքեզ դեպի Տեսիլքդ տարին...։
Եվ անուրջին մեջ ծնանող ծաղկի ծիլեն,
Ու բողբոջեն դեռ անբույս,
Դուն մարող լույսեն, դուն տեսլական ստվերեն,
Անգույն գծեն և երազի վսեմ վարդեն,
Դուն ոլորտեն, անձայն շեշտեն, անգույն բառեն,
Դուն ծածանող և անարմատ ծվեններեն,
Դաշնակության Ալփարետան ստեղծեցիր...

Եվ Չորրորդ դարու Ոսկի Սեմեն,
Մինչև մեր օրը, մեր արյունովը մթին՝
Ահավասիկ Հայ Հանճարը բազմալար
Քու ձևերուդ մեջ կձուլվի...

Ո՜վ անլուծելի առեղծված,
Ո՜վ ջղերո՜ւ կայծակե խուրձ,
Արյան հնոց, անուրջներու անբիծ ծավալ,
Ո՜վ զարմանալի և տևական զգայախաբ,
Քնարական ահեղաբի՜բ քիմեռատես,
Դուն Աստվածագիծ ծիածա՞ն...
Հաշտության հուրը մեզ բերող,
Դո՜ւն տարակույսին և տարտամին տիրապետ,
Դո՜ւն տարօրինակ և տարագիծ գմբեթ...
Դո՜ւն մեծ կրքերու կրոնավոր,
Ա՜յր Աստուծո, մտքի՜ եղբայր, քնարի՜ քույր,
Քու բաժակեդ թո՜ւյլ տուր որ ես ալ ըմպեմ...

Եվ այսօր քու սրբությամբդ սնած՝
Ես ապաժաման քնարահար,
Եվ անվճար ու անարժան երախտագետ,
Ես՝ քու ցեղիդ հոգիին հայելին քեզ կբերեմ...
Աչքերուս մեջ անոր աչքեն հուր առի...
Ու իմ խոսքերս անոր սրտեն եմ քաղեր,
Եվ ի՜նչ որ կարդաս ճակտիս վրան,
Ի՜նչ որ կարդաս ժպիտիս մեջ,
Անոր Հույսո՜վն եմ ես գրած...
Եվ թույլ տուր այսօր, ո՜վ Մեսրոպ,
Որ՝ Հայոց հողեն մինչև աստղերը հասնող
Քու ոսկիե սանդուխեդ վե՜ր բարձրանամ,
Եվ հաստատաքայլ, աստիճանե աստիճան
Ու պսակե ի պսակ և լույսե ի լույս,
Իբր զավակ մը մտածումիդ,
Ես ի քե՜զ գամ, իմ այս երգս երգելու...։

1912

ԿԱՄՔԻ ԻՐԻԿՈՒՆՆԵՐ

ԽՈՍՔԵՐ ԱՆԾԱՆՈԹ ԱՆՑՈՐԴԻՆ

Ա

Կա՜նգ առ, անցորդ, անմահներու այդ Տաճարին դեմ հանդիման
Եվ գրանիտե որմերուն վսեմությանը վրա
— Աչվընեերդ արբեցությամբ աստղերուն —
Կարդա դուն հոն, արժեքներու և կորովի պատգամներն այն,
Չոր դյուցազնական դարերու իմաստունները՝ մեզ համար
Իրենց մաքուր խոսքերուն մեծությունն են քանդակեր։
Կարդա՜ և նոր կամքի ուղիներեն, ջահդ ի ձեռին, այս գիշեր,
Թմրությունդ թոթափելով և ուղեղդ հրահրելեն,
Հերոսներու այդ քարոզը ո՜ւր որ կուզես սերմանե դուն։
Եվ բռունցքներովդ խորտակե՜ նախ շղթաներն անցյալիդ,
Որ օղակված օձերու պես մեղկությանդ կկապչին։
Ըսե՜մ քեզի։ Ամեն վերելք, ամեն դագաթ, ամեն կատար,
Որպեսզի դուն կարողանաս քու թռիչո՜վդ լուսավորել,
Ըսե՜մ քեզի, եղիր հուզումը օվկիանին որ ի՜նք իրեն հաղթահարե՜,
Եղի՜ր հարվածդ, եղի՜ր հուրդ, եղի՜ր ցասումդ դուն քեզ հանդեպ։
Եղի՜ր երկաթդ հրաշեկ հեղգությունդ խարանող,
Եղի՜ր մտրակդ շանթածրար, խուսափումի ժամերուդ,
Եղի՜ր քրքիջ մը անագորույն, փոքրությանը դե՜մ քո հոգիիդ։
Եղի՜ր այն Մարդը որ կուրությամբ կհավատա
Իր կորովին, իր հույսերուն, իր հավատքի բացարձակին...
Եղի՜ր կոթողը քո կամքիդ իր բարձրությամբն անչափելի,
Եղի՜ր դահիճդ, եթե պետք է և Աստվածդ միանգամայն...

Ջահդ վառե։ Ամբոխեն վեր և բլուրե ուրիշ բլուր,
Կյանքի՛ կոչե, Կամքի կոչե քաջառողջները քաջերեն,
Եվ գինովությանց ու քաղցողի քու բաժակդ,
Եթե երբեք, բյուրեղին մեջ, թույներուն թույն իսկ բովանդակեր,
Մոլեգնորեն և ցմրուր, ժպտելով դուն, պետք է քամե՛ս...
Ստվերիդ տակ ձգե դուն և կամազուրկ և տկար,
Եթե անոնց աչքերը խեղճ,
Քու կռանած պողպատներուդ կայծերուն պես իսկ արտասվեն...
Ստվերիդ տակ ձգե դուն կարավանները մեղկերուն,
Եթե կուզես՝ներզորությամբդ և՛ փրկվիլ և փրկել,
Նախ դուն զքեզ, մեն մի շունչիդ, Դիցերուն պես գերազանցե,
Եվ մի՛ թույլ տար, ինձ անծանոթ օտարական կամ սրտակից,
Մի՛ թույլ տար դուն ո՛չ մեկ ատեն, ո՛չ մեկ վայրկյան, ո՛չ մեկ
բոպե,
Որ քու մտքիդ արժեքները, քու հոգիիդ այդ ոսկեղեն նժարեն,
Ասեղանիչ մը, ասեղանիչ մը անգամ դեպի անկումը թեքին...

1911

ԹՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ԽՈՍԻ

Զոհրապին և Զարդարյանին

Բ

Գոյությանս գաղտնիքներեն ծնունդ առնող որդինե՛ր,
Այսօր օրն է որ ձեզ խոսիմ։ Պետք է որ դուք հաղթանակեք
Այն օրենքին, որ ձեր կյանքին կրակն, աղքատորե՛ն ձեզ
բաժանեց...։
Ես այդ Ուժն եմ։ Ես ստեղծումի հորիզոններուս մեջն հրավառ,
Որուն տակ գութս իր ստվերն իսկ չի ճանչնար,
Տարաշույսի և տկարության ձեր բոպեին՝
Ձեր չվառության վրա և ձեզ համար,

Հանկարծորեն փլատակվող պատնեշն եմ ես...։
Ես ձեր սուրն եմ՝ ձեր ձեռքին մեջ, ձեր վիզերը բացող...
Ես երկդիմի և հոռետես հավատքներուն տարտարոսն եմ...
Ես չհնչող քայլերուն խորտակիչն եմ,
Ես խոնարհած ճակատին դեմ
Վյուլքենական կռան մըն եմ ամեհի...
Ես հեղգության հալածանքն եմ և կասկածի կառափնատ...
Ես անկումի անդունդ եմ և խթանն եմ մագլցումի,
Ես կամքերու երկաթ գահն եմ և շարժումի օթևան։
Ու ձեր միտքը, վեհակշիռ կամ ազազուն,
Ու ձեր թռիչքն հղացման,
Իմ հանճարիս հրանյութի ամբարներուն
Փոշիներեն են վար թափած...
Մի՛ երկմտիք։ Եվ իմ Հույսես սափոր սափոր ըմպելով՝
Խոստումներու և հետապնդման սանդուխներես վե՛ր սլացեք...
Եվ փառքերու ձեր անթառամ պսակներեն,
Մուրացկաններն իրենց համար հողաթափեր թող հյուսեն...
Որովհետև, ամեն մի դափնի, ուժեղներու ճակատին վրա,
Միայն մե՛կ օր պետք է ծաղկի...
Ըսե՛մ ձեզի։ Եվ բանաստեղծ և խուզարկու և իմաստուն,
Զորության մը սերն է միայն, որ քնարով կամ թիվերով,
Հին դարերու օրերեն, ձեր ծարավի սրտերուն,
Աստղերուն տակ խոկալով՝ թարգմաններ են...
Ես գոյության գետինն եմ և պատճառն եմ պարունակին,
Ես առանցքն եմ ու մղիչը ու կեդրոնը և՛ անհատին և՛ նյութին,
Ու տիեզերքի գոտիներուն և գետերուն հոլովմանը հար և նման,
Հաճախ վճիտ, արգասաբեր կամ պղտոր,
Կուգան կանցնին ձեր դիակները, հնոցներուս մեջն հալելու...
Որպեսզի ես նորեն ծիլ տամ, և կոտորակ առ կոտորակ,
Ձեր ադամանդ արժեքները մեկզմեկու վրա բարդեմ՝
Նոր կամքերու աստված-մարդերուն ծնունդ տվո՛ղ...
Զորությունն եմ։ Իմ ձայնովս զրահվե՛ դուն, ո՞վ ո՞ւնկնդիր,
Եվ ցնծալո՛վ տարածե առագաստներդ բեհեզյա,
Ու վերստացման մը համար, մրրիկե մրրիկ,
Անորոշին և վտանգին և խութերու երեսին,
Վեհանձնական հեգնությամբ մը ծիծաղելեն,
Քո ծայրագույն հաղթությունդ իսկ հաղթահարե...։

Եվ այդ օրեն՝ սրբությունով սերմանե՛ քու հունտերդ հրեղեն,
Անհատներու ոսկեձույլ ոստաններու Նոին համար,
Ուր միմիայն ընտրյալները պիտի ապրին։
Եվ մտածումիդ Աքիլլեսյան դրոշմը դի՛ր
Մարմարներուդ անջնջելի ձևերուն,
Եվ պատգամող մատյաններուդ տիրապետմանը վրա...։
Ո՛չ չարիքին արյանը մեջ քու ձեռքերդ պղծե դուն,
Ո՛չ ալ անգույն բարիքին համար անկում ունեցիր,
Ո՛չ գութ հայցե թույլերեն և ո՛չ գթա թույլերուն,
Միայն դուն քեզ պայծառորեն զորացուր,
Եվ, նորեն ըսեմ, քու հաղթանակդ անձիդ վրա գերբնականդ թող
ըլլա...։
Ու կոուփիդ մեջ ծրարելով կամքի կաղնիդ կայծակյա,
Բարձրացիր դուն, Զորությանը զենիթները քեզ կսպասեն...
Արևորդի՛, հոգիիդ հետ բյուրեղյա,
Հանդգնորեն Ուժն երգելով բարձրացիր դուն
Գերմարդերուն այս վճռական աշտարակես դեռ ամայի...։

1911

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՂՈԹՔ ԱՌ ԴԻՑՈՒՀԻՆ ԱՆԱՀԻՏ

Ո՛վ Դիցուհի, ես մեղկության կրոններեն ահա՛ իմ խիղճս լվացի,
Ու պերճորեն դեպի զՔեզ կքալեմ։ Հողաթափներս դեռ սուրբ են։
Բա՛ց մարմար դուռը մեհյանիդ, անոր դիմաց ես ճակատս թո՛ղ
արյունեմ....
Բա՛ց բագինդ, և տո՛ւր ինծի շեկ զորությունը Արտաշիսյան
Նախնիքներուս...։
Լսե՛ ինծի, Ոսկեղեն մայր, քո՛ւյր արգավանդ, քո՛ւյր բարության,
Առատության պարգևիչ և Տիրուհիդ հին հայոց,
Նավասարդի առավոտով Քու նախկին ցեղդ ահավասիկ կցնծա՛...
Թո՛ւյլ տուր որ ես ծնրադիր ձևիդ առջև աղոթեմ...։

Լսե՛ ինծի, Հրաշքի՛ Վարդ, ոսկի ոտքով աստվածուհի,
Դիշերային սպիտակ Հարս և Տարփուհիդ Արեգական,
Եվ լուսամարմին մերկություն Արամազդյան Առագաստի,
Արևն իր մեկ ճառագայթով թո՛ղ քու բագինդ դարձյալ վառե...։
Կհավատամ ես ի Քեզ։ Բագրևանդյան բլուրներուն վրա կանգուն,
Ես բազմադարյան դիցապաշտ և նիզակազեն քու որդիդ,
Իբր առաքյալ և խնդրարկու Քեզի կուգամ վեհորեն,—
Լսե՛ ինծի, Հայկյան բամբիռս Գողթան հողեն է ծներ...։

Ուխտի կուգամ։ Քղամիդ մը հասակես վար և բարսամունքի դալար
ոստեր ի ձեռիս,
Ահավասիկ արծաթ ցնցուղ մը վարդահյութով՝ ստինքներդ օծելու...
Ահավասիկ խնկաման մը սափորաձև, ուր կործանումդ իմ
արցունքո՛վս ես լացի...
Եվ ստվերիս հետևող եղնիկներով նվիրական՝ Քեզ կքալեմ...։

Բագրևանդյան բլուրներեն հեթանոս կյանքը թո՛ղ հոսի,
Արևորդիք գեղահասակ, բեհեզներով պարեգոտված,
Աղեղներու, նիզակներու և նետերու վարժեն հետո, զոհարանիդ
սեմին վրա՝
Հաղթ ցուլերու պարանոցին իրենց սուրերը թող սևեռեն...

Թո՛ղ պտղավորյալ հայ հարսերուն ուսերեն հստակ տարմը
տատրակներուն,
Դեպի անդրիդ թռիչ առնեն։ Վարդավառի ջրախաղերը թող
բացվի՛ն...
Եվ վեշտասնամյա աղջիկներ բագինիդ շուրջ պարի ելած,
Իրենց մարմինը մոգական, ո՛վ զգաստության Տիրամայր, թող
քի՛ղ բաշխեն...

Քսան դարու Քու վրեժդ թո՛ղ որ այսօր ես լուծեմ,
Ո՛վ աստվածուհիդ Անահիտ։ Ահավասիկ քու բագինիդ կրակներուն
մեջ նետեցի
Իմ խորտակված խաչափայտիս երկու թևերը թունավոր,
Եվ ցնծա դուն, ո՛վ Ոսկեմայր, Լուսավորչի կոչեթեն, ժանտ ոսկոր
մը քեզ կծխեմ...։
Կպաղատիմ ես Քեզի, ո՛վ զորությանց Դուն աներկրորդ
Գեղեցկություն...

Դուն քու մարմինդ Արեգակին քնծայելով՝ բնդմնափոքրի անոր
Տարբեն,
Եվ անհաղթելի ահեղ Աստված մը պարգևեց դուն Հայրության...
Քու ազամանդյա արդանդդդ, ո՜վ Գիցուհի, ահեղ Աստված մը
ծնանե՞ մեզ...

1914

ՄԵԾ ՅԵՐՈՒՆԻՆ ԿԽՈՍԻ

«Ո՜վ մահվան գաղտնիք, ո՜վ գթություն,
Քու քողերդ իմ ստվերես հեռացուր որ իմ ոգիս այս իրիկուն,
Բրիտանյան ժողովրդիս և մարդկության խղճին դիմաց՝
Իր պղինձե մահարձանին բեբանավն երթա խոսիլ...

. . . . . .

— Ողջո՜ւյն ձեզի, հին օրերու հուզումներուս, ողջո՜ւյն ձեզի,
Եվ Ուեսթմինսթրի ձեր աստվածադիր տաճարեն
Թող այսօր ձեզ իմ մեռյալի անցյալս,
Ձեր խիղճերուն հայելին ձեր առջևը գա զետեղիլ...։
Անգլո-սաքսոն ժողովուրդ կորովներու և կամքի,
Դուն մտածմանդ իշխանությամբն և թռիչովն հոգիիդ,
Անհունորեն, բևեռ մը ուրիշ բևեռ,
Վեց վեհապանծ ծովերու թագուհին ես հանգիստացեր,
Դուն բանիմաց և տիտանյան տէրապետ,
Որ Օնթարիոյի ցամաքներեն, քու օրենքներդ ադամանդ
Տեմավենտեն Հիմալայա կհասնին...։
Դուն որուն բարբառը, հանճարներու քնարին բոց,
Կիսագունդի սերերուն և սրտերուն լեզուն է...։
Դուն որուն գետերն, ծիածան առ ծիածան,
Վետաներու Գանգեսեն դեպի Նեղոսն արդավանդ,
Եվ Փենճապեն Նիագարա, հին ցեղերու ցորյաններբը կոտրեն...։
Դուն առաջին օրենսդիր ժողովրդոց իրավունքին,
Գոսն բարբարոսին զոհերուն տակ հեծեծող,
Նորածաղիկ ազգերու պահապան։
Հելլեններեն Իրլանտա և Բարեհուսեն Հնդկաց հող
Եվ վերջապես դուն, Աշխատանքի դյուցազուն,
Որ Ափրիկեեն Ամերիկ առատության սուրբ հունտերը ցանեցիր...։
Ամենդրե ոգիի մը պաղատանքին, որուն ոչ մեկ Եվրոպա,
Կենդանության վերջալույսին, և ոչ իսկ դուք, չանսացիք...։

. . . . . .

Ո՜չ, չեմ հոժարիր ես այսօր, սև հոգիներ, ձեզ խափանել,
Սակարանի և ստության մաքսավորներդ մթին,
Դուք արծաթի և կեղեքման բռնապետներ,
Դուք ձեր աչքերովն ագռավի կամեցաք, որ տարիներով,
Հայաստաններն հեռավոր, իբր դիակ անսահման, մեկզմեկու վրա
դիզվին...։

Ա՜հ, այդ ահարկու օրերուն,
Ես տիեզերքն Աստծու հետ անիծեցի,
Այդ ահարկու օրերուն,
Մեր մարդկային իմաստությունն իմ աչերուս մոխրացավ,
Այդ ահարկու օրերուն, Արդարությունը, բեկոր բեկոր,
Եվրոպայի շահախնդիր ճակատին դեմ՝
Իբր ապառաժ պատիժներու փշրվեցավ...։
Այս ահարկու օրերեն ետք,
Իմ ծերունիի մահվանս մեջ մենավոր՝
Սին հույսերս և հոգեվարքս կրծոտեցի...։

. . . . . .

Ի՜նչ ցնծություն ինծի համար,
Ահավասիկ Պալքաններեն, հինգ դարերու գերիներ,
Ազատության առջև ոտքի, անոր օրենքը կհամբուրեն...։
Ծաղիկ ազգերը պետք է ապրին.
Եվրոպայի ժողովուրդներ,— ես իշխողներուն չեմ դիմեր—
Եվրոպայի և Ամերիկի ստեղծագործ ժողովուրդներ,
Ի սե՛ր կյանքին, ի սե՛ր մարդոց ընկերության, ի սե՛ր մահվան
գաղտնիքին՝

Արարատյան արդար ցեղն Հայկական՝
Ձեռք ուղղեցե՛ք, ձեռք ուղղեցե՛ք որ առանց արյան, իր դաշտերուն
վրա ծաղկի...
Ահավասիկ պաղատանքս մահվան որմին ետևեն...։

. . . . . .

Եվ լսեցեք դիս, Բրիտանյան որդիներ,
Այն մահարձանը հնկայաձև զոր դուք ինծի շքեղությամբ,
Սենթ-Փոլի մը կամարին դեմ, Լոնդոնի մեջ կերտեցիք,
Ես, Կլատսթոն, եթե չանսաք իմ այսօրվան պաղատանքիս,
Ես բովանդակ մարդկության մաքուր խիղճերն հոն հավաքած՝
Իմ պղինձե պատանքիս մեջ՝ թող անոնց հետ, և ձեր վրա
արտասվեմ...»։

1913

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԻԱՄԱՆԹՈ

Սիամանթոյի բանաստեղծությունների ամբողջական ժողովածուն առաջին անգամ տպագրվել է Ամերիկայի Բոստոն քաղաքում («Ամբողջական գործ», առաջին հատոր, 1910), երկրորդ անգամ՝ Բեյրութում, 1955-ին, մահվան քառասնամյակի առթիվ «Սիամանթո» խորագրով։ Այդ հրատարակությունից դուրս են մնացել «Դյուցազներեն» և «Հայորդիներ» շարքերը։ Երրորդ անգամ լույս է տեսել մեզ մոտ, Երևանում, 1957-ին «Ընտիր երկեր» խորագրով։ Չորրորդ անգամ լույս է ընծայվել Գահիրեում, 1960-ին «Ամբողջական գործեր» խորագրով, հավելվածով և լրացուցիչ նյութերով։ Գահիրեի հրատարակությունը, մյուսների համեմատությամբ, առավել ամբողջական է։

Ներկա հրատարակության համար, նախորդներից բացի, հիմք են ընդունվել քերթվածների առանձին շարքերի («Դյուցազներեն», «Հայորդիներ», «Հոգեվարքի և հույսի շահեր», «Կարմիր լուրեր բարեկամես», «Հայրենի հրավեր») առաջին հրատարակությունները և դրանց հետագա վերամշակված օրինակները։ Այստեղ ընդգրկված է Սիամանթոյի գրական ամբողջ ժառանգությունը, բացառությամբ սեպագրերից և տպագրված մի երկու քերթվածներից։ Պահպանված է հեղինակի կետադրությունը, շտկված են նախորդ հրատարակություններում թույլ տրված վրիպումներն ու տպագրական սխալները։

Ժողովածուի կառուցվածքի և նյութերի դասավորության հարցում հետևել ենք հեղինակի ձեռքով հրատարակված Բոստոնի «Ամբողջական գործ»-ին, պահպանելով երկերի ժամանակագրական կարգը։

ԴՅՈՒՑԱԶՆՈՐԵՆ

Սիամանթոյի բանաստեղծությունների առաջին գիրքը։ Լույս է ընծայվել Փարիզում 1902-ին, իր իսկական անունով՝ Առոմ Ցարճանյան։ Երկրորդ անգամ հեղինակի կողմից կատարված կարևոր փոփոխություններով, առանձին տողերի, բառերի կրճատումով կամ վերափոխումով՝ զետեղվել է «Ամբողջական գործ»-ում։

Այդպիսի աշխատանք հեղինակը կատարել է նաև մյուս շարքերը վերահրատարակելիս առաջ։

Ներկա հրատարակությամբ լույս է տեսնում 5-րդ անգամ, ամբողջությամբ։

ՀԱՅՈՐԴԻՆԵՐ

«Հայորդիներ»-ի Ա. և Բ. շարքերը առաջին անգամ լույս են ընծայվել Ժնևում 1905 և 1906 թվականներին, Գ. շարքը՝ Փարիզում 1908-ին։ Այս երեք շարքերի շապիկների վերևում գրված է հեղինակի իսկական անունը՝ Ատոմ Յարճանյան, իսկ դրա ներքևում՝ Սիամանթո։ Գ. շարքի շապիկը զարդարում է մի հերաբեկ, սահմոն գեղեցկուհու նկար, ատամների մեջ փետրե գրիչ և սուր, աչքերում՝ ցասման և վրեժի շանթեր։ Երկրորդ անգամ Ա. և Բ. շարքը լույս է ընծայվել Կ. Պոլսում 1908-ին, որից դուրս են մնացել «Մենախոսություն» և «Ատելության կոչ» քերթվածները՝ թուրքական սահմանադրությունից հետո հարմար չգտնելով թողնել այդ շարքում։ Երրորդ անգամ «Հայորդիներ»-ը տպագրվել է՝ «Ընտիր երկեր»-ում, (Երևան, 1957 թ.), որոշ կրճատումներով։ Յոթերորդ անգամ զետեղվել են «Ամբողջական գործեր»-ում։

«Հայորդիներ»-ը չեն մտել Բոստոնում հրատարակված «Ամբողջական գործեր»-ի մեջ։ Հեղինակը մտադրություն է ունեցել ուրիշ նոր գործերի հետ միասին դրանք զետեղել երկրորդ հատորում։

Ներկա հրատարակությամբ «Հայորդիներ»-ը լույս են ընծայվում 5-րդ անգամ, երեք շարքերով՝ ամբողջությամբ։

ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՋԱՀԵՐ

Առաջին անգամ լույս է ընծայվել 1907-ին, Փարիզում, Ատոմ Յարճանյան անունով։ Գրքի շապիկի համար քերթողը պատվիրել է սիմվոլիկ մի նկար, որ այժմ պահվում է գրականության և արվեստի թանգարանում։ Նկարի վերևում պատկերված է արևը իբրև հույսի ջահ, նրա տակ եղևնու հրկիզվող անտառը՝ արյան հեղեղի մեջ և դրա դիմաց ժողովրդի զարհուրանքը մարմնավորող մարդկային մի դեմք՝ լայն բացված աչքերով (ըստ Ռուբեն Մնակի՝ հենց բանաստեղծի դեմքն է, «Բժշկին գրքեն փրցված էջեր և քերթվածներ»)։ Գրքի շապիկի համար օգտագործված այդ նկարի մշակված տարբերակը և բոլոր տառերը գծագրված են կարմիրով։ Գրքի բնաբանը՝ «Արյունը և եղբայրությունը ամենամեծ ուժերն են» (Էնգելս), գրված է շապիկի վրա՝ նույնպես կարմիրով։

«Դյուցազնորեն»-ից և «Հայորդիներ»-ից հետո այս գիրքը թեմատիկ մի անցում էր, ուր մաքառման ոգուն գերակշռում է տառապանքի և ողբերգության մոտիվը։ Դա սիմվոլիզմի ուսումնասիրության շրջանն էր (1897—1900), որի ազդեցությամբ նույն շրջանում առաջացավ «Ցավերգան ցավենս» բանաստեղծությունների՝ փաստաբեն առաջին ժողովածուն, որ այդպես էլ մնաց ձեռագիր վիճակում։ Վերջին հետագայում՝ «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ում հեղինակը վերամշակելով օգտագործել է այդ տետրի մի շարք գործեր՝ «Աղոթք», «Հոգեվարք» (գրքում՝ «Հոգեվարքի իրիկուն»), «Մահերգ», «Դեպի հոն» (գրքում՝ «Զարշարանքի երազ»), «Ցժգուն նարեն» (գրքում՝ «Ալյուն»), «Արցունքներ», «Թաղում», «Աքսորված խաղաղություն»։ Վերջին երկուսը թեև նշված են ցանկում, բայց տետրում չկան (ըստ երևույթին նախապես լույս է տեսել մամուլում)։

«Հոգեվարքի և հույսի ջահեր»-ը երկրորդ անգամ լույս է տեսել Բոստոնի «Ամբողջական գործ»-ում, երրորդ անգամ՝ Բեյրութի «Սիամանթո» գրքի մեջ, չորրորդ անգամ՝ Երևանի «Ընտիր երկեր»-ում, հինգերորդ անգամ՝ Գահիրեի «Ամբողջական գործեր»-ում։

Ներկա հրատարակությամբ լույս է ընծայվում վեցերորդ անգամ։

1. «Մահվան տեսիլք»— բանաստեղծի՝ տպագրված առաջին քերթվածը՝ «Աքսորված խաղաղություն» վերնագրով, լույս է ընծայվել Սուրեն Պարթևյանի «Վաղվան ձայն» պարբերականում, Մանչեստր, 1898, դեկտեմբեր։

2. «Ավերումի գիշեր»— առաջին անգամ տպագրվել է Գահիրեի «Շիրակ» հանդեսում, 1905, № 2։ Քերթվածը նվիրվել է տիկին Զավենին և օրիորդ Շաղիթյանին։ Վերջինին (անունը՝ Սաթենիկ, Ժնևի բժշկական ֆակուլտետի ուսանողուհի, Թիֆլիսից, մինչև վերջերս կենդանի էր, ապրում էր Երևանում)։ Քերթողը սիրահարվել է և մի քանի տարի նամակագրություն է ունեցել. իսկական ազգանունը Զաղիթյան՝ Շաղիթյան անվանել է քերթողը՝ կատակով։

3. «Թաղում»— առաջին անգամ տպագրվել է «Բանբեր»-ում, 1903, էջ 145։

4. «Արյուն»— առաջին անգամ՝ նույն տեղ, 1904, էջ 116։ Քերթվածի տակ գրված է 1903։

6. «Հիշատակ» — առաջին անգամ տպագրվել է Վ. Թեքեյանի «Շիրակ» հանդեսում, 1905, № 6, էջ 414։ «Տարփանքի և հրաժեշտի խոսքեր» խորագրի տակ։ Բանաստեղծությանը խմբագրության կողմից տրվում է հետևյալ ծանոթագրությունը. «Ատոմ Յարճանյան Զվիցերական դարմանատունն մը, ուր կգտնվի, կղրկեմ քերթվածներու այս շարքը, որոնց տագնապի մը մեջ գրված ըլլալը կծանուցանեմ։ Յարճանյանեն ամեն հիացողները, որոնց թիվը քիչ չէ, տրտմությամբ պիտի լսեն այս տխուր լուրը ու մեզի հետ անձկագին պետք է մաղթեն տաղանդավոր երիտասարդ բանաստեղծին մոտավոր ապաքինումը»։ Ծ. Խ.

7. «Գթություն»— առաջին անգամ տպագրվել է «Բանբեր»-ում, 1903, էջ 146։ Հետագայում զետեղելով «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ում փոփոխել է՝ դիմորոշ դարձնելով այն բառերը, որով դիմում է աստծուն (ոճրագործներդ, ցորյանիդ և այլն)։

8. «Անդրշիրիմյան ազաղակ»— առաջին անգամ տպագրվել է «Ռազմիկ» պարբերականում 1905 թվականին։

10. «Արյուն է, որ կտեսնեմ»— առաջին անգամ տպագրվել է 1906-ին «Ըմբոստացումի խոսքեր» խորագրի տակ։ Քերթվածի սկզբում գրված է Գարեգին Եպիս. Մրվանձտյանից բերված հետևյալ բնաբանը. «Աստված իջեր է Հայաստան՝ հայոց արյունն է հոտոտել...»։

12. «Հայրենի աղյուք»— առաջին անգամ «Շիրակ»-ում, 1905, № 4։

16. «Ծարավ»— առաջին անգամ տպագրվել է «Բանբեր»-ում, 1903, էջ 147։

20. «Անպետին երգը»— առանձին գրքույկով տպագրվել է 1912-ին Կ. Պոլսում,

անգլերեն։ Տեքստը հայերենից թարգմանել է տիկին Ալիս Սոսն Բլեքուելը։ Գոնեմը գրվել է Ջենովայում 1907-ին, անգլերեն է թարգմանվել 1911-ին։

21—30.— Այս քերթվածները չկան «Հոգեվարքի և հույսի ցահերը» շարքի փոքրիկ հրատարակության մեջ։ Դրանք գրված են 1907-ից հետո և զետեղված են Բոստոնի «Ամբողջական գործ»-ում։ Ներկա հրատարակության մեջ մենք հետևել ենք նյութերի դասավորության պատմական հաջորդականությանը։

21. «Ջարշարանքի երազ»— առաջին անգամ տպագրվել է Պետերբուրգի «Բանբեր» հանդեսում, 1903, էջ 144։ Սկզբնական վերնագիրը «Ցավերուն ցավենն» շարքում եղել է «Դեպի հոն»։ Սիմվոլիզմի գրեթե անմարս, տիրական ազդեցությունը կրող այս շարքի քերթվածները տպագրելուց առաջ Սիամանթոն հիմնովին մշակել է, պարզեցնելով մթամած, անհասկանալի սիմվոլիկան և հաղթահարելով անկումային աշխարհազգացողությունը։ Իբրև նմուշ բերում ենք քաղվածք «Ջարշարանքի երազ»-ի առաջին տարբերակից՝ «Դեպի հոն» վերնագրով.

Գարնան առտո՜ւ,
Հոգիս շատրվան մը դեպի վեր.
Ու տերևները կիլնան։
Գետնափորերու մեջեն դաշնամուրի ձայն,
Ու դեպի հոն աճապարող լուսին մը այս գիշեր։
Եկեղեցիի մը մեջ անծանոթ քանի մը դիակ։
Ու տանիքիս վրա անձրևումը երկաթե։
Փոթորիկ մը գանգիս տակ՝
Ու տեղափոխվող ջուրերուն վրա
Խաչված Հիսուս մը կերևա։
Անձնասպան թագավորներ պալատեն անդին,
Ու խեղդամահ մուրացկան մը հոն։

Թիարանին մեջ հարսանիք մը դատապարտվածի.
Ու անձրևոտ օր մը պատուհանիս տակ
Երաժշտություն մը կթերթազերծվի։
Ու հոգիիս մեջ վախ մը աս գիշեր,
Պարապ գավաթ մը սեղանիս վրա։
Մարմարե աչքե մը, որուն մեջեն հովեր
Ու վարագույր մը կիջնա։

...Օ՜, հողեն խորտակված մարմինս հակա
Դեպի պարապ դագաղ մը կգալարվի
Երբ հոգեվարքի հետ...
Ուրիշ արև մը կհուսա,
Հոգնած գլխուս լալն արևը կբաղձա։
Ու մեղակիրները քրքիջով հատակ
Երկարորեն
Դագաղները օդի մեջը պիտի օրորեն՝
Ագռավներու փոթորկի հետ եղեռակամ՝
Գերեզմանն գերեզման։

23. «Աղոթք»— «Ցավերուն ցավենն» շարքից, առաջին անգամ տպագրվել է «Բանբեր»-ում, 1903։ Տպագրվելուց առաջ նույնպես վերամշակվել է։

25. «Գիշեր մը»— առաջին անգամ տպագրվել է Լոնդոնի «Նոր կյանք» հանդեսում (1899, սեպտեմբերի 1, № 17), «Արյունին քերթվածը» խորագրի տակ՝ «Կամարակապ» վերնագրով, Ատոմ Միրզա ստորագրությամբ (ինչպես իրեն կատակով անվանել են ընկերները)։

26. «Հոգիս»— առաջին անգամ տպագրվել է Պետերբուրգի «Բանբեր» հանդեսում, 1904, էջ 115—116։ Հետագայում զետեղելով «Հոգեվարքի և հույսի ցահեր»-ում՝ կատարել է որոշ փոփոխություններ. օրինակ. կրճատել է «Եվ ուր ապրել ուզողները միայն արցունքն կրցան երջանկանալ» տողը, «Հոգիիս մեջ հարսանիք մը կա» դարձել է՝ «Հոգիիս մեջ հերոսներու ծնունդ մը կա» և այլն։

27. «Մահերգ»— առաջին անգամ տպագրվել է Փարիզի «Անահիտ» հանդեսում, 1900, թիվ 1—2, էջ 13։ Քերթվածը նվիրված է Լևոն Բաշալյանին։ Սիմվոլիստական արվեստի կնիքը կրող նման գործերը «Հոգեվարքի և հույսի ցահեր»-ում զետեղելիս մշակել է, աշխատելով առավել մաքուր տողերը պարզեցնել կամ կրճատել։ Օրինակ, կրճատվել են՝

Գիշերվան թոչյունները եբենոսե ու երկաթե մարմիններով
Մարմնույս վրան, մահերգելու եկան։

«Անհունորեն թոթվեցին» դարձրել է՝ «Անվերջորեն սրսկեցին», «Ոսկի հսկա քայլերը», «ոսկեհնչյուն հսկա քայլերը», «փառբերեն վիրավոր»— «փառբերեն տրժգունած» և այլն։

31. «Ուրվականները»— «Ջարշարանքի տեսիլներ» խորագիրը կրող այս քերթվածը դուրս է մնացել «Ամբողջական գործ»-ից և առանձին գրքերով լույս ընծայված քերթվածների շարքից։ Սակայն նկատի ունենալով բովանդակության հարազատությունը «Հոգեվարքի և հույսի ցահեր»-ին, առաջին անգամ դնում ենք այդ շարքի մեջ։ Հեղինակի ձեռքով տպագրվել է «Բանբեր» հանդեսում, 1911, թիվ 5 (77)։

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԵՍ

Առաջին անգամ լույս է ընծայվել 1909-ին Կ. Պոլսում՝ Ադանայի շարդերից անմիջապես հետո, Ատոմ Յարճանյան և ներքևում՝ Սիամանթո ստորագրությամբ։ Գրքի շապիկի վրա նկարված են արյունահոս տառեր, որոնցով գրված է խորագիրը։ Տառերից հոսող արյունը լճացել է շապիկի ներքևի մասում։ «Կարմիր լուրեր բարեկամաս» շարքը 2-րդ անգամ լույս է ընծայվել՝ Բոստոնի «Ամբողջական գործ»-ում, 3-րդ անգամ՝ Բեյրութի «Սիամանթո» գրքում, 4-րդ անգամ՝ Երևանի «Ընտիր երկեր»-ում, 5-րդ անգամ Գահիրեի «Ամբողջական գործեր»-ում։

«Բնության լացը»—«Սիոն»— քերթվածը չի եղել «Կարմիր լուրեր բարեկամաս» շարքում, բայց նկատի ունենալով բովանդակության մեծ հարազատությունը, առաջին անգամ դնում ենք այդ շարքի տակ։ Ծանկում նշում ենք աստղանիշով։ Տպագրվել է «Աղատամարտ», 1909, հունիս 10—23։

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՎԵՐ

Առաջին անգամ գրեթե ամբողջապես տպագրվել է ամերիկահայ մամուլում 1909—1910 թթ., երկրորդ անգամ՝ Բոստոնի «Ամբողջական գործ»-ում, 3-րդ անգամ՝ Բեյրութի «Սիամանթո» գրքում, 4-րդ անգամ՝ Երևանի «Ընտիր երկեր»-ում, 5-րդ անգամ՝ Գահիրեի «Ամբողջական գործեր»-ում։

Ներկա հրատարակությամբ «Հայրենի հրավեր» շարքը լույս է ընծայվում 6-րդ անգամ։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Առաջին անգամ առանձին գրքով լույս է ընծայվել Կ. Պոլսում 1913-ին, 2-րդ անգամ՝ Թիֆլիսում 1913-ին, 3-րդ անգամ՝ Բեյրութի «Սիամանթո» գրքում, 4-րդ անգամ՝ Երևանի «Ընտիր երկեր»-ում, 5-րդ անգամ՝ Գահիրեի «Ամբողջական գործեր»-ում։

ՀԱՎԵԼՎԱԾ

Ներքոհիշյալ գործերը դուրս են մնացել Բոստոնի «Ամբողջական գործ»-ից և Սիամանթոյի կողմից հրատարակված բանաստեղծությունների շարքերից։

ա) «Խոսք անծանոթ անցորդին»— տպագրված է «Կամքի իրիկուններ» խորագրի տակ, «Բագին», 1911, թիվ 1 (73)։

բ) «Թող զորությունը ձեզ խոսի»— տպագրված է նույն խորագրի տակ, «Բագին», 1911, թիվ 3 (75)։ Քերթվածը նվիրված է Զոհրապին և Զարդարյանին։

«Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ»—առաջին անգամ տպագրվել է Դ. Վարուժանի և Հ. Սիրունու խմբագրությամբ լույս ընծայված «Նավասարդ» տարեգրքում, Կ. Պոլիս, 1914։

«Մեծ ծերունին կխոսի»— առաջին անգամ տպագրվել է «Բուլանյա» պարբերականում, 1913, 1/14։

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ակումիտ— *Անքուն, ոչնող, աղոթքի և պիտությունների նվիրված վանականների կարգ Բյուզանդիայում։ Գամվի մակդիր՝ գիտնական վարդապետ նշանակությամբ, որ հուշները տվին Մեսրոպ Մաշտոցին։*

Այեր— *Երկրագունդը պատող օդը, մթնոլորտ։*

Անդոնական— *Մտատանջող, վրդովեցնող, տխրեցնող։*

Անդրակարոտ — *այն կողմի՝ դրսի կարոտը քաշող։*

Անվկանդ— *Անխորտակելի, անպարտելի, անվեհեր, քաջարի։*

Այսահար— *Դիվահար, սարսափահար։*

Ապաժամանակ— *Ուշ եկած, ուշ ժամանած, ուշացած։*

Առխարխափ— *Խարխափելով։*

Առնավություն— *Հեռավոր նախնիների հատկանիշները ձեռք բերելը, ատավիզմ, հնություն, վաղեմի շրջան։*

Բ

Բարսամուկ— *Ծառի բարակ ճյուղերի խուրձ, որ մոգերը բռնում էին ձեռքներին՝ կրոնական արարողություն կատարելու ժամանակ։*

Բացաստան— *Հեռու տեղ, արձակ, բաց տեղ, ամայի տարածություն։*

Բժժանք— *Դեղ կամ իր, որ եթե մարդ կրեր՝ ազատ կմնար հիվանդությունից, ալքով տալուց։ Հին բուժական միջոց հուսության, կախարդության, վհուկության։*

Բրգավարել— *Բուրգեր սարքել, բուրգեր գոչացնել։*

Դ

Դաշտարտ— *Դաշտեր։*

Դինցել— *Մեծ տալ, կաթով կերակրել։*

Դուժանք— *Ոչխտարդուժ, խոստումնապանց, գավառական, խարդախ։*

Ջ

Ջայախաբ— *զգայական պատրանք, ուղեղի խանգարման հետևանք։*

Կ

Կաթողիկե— *Ընդհանրական, տիեզերական, քրիստոնեական ընդհանուր եկեղեցի։ մակդիր։ Աթոռանիստ եկեղեցի։ Եկեղեցու գմբեթ։*
Կնարուկ— *Անուշահոտ կարմրավուն կամ կիտրոնագույն խեժ։*
Կոզկոզանք — *Բարձրաձայն ողբ, լացուկոծ, կական։*

Հ

Հակազ— *Շունչ։*
Համենալ — *Ուշանալ, հապաղել։*
Հանգույն— *Նման, համանման։*
Հասողություն— *Մտքի կարողություն, ըմբռնում։*
Հեզգություն— *Մեղկություն, հեղգ լինել՝ ծուլություն, դանդաղություն, անհոգություն, անփութություն։*
Հրաշանալ— *Սքանչանալ, զմայլել։ Հրաշալի երևալ, հիացմունք առաջ բերել։*

Մ

Մոլախինդ կամ մոլեխինդ—*Ջրային բույս, մուտ, բայց ինամեր արմատով, քաղցր համով, գարշահոտ հյութով, սատիկ թունավոր։ Սոկրատին թունավորեցին մոլեխինդով, ըստ Խորենացու՝ Տրդատին՝ նույնպես։*
Մարուկ— *Իշի կամ ձիու քուռակ։*

Ն

Ներզորություն— *Ներթաքույց ուժ, պոտենցիալ ուժ։*
Ներսիդի— *Նրսի դին, ներսի կողմը։ Մարմնի ներսի մասը։*

Ո

Ոգեվար— *Հոգեվարք, վերջին շունչը ավանդելու տագնապը։*

Չ

Չվառություն— *Թշվառություն։*

Պ

Պարապել— *Սատիկ հոգնել, ուժասպառ լինել, վհատվել, լքվել։*

Ս

Սագուռն—*(Սաուրն)*— *Ձևի հայրը։ Մարդկանց սովորեցրեց երկրագործություն, հատատաելով խաղաղություն և արգասավորություն։ Ըստ գիցաբանության՝ Ոսկեդեն դարի ստեղծիչը, երջանկության և ուրախության բաշխիչը։*
Սահարան — *բիրժա, բորսա։*
Սանդարամետ — *Երկրի խորքերը, ստորերկրյա վիհ, անդունդ, գժոխային ոգիների տատանա։*

Վ

Վայրապար— *Ջուր տեղը, պատահաբար, անխորհրդաբար։*
Վարշամակ— *Թաշկինակ, գլխաշոր։*
Վիշտասնամյա— *Տասնվեց տարեկան։*

Ցամաքանով— *Ոչ թե ծուլից, այլ ցամաքի կողմից եկող քամի, հողմ։*

Ք

Քիմեռ— *Ծշերուաքաղ, երևակայական կենդանի, ցնորական երևակայությունից ստեղծած վտանգ կամ իրողություն։*
Քենանույշ— *Քինախնդիր, վրեժխնդիր։*

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ԵՐԿԵՐ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Արևմտահայ պոեզիայի զարգացման բուռն շրջանում, 20-րդ դարի սկզբին ասպարեզ իջած գրական սերնդի ամենատաղանդավոր ներկայացուցիչներից է Դանիել Վարուժանը՝ պոետական վիթխարի երևույթ, բազմազան, խոր և մրրկահույզ։ Նա իրավունք ուներ ասելու՝ սրտի մեջ կրում է մի ժողովուրդ, որ «կրծքի տակ կորոփեց»։ Նրա կրակոտության չափանիշն են Արշակ Չոպանյանին գրված հետևյալ տողերը՝ «Անահիտ» ամսագրում տպագրվելիք բանաստեղծության առթիվ. «Քերթվածը զոր կներփակեմ՝ թերևս Դուք սիրեք. հակառակ պարագային՝ կարող եք այրել, իր բոցը՝ ապահով եմ՝ երեք օր Փարիզը պիտի լուսավորե»[1]։

Մեծ քերթողի յուրաքանչյուր տողը, իրոք, այրվում է ներքին կրակով, ինչպես ինքն է ասում. «ամեն շեշտե պետք է որ իր սիրտը կաթիլ մ'արյուն հոսե»[2]։ Քրիստոնեական աղերսանքի փոխարեն նրա եղեգնափողից որոտում է հեթանոս ոգու ձայնը, որ հնչում է մերթ վշտագին ու ցասումնալից, մերթ ահեղ ու որոտագին։

Դարասկզբի արևմտահայ պոեզիայի կենսական այդ մեծ ուժը պայմանավորված էր քաղաքական իրադարձություններով, հայկական առաջին ջարդերից մինչև համաշխարհային պատերազմը ընկնող ճանապարհի հերոսական պատումներով։ Դա կործանումից ելք որոնող ժողովրդի մաքառման ուժը և ճակատագրի փիլիսոփայությունը խտացնող պոեզիա էր։

Գրական մեծությունները, ինչպես Եվրոպայում և Ռուսաստանում, այնպես էլ մեզ մոտ՝ «խորհրդապաշտության ստրուկը» չդարձան, նրանք չընդունեցին սիմվոլիզմի վարդապետությունն իր ամբողջության մեջ, որ լի էր հոռի, հակասական գրույթներով, այլ վերցրին այն կողմերը, որոնք հարազատ էին իրենց ազգային տրամադրությանը, իրենց բանաստեղծական աշխարհին։ Մոդեռն արվեստից եկող նրանց նեոռոմանտիզմը, չնայած մեթոդի ընդհանրությանը, տարբեր արտահայտություն ստացավ Վարուժանի և անհատականությամբ տարբեր հայ բանաստեղծների

---

[1]. ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, այսուհետև՝ ԳԱԹ, Ա. Չոպանյանի արխիվ, 4/4, 1907-ին գրված նամակը Գանայից։

[2] Նույն տեղը, Դ. Վարուժանի նամակները Ա. Չոպանյանին, 21/1, 1900, Գանա։

գործերում։ Սիմանովիչի սիմվոլիզմը՝ գրամատիկական ահեղ շնչառության և հեթանոս արիության հետ՝ յուրացրեց խոսքի մոգության գաղտնիքը և իմպրեսիոնիզմի գունագեղ տարերքը, Վարուժանն առաջ բերեց հեթանոս հոսանքը՝ ռեալիզմից յուրացնելով հստակ ու զուսպ գծերի ոճական-ինչ-որ արտահայտություն, Մեծարենցը և Տերյանը հայանադրծեցին հոգեկան նրբերանգների անընմբռնելի շարժման մի նոր աշխարհ։

* * *

Դանիել Վարուժանը (Չպուքջյարյան) ծնվել է 1884-ին, Սեբաստիայի Բրգնիք գյուղում, որ մինչև 1915-ի եղեռնն ուներ 500 տուն հայ բնակիչ։ Ուռենիազարդ այդ գյուղը գտնվում է Ալիսի ջրերի մոտ, շուրջը «ցորյանի ծովեր»։ Վարուժանը տակավին «Բիբեռնիկներ որսալու» հասակում էր, երբ հայրը պանդխտում է Պոլիս՝ ակամա որբացնելով ընտանիքը։

Մանուկ Վարուժանը նոր էր ոտք դրել գյուղի դպրոցը, երբ 1894—96-ի ջարդերը Սասունից տարածվում են ամբողջ Արևմտահայաստան, հասնում Սեբաստիա։ Այդ օրերին գնալով Պոլիս, նա հորը գտնում է բանտում։ Դեռևս այդ պահից հոգու մեջ զգում է «առյուծի բաշի» թափահարում։ Ցասման ու կռկիծի այդ զգացումը այնուհետև աճում է ուսման ընթացքի հետ։ Երկու տարի Պոլսի Մխիթարյան նախակրթարանում, ապա Քաղկեդոնի վարժարանում՝ պատանի Վարուժանը այդ զգացումի ներշնչանքով է կատարում գրական առաջին փորձերը։ 1902-ին իր ուսուցչի՝ Արիստակես Քասգանտիլյանի հանձնարարական գրությամբ ընդունվում է Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան դպրոցը։ Նամակում գրված էր. «Նոր Մկրտիչ Պեշիկթաշլյան մը կգրկեմ, լավ նայեցեք»[3]։

1905-ին հայագիտական հարուստ պաշարով դպրոցն ավարտելով, Վարուժանը «Գեղունի» հանդեսում լույս է ընծայում «Մարսուններ» քառատեղծաշարը։ Այդ նույն թվականին ընդունվում է Բելգիայի Գենտ քաղաքի համալսարանը։ Թանվորական միջավայրը, առաջադեմ գաղափարները ձևավորում են նրա աշխարհայացքը, իսկ գրական ծանոթությունը՝ «Հոմերեն մինչև Մեսերլինգ» հասունացնում է պաշտոնը։ 1909-ին համալսարանն ավարտելով, ուղևորվում է հայրենի Սեբաստիա՝ ուսուցչության։ Այստեղ է, որ նրա մանկական տպավորությունները թարմանում են ինքնաշարհիկ գեղեցկություններով։ Սեբաստիայում, Եվդոկիայում, ապա և Պոլսում, ուր ապրիլյան օրերին եղերական վախճան պիտի գտնեին գրական սերունդները, Վարուժանը ծավալում է գրական-հասարակական և մանկավարժական լայն գործունեություն։ Նա հրատարակում է «Նավասարդ» տարեգիրքը, դառնում գրական վերածնության և գրական նոր հոսանքի պարագլուխ, պայքարելով այն ամենի դեմ, ինչ քարացած էր և հետադեմ, ինչ հետևանք էր ստրկամտության ու բռնության։

* * *

Դանիել Վարուժանի կյանքը կարճատև եղավ (1884—1915)։ Արևմտահայ գրական սերունդը սեփական արյունով մարեց իր «հույսի ջահերը», որոնք պիտի

[3]. «Էջմիածին», 1958, № Ը, էջ 35։

վառվեին նոր գործերում։ Շատերն ընկան, կարելի է ասել, իրենց արվեստանոցի մաքմարյա բեկորների մոտ՝ տեսնելով «մորթված արշալույսներ»։ Անավարտ մնացին գեղեցիկ մտահղացումներ ու երգեր։ Անավարտ մնաց Վարուժանի «Հայ հոմերագիրքը», «Գինիի երգը», «Սասունց տունը»։ Տեղի էր ունեցել՝ բանաստեղծի խոսքերով՝ կործանումն այն ամենի, «ինչ որ հանճարն էր կանգներ»։

Սուլթանական կործանիչ այդ ուժի դեմ ծառացած արևմտահայ պոեզիան ժողովրդի մաքառման, վերջին ճիգերի, «ազատության կամ մահի» գրական արձագանքն էր, որ այնպես վառ դրսևորվեց Վարուժանի ստեղծագործության մեջ։ «Սարսուններ»-ից մինչև «Ցեղին սիրտը» և «Հեթանոս երգեր»-ից մինչև «Հացին երգը», ընդամենը մեկ տասնամյակում, կատարվեց գրական մի հրաշք, որ բնութագրական է ամբողջ 1905—1915-ը ընկած ժամանակաշրջանի համար։

Վարուժանը գրական իր սերնդի հետ եկավ վերջ դնելու հոգու և մտքի խեղճությանը պոեզիայում։ Առաջին իսկ գրքում՝ «Սարսուններ»-ում (Վենետիկ, 1906), նետվելով պայքարի ասպարեզ, նա իր քնարը կոչում է «Վերքերու գործի մը»։ Չնայած Մխիթարյան միջավայրին, Վարուժանը հաղթահարում է կլասիցիզմի ազդեցությունը և հետևում է հայ մեծ դասականների՝ Աբովյանի, Ալիշանի, Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Բաֆֆու ավանդույթներին։ Նա իր կոչումը տեսնում է ժողովրդին նվիրվելու մեջ։

Մխիթարյանները «Սարսուններ»-ից կտրել հանել են կեսից ավելին, հատկապես Արևմտահայաստանի քաղաքական վիճակը պատկերող էջերը, որպեսզի «Թուրքին դեմ հակառակ բան մը» չլինի[4]։ Չնայած դրան, բանաստեղծը հեռավոր ակնարկներով ցույց է տալիս ազգային վերքերն ու ազատագրության սուր պահանջը, մեր առջև բացում տառապանքի այն երկիրը, ուր մոխիրների վրա լալով շրջում է մայրը, ուր բանտի մեջ մարդկանց սիրտը լցվում է խավարով, ուր աշխատավոր ձեռքերն օտարության մեջ մեռնում են՝ հայրենի օջախը և հարազատներին տենչալով։

Վարուժանին իսկական հռչակ բերեց նրա «Ցեղին սիրտը»։ Գիրքն առաջին անգամ Պոլսում, 1909-ին, Թուրքական սահմանադրության օրերին, երբ կրկին աշխուժացել էր ազգային կյանքը։ Հենց նոր լույս ընծայված գիրքը հեղինակը բերում է Սեբաստիա՝ Ազգային Արժման վարժարան և հուզմունքից դողացող ձայնով աշակերտների համար կարդում է «Ջոն»-ը։ Այսպիսի պարզ ձևով է նշանավորվում հայ գրական խոշոր երևույթի հանդես գալը։

«Ցեղին սիրտը» բացառիկ ընդունելություն է գտնում։ Գրական հորիզոնում Վարուժանի երևալը նրա գրչակից Հակոբ Սիրունին նմանեցրել է ծագող արևին։ Եվ իրոք, քերթողը խոր հետք թողեց ժամանակի գրական շարժման վրա։ «Դուրյանն վերջը,— գրում է Մերուժան Պարսամյանը,— Վարուժանն է, որ բազմաթիվ հետևորդներ ունեցած է։ Վարուժանությունը մը գոյություն ունի այսօր»[5]։

Ինչո՞վ էր պայմանավորված գրքի հաջողությունը։

Նախ նա քերում էր ժամանակի շունչը, հրատապ հարցերի, եղեռնի և ազգային-ազատագրական մաքառումների արձագանքը։ Բացի այդ, «Ցեղին սիրտը»

[4]. Դ. Ճիզմեճյան, «Դանիել Վարուժան», Գահիրե, 1955, 1907, փետրվարի 27-ին Վարուժանի Գենտից գրած նամակը։

[5]. «Շանթ», 1918, № 6, էջ 64։

«Մարսուններ»-ից հետո նորություն էր, թե արևմտահայ իրականության համապարփակ ընդգրկումով, թե հայրենիքի թեմայի գեղարվեստական բազմաձայն հնչեղությամբ։ Ժողովրդական լեզվի և գրաբարի նրբությունները միմյանց պատշաճելով, հեղինակը ստեղծում է փարթամ, ճկուն դարձվածքներ, հզոր, մրրկաշունչ շեշտեր։ Նա կարծես սերում է մեր անցյալի հսկաներից կամ, ինչպես ասել է ֆրանսիացի բանաստեղծ Լյուկ Անդրե Մարսելը, «պատկանում է առյուծի ցեղին»։ Նրա ձայնը հնչում է ինչպես մեր տոհմիկ եղեգնափողը՝ մերթ ծուխ մերթ բոց ժայթքելով։ Մեծ խորքի հետ նա բերում է ձևի կատարելություն՝ հակադրվելով կեղծ, անարյուն, ցուկայիկ արվեստին։

Պատահական չէ, որ «Ցեղին սիրտը» քերթողը ներկայացնում է գրքի էությունը բովանդակող «Զոն»-ով։ Նրա երևակայությունը ճախրում է հեթանոս շրջանից մինչև ներկա դարերը։ Եղեգնափողից ելնում է ողբ, ելնում է բանաստեղծի սիրտը։ Թվում է եկել է մի նոր քերթողահայր և երգում է 20-րդ դարի ողբը. «Ողբամ զքեզ հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հյուսիսականաց վեհագույն»։

Ջարդերի նկարագրությունը Վարուժանի, ինչպես և Սիամանթոյի, պոեզիայում դառնում է իմպերիալիզմի արշավանքի առաջ կանգնած ժողովուրդների դատի պաշտպանություն։ Ջարգացվում է այն գաղափարը, որ ազգերին բնաջնջելու սնոբագործությունը դատապարտված է չախչախման։ Որքան Թուրքիան ցեղասպանության նպատակով մխրճվի հայ արյան մեջ, այնքան կսարտվի բարոյապես։

Ջարդերն արտացոլվում են ականատեսի անմիջականությամբ։ Ստեղծվում է Եվրոպայի կողմից խաբված ու լքված և Թուրքիայի դեմ միայնակ Հայաստանի կերպարը։ Ալիշանի նման Վարուժանն էլ խոսում է Երկրի հետ իբրև հարազատ, իբրև մայր, խնդրում, թախանձում.

Ս՛ն, Մա՛յր իմ, Մա՛յր, սա վայրկյանիս խնդրե՛, օ՛ն,
Մեջդ ամեն խուժդուժ, ամե՛ն դահճապետ...

Սակայն լուռ է մայրը։ Նրա որդիք անպետ են, սովոր բահի և ադզի։ Նրա նախկին հզորությունից չի մնացել ոչինչ։ Նա կիսով չափ մեռած է, կիսով չափ թաղված ավերակների տակ։ Բանաստեղծը ողբում է հայոց «մորթված Արշալույսները»։ Մինչդեռ մզկիթներում դեռ գրգռում են մոլեռանդ ամբոխին՝ զինում հայերի դեմ։

Վարուժանի արվեստին խորթ են վերացականությունն ու սարտամությունը։ Նրա պատկերները փայլում են իրականության թարմությամբ, կենդանի շարժումով, ցայտուն ու խոր գծագրությամբ։ Ահա շարդերը մարմնացնող «Վայրագ ոգին» ըստիտակ ձիու վրա։ Նրա ապարոշում ծվարել է Ալփասլանի ոգին՝ իբրև թժ։ Նրա կերպարը գծագրվում է Տավրոսից մինչև Մասիս՝ ավերիչ արշավանքում, որ ուղեկցվում է դիակներից կազմվող դողդոջանքներով, հրկիզումներով, բռնաբարությամբ։ Եվ այս արյան ծովում ծփում են մարդկանց ահեղ դիակները.

Դիակ կույսի, դիակ աստղի և վարդի,
Դիակը մեր Ազգին և մեր Աստծույն...

Բառը առանում է իմաստային նոր երանգներ, մտքի չքեղ թռիչք, հասնում գեղամտական-փիլիսոփայական ընդհանրացման։

Ստեղծվում է աշխարհի անարգարության դեմ ընդվզող բանաստեղծի կերպարը, որ իր վրա է վերցրել հայրենիքի բախտի ծանրությունը։ Այդ ծանրությամբ է առաջացած այն այրող զգացմունքը և այն սատիրան, որով մերկացվում են Թուրքիայի ահռելի եղեռնագործությունը և նրա եվրոպական հովանավորները։

...Ալլահն ամպին մեջն, Սուլթանը ցեխին
Հոտոտելով փոխն ի փոխ՝
Կծպտին հաշտ իրարու,
Եվ Եվրոպան դեմքն իր ետև դարձուցած
Կոպերը թաց կշփե—
Մեր ծուխեն աչքն իր բոզի
Կսկծելո՞ւն համար լոկ։—

Վարուժանի ռոմանտիզմը հետզհետե ներթափանցվում է ռեալիստական տարրերով։ Եթե Սիամանթոն ամեն ինչ տեսնում է հսկայական համեմատություններով, Վարուժանը գտնում է պլաստիկ ու ճշգրիտ ձևեր, արտաքին գծերի որոշակիություն, կյանքի էական մանրապատումներով հյուսված սյուժեներ, որոնք ցույց են տալիս, թե գրողը որքան մոտ է կանգնած Արևմտահայաստանի կյանքին։

Վարուժանի պատկերներն անճառագայթ մռայլությամբ չեն պարփակվում։ Նա տեսնում է կյանքն իր հակասության մեջ, սև ու լուսավոր կողմերի հակադրության միասնությամբ։ Այդ սկզբունքով է ստեղծված «Վաղվան բողբոջները», որ քաղաքացիական պոեզիայի քնարական հագեցվածության փայլուն օրինակ է։

Քերթվածի սյուժեն յաթաղանից իր արտի մեջ ընկած հայ գյուղացու մահն է։ Պատկերը որքան սեղմ, այնքան մեծ է նրա իմաստը։ Սպանվել է հողի արարչությամբ լցված կյանքը, մարդու խղճմտանքը, մարդկայինը։

Սյուժեի շարժումից ծնվում են դրամատիկ խոհեր ու հույզեր, բացահայտվում է «գայլի եղեռնը»։ Էպիկական պատումը զարգանում է փայլատակող հակադրություններով։

Վկա չկար։ Պիտի վրեժն ո՞վ կշռե։

Ողբերգության մռայլ ֆոնի վրա սա առաջին կայծակումը, առաջին ցասման պոռթկումն է, որից հետո պատումը նորից ընթանում է հանդարտ հունով։

Ցաթաղանի տակ սրբազան բահն ընկավ...

Առատճառաբար ամբողջանում է մահվան սրտառուչ պատկերը։ Հողագործի առողջ, արևոտ դեմքը, խորշոմներում ասուղող սուրբ քրտինքը գծագրվում են այնքան լուսափայլ, իրական ու կենսավետ, որ թվում է տեսնում ենք ֆլամանդական հանճարեղ մի կտավ։ Դուրս ցայտող արյունը ներկում է հողը, տափանն ու թին՝ պատկեր, որ ընթացք է տալիս բանաստեղծական մտքին.

Թե—մինչև ե՞րբ իր արյամբ
Հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե։—

Դրամատիզմը խորանում է մահվան տխեղծացող սարսափի և վիհության, խավարի, լռության և դիշերային սև պատանքի պատատմներով, որոնք ոգու հանգիստը զարթնում են մեծաշուք և հանդիսավոր։

Լուսնին լացող աչքերուն
Ամպերը խուխ խաշկինանկեր կդառնան։

Դրամատիզմը խորացնում են նաև արյունաքաքվող հողագործի և նրա շուրջը տարածվող ծաղկի, առոդի, ծլարձակող կյանքի հակադրությունը, մեռնողին տանը երկյուղով սպասող կնոջ և երեխաների պատկերը, մահվան հետ բարձրացող զգացմունքի ալիքը։ Թվում է բանաստեղծն իր սիրտն է քամում բառերի մեջ, թվում է հնչում է հզոր մի համանվագ, որ ամբարին է մոտենում արդեն մարող, մեռնող ակորդներով։

...Հողի բույրեր, կծու բույրեր ծոթրենի,
Այլևս անդարձ, անվրեժ, լուռ կմեռնի՞ն...

Այս լուռ մահվան մարող ակորդներում հանկարծ անվրեժ բառի հայտնվելը կայծակի փայլատակումով գալիս է հակադրվելու ոգերգական ընթացքին, ցրելով խավարի լռությունը։ Դրա հետևանքով մարող ակորդները հանկարծորեն բարձրանում են մինչև ահեղ մռնչյունը։ Ոգերգականի և հերոսականի բախումից ծնվում է պայծառ գալիքի հավատը, զինված պայքարի հույսով՝ լիարժեք գեղարվեստական ավարտի է հասնում քերթվածը.

Ոչ.— հանուն հայ մուրնչերուն,
Թափված արյունն անմեղին չի՛ մեռնիր.— Ո՛չ...
...Վաղն ազս բարի արդյունեն վեր պիտ՝ելլեն
Խառնվելով ցորենին
Նոր Սերնդի կարմիր կարմիր կակաչներ,
Որոնց արմատը կդպչի, պայթման մոտ,
Վարն Թրաբուխի մ՝ապագա...

Վարուժանի պոեզիայում ոգերգության մոտալությունը փարատվում է բարոյաազատագրական հաղթանակի սկզբունքով։ Մի շարք սիմվոլիկ-այլաբանական պատկերներում, ինչպես «Արմենուհին» դյուցազնավեպում, ստեղծվում է թշնամուն արհամարհելու, նրան բարոյապես չափչափելու և մահվան գեմ ժպտալու ընդունակ այդ ուժը.

Արմենուհին բազմոցեն խրո՛ւտ նոստոնու վեր՝
Փոթորկելով ուսերուն շուրջն իր վարսեր։
Կոնն մերկ ոտքն Արքային ծոծրակին...
— «Ո՛վ Շահ, կըսե, բանակներուդ ուժն ուսիմ»։—

Հատկապես «Կրկեսին մեջ» շարքում ազգային ոգերգությունը վերանում է

հերոսական պայքարի, երգի և քրտանքության դրամաս լուծվում է ընդվզման, պայքարի՝ «ժանիքի գեմ ժանիքը» հաստատելու ակզբունքով։

Մերժելով Եվրոպայի օգնությունը, քերթողը նախընտրում է ժողովրդական ապստամբությունը, նա կոչ է անում խորտակել ոգու սարկությունը, «ամեն հայու լանջքին տակ իր մեկ հին պապն արթնցնել», կանգնեցնել ազգը, «ինչպես խումբ մը առյուծներու», և գյուղական խրճիթները մարակացների փոխել։ Նա դյուցազնի սրի վրա ոսկի տառերով գրում է. «Կյանք կամ Մահ», կյանքի միակ նպատակը տեսնելով հայրենիքի ազատության մեջ։

Վարուժանի երգն առնում է «կայծակներու շեշտերը», դառնում է առյուծական մռնչյուն, գառնում ապստամբության դրոշ և շառաչում աշխարհի անարդարության դեմ։ Կրկին հնչում է հազարամյա եղեգնափողի հրեղեն երգը, որը խաղաղիկ լույսի և ծուխի փոխարեն պայքարի բոցն է արտաժայթքում.

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
— Ձեզի ընծա՛, ճայ մարտիկներ—
Գրիչս եղավ անթրոց սրտերու հնոցի...
—Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ—
Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ։

Բանաբվեստի ակունքներին մոտենալու ձգտումը և ժողովրդականության ներքին էության խոր մեկնաբանումը Վարուժանի բանաստեղծական խոսքը հասցրել է վերջնական բյուրեղացման։ Հայրենի եզերքի կարոտով շնչող նրա մի շարք երգերում ուղղակի քանդակված են լեռնաշխարհի, ապստամբ հովվի, ավերակված օջախի, պանդուխտ որդուն սպասող մոր, անցյալի կործանված փառքերի, տառապանքի և հույսի պատկերները՝ կոլորիտային երանգների հարաճուն գեղեցկությամբ, ներդաշնակ, սեղմ արտահայտչաձևերի հարստությամբ։ Արևմտահայ գրականագետ Սիմոն Երեմյանը «Կարոտի նամակ»-ի կապակցությամբ գրել է. «Դուք կարդացա՞ծ եք Ակնեցի աղուղներու տաղերն ու առածները, անոնց հոգեմայլ գեղարվեստի հրապույրը կհոսի Վարուժանի այս երգեն։ Մայրական գորովանքին հետ խառնված է հովվերգության զգայացունց անուշն ու համբույրը»[1]։

***

Վարուժանի ստեղծագործության նոր, շքեղ թռիչքը «Հեթանոս երգեր»-ն էր (1912, Գոլիա), ուր բարձրացվում են հրատապ, արդիական հարցեր, բանաստեղծական խոսքի առավել լիարժեք միջոցներով։ Այդ գրքով հեղինակը նոր ուղիներ է բացում, հեղաշրջում նախկին ըմբռնումներն ու չափանիշները, ստեղծում իր դպրոցը, իր հետևորդները և անխուսափելիորեն բախվում գեղագիտական հին ըկերգրումներին։ Բնական է, որ գիրքը պետք է առաջ բերեր բուռն հետաքրքրություն և տարբեր լսարան բանակռվիներ։ Նորարարական որակը Վարուժանի պոեզիայում ստեղծվում է, իր թեմ խոտորվածությամբ, հայկական և եվրոպական ազդեցու-

[1] «Բոլշևիկ», 1931, 7—8, էջ 331։

թյան խոշանմամբ. «Վենետիկը իր Թիթիանոյով, և Ֆլանդրը իր Վան-Դեյքերով։ Առաջինին գույները և վերջինին բարբարոս իրապաշտությունը հորինած են վրձինս՝ զոր սնափառությունն ունիմ թաթխած ըլլալու միմիայն հայրենի հողին որդան կարմրին մեջ և ծովածուփ արյանը»[1]։

Վարուժանի ստեղծագործությամբ վերջնականապես ձևավորվում է հեթանոս հոսանքը հայ գրականության մեջ։ «Հեթանոս երգեր»-ում Վարուժանը ստեղծում է ժողովրդայնությամբ ոգեորված պարզ ու բնական մարդկային հարաբերություններ, «գեղեցիկի ու զորության» աշխարհը։ Կենսասիրությամբ շնչող այդ աշխարհում, ի հակադրություն սիրո և պատվի վաճառքին, պաշտվում է գեղեցիկ մարմնի ու գեղեցիկ հոգու ներդաշնակությունը, ազատասիրությունն ու անկեղծությունը։

Սիրո և մերկ մարմնի մոտիվներում քնարական մի մասը, որոնց բանաստեղծն անվանել է «միաչյա», տեսել են Գշիրշևանու «ի սկզբանե էր սեռը» սկզբունքի զարգացումը, տեսել են «միմիայն հեշտանք ու տոփանք»։ Մինչդեռ, ասել է Հիպպոլիտ Տենը, «պոռնկագրությունը սկսվում է այնտեղ, ուր դադարում է ասղանդը»։ Հելլենական քանդակներ հիշեցնող այդ մոտիվները ֆիզիկական ու բարոյական այլասերման հակադրությունն են, երազված կյանքի ժպիտը ցավագար իրականության վրա։

Հեթանոս հոսանքը հակադրվում է քրիստոնեական կենսամերժ սկզբունքին։ Լ. Շանթը «Հին աստվածներ»-ում կոչ է անում կրոնավորների թշվառ ու մռայլ ամբոխը դուրս բերել կյանք։ «Ելեք դո՜ւրս, դուք, որ զգայարանները չորցնել կուզեք ու կրքերը մարել։ Դո՜ւրս այս կղզիեն, դուք, որ թշնամի եք ամեն գեղեցկության, ամեն կյանքի ու շարժումի, ամեն ուժի ու ծնունդի»։ Վարուժանը նույնպես փառաբանում է վայելքը, կյանքը։ Հակառակ կեղծ բարեպաշտության, նա երգում է կնոջ մերկության գեղեցկությունը արվեստագետի արբեցումով։ Իսկ «ճշմարիտ գեղարվեստագետի համար,— ասել է Բելինսկին,— որտեղ կյանք կա, այնտեղ կա և պոեզիա»[2]։

Մերկությունը Վարուժանի պոեզիայում պատվում է անտեսանելի շղարշով, մաքրվում, սրբանում է իբրև ազնիվ։ Նրա գեղագիտական սկզբունքի մարմնացումը կարելի է համարել «Հեթանոս երգեր»-ին իբրև բնարան ծառայող հետևյալ տողերը.

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգուն պես
Եվ հեթանոս այդ մերկությանդ ներքև
Ցառապի՛ մարդն, ու չկրնա դիպչիլ քեզ։
(«Գեղեցկությանդ արձանին»)

Սավալուն բանավեճի նյութ դարձած այս գեղագիտական սկզբունքի ցայտուն արտահայտությունն է «Հարճը», որ մեջ կրքերի և զգացմունքների դրսևորման ուժով և հումանիստական բովանդակությամբ հայ, ինչպես և համաշխարհային պոեզիայի գոհարներից է։

Սավոնի խորհնացու հաղորդած պատմական ավանդությունը, որ քնված է էպիկական շնչով կերտված պոեմի հիմքում, լուսաբանվել է ոչ թե պատմության, այլ արդիական հարցերի տեսանկյունով։ Այստեղ իբրև հակադրություն ազգային նկարագրի անկման, լծի տակ կքած, գաճաճ մարդու և բուրժուական այլասերության՝ բարձրանում է լիարուն կյանքի տենչանքով ապրող պարզ ու անաղարտ մի աշխարհ, որ պայմանականորեն կապվում է հեթանոս անցյալի հետ։

Հեթանոս թեմայի ամբողջ հարստությունը բացահայտվում է ոչ թե մերկ զգայարանությամբ, այլ գեղագիտական անշեղ սկզբունքով։

Հենց սկզբից, իբրև սակավարյուն, տխեղձ կյանքի հակադրություն, հնչում է ուրախ մոտիվը։ Սրահի քան ջահազարդ սյուների երկայնքով, սեղանի շուրջ, իրենց սրերի, և ոչ տիտղոսների, մեծության համեմատ բաղված հայոց ազատասեր հեթանոս ասպետները, բարիքների առատությունը, ծիծաղների ու լույսի ծովը, վարդերի հեղեղը, հորդացող կրքերը, հին աստվածների՝ Բաքոսի, Վանատուրի, Անահիտի հիշատակումները և այլն՝ նախաբարական մեծաշուայլ հանդեսի պատկերը դարձնում են եզակի մի երևույթ հայ պոեզիայում։

Խրախճանքի թեմայից սկիզբ է առնում սիրո մոտիվը։ Ներքին արամաբանությամբ զարգանում է ասպետական դարերի հերոսականության, գեղեցկության և սիրո հավերժության գաղափարը, որ դրսևորվում է պլաստիկ արվեստի հարուստ միջոցներով. Նազենիկի պարի շարժումներից արբեցնող երաժշտություն է ծորում։ Վարդերի պսակը գլխին նա ճախրում է ուղղակի մարդկանց հոգիների վրա՝ խենթացնելով նրանց։ Դա հեթանոս պարի, կանացի գեղեցկության ու նազանքի աղոթքն է, «գաշնության ու գեղի» հրաշապատումը, հավերժ կանացի հմայքների փառաբանումը։

Բոլորը լուռ, սալացած՝ ըզմայլանքեն գեղեցկին,
Կդիտեն մրրիկն այդ կնոջ գանգուրներուն մետաքսե։
Ան կճախրե՜, կճախրե՜, կատաղորեն կճախրե՜։
Երբոր ետև կթեքի՝ կուրծքին վրա հոյաշեն
Բլուրի պես կդիզվին ըստինքներն իր սարսռալեն.
Եվ վարսերն-իր վիժանուտ, ուսերն ի վար հոսելով,
Կերթան փոփոխի հատակին, հոն կազմելով ոսկի ծով։

Նազենիկի գլխի շուրջը վարդերից հյուսված պսակը խորհրդանշում է կնոջ ներքին սրբությունն ու մաքրությունը։ Սակայն եթե ճմվի «պսակը», անշուշտ արյուն կծորի». ահա վարուժանական ոճին բնորոշ մի խոր ենթաբնագիր։ Եթե ճըզմվի. Նազենիկի հետ պետք է վարվել զգույշ, ով սիրեց, չպետք է խուսափի արյունից։ Արյան նոտաներն սկզբում հատ-հատ՝ ձևավորվում, դառնում են առանձին մոտիվ։ Հնչեղ ակորդներով զարգացող պոեմն ստանում է դրամատիկ, փոթորկահույզ ընթացք։

Անհիմն այն կարծիքը, որ իբրև թե Վարուժանը տեսնում է իր հերոսների միայն արտաքին գեղեցկությունը՝ հերքվում է հենց «Հարճ»-ի օրինակով։ Տրդատը ներքին աշխարհից զուրկ և միայն ֆիզիկական կատարելության մարմնացում չէ։ Սիրո համար չի խուսափում վտանգից և հանդես չի գալիս իբրև մի գահիկ հափշտակիչ, այլ՝ ազատարար։ Նազենիկի կյանքի խավարում նա հայտնվում է բացվող արշալույսի խորհրդապատկերով։ Հզոր իր զգացմունքներով՝ նա կարող է լինել և նուրբ ու քնքուշ և խրոխտ ու զարհուրելի։ «Ապառաժ» ոգեմարտը հոգե-

1. «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1909, էջ 79։
2. Վ. Գ. Բելինսկի, Ընտիր երկեր։ Երևան, 1948, էջ 337։

կան ահեղ տառապանքից արտասվում է, երբ իրեն ապաքինած կինը, այդ «ներզգաբնակությունն ու գեղի տատվածակերտ գոհարը» փշրվում է, երբ ապաքդյան են անցնում նրան փրկելու իր գերհզոր ջանքերը։

Ո՞վ ասպետաներ ինքնանոս, ո՞վ ասպետի ոսկորներ։

Նույնը պետք է ասել Նազենիկի գեղաքանդակ ձևերի, «սանձակոտոր» հրաշապատում պարի մասին։ Դա կանացի արտաքին հմայքի բանաստեղծական հրապուրանք չէ, այլ խոր ենթաբնագիր։ Նազենիկի պարը ոչ թե լոկ տիրոջ՝ Բակուր իշխանի պահանջի կամ հարճի պարտականության կատարումն է, իբրև բռնազբոսիկ մի բան, այլ բռնությունից ազատվելու և Տրդատին նվիրվելու սիրո բուռն տենչանքի մարմնացում։

Ըմբոստություն ստրկական կյանքի, գեմ, սիրո նվիրվածություն «առյուծներու քաջության, և ոչ ոսկի հորթերուն», հավերժական սեր՝ հոգեկան այս բարձր արժանիքներով են բնորոշվում «Հարճ»-ի հերոսները։

Ուշագրավ է, որ Արամազդի շանթերից չոր-ացած հայոց բարգին նորից կանաչում, հասնում է աստղերի փառքին, և գալար սազարթների մեջ կրկին ապրում է Նազենիկի հեթանոս հոգին։ Աստղային բարձունքից նա նայում է մեղսալի երկրին, ցույց տալիս ժապավենի պես կարմիր իր վերքը, ոչ աշխարհի վերքն է, և էլեգիական թախիծով երգում իսկական սիրո և երջանկության կործանումը։ Նա ճավերժական սիրո իդեալն է ճակատում 20-րդ դարի աշխարհին, այլանդակված մարդկությանը։

Հեթանոս սիրո մոտիվներում թախիծը չունի սիմվոլիստների անկումային մթոլորությունը, չունի նաև այն լայկան շեշտը, որ հատուկ է մեր հայ սիրերգակներից շատերին։ Այստեղ բնորոշը սիրո կենսուրախ երգն է, որով Վարուժանը տարբերվում է շատերից։ Երա սիրո երգը հագենում է ազատ, լիաբուռն զգացմունքի տարերքով։ Այստեղ նոր ձև և նոր բովանդակություն է ստանում սիրո ռոմանտիկան՝ «անուրջ կույսիս» կամ «ցնորք աղջկա» հանրահայտ մոտիվը։ Սերը, հակառակ քրիստոնեական բարնպաստության, մոտեցվում է բնությանը («...Ո՞վ Լալագե»)։

Բանաստեղծի սիրո իդեալն ավելի հաճախ բնության զարդը կազմող պարզ աղջիկն է, հովվուհին, որ քայլում է շուշանների վրայով, ոսկի մազերը ծոթրինների բուրմունքում, կապույտ զգեստը երկնքի կտորից ձևված։

Հեթանոս սիրո երգերը թե ձևով և թե բովանդակությամբ հաճախ ներքին կապի մեջ են ժողովրդական բանարվեստի հետ («Լուսին», «Գուշակը», «Հմայքի աղբյուր» և այլն)։ Ռոմանտիկ անուրջներով լեցուն այդ երգերը, որոնցից և հետագայում գրված այլ գործերից մտադրություն է եղել կազմել մի առանձին հատոր՝ «Նոնոր Ալպոմը» խորագրով, հյուսված են գարնանային գույներով։ Դրանք չունեն սիմվոլիստների նախասիրած աշնան, ձմեռվա և գիշերվա գույները։ Նրանց երանգապնակի պայծառությունը պայմանավորված է հեթանոս հոսանքի նեոնատիլիստիզմությամբ։

Հետաքրքրական այդ փիլիսոփայությունը, որ հակադրվում է ինչպես 20-րդ դարի անկումայնությանը, այնպես էլ քրիստոնեական կրոնին, Վարուժանի, Սիամանթոյի, Շանթի և ուրիշների գործերում բացահայտվում է գլխավորապես հին տատվածների կերպարներով։

Նրա մարդիկ-աստվածների հանդեպ «հնագ տարածա գրաշարդի ուժ տանձ-

վում է ժողովրդի ոգեղեն ոգին, ամրանում օտարի լուծը, կորչում են լաֆազուն ավանդությունները և ամայանում է երկիրը, ապա հին աստվածների թագավորության մեջ հորդում է արևի ուժ պոռթկացող կյանքը և վայելքը, ծնվում գեղեցկությունն ու ուժը։ Բնությունն այստեղ լի է կյանքի խոնարհությամբ։ Հմայիչ, հեքիաթական գույներ են առնում կանաչ անտառն ու արծաթափայլ ջրերը, որոնք լի են նաչանքներով («Անահիտ»)։

«Հեթանոս երգեր»-ի արդիականությունը, նրա ինքնատիպ տենդենցը, ոչ սահմանափակվում է մամուռման և ազատագրության գաղափարի մեջ, ցայտուն է դառնում նաև «Գողգոթայի ծաղիկներ» բաժնում։ Այստեղ նախ բացվում են կյանքի ողբերգական էջերը, որոնց միջից անցնում է «մահվան ճիվաղը, ոչ թե մարտման, ազատության գաղափարը։

Վարուժանն առաջին անգամ արևմտահայ պոեզիա բերեց պրոլետարիատի կյանքի ու պայքարի երգերը և թեմաներ, հշմարտացի պատկերներով մեր առջև բացեց մի նոր աշխարհ, «գնհեն զարթաքանչ» հյուծախտավոր, տանջահար աշխարհը։ Հեթանոս ուժի տեր հաղթանդամ ռամիկը «հանուն պատառ մը հացի» դրժատան մեջ հյուծվում, հուժկու մեքենաները հաչում են, ատամները դատարկվում, ճյուղը երկաթի դեմ մղվող պայքարում դանդաղ մահվան ոտի է դառնում։

«Վիշապ հնոցը», «հրեշ մեքենաները», ոռնացող քամին, դամբարանի համեմատություն առնող տնակը պոռթկացող ցասման տարերքն են, որ ուղղված են ոչ թե մեքենաների, ինչպես դիտվել է քննադատության մեջ, այլ կապիտալիստական կարգերի դեմ.

Քամին կոռնա և տնանը իր հիմերեն նցնցե
Իրրև տանեղ դամբարան։

«Գողգոթայի ծաղիկներ»-ում ցայտուն է դառնում Վարուժանի ոճի քնորոշ հատկանիշներից մեկ ուրիշը՝ ռոմանտիկական ու ռեալիստական ոգեղրությունների մերձեցումը։ Հրաշապատում և իրապատում գույների մեծարվեստ զուգորդությամբ նա քանդակում է թշվառության և ուժի պատկերները և հակադրում միմյանց։ Մի կողմից տնանեի, թշվառի «մորթվելու» տարվող բանակների հանդեպ անսահման կարեկցանք, մյուս կողմից՝ ցասման և պայքարի սրատ կամ պոռթկացող ամպրոպի խանդաղացում։ Հեթանոս երգն այստեղ դառնում է հսկաների երգ, առնական սրտերի տրոփյուն, հուժկու բազուկների շարժում.

Որոնք կարմի՞ր պիտ'ղան, օր մը գանգե՛ր դարձնելու։

Վարուժանի բանաստեղծական հյուսվածքները դառնում են առավել կրակոտ, բացաչունչ պատկերներում զարգանում է պրոլետարիատի և ճնշված ժողովուրդների ուժի և զարթոնքի գաղափարը։ «Գլուխները տիտան», «բիրքերը հրեղեն» դանդաղաձների հարձանը կարծես փոխում է զրկանների հիմքերը, հնչում է շարժման խրոխտ ռիթմը, ծավալվում մոլեգնությունը։

Ժողովուրդներն տվասեր կիրառանեն շրջաներ
Եվ ամենցուսի տերն իրենց կառուցողներն ինքանեն։

Ծանոթների այդ մեծ ուժը ամեն ինչ բանդուց, ազիրաց ասի չի, ինչպես բնու-

թագրվել է գրականության մեջ։ Թեպետ և տարերային, նրա շարժումն աննպատակ չէ, այլ ձգտում է աշխարհի վերափոխմանը՝

Եվ մեր դարուն հաղթությամբ Կամարն այսօր կիսանգչի
Հարյուր հազա՞ր բանվորի ուսերուն վրա արճիճի։

«Հեթանոս երգեր»-ը իր մաքառման փիլիսոփայությամբ կապվում է «Ցեղին սիրտը» գրքի հետ։ Սակայն այստեղ նոր թեմաներով և արվեստի նոր միջոցներով է դրսևորված ոչ միայն ազգային-ազատագրության, այլև աշխարհի ճնշված մարդկության պրոբլեմը։ Այս տեսակետից բնորոշ է «Ցեղին սիրտը» շարքի «Նեմեսիս» քերթվածը, որ սոցիալական ու ազգային ճնշման ֆոնի վրա բարձրացված արդարության և վրեժի ժայթքում է։

Վարուժանը խորամուխ է լինում իր գարշրջանի հակընդդեմ ուժերի պայքարի մեջ, տարվում դարակազմիկ խոհերով. «Ո՜վ դար, ո՜վ դար...» քերթվածում նա տեսնում է Ռուսաստանում խմորվող հեղափոխությունը, բանվորական շարժման ծավալումը, կռահում պատմական նոր ուժերի հաղթանակը, կռահում «Մարդկության Առավոտը» կամ վերափոխումն այն աշխարհի, որը նորոգված ու գեղեցիկ, պիտի արժանի լինի «Արևին շուրջ դառնալուն»։

***

Վարուժանը շարունակ փոխում է իր քնարի լարերը, նորոգում արվեստը։ Այլ խոսքով՝ նրա ստեղծագործությանը բնորոշ է ընդգրկման այնպիսի լայնություն և թեմատիկ բազմազանություն, որ պատմական անցյալից հասնում է մինչև ներկան, հրեշ քաղաքից՝ մինչև գյուղի հովվերգությունը։ Դրա ցայտուն արտահայտությունն է «Հացին երգը»։

«Հացին երգը» գրքով քերթողը նորովի է հնչեցնում աշխատանքային գեղեցիկ։ Այստեղ նա նպատակ չի դրել տալ ժամանակի հայ գյուղի համակողմանի պատկերը։ Նրան առավելապես զբաղեցրել է հեթանոս բնականության, հողի և մարդու պրոբլեմը։ Եթե «Հեթանոս երգեր»-ում քաղաքը մռայլ գույներով է պատկերվում, ապա «Հացին երգը» ամբողջությամբ պայծառություն է։ Սա ազատ, ծաղկուն հայրենիքի, հեթանոս, կենսասեր ոգու անուղղակի հակադրությունն է 20-րդ դարի այլասերման ընթացքին։

Իրար հաջորդող դաշտային աշխատանքների պատկերը սկսվում է նորաբաց գարունով։ Իսկ դա պատահական չէ։ Ծաղկած գարնան հետ հայրենիքն էլ է վերածնվել, թոթափել օտարի լուծը։ Գյուղական աշխարհի լայնարձակությունը, բարիքների առատությունը ստեղծել են հեթանոս կյանքի տարերքը։ Դաշտերը հերգեհվել են կակաչների կարմիրով, ամեն ինչ կյանքի լիաբուռն վայելքի ձգտումով, ամեն ինչ խինդով և երազների ոսկիով է տոգորվել։

Բանաստեղծական բարձր տրամադրությունն ունի իր պատմական հիմքը։ 1913-ին հայկական հարցը նորից առաջ էր քաշվել, իսկ 1914-ի հոկտեմբերի 26-ին Թուրքիայի հետ արդեն կնքվել էր Արևմտահայաստանի վեց նահանգներում բարենորոգումներ մտցնելու համաձայնագիրը։ Նորից թեավորվել էին երազանքները։

Ազգային ռոմանտիզմի այդ տրամադրությամբ է պայմանավորված հեթանոս

ուժը մարմնավորող գյուղացու կերպարը, որն այլևս Թումանյանի կամ Հովհաննիսյանի հոգնատանջ ու տառապած գյուղացին չէ, այլ դաշտի «հզոր զավակը»։ Մարգարտյա քրտինքով բնության թագը հյուսող այդ գյուղացու կրծքի տակ բաբախում է հողի սիրտը, նրա քայլերից դղրդում է մայր երկիրը, թեպետ «չի խամրեր ծիլ մ'իսկ գարշապարին տակ հսկա»։ Իր արարչությամբ նա մրցում է առուծու հետ։ Արևն առած ճակտին վրա՝ ակոսների մեջ ցանում է խինդ և օրհնություն՝ սերունդների և մարդկության համար։

Հայ գյուղացին իր լայն մարդասիրությամբ, հուժկու մարմնով և արիությամբ հարազատ է «Հեթանոս երգեր»-ի հերոսներին։ Հայրենի բնությունը վարձատրում է աշխատանքը, արդարացնում նրա հույսը։ Ուրեմն արժե տքնել և աշխատել ազատագրված հայրենիքում։ Ահա մի գաղափար, որ դրված է ինչպես Սիամանթոյի «Հայրենի հրավեր»-ում, նույնպես էլ «Հացին երգ»-ում։

Վարուժանը հողի և մարդու պոեզիան վերաստեղծում է աննախադեպ արվեստով։ Ահա «ցորյաններն աշխարհածուփ», որոնց միջից արծաթ գերանդին ոսկի է հանում՝ հնձված կակաչներն արյունելով։ Դրանից հունձը դառնում է հրագույն լիք։ Ահա սայլերը, որ արև ու հրդեհ են տանում՝ քրտինքի ու հույսի հեղեղներ։ Ահա ռուբենյան արվեստով վրձինված կալերի գիշերը. աստղերի մեջ լողում է Մեծ Լուսությունը, ծղրիդները երգում են, նայադները հարսանիք են անում։ Սայլի վրա քնած է հոտաղը, իսկ դեզի կատարին՝ հարսը, որ ծոցիկը բացել է գեփյուռին, «սար կպարպի Հարդագողը իր կաթը սափոր առ սափոր»։

Ռոմանտիկական գույները միահյուսվում են առարկաների ռեալ ձևերի հետ։ Գյուղական աշխատանքի պատումները ներթափանցվում են մարդկային ապրումներով, ժողովրդական կյանքի մաքրության և սրբության լույսով։

«Հացին երգի» սյուժեն և գաղափարը զարգանում են նկարչական և երաժշտական սկզբունքների միասնությամբ, որի ակունքը նույնպես բանարվեստն է։ Հատկապես ուշագրավ է հասուն արտերի համանվագը՝ մեղմ մոտիվներից մինչև մանգնություն, որ ստեղծում է ցորյանների ալեծփանքի գունային և հնչյունային խաղի հրաշապատումը։ «Հուշիկ-հուշիկ» արթնացող և հետզհետե «վարարող» ցորյանների էպիկական պատումներով բացվում է հովից օրորվող արտերի բանակաբը և աստիճանաբար փոխարկվում ալեծուփ ծովերի։

Հեթանոս թեմայի զարգացումը «Հացին երգ»-ում կատարվում է ժողովրդական ակունքներում խորանալով։ Ակնբախ է դառնում հայրենիքի ճակատագրով ապրող քերթողի նպատակադրումը՝ ազգային գրականությունը հարստացնել՝ բանարվեստում մարգարիտներ պրպտելով», նաև «ուրիշ ցեղերու գոհարները բերել, ոսկեել մեր գրականության ածուներուն մեջ»[9]։ Դեռ Գանտի համալսարանում սովորելիս բանաստեղծը գրում էր. «Մենք այնքան մեծ ենք՝ որքան որ հողն կխմենք մեր զգացումները»[10]։

Վաղ տարիներից Վարուժանին գրավել է գավառը, ուր ժողովրդի հեթանոս ոգու «ամբողջությունը կպարի»։ Նա հմայվել է ժողովրդական երգերի «իրապաշտական արվեստով», սեղմությամբ, ձևի և բովանդակության ներդաշնակությամբ, որոնք

---

9. «Մեհյան», Կ. Պոլիս, Ֆ. 1914, Մ 3, էջ 47։

10. Դերենիկ Ճիզմեճյան, Դանիել Վարուժան», Գահիրե, 1955 (1908-ի նոյեմբեր, Գանտ, Դ. Ճիզմեճյանին գրած նամակը)։

վարպետորեն օգտագործել է պոեզիայում։ Դրա յայտուն մարմնացումն է «Հացին երգը»։

Ահա սիրո պատումներով զարգացող «Հունձք կժողովեմ» աշխատանքային երգը։ Հնձվորը ամբողջ հոգով սիրածի հետ է. աղջի առաջ է բերում նրա դեմքը, ծովի նման մազերը, ձեռքերը և այլն՝ կյանքի մոայլը փարատելով երազի լույսով։ Եվ նրա անընկճելի ոգին գտնում է ուժի անսպառ ներթաքույց պաշարներ. գիշերն ամբողջ աշխատում է խաղեր ասելով, ցորյանի դեզերից լեռ շինելով։ Այս հեթանոս ուժին հակադրվում է կարոտի ցավը, որ գալիս է քաղցրացնելու նրա կյանքը։ Ինքնամոռաց աշխատանքում անցնում է գիշերը, անցնում է լուսինը և մշակը կանգնում է սիրո ցնորքից բաժանվելու ցավի առաջ։ Նրա շքեղ երազները փշրվում, անցնող լուսնի հետ չքանում են, և նա սթափվում է սրտի խոր կսկիծով։ Հուժկու, առնացի մշակի ոգին տնքում է զգացմունքի բեռից։ Ֆիզիկական ահեղ ուժի և սիրո քնքշության այս հակադրությամբ, ներքին շարժումով ու լույսով հարստանում, գեղեցկանում է կյանքը։ Այս բուռն կյանքով է ապրում կենսառողջ հեթանոս հայ գյուղացին.

Մանգաղս քարին եկավ.
—Տարս յա՞ր ունի—
Քարեն լորիկը թռավ
—Լե՞ռդս կարդունի։

Ինչպես լորիկի թռչելը՝ բախտի կորուստ, այնպես էլ լյարդի արյունելը գերագույն ցավի ատիճան է։ Ժողովրդական մտածողությունը այդպես ներխուժում է բանաստեղծական հյուսվածքում՝ բառի, դարձվածքի, հնչերանգի ապշեցուցիչ հարազատությամբ։ Որքան կուռ և ռիթմիկ, նուրբան սեղմ, իմաստալի և կոլորիտային երանգներով է հագեցում «Հացին երգը»։ «Բնական, ճիշտ, պարզ» քանդակապատկերները, դրանց հակադրությունն ու համադրությունը ներքին այնպիսի խոր կապերով են միանում հերոսի ապրումներին, որ ուղղակի բխում են նրա էությունից։

Հեթանոս հոսանքի նվաճումներից՝ ժողովրդական ակունքներից են գալիս ոչ միայն բնական գույների, հնչերանգների այս տարերքը և տաղաչափական բազմազանությունը, այլև բանաստեղծական լեզվի մշակույթը։ Վարուժանի լեզվի մեջ խառնել են հաղարամյա գրական ձևեր՝ սկսած Մ. Խորենացուց մինչև Ա. Բագրատունին, Ղ. Ալիշանը և Գ. Դուրյանը։ Նրա մեծ ծառայությունն այն է, որ կենդանություն է տվել բազմաթիվ բառերի և բառաձևերի, ստեղծելով արտահայտչական ինքնատիպ և զորեղ միջոցներ։ Նրա պոլիկոմնալի, կրքոտ խոսքի մեջ ակնբախ է սանձահարված երևակայության, հույզի և մտքի վիթխարի թափը։

Յուրովի հանրագումարի բերելով հայ բազմադարյան գրական նվաճումները, նաև յուրացնելով համաշխարհային գրական մշակույթը՝ «Հոմերին մին և Մեսերլինգ», Վարուժանն իրոք հասավ պոեզիայի բարձունքը՝ «ապագայի մարդերուն» նվիրելով «հզոր երգ մը», որով մեր պատմական ընթացքի ճգնաժամին կանգնեց աշխարհի առջև իբրև հայ ժողովրդի վշտի և ցասման, արդարության և սիրո բոցաշունչ թարգմանիչ։

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

ՄՈՒՍԱՅԻՆ

— «Թևերս, ուղիղ դեպ ի բարձունքդ վսեմ՝
Քնարդ կուզեն, կուզեն քնարդ. երկնցո՛ւր։
Կտրուփե մեջս երգերու սաղմն. կսպասեմ.
Ե՞րբ պիտ տրվի անոր ծնուցիչ քու համբույր։

Երգե՛լ կուզեմ,— թող սարսռա քնարիս
Մատերուս տակ, ինչպես մոր ծիծն հալանի՝
Մանկան առջի բնազդական դպչելուն.
Եվ կյանքը թող շրթունքիս վրա լուծանի։

Երգե՛լ կուզեմ.— որոտներն ի՞նչ կըսեն մեզ,
Կառնե խոսք մ'հովն ամպեն, հովեն ալ՝ ջաղաց.
Բառ ունի աստղն.— երգել, երգե՛լ կուզեմ ես,
Չի կխոսին երգով Բնությունն ու Աստված։

Կուզեմ ծովուն հետ սիրա սրտի ես հարբել,
Իմ անհունիս մեջ այդ անհունը թաղել.
Բուռն իղձն ունիմ մրրկին հետ մաքառիլ,
Եվ գլուխս էին գաղտնիքներուն դեմ բախել։

Գրված է Սերն՝ վարդին, Հավատքն՝ աստղին վրա.
Զանոնք հեգել կուզեմ քնարի շրթունքով.

Կուզեմ բնությանն հորինել քող մը ծաղկյա՝
Մտածման ամեն ձև իր ներքև քողելով։

Տո՛ւր, ո՛վ Մուսա, տո՛ւր այդ քնարդ բռնած.
Պիտ՝ իմին սիրտս, իմին աշխարհս ըլլա ան՝
Ուր գաղափարն պիտ բնակի Ջերդ Աստված,
Վեհ գաղափարն աչքերով բո՛ց, թռիչքով լա՛յն։

Անոր վրա պիտի հալի խանդն հոգվույս,
Անոր վրա պիտի սիրտս հար քրտնի,
Ինչպես կարմիր և սարսռուն արշալո՛ւյս
Մը՝ սեզերուն, հասկերուն վրա գարունի։

Պիտի այդ քնարը կապե իմ շրթներուն
Ժողովուրդին շրթունքը հուր, սիրագին,
Եվ պիտի այդ համբույրն ըլլա բուռն, անհուն,
Համբույրին պես՝ տրված ծովեն եզերքին։

Երգերն անոր պիտի պատմեն Սարսուռներ՝
Մարմնավորած իմ արյունես, շարժումես,
Ներշնչելով տողեր, փուշի ակոսներ,
Ուր, հողմակոծ, պիտ՝ ծլի վիշտն աղեկեզ։

Պիտի մռնչեն զարհուրանքները կյանքին՝
Մե՛ջը սուզած՝ արդարության, բարության.
Սրբազա՛ն քնար, պիտ՝ լարերն իր մկրտվին՝
Մարտիրոսված եղբայրության ավազանն։

Ո՛վ սուրբ Մուսա, Մուսա մատաղ, լանջաբաց,
Կարծես դեռ նո՛ր ձգած աստղե օրոցքդ հուր.
Ո՛վ վարդ կույս, դո՛ւ, ժողովուրդին խոստացված,
Լայն սերերո՛ւ դու խոստացված, քնարդ տո՛ւր։

Երիտասարդ՝ բայց շուտ ճանչցած շատ բաներ՝
Գիրկդ կուգամ երազելու առանձին.
Մեկդի թողած եմ ժպիտ, խաղ ու պտերեր,
Նորընծա եմ գաղափարի աշխարհին։

Թևերս, ուղիղ դեպ ի բարձունքդ վսեմ՝
Քնարդ կուզեն, կուզեն քնարդ. երկնցո՛ւր։
Կտրուփե մեջս երգելու սաղմն. կսպասեմ.
Ե՞րբ պիտ՝ տրվի անոր ծնուցիչ քու համբույր»։

Այսպես ըսի։— Եվ պատասխանն աղեկեզ՝
Մուսան՝ վերեն հովին հանձնեց դեպ ինձի.
— «Տենչիդ զգո՛ւյշ, այս քնարս է շինված, տե՛ս,
Սև նոճիե, փիթում մահվան ավիշի։

Թշվա՛ռ հոգի, անոր լարերն են բերված
Փետուտված գանգուրներեն որբերուն.
Կերթան երգերն, հևհևալով, սրընթաց,
Ուր որ կերթա ոտքը բոբիկ՝ խեղճությունն։

Հեռ՛ու ասկե.— գիտցած ըլլաս՝ որ այս քնար
Քամահրանքով պիտ՝ անտեսեն ձերիններ.—
Չի օտարին ոսկվո՛ւյն քով իսկ՝ ձեր գոհար՝
Աչքերնուդ շո՛ղ մըն ալ, ստեպ, չի ցայտեր։

Պիտ գոցե իրենց ալիքը բուատերդ,
Եվ փուշերու, եղիճներու մոխիրով
Պիտի թաղեն կայծերն հոգվույդ բոցակերտ՝
Նվաղներուդ ողբը քեզի՛ դարձնելով։

Հեռատեսե՛. ապագայդ խիստ մթին է.
Հեռատեսե՛. գերեզման մ՚է ապագայդ.—
Խանձարուրեդ պիտի օրոցք մը չելլե.
Պիտ, չգտնես միջոց թռիչքիդ համեմատ։

Ժողովուրդին ըլլալ կուզես՝ մո՛ռդ չեղած.
Մնողքիդ արցունքը քու դարձիդ կսպասե.
Արևմուտքի մեջ ծաղիկներդ ընձյուղած
Պիտի խորշակն Արևելքի ազազե։

Մտածումի, զգացումի այս ճամփուն՝
Խնդի արևը չէ սփռած իր շեկ բաշ.

Հոն կշրջի Աբովյանի մ՝ հեգ ուրուն,
Հոն Դուրյանն է լացած, տխրած Պեշիկթաշ։

Ի՜նչ, կուզես քնա՞ն, որուն շանթերը մեջի՝
Պիտի հաճո չմոնչեն շատերուն.
Որուն վրայի քողն է սև քող մը խեղճի,
Թեպետ ըլլա մեջն արշալույս մը շողուն,

Ի՜նչ, այս քնա՞ը, կուզես, քնար սև փայտե՜.—
Այս՝ վերքերու գործի մըն է, այս է հուր.
Ապագայդ է, այս՝ դագաղդ է, անա՜ւնդ է».—
Ես, անհողդողդ, ըսի անոր.

— Ելա՛, տո՛ւր։—

ՀԱՅՐ, ՕՐՀՆԵ՛

Հայր իմ, օրհնե՛. ժամը հասավ. պիտ երթամ.
Նոր կյանք մ՝ինձի կսպասե։
Պատանությունն ես թողուցի. նոր արյուն
Երակիս մեջ կվազե։

Հառա՜ջ, հառա՜ջ,— գլուխս ետ չե՞մ դարձներ,
Երկնքիս վա՛ր թող իյնան
Անվիշտ կյանքիս ամեն աստղեր. հոգս չկ՝,
Անցյալս իջնա թող դամբան։

Օհ, ինձի՛ ի՞նչ՝ թե կփետեմ վարդին թերթ,
Եվ փուշին կյանք կու տամ միշտ,
Թե գրկաբաց հորձանքին մե՛ջ կնետվիմ.—
Խինդս է՝ ձանձրույթ, սերս է՝ վիշտ։

Ամեն խայտանք ջախջախեցի սրտիս մեջ.—
Ջեմ վախնար սև ծծելե.

Վանք մտնող կույս մ՝եմ՝ որ խզված իր վարսերը՝
Անխիղճ, անհոգ կդիտե՜...

Հա՛յր, ես կե՛րթամ այն ճամփայե՛ն՝ որ ճերմակ
Մազերուդ զիս կը տանի,
Վաստակաբեկ ոսկրներուդ, ծեր սրտիդ
Եվ սերերուդ կենդանի...

Բավական է,— աշխատեցար, կրեցիր,
Ամեն նետի, հարվածի
Վահան եղար ինձի համար, հոգիդ է,
Որ հոգվույս մեջ կհածի։

Իմ արյունս է գոյացած քու քրտինքեդ.—
Հողնությանդ ծիլն եմ տխուր։
Հոգիդ, կաղնի՛, երբ կուրծք կուտար մրրկին՝
Ես շուքին տակ, հանգիստ, լուռ

Կմեծնայի։— Հարկ է հիմա ա՛լ հանգչիս
Եվ ես քեզի հաջորդեմ...
Խոնջե՜նք, խոնջե՜նք,— կուզեմ կռվիլ, աշխատիլ,
Ելլել կյանքին, կյանքին դեմ...

Հայր իմ, օրհնե՛, դողդոջ ձեռքերդ գլխուս դիր.
Թող մատներեդ կաթի վար
Աղոթքդ՝ եկած հոգվույդ պայծառ խորանեն։
Վերջին ժամն է. օրհնե՛, հայր։

ՀԱՇԻՐ

Սիրտը լեցուն է բանտին խավարով.
Ա՛լ գաշտ ու երկինք չկան իր համար.
Պիտ գներ աչքի հազար գոհարով՝
Աստղ մ՝ան նույն իսկ՝ ասուպ ալ ըլլար։

— «Օ՜ն, հաշիշ բերեք, կմրմնջե ան,
Երբ աշխարհս ինձմե այսպես կապշուպեն,
Ես կուզեմ հոգվույս մեջ ստեղծել զայն.—
Որօրվիլ, բուժի՜լ հզոր ցնորքեն։

Օ՜ն, հաշիշ բերեք»— Եվ ան կծխե,
Իբր ուրախության ըստի՜նքը ծրծեր.
Կհոսի երազ ջլերուն մեջե.
Աշխարհը լուծված կելլա սիրտն ի վեր։

Աչքերը բանտին դիմաց կգոցվին՝
Ապարանք մ'իր մեջ գտնելու համար.
Բիբերն հրաժեշտ կուտան խավարին՝
Աստղեր բերելու խոստումով ճարտար։

Եվ կքնանա՜ արվեստի քնով՝
Ինչպես խղճի խայթն՝ աղոթքե մը վերջ.
Ո՜վ թըշվառ հոգի, հիմա ապահով,
Ազատ է և տեր՝ ցնորքներուն մեջ.

Եվ կերազե շա՜տ, շատ բաներ աղվոր
Կամ հոռիներն ալ աղվոր կերազե,—
Բռնած շղթայի մ'օղակն ահավոր՝
Կնոջ մը մանյակը զայն կկարծե։

Վարդե, ոսկիե գետի մ'ափն ի վար
Իր մանկան խաղին կժպտի հիմա.
Կամ ինքն իսկ մանուկ՝ լճակին մեջ հար
Երկինքն՝ երկնքին մեջ զինք կտեսնա։

Շրթունքները լուռ, մեղմիկ կդողան՝
Անշուշտ ուրիշներ գտնալնուն համար.
Թերևս (ո՞վ գիտե) կլրացնե ան
Համբույր մ'ատենով թողված կիսկատար։

Կամ կշրջի արտն՝ ազատ քայլերով.
Կվազչի երկինքն, աստղերու արգանդ։

Մի՛ արթնցընեք, քանզի ապահով
Զինք կփոխադրեք լույս աշխարհեն՝ բանտ։

Թողեք քնանա... թող հաշիշին մեջ
Սև շղթան բեկտի՝ վիշտը լուծելով։
...Ո՜վ անմահ մեկոն, եթազի առէջ,
Դու ցնորքն հյուսե ոսկեղեն թելով։

Հյուսե խնդություն մը անրջական
Իր խոցված հոգվույն, ուղեղին վրա.
Ժպիտն աղվո՜ր է, եթե նույն իսկ ան
Խաբված ջղերու վիժա՜ծն ալ ըլլա։

ՄՈԽԻՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՎ

Հյուսն այրեցավ։— Թխաթույր ծուխը նյութին
Կապույտ զենիթը սեցուց.
Ան, դեպ երկինք, խեղճ մարդերու հույսերուն
Ոչնչացումն էր գծուծ։

Հովն որ առաջ կհեծկլտար ցրտագին
Գույքերուն մեջ դիմակաց,
Հիմակ անոնց թույլ մոխրին հետ կխաղա՝
Հեգնող շշուկ մը ձգած...

Կմորմոքի ընտանիքն իր ջանքերուն
Սին փոշիին հանդիման.
Կուլա՜,— անգո՜ւթ այդ հրդեհումն արցունքո՜վ
Պիտի ջանար մարել ան...

Մայրն ըստինքին վրա սեղմած մերկ որդին՝
Ավերին մեջ կշրջի.
Մանկան համար ողջ շապիկ մ'ան կորոնե
Եվ կամ կտոր մը քուրջի։

Տարաբա՜խտ մայր, կաթին գունատ փթթումին
Պատրաստարան չմնաց.—
Հանկարծ ոտքին կղարնըվի սարսուռով՝
Օրոցքեն փայտ մը խանձա՜ծ.—

Ո՜հ, դաժա՜ն բոց, ատիկա բույն մ'էր սիրո՝
Որ քանդեցիր զայրույթով.
Հոն դժգունած զույգ մը շրթունք վբայե վրա
Կծծեին սեր, գորով։

Արդ, մոխրին տակ խեղճերուն կյա՜նքն է թաղված,
Ա՛լ դամբան մ'է հյուղն իրենց.
Բախտն, որուն աչքն արդեն կապած է Աստված,
Փոշի, կմախք հոն ձգեց։

Քսե՛, ո՜վ Տեր, հիմա դեպ ո՞ւր պիտ' երթան
Այդ թշվառնե՛րը լալկան.
Դու որ անոնց տնակն առիր, հույսն առիր,
Օ՛ն, ըսե, ո՛ւր պիտ' երթան...

Գեթ անձնվեր զուգ չտըվիր մարդերուն՝
Որ անոնք հոն կծկվին,
Որ մարդկային սրտերու մեջ՝ գեթ անոնք
Խորշ մը գտնան ջերմագին։

Ո՞ւր պիտ' երթան։— էրիկն աչքեն հիվանդատ,
Սիրտ մ'ուրկե ողբ լոկ կելլե.
Կինը, վատուժ, պինդ շղթայված իր վզեն
Նիհար, փոքրիկ թևերե։

Ո՞ւր պիտ' երթան։— Գահավեժի մը վերն
Իր կյա՞նքը մին կախելու,
Թե, հուսահատ, մյուսն անպատիվ տան մը մեջ
Մաքուր սերն իր ծախելու։

Ո՞ւր պիտ' երթան սև նոճի այդ ծաղիկները
Ճակատագրեն հողմավար,

Մուխեն, բոցեն այդ թշվածները ազատ,
Վերքի շիթերն այդ թշվառ։—

...Ե՞րբ պիտի գա, ո՛վ Տեր, այն օրը վսեմ.—
Եղբայրություն Մարդկության
Ե՞րբ իր շղթան պիտի ձգե արտեն սիրտ՝
Մեծ համբույրովն հաղթակա՜ն։

Ե՞րբ հրկիզյա՛լը, չքավոր, հուսաթափ,
Մոխրին վրա ինչքերուն,
Ցուրտ, վիթխարի Լքումն տեղ պիտ' գտնա
Տիեզերական օգնությո՜ւն։

ՀՎԱՆԴ Է

Ստվերին մեջ խանի մ'անկյունը լքված
Թշվա՜ռ պանդուխտ, հիվանդ է.
Խոնավությունն անոր մարմինը շիթ-շիթ
Գերեզմանին կնետե։

Բժիշկ չունի, եղած դրամն ալ հատավ.
Ցավը ծանր է.— գթությո՜ւն։
Հոն չկա սիրտ մ'որ բարությունը քամե
Անոր ծարավ շրթներուն։

Եվ ինքնիրեն մտերիմներ կստեղծե
Ցնորքներուն մեջ ջերմին.
Իր վիճակին կարեկցող մեկը չունի
Բացի մամուկը որմին։

Մթնշաղին մեջ կմարմրի, կհյուծի
Մթնշաղի մը նման.
Լռությունն հոն կարծես դագաղ մը կերևնա.—
Օրոցք՝ տունեն գերեզման։

Երիտասարդ է տակավին, և փեսա.
Պոլսեն մինչև Վան հեռու,
Հոն՝ հաց կուզեն հարսն ու ծնողք, զի՞նք կուզեն,
Դեռ շատ շուտ է մեռնելու։

Ան իր արյունն իր քրտինքով կշահեր...
Տեր, ի՞նչ սրտով կկոտրես
Թեն՝ որուն վրա կկրթնին մանուկներ
Եվ ծնողքներ ձյունագեա։

Դուրսն արևին, զեփյուռին տակ կուռճանան
Բախտավորներն աննիազ.
Արտին մեջ աստղն ավշի ելքին կժըպտի.
Տե՛ր, զինք ինչո՞ւ կմոռնաս։

Այդ բազուկներն աշխատանքի համար են՝
Ո՛չ մահվան դեմ կռվելու։—
Բախտը խուցին մեկ անկյունեն կխընդա
Օձի ժպտով մ'ահարկու։

Պիտի մեռնի.— խիստ մահացու հիվանդցավ.
Եվ պատանքին մեջ երբեք
Պիտ' չտանի սիրելիի մ'արցունքներն
Ու սև ուխտերն հուսաբեկ։

Պիտի մեռնի.— և իր բնիկ լուսնին տակ,
Հարսը սիրո ծարավով՝
Պիտի զուր տեղ անոր գալուն սպասե...
Խեղճ վանուհի, ապահով։

Հույսի ամեն խոստումներու վայելքին՝
Կծիծաղիս աստղին հետ.
Մինչդեռ կյանքի երկընքին վրա կգրծվի
Շանթը շողին զուգահետ։

Որո՞ւն համար շուշան ու վարդ փոխ կուտան
Իրենց միացումն՝ այտերուդ.

Ինչո՞ւ Վանա լիճն աստղերով կվառի՝
Նախանձելով աչքերուդ։

Որո՞ւն համար հաջաղիդ տակ կպահես
Ըմբոստանքներն հնամբույրին...
Վաղն, հեգ ծաղիկ, պիտի ճամփորդ մը գուժե.
— «Մեկ աչքը բաց թաղեցին»։—

ԱՎԱԶԱՆԻ ՁՈՒԿԵՐՈՒՆ

Մտածողի մը նման
Ջուրին միջև կշրջիք։
Ալ գծված է ձեր սահման,
Ո՛վ լողակներ խաւուտիկ։

Հոս պիտի ալ չգտնաք
Անհուն, կապույտ այն աշխարհ,
Որուն հորձանքն ու վտանգ
Կկտրեիք հեգնաբար։

Ձերին ճարպիկ թևերով՝
Ազատություն, զվարթություն
Կգրկեիք անվրդով,
Անգե՜տ՝ նենգող խայծերուն...

Արհեստն արդ ձեզ կպատե.—
Ավազան մ'հին, ձեզի նեղ,
Շատրվան մ'ալ գրանիտե,
Եվ փոքրիկ ժայռ մը մեջ տեղ՝

Որ գործ մըն է ձեռքերու։—
Այս է ահա ձեր աշխարհ.
Ամբողջ այս է, ո՛վ աղու
Բանտարկյալներս թշվառ։

Երբ կկայտռեք ջուրին վրա՝
Կզվարճանա անխռով
Անձնասեր մարդն՝ արծաթյա
Պղպջակներն դիտելով։

Ո՜հ, ի բնե չար է ան.
Իր հաճույքին, իր փառքին
Կուզե զոհել ամեն բան.
Բռնավորն է աշխարհքին։—

...Այս սև ժայռին խոռոչներ
Ձեր շիրիմներ պիտ՝ ըլլան,
Ուր կերկարին բողբոջներ
Բաղեղներու ցիրուցան։

Ուր ջուրերուն թրթռմունք
Կուգան բախիլ մեղմորեն,
Ցնցղկելով արտասուք՝
Ողբ ու հանգիստ կեղերգեն։

Ո՜վ իմ դրժբախտ անմեղներ,
Ճիշտ նման է աշխարհս՝ ալ
Ձեր այդ տեղին։ Դեպ ի վե՜ր
Կդանա միտքս իմ ելլալ.

Կուզե ուրիշ մեկ աշխարհ
Ան գտնելու, ուր անհուն
Ազատությունն իշխե հար՝
Եվ անխարդախ բարություն։

Սակայն ի զուր։ Լոկ բանտող
Գծուծ նյութեր կան չորս դիս՝
Որ թռիչներս աղամող
Կշախշախեն և հոգիս։

Առկայծ հույսով մ'ո՞ւր կերթամ.—
Կերթամ նույն տեղս զացած.—

Հոս, կյանքն ու սև գերեզման
Իրարու ձեռք են տված։

Օր մը ձեզի պես ե՛ս ալ
Պիտի իյնամ, ցուրտ անշունչ,
Մոռացոնքի մեջ մռայլ.
Հոս ամեն բան է անուրջ։

Պիտ, լռությամբ դուք, ես հող.
Բայց ինձմեն ե՞ք երջանի՜կ,
Չի վրանիդ միշտ լացող
Գեթ շատրվան մը ունիք։

ԵՐԱՋ ԵՎ ԽՈՀ

Պառկած էի. խոր լռությո՜ւն, գիշեր էր...
Ճրագս յուղե պատերն արյուն կներկեր։
Ծանրացավ մրափ մ'աչքերուս.
Մտածումնե՛րս երազի մեջ սուզան,
Եվ բիբերես ամեն ճաճանչ լուսական
Կոպերուս վրա՛ տվին խույս։

Սև դեմքի մ' հետ ձեռք մը տեսա մահճիս քով.—
Կուրծքիս դրավ մատերը բոց եղունգով,
Սնդիկի պես խորամուխ։—
Փայտ կտրեցավ լեզուս, վախցա՛ շեկ աչքեն։
Ես ճանչցա զայն.— սատաններուն ամենեն
Կատաղին էր մ'էն թուխ։

Բացավ բերանն՝ որուն մեջ լինդ միայն կար.
Իր ակռաները խորտակված՝ էին վար
Իյնալու օրն երկնքեն...
Ըսավ.— «Սրտե՛դ սրտեդ քարշել ես ինձ

Զայն՝ որուն տեղն իմ տեղս պետք է ըլլա.
Տո՛ւր, ինձի՛ տուր սերդ իրեն»։—

Անկողնիս մեջ թալթլեցա, ու երկու
Ձեռքով՝ սարսռուն բռնեցի թևն ահարկու՝
Ինձմե անդին մղելով։
Մաքառեցա Անոր համար, անկրոննե՛ր.
Խածեցի ձեռքն՝ որ Զինքն ինձմե կանջատեր.
Իր ոսոխին արյունով՝

Ներկեցի շուրթս, և անցուցի ծարավս հուր։
Դևն երեսիս կատղած պոռաց.— «Տեղի՛ տուր՝
Թե չէ զքեզ կխեղդեմ.
Թոքերուդ տակ կճըմլեմ սիրտդ անխնա.
Ճերմակ սավանդ վաղը կարմիր կդառնա.
Մա՛հը կհանեմ քեզի դեմ։

«Ագռավներու կեր կուտամ այդ սև աչքերդ.
Քաղցած օձի բերաններու երակներդ
Կհանձնեմ ես.— տեղի՛ տուր։
Կգողնամ քարը գերեզմանիդ վրայե,
Որպես զի մա՛րդ զքեզ բնավ չարտասվե.
Անգութ եմ, տե՛ս,— տեղի տուր»։—

Գիտի չը տա՛մ։— Կսմըթեցի կուփեցի
Թևն՝ որ ոսկրերս կխորտակեր զերդ խեցի,
Եվ մատերովս անխնա,
Բզիկ բզիկ ճանկռթեցի դեմքն անոր,
Դոզդոզացի, տառապեցա քրտնաթոր,
Եվ սուր ճիչով մ՝արթընցա...

Ա՜հ, արթնցա։— Եվ միտքս շուտ մ՝շտապեց
Սրտիս վրին. դեռ Ան հոն տեղն էր, անեղծ,
Ցոթն արևի նման ջերմ։
Դևն եղունգով լանջքս շերտած էր տեղ տեղ,
Ուրախ էի՝ որ եղա զրահ մ՝արյունհեղ
Անոր համար, Անոր դեմ։

Ո՞վ պիտ՝ կրնար փետել հանել Զայն սրտեն՝
Ուր (ինչպես ա՛ստղը կապույտին ծոցեն ներս)
Ագուցված է ա՛յնքան խոր։
Իր խարիսխներն ալի՛ք մըն ալ չի շարժեր,
Չի անհունին և բնության են կառչեր
Անոնց ճանկե՛րը հզոր.

Վասըն զի իր սուրբ էության հաստատման՝
Թյուր բյուր աստղեր մեյմեկ հրաշեկ գամ եղան,
Եվ իր հետն ենք մե՛կ խմոր.
Վասըն զի սուրբ Ավետարանն իր ամեն
Մեկ էջով՝ միշտ ծորեց անոր երակեն
Արյուն մ՝արյանս մեղավոր։—

...Անդունդ մ՝է Ան զույգ որկորով անսահման՝
Որոնց մեկեն դուրս կպոռթկա Ապագան
Անցյալ եղած մյուսին մեջ,
Եվ, կենտրոնն, ի՛նքը ներկան է, որուն շուրջ
Ժամանակն իր ճիշտ ոլորտովն, անմռունչ,
Կրնե անդուլ ելևէջ.

Եվ այսպես, մեր աչքեն, մտքե՛ն իսկ անդին,
Ան՝ իրեն չափ, իրեն միջև, յուրովին,
է հավիտյան և անհուն.
Ան՝ Ամբողջն է, որուն անունն պարծանքով
Կհանձնե այս մաքուր թուղթին սրտիս ծով՝
Որ իր հայլին է տրոփուն։

Թող գրաշարը դողդոջե՝ երբ անոր
Անվան տառերն իյնան ձեռքին տակ անզոր.
Չշարե՛ ծուռ կամ անտած...
Եվ մամուլն ալ՝ այդ անվան վրա բրտորեն
Թող չըճնշե՝ թե չէ կհերձի սև կուրծքեն,
Վասըն զի ա՛ն է.— Ասված։—

ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ

Ընդ եղեգան փող բոց ելաներ.
Մ. ԽՈՐԵՆԱՑԻ
(Առասպելք)

ՁՈՆ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք—
Սոսյաց անտառեն էի զայն կտրեր...
— Քեզի ընծա՛, նիր հայրենիք—
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ։

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.
— Քեզի ընծա՛, հայ պանդուխտներ—
Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծլոտ...
— Քեզի ընծա՛, ճեզ պանդուխտներ—
Եղեգնյա գրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո՛զբ ելաներ։

Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
— Քեզի ընծա՛, սուրի զոհեր—
Ան ծլած էր մոխրի մեջ խբրե կնյուն...
— Քեզի ընծա՛, կրակի զոհեր—
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ։

Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.
— Քեզի ընծա՛, հայր ալեհեր—
Ցամքած աղբյուրեն մեր գայն հոտեցի...
— Քեզի ընծա՛, մայր կարևեր—
Եղեգնյա գրչով օջախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ։

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
— Քեզի ընծա՛, հայ մարտիկներ—
Գրիչս եղավ անթրոց սրտերու հնոցի...
— Քեզի ընծա՛, քաջ մարտիկներ—
Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ։

ՆԵՄԵՍԻՍ

Քերթողն հսկա, մրրրկավարս, հրաշվի,
Նվիրական արվեստանոցն իր մտավ,
Եվ փակեց լայն պողպատ դռներն հապշտապ.
Փակեց փեղկերն երկնքին դեմ, որոնց նեղ
Ճեղքերուն մեջ մնացին
Արեգակին մազերն ոսկի, սանտրված։
Լեռնակուտակ զանգված մ'ընտիր մարմարի
Այդ շենքին մեջ մթնշաղ
Կսպասեր՝ ձևն հագնելու հին դյուցազնի.
Եվ կամ գուցե կհուսար
Որ աստղերեն իջնելով՝
Պիտի աստված մը գա իր մեջ բնակիլ։
Զանգվածը՝ այդ ապառաժ մ'էր բարբարոս՝
Որուն մեջ դեռ կմնար
Կիսավեր բույն մը արծվի.
Եվ խորն իր մեկ խոռոչին
Օձ մ'էր ծվարած, ու կնոջեր հանդարտիկ։

Քերթողն ինքզինք պահ մ'անհունին մեջ հոգվույն
Ըզգաց աստված.— Սոթտեց թևերը ջղուտ.
Ոսկեղեն մուրճը ափին մեջ, դժգույն, վեհ,
Մարմարին դեմ, գլխեբաց,
Հսկայի պես կանգնեցավ...
Նշմարեցին աչքերը ձեռք մ'այն ատեն
Մութին ծոցեն՝ կարկառուն՝
Որ վիթխարի բռնած սափոր մը պարպեց
Խորն իր հոգվույն լայնալիճ
Տիեզերքին ստեղծահյութն հողաբույր։
Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց։
Արվեստնոցին բյուզանդական գմբեթեն
Հույսի ձեթով լի սուրբի գանգ մը կախված
Կըլլար ջահն իր լուսատու։
Ան կտեսներ մարմարին շուրջը ձևված
Հզոր երազն՝ որ միս կառնուր և ծալքեր։
Մտածումն իր՝ այդ քարին կույս ծոցին մեջ՝
Իր արմատներն հուշիկ հուշիկ կխրեր
Ծառի մը պես ձիթենի։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Ամեն մեկ բուռն հարվածին տակ հաղթ մուրճին՝
Ինչպես թե ռումբ մը պայթող՝
Ուղիս մը կայծեր, քարերու հետ խուռնախիտ,
Կանձրևեին պատերն ի վար խավարչուտ
Պատկի պես քայքայվող։
Դուրսն ողկույզներն հասմիկին
Կթափեին մուրճին մեն մի թնդյունեն
Փեղկերն ի վար իրենց կապույտ ծաղիկներ։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց.
Մինչև որ բիրտ վայրենությունը քարին
Նվաճվեցավ, և ահա գլուխ մը կնոջ
Մարմարին մեջ թարմորեն

Ծաղկեցավ բա՛ռբը շուշանի մ'հանգունակ։
Ջրքնաղ էր ան, միանգամայն էր ահեղ.—
Հելլենական արձաններու կուրությամբ
Կհառեին խորունկ աչքերն՝ որոնց մեջ
Կարծես հոգին, անդունդն ի վեր մագլցող
Կարիճի պես՝ կամաց կամաց կերևնար։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Բանաստեղծն իր բազուկին տակ կենսադրոշմ
Կփորագրեր կարծես քերթված մ'հավոր.
Խոր ծալքերուն մեջ կյանք առնող մարմարին
Մեն մի հարված դաշնակցություն մ'էր քնարի,
Հանգ մ'էր, տուն մ'էր, և կամ էլ շեշտ մ'օդասլաց։
Մեն մի հարված ռմբագոռ
Ըմբոստ երգ մ'էր ոսկի մուրճով երգված՝
Որուն աստված երկնքին մեջ կունկնդրեր։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց,
Ու տվասիկ ճոխ զանգուրներն այդ կնոջ
Ջերդ ողկույզներ իրար խռնված օձերու
Ուսերուն վրա թափեցան։
Կերտեց թիկունքն և թիկնամեջը շքեղ,
Կերտեց թևերն ամազոնի՝ որոնք թե՛
Կարող էին արձակել
Ոսկի փքինը սիրո,
Եվ թե՛ հրաշեկ կայծակը՝ տեգ մահընկեց։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Ո՛հ, ի՞նչ փույթ թե անցան անքուն գիշերներ,
Եվ ցորեկներ՝ անդադար.—
Տիծե՞րն ահա, ծիծե՞րն ահա արձանին,
Ա՛յնքան մաքուր կլորցված, պաղպաջուն,
Որ անշուշտ կաթն անոնց մեջ պետք էր ըլլալ
Կա՛մ լույս՝ սառած, և կա՛մ արծաթ՝ հալըված։

Կողերն ահա, ահեղորեն շնչավոր,
Որոնց ներքև կարծես արյամբ մեծնային
Արդարության, վրեժի սաղմերն երկվորյակ։
Շինեց ողն, հո՛ւյր բոմբերն, ազդրերը ոգորկ.
Շինեց և պորտն՝ որ գանգվածին մեջ հանկարծ
Քառսեն ծնող աստղի պես
Ճառագայթներ դուրս պոռթկաց։

Օ՛ն, հարվա՞ծ մ'ալ, հարվա՞ծ մ'ալ...
Գանգ ջահին մեջ ձեթն սպառիլ սկսավ.
Օ՛ն, հարվա՞ծ մ'ալ, հարվա՞ծ մ'ալ...
Եվ քանդակեց, քանդակեց...
Կերտեց գուճերն և սրունքներ.
Կերտեց ոտքերն՝ որոնց տասնյակ մատերեն
Ժահրով, մեղրով խառնված
Դրդրշահոս լույսի վտակներ բխեցան։
Եվ շինեց ան վերջապես
Կնոջ մեջքեն վար ահեղ
Սուր մ'երկայրի, սուր մ'անպատյան, սուր մ'անքիծ,
Եվ Աստուծո պես արդար։
Այն ատեն հոն մարմարիոնին խորշին մեջ
Քնացող օձն արթնցավ
Եվ փաթթելով զինք մեղմորեն այդ զենքին՝
Կաթիլ կաթիլ սկսավ թույն մը կաթիլ։

Օ՛ն, հարվա՞ծ մ'ալ, հարվա՞ծ մ'ալ դեռ, և ահա
Պիտի գործն այդ ավարտի։—
Քանդակագործ քերթողն հանկարծ խորշոմեց
Մարդարտապսակ ճակատը ջինջ քրտինքով.—
Այդ ի՞նչ արձան, անունն ի՞նչ էր այդ կնոջ.
Գորգոնա՞ մ'էր, Հերա՞ն քինոտ, թե Իսիս.
Պատվանդանին վրա հսկա
Փորագրեց.— Նեմեսիս։—

Ահա երազն իր, կշնչեր, կխորհեր.
Իր երազն այդ մարմարեղեն՝ զոր երկար
Ատեն արտին հանքերուն մեջ ան ջրեց։

Արդարության և Վրեժի
Դիցուհին այդ՝ աղջիկն էր իր կոքովին,
Զոր հղացավ, ողնածուծովը սնույց
Այն օրեն վեր՝ երբ հլությամբ հարսնացավ
Ժողովուրդին արյան հետ
Գիտակցությունն իր բեղուն։—
Այլևս ի՞նչ փույթ թե մնաց թաղված օրերով
Արվեստնոցին դամբանական մութին մեջ։
Ի՞նչ փույթ թե այդ ճակատեն վար կհոսի
Բարի քրտինքն հոգնության,
Եվ ուսերուն և գլխուն վրա սևահեր՝
Իբրև ըլլար ջաղացպան մ'ան՝ կնստի
Ճերմակ փոշին մարմարին.
Եվ խիտ երկար թարթիչներն իր կնմանին
Աղավնյակի մը թևերուն սպիտակ.
Ի՞նչ փույթ թե ան, ա՜հ, չտեսավ կույս գարնան
Լուսակարկաչ աղբյուրներուն մեջ ժպտիլն,
Եվ չքամեց դեռ խաղողի ողկույզներ
Բաժակին մեջ բյուրեղյա.
Կամ չխառնեց գանգուրներն իր ասպետի
Բլուրներուն վրա պարող
Աղջիկներուն հողմատարիկ վարսերուն։
Ո՛հ, ի՞նչ փույթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կապրի,
Երբոր երազն անմա՜հ է։

Մուրճը ձեռքին մեջ բանաստեղծն հաղթական
Արձանին խիստ աչքերուն մեջ կհառի.
Եվ անոնց մեջ կճանչնա
Ինքզի՞նք,— ամբողջ անթերի։
Կճանչնա սուրբ մարմարիոնն այն՝ որ առավ
Բազկին տակ կյանք, որ այդտեղ
Եկավ զանգված մ'իր բրտության մեջ ննջող
Եվ արթնցավ Դիցուհի՞.
Ջերթ քարափերթ մ'ստրուկ ինկավ մուրճին տակ։
Եվ կանգնեցավ Վրիժուհի՞։
Ավարտած էր ամեն գործ.—

Ահա մեջտեղն էր,— Նեմեսիսը-կանգուն,
Պաշտվելու, ընդունելու ողջակեզ
Այլևս կա՛զմ և պատրաստ։
Այն ժամանակ քերթողն ուրախ, փոհունակ,
Քաշեց նիգերը, բացավ
Պղնձե դռներն հսկայական գավիթին.
Նույն ատեն լույս մը դեմեն
Երկինքն ի վար ա՛յնպես արձանն ողողեց՝
Որ դիցուհվույն մարմինը շուրջն սկսավ
Ճառագայթներ արձակել։
Խտղտեցուց ճերմակությունն իրանին
Աչքերն աղվոր օրիորդի մ'որ դեմի
Պատշգամին նստած ժանյակ կհյուսեր։
Ջյունեղեն ժայռ մ'էր կարծես՝
Որ կցցվեր արևուն մեջ՝ հոլանի։
Կթափեին ուսերեն վար, կուրծքեն վար,
Շողի հազար վտակներ, հազար ալիքներ։
Քերթողն անգամ մըն ալ անոր նայեցավ.
Եվ ճակատին վրա ճանչցավ
Անգամ մըն ալ դուստրըն իր հեստ արյունին.
Տվավ համբույր մ'երկյուղած
Մեջտեղն անոր ծիծերուն,
Ուրկե մնաց շրթունքներեն վար առկախ
Լույսի կաթիլ մը՝ վաղվան
Նոր վրեժներու արգասիք։
Հետո նետեց ծանրակիր մուրճը ձեռքեն.
Թևը սոթված պատվանդանին վրա դրավ,
Եվ գլուխն ալ թևին վրա.
Եվ իբր առյուծ մը պառկող՝
Հոգնած, քրտնած և վսեմ,
Աստվածուհվույն ոտքերուն տակ քնացավ։

***

Ժողովո՛ւրդն է, ժողովո՛ւրդն է որ կուգա,
Ճամփաներուն, փողոցներուն մեջ Քաղքին
Գետեր են որ թրխակոհակ կհոսին.

Հարստահարված ժողովուրդն է որ կուգա։
Անոնք տեսան Նեմեսիսի վեհ արձանն,
Եվ քուրմեր են, վրեժի քուրմեր, և ահա
Անո՛ր, անո՛ր կդիմեն։
ԴորՀատոունեն, թիարանեն, բանտերեն
Գրոհ կուտան։ Արյունոտ են և քաղցած։
Դեռ բեկորներ շղթայի՝ զոր ջարդեցին,
Մերկ ոտքերնուն հետ ընդքարշ
Սալհատակին շռինդ շռինդ կհնչեն։
Ոմանք սակրով, ոմանք մուրճով են զինված.
Դեմքերնուն վրա արյունոուշտ
Կփայլակն կատաղությունն՝ հեռուեն
Մերկացնելով մարգարտաշող կճրտումն
Ակռաներնուն՝ մարդու մսի անոթի։
Մերկ են կիներն իրենց ամբողջ ծիծերով,
Եվ մանուկները՝ բոպիկ՝
Որոնց դժգույն ճակատեն
Գարունն ընդհուպ կթափթփի վարդ առ վարդ
Դեռ չավարտած իր բողբոջումը առույգ։
Ատելության գոռուգոչ մ'է՝ կպոռթկա,
Կտարածվի պողոտայե պողոտա
Քաղաքին մեջ բովանդակ։
Ամեն շղթա կբեկտի,
Եվ կփլչի ամեն բանտ.
Հրապարակին մեջտեղ կրակի կտրվի
Կառափնարանն՝ հերոսներուն արյունեն
Վարդակարմիր և ճարպոտ,
Եվ իր մեծ բոցն երկնոլոր
Ամբոխներուն գիտակցության կբլլա ջահ։
Ամեն խրճիթ ըմբոստ մը դուրս կպոռթկա,
Ամեն շիրմե նահատակ մ'հաղթ կհառնու
Նո՛ր միսով, նո՛ր ըղեղով, նո՛ր զենքերով
Սպառազեն։ Ժողովո՛ւրդն է հող կրծող.
Մինչև մեջքն իր՝ տիղմին մեջ
Ուրիշներուն դղյակ շինող ամբոխն է՝
Որ ոտքի միակ մոլեգնադրույթ ոստումով
Նույն իր խորունկ գերեզմանին քարին վրա

Ահավասիկ կկանգնի։
Եվ մարդկային օվկիանն այդ փրփրագոռ
Կեռա խորքեն իր մռայլ.
Եվ ալիքներն հառաջ կերթան մահադող.
Եվ կթքնեն իրենց փրփուրը հորձքի
Պալատներուն մինչև քիվերն, ու մինչև
Ճակատն արփվույն անտարբեր,
Քրջավո՛ր են, ահավո՛ր են, բայց այսօր
Հանճարներու, դարերու
Ամբողջ մտածումն, ամբողջ վաստակը խմող
Գաղափարին արծիվի թևն սպիտակ
Եկաք դիպչիլ անոնց դեռ կույս ճակատին։
Եվ անոնք ուղիս ճամփաներե հավաքված՝
Այսօր ունին վսեմությունն օվկիանի.
Եվ կմռնչեն, կհայհոյեն, կաղոթեն,
Կհայհոյեն վերստին։
Կմրմռան բռնության դեմ ծուփառծուփ.
— Վրե՜ժ, վրե՜ժ, Նեմեսի՜ս։—

Եվ Նեմեսիսն հո՜ն է, հո՜ն է մխիթարիչ
Քենն երկնային. ձյունափարփառ մարմինն իր
Լուսնակին պես ալիքներն այդ կքաշե
Դեպի ծոցն իր մայրենի։
Եվ ժողովուրդն արձանին շուրջը կդիզվի
Հետք հետքի վրա. խուռնախիտ,
Եվ կզակներ կոթնցրած ուսերու։
Առջեր ՝ վեհ Դիցուհվույն
Ամեն ոք իր վերքը կուրծքին դրանա.
Պարմանիներ ցույց կուտան
Թևերն իրենց կտրած՝ շղթա կոտրելեն.
Մայրերն ահա վեր կառնեն սև սև քողեր՝
Անոնց ծալքին մեջ բանալով դանգիկներ
Մանուկներու՝ այրուձիին տակ ճզմված,
Եվ պառավներն անոր առջև կփռեն
Քղամիդները կարմիր
Դրժված, մորթված դյուցազնական թոռներու։
Եվ կբերեն ամենն ալ

Իրենց վերջին հարստությունը՝ նվեր,
Եվ ծնրադիր, անիծախառն աղեքսով
Արտասվագին միահամուռ կգոչեն.
— «Ո՜վ Նեմեսիս, Անվրիպելի՜դ, Վրիժուհի՜դ,
Մեր տառապանքն, անկումը մեր կտեսնե՞ս.
Մեր արցունքի մեկ շիթին
Օվկիանական անհունությունը արդյոք
Քու ափիդ մեջ կշռեցի՞ր։
Բա՜վ է փառքերն ու հաճույքներն արբեցնենք
Մեր արյունին արյուններովն ու մինչև
Ոսկորներնուս քրտինքով.
Բա՜վ է սվինները պատռեն
Մեր արգանդին մեջ՝ հավետ
Լուսաթաղանթն արշալույսի սաղմերուն.
Բա՜վ է անիվը գործատան փերթ առ փերթ
Ելե մեր միսն և յուղոտե ճղուղն իր.
Բա՜վ է, բա՜վ է մեր բովանդակ կյանքին մեջ
Խարազանված թիկունքներնուս վրա կրենք
Մեր շիրմաքարն ու երթանք այսպես շիրիմ։
Վրեժի ժամն ա՜լ հասավ.
Նշկահումի ամպրոպահունչ ժամն հասավ։
Ո՜ւժ տուր մեզի, ոգևորե՛ և մղե՛.
Դո՛ւ մեզ Աստված, դո՛ւ Տիրամայր, դե՛հ իշեր
Պատվանդանեդ և ձուլե մեզ կամքիդ մեջ,
Եվ օրենքներդ գրե
Մեր ճակատին վրա արյան գրերով։
Քու ժողովուրդդ մե՜նք ենք.
Պիտ՝ ըսպաննենք մեր աստվածներն հին և նոր
Եվ աճյունին վրա անոնց՝
Ատտիկեի մեհյանեդ ալ հոյակապ
Պիտ՝ քու մեհյանդ կանգնենք։
Պիտ՝ կործանենք ապարանքներ ու բանտեր՝
Եվ քառանկյուն սալքարերովն իրենց հաղթ
Պիտի բագի՜նդ կանգնենք։
Ամեն տարի Մահատոնիդ Նեմեսյան
Ատելության ի՜նչ նվագներ պիտ՝ հնչեն.
Պիտի զարթնուն ի՜նչ մոռցված մեռելներ,

Եվ խմելով արյունախա՜ռն գինին,
Զոր սափորով իրենց շիրմին պիտ՝ դնենք,
Արևուն տակ, զոր կարոտցան, ձեռք ձեռքի
Պիտի պարեն շուրջն արձանիդ՝ հանձնելով
Իրենց պատանքը հովին։
Իշիր մե՛ր մեջ, և բնակե լոկ մե՛ր մեջ.
Օ՜հ, ո՞րքան դու չքնաղ ես
Եվ ո՞րքան ալ սարսափելի. աչքերդ այդ
Արդարաբար կսպանեն միշտ, և ձեռքերդ
Աճյուններու մեջ պատրաստ են սերմանել
Շուշան հունդեր շուշանափայլ կյանքերու.
Գանգի մը մեջ բույնն իր դնող տատրակն ես.
Աղբյուր մ՝ես դու Մոյուքսի՝
Որ կբխի գերեզմանե մը կանանչ։
Ահա քեզի կը կարկառենք մեր քաղցած
Երեխաները. թող որ քո՛ւ ծոցիդ մեջ
Մկրտվին, և ծծեն կուռ ծիծերեդ
Կաթը վաղվան վրեժին։
Օ՜ն, Նեմեսիս, իշիր մե՛ր մեջ, մեզ ըրե
Վահա՛ն լանջքիդ մարմարե,
Սո՛ւրը թևիդ անխնա։
Չի մենք ծարավ ենք արյա՜ն,
Արյա՜ն, արյա՜ն, Նեմեսի՛ս։»

Կըսեն.— իրենց գոռուգոչումն ահավոր
Կասասանե գահերուն վրա կայսրներ,
Եվ կօրորե պատվանդանին վրա ննջող
Քերթողին քունն հանդարտիկ։
Կըսեն.— Եվ նվե՛ր Աստվածուհվույն կընծայեն.
Անոր առջև արյունլվա ձեռքերով
Կսփռեն վարդ ու հասմիկ։
Կույս աղջիկներ դալկադեմ
Ասեղներե ծակծակված գիրգ մատերով
Կհյուսեն անոր գլխուն համար պսակներ։
Գյուղացիներ կողջակիզուն վերջին ուլն
Իրենց թափուր և ցրտացած փարախին։
Տղաք կնդրուկ կծխեն.
Իսկ բանվորներն ու ռազմիկները պարման

Թուրերն իրենց, մուրճերն իրենց նվիրական
Կուգան անոր կովանին վրա հեսանել։
Եվ ժողովուրդը բովանդակ հանկարծ լուռ
Լուսնկային տակ հանդարտող ծովու պես
Կխոնարհի աղոթքի...

(Օրհնյա՜լ ըլլաք, հառաչանքի մեջ խեղդված
Ո՛վ արցունքներ, մազերե վար կայլակվող
Ո՛վ արյունի կաթիլներ.
Ո՛վ աղոթքներ նախատոնին կռիվներու,
Մանավանդ դուք օրհնյա՜լ ըլլաք.
Ձեր մեջ է որ Հույսերը մոտ հաղթության
Իբրև ճերմակ աղավնիներ՝ ամենուն
Ծոցեն արփվո՜ւյն կսլանան)։

Եթերական կրակին խորեն իրիկվան,
Դեմի սարեն զառ ի վայր
Ա՛յն որ կիջնե անչափելի քայլերով,
Հերո՜ս մըն է, պերճահասակ քրմապետ
Նեմեսիսին կուսական,
Եվ անձնուրաց Նախախնամող մարդկության։
Արևը դեռ չմեկնած
Ճառճանչներն իր ամփոփեր է շեշտուղիղ
Անոր կուրծքին կարմրաբորբ,
Ցայտեցնելով զենուզարդեն պաղպաջուն
Ճառագայթներ՝ նման բամբշի մը գլխուն
Ծամակալ մեծ ասեղներն։
Արյուն մ՝ահա կկայլակի տակավին
Իր գոտին արդարադատ կեռ սուրեն։
Կուգա՜,— ճակատն իր արդեն
Շաղակապված դափնիով։
Քայլերը ծանրը՝ փառքեն,
Եվ բռնությունը ճզմելեն՝ տենդակոխ
Ահավասիկ կերկփեղկեն
Ժողովուրդն այն խոնարհած
Ատելության և աղոթքին բեռին տակ։
Նեմեսիսին ծոնելու

Ան իր նվերը ունի.—
Գլխուն շուրջեն կարձրկե
Դափնեպսակը՝ զոր կույսերն որբացած
Շիրիմներուն նստած տրտում շուքին տակ
Իրեն համար հյուսեցին.
Կարձրկե զայն և ձախ ձեռքովը բռնած
Բուրյան ճյուղին մեկ ծայրեն
Մյուսովը զայն կմերկացնե, սփռելով
Իր սաղարթներն օդապար
Աստվածուհվույն ոտքերուն վրա անարատ,
Որոնցմե հա՛տ մ'աղվոր տերև մ'արյունոտ,
Կերթա կիյնա արձանին տակ քնացող
Քանդակագործ բանաստեղծին ճակտին վրա,
Որ գրավված նո՛ր Տեսիլներով երազի
Այդ հպանցումը փառքին
Ամենևի՛ն չիմանար—

ԲԱԳԻՆԻՆ ՎՐԱ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈԳԻՆ

Ե՞րբ պիտի գաս. երբ մեր գետնին ույժքերեն,
Իբր հարությունն հողին խմած շողերուն,
Պիտի պոռթկան շունչիդ բոցերն երկնապող.
Կամ մեր երկրին արյուն կաթող ո՞ր աստղեն՝
Դու պիտ՝ իջնես հրդեհել
Ջենքի տրմուղ ժողովուրդդ՝
Որուն սրտեն դարերն հավետ խմեր են
Թորգոմական արյունն ու ողը պարպեր,
Որուն համար մեր պապերուն ոսկրոտին՝
Հովտե հովիտ սփռված՝
Բաժին են լոկ դայլերու։
Ո՞վ անդրանիկ Աստվածուհի, Իսկուհի՝
Հայ ջրերուն, կրակներուն և կավին,
Տե՛ս, քու երկիրդ՝ որ՝մեր սերմին մայրը ըրիր՝

Այլազգներու խժդրժանքին մատնված.
Այսօր, ավա՜ղ, սուգ ու արյուն կրբխե.
Իր կործանած քաղաքներուն վրա լռիկ
Կնստի կռունկն ողորմուկ.
Հողն՝ հերկված միայն սողովն օձերուն՝
Իր աղտաղտուկ խավերուն մեջ կպահե
Պաղլեղ, և իր սև տափերուն վրա՝ ոքոզ.
Կմնան մեր այգեստանները՝ առանց
Շերտափակի, և կարասները՝ առանց
Հայրենական գինիին.
Եվ մեր խոյերն սպիտակ՝
Ցգրտնելով խոտնոցներուն մեջ առվույտ՝
Նոթութենե մոլեգնած՝
Մսուրներուն դեմ կչարդեն եղջյուրնին։
Իսկ որդիներդ թշվառ
Կամ հեռացած հորենական երկրեն
Կխառնակին ազգերու խորդ արյունով,
Կամ նույն երկրին ծոցին մեջ
Կմեռնին լուծն ուսերնուն,
Ապրողներուն թողլով մաս •
Մերկացում ողջ հայութենեն, խորդացումն՝
Որով կըլլան իրարու դեմ թշնամի
Եվ թշնամվույն դեմ՝ ծառա։
Ոչ մեր դաշտերն՝ եղած արյամբ ճախճախուտ,
Ոչ պարիսպներն ու տաճարներ քարուքանդ
Ջիրենք կրնան զայրագնել,
Ո՛չ օտարին ծաղրանքն և ո՛չ անարգանք
Կարթնցնեն իրենց հոգվույն մեջ ընթարմ
Հպարտությունն հայկական։
Կծառայեն և կողբան
Եվ ողբալով ստրկությունն ավելի
Իրենց դեմքին կհորիեն վայելուչ...

Եկո՜ւր, եկո՜ւր.— Ժամանակն ա՛յս է.— Եկո՜ւր...
Ահա ցեղդ մաս մ'ազնիվ՝
Գաղափարի, գուպարի մեջ հալումաշ՝
Ճամփուդ վրա կսփռե

Իր արյունին հետ նոր վարդեր, կակաչներ...
Եկո՜ւր, եկո՜ւր.— Եվ Մասիսի կատարեն
Դյուցազներու, վկաներու հոգիներ,
Իբր աստղերու սերմընցան,
Տեղա՛ բոլոր իգության մեջ մեր երկրին,
Մեր սրտերուն խորունկ խորքերը հոսե
Արյունդ անբիծ, զոր շիթ առ շիթ ժողվեցիր
Վարդաններու ռազմահարդար հետքերեն,
Եվ լքե մեր օրրաններն
Արշակներու վերածնող շիրիմներ.
Ամեն հայու լանջքին տակ
Իր մեկ հին պապն արթնցուր.
Եվ նվիրական, հավերժական զանգվածով
Ջանոնք խառնե և խմորե և ձուլե
Եվ ստինքովդ ապրեցուր։
Ա՛յնպես որ՝ քու մայրենի
Ճառանչավուխտ թե թռիչներուդ տակ ամփոփ
Տաքնա՛ մեր հողն, և բլուրներուն վրա խայտան
Գարուններն հին, Նավասարդները՝ լեցուն
Մարտիկներու վահաններուն կոփյունով,
Մեր արծիվներն և ուրուրները՝ թողած
Ճախճախուտները նվաստ՝
Կայծակներու թառերուն վրա կռնչեն.
Էգ առյուծներն ու էգ վագրերը բոլոր՝
Մայրագորով լիզումով՝
Ըլլան կայտառ հայկակներու կաթնտու.
Մեր ամպրոպները (լեցուն
Սուվերներովն երգիչներուն գողթական)
Սրտին մեջ հայ քերթողին
Փոխվին երգի ու չափվին
Կայծակներու շեշտերով.
Բանվորն հեստի՛, հեստի՛ գեղջուկն ու՝ այգուն՝
Երբ իր քայլերն ուղղվին դաշտերն ավերված,
Արշալույսեն արյունի հոտը առնե
Եվ արյունի՛ ծարավի.
Շունչիդ զեփյուռն ու ճառագայթն աչքերուդ,
Նրման գարնան մեր տան շեմերը պճնող,

Թող ճամփորդեն հյուղե հյուղ,
Բնակարանե բնակարան.
Կանգնի՛ն այրերն ու մայրեր,
Ծերը կանգնի՛, կանգնի՛ տղան.
Ու ամեն ոք Ազգին սիրով լոկ արբշիռ,
Ազգին ոգվով հաղորդված
Ա՛յնպես վառի, ապստամբի, բորբոքի,
Որ Թորգոմա Տունն զգա
Թե իր օջախը մարած՝
Այսօր հրաբուխ է դարձեր։

4. ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Ա.

Ըլլա՜ լացի, համբույրի,
Հիշատակի մտածման,
Մռնչելու համար ըլլա, օ՜ն, մտնենք.
Մտնենք հսկա քաղաքն հսկա աճյունի,
Մտնենք Շիրիմն հայության...

Ողջո՜ւյն, Անի, գերեզմնոց,
Ուր կփտին ոսկորներն հաղթ Անցյալին.
Ողջո՜ւյն, Անի, օրորան,
Ուր փլուզի տակ, կարիճի սև արյունով
Մեր ապագան կմեծնա.
Ողջո՜ւյն, Մեռե՛լ, Մա՛յր, ողջո՜ւյն։
Ահա կուգամ, ես վերջին
Նորաբողբոջ գլուխը հայ Հիդրային,
Կուգամ կյանքիդ փառքովը մահդ օրորել.—
Ըսել թե մեծ եղար դու,
Կամ մեծ խոստումը մեծության, դու եղար

Լուսակայլակ պողպատ ստինք մ'որուն դեմ,
Խուժդուժ ցեղերը ծծելու դեռ անվարժ՝
Եկան նոթի լնդերն իրենց չախչախել.
Ծեր Ասիո շեմին վրա դու եղար
Երեք դարու սիրտն՝ եթե Հույնն բղեղն էր,
Սիրտ կենսարուխ՝ որուն աչքերն հառած պիշ՝
Նենգ Բյուզանդիոնն, այդ բոզորդին Հռոմի,
Քեզ կդավեր լափլիզելու ախորժով։
Եվ ան դավեց և ան հաղթեց.— ու ավա՜ղ,
Երբ դրոշակն իր ցցված տրխմար արքայիդ
Հովհաննեսի շիրմին վրա՝
Վեստ Սարգսյան կըլլար խլան խոստացված,
Քու բալլիքներդ Վոսփորի բանտին մեջ
Երիտասարդ թագավորիդ թևերուն
Կուռ շղթաներ կղպեցին։

Բ

Ո՜վ պատուհաս. կորսվեցար դու այլևս,
Երբ Պարսն ու Հույնն, երկու ոսոխ ոսոխներդ,
Իրարու դեմ զքեզ ասպար կանգնեցին,
Կամ իբրև որս մ' որ արդեն իր մագիլով
Նախ իր սիրտն է խոցոտեր—
Քեզ անցուցին Մոնոմախոսն ու Տոզրիլ,
Պերոզն ու ժանտ Ալփասլան՝
Ժանիքներե ժանիք, թաթե ի թաթուլ.
Եվ, դեմ դիմաց կզակներն իրենց ջարդելով,
Հիմնաքարերդ հանեցին՝
Որպեսզի սև դամբանաքարդ հորինեն։
Ալ այն օրեն դու իբրև շենք մ' հոյակապ՝
Ուրկե հազար կայծակ մեկեն է անցեր՝
Քայքայվեցար մարմար մարմար, ծեփ առ ծեփ.
Ու, ո՜վ ցասում, ո՜վ ամոթ,
Քեզ դեմ առ դեմ բզկտողները նենգաժոտ
Ջեղան արծիվ՝ այլ գայլե՞ր...

Գ

Արդ քարուքանդ կհանգչիս
Եվ նշխարներդ ինը դար է որ կապրին,
Ժամանակին ձեռքը չեղավ այնքան հաղթ
Աճյուններդ այդ մրրիկներուն հանձնելու.
Բայց ծոցիդ մեջ ալ բնա՜վ
Սմբատի սոս նժույգը չի՜ խրխնջեր,
Ան չի թոթվեր արյունթաթախ բաշերն իր
Քած ձիուն դեմ Ափշինի
Ու կոչնակներն ու շեփորներն ոսկեցով՝
Որոնց ի լուր թուրը խաչով կձուլվեր,
Հոն լռած են՝ ապրեցնելով իրենց տեղ
Բուի հազար սերունդներ։
Այդ լռության չղջիկի լայն թևին տակ
Կաճի եղիճն արտասուքովն աստղերուն.
Եվ հոն բաղեղն հայրենասեր թևերով
Կգրկե հոդդ տրտում
Իր պատառիչ կայծքարերով միասին
Եվ խոտ մ' հաղիվ, բարձրացած
Ճամփաներուն վրա անկոխ՝
Կծածկե սողն օձի մ' արփվույն տակ ճեմող։

Դ

Ի՞նչ մնաց, ի՞նչ.— Պարիսպներեն քարակուռ՝
Որոնք զքեզ գրկած տվին կուրծքերնին
Ասիական մրրկարշավ ցեղերուն.
Պալատներդ, ամրոցներդ, այուններդ,
Աշտարակի սլաքներդ, ուր ծփուն
Կարմիր դրոշակ մ' հայկական
Կարբեր քրտինքն արծիվներուն ճամփորդող,
Խոյակներդ, գմբեթներդ, որոնք օր
Մ'ամպին մեջ՝ շանթն, էին մեջ՝ բախտն հեգնելով
Ժամանակի բռունցքին դեմ
Կըլլային կումբ ձուլված փառքի հանքերեն,

Զորանոցեդ, տաճարներեդ, այո՛, քու
Հազար ու մեկ տաճարներեդ՝ որոնց մեջ,
Դեպի հավատքն ուղղաբերձ
Մինչ բազուկներ կհոգնեին, կ'հեղգային,
Մինչ հին արյունն Արամյան
Իր հեթանոս ռազմիկ թափեն կսանձվեր,
Եվ մինչ Հիսուսը կծրներ արցունքով
Լատիվերտցին, և նենգ Հուդան՝ Կիրակոս,
Այդ հազար մեկ տաճարներուդ մեջ, կըսեմ,
Քանդակ քանդակ, զարդ առ զարդ,
Արվեստ մը նոր, արվեստ մը հայ,
Արվեստ աղջիկ Աստուծո, քույր Բնության,
Արվեստը հարս Տիեզերքին,
Ժողովուրդներու և Ազգերու վախճանած
Տապանագիրն ու շիրմապսակն այդ վերջին
Իբր աղավնի մ' ոսկեդրբվագ ուրվագով
Քանդակված՝ այդ գմբեթներուդ ներքև սուրբ։
Բատուցներուդ, խոյակներուդ, մույթերուդ
Մեջեն լրիկ, գլուխը դուրս կարկառած՝
Դեպ ի երկինք, աղվոր, վեհ,
Թռիչները լա՜յն կպարզեր...
Հիմա, ավա՜ղ, ատոնցմե.
Այդ բյուրավոր ճաճանչներեդ, ո՜վ Անի,
Ըսե՛, ըսե՛— ի՞նչ մնաց...

Ե

Կպատե շուրջը լռություն։ Լայնարձակ
Դաշտին վրա, լուսնակի քա՜ղցր շողով
Ավերակները կողողվին։ Հեռուեն
Միջոցին մեջ աստղալից
Լոկ կլսվի սույլն հովերուն ճամփորդող։

Անին հավե՜տ կլռե...

Ոտքս փլած քարի մը վրա կդնեմ,
Եվ ուրիշի մ' հետո, հետո ուրիշի

Մ' ու կելլեմ դեպ ի կիսաքանդ պարսպին.
Ծերպերն որմին, ժամանակի վերքեր, ինձ
Սանդուղ կըլլան, քայլափոխես փխրված
Կթավալին կոշկոռներ,
Եվ մատերուս տակ ճանկող՝
Բաղեղներեն, մորմերեն
Քնաթաթախ մողեզներ վար կթափին։
Ու ես կելլեմ.— հոգիս խոր
Արբշռության մ' ուժին տակ
Ձիս աստղերուն կքաշե.
Կշուլլվիմ, կմագլիմ.
Կայծքարերուն դեմ կուրծքս մերկ կարյունի,
Կմնա մաս մ' զգեստես
Վարը փուշի մը ճանկին մեջ ավազակ.
Բայց ես կամշոտ. որսին դիմող վագրի պես,
— Եթե ազատ բարձրությունն որսն է հոգվույն—
Կուռ ու տենդոտ խոյանքով,
Մութն ու փլատակն ոտքերես վար թոթափած,
Նախնիներուս բյուր գանգերուն վրա դոս
Հուսկ ոստումով մը խրոխտ
Պարիսպներուն հառաչակուլ կկանգնիմ...

Զ

Ո՜վ բնազդական դու վերելք,
Ո՜վ խոյացման գինովություն՝ նույնիսկ սև
Դամբանի վրա կամ ոսկրի,
Ո՜վ վեհ բարձունք՝ որ կգգվես ճիղմ հոգիս,
Ձիս ընելով աճյունին վրա պապերուս
Բողբոջ մ' որ դեռ կզարդարե կոճղը հին.
Ո՜վ բարձրություն թովչական՝
Ով կապույտին և խավարին մեջտեղ ձիս
Մտածումի լազվարթ լարով կառկախես.
Կու տաս անցուկ մխիթարությունը սրտիս՝
Որ վարն ոտքիս տակ գտնեմ
Անիի մեջ ցոլքն երկնքի մեծության,

Ըզգամ թե մեր շիրմին վրա
Մոլորակները դեռ զիրենք կգծեն,
Թե խավարն այս՝ է Խորհուրդին դեմքը վեհ.
Փլատակը՝ մե՛ղքն Հավերժին.
Անվո փոշին հարդգողն, և կամ սա շրջմոլ
Փոսուռան աստղ մ'է չքնաղ.
Սա գանգը հոս լուսին մըն է, ես՝ Աստված...
Ըլլալ Աստվա՜ծ, ո՛վ հեգնություն, այս քլլալ
է միմիայն ծաղրանկարն Աստուծո,
Քանի որ մեր հոգին հարեն է Բնության,
Ու սոսկ անոր տաք ծոցին մեջ՝ բեղմնավո՛ր,
Ջունենալով նույն ինք իրե՛ն սեփական
Հայրենիքի այս Ոչնչին, բոհին դեմ՝
Իբր առաջին սերմնցու
Խո՜սք մ' որ ստեղծե, ներդաշնակե, պոռթկալով
Փոշիներեն Անիի
Քանան մը նո՜ր և ազա՜տ։

Է

Ի՜նչ, ունենալ աչքի ներքև դիակներ՝
Որ եղած են ատենով
Արյանդ արյուն, սերմիդ սերմ,
Եվ, ո՛հ, առանց հարուցանել գիտնալու՝
Այսպես դիտել ծալապատիկ թևերով,
Ի՜նչ, տեսնել որ խրխունջ մ'այսօր կշափե
Հսկա շենքերն այն՝ երկու թել լորձունքով,
Եվ խորանի մը խորշին մեջ լոկ կապրի
Բուն, սևազգեստ ճգնավոր,
Տեսնել որ լուռ կփտին
Ավերներու տակ հերոսի բազուկներ,
Գանգեր, սրտեր՝ որոնց արյունը եղավ
Թույն՝ իժերուն, ա՜յնչափ որ լի էր ոխով.
Տեսնել՝ որ փլած պատվարներու, դրդյակի
Ճեղքերուն մեջ կրմեռնի.
Շող մ' արևու, Անուն մը հին, Ազդ մը մեծ,

Եվ գահերու բեկորներուն վրա թափուր
Արծիվն ամպեն կծրտե՜...
Ի՜նչ, մինչդեռ վարը, անդին,
Այս ջրնջումին հավասար
Կշնչվին, կայլասերին հոգիներ
Խեղդվելով նույն իսկ իրենց արյան մեջ,
Կամ մալ ու կուրտ եզի պես
Ժուժով մը վատ, յուրաքանչյուր հարվածի
Ներքև ջլատ կրսեն.— Լրծե՛ւ— Ո՛հ, ինչ, ինչ,
Առջևը այս ամենուն,
Շուրջիս այս մութ ծփանքին մեջ դիերու,
Ոսկրներու, նշխարներու, արյունի,
Մնալ կանգուն, մինավորիկ, անկարո՜ղ,
Եվ չկրնալ այս թոհբոհեն հանել դուրս
Վերածնո՜ւնդ, վերածնո՜ւնդ մ' արփագեղ...

Ո՛վ այպանք, ո՛վ նախատինք,
Ուրեմն ինչո՞ւ ապրիլ, ինչո՞ւ ընդունայն
Հայրենիքի անունն ասանկ մոնչել,
Երբոր Ողջերը թմրած
Քեզ չե՛ն ուզեր լսել, ոստնուլ չե՛ն ուզեր,
Եվ ռազմերգեդ ահաբեկ՝
Ականջներնին ծոցերնուն մեջը ղողած
Երբ գլուխդ շա՜նթ կմաղթեն,
Ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ ապրիլ...

Ը

Վարը, հոս,
Օձ մը հսկա՝ գլուխը փոսեն տնկած դուրս՝
Լուսնի շողով կնայի ինձ.— Օ՛ն, եկուր,—
Դու որ ունիս այդ աչքերուդ մեջ կանանչ
Մահվան անուշ մխիթարությունն.— օ՛ն, եկուր,—
Կրունկս քուկդ է, քուկդ տաք
Երակներս այս.— խա՜ծ ու խայթե.— Թող տապալ
Գլորիմ վար, Ախուրյանի ողբին մեջ,

Եվ վարը այն որձաքարին վրա սև
Ջախեմ գլուխս, ու իմ խեղճ
Հայրենիքիս փոշիներուն վրա սա՝
Ըզեղիս խյուսը փռեմ...

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

Սովամահ ժողովրդին

— «Սով է. հա՜ց, հա՜ց...»—
Ո՞վ կհեծե
Շեմին վրա խրճիթիս ո՞վ կհեծե։
Սերս մարած է օջախիս բոցին հետ.
Մեջս է մոխիր, շուրջս մոխիր.— Օ՜հ, ի՜նչ շահ
Մոխիրներու վրա արցունք սերմանել։
Բան մը չունիմ, բա՜ն մը. այս օր իմ վերջին
Լումայով թույն գնեցի,
Ներսը թույնս իմ կշաղվիմ։—
Վա՜ղը եկուր, գերեզմնոց, ո՜վ Անոթի,
Բուքին մեջե, կանուխ, երբոր գյուղին շուրջ
Գայլերը դեռ կհաձին,
Վաղը եկուր... պիտի ես
Շիրմիս մեջեն, իբրև հաց
Քերթողի սիրտս այդ մաղախիդ մեջ ձգեմ.
Քերթողի սիրտս արյունդ, արյունն որբերուդ
Պիտի ըլլա ո՜րքան որ Վիշտդ ապրի...
Վաղը եկուր գերեզմնոց, ո՜վ Անոթի։

ՄԱՐԱԾ ՕՋԱԽԸ

Այս տունին մեջ, որուն շեմին վայրահակ
Այսօր կուլա ուռենին,
Եռաց զվարթ կյանք մը թորգում գեղջուկի։
Ատեն մ՝ եղան հոն թարմ հարսեր՝ որ լույսին

Հետ արթնցած, վարդենիի պես հագված՝
Աշխատեցան, կաթ կրեցին սափորով,
Կամ դույլերով հորը ջուրի գընացին։
Ատեն մ՝անոր դռան առջև նստեցավ
Ծերուկն, և թո՜ռը ծունկերուն մեջ առած,
Պատմեց զրույցն Արտավազդի, Վահագնի,
Անոր հոգվույն տեղալով
Վերջին ազնիվ մնացորդը խոնջ օրերուն.
Կամ՝ իրիկվան՝ տեսավ անցնիլն առջևեն
Հարուստ հոտին՝ զոր իր որդին լեռնեն վար
Դեպի փարախ կքշեր.
Եվ ծեր ոունդերը բացած
Ոչխարներուն բուրդին բարկ հոտը ծծեց՝
Օրհնելով թիվն ու ընտիր ցեղը անոնց։
Ատե՜ն մ՝էր ան...

Այսօր ոչ ոք այդ տունեն

Կելլե կամ ոտքն անոր շեմին կդրնե։
Կոտրած դռան արյան չորցած կաթիլներ,
Ներսեն ձայներ ագռավի,
Եվ հարատև մլավյուններ
Կլեցնեն գեղջուկին սիրտը դողով,
Որ անցնելու վայրկենին այդ փողոցեն
Խաչ կհանե կամ քայլերն իր կերագե։
Կոտորածի օրեն (երբ գյուղը բոլոր՝
Կյանքն հանձնելով նենգ գայլին քա՜ն թե մարդուն՝
Դիմեց դեպի ճերմակ լեռներն Հայրենի)
Այս բնակարանն այս սև խորհուրդն է հագած,
Եվ մեռելի մ՝ անփակ աչքին հանգունակ
Ան՝ արևուն և կյանքին
Եղած է միշտ բաց, նաև միշտ ալ զրկված։
Ըմբոստ բաղեղն և ուռենին հեզանազ
Կծածկեն մուտքն անոր զիրար գրկելով։
Գավիթին մեջ կա բողբոջումը լռիկ
Բաղրջուկին և թավշանման մամուռին,
Որոնց մեջ մերթ կերևի

Կոցահարումն աներկյուղ
Վառյակներուն դրացի, մե՛ր թալ հանկարծ
Փախուստն անոնց կարկաչելով դեպի դուրս։
Ի՞նչ կապրի հոն, ի՞նչ գաղտնիք
Կմեծնա այդ բնակարանին մեջ խոժոռ.
Արդյո՞ք անթաղ դիակներու ոգիներ
Հոն կժողվին լալու կամ դափ զարնելու,
Թե վհուկներ ճերմակ և թավ հոնքերով
Օձ կկրթեն կամ կհյուսեն պատանքներ։
Իրիկուն մ'էր— լավ կը հիշեմ— սիրտ ըրի
Այդ շեմեն ներս մտնելու։
Գյուղացիները հոսեաս, գլխեբաց,
Աղոթեցին հուսակտուր, ա՜յնքան Աստուած,
Անոնց հոգվույն մեջ և հոգվույն ի խընդիր,
Սատանային սև պատկերն իր պատկերեն
Մեծ և որոշ էր գծած։
Մթընշաղ մ'այն գավիթին մեջ կտիրեր,
Եվ պատերեն՝ ուր կշրջեր ցողը մեռթ՝
Բորբոսանքի և շիրմի հոտ մը կելար.
Կրլսվեին գերաններուն ծերպերեն
Ճիչերը սև չղջիկներուն սրաթև.
Բոլոր դռներն հոն բաց էին. չէր լսվեր
Հավանոցեն, կամ գոմեն
Ո՜չ եզներու բարի պոչյունն և ոչ խոկ
Բեղուն կրկոց մը հավի.
Ամբողջ մարագը դատարկ էր, դատարկ էր
Մառանը բաց՝ ուր բուրեցին օր մը մուշկ
Սաթ ողկույզներն հայրենական այգիին։
Այնտեղ ամեն ինչ տխուր,
Հեգ մնացորդ մ'էր կողոպուտի մը վայրագ։
Ո՜չ մեկ սյունի, ո՜չ մեկ անկյան մը ետև
Կտեսնվեր մարդկային ձև, կամ ապրող
Շողյուն մը զույգ բիբերու։
Կլսվեին ձայները լոկ հարատև
Թոնրատունեն՝ ուր սարսուռով մտանք,
Ու մտա ներս...— Ո՜վ խեղճ տուն,
Լավ էր դու բանտ կամ գերեզման ըլլայիր,

Այդ հողդ ոսկոր փտեցներ. ոյուներուդ
Մեջ դագաղներ փորեին.
Լավ էր զքեզ հորինող մե՛ն մի կրաքար
Ծովափներուն փոշի-փոշի քայքայվեր,
Քան թե կանանչ երդիքիդ տակ ծածկեիր
Մարած օջախ, մեռած սիրտ հայ գեղջուկի՝
Որուն համար կանգնելը հարկ չէ այլ ինչ
Բայց թե դամբանն իր և իր հեգ սերունդին,
Ավա՜ղ, շինել իր ձեռքերով...—

Մտա, հոն։

Մեջտեղը տան, ստվերին տակ այն խոնավ
Նշմարեցի մարդու դիակ մը պառկած.
Կոնակի վրա, դեմքը ճերմակ կհառեր
Լուսամուտին՝ ուրկե՝ երդին վրա բուսած
Ճյուղ մ'ոլորի կարկառուն
Մինչև ճակտին կհասներ.
Երիտասարդ կուրծքին վրա
Կար վերք մը խոր, և թերաքամ ափին մեջ
Դաշույն մը նույն իր արյունեն ժանգոտած.
Աչքերը, բաց, միապաղաղ, կարծես դեռ
Կնայեին փախած հոգվույն ետևեն.
Եվ թուխ մազերն իր խառնակ,
Արյունթաթախ, շշաստիւռ,
Կմնային պի՜նդ մածանված այն սև գետնին։

Ես հոն կանգուն կխորհիմ՝
Թե սյունն էր ինքը այս հարկին, բո՜ցն օջախին,
Որ հաղթվեցավ, որ բիրտ ուժին տակ տեսավ
Մալլվումն իր գուճերուն.
Եվ մնաց ա՜յսպես ահավոր և մենակ՝
Ըսպասելով ընդունա՜յն
Իրեններուն արցունքին,
Որոնք իր սև բախտին եղան բախտակից.—
Մորթվեցան այրերն, հարսերը բոլոր
Հանվեցան լեռն՝ հոն լալու
Ճերմակությունն իրենց մարմնույն ցկրված.

Իսկ ծերուկ հոր հետին մոխիրն արդ զուցե
Թոնիրին մեջ կսրսփա դեռ ջերմաջերմ.
Իսկ իր մարմինն երկա՜ր ատեն անտերունչ,
Այսպես առանց շիրմի, առանց աղոթքի,
Կմընա լուռ, և կեսն արդեն խաթարված.
Միայն կատուն տիրասեր,
Տան գորշ կատուն, նիհար, նոթի, անդադար
Կմլավե շուրջն անոր,
Եվ լի գութով մը կսպառնա, կվանե
Ջորս դին երամ մ՝ագռավներու աղմկոտ՝
Որ դիակին ախորժեն՝
Լուսամուտեն կմտնե ներս, ու հավետ
Ամայի տան ստվերին մեջ կդառնան։

Կխոնարհիմ ես վայրկյան մ՝հոն երկյուղած,
Հին վրեժ մ՝այդ հին մեռելին վրա կերդնում.
Հետո առած զայն ուսիս,
Աղիողորմ մլավյուններովը կատվին,
Կճեպեմ դուրս։—

Դուրսը դեռ
Գյուղացիները գլխեբաց կաղոթեն։

ՕՁԸ

Լեռան կողին, նման վերքի մը լայնշի
Հեղեղատն այն կտեսնա՞ք.
Ջուրեն բացված, այսօր ջուրի ծարավուտ
Ան ճամփա մ՝է կարմրորակ։

Տղա կյանքիս, օգոստոսի մ՝արևով,
Կելլեի ես անկե վեր,
Դեպի լեռն այն, դեպ իր դաշտերն ընդարձակ՝
Ուրկե ինձի դյուրին էր

Քաղել աստղեր ու անոնցմով պսակվիլ,
Շնչել ամեն երկրի հով,
Ու հետևիլ արծիվներուն ընթացքին՝
Մատաղաշ հոգիս պարզելով։

Ու կելլեի ես այդ կարմիր ճամփայեն...
Հոն ո՛չ այլուք կար և ոչ խոտ.
Թիթեռնիկներն այնտեղ ինկած դիպվածով՝
Կփախչեին հևհևկոտ։

Արևն էր լոկ, իմ ուղեկիցս արև՞ն էր՝
Որ մխած գլուխն հրաբոց
Ավազին մեջ՝ կխմեր հողն, ու հազար
Պատիճներովն ոսկեզօծ՝

Կճաթեցներ ապառաժները՝ սնելով
Անոնց ծածկած տամկությամբ։
Ու կելլեի ես այդ կարմիր ճամփայեն
Շուքս ետ թողած,— միակ ամպ։—

Կեցա՛ հանկարծ, ու արևն հետս կեցավ
Խարսխված գլխուս վրա.—
Վերեն՝ խրամատ ժայռե մը դուրս սլացիկ՝
Վա՛ր կու գար օձ մը հսկա։

Ալիք-ալիք օղակներով իր ճապուկ
Դահանակի և լալի,
Ու շչելով՝ իբրև եղեգ մ՝հողմակոծ՝
Ան կիջներ, ես կելլայի։

Տեսանք զիրար,— կեցանք— զիրար չափեցինք...
Իր բոլոր զենքը անի
Բերանին մեջ հավաքեց, ես՝ աչքերուս,
Ես, դեռ անզեն պատանի։

Ոստում մ՝ըրավ նայվածքներուս ուղղությամբ՝
Ջերդ շանթը դեպ լանոսկին՝

Որուն վախճանն հոլն է մաքո՜ւր և նվաճո՜ղ...
Ոստում մ'բրավ մոլեգին,

Եվ փաթթելով ինք զինք մատղաշ իրանիս
Իբրև բաղեղ՝ վարդենվույն,
Կուրծքը կուրծքիս դրավ, ուղղեց շրթներուս
Կոր գլուխն իր լիաթույն։

Ես պարուրված ոլորտներուն մեջ իր ցուրտ
Մահվան դողով դողացի.
Մինչդեռ աչքերս իր աչքերուն խմցուցին
Թովչանքն հոգվույս մտացի։

Դրին անոնց բոցերուն մեջ դեղնորակ
Իմաստությունը մարդուն,
Ըղեղին լույսն՝ որ քնացուց կամ ուռնեց
Բնազդը նենգ կենդանվույն։

Խայթն ամփոփեց.— ու ես կյանքի, մահվան մեջ,
Կյանքի, մահվան արցունքով
Արտասվեցի։— Ան բերանն իր բացաց լայն
Կզակիս տակ, անվրդով,

Խմեց շիթ-շիթ կաթող արցունքն այտերես,
Քամեց բիբերս բերրի,
Եվ մարեց մեջն օդոստոսի արևն հուր
Օձն այդ ծարավ արտոսրի։

Հետո շչաց ու նոր օղակ մ'ընելով
Շուրջը վզիս՝ զայն սեղմեց.
Մինչ պոչն իր՝ նո՜ր քաղցով ետևը ճոճուն՝
Կջախջախեր քար մը մեծ։

Քնթռնոցներն ամփոփվելով իրար մեջ՝
Կոկորդս պինդ պրկեցին,
Ու ես վայրկյան մ'զգացի մեջս փակված
Ջորս ճամփաները կյանքին։

Եվ ունչերես ու աչքերես բիտեցով
Արյունքս դուրս տորստաման,
Եվ զգացին կարծես շրթունքս գոգդոգ
Սրտիս ամբողջ ջերմությունն։

Իսկ ան հեցած կզակն ուզիզ կզոռնիս
Խմե՜ց արյունս ամոլեցյաս
Մեն մի կըլլված շիթ որ նիշներ՝ կդրոշի
Իր մարմնույն մեջ, ճարմնույս վրաս։

Ինչպես շողերը արևուն կտաքին
Հին ջրհորներուն մեջ ցամքած՝
Ա՛յսպես կարծես գրակներս իմ քամվեցան
Որկորեն վար թիսպամած։

Կշտացած էր.— վիզես, մեջքես, ծունկերես
Լուծեց օղերն համրաբար,
Միշտ հիշատակն իր օձ-ձևին թոզելով
Շուրջն իրանիս դալկահար։

Կշտացած էր իմ արցունքով, արյունով...
Ա՛լ, զերդ ոճիր կենդանի,
Արփվույն ներհակ, միշտ այդ կարմիր ճամփաչին՝
Ան կիջներ, ես կելլայի՜...

ԹԻԱՊԱՐՏՆԵՐԸ

Պատերազմ է հուչակված։ Թնդանոթի մը պողպատ
Ծանր սայլին լծեր են թիապարտներ մերկիրան.—
Անհեթեթ բեռը պետք է մինչև գագաթը տանին
Սա դիմացի խրոխտ լեռան՝ որ իր գլուխն է մխրճեր
Կապույտին մեջ արևոտ՝ իբրև հալած կապարի։
Անկե՞ւ եզ, ո՞չ գոմեշ ելավ, և ո՞չ ալ ջորին.—
Սեպերեն վար սահեցան պճեղներն անոնց ելկնաճիզ.—

Ծալլրվեցան ուժասպառ և դողահար ծունկերնին,
Կամ թե երբուծը անոնց հանկարծակի պայթեցավ
Բուռն հևքեն զսպրված թոքերնուն մեջ տապահեղձ։
Եվ արդ մնաց կրելու հերոսներուն մկնագեղ
Բեռը ձուլված արյունով, բեռը մահվամբ ծանրակիր։
Ետևեն բիրտ զինվորներ կմտրակեն անխնա
Թիապարտները բոբիկ, մերկ կռնակով, գլխաբաց,
Որոնց մարմինն՝ որ ուներ անբծութիւն մարմարի,
Այսօր թուխ է իբրև պղինձ քուրա մը միշտ հրամերձ։
Կտոյորեն անդադար սեցած հզոր ծոծրակին
Ամռան արևն, ու հանկարծ կկեցնե, կխմե
Քրտինքի շիթ մը մարգրիտ ողնաշարնեն վար սահող...
Վե՜ր, վե՜ր.— Փոկերը ճարպոտ դժնե հարված մտրակէն
Կշառաչեն կռնակնուն, մեջքերնուն շուրջ կոլորտին,
Եվ ուսերնեն վար մինչև պորտերն անոնց սողալով՝
Կգալարվին լզվռտող օձերու պես քստմնելի.
Եվ թողված հետքը կապույտ, կաղապարով խոտորնակ,
Կամաց կամաց կսկսի արյան ծիլեր դուրս բխել։
Հո՜լա, վե՜ր, վե՜ր.— Ու պարանը անճոռնի, հաստաբեստ,
Մարմինն իրենց կպրկե, միսերնուն մեջ կթաղվի.
Նյարդներու բեկտումին, ոսկորներու փշրման
Աղաղակն է՝ որ կարծես իրենց ճիգեն կլսվի։
Դեմքերնուն վրա՛ թափված են խառնափնթոր մազերնին՝
Որոնց ծայրեն կթորի առատ քրտինք մ'հողին վրա,
Շունչերնին դուրս կպոռթկա ընդհատ ընդհատ ռունգերնեն՝
Եվ միացած կուռ սայլին երկրասասան դղրդյունին
Վայրենի նվագը կըլլա աշխատանքին այդ դաժան։
Ահավասիկ կկաթի խարազանված ուսերնեն
Արյունն արդար, սուրբ գինին մարտիրոսված այդ Ուժին,
Որով՝ խխում՝ կարբենա ամուլ լեռան ճերմակ հողն,
Ուրտեղ նույնիսկ չի գտներ գաղտնամես օձը սնունդ,
Ո՜չ ալ կյանքն իր բաշխելու համար արևն հունտ մը էգ։
Այդ կատաղի վերելքեն՝ անոնց ոտքին տակ լայնշի
Հանկարծակի կփրթին լայնափեռեկ ճեղքվածքով
Ժայռեն մեծդի կտորներ. և ձորին մեջ թավալող
Պայծառահունչ կրանիտի յուրաքանչյուր կոշտ հատված
Ներքաններնուն վիրավոր վարդագույն գրո՜ՀՄը ունի։

Հո՜լա, վե՜ր, վե՜ր.— Այդ մահվամբ հղի հրանոթն ուռնակուռ
Միջօրեի անողորմ ամառնաբորբ տոթին տակ
Ճաթելու չափ տաքցած է, շիկանալու չափ՝ հրազօծ.
Երբ կընկրզմի մերթ արևն երախին մեջ լայնաբաց՝
Ան վիշապի մ'աչքին պես կժայթքե թուխ փայլակներ։
Մինչ խարազանն անընդհատ եղեռնաբար կշաչե՝
Թիապարտները կարծես, գլուխնին հակած անմռունչ
Թանձր ու կախ հոնքերնուն տակ մտասույզ, ինքնամփոփ,
Դեռ կխորհին լեռներու իրենց ազատ կյանքին վրա,
Ո՜հ, այն լայն կյանքն՝ ուրկե շեշտ կայծակներու պես անցան
Մահ և փլատակ դրոշմելով ամեն հինցած շենքի վրա.
Այն պայծառ կյա՜նքն՝ որ իրենց կամքին թռիչքովը միայն
Գաղափարին աստղալից խորաններուն կսուրար.
Ո՜չ մեկ մտածում պահպանող, ո՜չ մեկ հեշտանք, ո՜չ մեկ կույս
Կրցավ վայրկյան մ'օդին մեջ բռունցքն իրենց կեցնել
Որ շեշտակի թագերուն և գահերուն վրա կիջներ։
Իրենց ճակտին շողացող երկնային մե՜ն մի ճաճանչ
Սանձակոտոր եռանդի մը փոխվեցավ մրրրկահույզ.
Իրենց մեջ ոսկր ու արյուն դարձավ ամեն գաղափար.
Եվ այսպիսով մկանունքնուն ամեն մեկ բուռն հաղթանակ
Մեկ հոյակապ հաղթանակն էր մարդկային մեծ Մտքին։
Երբոր անոնք կանցնեին հորիզոնեն արփամուտ,
Աշխարհ վախով և հույսով տեսավ կարմիր շուքն անոնց.
Եվ արյունի մեջ մեռնող շողերուն տակ լռավետ
Իրենց զենքերը բահեր կթվեին՝ որոնցմով
Եռուզարկելու կերթային արշալույսներ նորանոր...
Սակայն հի՜մա.— Ա՜հ, հիմա բռնադատված են քաշել
Կույր հրանոթն՝ որ պիտի վաղն արձակվի կույրերե։
Դարանն՝ որ ձիգ կռնակեն կաշկանդումով մը կանցնի
Կպրղծե սուրբ ուսերնին՝ որոնք էին արժանի
Լոկ փառքը կրել մազերնուն արփվույն շողով սանտրված։
Հո՜լա, վե՜ր, վե՜ր.— Բայց ահա խրոխտ խոյանքով մը վերջին
Ինդանո՜թն այն տրղընգեր լեռան կատարն հանեցին,
Այն թնդանոթն՝ որուն շունչը պիտ՝ երթա լափլիզել
Կատաղաշարժ բանակներ, կամ քաղաքներ մարմարե,
Խաղաղ գյուղեր՝ որ ցանված բլուրներու լանջքին վրա՝
Արեգակին տակ կօծվին, կամ լուսնին տակ կաղոթեն։

Թիապարտներն ավասիկ հառաչակուլ հեալով
Լեռան վրա լուսողող կոթողվեցան գլուխնին վեր.
Իրենց աչքերն, որոնց մեջ արյունին է խոնըվեր,
Արևուն տակ, պղինձին մութ ու կարմիր փայլին պես,
Սկսան շող մ'արձակել։ Անոնք տեսան իրենց շուրջ
Հորիզոններն՝ որոնց վրա բերդեր էին կառուցված.
Պատերազմի ճամփաներ՝ բանակներու իբր ուղկան,
Եվ հասկցան՝ որ աշխարհն իրենց թողած օրեն վեր
Մնացեր է միշտ զառամ, միշտ մեղքին տակ կորակոր.
Այն ատեն դող մը անցավ ոսկորներուն մեջ հոգնած.
Սրտերնուն մեջ հին մոլուցքն ու մոնչյունները արթնցան,
Եվ զինվորները մինչդեռ կսկսին վերստին
Դառնակոշկոճ, արյունոտ կրունկներն անոնց շղթայել,
Անոնք իրենց չհասկցված, հեգնությամբ լի հոգիով
Երեք անգամ օրհնեցին լեռան գագաթը հանած
Ինքնափճացման կույր գործիք, թընգանո՛թն այն եղեռնի։

ՎԱՂՎԱՆ ԲՈՂԲՈՋՆԵՐ

Երբ արտին մեջ երգելով,
Խաղաղ հոգի, կաշխատեր,
Ըսպաննեցին։— Տարին եղնեքը ջուխտակ։—
Վկա չկար։ Պիտի վրեժն ո՞վ խլուե.— Դո՛ւ,—
Ո՛վ շանթ, անոնց եռեւեն ջուտ գու հասիր,
Որ լեռան վրա ամպամած
Խոժոռադեմ կՀսկես.
Անշուշտ տեսար ամպի մը մութ բացվածքեն՝
Թե ինչպես վագը, բռնի,
Յաթաղանին տակ սրբազան բահն ինկավ,
Եվ պոռթկաց խանջ ճակատեն
Արյունը տաք, վարդերուն պես Հունիսի։
Գայլի՞ եղեռն։— Մթնշաղին մեջ հիմակ
Ակոսներու վրա լուռ
Բզիկ-բզիկ կպատկի։

Գյուղացիի խորշոմներուն մեջ աղվոր՝
Ուր արեգակն առողջ արյունն եռեփեց,
Քրտինքը ա՛լ սառած է.
Աշխատանքի քրտինքը սուրբ և բեղուն
Որ մինչ այսօր, ինչպես արյունը, եղավ
Մկրտությունն Արարատյան մշակներուն։
Հերկե խոնջած բազուկներն ա՛լ անգործ են.
Կուրծքը մոայլ, թավամազ,
Դեպ ի աստղերը, արձակ,
Շեջ հրաբուխ մ'է, որ կուզե բոց երկնքեն
Դեպ Անհունին սև սառնությանն ժայթքելու.
Կողը տված է հողին
Զոր մշակեց ամրան դեղին հասկերուն
Երազանքեն ժպտալով։
Շարժմամբ աճած, աղվոր, զորեղ իր մարմնեն
Արյունը խուլ դղրշյունով կհոսի.
— Կարմի՞ր հեղեղ, սրտի ձորեն վար իջած—
Տափանն ու թին ներկելով
Կերթա գուղձերն ողողել.
Ակոսներուն մեջ զետեղել լիազոր
Կարողություն մ'արեգակի, անձրևի.
Թափանցել մութ ծոցն երկրին,
Իբրև ըլլար մարգարեի մտածում,
Եվ հոն ճռռած հունդերուն մեջ ներշնչել
Ուշում մ'ատոք և առույգ,
Դարձնելով կյանք մ'իր առջի օրոցքին,
Նոր ծաղկումի մը համար,
Եվ հոն հծծել նախնիքներու փոշիին
Թե— մինչև ե՞րբ իր արյամբ
Հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե։—

Կլոռ շուրջն ամեն իր։
Լուսնին լացող աչքերուն
Ամպերը թուխ թաշկինակներ կդառնան.
Խավարն հոծ է, սև պատանքը
Հեռուն կնոջ մ'հոգին տարտամ կասկածով
Գիշերվան մեջ կսպասե.

Ջուխտ որդիներն ինկած ծունկին գգվանուշ
Հույսի մը մեջ վաղամահ, զերդ ծիածան,
Հեծկլտանքնին կխեղդեն։
...Ահե՜ղ հանգիստ. դիակ.ն քով արյունոտ
Կյանք մը ծաղկի, աստղի առկայծ ճաճանչներ,
Ջույգ մը բիբեր, զույգ մ'հոգեվարք կայծոռիկ,
Արտին մեջ շունչ մ'հովերու
Մեռնող սուրբի մ'հուսկ սաղմոսին պես տխուր,
Խորշոմներուն և իր գեղջուկ լոդիկին
Ծալքերուն մեջ արևու
Ջերմություն մ'հուր, երգ մը հովեն սորվեցված,
Քրտինքի շիթ մը սարսռուն,
Հողի բույրեր, կծու բույրեր ծոթրինի,
Այլևս անդարձ, անվրեժ, լուռ կմեռնին...

Ոչ.— հանուն հայ մռունչներուն,
Թափված արյունն անմեղին չի՛ մեռնիր.— Ո՛չ...
Վաղն հողը դուրս պիտ' պոռթկա
Արևուն տակ հասկեր առլի, կյանք մը նոր,
Նոր և հսկա, հսկայացած դիակով,
Բողբոջ մ'առույգ գեղեցիկ,
Վաղն այս բարի արյունեն վեր պիտ' ելլեն
Խառնվելով ցորենին
Նոր Սերունդի կարմիր կարմիր կակաչներ,
Որոնց արմատը կդպչի, պայթման մոտ,
Վարն հրաբուխի մ'ապագա...

ԿԱՐՄԻՐ ՀՈՂԸ

Գրասեղանիս վրա, սա
Սկավառակին մեջ կա բուռ մ'հող, բերված հոն
Հայրենիքի դաշտերեն։
Նվեր է ան.— Ջայն ինձ ձոնողը կարծեց

Սիրտն իր տրված, առանց երբեք գիտնալու
Թե կուտար իր պապերունն ալ միասին։
Ջայն կդիտեմ.— մերթ ժամեր
Բիբերս անոր վրա հառած կմնամ
Լո՜ւռ և թախծո՜տ, իբր այդ հողին մեջ հուռթի
Նայվածքս արմատ արձակեր։—
Կմրտածեմ.— Գուցե իր գույնը բոսոր
Չէ պարգևված բնության ներհուն օրենքեն.
Ներքերու սպունգ մ'ըլլալով
Խմած է մաս մը կյանքի, մաս մ'արևու.
Եվ իբր տարր անպաշտպան
Կարմիր հող մ'է եղած, հայ հող մ'ըլլալուն։
Գուցե իր մեջ կբաբախեն տակավին
Դարերը հին-հին փառքին,
Կայծն ամրակուռ սմբակներու որոնց դոռ
Արշավանքն օր մը ծածկեց
Հայկյան վաշտերն հաղթության տաք փոշիով։
Կըսեմ.— Իր մեջ դեռ կապրի
Ինքնատիպ ուժն այն որ կազմեց շունչ առ շունչ,
Կյանքս իմ, քու կյանքդ, ու տվավ,
Կարծես ձեռքով գիտակից,
Նույն թուխ աչվին նույն և նման հոգիով
Կիրք մ'Եփրատեն առնված,
Սիրտ մը կամշոտ, թաքստոց
Ըմբոստանքի ու նաև բո՜ւռն սիրու։
Իր մեջ, իր մեջ կկայծկլտա հոգի մ'հին՝
Հին դյուցազնի եղած փսոր մը գուցե՝
Կույսի մ'աղվոր արցունքով.
Հյուսե մը կա Հայկեն, փոշի մ'Արամեն,
Անանիայեն բիբ մը դեռ՝
Դեռ աստղերու ճաճանչներով թաթաղուն.
Ա՜զգ մը կա հոն, սեղանիս վրա ազգ մը հին,
Որ այսօր իր վերաշողշող այգուն մեջ,
Հողի բնատուր մարմնույն տակ ինձի կխոսի,
Կոգեզինե— և աստղերու ինչպես ցանն
Անհունության մեջ կապույտ,
Փոշիներովն իր հրաբորբ

Հոգիս քաղցրիկ փայլակներով կուռոգ։
Ու այն ատեն լարը ջղերուս կդողա
Սարսուռով մ'հորդ, ա՛յն սարսուռով՝ որ մոքին
Հերկերուն վրա ավելի՛
Ըստեղծիչ է քան գարնան հովն արփագաղջ։
Ու կզգամ անցքն ուղեղես
Նոր հուշերո՛ւ, հոգիներո՛ւ դեռ կարմիր
Նոր վերքերովն իրենց, վրեժի՛ շրթունքներ.
Եվ այդ հողն, այդ փոշին, զոր ես կպահեմ
Ա՛յնքան սիրով՝ որքան հոգիս պիտ՝ չըներ
Եթե մարմնույս անյուններն
Օր մը մահեն վերջ հովերուն մեջ գտնար.
Այդ պանդուխտ մասն Հայաստանի, մասունքն այդ
Մնացած մեր հաղթ պապերեն,
Բժժանքն ու ձոնն այդ կարմիր,
Սիրտս սեղմած մագիլներով անծանոթ,
Երկինքն ի վեր, գրքի մը վրա, թանկագին
Ժամու մը մեջ ժպիտներու, սերերու,
Կամ քերթվածի մը ծնած վեհ վայրկյանին
Զիս հապշտապ կմղե
Մերթ լալու, մերթ մռնչելու,
Եվ զինելու բռունցքս, հոգիս բռունցքիս մեջ։

ՀՈՐՍ ԲԱՆՏԻՆ ՄԵՋ

Դեռ փոքր էի. եկա քեզի մենավոր,
Մութ զնդանիդ մեջ այցի։
Մայրս հիվանդ էր. կշրջեի ես ազատ
Մեջտեղ բանտի և մահճի։

Լուր տվին քեզ, եկար առջևը դռան
Վանդակապատ՝ —ոճի՛ր—

Կբաժներ մեր ողչագուրումը կզկաթ։
Եկար անխոս, վշտակիր։

Ո՜րքան նիհար էիր և ո՜րքան աչքերդ
Ծարավ էին արևու.
Մորուքիդ տակ, կարծես ոսկրի վրա բուսած,
Ո՜վ հայր, մեռել մ'էիր դու։

Նշմարելուդ պես զիս ժպտիլ սկսար,
Բայց այդ ժպիտը բարի,
Այդ սուտ ժպիտն՝ էր նունուֆա՛ր մը ծաղկած
Լճին մը վրա արտասրի։

Կարկառեցիր սև վանդակին ետեւ
Շրթունքներդ իմ շրթներուն,
Բայց իրարու անոնք, ավա՜ղ, չհասած՝
Մեր համբույրին դողդոջուն՝

Նույն ժամանակ եղան օրրան և դագաղ։—
Ո՜հ, պիտի ո՜րչափ քեզի
Բաղձայի տալ ընդգրկումի մը մեջ ուրբ՝
Ազատ աշխարհը դուրսի,

Եվ իմ փոքրիկ բիբերը՝ քու բիբերուդ
Եղան երկինքն անսահման,
Սրտես սրտիդ պարպել բոլոր օրերս այն,
Որ արևու տակ անցան.

Մութ բանտիդ մեջ գարնան վարդերը ամբողջ
Պիտի լեցնել ուզեի,
Կամ ճիղմ հասակս ու ապագան հասակիս
Պիտ՝ հոն թաղել ուզեի։

Ո՜վ տխուր ժամ.— Քեզ մի առ մի պատմեցի
Սև վիպակները մեր տան,
Հանիկս մահն, ու հիվանդ մորս հազը խուլ
Լռության մեջ գիշերվան.

Ըսի թե մեր տանիքին վրա, լուսնին տակ,
Բուերը պար կբռնեն,
Թե այս տարի մեր վարդենին չորացավ
Գերեզմնատան խորշակեն։

Կլսեիր զիս և հարցում կընեիր,
Երբ հրաման մը վայրի,
Կույր հրաման մ'եկավ ըզմեզ բաժնելու...
Դարձա՞ր... առանց համբույրի...

Ու ես երկա՞ր ետևեդ պիշ նայելով,
Հա՛յր իմ, մինակ հոն լացի՞.—
(Մինչ կուրծքիս տակ բաշ կթոթվեր ոխ մը ներ)
Սիրտս աչքերես քամեցի։—

...Ո՞վ կյանք սիրո, լանջ քրտինքի, սիրտ փուշի,
Ցեխին նետված սրբություն,
Աբեռն բորբ հոսանքներուն դեմ գոցված
Ո՞վ երակներ ազազուն։

Տեսա որ ձեզ հետ, ձեզի հետ սուզեցան
Եղեռնի մեջ, արտալած,
Սուրբերն ամե՛ն կրոնքի, ամեն շուշաններ
Եվ Հիսուսներ թքնըված։—

ԿԱՐՈՏԻ ՆԱՄԱԿ

Կգըրե մայրս.— «Ո՞վ իմ որդյակս պանդուխտ,
Դեռ մինչև ե՞րբ պիտ՝ անծանոթ լուսնի տակ
Օրերդ անցնին, դեռ մինչև ե՞րբ հեգ գլուխդ
Ես չսեղմեմ լանջքիս տաք։

Հերի՞ք օտար սանդուղներն ելլեն վեր
Ոտքերդ՝ որ օր մ'ափերուս մեջ տաքցուցի։

Հերի՞ք ալ սիրտդ՝ ուր իմ ծիծերս եմ պարպեր
Դատարկ սրտես դուրս հյուծի։

Ջահրակին տակ թևերս աշխատ հոգներ են.
Կհյուսեմ պատանքս ա՛լ ծամերովս ըսպիտակ.
Ա՜խ, քեզ տեսնեն անգամ մ'աչքերս ու փակեն
Թող հոգիս ա՛լ իրենց տակ։

Դռանս առջև կնստիմ միշտ տխրալիր.
Լուր կ'ուզեմ վրադ ամեն կռունկե՝ որ կանցնի.
Այն ճյուղն ուռի՝ զոր քու ձեռքով տնկեցիր
Վըրաս կընե հովանի։

Իրիկունները զո՛ւր դարձիդ կսպասեմ.
Կուգան կանցնին գյուղին քաջերը համակ.
Մշակը կանցնի, կանցնի կովարածը վսեմ.—
Կմնամ լուսնին հետ մինա՛կ։

Ավերակ տան մեջ անտերունջ եմ թողված,
Մերթ շիրիմիս, միշտ օջախիս ծարավի.—
Կրիայի մը պես՝ որուն աղիքն իր կոտրած
Պատյանին դեռ կկցվի։

Եկո՛ւր, որդյա՛կ, հայրենի տունդ շենցուր.—
Դուռն են կոտրեր, մառաններն ո՛ղջ դատարկեր.
Կմտնեն ներս լուսամուտեն ջարդուփշուր
Դարնան ամբողջ ծիծառներ։

Այն բազմաթիվ հոտեն, գոմին մեջ եղո՛ւկ,
Մնացեր է խոյ մը միայն քաջարի՝
Որուն մայրն օր մ'հիշե՛ որդյակ— դեռ գառնուկ
Կերավ ափիդ մեջ գարի։

Թեփով բրնձի, և առվույտով պատվական
Սնունդ կուտամ արդ անոր պերճ դմակին.
Տոսախ սանտրով կսանտրեմ բուրդն աղվական.—
Ան զոհ մըն է թանկագին։

Գարձիդ՝ սգնած վարդերով գլուխն իր համակ՝
Գիտի մորթեմ կյանքիդ համար ծաղկատ.
Իր արյան մեջ պիտի լվամ, քա՛ղցր որդյակ,
Ոտքերդ հոգնած պանդուխտիս—

ՄԵՐ ԿՈՒՐՆԿԸ

Գետափին վրա, կոունկներու շարքին մեջ,
Ան իր գլուխը ծռեց.
Դրավ կտուցը թևին տակ, ու ծեր, խանդ,
Նվաղկոտ բիբով ըսպասեց
Իր վերջին սև վայրկյանին.
Երբ ընկերները ա՛լ մեկնիլ ուզեցին՝
Ան չկրցավ անոնց թռիչքին մխանալ.
Հազիվ բացավ աչքն ու դիտեց օդին մեջ
Խմբակին չուն՝ որ կերթար
Երդերեն վար կրկռալով
Հանձնված լուրեր, բարևներ,
Եվ արցունքներ պանդուխտի։

Ա՜հ, խեղճ թռչուն. այդ դալկահար գրկին մեջ
Աշնանային ցուրտ լռության՝ կմեռնի։
Փո՞ւճ է այլևս երազել
Գարուն մ'հեռուն, գաղջ հոսանքները օդին
Ճախրող թևին տակ զորեղ,
Կամ սրունքներով ջլեբաց
Անցքը պաղուկ առավակներե, մեծ վրին
Մխրճումները շամբերուն մեջ կանանչ,—
Փո՞ւճ է այլևս երազել։
Թևերը հայ կոունկին
Ա՛լ հոգնած են ճամփորդելե։ Ան եկավ
Հավատարի՛մ սրտաճմլիկ պաշտոնին,

Փոխադրեց շա՜տ արցունքներ.
Որչա՜փ հարսեր իրենց սրտերն հրատապ
Իր քնքշական փետուրներուն մեջ դրին,
Ո՜րչափ մայրեր և որդիներ բաժնվված
Անոր թևերը բեռցուցին համբույրով...

Արդ սարսուռով մ'օրհասի
Ան վրայեն կթոթվե
Մեծ վիշտն Ազգի մը նժդեհ,
Ուխտեր հանձնված, լացեր գաղտ
Նշանածի մ'որ տեսավ ա՛լ իր հետին
Վարդի թոշնումը դեռ բնավ չհամբուրված,
Տրտում օրհնենք մը մամու,
Սերեր, իղձեր, կարոտներ
Ա՛լ վրայեն կթոթվե։
Եվ գետափին դորշապատ
Ամայության մեջ բանալով վերջին հեղ
Հոգնած թռիչներն ուղղաբերձ՝
Հայ բլուրներուն, գյուղերուն վրա կիջավեր,
Կրկռոցովն օրհասի
Գաղթումը ան կանիծե՜։
Եվ կիյնա լուռ։— Խիճերուն վրա գետափին
Կորոշե իր գերեզմանն,
Ու մխելով կտուցն հիր
Քարի մը տակ, բնակարան դողոշի,
Քարշ ձգած վիզն իր ճապուկ,
Ալիքներուն երգին մեջ
Դողով մը վեհ կմեռնի՜...
Հոն օձ մ'որ լուռ, երկա՜ր ատեն, կդիտեր
Այդ ճգնաժամն ակնկառույց բիբերով՝
Գետեզրեն վեր կսողա
Ու վրեժե մ'հին օրերու,
Վատ ոստումով մ'հապշտապ
Անոր մեռած պարանոցին կոչորվի...

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻՆ

Կոտորածի տարին այրի մնաց ան։
Հասարակաց փոսերուն
Մեջ ամուսինն իր կհանգչի... կնքրհե
Տունն իր փոքրիկը սիրուն։

Օտար հարկի տակ, ձյուն ձմռով, դեռ կանուխ,
Ճրագին մխոտ լույսի տակ,
Ան կլվա, տաշտին առջև, կլվա՝
Սոթտած թևերն ըսպիտակ։

Դեռ մանկամարդ է և աղվոր, դեռ իր սև
Վարշամակին տակ ունի
Կրքոտ աչքեր զինված սուգին, ժույժին դեմ,
Պատերազմող մը գաղտնի։

Սրտին մեջ բորբ հաղթահարել չէ կրցած
Մայրությունն իր կուսության.—
Մարդը սիրո՛ կհրավիրե, տղան՝ կաթի
Իր մատաղաշ ծոցը բուրյան։

Բայց կլվա։ Հանուն պատառ մը հացի,
Հանուն միակ իր որդվույն
Ապագային՝ ան կդավե հասակին
Վարդերու թարմ հեստությունն։

Առանձին է գետնահարկին մեջ խոնավ,
Իր վշտին հետ առանձին.
Մազերն արձակ, սանդալներն իր՝ ոտքերուն,
Մերկ թևին վրա՝ երկու ծին։

Կաթսային դեմ, կաթսան գրկող բոցին դեմ,
Փրփուրին մեջ օճառի՝
Ոգիներուն աղտին սպաս կդնե
Սիրտն որբ, մարմինը գերի։

Եվ մինչդեռ գորշ շոգիին մեջ լվացքին
Կծծեն թույն իր օրեր,
Եվ գլուխը սև (զոր պսակեցին ամուսնույն
Շիրմին բուսած եղիճներ),

Այդ սևուկ գլուխը խոնարհած կոնքին վրա
Մինչ ամբողջ օրը լոին
Ինք կաշխատի և կընե կաթը բեղուն՝
Քրտինքներովը ճակտին։

Անդին, մինակ, իր երեխան արթնցած
Օրոցքին մեջ, անոթի,
Կուլա, ողի՜կ ողի՜կ կուլա, և հուսկ խոնջ
Նույն իր լացով կխեղդի։

ԱԼԻՇԱՆԻ ՇԻՐՄԻՆ ԱՌՋԵՎ

Ա

Քեզի եկա՝ իբր ուխտավոր մը հոգնած՝
Որ կգտնե հուսկ փոխարենն իղձերուն
Շիրիմ մը՝ հոն ծնրադրելու սիրտը բաց,
Եվ խոկալու, համբուրելու լույս աճյուն։

Հոս կննջե՞ս.— Քեզ կպատե լռությունն.
Օվկիան մ'ես զոր կծածկե այդ պատանք.
Կարմիր հրդեհ մ'որ մոխրի տակ կառնե քուն.
Հոս կննջե՞ս.— Ինչպես հրատն ամպին տակ։

Որթի ճյուղերն և ուռիներ տխրամած՝
Դեռ արձագա՜նքը քնարիդ կպահեն.
Հովին՝ կողքան շիրմիդ չորս դին կամ լռած
Շեշտեդ մնացորդ մը դարձյալ քեզ կբերեն։

Շուրջդ ծավի Ադրիականն հար կուլա,
Ուրկե վիհեր չափեցիր դու մտածման.
Սուրբ աճյունիդ սափորն է այդ ծովն հիմա,
Մինչ լայն ճակտիդ լայն օրորոցն եղավ ան։

Ո՛չ. մարդս չէ, լոկ բնությունն է՝ որ հանճար
Մ'օրրել կրնա, վերջը պատանքն իր ըլալ.
Տիեզերքն ունի իր մարգարիտը անճառ՝
Որուն կուտա մարդ պահ մ'իր ծոցն հյուրընկալ։

Բ

Վենետիկն իր պալատներով մարմարե
Կձգե վրադ ըստվերն իր լայն, միամած,
Բուրգի մը պես՝ որուն ներքև կնիրհե
Արծիվն՝ ամփոփ՝ արևն հոգվույն մեջ բանտած։

Քաղաքն այդ խաժ ալիքներուն երեսին
Ցցված կայմին ծայրն է նավուն ջրասույզ
Արյունաթորմ ծվենն է ան խլայի մ'հին,
Տոժի մը գանգն է՝ իր փոսեն ինկած դուրս։

Դու ներշնչված ահ այդ անգին ծվեններն՝
Ժողվեցիր ծվենքը Աշխարհիդ խլաններուն՝
Փլուզներու, փոշիներու ներքևեն,
Եվ ծայրերեն քղանցառու ցախերուն։

Ժողվեցի՛ր, վազք մ'առնելով դեպ խրված Փառք,
Բիբդ՝ արցունքոտ, սիրտդ օվկիան՝ վիրատած,
Եվ սրբեցիր՝ զանոնք ըրած դատարակ՝
Աչքդ ու աչքե՛ր Սերունդին կեղեքված։

Քողեն մութի, մոռացումի, լռության
Հանեցիր մեր դափնիներու թերթերն հին,
Եվ դնելով զանոնք երգի մը վրան՝
Առե՛ք, ըսիր, վիրածոր ջոջն Անցյալին։

Ոռամ՝ սրտին հայ՝ սերտեցիր ու դարձար
Յուրաքանչյուր խորքն անկյունի և ծալքի.
Իշար անոր ամեն անդունդն հրավառ
Եվ քրքրեցիր ճնշված խորշն արցունքի։

Ո՛հ, Աստվա՜ծ իմ— ի՜նչ ըղեղ էր ատիկա՝
Որ Տիեզերքին քամեց երակը համայն.
Հենած մարդուն, ճառագայթին, խաչին վրա,
Գրկեց Այրին՝ զոր կկոչեն.— Հայաստան։

Գ

Արծի՜վ, որ մռայլ ամպերն հրեղեն բիբերով
Խորտակեցիր, մութին սառերն հալեցան.
Արծի՜վ, որ մեր հոգին կաբշնեղ ճապուռով
Բարձրացուցիր, չափեցիր մեր ազազան։

Ջինջ հայլի մ'ես՝ ուրտեղ ամեն մարդ կրնա
Գտնել դիտել պատկերն իր Ճիշտ, հարազատ,
Նվագներուդ մեջ երբեմն ես քրիստոնյա,
Ջինվոր երբեմն, երբեմն մոգ, միշտ Սոկրատ։

Եվ քու կյանքիդ ու երգերուդ մեջ ամեն
Դու բանաստեղծ Նահապետն ես հոգեհմա.
Բորբ Արշալույս մ'ես որ կ'ելլա օվկիանեն,
Ամպեն, մութեն՝ և կսփռի Մարդուն վրա։

Այն արշալույսն որ իր մտածման հետ անանց
Սև սքեմով մ'ամբողջապես պատված է.
Եվ բոցե գլուխը սև գտակ մ'է դրած.—
Գիշերվան մեջ երկինքն էվել չքնաղ չէ՞...

Դ

Մինչ այդ կըլլա օրե օր շիթերդ լույսի
Սա ջուրերեն անդի՜ն, անդի՜ն շտեներեն.

Մինչ սերմիդ հունձքն ալիք ալիք կնազի,
Եվ՝արյունով, լացով խայրի կկապեն։

Դու կենչե՞ս, վինդ՝ բարձ, փառքդ՝ վերմակ.
Ըստվեր կընեն վրադ դափնիները շուրջի.
Եվ խաղաղ քունդ կհսկե Հիշատակ.
Դու կենչե՞ս, իբրև ծննդյանդ օրն առջի։

Ամեն նոր դար նոր պիտ՝ բերե քու անուն,
Եվ դու դարձյա՛լ պիտի ծնիս... սրտի մեջ,
Ո՛չ, ո՛չ. երբեք չվախճանիս պիտի դուն,
Չի կապեցիր կյանքդ արևուն հետ անշեջ։

Օր մը գուցե նույնիսկ քնեդ ալ զարթնուս՝
Երբ հայ ճամփորդ մ'եկած դրախտի Երկրեդ՝ ա՛լ
Ժպիտ բերե քեզ՝ արցունքի տեղ անհույս.
Օր մը գուցե զարթնուս նույնիսկ քնեդ ալ։

Եվ իցի՞վ թե.— դեռ պետք ունի Հայը քեզ.
Հայը հյուղին, բանտին, վշտին, խավարին.
Հայն որ՝ անգետ՝ կսայթաքի աղեկեզ.
Եվ Հայն որ՝ նենգ՝ կսայթաքե մոլեգին։

Տե՛ս, կսպասենք ամպածրար, տխրունակ,
Եթե դու չես կրնար գալ՝ գեթ ղրկե մեզ՝
Բաֆֆիեն խոսք մը կազդուրող, լուսարձակ,
Կամ սիրո ցոլք մ'Աբովյանի սրտեն հեզ։

Խոսե՛, հոգվույս շողի, հույսի բառ մ'հետին
Թող ցայտե գանգդ, որ անհուն աշխարհ մ'էր,—
Մինթե սափորը դատարկված վարդաջրին
Բուրումի հետք մ'իր կողերուն չի՞ պահեր։

Բայց կլռե՞ս, ով մտածման դու հսկա՝
Որ սփինքս դարձար երազիդ հետ, անձանձիր
Ա՛լ չես խոսիր, մատը փառքի բերնիդ վրա
Կարծես կըսես խաղաղ ճակտով.— «Հեռացի՛ր»։—

ՋԱՐԴԸ

Ա

(1895—1896)

Հրամա՞նը, օ՜ն։— Քարոզին մեջ Պիլալի
Կցցե Ոխն ահա ցուլի եղջյուրներ.
Մզկիթներու բակերուն մեջ ժիրաժիր,
Մահակներն ալ կհղկվին, կհյուսվին
Խարազանները թունավոր օձերով։
Յաթաղաններն հատու են.
Եվ Ալիսի ու Ճորոխի, Եփրատի
Ափունքներուն վրա դահիճները կկոչած
Կհեսանեն կայծքարերով կացիններն.
Հրամա՞նը, օ՜ն։— Ալ բավակա՛ն է մեծցավ
Արծիվներու համբույրով
Թորգոմ վիշապն օրոցքին մեջ Մասիսի,
Եվ բավական է՝ որ իր վեհ գոռումով՝
Սան-Ստեֆանի և Բերլինի հողին վրա՝
Թրմրած սրտերն համակրության խթանեց,
Եվ վերքերն իր կորյուններուն շղթայված
Թվեց թվովն աստղերուն։
Արդ կտեսնե՞ք ճիրաններն իր լուսաբուխ
Որոնց խրած տեղերն հերձ
Կհեղքվին արշալույսներ, արևներ.
Նոճիներուն մեջ Վոսփորի կլսե՞ք
Սև մրրկումները վիթխարի իր պոչին...
Հրամա՞նը, Օ՜ն։—

Օր մը սև.

(Այն օրն, աստղերը ամբողջ թույն կաթեցին.
Եվ բուրեցին ոսկրի հոտ
Վարդերն ամեն հովիտներու)— օր մը սև,

Ելտրզ-Քյոշկի անկյուններուն մեջ սնած՝
Սուլթանական գանգե դուրս,
Որջին բերանը լրտեսող գայլի պես
Այդ սև հրամանը պոռթկա՞ց...

Բ

Լաց, Հայաստա՜ն, ո՛վ թշվառ կին, ու փետե՛
Վարսերդ սև. այդ գլխուդ վրա դրժված
Ցանե տաք-տաք մոխիրներ։
Լա՛ց, ու պատռե ծիծերդ ըզմեզ մեծցնող,
Երակներեդ թող հոսի թույն մ'ոխության
Ու Թեյմրզի, Հռենոսի,
Ակերն ամբողջ լեցնե ժահր, սևցնե,
Չի հոն լվացին քեզ դատող
Պիղատոսներն իրենց ձեռքերն ու հոգին,
Երբ հույսերու Արշալույսին տակ բոսոր,
Առանց խղճի, ամոթի,
Քեզ նյութեցին խոր լռության մառնիչ։
Լա՛ց,— ավասի՛կ կտեսնեմ
Որ քու սա նեղ վայրկենիդ
Բարեկամներդ քայլերնին կդարձնեն.
Եվ ճակտիդ դեմ փակելով
Դեսպանական իրենց դռները՝ կընեն
Սեմերեն ներս, նույն քու մահվանդ վրա
Ճառեր ծափով ընդունված,
Ծրագիրներ համակիր
Որոնք հետո տապանագիրդ եղան։
Քեզ կթողուն մինավոր,
Մինչ կամպոտին հորիզոնները չորս դիդ,
Եվ լռության մեջ ճամփաներուն կլսվին
Կճրտումներն ակռաներու թաքթաքուր.
Հազար բուեր ճամփա կելլեն դեպի քու
Սարերդ սև, և զուժկան
Ոգի մ'իր թուխ թևերը շուրջ կպարզե,

Եվ Տավրոսեն Մասիս, Մասիսեն Զամլըճա,
Մեռելության մը մեջ խոր
Կոտորածի փողը տխո՜ւր կհնչե...

Գ

Փակե՛ որջերդ, Հայաստան,
Արևուն դեմ մի՛ բանար
Դռները լայն փապարներուդ՝ որոնց մեջ
Ես կտեսնեմ դեղին աչքեր գաղանի։
Ծոցդ փակե՛, որ խորթ զավակ մեծցնելու
Եղավ սովոր և հուռթի.
Երկու զեղուն ծիծերդ, Եփրատն ու Տիգրիս,
Թող պահ մ'իրենց մեջ խեղդեն
Բարբարոս տոհմը շեյխերու, պեյերու։
Օ՜ն, երախներդ խցե.
Ի՜նչ, չե՞ս տեսներ՝ որ որդիներդ հարազատ,
Դեռ անպատրաստ և անզեն,
Լոկ մուրճերու, սղոցի
Զայնին կըլլան ունկնդիր.
Տրեխներուն վրա իրենց
Արյունի տեղ կալերու ցեխն է դեղին.
Ի՜նչ, չե՞ս լսեր՝ որ սաղմոսի՛ մեջ միայն
Գիտեն կանչել արշալույսներն հեռավոր.
Արորներուն վրա հոգնած
Իրենց կուրծքին մազերը դեռ կբուրեն
Խո՜նկ փոխանակ վառոդի։
Օ՜ն, Մա՛յր իմ, Մա՛յր, սա վայրկենիս խեղդե՛, Օ՜ն,
Մեջդ ամեն խուժդուժ, ամեն դահճապետ...
Բայց չե՞ս ուզեր դու ինձ լսել, և կամ չե՞ս
Կրնար վրայեդ ըզգետնել
Քաղաքներուդ ավերակներն՝ որոնց տակ
Զմռսաբույր մարմինդ կես կթաղվի,
Ու կթողուս որ ըլլա ժա՜նտ Մահը քեզ
Բազուկներուն մեջ Ղուրանի ճեռերուն.
Կթողուս լո՛ւռ, անկարեկի՛ր,
Եվ ես ահա կնշմարեմ՝ որ անոնք

Որջերեն դուրս ազատ ճամփուն վրա կոստնուն։
Միսի գրգռիչ ախորժակեն կանչված
Կհավաքվին ոհմակ-ոհմակ, ոռնաձայն.
Իրենց գլխուն աստղերն ամբողջ կդեղնին.
Եվ կակաչներն հազարավոր բլուրներու
Սարսափահար բաժակներնին կփակեն։
Արյունի քաղցն ու հին փափագն ավերման
Թևերն անոնց կսոթտե,
Թևերն անոնց կզինե...
Կհալածեն Հայորդիներն անպաշտպան,
Հայորդիներն՝ որոնք հազիվ վերցուցած
Իրենց գլուխն աշխատանքի կարկահեն՝
Ըզեղներուն մեջ կզգան
Սույլերը տաք գնդակին.
Կբարձրացնեն ճիչը կյանքի ծարավուտ.
Եվ զոհական եզներու զերդ խումբ մ'օրհնյալ՝
Որոնց մինչև գոմը հասած է հրդեհն,
Ուղեկորույս, խելագոչ,
Կթոտ ծունկով, բիբերով դուրս կկոցված,
Կփախչըտին շփոթ, թասուն, հուսահատ,
Մահվամբ լեցված նայվածքով,
Ծերեր, կիներ, տղաներ,
Արձակ մազով, ձեռքերնուն մեջ սանդալնին,
Փողոցներե փողոց, լեռնե լեռ, մոլոր,
Կյանքի՜ն, կյանքի՜ն, քաղցը կյանքի՜ն կվազեն։

Դ

Հոն, կտեսնեմ քեզ, ո՜վ վայրագ դու Ոգի.
Անզեններուն, տկարներուն ետևե.
Մրբրկելով փլատակներու մեջ փոշին,
Ճերմակ ձիուդ վրա դեռ քեզ կտեսնեմ...
Ապարոշիդ մեջ կանաչ,
Իբրև իժի ծվարում,
Ալփասլանի հոգին ըզքեզ կպսակե.
Պարեգոտդ այդ պատանքներուն պատանքն է

Եվ քու ձիուդ դորշ ըսթարին ծոպերեն,
Հավերժական բխումով,
Արյուն մը գաղջ կկաթի...
Եվ դու խնայել չես ուզեր
Բոլոր անոնց՝ որոնք թախծոտ թևերով
Ճամփուդ վրա իրենց արևը կուզեն։
Անձավներե անձավ միայն, վերևեդ,
Կհնչե բառն ագռավներու կռինչով։

«— Հառա՜ջ, հառա՜ջ»։—

Եվ քու ճորտերդ ավազակ
Կհետևին մահ սերմանող արշավիդ...
Կուրծքերե կուրծք լյարդաբորբ կմխան
Իրենց սուրերն արյան ակեր բանալով.
Կթավալեն երիտասարդ գլուխներ՝
Որոնց մազերը սև, մազերը խարտյաշ
Ցեխերու մեջ կպլշկին,
Եվ ծերերու կոկորդներեն պինդ բռնած՝
Գանգերն անոնց պատերուն դեմ կջարդեն.
Կբանան մեր մայրերուն
Ծոցերը սուրբ՝ որոնցմե
Կթափին դուրս եղբայրներ դեռ անանուն,
Հայեր առանց դեռ ձևի.
Կտրորեն, կփշրեն
Գարշապարի, բիրի, պայտի տակ կողեր,
Գանգե՜ր, գանգե՜ր, անթիվ գանգեր, լեցնելով
Սալհատակի ճեղքվածքները բոլոր
Ողնածուծով, ըղեղով...

— «Հառա՜ջ, հառա՜ջ»։—

Ով բարբարոս դու Ոգի,
Անցքիդ վրա, ձայներն ոսկրի փշրումին
Մինչև երկնի խոր անձավներն հրեղեն
Կհնչվին... Անցքիդ վրա կխեղդե՜ն
Երեխաներն իրենց մոր սև ծամերով,

Ու մեր հարսներն հարաշխատ,
Վավաշ կրքով մ'ընդգրճած,
Ջրհորներու պարաններով կսպաննեն.
Եվ կզոհեն ո՞վ գիտե ի՞նչ շար դևի
Տաճարներու ցուրտ սյուներուն փաթթված՝
Սուրբ կուսաններն հերարձակ.
Իսկ արտերուն, ա՜խ, արտերուն մեջ չքնաղ՝
Ուր հայուն կյանքն արև կըմպե և արևն
Հոգիին մեջ կմեռնի՝
Վաստակաբեկ դիակներով կկանգնեն
Գողգոթանե՞ր, գողգոթանե՞ր, սրբազան,
Եվ բոլորն ալ, լի գա՜նգ մ'իրենց ձեռքին մեջ՝
Միահամուռ կխմեն
Արյուն ծերի և մանկան,
Արյուն կնոջ, և արյունն
Արարատին վրա խաչված Հիսուսին։
Ու կկրկնեն դեռ ագռավներն հարատև.

— «Հառա՜ջ, հառա՜ջ»։—

Ո՞վ բարբարոս դու Ոգի,
Այս Սասունն է, Տավրոսն է այս, Պրոպոնտոսն,
Ամեն այն տեղն՝ ուր Հայն հունձքին մեջ կանգուն
Հակճիռս միշտ գալուստիդ՝
Կխնամե գուցե գարին վաղորդյան
Ջիոդ՝ որուն սմբակին տակ կդառնա
Կյանքն հող և հո՞ղը մոխիր։
Ա՛լ տրորված՝ իր վազքին տակ կկաթեն
Վարդերն արյուն, և ողկույզներն արտասուք.
Իր գոռ դափրերն անտարբեր
Ինկածներուն գանգերուն մեջ կճխան.
Ա՛լ կմաշին պայտերն ոսկրի փշրումեն,
Եվ իր բաշին վրա կարմիր
Անգղներն հիռ կդառնան...
Այլևս ահա ամեն ինչ
Փլատակ է, կողոպուտ է, դիակ է,
Որոնց վրա կփաղփի

Հրդեհն աչքեն արյուն ու բոց հոսելով.
Հրդեհը
Վարսերը շուրջ կթոթվե
Եվ վիշապի մռունչներով կվազե
Կալերեն գյուղ և գյուղերեն քաղաքներ.
Երկար թմեր բոցերու
Տուն տուներու կշղթայեն, կյանք կյանքի,
Ու ամեն տեղ, մոխրին վրա
Մեր պղծված Պատիվը լոկ կսպառնա.—
Բոցերուն մեջ զերդ շեկ Ոգի մը կանգուն
Կմռնչե, և մռունչով կպոռթկա
Դեպ արևու համբույրին,
Վրեժի սերմն անդրանիկ,
Մինչ ոտքերուն ներքևե
Խանձումն ու հոտը մարմնի
Մեր սերմերեն, օրոցքներեն դեպ ի վեր,
Դեպ ի երկինք կճենճերին՝ որոնց դեմ
Իրենց պինչերը բացած՝
Ալլահն ամպին մեջե, Սուլթանը ցեխին
Հոտոտելով փոխն ի փոխ՝
Կժպտին հաշտ իրարու,
Ու Եվրոպան դեմքն իր ետև դարձուցած
Կոպերը թաց կշփե—
Մեր ծուխեն աչքն իր բոզի
Կսկծելո՞ւն համար լոկ։—

Ե

Կեցի՞ր, կեցի՞ր, ո՞վ բարբարոս դու Ոգի,
Ելլեսպոնտի եզերքին վրա ա՛լ կեցի՞ր.
Սա սև ժայռին՝ ուր ծովն իր բանտը կուլա,
Թող ձիդ խրտչած Մեռնողներուն հոնգյոռանեն՝
Գերմարդկային գութի մ'ահեղ սաքսուռով՝
Իր պինչերեն, իր բաշերեն, ագիեն
Բոլո՞ր, բոլո՞ր մեր արյունները թոթվե։
Կեցի՞ր ու հեղ մը հետքիդ վրա ընկրկե՛.

Տե՛ս.— ավասիկ ամեն ինչ
Կգալարվի, կճարճատի, կմեռնի,
Սուխ է, մոխիր և ավեր։
Արյան ծովու մ'ալիքներեն կծփան
Մարդու ահեղ դիակներ,
Դիակ կույսի, դիակ աստղի և վարդի,
Դիակը մեր Ազգին և մեր Աստծույն...
Տե՛ս.— Անձյունի, արյունի,
Կարմրածուփ լույծ անապատ մ'է քու առջև,
Որուն մեջե ծանրաբեռնված ավարով՝
Ըսպանիչները գազան
Կհեռանան լիզելով
Արյունաքամ սուրերն՝ որ լերդ կհոտին։

Զ

Կուգան ցիները հեռավոր լեռներե,
Եվ անգղներն հոտառու
Կուգան իրենց ձագերուն կեր տանիլ մեզ,
Հայ դիակին մ'աչքին կտուց մխելու
Կհասնի Արծիվն այն հսկա,
Նոթի Արծիվն այն, որ գուցե օր մ'ամպեն
Վեհաժողովը բիզմարքյան կհսկեր.
Շուներն ուրախ պոչերով
Բակերե դուրս դիակե դի կհածին,
Եվ ծույլ լեզվով մը կլիզեն արյուններն,
Մերթ կասկածոտ կենալով
Կիսամեռի մ'աչքերուն
Հանկարծական բացումեն։
...Հետո կուգան Մայրերը ո՞ղջ մնացած
Ու ողջ հարսերն ու բոլոր
Մեր ողջ քույրերը խելահեղ կանչերով։
Նոճիներուն մեջեն խումբն հեգ կվազե,
Արձակ կուրծքով ու բոբիկ
Դեպ մեռելներն հոշոտված՝
Որոնց արյան տարբեր հոտն

Ըստ սերերու տարբերության կկանչե
Զիրենք այն մեծ Ջայլին՝ որուն վրա դեռ
Ապագաներ պիտ' ջայլեն։
Ամենն իրենց մեռելներն հոն կգտնեն,
Կիյնան իրենց մեռելին քով ծնրադիր
Եվ լաչակներն ու կրկնոցներն սպիտակ
Ջարթնող սուրբի մ'պատանքին պես ետ նետած,
Մերկ ծոցերով, աղաղակով, ողբանքով
Ծունկերն իրենց կծեծեն,
Կփեթռտեն մազերնին,
Իրենց կուրծքեն կծայթքի բառ մը ոխով,
— Անե՛ծք... ու սև՛ շիրիմներուն մեջ խլամ՝
Բոլոր ոսկրերն իրարու դեմ կջարդեն.
— Անե՛ծք... ու թո՛ւք մայրերուն մութ ծոցին մեջ
Կաթը կ'ըլլա սնդիկ կամ խյուս եղիճի.
— Անե՛ծք... ու վե՛րն, Ելտրզ-Քյոշկի երդին վրա
Բու մը հսկա կդնե բույնն իր հսկա։

Լացե՛ք, լացե՛ք, ո՛վ հեգ Մայրեր, հեգ հարսեր
Աստղերե ա՛ստղ ձեր ողբանքը ձգած՝
Այս օր մեր սև հողին վրա
Սա մորթված Արշալույսները լացե՛ք...
Թող ձեր բիբերն ինկածներուն վրա հազար
Արտասվելեն իրենց լույսեն դատարկվին։
Վերջին լացն է.— հա՛պա, խածեք ըստինքնիդ.
Հուսահատորեն դագաղներուն վրա ծռած՝
Թողեք մեկտեղ կափարիչի տակ գամվին
Մայրերը ձեր մազերուն,
Եվ խոշտանգված ձեր իգությունն իր հետին
Տկարության մեջ փշրի։
Օ՛ն, հառաչ մ'ալ, արցունք մըն ալ.— վերջի՞ն է.

Զի ավասիկ, ահավասիկ կտեսնեմ
Արգանդներուն մեջ ձեր լայն՝
Նոր Սաղմեր նոր Որդիներու ստեղծիչ։
Իրենց մռայլ ձևին ներքև կպահեն

Հզոր ճեմքերն Առյուծներու ապագա.
Ձեր աչքերեն իրենց աչքերը փոքրիկ
Կբացվին պիշ աստղերու հորդ շողերուն.
Եվ մերթ թաքչած խորհուրդին մեջ ազիքի
Կթափառին, մեծնալով,
Ավերին մեջ իրենց վաղվան ժառանգին.
Իրենց շրթունքն, ո՜վ Մայրեր, ձեր շրթունքեն,
Կայծակներու ծարավով,
Դեպ ամպերու երակներուն կ'երկննան,
Կերկննան դե՜պ ի հայկական արյունին
Գերաստվածյան հաղորդության՝ որուն մեջ
Հայրենիքի Սերը վեհ
Կրոնքը կըլլա հազարավոր կրոնքներու։—
Ու վա՜ղը, վա՜ղն, ո՜վ հեգ Մայրեր, լսեցե՛ք,
Ձեր արգանդե՛ն մի առ մի
Պիտի ելլեն անոնք հսկա և հերոս։
Մեծ պիտ' ըլլան, մրրիկն իրենց մազերուն
Պիտի սարսե վերն աստղերուն մեջ Աստված.
Պիտի հագնին արծվի մաշկեղ թռիչներ՝
Շանթերն իրենց վրա կրելու միշտ պատրաստ՝
Գլուխնուն վրա Ազատության արաղչինն
Ուլունքի տեղ պիտի հյուսվի աստղերով։
Օ՜ն, լսեցե՛ք, լսեցե՛ք այս, ո՜վ Մայրեր,
Վաղն երբ անոնք թամբեն իրենց նժույգներն
Ու անոնցմով, զերդ պոզպատի ջրդեղում,
Վրրեժին մեջ մկրտվին.
Երբ թուրք արյան բարկ ծարավեն մոլեգնած՝
Լեռներուն վրա մռնչեն,
Ո՜հ, այն ատեն, այս օրվան
Մեր Մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մեջ իրենց,
Ու անհամբեր հեռո՜ւն, հեռո՜ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալույսի մ'Արշալույսի մը՝ որուն
(Հավատացեք ինձ, Մայրեր,)
Ես ոտնաձայնը կառնեմ...

ՀԱՅՀՈՅԱՆՔ

Լեռան վրա, լուսնին տակ,
Հալածվածները նախճիրեն կուլային.
Պառավ մ'հանկարծ անոնց մեջտեղ կանգնեցավ,
Ու մեկ ձեռքով հենացուպին կոթնած՝
Մյուսը՝ ջղոտ բռունցքով՝ ցցեց դեպ երկինք,—
Հետո ասա՜նկ ըսկսավ.
—« Աստվա՜ծ, Աստվա՜ծ, Լուսավորչի, Ներսեսի,
Աստված նենգո՜ղ, Աստված արյա՜մբ մարմնաբույծ՝
Ինչպես Պյութոն մ' անապատին մեջ պառկած...
Այսօր ահա կընդվզիմ
Ութսունամյա հավատքիս մեջ ջերմեռանդ,
Եվ մայրությունս ու հայությունս՝ որոնց հար
Սրտիս մեջ թո՜ւյն ջամբեցիր,
Իբրև երկու խայթ խղճի
Կայծակնահյուս կողերուդ մեջ կմրխեմ։
Դու որ մատղաշ տարիքիս
Հարսանեկան քուլս արյունով ներկեցիր,
Եվ թույլ տվիր՝ որ թևերուս վրա ջարդեն
Լուրթ քողեքներս բնիկ հողով թրծված,
Դու որ այս ծեր տարիքիս մեջ տակավին
Երիկամունքս լոկ քաղցով լեցուցիր,
Եվ սրբազան ցուպը մեկնող հասակիս
Թաթախեցիր արյան մեջ,
Դու որ Որդվույդ խաչն ողբալեն բլշակնած,
Իմ աչքերս այս սահմանեցիր դեռ լալու
Մորթված յոթը զավակ,
Դու՝ զերդ Վիշապ երկնածին,
Երկու թաթերդ երկու ամպի վրա դրած,
Ծո՜ և տե՜ս.— Ողորմությանդ ստությունն
Հոն վարը, տե՜ս.— գյուղե՜ր, գյուղե՜ր և գյուղե՜ր
Կհրդեհվին, և բոցն իրենց կհասնի
Արարատեն բարձր և բա՜րձր քեզմե.
Ահավասիկ դաշտերուն մեջ խանձոտած
Հազարավոր խոցվածներ

Իրենց ջարդված կողերն ընդքարշ կտանին.
Մեր ոսկրները կրակին մեջ ճերմկցած
Կպատրաստեն ալյուրն ահա նշխարքիդ,
Եվ մեր արյունն հորդաբուխ
Կուգա մինչև քու ըսկիհներդ լեցնել.
Ճամփաներուն վրայե
Կլսվի ճռի՛նչը թշնամի սայլերուն,
Որոնց մեջ մեղրն ու կաթը մեր կկրեն,
Արյունը մեր արեգակին— կյանքն հողին
Եվ արծաթները Սեղանիդ նվիրված։
Վար նայե, հոն.— մեր թոնիրները բոլոր
Իրենց զվարթ բոցին վրա կփլչին,
Եվ կմարի ծուխն հայրենի ծխանին,
Եվ կլռե մշակներուն երգն հանդարտ.
Ամեն հասկ իր քիստերեն վար կկաթե
Արյուն, ամեն աղբյուր անցած ճամփուն վրա
Կլլվա վերք մ'ու ամեն
Հովազ դիակ մը դեպ որջն իր կքաշե.
Իսկ կիներն հոս իրենց ծունկին վրա կուլան
Երիտասարդ գլուխներ.
Եվ մանուկներն ահաբեկ,
Երեխաներն անոթի
Զգրտնելով մոր ծիծերուն մեջը կաթ՝
Զերդ նշենվո ծաղկած ճյուղեր կիսաբեկ՝
Կմեռնին չոր ըստինքներե վար կախված։

Աստվա՜ծ, Աստվա՜ծ, Լուսավորչի, Ներսեսի,
Ուրեմն ա՞յս էր, փոխարենն ա՞յս էր միթե
Մեր աղոթքին, մեղրամոմին, կնդրուկին...
Արդ ունկնդրե՛.— Բնությյան հազար փապերեն,
Սեղաններեն զոհերու,
Ջինջ աստղերեն կամ սրտերեն մանկական,
Ուր քեզ դողով կպահեն՝
Ինձ ունկնդրե՛.— Հանո՜ւն այն
Ժողովուրդին՝ որ քեզ սիրեց և առանց
Քու օգնությանդ խաչվեցավ,
Հանո՜ւն-անոր՝ որ ողջակեզ ըրավ քեզ

Ոչխարներեն ամենեն կույսն, ամենեն
Լծընկեցն իր ցուլերուն,
Եվ իր գինին խմորած
Սափորներու մեջ պորփյուր
Քու արյունիդ սահմանեց.
Հանուն անոր՝ որուն սրտին վրա, դարեր,
Իբր ադամանդ կովանի
Կայծակնացող ոտքդ դրիր, ուզեցիր,
Որ կրունկիդ տակ փշրելով
Եղջյուրներն իր դիմամարտ՝
Սրբարանիդ մարմարներուն վրա միայն
Հույսին ձեթերը վառե.
Եվ հետո ալ իր պաշտումեն՝ կշտապինդ՝
Զայն, իբր Հիսուս մ'ամպերու մեջ թողլքած,
— Էլի՜ լամա... ըրիր քացախն իր՝ թունոտ,
Կողին նիզակն՝ հաստաբուն,
Հանուն այդ հեգ ժողովուրդի՛ն կրսեմ ես
Սա մթնշաղ ժամուն մեջ ո՛ւր որ ըլլաս,
Ո՛ր աստղին մեջ և կամ ո՛ր
Թուխ ամպին վրա շանթ ի բուն,
Իմ կռուփս ըզքեզ կգտնե
Եվ բերանս իմ կհայհոյե՜...»—

Ըսավ։ Իր շուրջը տղաներն ահաբեկ՝
Գլուխնին ծածկած թևերուն տակ իրենց մոր
Ըսկըսան լալ, և կիներն ալ աղոթել.
Իսկ դաղանները հեռավոր լեռներեն՝
Արարչին սուրբ Անվան համար վրեժխնդիր՝
Լուսինն ի վեր երկա՜ր երկա՜ր ոռնացին...
Ցլսեց ան, կամ չուզեց
Ոչինչ լըսել։ Մոտենալով դիվահար
Լայն անդունդի մ'առլեփին,
Մրթմրթալով, հուսահատ,
Ինքզինքը վար արձակեց...

ԿԻԼԻԿԻՅԱՆ ՄՈԽԻՐՆԵՐՈՒՆ

Օտարական, բարձրանանք սա դիմացի լեռան վրա՝
Որուն քովեն կհոսի եղեգներուն մեջ լալով
Սիհոնն՝ ուր վաղը կարմիր քղամիդներ պիտ լլվան
Մայրերը մեր ցավագին։— Օտարակա՛ն, ըշտապե՛,
Չի մերկ ոտքերս կայրին մոխիրներուն վրա տաք
Եվ ըսկսավ քու երկար պարեգոտիդ քղանցքն ալ
Ճապաղիքի մեջ թրջիլ։— Օտարակա՛ն, ըշտապե՛...

Կիսայրյաց ցուպս խոսքիս ուղղությամբ ցո՛ւյց կուտա քեզ՝
Ահա քաղաքն ու գյուղերն ու արոտներն ու ափերն՝
Ուրկե անցավ կրակի Ցեղն Ատտիղասի ձիուն վրա։
Տուխերն են Հոն և բոցե՛րն՝ որ տակավին բլուրեն վեր
Հովին շունչով ալեծուփ կսողոսկին, կամփոփվին,
Հետո նորեն լեզվի պես կատարն ի վեր կերկննան։
Կվառի հողն իսկ, նայե՛, բորբ հորիզոնը մեր շուրջ
Հրափողփող պըսակ մ'է՝ որուն կեդրոնը կանգուն
Մենք կդողանք սգավոր ոգիներու պես օտար։
Կլսե՞ս ձայնն հեռավոր, եղեգներուն բռնկած՝
Որոնց միջև կածխանան հավերժահարսներն անտառին,
Նարնջենի ճյուղերու ի՞նչ խնկաբույր ճարճատյուն,
Ի՞նչ մոխրացող այգեստան, տատրակի ի՞նչ վուվուներ։
Բոցը կանցնի, ու քամին գալով անոր ետևեն
Խանձած սեզերը առած սարերեն վեր կմրրկե.—
Ո՞վ դողահար մերկություն խլուրդներու խուղերուն,
Որոնք նման ոզնիի արտերուն մեջ կհայտնվին,
Ո՞վ ավերակը բլրան վրա շինված հյուղերուն,
Ուրկե կելլեր հայ գեղջուկն առավոտյան աղոթքով,
Արարչությունը հողին արթնցնելու բահին տակ։
Օտարակա՛ն, կտեսնե՞ս, ինչպես այսօր տնակներն այդ
Փլա՞ծ ու լո՞ւռ կսպասեն սուգի առջի գիշերին՝
Որ լուսնին տակ արտասվեն աճյունն իրենց թանալով։
Տանիքն անոնց փլցուցին ներսը վառվող ճրագին վրա.
Դռներն հրլու, զոր զեփյուռն խակ իր շունչով կբանար,
Ինկան ջախջախ խուժանին բիրերուն տակ արյունոտ։
Եվ արդ պատերը ժոռատ ծնոտի պես կցցվին

Որոնց մեջեն խույս կուտան հոգիներ բույլ-բույլ երկինք։
Արտերուն վրա մոխրակո՞ւյտ, իսկ դիակնե՞ր ճամփուն վրա,
Այն ճամփուն վրա ըսպիտակ՝ ուրկե ժիր ցեղն Արամյան
Արևմուտքի աստվածներն, հարաճուն միտքն Եվրոպին
Ջորիներուն բեռցուցած տարավ բաժնել Ասիոյ։
Աղբյուրներուն քով զոհե՞ր, ակոսներուն մեջ զոհե՞ր.
Եվ հոն, դիմա՞ցն, ուր ահա արևը մայր կմտնե.
Սեպ ժայռին դեմ խաչեր են յոթը այրեր մերկանդամ.
Արյունն իրենց մագերեն (օտարակա՛ն, կաղաչեմ,
Փակե՛ աչքերդ ու միայն եղիր ձայնիս ունկնդիր),
Արյունն իրենց ձեռքերեն և ոտքերեն բևեռված
Հողին վրա կվազե վիմուտներն այն ներկելով.
Կարծես մեկնող արեգակն հուշիկ հուշիկ կընկղմի
Մեծ աչքերուն մեջ իրենց՝ սարսափեն բաց մնացած։
Դահճապետներն հեռացեր են խավարին մեջ արդեն։
Խաղաղությո՛ւն, ովսաննա՞ բարձունքներուն վրա կարմիր...

Օ՜հ, ծընոտներս ի՞նչ սարսուռ կկափկափե.— Դարձիր ա՛չ,
Եվ տես քաղաքն, որ նստած դաշտերուն սա սուգին մեջ՝
Դեռ իր սրտեն կմխա մարդազոհի հնոցի նման։
Ազատության արշալույսն անոր ճակատը կճյա
Հազիվ էր դեռ բոսորած, երբ որ իր հազթ հիմերուն
Ներքև վիշապն Համիտյան սասանեց տուտն ու թիկունք.
Բարբարոսներն այն ատեն արևուն դեմ թքնելով՝
Մահվան սերմերը բռած մեծախնծիղ արթնցան.
Եվ քաղաքին մեկ կեսն ալ կործանեց կեսը մյուս։
Ցաթաղանին բրոցին, եղեռնավոր բոցին տակ,
Ինչ որ հանճարն էր կանգներ, զայն մոխրակույտը կլլեց։
Արդ տաճարները ո՞ւր են, որոնց բուրյան գրմբեթին
Ներքև ծիծառն հազիվ հաղ գարնան աղոթքն էր ըրեր.
Ո՞ւր վարժոցներն ու պալատն ապագայի լույսերուն.—
Մանուկներու ողջակեզ սրտեր հոն խունկ կմխան։
Ո՞ւր բաղնիքները հստակ, ջինջ մարմարներն, որոնց մեջ
Ցոլացին կույս աղջիկներն իրենց լոգցած ժամերուն.
Ո՞ւր շիրիմներն հոյակապ, ո՞ւր կոթողներն հինավուրց,
Որոնց վրա Հեթումներն հաղթանակներ գրեցին...
Մա՞հ և մոխի՞ր.— Թխայրյաց պատեր միայն ավաստիկ

Իրիկվան մեջ կցցվին բվիճակներ կանչելով։
Օտարակա՛ն, հիմակ այս Երկրին անցյալն արթնցուր
Հուշերուդ մեջ, և ուրիշ Ցեղի մը դարն ափսոսա,
Խորհե թե օր մ'ըստորոտը Տավրոսի բնակեցավ
Ժիր ժողովուրդ մ'որ կյանքին աստվածացումը երգեց։
Իր կարավանը անցավ, և տարավ միշտ հեղեղել
Բարի ցորյանն ամեն հյուղ՝ ուր ճրագ մ'հեգ կպլպլար.
Իր կարավանը անցավ, և Տարսոնի գոհարներն
Աստղերու պես թափեցան բամբիշներուն գոգին մեջ.
Եվ այն ճամփան լեռընդմեջ՝ ուրկե Գանգես արշավեց
Երիտասարդ Մակեդոնն'իր շավղին վրա կանգնելով
Բագիններ՝ ուր պաշտվեցավ գեղեցիկ Միտքը Հելլեն
Աթենասի արձանին լուսակառույց ձևին տակ,
Այդ չինչ ճամփան Ռուբինյան զավակներուն շինարար
Տեսավ սայլերը ճռնչող Արևելքեն Արևմուտք,
Որոնց վրա բեռցուցած էր Հայ վաստակն աննվաճ՝
Մարմարն հուռթի լեռներուն, այգիներուն հորդ գինին,—
Ո՞վ նախասնունդը երգող և քանդակող ազգերուն։
Անցա՞վ հիմա բոլոր այդ գեղեցկությունը կյանքին.
Կրակի Ցեղը, ավա՞ղ, ժամանակեն ավելի՞
Եղավ քանդող, ժանտախտեն ևս ավելի կոտորիչ,
Ան կսիրե տերվիշի պես միշտ նըստիլ գոհունակ
Քարի մը վրա փլատակի և կրծել ոսկրն իր շոպած։

Լսե՛, քաղքին պատվարին մեջեն ձայներ մեզ կուգան.—
Դահիճ Ցեղն ա՛լ կտոնե իր հաղթանակն արյունռուշտ,
Կիներ, տղաներ մորթելու հաղթանակն իր վատոգի։
Հեգ ոստանին, որուն վրա լուսինն ահա կարտասվե,
Մեկ մասն է արդ գերեզման, հանդիսավայր մասը մյուս.
Ոսոխն ահա բռնկցուց իր խարույկներն հրճվանքի,
Հեծեծագին կմախներ հանդիսաբար կվառին.
Շուրջը սոթված թևերով խուժանն ուրախ պար կուգա.
Արյունազարդ Ոճրուհին հինայագեղ մատներով
Կզարնե դափ, և Ոսոխն, օտարակա՛ն, առջի հեղ
Այսօր գինի կխմե մոխիրներուն ի պատիվ։
Կիսայրյացները անդին խավարին մեջ կհեծե՞ն.
Բայց վիրավոր մ'ավասիկ կկոթոզվի մութին մեջ,

Հետո ծունկի վրա ընդքարշ կմոտենա խուժանին,
Եվ հեգնորեն, քրքջալիր արյունտողիք կթքնե
Խարույկին մեջ տոնական։—

Կ'անցնին հովերն ողբագին

Դիակներուն վրայեն, և վրայեն փլատակին,
Եվ արյունի սերմերով, մոծիրներով հրդեհի
Կերթան հեռու աշխարհներ գարուն մ'ուրախ ծաղկեցնել։
Օտարակա՛ն, հովերն այդ ահա ծովուն վրա լուսեղ
Առագաստները նավուդ գոգացուցին փքուռույց.
Ա՛լ մեկնե սա դառն երկրեն դեպի խաղաղ ափունքներդ,
Ջի տատրակները մեռա՞ն, և դեղձենին խամրեցա՞վ։
Երբ նավդ անհուն սարսափով պատռե ջուրերն ու փախչի՝
Հետապնդված միշտ կայտռուն դլփիններեն՝ որոնք մեր
Ծովախորշերն արգավանդ եկան փնտրել դիակներ,
Երբ թիկնոցիդ մեջ ծածկած դեռ նայվածքներդ ահաբեկ
Դիրկը հասնիս ոսկի եղբայրներուդ,— չմոռնա՞ս
Անոնց ըսել, թե ինչպես Կիլիկիան մորթեցին
Ազատության դափերուն նվագին մեջ դավաճան.
Դիտեմ, թե այդ եղբայրներդ մեծագոգ նավերով
Գալ պիտ՝ ուզեն... Օգնությա՞ն... ո՜հ, ո՜չ... մահվան մնացորդին.

Պիտ՝ ուզեն գալ լոկ մեր կույս, ատոք լեռները պեղել,
Եվ մեր ծոցվոր հանքերեն կթել մետաղն հրաշափառ,
Կթել մետա՞ղն ու իրենց եսին կուռքերը կերտել...
Օտարակա՛ն, ա՛լ մեկնե։— Կիջնեմ ես ալ ավասիկ
Այս բարձունքեն, ու փաթթված տառատոկիս մեջ տրտում,
Նորեն կերթամ թափառիլ քաղաքին մեջ զոհերուն։
Մեռելներն հարկ է թաղեմ, և ողջակեզն օծանեմ։
Վիրավորի մը գլուխ որձաքարին կհեծե՞...
Աղբյուրին քով քույր մը, ո՜հ կոգևարի անտերունջ...
Պետք է փորեմ այս գիշեր գերեզմաններ անհամար,
Եվ լուսեղեն պատանքներ հենում մինչև առավոտ.
Պետք է կերտեմ շիրիմներ, հուշարձանները կանգնեմ,
Եվ մարմարին վրա երգերս տապանագիր քանդակեմ։—

ԿՐԿԵՍԻՆ ՄԵՋ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ

Ա՛յսպես երգեց Վերածնուհին՝ երբ բացավ
Թևերն ուղիղ դեպ երկինք,
Երբ մատներն իր մխրճեցան մեղմորեն
Կապույտին մեջ լուսածոր.
— «Կելլե՜մ, կելլեմ.— նախճիրներու ծնունդ եմ.
Կրակին չափ գերահզոր, գերբնական
Ինչպես մարդուն գիտակցությունն.— ու կելլե՜մ։—
Վայրկյան մ'ալ դեռ և ահա
Վարդի թերթե ծնած ոգվո մ'հանգունակ
Ալ կ'ազատեմ ոտքերս արյան քողերեն։
Ջիս հղացող արգանդեն
Եվ այն ծոցեն որ խուճապներս օրորեց.
Մեծցած կուսան՝ կհառնեմ
Վե՜ր, դեպի վե՜ր, լվալու,
Գլուխս աստղերու ալիքներուն մեջ հրաբորբ։
Ոտքերես ա՛լ վար կթոթվեմ մզանքներս
Եվ խանձարուրս և պորտընկերս և մթարս
Ու ամպերեն կդիտեմ
Ջիս իբր աղիք պատող փողերն հրացանին,
Ծո՜վն արյունի դիակներով խարակված՝
Որ բուստապակ մարմար ճակատս ողորկեց
Եվ օծանեց մայրորեն
Մազերս լի՛ մրրիկներու համբույրով.
Կդիտեմ մեծ հոգիներն հայ Հանճարին,
Որոնք իրենց գանկին թասով ըղեղնին
Ջամբեցին իմ շրթունքներուս մանկական.
Կդիտեմ գոռ պայթած ռումբերն հրակոկոն,
Այդ կճեպներն իմ սրտիս
Որոնց բոցերն արյունս հուռթի կընեին.
Կդիտեմ վարն նաև մեռած եղբայրներ՝
Նույն արգանդին մեջ սնած,

Որոնց, ինծի հավասար,
Մեր Մայրը կյանք չտվավ,
Ջկամեցավ իր սիրտը լայն և աստղերն՝
Իրմե զանոնք մոլեբար դուրս վիժելով.—
Գուցե մեր Մայրն այդ լավ գիտնար՝ թե անոնց
Սև սաղմին մեջ կլայննան
Եղբայրակուլ անդունդներ,
Եվ թաքչած իր աղիքներուն խորքին մեջ,
Վաղվան համար նենգաբար
Կդարանին սղոսկումին մատնչի.
Մե՛ծ պիտ' ըլլամ, հավերժակա՜ն պիտ' ըլլամ,—
Ջիս տաքցնողն, ո՛վ Ազգեր,
Ջեզ տաքցնող ճաճանչի նույն թափը չէ՞.
Մոխիրն հսկա պապերուս
— Արևու շեջ մնացորդ—
Օր մը նվա՞զ միթե եղավ ահավոր,
Կամ միթե ան՝ մատյաններու մեջ այսօր
Դեռ չի՞ սրսփար, չի՞ հուսար։
Մե՛ծ պիտ' ըլլամ, հավերժակա՜ն պիտ' ըլլամ,—
Ջարկիս ներքև կբաբախե զարկն հուժկու
Մշեցիի, Վանեցիի.
Մարմարեղեն բազուկներուս թափն ըմբոստ,
Փայլակն աչքիս, կույս հոգվույս մռունչն անվեհեր,
Կրսեն թե ներսս կապրի
Սիրտ մը մատակ առյուծի,
Սիրտ լի պղնձե սիրով, վրեժով քինահույզ,
Որ կխոտե վարդերն հարսի վավաշոտ,
Եվ հանգստի անկողնույն մեջ կտեսնա
Մեկոնաբույր շրթունքներով ցոփությունն,
Որ կխեղդե համբուրելով։ Կճանչնա՛,
Կճանչնա սիրտն այդ՝ թե հզոր է ինք միշտ,
Ինչպես Ապրիլն՝ հղի ատոք գարունով,
Ինչպես մրրիկն՝ ազատությամբ հոլաթև.
Գիտե որ մեջն հանճարե լո՛ւյս է ծորած.
Բոց է, և է բոց ապագան.— ան գիտե
որ հավատքով գաղափարին խարսխված՝
Պիտի բանա կայծակով դուռը Դրախտին»։—

ԱԳՐԻԼ

Ո՞ր քարայրեն մութ, ո՞ր մութ խրճիթեն
Ելավ, չեմ գիտեր. դեմի հովիտեն
Կվազե, կուգա։ Բիբերով հրձիգ՝
Կարծես լի դողով մը նոր եղեռնի,
Սև մազերն հովին, ոտքերով բոբիկ,
Ամայի դաշտին մեջտեղ կկանգնի։

Վերածնուհին է, լեռներո՛ւ աղջիկ,
Մրրկին պես զորեղ, վարդին պես գողտրիկ,
Իր հոյնով գծված շրթունքին աղու
Կա համբույր մ՝հուռթի, արևու քթթում,
Եվ կայրի հոգին տենչով մը՝ տալու
Խոցելով՝ ծաղիկ, մահով՝ ըստեղծում։

Կգոչե— «Հերի՛ք սառույցե կճյա
Գերեզմանը ձեզ, արթնցե՛ք, ահա
Բերած եմ լազվարթ երկինք, օդ ջերմին,
Կուռ ծիծերուս մեջ ծաղկի անուններ.
Ձյունեն դուրս, ցցուն վիզով դեպ արփին
Ապստամբությո՛ւն եմ ձեզի բերեր։»—

Կըսե։— Իր հմայիչ գոռ ձայնեն ըսթափ՝
Աղիքներն երկրին նոր կյանքով մ՝ հրատապ
Կսկսին թնդալ. և լուռ կսողա
Ակոսներուն մեջ շոգի մ՝հուր, ծավի.
Մերկ անտառներուն, մերկ բլուրներուն վրա
Կանանչ պատմուճան մը կծրագրվի։

Հոն, կանգնած գեղջուկն հյուղի թաց շեմին՝
Ուր կմնա ձյունեն մաս մը տակավին՝
Կաճառե բժոտ աչքն երկինք նայելով.
Գոմեշներն արբշիռ տաք հողին հոտեն
Մութ գոմերեն դուրս կարկառուն վիզով՝
Աղջկան դեմքին, գոհ, կպոռոչեն։

Բայց Ան կխթե, կուտա կռուփներ
Անոնց՝ որոնք ծույլ կհորանջեն դեռ.
Ամպրոպի մ՝հանգույն կանցնի անտառեն.
Եվ աչքերեն բորբ, սերմի աղբյուրներ,
Կտեղա օդին փոշի մ՝ոսկեղեն,
Հովերուն մեջ՝ երգ, սրտերուն մեջ՝ սեր։

Կոճղեզներուն մեջ սրտուկներուն
Կմղե ավշի մ՝ալիքը մնչուն.
Ցճեղքե ամեն պտուկ, բուն, դժնիկ,
Ոստերուն ծիլ ծիլ վառելով բուծին.
Եվ իր շունչին տակ, զեփյուռ անդրանիկ,
Թուփեր կխնկեն, կծաղկի նռին։

Կլայննա՜ կապույտն.— ամպեր կաթնորակ,
Իբրև կարավան մ՝ուղտերու ճերմակ
Կերթան տար աշխարհ, դանդաղ, լրջահոն,
Ու երբ կմնա երկինքն ազատ՝ Ան
Կլեցնե բյուր ծիծեռնակներ հոն,—
Օրհներգու մոգերն իր արարչության։

Հետո խոնջ, մխած իր սև մազերուն
Վարդ մը, առջինե՛կը դեռ վարդերուն,
Կերթա.— Փութալով մարգին մեջե ճոխ,
Հոն վարը հանդարտ ծաղկած նշիի
Մը լայն շուքին տակ լուռ մունջ երազող
Բանաստեղծի մ՝հուր գիրկը կհանգչի։—

ՊԱՏՎԵՐ

Ահա քղամիդդ ըզգեցար, և ճամփորդի ցուպդ առիր.
Կբաբախե սիրտդ արդեն հայրենիքի կարոտեն։
Քանի մ՝օրեն պիտի մեր հողն համբուրես սիրալիր.
Պիտ համբուրես հարսնացող քույրդ իր անեղծ նարոտեն։

Ընկե՛ր, պատվեր մը ունիմ քու հոգիիդ հանձնելու.
Հայրենակոխ ոտքերուդ կապելու սիրտ մը ունիմ.—
Ճամփուդ վրա, Ալիսի ջուրերուն մոտ այցելու,
Ուռինազարդ գյուղ մը կա. նե՛րս մտիր. ան գյուղն է իմ։

Տղեկ մ'ուշիմ, և բոբիկ, առաջնորդե պիտի քեզ
Տունս հայրենի՝ շինված ջինջ զով առվակի մ'եզերքին,
Որուն քիվին կմնչեն աղավնիներ տարփակեզ,
Եվ պատերուն երկայնքին վառ կակաչներ կծաղկին։

Գուցե գտնես դռան առջև մայրս ըզբաղած կկոցին,
Եվ քովը մեր ծեր կատուն գաղջ արևին տակ պառկած.
Կամ պարտեզն հոգ կտանի ան մեղվաշատ փեթկնոցին,
Մեղր շինելու օրինակ՝ տալով իր սիրտն անկասկած։

Ըսե՛ կնկանն այդ դողդոջ, եղած արդեն մոխրագեհ,
Որ իր պանդուխտ զավակե՞ն կուգաս՝ զոր ան կպաշտե,
Եվ մտիր տունս հայրենի, լվա՛ ճակատդ արփակեզ,
Ուղևորի քու այդ հին փոշոտ թիկնոցդ թոթվե։

Նստե տոհմիկ սեղանին առջև շատոնց ամայի...
Սիրակաթ մայրս քեզի պիտ բերե թա՛ն, լավաշ հաց,
Եվ պղպջջուն հին գինին, որ միշտ զվարթ կնայի
Կանանչ կուժեն՝ մեր հզոր աբևուն տակ թրծված։

Երբ որ ճամփուն տաժանքեն բուժի հոգիդ հեղձուցիկ՝
Բա՛ց տարերկրիկ հուշերուդ ծրարն, որ քու ճոխ գանձն է,
Եվ նամակն այս, զոր կդնեմ գոտիիդ մեջ ավասիկ
Պանդուխտ օրերս արցունքին շիթովն համրող մո՛րս հանձնե։

Հանձնե մորս իմ և ըսե, որ օրհնե զայն իր ձեռքով,
Զայն թող օծե իր աչքին արտասուներովն աղոթկեր.
Եվ գլխուն սև քող առնե, բայց սիրտն առնե թող կարով.
Չի, ընկե՛ր, այդ նամակին մեջ կարմիր Ուխտս եմ գրեր։

ԿՌՎԻ ԵՐԹ

Երթա՛նք, երթա՛նք, Հայուհի՛,
Դու, ո՛վ արծվիկ, հեղեղատին բոմբյունով
Լեռան կողին օրորերգված և մեծցած,
Երթանք արդար բախումին։
Անդի՛ն անդի՛ն կմորթեն
Կյանքն արտին մեջ, և գաղափարը՝ գանգին.
Դեռ արևուն շողը սերմին չհասած՝
Անդին անդին կմորթեն։
Ո՛վ սևաչվի, ավելի բորբ սիրով քեզ
Պիտի սիրեմ եթե մեկտեղ տրոփեն
Քու զամբիկդ, իմ խարստիս։
Կկոցը թո՛ղ, որուն շուչող որորդներ
Ներշնչեցին քեզ երգն հանդարտ սրտերու.
Ալ թո՛ղ երդիքն, որուն վրա
Կուռճանայիր գարնան արձակ հովերեն,
Մերթ ըլլալով սրտաթունդ
Վառյակի մ'հեգ ճվոցեն՝
Զոր ցինն արտին մեջ կտցահար կխեղդեր։

Հիշե՛ ան լեռն՝ ուր քեզ առջի հեղ տեսա՛
Նախ վարդի թուփ կարծելով,
Մենք գիշերվան մեջ անկե վար պիտ իջնենք
Նժույգն հեծած, զուգահետ,
Խավարակուռ դաշտին մեջ
Դաշույնիդ ցուցտ փայլին հետ, ո՛վ մարտկուհիս,
Շանթերն աչքիդ ցայտած վրեժի երկնքեդ՝
Ռազմի ճամփան պիտ ցույց տան։
Մազերդ արձակ պիտ նետես ուսերուդ՝
Թողլով որ գոռ մրրիկն անոնց մեջ երգե
Բարբարոս երգը բնության։
Եվ երբ ասա՛նկ ընթանանք,
Երբ նժույգիդ ամեն մեկ խրոխտ ուստումին
Մկանունքներդ ցունցերեն զորեղնան;
Երբ այն ծաղիկն, որ լանջքիդ վրա պիտ՝ բուրեր՝

Սմբակի տակ ճմլվի,
Ես այն ատեն գգվանքի տեղ փափկասուն
Պիտի դիմեմ փոթորկատիպ, կորովի,
Եվ մեղրածոր համբույրի՞դ։
Ի՞նչ, երբ տեսար գրասեղանիս միշտ առջև
Այս իմ մռայլ հոգիս, ո՜վ կույս, կարծեցիր,
Թե պիտի հե՞ղգ մնա միշտ.
Ի՞նչ, կարծեցիր, թե չե՞մ կրնար ես ընել
Գրիչս դաշույն, և կաղամարս՝ կարմիր
Սիրտը գազան ոսոխին։
Ես շատ, շա՜տ լավ կրնամ Երազը փոխել,
Մերկացնելով իր զնփյուռե ըզգեստեն՝
Աստղեր ցնցող մրրիկն անոր հագցնել։—
Երբ որ անդին միշտ կուլան՝
Զի կմեռնին, ու կմեռնին զի կուլան՝
Ինձմե հեռո՜ւ թուղթ և գիրք.
Դանտեն բոցին ես կնետեմ,
Գերեզմաննոց կնետեմ ես
Դուրյանն՝ որ այնքան ժամանակ սիրեցի։

Աղվո՜ր աղջիկ, ուրիշներու արցունքին
Գիտե՞ս թե որչափ աշխարհս է անտարբեր.
Մենք իր քունով չնիրհենք,—
Իր վերմակին տակ՝ տուփոտ՝
Աստղիկն անուշ կբոզանա, ու լլկված
Թեմիսը հոն նոր Բագոսներ կծնի։

Բզիկ-բզիկ, արյունլվա,
Հոն վարը մեզ կսպասեն.
Ես կապարճիս մեջ դնելու չմոռցա
Հրաշեկ շանթերը Արեսի երկընքին.
Հիմա սիրո նայվածքե մ'իսկ ուժեղ եմ,
Եվ անհողդողդ՝ ճակատագրեն ավելի՝
Քանի որ կո՜ւյսն է ընկերս,
Ու սերն հրաթև ոհվիրաս։
Գու, ո՜վ վարդ կույս, հոն լափող բոց պիտ՝ ըլլաս.
Գու, ո՜վ տատրակ, կարշնեղ արծիվ պիտ՝ ըլլաս.

Քանի որ այրն է ընկերդ,
Ու գաղափարն ոհվիրադ։—
Ես թերևս հոն պիտի մեռնիմ— իցի՞վ թե—
Երկա՞ր ատեն բաղձացի
Արյունն ինձի վերմակ ընել, բարձ ընել
Կողը ձիուս՝ ինկած վերքի խրխինջով։
Մեռցնելե վերջ մեռնիլ
Երկար ատեն բաղձացի։

Լուսնին վկա նայվածքին տակ քանի մ'հեղ
Լեցնելե վերջ ոսոխին արյունով
Մեծ սաղավարտը Հայկին՝
Հոգ չէ թե ա՜յսպես իյնամ.
Երբ օր մ'հոգիս լայնախոց
Հայրենական հողին մեջե արթնցած
Պիտի տեսնե որբն հաց և հագն՝ ապահով,
Մշակն անվախ արտին մեջ, արտն՝ անավեր,
Կյանքն ազատ, ազատությունն՝ հառաջադեմ,
Հոգ չէ թե ա՜յսպես իյնամ.—
Գիտեմ որ իմ շիրմիս քով
Պիտի երբեք օձ չսողա, պիտի միշտ
Կապույտ մնա անմոռուկդ, ո՜վ Հայուհիս,
Եվ հաղթական առյուծ մ'հոն թաթը դրած
Բորենիի մը կուրծքին
Աստղերն ի վեր, լիաթոք,
Պիտի հավետ մռնչե՜...։

ԱՐԾԻՎՆԵՐՈՒ ԿԱՐԱՎԱՆԸ

Է կարավանն արծիվներու. կճախրե
Աշտանակված գաղափարի քաջերեն։
Շառաչ մը գոռ թրռիչքի
Կճեղքե սև ամպերն ու լայն կբանա

Կապույտ ճամփա մը ազատ։
Ակնկառույց կդիմեն
Նպատակին՝ իբրև լեռան մ՚ադամանդ։
Վեհ հոգիներ են անոնք,
Ռազմիկ վեհ հոգիներ.
Անոնք հազար գարուններէ ավելի
Են գեղեցիկ և կարող։
Իրենց աչքին մեջ՝ Արեսի՛ աւարուշան,
Երիտասարդ կյանքը առույգ կժպտի։
Սիրողնե՛ր են. և սե՛րն իրենց սովրեցուց
Ըսպանությունն ըստեղծիչ.
Եվ այսպես խրոխտ ու ազատ,
Վարն ետևին թողուցած
Աղաչավոր մայրեր, հարսեր արցունքոտ,
Կերթա՞ն, կերթա՞ն կապույտին մեջ լողալով.
Արծիվներուն լայն թռիչքի բախյունեն
Աստղերը շեկ կարծարծին.
Եվ անոնց դուժ կռինչներեն, վհասույզ,
Մռայլ տարմերն ագռավներուն կթաքչին,
Եվ ռազմիկներն արքշիռ, սարսռուն (ավելի
Գուցե զիրենք Աստուծո մոտ ըզգալեն)
Շարան շարան կսուրհան.
Կըմպեն շիթ շիթ կապույտեն՝
Իբր ան ըլլար բանաստեղծի մը հոգին.
Ամպերեն դուրս կփետեն
Կայծակներն հուր և անոնցմով կպսակեն
Ճաճանչավուխտ ճակատնին։
Իրենց արյան մեջ կխառնեն մրրիկներ.
Կըլլան բնություն և վրիժագոռ աղոթքով
— Ըմբոստներու շարական—
Աստված իրենց գանգերուն մեջ կբանտեն։

Հառա՞ջ, հառա՞ջ։— Բայց կար՚ վանն ա՛լ կկենա
Սա ժայռերուն կարմիր, սա սև ժայռերուն։

Կելլե գաղջ հոտ մ՚արյունի՝
Սոթրիններու բուրումներեն՝ հաղթական.

Կբարձրանա հովիտներեն խեղդուկ լաց
Մ՚որուն մեջ լա՛վ կզգացվի
Մարդու հոգին կապտված՝ նույնիսկ, ավա՛ղ,
Արտասվելու մեծ բարիքեն կենակից։—
Հոն կար՚ վանն ալ կկենա։
Եվ արծիվները ճերմակ
Բաբախելով թևերնին՝
Կտուցներով ժայռերը կուռ կծեծեն,
Եվ ռազմիկներն, ընձառյուծներ դարանած,
Ըսպասելով ահեղաշունչ վայրկյանին
Լեռան կողին կմոլեգնին, կսպառնան,
Մինչդեռ անդին գիշերվան մեջ, կասկածոտ,
Լուսնին Մաճիկը ցրտադող սարսափով
Տավրոսին վրա կդեգնի։

ՀԱՑՐԵՆԻ ԼԵՌՆԵՐ

Լեռնե՛ր, լեռնե՛ր հայրենի, անմահական գլխոներ՝
Որոնց արփին կդնե թագ և մշուշն ալ պատմուճան.
Լեռներ, ստուե ծոցերով, գլուխներով ձյունահեր՝
Ջոր կօծանե լուսնկան։

Ձեր ճակատները կույս են լոկ Աստուծմե համբուրված,
Թխակարկառ ուսերնիդ կլվա կապույտն երկնքին.
Վիհերու մեջ, ուր լիճեր կքնանան մենակյաց.
Աստղերը սոսկ կծաղկին։

Քարայրներեն՝ որոնց հովը գայլի պես կոռնա՝
Գետեր բխած գարնան դեմ կգահավիժին փրփրահեր,
Եվ կերթան ձեր ոտքերուն սփռել գորգեր միշտ ծաղկյա՝
Ուր կնստին հովիվներ։

Կսողա շանթն օձի պես ձեր գլխուն շուրջ կրանիտե,
Որմե բռնկած կմխան եղևնիներ օրերով.

Արծիվն այդտեղ աստղերեն միայն իր կուտը կուտե,
Կխրմե ջուրն ամպեն զով։

Օրհնյա՜լ ըլլաք, ո՜վ լեռներ, օրորոցներ ադամանդ,
Ուր մեր պապերն առջի հեղ իրենց աչքերը բացին,
Եվ վագրի մորթ մ'ուսերնուն՝ իշան դաշտերն արգավանդ,
Կրթեցին եզը՝ լուծին։

Փայլակնաբիբ ամպրոպին մեջե— երկնի գոռ գազան—
Մեր արքաներն որսալու ելան փախչող սատրապներ.
Իրենց ձիուն խրխինջեն՝ անդունդներուն մեջ սուզան
Ժայռին մրափող վիշապներ։

Օրհնյա՜լ ըլլաք դուք՝ որ տվիք գրկերը ձեր շաղածին
Անակորդվույն, Տրդատին պատսպարան և անդույր,
Որոնք քաշված այրերու մեջ՝ լուսնին տակ կարդացին
Ժամագրքեր խնկաբույր։

Դո՜ւք որ տեսաք փապարի մեջ կույսերու ոսկրներ՝
Զոր հետո լույս մ'երկնային փոխակերպեց շուշանի,
Դո՜ւք որոնց մեջ ճգնազգեստ քուրձերով են վախճաներ
Արքաներ նման տիտանի։—

Արծաթն, ոսկի՜ն կեռան ձեր արգանդներուն մեջ հրագանձ,
Որոնցով հայ տիկիններն իրենց զարդեր շինեցին,
Հայրապետներն ըսկիհներ, և ասպետներն հերապանծ
Նետերն իրենց մահածին։

Ձեր մայրենի ծոցին մեջ կաթը մարմարն է առատ՝
Զոր կթեցին մեր հայրերն օր մը ձեռքով ժրաջան,
Ու կերտեցին աստվածներն ու բագիններն անարատ,
Ուր տատրակներ մորթվեցան։

Կառույց Երվանդ իր քաղաքն ու Երվաղն ալ իր մեհյանն.
Հսկա սյուներ խոյագլուխ Մասիսի պես շողացին,
Ու ձեր մարմարն արփացոլ հագավ ձևերը տիտան
Մեր պապերուն հանճարին։

Արշակ կապեց կամուրջներ Եփրատին վրա դիվաձայն՝
Որոնք այդ խեռ դիցուհվույն ճապուկ մեջքը պարուրող
Եղան գոտի ալեսանձ՝ որոնցմե վար կախվեցան
Մարմենիներ աղամող։

Քանդակվեցան ձեր կուճով դամբարաններն Անիի
Եվ սափորները՝ լեցուն Արշակունի աճյունով՝
Որոնց մեջե ծլեցավ իրրև ընձյուղ կաղնիի
Բագրատունին մարտախռով։

Լեռնե՜ր, լեռնե՜ր, սև՜ լեռներ, այլևս ավա՜ղ թափուր եք
Շողապսակ փառքերեն, հերոսներեն հինօրյա,
Դիոսի տեղ ամպ մ'այսօր՝ զերդ քողն այրի կնոջ մ'հեգ՝
Կնստի ձեր գլխուն վրա։

Թող ձե՛զ դառնա նոր Սերունդն, ըլլա դրացի արևուն.
Իրեն դղյակ թող ընե իր հայրերուն Օրորանն.
Արծվի թևերն իր վրա՛, իր վրա՛ երկինքը անհուն.
Թող շանթերո՛վ զինվի ան։

Փրկությունն ա՛լ ձեր մեջ է, ձեր փապերուն մեջ մթին,
Սեպերուն վրա՛ է՝ ուր այծն ելած վիհին կնայի,
Հոտ ջրվեժներն՝ որոնց քով վարդենիներ կծաղկին՝
Կուտան հրավեր պայքարի։

Թող ձե՛զ դառնա նոր Սերունդն, աստղահամարզ ըլլա զորք,
Թշնամվույն դեմ բերդ եք դուք, դյուցազներու՝ ապարանք.
Լոկ քաջերո՛ւն համար ձեր ժայռերը լալ, ջրողորկ,
Կըլլան գահեր ոսկեզանգ։

Եվ թող տրոփեն վեհորեն լոկ քաջերո՛ւն ոտքին տակ
Հրաբուխներն ըսքողված, ձեր սրտերն այդ ծծմբաեռ.
Եվ վաղը թող շինվին ձեր մարմարներեն ըսպիտակ
Հերոսներու արձաններ։

ԱՌԵՎԱՆԳԻՉԸ

Լերկակարկառ և ամայի լեռան վրա
Ինչպես արծիվը՝ օձին,
Հանդիպեցա ես անոր
Եվ, ճապոորեն, ձեռքով ուսն իր պրկեցի.
Գլխուս վերև նախանձեն
Անգղը երեք հեղ թևերն իր բաբախեց։
Մինչդեռ պատվեն զորացած
Բազուկիս տակ լիրը թշնամիս դեռ հոխորտ
Կգալարվեր, ես բարկասաստ մռնչեցի.
— «Գանգդ իբրև գուշ կչարդեմ.
Ե՛տ, ե՛տ դարձուր հափափած կույսդ աչեղ։»—
— «Այտերն առած՝ ծնոտը քեզ կբերեմ։»—
Ընդվզեցավ։ Ըզգացի
Որ ճակատես վեր խուժեցին բարկության
Վառ երակներս ինչպես հալած կայծակներ,
Եվ բարկասաստ մռնչեցի.
— «Ամեն մեկ ո՛սկրդ զատ զատ շան կնետեմ.
Ե՛տ, ե՛տ դարձուր հափափած կույսդ աչեղ
Զոր սիրտս արբշիռ կցանկա։»—
— «Տո՛ւր, դաշույնս իմ սիրտդ իրեն կտանի։»—
Ընդվզեցավ։ Մոլեցա։
Եվ հակընդդեմ իբրև երկու կայծակներ
Մեր դաշույններն ընդհարեցան բոցաթափ.
Մաքառեցանք։— Սուրբ է, սո՛ւրբ
Մաքառումն այն՝ ուրկե ժայթքած արյունն հիր
Արդարության ոտքերն աղվոր կլվա։—
Մեր կրունկներուն տակ թնդաց
Լեռն իր բոլոր ընդերքներուն խորերեն.
Մաքառեցանք.— ձորե ժայռ,
Ժայռերե ձոր ելևէջներ գործեցինք։
Մեր սրտերուն խորը ամպրոպն էր նստած
Եվ բոունցքներուն վրա՝ շանթ։—
Դեմքն իր արյամբ ներկեցի՝
Հեղելով դուրս կարմրությունն իր ցոուկին՝

Ուր, ո՛վ Սատան, գուցե հարվածս ըսպաննեց
Համբույր մ՝երկա՛ր լլկումներով ըստացված։
Զայն մղեցի, մղեցի,
Ըսպասելով կեր ընել
Տարտարոսի մ՝ավելի խոր։— Գլխուս վրա,
Արեգակին շողերուն մեջ քողարկված
Հոգին կույսի մ՝անծանոթ
Ուժերուս ուժ կբաբդեր,
Երակներուս մեջ կծորեր, շիթ առ շիթ,
Քրտինքս արյան վերածած։
Զայն մղեցի, մղեցի զայն։ Ձեռքերնեն՝
Թուն հարվածի մը տակ, իբրև ընդոստ իժ,
Վիհ մը դաշույնն իր կլլեց։
— «Ա՛յ, քեզ անե՞ծք...»— մրմռաց.
Եվ մեկ զարկիս տակ կարշնեղ
Սահմռտկելով ինչպես կրոնք մը խարդախ
Մութ անդունդի մ՝արգանդին մեջ, ա՛լ անդարձ,
Թավալգլոր, արյունոտ, խոր, վիժեցա՛վ...

Հոն վարը.— ես լսեցի.—
Զիս օրհնեցին.— ես լսեցի.— վա՛ղբ հան։
Հայուհիներ հափափված՝
Որոնց համար գեղեցկությունը եղավ
Մագնիսը պիղծ ոճիրին,
Քրքում կույսեր, վարդ կույսեր՝
Որոնք բռնի տոփանքներու ենթարկված
Տեսան՝ որ ծոցն իրենց փեթակը դարձավ
Պիծակներու թունալից,
Շուշանազգեստ նոր հարսեր՝
Որոնց ճերմակ քողերն եղան պատանքներ
Կուսաժպիտ երազներու, և կիներ,
Տժգույն աստղեր ճահիճի մեջ ցոլացած,
Կիներ գերված, կիներ խեղճ,
Թաքստոցի, քարայրներու ներքևեն,
Հավտարմության հավտարիմ,
Անձնասպանի երազներով՝ դալկահար,

Եվ, ո՜վ Սարսափ, պղծված՝
Մեր պապերուն նշխարներուն վրա քինոտ,
Շղթայված էգ առյուծներ,
Ցտժոռ, ահեղ, մռնչելով զի՛ս օրհնեցին...

ՎԱՀԱԳՆ

Ո՜վ աստվածն իմ հայրերուս,
Կմոտենամ ահա բազնիդ, և ինձ հետ
Իր պախուրցեն քաշելով
Կբերեմ ցուլ մ'հովիտներեն Տարոնի։
Տե՛ս, պարարտ է զոհս իմին.—
Երբուծին մեջ կաթնաթույր
Հողին ամբողջ կյանքը կա.
Պարանոցն իր մսուրն ի՛նչ է չի՛ գիտեր.
Ան սնած է արոտներուն մեջ ազատ.
Ու ակռաներն իր լվացված են միայն
Հացյաց Դրախտի աղբյուրին մեջ Նվիրական։
Երբ կհնա՝ իր հզոր շունչն առջևեդ
Կվանե հողն ու ավազները գետնեն,
Եվ կուգա սև ռունգերեն հոտը ամբողջ
Դաշտային թաց կանաչին։
Տե՛ս, զոհս իմին գեղեցիկ է ու վսեմ.—
Գլխուն վրա կոր եղջյուրները խարտյաշ
Փառքի պսակն իր կըլլան.
Կբորբոքին աչքերուն մեջ ամեհի
Հզորության սև խունկեր.
Եվ թավամազ իր ագին
Իրրև լորտու կողերուն շուրջն հարասող
Գոռեխներեն, բոռերեն
Մարմինն անբի՛ծ, մարմինը սո՛ւրբ կպահե։
Ո՜վ դու Վահագն, աստվածահա՛յր զորության,
Ո՜վ Տիգրանի սերմին մեջ

Դու մարդացած Արեգակ,
Լվա՛ հոգիս, ճառագայթով մը օծե
Շրթունքներս այս, զի ավասիկ կհամբուրեմ
Բագինդ սուրբ, և առած մուրճը ահեղ
Ըսպասարկու հաղթ բազուկով կջարդեմ
Ցուլիս ճակատն և իր արյունն հորդավեժ
Կնվիրեմ ծունկերուդ։
...Արդեն ահա կմխա
Նվիրական խարույկն առջևդ ճարճատուն.
Կշրջի բոցն ոստերուն մեջ ձիթենվո,
Եվ գիերուն հալած խեժեն արբեցած
Կոստնու ուղիղ, և կերգե
Վերափոխումն իրերուն ջինջ հոգիին։
Առ.— արյունոտ ասոնք կողերն են զոհիս.
Ցոուկն է այս, ասոնք ճարպոտ զիստերն են.
Ահա՛ ըղեղն, որ ուղղեց բնազդն ու շնչեց
Եղջյուրներուն խեռուիթյուն,
Ահա ջերմ սիրտն, որ տակավին կսրսփա,
Եվ իր լեղին՝ զոր ազդրին վրա կդնեմ
Հույսով մ'որ ան պիտ տոչորի ամբողջ.— ա՛ռ։—
Եվ բոցն, որ արդ նետած պսակն իր ծուխի
Վճիտորեն կբարձրանա, կտանի
Ցուլը ճենճեր առ ճենճեր
Վերն, ապարանքդ երկնային խնկելու.
Ո՜վ դու Հզոր, ընդունե
Նվերներս իմ՝ զոր մաքրափայլ սափորով
Կրակին վրա կհեղում։
Ահա գինին.— պինչերդ բա՛ց ու շնչե
Քաղցրաբույր հոտն և հաշտվե՝
Աստվածային գինովությամբ մը զվարթ՝
Այս օրվան քու Ժողովուրդիդ հետ կրոնափոխ։
Ահա հոման.— առջևդ զայն կթափեմ
Մաքո՜ւր, անո՜ւշ և առա՜տ,
Ինչպես թափեց ծառն իր կուրծքեն վիրավոր
Իր յոթն անգամ լվացված
Թակուլկներուս մեջ շքեղ.
Զայն ընդունե, համարե

Ինչպես արյունն երեխայի մը՝ անմեղ,
Ինչպես քրտինքն հղիներու՝ թանկագին։

Ո՜վ վեհ, գո՞հ ես, տվի քեզի ի՞նչ որ կար
Խրճիթիս մեջ և հոգիիս,— քեզ տվի
Թշնամին ի՞նչ որ մոռցած էր այս օրվան
Այրիացած Աշտիշատիդ մեջ ամա։
Արդ մեր տոհմին իբրև վերջին Վահունի
Բազնիդ առջև ծունկի կուգամ երկյուղած,
Կհամբուրեմ հողն ուր քու
Հոգիեդ մաս մ՝արմատ կուտա շոճերուն,
Եվ վերցուցած քեզի՜, քեզի՜ կարկառուն
Սա սոթոված թևերս՝ որոնց արմունկեն
Ցուլին արյունը տակավին կկաթի,
Ո՜վ դու Վահագն, ո՜վ աստվածն իմ հայրերուս,
Կաղոթե՜մ ես... կաղոթե՜մ...

Ուժի՜ն համար, կրոնքի՜ն համար բազուկիդ,
Որով դու օր մը պատռեցիր բերանները
Վիշապներու, երկնքին մեջ սփռեցիր,
Ջերդ արևու հունտեր, աստղերն Հարդգողին.
Ուժի՜ն համար, որ թռիչն է և հոգին
Արարչության անվախճան,
Որուն անհուն համբույրին տակ կծնի
Աշխարհներեն մաս մը ծաղիկ, մաս մը բոց,
Կապրի սկզբունքն Անմահության հյուլին մեջ
Եվ ըղեղին և կամքին,
Որուն հզոր մատին տակ
Կճեղքվին սերմերն, ավիշն երգելով
Կաղնիներուն մինչև գագաթը կելլև.
Ուժի՜ն համար, որ կլեցնե՞ սոխինքներ,
Կօրորե մեր օրրանն ու մեզ, մահեն վերջ,
Մինչև աստղերը կտանի, ու մինչև
Երկրորդ կյանքի մ՝արարչագործ պատճառին,
Որ կկանգնե Ազգ մ՝ ինչպես խումբ մ՝ առյուծի,
Բազուկդ անոր բազուկին մեջ կհեղու,
Եվ զերդ հրեղեն վարազահավ՝ իր լուսեղ

Թռիչներուն ամփոփման տակ կթխսե
Մեր մայրերուն ծոցին մեջ
Դյուցազունն ե՜ր, հանճարնե՜ր,
Այդ սուրբ Ուժին համար կըսեմ՝ որուն դու
Իմացական աղբերակն ես հորդահոս,
Ո՜վ դու Վահագն,— ահա քեզի կարկառած
Բազուկներս իմ արյունոտ
Կաղոթե՜մ ես... կաղոթեմ...

ՊԱՊՍ

Ամեռային հրապույրով ծեր մ՝է շքեղ,
Մերկացուցած են տարիները մեջտեղ
Իր գանգին
Իր լուսափայլ մազերը շուրջ կպատեն
Անոր պսակ մ՝որ կհասնի ճակատեն
Ծոծրակին։

Ջինջ պսակն այդ կարծես դափնի մ՝է դժգույն
Սնած ամենե՜ն ճերմակ շողովն արևուն.
Ան չունի
Բիծերն արյան կայսերական թագի վես.
Մաքուր կյանքի մ՝արտաբխումն է, ինչպես
Ձյունն երկնի։

Ճակատին վրա խորշոմներ ծալ-ծալ կիջնեն.—
Մինչև անոր թավ-թավ հոնքերը գլխեն
Կշարվին
Շատ մ՝աշխարհներ, շատ մ՝աշխարհներ զանազան
Երկար կյանքի մը սյուքերուն և որոտման,
Աշունին։

Կորաքամակ և հեքոտ ան կքալե.
Ա՛լ չի տեսներ երկինքն. երկինքը մեջն է

Հոգվույն տաք
Ու երկիրս ալ աչքին ներքև ըղձական.—
Նպատակն է գլխուն վրա, իսկ ճամփան
Ոտքին տակ։

Երբեմն իր հետ կպտտինք սիրասույզ,
Եղած ես իր խոնջած մարմնույն, ինքն՝ հոգվույս
Հենացուպ.
Ու ան վրաս ձմեռ, գարուն ես իր տակ,
Կհառաչենք միշտ իրարու հակառակ,
Միշտ ալ հուպ։

Երբ որ իրեն այսպես կուտամ թիկունքն իմ,
Կզգամ, թե վրաս արմատն ամբողջ կտանիմ
Մեր ցեղին։
Կզգամ եղած փթթուն խեչակ մ'ուռենի՝
Որ հազիվ հազ ա՛լ կվերցնե հայրենի
Դռան կաղնին։

Ո՜հ, որքա՜ն ինձ քաղցր է ըլլալ միշտ իր քով,
Զինքը դիտել, երբ Խորհուրդին մեջ հոգվով
Կսուզի,
Լսել, երբ ուշ ատեն նստած մեր բակին
Ջրհորին քով՝ Աստուծո հետ առանձին
Կխոսի։

Մտածումներս շատ անգամ կմագլեն
Դեպ ի վե՛ր իր տարիներուն աստղերեն,
Բայց չնչին
Թիթեռնիկս իմ չհասած իր արևուն՝
Կուժասպառի.— թերթելեն գիրքն իր անհուն՝
Կխոնջիմ։—

Մերթ կպատմե, թե մղած է ի՛նչ պայքար
Մարդուն դեմ նենգ և այս հողին դեմ համառ,
Եվ զերդ հին

Զինվոր մ'որ պարծ՝ կթվե իր ըսպիներ,
Ան ցույց կուտա իր կնճիռներն ու մազեր
Զյունային։

Ես երկյուղած կհամբուրեմ մազերն այդ,
Որոնք այսօր իրենց ներքև անարատ
Կսքողեն
Այլևս առանց մրրկի օվկիան մ'ամփոփված,
Եվ շուշաններն են բարության՝ մնացած
Անցյալեն։

Եվ կդիպչի ճակատս իմ իր ճակատին
Եվ անդամներս անգիտակից կսարսռին,
Չի ընդդեմ
Հանդգնորեն կհանեմ խորշս իր անհունին,
Եվ տասնևինս ութսունին հետ միասին
Կչափե՜մ...

ԱՌԱՔՅԱԼԸ

Ա

Պիտի մեկնի։ Ուսին մաղախ մը լեցուն
Իր հոր այգվույն թզերով.
Քեմուխտ գոտին կպնդե մի՛ջքն առնական
Կրոնքի մը պես ջերմեռանդ.
Տրեխներն հագա՜ծ է և ձեռքին մեջ ունի
Յուպը կտրած թմբենիե մը աղվոր.—
Հին մարգարե մը ասա՛նք
Պիտի Սիոն ճամփորդեր։
Պիտի մեկնի։ Չի գթար
Նշանածի մ'որ ցորենին դեզին վրա
Ինկած կուլա մանգաղը դեռ ձեռքին մեջ.

Ոչ ալ հիվանդ մայրը փաթթված իր վզին
Աղերսներով զինքը կրնա ողոքել։
Գաղափարն իր վճռի թևե՛ր է հագած.
Եվ իր հավատքն աչքերուն մեջ երկնագույն,
Աստղի մը պես հեռավոր,
Անհունով լի և անհունի խոստումով,
Հանդարտածո՞ւփ կժպտի։
Ու ան կ՝երթա...

Կանցնի լեռներն ամպածրար
Եվ հեռուեն մշակներուն կթվի
Թափառող լույս մ՝անդունդներու զարթուցիչ.
Ոտքին տակ մեր հողը հին
Կսարսռա, կխորխոլի, կկլլե
Կարծես թե կեսն արևուն,
Եվ վերածնիչ քիրտովն անոր կթրջի
Իր շրթունքներն, ուր կակաչներ կբացվին։
Ան կնստի գիշերով
Խարույկին շուրջն հովիվներու հետ բարի
Ու անոնց պարզ հոգիներուն կբանա,
Իբրև ուրիշ խարույկներ,
Հին փառքերն այդ մեր լեռներուն սգավոր.
Կհուզե այդ Երկնքի մոտ մարդերուն
Արծվային բնազդումներն, ու խոսքն իր
Կտուցն անոնց կսրե։
Երբ կմեկնի՝ զոռ գամփռները հոտին
Դարվարին վրա կհալածեն զինքն, ու սուրբ
Մաս մ՝ըզգեստեն կպատռեն։—

Բ

Կալերուն մեջ, կամին վրա մերթ նստած
Աշխատանքներ կմեղմե,
Եվ մերթ շուքին տակ որայի դեղերուն
Ան կժողվե շուրջն իր տղաներ ջլեթաց,
Կիներ հևքոտ, այրեր, որոնց կոպերուն

Հարդի փոշին կմատնե դառն աշխատանք,
Ու կխոսի.— «Ո՛վ Հոգնածներ, լսեցեք,
Ազատության արեգակին տակ միայն
Քրտինքը ձեր կսերմանե ազամանգ.
Եվ մանգաղին տակ հունձքը ձեր կփոխվի
Ճաճանչներու.— Օ՛ն, լսեցեք թե ի՛նչ բան
Ակոսաբեկ խոփերուն տակ ձեր՝ կըսեն
Նշխարներն հաղթ մեր պապերուն.
Ի՛նչ Աստղի, ի՛նչ Հավատքի ձեզ կկանչեն,
Որուն լուսեղ սեղանին վրա վաղը դուք
Պիտի զոհող ըլլաք և զոհ նվիրական.
Եվ ձեր կամերը կայծքարով զինազարդ
Վաղը քշեք պիտի դուք
Ոսկրներու վրա ոսոխ...
Ո՛վ հոգնածներ, լսեցեք այս, լսեցեք։»—
Կըսե և զերդ խորհրդանիշ ըմբոստման,
Ոսկեհատիկ գարիներու կույտին վրա
Տերութենեն դրված կնիքները տուրքի
Գավազանովն իր կավրե։

Գ

Հետո դարձյա՞լ լեռներ, դարձյա՞լ դարափներ...
Ի՞նչ փույթ, թե դազը ոգնիի փուշերով
Տրեխներն անոր կցելու,
Կամ թե ճամփուն վրա արևն հեղձուցիչ
Սարերուն տակ կչորցնե աղբյուրներն.
Ան կհասնի գյուղերն, և մուտքն իր կըլլա
Անուշաբե՛ր, նման սյուքի մ՝որ կհեզու՝
Բաց դռներեն շինական՝
Համեմն ու խունկը հեռավոր թուփերուն։
Եկեղեցվո գավթին մեջ՝ ուր ամբոխն
Աղոթքեն վերջ կժողվի
Աստուծո մոտ խորհելու իր բախտին վրա՝
Կտեսնվի Ան Առաքյալ և Վհուկ,
Գլուխը փոշոտ, դեմքն արփակեղ, աչքերն հուր

Ճառագայթե ցանց մը կարծես կնետեն
Ամենուն վրա և կգրավեն, կգերեն։
Ան կխոսի և խոսքն իր
Կբուրե մերթ մեռոն և մե՛րթ ալ արյուն.
— «Ո՛վ եղբայրներ, պատրաստ եղեք, զի ահա
Խրմեցին մեր դաշտերն ա՛լ
Արյան հետին կաթիլն Հայկի Երինջին.
Անհունության մեջ մեռավ
Հետին պոչյունն աստղերն ի գութ շարժելով.
Պատրաստ եղեք,— յուրաքանչյուր վիհի մեջ
Այս իրիկուն պիտ կանգնի
Հայրենական ըստվեր մ՝ ու վրեժ պիտ՝ գոչե.
Այն ատեն թող ձեր սրտերուն մեջ ըլլա
Ցեղին կորովն ու ցեղին թույնն արթնցած.
Ձեր հյուղակները փոխվին
Մարտկոցներու, և մամերն ալ երգելով
Հենասանտրին առջև նստած թող հյուսեն
Ձեզ կա՛մ դրոշա՛կ, կա՛մ պատա՛նք։
Պատրա՛ստ եղեք Արշալույսին՝ որ կուգա
Ձեր կողքին վերքը լվալ.
Պատրա՛ստ Խաչին, Ջիթենիին, Դափնիին։»—
Այսպես կըսե, երբ կզգա
Կրունկներուն լուսաբուխ
Ոտիկանի կամ լրտեսի մը անարգ
Գելոցներուն սեղմումը ցուրտ...

Դ

Ո՛հ, ի՞նչ փույթ
Թե իր սուրբի անբիծ մարմինը կերթա
Դառն համա՛ր տալու հոգվույն գործերուն,
Թե կտանի թշնամին
Վաստակաբեկ իր միսին վրա հաղթանակ,
Ի՞նչ փույթ թե բանտը խավար
Ծարավ լույսի, լույս աչքերուն կխմե,
Թե կթունե տամկությունն

Իր ողնաձուծն և խոռոչները թոքին,
Ան կմնա հավատքին մեջ՝ աննվա՛ճ,
Վագրերուն պես իր երկրին։
Իսկ եթե օր մ՝ալ ազատի, ու նորեն
Շնչեն ռունդերն հովն հայրենի սարերուն,
Պիտի առնե՝ ապահով՝
Դարձյա՛լ իր ցուպն ու դարձյա՛լ
Վսեմ պաշտո՛նը լույս և բոց սփռելու.
Սակայն, ավա՛ղ, կոշկոճ մարմինը պիտ՝ ա՛լ
Անհունությունն հոգվույն կրնլ չկրնա
Եվ պիտ՝ կոտրի խնձորենի մ՝ինչպես իր
Պտուղներուն ճոխության տակ կորակոր...
Թափառելո՛վ, թափառելո՛վ ընդերկար
Փոշվույն, տապին, անձրևին մեջ երբ դեղնի
Դեմքն ու հոգնին ոսկրներն,
Երբ նոթությունն երակներն իր ցամքեցնե,
Ձերմը թեքե ծունկերն՝ հեղլով ըղեղին
Արհավրալի խուճապներ,
Երբ կուրծքին տակ արթննա
Անգութ հյուծախտն ու ա՛լ խեղդե հույսն հետին,
Հետին ծաղիկն երիտասարդ տարիքին,
Ան պիտ՝ հասնի գուցե, այո՛, պիտ՝ հասնի
Մայրամուտքի մը փպմուն
Գլուխը բաց, ոտքերը բոկ, արյունլվա,
Ձգեստներով փոշելից
Հո՛ն, ուրկե օր մ՝առողջ, տոկուն մեկնած էր...
Բայց, ո՛հ, ոչ մեկն իրեններեն գրկաբաց
Պիտի գա զինքն ողջագուրել ճամփուն վրա.—
Հայրենական տան դուռը բաց պիտ՝ գտնե,
Ջրհորին քովի ուռենի ծառը չորցած,
Բակն ամայի, օջախն ամբո՛ղջ ավերակ...
Ա՜խ, այն ատեն, դողդոջուն,
Ցուպն իր առջևը հողին մեջ պիտ՝ խրե
Ու պիտ՝ նստի, դռան քով,
Գերեզմանին վրա իր մոր (հարդարված
Հոն ո՛վ գիտե որո՛ւ գթոտ ձեռքերով)
Եվ դալկահար շողերուն մեջ իրիկվան,

Մեռելի դեմքն իր կախ ձգած կուրծքն ի վար,
Պիտի հազա՜, պիտի հազա՜ դառնորեն,
Եվ բիբին մեջ արցունքի շիթ մը սառած
Պիտի հատնի՜...

Բայց հայրենի հողին մեջ
Խրած ցուպն իր, Արշալույսին, ըսկսի
Պիտի աղջևն իր՝ ծաղիկնե՛ր աբձակել։

ԴՅՈՒՑԱԶՆԻ ՄԸ ՍՈՒՐԻՆ

Երբ զենքերով թաթաղուն գոտիեդ դուրս քաշես դայն՝
Ամպին ծոցեն սլացող կայծակին պես կփաղփղի։
Երկաթն ի վար ցոլցոլուն կվազե լույս մ'հրահոսան
Նայվածքներուդ տակ արփի։

Անոր մետաղը Վրեժին ճոխ հանքերեն են պեղեր։
Գիհենական հաղթ դարբին մ'է կռեր զայն փոքփոքէջ,
Հետո հսկա հասակովն աստվածաբար ջրդեղեր
Արդարության լույսին մեջ։

Իր փրղոսկրե դաստապանն է ո՞րքան պերճ ու փարթամ.
Շուրջն են հառեր մարգրիտներ արցունքներու պես պայծառ.
Զայն բուռդ հազիվ թե սեղմե՝ աչքերուդ մեջ կիջարդամ
Մահվան վճիռն անաչառ։

Ո՜հ, իր սայրին նըրբավարտ, անեւևո՜ւյթ իր սայրին՝
Որուն վրա ճաճանչն ալ նույնիսկ թառիչ չի՛ կրնար.
Ադամանդն իսկ լուսակուռ, մատածումն իսկ մարդկային
Ան խաչելու ունի հնար։

Շեղբը հետո պաղպաջուն, իր շեղբը մերկ ի ոգու՝
Որուն կարծես կիսակոր կազապարին ձևին մեջ

Լույս մ'է սառեր, աղոտ լույս մ'արյունահեղ կյանքերու
Քերովբեի կովեդ վերջ։

Ես կպաշտե՜մ Սուրդ արգար՝ մահիկին դեմ լուսնային
Ժամերով ծուռ դնող սուրբ հնգիկի մը նման.
Ազատ մարդուն պատասխանն, հովվացուպն է Յահվեին.
Ան ցուրտ լեզո՜ւն է մահվան։

Փայլակնաթափ հարվածն իր՝ թագերուն վրա ոճիրի
Կերգե հանգի՜ստ զոհերուն, գերիներուն ավետիս.
Հին արյունով նոր օրենք դաբերուն վրա կգրե...
Ան հավա՜տքն է իմ սրտիս։

Հերո՜ս ընկեր, մոտեցիր իմ այդ հավատքս պողպատ
Ես քըրմորեն վար կախեմ գոտիեդ այդ կարմրավետ,
Սուրդ կախե՜մ, դրած իր պատյանին մեջ թավշապատ
Համբույրիս հետ իբր ողջերթ...

Դարձյալ քանդել ըսկսան բարբարոսները դժխեմ.
Կացիններուն տակ նորեն կարյունին մեր մարմարներն.—
Հերո՜ս ընկեր, մոտեցիր, մոտեցիր, Սուրդ կախեմ...
Ան ըսպանե թող եղեռն։

Արշալույսին կառքն արդեն կսպասե մեր դռան քով.—
Պետք է մեկնի՜լ.— Սակայն հոն խառնուրդին մեջ հարվածի
Զմոռնաս, որ Սուրիդ վրա իմ ոսկեղեն հերյունով
Ես «Կյանք կամ Մահ» գրեցի։

ՎԻՐԱՎՈՐԸ

Այստեղ ինկավ.— ազատության ճամփուն վրա,
Խոցը կուրծքին, զենքն ափին
Այստեղ ինկավ, երբ հոգնած
Վերջին կաթիլն իր քրտինքին ըսպառեց

Իր վերջին սև գնդակին հետ։ Վերքն է խոր.
Հրաբորբ արյունը՝ ուրախ
Գտած ազատ իր անցքեն
Դուրս կվազե։ Կարմրած ծոցին մեջ մազոտ
Մեզի համար նոր Արշալույս մը կ'եփի։—

Դեռ չէ՛ մեռած.— և եթե վարն՝ ալքին տակ՝
Իպլիսի թուխ բազուկն իրեն կմղե
Մոռացոնքի լայն գերեզման մ'հուպ ընդհուպ,
Իր սուրբ անվանը համար
Մեր սրտերուն մեջ կհյուսվին շանթերով
Անմահության օրոցքներ նոր և կարմիր։
Դեռ չէ՛ մեռած.— վերջին անգամ վեր կառնե
Թխահեր գլուխը բանվորի, հերոսի,
Որուն մեջ բույնը դրավ
Կովկասի վրա աստղերեն հար լույս խմող
Ազատության արծիվը վեհ ու կարշնեղ,
Եվ կնայի, շուրջը կնայի, թե արդյոք
Իր արյունեն նունուֆարներ պիտ՝ ելլե՞ն
Կամ պտի օր մը ծլի՞ն
Հետ բաղեղներ ցախերը սև ընդուլնող։
Կդիտե դրոշն և ծուխն հրագոռ վառոդին՝
Որ կմխա դանգերե դուրս՝ շնչելով
Իր ոունգեն կյանք և գրրգիռ։
Կնայի վերն աշտարակին վրա թառած
Նոթի անգղի մ'աչք աչքի
Եվ կխորհի գուցե տարված իր սրտին
Կամ աղիքին մասերը դե՛պ ի ամպեր,
Դեպ ի աստղերն ու Աստված։
Կպշնու վարն հորիզոնին՝ գտնելով
Ռազմի դաշտին երկինքը շա՛տ մոտ իջած.
Հետո կհառին աչքերն հսկա նոճերուն,
Որոնց թաքուն արմատներն դեպ ի վար,
Որոնք դժնի իշխաններու բռնավոր
Գերեզմաններ կ'ակոսեն։
— Ո՛վ պատուհաս հոգեվարքի — կհոսե
Սև անեծք մ'իր արյանը հետ ֆշշացող։

Վ'անդի՞ն, անդի՞ն կզակ կզակի, հույս հույսի
Թախվող ռազմին, սակրներուն, բռունցքներուն
Եվ բոցափթիթ ռումբերուն մեջ, ո՛վ սարսուռ,
Կանանչ ոստի՞ մը արդյոք,
Աստղի՞ մը նոր որուն շողն հերձ պիտ լայնե
Միրն աշխարհիս և մարդուն,
Բառի՞ մ'հրաթև, Մեսիայի՞ մ'ըսպասված,
Ո՛հ, ո՛վ գիտե.— ան վերջին ցուրտ ղողումով
Հանդարտորեն, անհունորեն կժպտի՞։

Ժպտե՛, ժպտե՛,— ո՛վ եղբայր,
Մեծ՝ ինչպես մեծ է խավարումն արևու,
Սուրբ՝ Նշխարին նման բեկվող.— դե՛հ, ժպտե՛։
Ժամն է, որ քաջ հայ մարտիկներն ա՛լ ժպտին.
Չի մենք իրենց և քու վրեժիդ ի խնդիր,
Մենք, ռամիկ Ուժ գիտակից,
Թարմ բողբոջներ շղթաներու, գերիներ
Ապստամբած՝ որոնց ճակտին տակ այսօր
Իբրև բոց պորտն Ապագային՝ զետեղեց
Աստված իր աստղը փրկիչ,
Մենք բաց կուրծքեր, մազոտ կուրծքեր, սոթտված
Բազուկներ, մե՛նք, սուրբ Գործին
Ընտրվածներ, պաշտվածներ
Գաղափարեն նոր ու լայն.
Մենք, ժողովո՛ւրդ.— պղնձակերտ աստվածներ,
Մենք զինված
Հրացաններով, բահերով,
Եվ մուրճերով, հավատքով,
Դիիդ առչև, կուռ մոլուցքով մը սեցած,
Ավասիկ վեհ, ոտքի՛, ոտքի կեցեր ենք։
Եվ կերդնո՛ւնք քեզ, կերդնո՛ւնք քեզ,
Որ երբ դագաղդ ուղղվի դեպ ի գերեզման՝
Պիտ՝ սալարկեն անցած ճամփան իր ամբողջ
Սուրերը մեր ծանրակիր
Թշնամիին արյունշաղախ գանգերով.
Թափորիդ ջահ պիտի ըլլան, դեմ դիմաց,
Հրդեհն անո՛նց տուներուն՝

Որոնք Ոսոխ ժանիքը՝ մե՞զ ուղղեցին։
Եվ կերդնունք քեզ, ընկե՛ր, կ՚երդնունք, որ այսօր
Մինչ հազար՝ վաղն աստղերու չափ պիտ՝ ըլլանք.
Վաղը, այո՛.— երբ մենք՝ իբրև կարմիր փունջ՝
Շիրմիդ ոտքին մեկ ցիցի վրա նիզակենք
Գլուխը Ցարին կամ Սուլթանին.— Բրոնությունն.
Մեր որդիներն հա՞ղթ, զվա՞րթ,
Պիտի սնարիդ դնեն վարդե պսակը ծանր
Ազատության։— Կերդնո՞ւնք, ընկե՛ր, կերդնո՞ւնք քեզ։

ՀԱՂԹՈՂԸ

Ահագնադղինչ բացվեցան պղնձե դռները Քաղքին.
Պատերազմի տաք փոշին դեպ ներս խուժեց մրրկադին՝
Որուն միջև իր ձիուն վրա Հաղթողն երևցավ,
Ու հառաջեց փառապանծ։— Գերիներու շարք մ՚անբավ,
Ասորիներ և մարեր, պարսկուհիներ թխագանգուր,
Վիզ վզի հետ շղթայված օղակներով ոսկեկուռ՝
Ետևեն լռիկ կուգային ծախվելու վաղն աճուրդի։
Ահա սայլերն ավարին՝ լի հակերով արծաթի,
Ահա թագեր անոնց մեջ և գահերու բեկորներ,
Գերի բերված աստվածներ, նախնիներու ոսկորներ։
Եվ Հաղթողն ի՛նք — առջևեն, միշտ ըսպիտակ ձիուն վրա
Անոնց կիշխե, կբերե զանոնք Քաղքին իբր ընծա։
Արդեն կովի դաշտին մեջ զորքերը զինք պսակեցին.—
Երկու թարմ ոստ դափնիի շուրջը գլխուն դեռ կաճին.
Սուրն իր կուշտեն կկաթե արյո՛ւն ծորան առ ծորան.
Ճոշանին վրա կփայլի խոժոռադեմ Գորգոնան,
Եվ իր հասակն հերոսի կցվի ա՞յնքան հսկա՝
Որ արևն իբր ադամանդ սաղավարտին կշողա։

Քաղքին մեջ սով կար երեկ, այսօր խրախճանքն է համակ.
Փողերն ահա կհնչեն աշտարակե աշտարակ.

Ձյուն տատրակներ օդին մեջ կդառնան հիռ և հոլով՝
Գիրգ փետուրներ լանջքերնեն կույսերուն վրա թափելով։
Հաղթողին դեմ կխուժե ամբոխն ահա զերդ ալիք.
Կթողու հյուսն իր սրգոց, ջաղացպանն իր աղորիք.
Ջահրակ դարձնող պառավները կվազեն դռդռջուն՝
Դեռ մազերնեն չմաքրած բուրդի ծվենները կառչուն.
Կուգան կույսեր վարդերով, և Աստղիկեն կցանկան
Հաղթողին քով կուվող գեթ զինվոր մ՚իրենց սիրական.
Քուրմերն ահա կվառեն արձանին դեմ Վահագնի
Նվիրական խարույկներ ու կզոհեն կենդանի.
Կխոշոշեն հովիվներն անոր անցած ճամփուն քով
Քառսուն ոչխար դեռ հղի քառսուն ջուխտակ գառներով.
Տղաք արմա՛վ են բռներ և աղջիկները՝ հիրիկ,
Որոնք դեռ փոքր՝ արյան տոնն այդ կկարծեն հարսանիք.
Քողերն իրենց կփռեն հարսերն անոր անցքին վրան.
Կիներ բերած սափորներ՝ գինիի մեջ կլվան
Ձիուն տղմոտ սմբակներն ու լայն երբուծն հրատապ։
Ան, լուռ, կանցնի բյուրավոր կամարներեն ծաղկակապ՝
Ուրկե վրան կթափե թերթերն հրագույն վարդենին.
Ամբոխին վրա կնայի ինչպես արևն օվկիանին.
Նայվածքն իրեն կքաշե ալիքներն այդ թխաթույր.
Որոնք այսօր կխայտան, կմռնչեն վաղը կույր,
Վ՚արփվույն բիծերը լվալ չկրնալեն՝ վրիժասուն՝
Դեպ ի անոր կթքնեն սարսափն ամբողջ վիհերուն։

Ու ամբոխն հար կհորդի, կհորդի ամբոխն արբեցած.—
Դույլին մեջ ա՛լ կաթ ունի, տաշտին մեջ ա՛լ ունի հաց.
Եվ կհենու ծիրանի, կհյուսե թագ մարգրիտ.
Կգոչե.— Փա՞ռք քեզ, Հաղթո՛ղ, համբո՛ւյր կարմիր քու սուրիդ.
Դու՝ որ զինվոր մեկնեցար, վերադարձար դյուցազն հաղթ,
Սեգ Քաղաքս այս պաշարող թշնամվույն դեմ եղար լախտ,
Դու՝ որուն ճոշն արևն է, և կայծակն է՝ իր գեղարդ՝
Ջոր Հեփեստոսն է դարբներ սայլին վրա ուռնահարդ։
Դու՝ որ բեղուն ըրիր մեր դաշտերն արյամբ, քեռքեր մեզ
Թագուհիներ՝ աղախին, և իշխաններ՝ ծառա հեզ,
Փա՞ռք քեզի, ո՛վ Հաղթական, համբո՛ւյր կարմիր քու սուրիդ.
Հառա՞ջ անցիր, մենք ըզքեզ կուգենք արքա լուսամիտ։

Ո՜ւր որ նիզակդ հասնի՝ հոն իրավունքիդ ըլլա գիծ.
Մեզ դատավոր դո՜ւ միայն, լոկ քեզ Թեմի՜ս գահակից.
Պիտի միշտ մեր դաշտերուն մեջ սերմանենք հոգնաշխատ
Ճակտիդ համար բրաբիոն, և բանակիդ հացն առատ։
Հառա՜ջ անցիր, ո՜վ Փըրկիչ, ձիդ հրապարակը վարե.—
Քեզ ոսկի գահ ենք կանգներ պալատի մեջ մարմարե.
Քառսուն կույսեր նվիրված Անահիտի մեհյանին՝
Գիշեր ցերեկ կհյուսեն գոհարով քու ծիրանին.
Քու գավազանդ ենք կտրեր անտառներեն սուրբ Սոսյաց՝
Որոնց միջև սարդը պիղծ ոստայնն երբեք չէ՛ կապած.
Եվ թագդ քու մարգարտե՝ սաղավարտիդ պես հսկա՝
Ինքն Արամազդ երկնքեն պիտի դնե գլխուդ վրա։
Փա՜ռք քեզի, ո՜վ Հաղթական, համբո՜ւյր սուրիդ այդ կարմիր,
Արքա կուզենք մենք ըզքեզ, գա՜հդ դեպի բարձրացիր։»—

Հաղթողը լուռ ունկնդրեց՝ աչքերն հառած հորիզոն,
Հետո իջավ նժույգեն, դրավ թամբին վրա հոն
Դափնեպսակն հանելով իր ծեր ճակտեն դյուցազնի,
Տվավ ճոխ սանձը խարտյաշ տղու մը ձեռքն արքենի՝
Որ կեցած էր հոն ձիուն բաշերուն տակ աղեբեկ,
Եվ ըսավ խոլ ամբոխին.—«Իմ գյուղս զիս ղրկեցեք։»

ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒ ՏԻԿԻՆԸ

Պողպատ սալեն՝ որուն վրա դարբնեցին
Ազատությունն երիտասարդ բազուկներ՝
Հանկարծ վարսամ մ'ելավ ու վե՜ր խոյացավ։
Բոց մազերեն անձրևելով կրակներ
Սավառնեցավ հորիզոնեն հորիզոն.
Մերթ իջնելով տվավ համբույր մայրենի
Ըստրուկներուն բերաններուն և ճակտին.
Մրըրկումին մեջ կայծաբորբ էության
Կարծես երկինքն երկրիս վրա թոթափեց.

Եվ ձյունի նման, օշարակի հանգունակ
Լույս մը ծորեց ամբոխներու աչքերեն
Մինչև սրտին խորն անոնց։

Այն ատեն շորնդ մը շղթայի շառաչեց՝
Որ վար կ'իյնար առհավետ
Հոգիներուն և վիզերուն վրայե,
Եվ Թյուրքիո լայնապեղ կուրծքն անսահման
Ուրախության ժայթքեց անա՜նկ աղաղակ
Մ'որ շիրիմներ հսկող բուերն իսկ դյութված,
Պահ մ'ըսկսան տատրակներու պես մնչել։

Ո՜վ Բռնավոր, նստած ոսկրե գահույքի
Փակե՛ աչքերդ, աչքերդ փակե՛ ափիդ մեջ.
Ամբոխն է որ կարթննա
Դռանն առջև պալատիդ։
Ո՜վ բռնապետ, սվիններուն ծա՜յրն է այսօր՝
Որ փոյուգյան գլխարկը վեր կցրցվի...
Ազատության տոնն ահա՛.—
Ժողովուրդներ կանանչին վրա Վոսփորին
Եղբայրության խրախճանքին են նստեր.
Երկնքեն վար Տոթաբերի արեգակն
Հար կլեցնե բաժակներուն մեջ անոնց
Արյուն մը հին հերոսներու մորթված։

Այն ժամանակ Կին մը կապույտ աչքերով՝
Որ դարերով նստած էր
Ավերակի մը սյունին վրա թավալած,
Որ կանիծեր, կամ կաղոթեր, կամ կուլար,
Քուրձ կհագվեր, մոխի՜ր կուտեր
Եվ մայրորեն ծիծերն ափին մեջ բռնած՝
Անմահությունն իր անոնց մեջ կօրորեր,
Հանկարծ լսեց հրավերն
Ամբոխներուն ծովածուփ.
— «Տիկի՜ն, Տիկի՜ն, եկուր կարմիր խնջույքին.
Ակասիաները Վոսփորի ափերուն
Ամեն գարուն ուսերուդ վրա կոշկոճված

Պիտ՝ անձրևեն ծաղիկներն խրենց քաղցրաբուր.
Պիտի դա ծովն համբուրել
Մինչև ծունկերդ ըսպիտակ,
Եվ վիհերեն քեզ գոհարներ պիտ՝ բերե.
Սիրենաներ՝ քեզի նաժիշտ պիտ՝ բերե.
Տիկի՜ն, Տիկի՜ն, եկուր ճերմակ խընչուլքին։
Քեզի քացա՞խ, քեզի լեղի՞ խմցուցինք,
Ներե մեզի,— ոտքիդ առջև կփշրենք
Նիզակն ահա և փուշպսակը գլխուդ.
Ներե՜ մեզի և եկուր,
Եկուր կարմիր խնջուլքին։»—
Նույն ատեն աստղ մ՚ահավոր
Փեռեկելով ժողովուրդներն ապշահար՝
Եկավ և հինգ անգամ դարձավ գլխուն շուրջ
Ավերներու Տիկինին,
Եվ փշրված, հանկարծակի, ուղխորեն,
Մազերն ի վար հոսեցավ
Հալած մեղրի հանգունակ։
Եվ կինն հիասթափ հավատաց
Ազատության և անսահման խինդերու։

— «Ո՜վ իմ հնազանդ աղախիններս, ըսավ ան.
Աղախիններս թխացած թևերով,
Դուք որ երկար դարերու մեջ հսկեցիք
Ոտքիս առջև. ձեր մաղերով սրբեցիք
Կուրծքիս արյունն հարաբուխ,
Եվ ձեր շրթունք ըրիք ըսպունդ քնքշական
Սրտիս վերքին, օ՜ն մեհևանդ բեռեք ինձ,
Ավերներուն մեջ արցունքես քաղքաջած
Մեր ծաղիկնե՜րը բերեք։
Կուզեմ այսօր դշխոյի պես զարգարվիլ,
Կուզեմ որ միսս թարմորեն սրսփա
Ինչպես ծաղկած դեղձիի ծառը մատղաշ
Անձրևեն վերջ մայիսի։
Կլսեմ բոլոր հովիտներեն որ կեղգե
Որդիներուս ծիծա՜ղն, և ա՜լ չեմ կրնար
Սևեր հագնիլ և ողբալ սև արցունքներ։

Թող բերվին ինձ պատմուճաններս հինգերբա.
Սա ծանր ծանր վարդերով պատեր, օ՜ն,
Դրեք շուրջը վեհ գլուխս, դրեք վարդ
Գոտիս մեջ, մեջքիս վրա.
Եվ գինդերս իմ, ապրանջաններս ու մատնիս
Ձետեղեցեք... այսպես, ահա՜... ա՜լ երթանք
Դեպի Վոսփոր, կարմիր ճերմակ խնջուլքին»—

Ժողովուրդները հոն էին, քով քովի,
Մեկ արևու տակ նստած։
Ավերներու Տիկինը երբ երևցավ՝
Բուլոր դափնի և ձիթենի նետեցին.
Դշխո՜, դշխո՜ կոչեցին
Իր կողերուն լայնության վրա հիանալով՝
Անոնց մեջ օր մ՚օրորված
Հերոսներուն անվան ըրին գովասանք։
Ան նստեցավ ամենուն հետ միատեղ,
Ամենուն մեջ. և կերավ՝ մերթ ծիծաղկոտ՝
Եղբայրության աղը ձյունի պես ճերմակ,
Եվ ան խմեց, խմեց գինին հնձանված
Ափերուն մոտ Իոխի,
Եվ ան խմեց, խմեց գինին կարմրաբորբ։

Ո՜վ խոլություն կնոջական,
Ով այնքան սուրբ վրեժներու,
Եվ ահավոր վիշտերու
Լռիկ, մնջիկ տապալում։
Ըսե՜ Այրի, ըսե՜ Դշխո, ըսե՜ Մայր,
Պի՜տ հրաբուխդ ա՞յսպես լեռն իր պայթեցներ
Ու ան խմեց, խմեց գինին կարմրաբորբ...
Ձեռքին մեջ բյուր բաժակներ
Ջախջախվեցան, և մարմարե ուսերեն,
Արմուկներեն արփիացող հոսեցավ
Ձվարթ հեղուկն հակինթներու պես հալած.
Թողուց որ գլուխը շոյե
Լրջադեմ Թյուրքն և կամ Ձերքեզն հաստահոն.
Եվ Հրեային և Հույնին

Ճակատներուն վրա թոթվեց
Սև անտառներն իր խնկաբույր մազերուն.
Քղանցքը վեր հանգրճած՝
Կանանչին վրա նրբակոշիկ ոտքերով
Կաքավեց ան, պարեց դա՜փ, դա՜փ, դա՜փ զարկավ.—
Խուլ գործիքին ձայնն աղվոր,
Քողեքներուն շառաչներն
Ու դոփդոփյունը խոլահած մատերուն
Ժողովուրդին վրա նվագներ թափեցին
Եվ ներդաշնակ կարծես անձրև մ'անծանոթ.
Ու երբ քողն իր վեր նետեց
Եվ ըսպիտակ ալիքներուն մեջ անոր
Ճախրեց, դարձա՜վ, դարձա՜վ, դարձա՜վ հապշտապ՝
Կարծես թե ան բուստ մրն էր
Ամբոխներուն օվկիանին մեջ հարածուփ
Եվ կամ Աստղիկն արբեցած
Տիոնիսյան խորհրդական տոներուն։

— «Կեցցե՜, ըսին այն ժամանակ հոն բազմած
Մարդերն ամեն ցեղերու,
Կեցցե՜ Այրին գեղագանգուր՝ որ ահա
Մեկ օրվան մեջ կձրգե քողը սուգի
Եվ լալակն իր մոխրահոտ.
Թող Վոսփորն իր վիհերեն
Ամուսնական բերե մատնի մ'ադամանդ
Այս իրիկվան մեջ զուգելու համար ղայն
Մեծ Ազգին հետ Օսմանյան։
Կեցցե՜ Մայրն այն սկազգեստ՝
Որ գիշերվան մեջ հերոսներ կթաղե,
Առավոտուն կըլլա հարս,
Հարս կըլլա, հա՜ըսը բոլորիս, հա՜ըսն արբշիռ,
Որ ծովուն քով և խրախճանքի սեղանին
Վարդ կնետե ամենուն,
Եվ ավասիկ կհամբուրե
Իր գինիոտ բերանով
Մարդերն ամեն ցեղերու,
Կեցցե՜.»— Ըսին այն ժամանակ, բայց հեռուն

Այս խրախճանքի ժխորումեն արթնցած
Գայլ Վահաններն, Դավիթ Բեկերն ընձաղյուծ,
Հերոսներն հին՝ գաղափարին հինօրյա,
Գինովությո՜ւնը տեսան
Օտարներու առջև պարող իրենց մոր.
Եվ սարսափած, մոլեգնադող, պատռեցին
Իրենց վրեժի պատանքներն
Ու շարժելով շիրմաքարերն իրենց հաղթ,
Սրտմտանքե, առջի անգամն ըլլալով՝
Արտասվեցին ու մութին մեջ կանչեցին
Դեպ իրենց Մոր— «Ալիաբա՜, Սալոմե՜...»

ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊԵՐ

ՀՈՎԻՎԸ

Ա

Տարին անգամ մը միայն իր հոտին հետ գյուղ կուգար՝
Երբ ձյունաբեր հովն արդեն խոտերուն կյանքը տկար
Լեռներուն վրա խմած էր։ Խաշինքին էջքն հազիվ հազ
Կտեսնեի՝ սարն ի վար, ես դեռ տղա, վազն ի վազ
Դիմավորել կերթայի հովիվն՝ որ պապս էր թիկնեղ։
Կգրկեր զիս, իշուկին կնստեցներ, ու մեկտեղ
Կմտնեինք գյուղին մեջ, երբ իրիկվան աղոթքին
Կոչնակն ընդհատ կհնչեր ծառերուն մեջ զովագին։
Օ՜հ, վերադարձե ի՜նչ ինչ քաղցր է երդիկին տակ գեղջկական
Ոչխարներուն՝ բեռնավոր բարիքներով նվիրական։
Ջերդ փրփրուն գետ դեպ ի գոմ փողոցն ի վար կհոսեին՝
Դրած մեկը դունչը գիրգ՝ կռնակին վրա մյուսին.
Խրոխտ խոյերն ունեին ձյունահյուսի պես դմակ.
Մաքիներուն լուսակիզ բուրդն ապրշում էր համակ.

Մացառներեն վիրավոր կաթնեղ ծիծերն այծերուն
Կաղմեին հազիվ հազ իրենց ազդրին մեջ բեղուն։
Դեռ մոտակա գետակեն շանցած՝ արդեն կլեցվեր
Գյուղը ամբողջ մայունով և բույրերով լեռնաքեր։
Երբ առջևեն կհաչեին գոռ գամփռները հոտին՝
Գեղջուկ տղաք սրտաթունդ տուն իրենց խույտ կուտային,
Եվ հեգ պառավ մը վիզով կրիայի թեփաթափ
Մրթմրթալով կփակեր խրճիթին դուռն հապշտապ։
Կուգար հովիվն ետևեն։— Կհնազանդեր խաշինքն ողջ
Ցուպին՝ կիսովն իր օծված գեղին տիղմով մը ամբողջ։
Գլխուն ուներ փոյուգական գլխարկ մը գորշ թաղիքե՝
Ուր մխած էր կապուտակ փունջ մը նարգիս ծուղիկե.
Կարճ թեզանով սև արջու մորթե հագուստը երկար
Զգած էր ձախ ուսն ի վար՝ որուն իր պարկը կար։
Այսպես հսկա և վսեմ՝ խնկելով մե՛ն մի քայլին՝
Բարբարոս հոտ մ'ուղխերու, և կույս բույրեր լեռնալին՝
Կմտներ բակն։ Համբույրով մը վար կառներ ցիս էշեն,
Համբույր մ'որուն մեջ հոգիս կրմպեր բնությունն հոյաշեն։

Բ

Զմեռն ահա...
Թոնրատունն անդորրությո՛ւն կտիրեր,
Անդորրությո՛ւն նաև տաք գոմին մեջ տանն առքնթեր,
Ուրկե միայն մեզ կուգար հոտին շշուկն որոճման,
Կամ գառնուկն իր ծնանող ոչխարի ձայն մը դաժան։
Քաջ ծերունին կկախեր պարկն իր գիմաց պատն ի վար՝
Ուրկե օթեկ պանիրի կտարածվեր հոտ մ'բուսվար։
Անդին կատուն մերթ պրծած իմ ձեռքերես շարչրկող՝
Անոր տրեխները մեծդի կերթար լիզել գաղտագող,
Որոնց վրա կբլլային շատ հեղ շորցած արյուններ
Մարդագայլի կամ գայլի՝ զոր ան հալթած, մորթած էր։
Իսկ նստած մայրս թոնրին քով կ'ուղղեր տարբերուն,
Մերթ մրափելով, մերթ ալ խաչ հանելով դեմքը ուրուան՝
Երբ հովն հեռուն լեռան վրա թափավ տարով ձյան փրփուր՝
Կուգար ոռնալ երդին վրա և բուխերիկը տարուր։

Այն ատեն ես կրսեի դրվագածին ալևոր.
— «Պապո՛, պատմե. լեռներու կուզեմ հեքիաթ մը աղվոր։»—
Կուտար համբույր մը ճակատս, հետո ձայնով սիրամած՝
Որուն մեջ դաշը սյուքին ամպրոպին բամբն էր մեղմած՝
— «Ա՜խ, թոռնիկդ իմ, կրսեր ան, լեռներո՜ւն վրա, լեռներո՜ւն
(Մեծցիր դեռ քիչ մ'ու քեզ ալ պիտի տանիմ հոն հեռո՜ւն՝
Որ իմ տկճորս զարնես), լեռներուն վրա պապական
Մեր հովիվին վեպն է շատ, և իր թոռին շահեկան։
Ու կսկսեր պատմությունն՝ որ գրեթե միշտ ա՛յն պահուն
Կլմընար, երբ ճրագին կապառեր ձեթը սպլպլուն...
Դուք տեսա՞ծ եք հայրենի լեռները մեր խրոխտապանծ
Պսակված՝ ամպի մեջ բռնող անտառներով անթափանց՝
Զոր կհոտեն լոկ շանթերն, ու լոկ հեղեղը դեղին
Հոտված ծառերը մինչև կբերե մոտը գյուղին.
Դուք տեսա՞ծ եք կիրճերու խորն անձավներ, որոնց մեջ
Կապրին (կբսեն) ջատուկներ կթելով էգ գայլ մ'անվերջ,
Եվ որոնք մերթ լուսնին տակ երգելով երգ մ'հրապուրիչ
Վար կկանչեն սարին վրա նստող կովարծը կտրիճ.
Դուք տեսա՞ծ եք մարգագեզ անծայրածիր արտոններ,
Ուր գառնուկներ կարածին թիթեռներու առընթեր,
Ուր կսահի արևուն միահնծան փառքին տակ
Գետակ մը ջինջ՝ կաթի պես, և եղկ՝ անոր հանգունակ.
Դուք տեսա՞ծ եք փոթորկեն վերջ (երբ փայլակը հեռուն
Դեռ կխաղա՝ ցույց տալով մերթ արևն ծոցն ամպերուն),
Նստած հովիվն իրիկվան դեմ փարախին քով՝ անհոգ՝
Կչորցնե շանթահար կաղնիին դեմ հրաբորբոք
Իր թաղիքե տառատոկն անձրևին տակ ծանրացած,
Կամ կհյուսե տրեխներ մացառներեն քճքճած.
Դուք տեսա՞ծ եք կամ ինչպե՜ս ան կմորթե այծ մը հույր,
Որուն արյունը կհոսի ձար մորուքեն մամռաբույր
Եվ շամբրելով զայն կրակին վրա կդարձնե, իբրև ճաշ,
Թողլով որ քաղցր հոտն ընե շուրջի գայլերն հալումաշ.
Կամ տեսա՞ծ եք կեռակտուց անգղ մ'ահեղ որ, խլած
Մորթը քերթված նույն այծին՝ կեյլե երկինք վերասլաց.
Ահավասիկ այս բոլորն, այս պատկերները խուժգուժ
Իր հեքիաթներն էին, նախ՝ երգված արտին մեջ անուշ։
Կլսեի ես զանոնք անհոգ խորն աչքերուն,

Ուր միշտ հոգին կխոսեր՝ իր լռությանը պահուն։
Ան իր սրտին մեջ սուրբ էր, բազուկներովը՝ հերոս,
Մեր ցեղին պես միշտ բարի, մերթ նենգ ու մերթ բարբարոս։
Կզմայլեի ժամերով հասակին վրա, վեհ պատկեր,
Որ ոլիմբյան աստվածի մը կաղապարն էր հագեր,
Կտեսնվեին ճակտին վրա և ծոցին մեջ թխագույն
Եռածած տեղերն հուլիսյան ոսկեատամ արևուն.
Հովին, տոթին տակ թրծված կուրծքը հնոց մ'էր երաշտ,
Նման անոր՝ որուն մեջ պապերը մեր կռապաշտ
Իրենց ազնիվ նվերներն աստվածներուն կայրեին։
Կթորեին հոնքերեն առատ բույրեր լեռնային։—
Մինչ իմ հոգիս այդ հզոր մարդու ձայնին օրորով
Կմեծնար ինչպես եղեգ մ'ամպրոպին մեջ երգելով,
Մինչ կանցնեինք գիշերներն հիշատակովն իր կյանքին,
Եվ սիրտս իր խոսքը կրմպեր՝ բոցն ինչպես ձեթը ճրագին,
Գուրսը քամին կթռչեր, լեղապատառ կճչար,
Եվ վերն երդին վրա նստած և ձյուներուն մեջ պայծառ՝
Շուները մեր կոռնային գայլի մը կուշտ, տղնդեր,
Որ դիմացի ըսպիտակ սարալանջին կոստոստեր...

Գ

Գարունն ահա...

Մեր երդին ջորդաններեն, ուր հլու
Աղավնիներ իրենց ջուրը կուգային խմելու,
Ձյուներն հալած կհոսեին դռանը քով խոխոջուն.
Ժայռեն հեղեղը կիջներ արևուն տակ պաղպաջուն.
Գետը (կարծես ոսկեղեն հանքե բխած) ընդհոլով
Կտարածվեր դեղնորակ՝ գյուղին առջև մռնչելով.
Իրենց կանանչ քողերուն մեջեն մեղմիկ արթնցած
Բլուրներեն, դաշտերեն երբ կուգար սյուշն համբրնթաց
Մեր տնակին բանալ դուռն,— հովիվն ընդոստ կկանգներ.—
Հողին հոտն իր առնական լայն ռունգերուն դպած էր,
Հողին հեշտ հոտը նման բեղուն հարսի մը մարմնույն
Գաղջ բուրումին՝ որ նեկտա՞րն է փեսային ցնծամույն։

Ջունի տնակը հաճույք, ջունի թոնիրը հեշտանք՝
Երբ մարդ սրտին մեջ կզգա գարնան երգին արձագանք։
Կուգար բնության բոցերուն ջահը բոնկիլ հեղակարծ
Լեռան կարոտ այդ հովվին թարթիչներուն տակ արծարծ։
Կառներ թիկնոցը ուսին, կառներ տկճորն՝ որուն մեջ
Տիեզերքին սիրտն ամբողջ պիտի առներ ելևէջ,
Եվ կըսեր մորս.— «Մարո, պարկիս մեջ դիր պանիր, հաց
Եվ ցուպս տուր. լեռ կելլեմ. ալ փարախին դուռը բաց։»—
Ու կմեկներ գոհունակ։— Կտեսնեի դիմացի
Կանանչ սարեն բարձրանալն հոտին՝ որ լուռ կարածի։
Ուրախ էին ոչխարներն, էշն ալ ուրախ կթվեր,
Եվ ընչապտուկ շուներն ալ՝ տնկած ցռուկնին դեպ ի վեր՝
Կհաչեին վեհ արծվի մ'օդը վերեն վար հերձող,
Կլափեին մերթ կանանչ ճանճ մ'արևուն մեջ թռչող։
Այն ժամանակ— ո՜վ սրտիս անմահական հիշատակ—
Մեր հովիվին ետևեն կվազեի ես շիտակ
Ու թիկնոցին թեզանեն բռնած.— Պապո՜, պապո՜ ջան,
Ջիս մեկտեղ տար.— կըսեի,— հովիտներուն մեջ շուշան
Քաղել կուզեմ, կուզեմ ես քովդ խաղալ սարին վրա։—
— «Դեռ փոքրիկ ես, կըսեր ան, կես ճամփան շունչդ կհան.
Ժայռին ծայրեն անցնելուն մրրիկը քեզ կտանի։»—
Եվ մեծաքայլ կանհետեր սարին ետև գեղանի...
Ըզկծանքես լալով ետ կդառնայի մենակյաց.
Բայց հովն արցունքս սրբած կըլլար ես գյուղ չմտած.
Եվ երբոր տուն կհասնեի՝ մոռցած էի պապս արդեն,
Կամ մորս փունջ մը ծաղիկ բերած էի հետս արտեն,
Կամ ունեի ափիս մեջ թիթեռնիկներ նահատակ.—
— Ո՜վ արդ ցամքած իմ սրտիս անմահական հիշատակ։—

Դ

Օր մ'ալ եկավ ան դարձյալ, աշնան օր մ'էր չաքաշուք.
Արևն հիվանդ կօրհասեր գյուղին ետև անշշուկ.
Ծառերուն մեջ չէր լսվեր կոչնակին ձայնն անուշակ.
Ծուխն երդերեն չէր ելլեր, չկար կալին մեջ մշակ։
Երբ գյուղ մտավ ծեր հովիվն, ըզգաց սարսուռ մ'ահավոր,

Կարծես քալեր ամայի դամբարանի մը մեջ խոր։
Տղաք փողոցը ինչո՞ւ չէին խաղար այն օր վեղ.
Ինչո՞ւ շեմին վրա նստած չէր աղոթեր պառավն հեզ։
Հովիվը դեռ քիչ մ'անգին տեսավ տուներ ավերակ,
Գուռը կոտրած խրճիթներ՝ ուր ո՛չ ձայն կար, ո՛չ կրակ.
Տեսավ մարագ մը այրած, որուն պատին վրա մրոտ
Գառկած հոգին կփըշեր անտեր կատու մը բորոտ։
Տեսա՜վ զանոնք ու մինչև ոսկրներուն ծուծը ան
Համակվեցավ տխրությամբ, դողաց նոճի մը նման։
Կարծես անցավ բնազդորեն հոտին մեջ իսկ բովանդակ
Ոչխարներուն գլուխներն հակող սարսուռ մ'ընդարձակ։
Շուներն երեք հեղ հովվին երեսն ի վեր նայեցան,
Սակայն ոչինչ չհասկցած՝ երեք անգամ ողբաձայն
Լռության մեջ ոռնացին, մահաշշուկ փորելով
Արյունազանգ հողն՝ իրենց վերջի հզոր ոտքերով.
Ները հասավ տան առջև. իբրև սուգի նշանակ
Հանեց նետեց գլխարկին դրած փունջն իր մանիշակ.
Վրա՛ն կոխեց ու մտավ...

Մեր տնակն այն իրիկուն
Ըստվերի մեջ թաթախված՝ դատարկ այրի մ'էր հանգուն.
Խահի արծաթ ըսպասներն որմին չէին շողշողար.
Հնձանը ո՛չ գինի կար և ո՛չ արկղին մեջ գոհար,
Ճրագին ձեթն, Հո՛ւյսն հարկին՝ խաղաղության մեջ ծաղկող,
Հոն հատակին թափած էր դժոխային ձեռք մը դող։
Մայրս այնտեղ էր, թոնրատան մթարին մեջ մենակյաց.
Մազերն ըսփյուռ խուփին շուրջ և երեսի վրա ինկած՝
Խեղդուկ կուլար, արցունքն իր կարծես սրտե՛ն կբխեր.
Թոնիրն այն օր չէ՞ր վառված։— Գնաց հովիվն ալեհեր
Սովորական իր տեղն, հոն նստավ առանց խոսելու։
Միշտ աստղերու ավազան իր աչքերուն լույսն աղու
Կփոխվեր թուխ բոցի մ'հոծ թարթիչներովն հրահրուն։
Երկար ատեն մնաց լուռ նայվածքը դռան սևեռուն։
Պայծառ հոգին հսկցավ, լույս ճակատն իր մթնցավ.
Ըրեր էին մարդ-գայլերն իր շեն տնակը անձավ։
Կամաց-կամաց ըսկսավ ըզեղին մեջ արթննալ
Սև մտածում մ'իր փոսին ելլող զերդ օձ մը ծալ-ծալ։

Խաղաղությունն հոգվույն մեջ ալեծփանք մը կերկներ.
Ճակտին վրա բյուր ծալքեր, ծալքերին մեջ սոսկումներ
Իրարու վրա դիզվեցան քողի մը տակ լռության,
Քող մը՝ զոր հուսկ որոշում մ'եկավ պատռել հաղթական.
Եվ ան մռունչով մը ահեղ վեր խոյացավ իր տեղեն,
Փոթորկելով ուսին վրա գանգուրներն իր ձյունեղեն.
Բոցն աչքերուն տունն ամբողջ լույսերու մեջ կողողեր.
Ան նման էր հեռուեն եկող մրրկին սևահեր՝
Որ կսփռե շուրջը նախ մութ անդորրանք մը խորունկ՝
Իբրև մտածմամբ մը հրդի ըլլար ամեն քար ու տունկ.
Հետո մինչև ծորերուն մեջ կիջնե մռայլ քայլերով՝
Ծառերուն գլուխը դանդաղ խորախորհուրդ շարժելով.
Գույներ կառնե նարինջի, մեղեսիկի, հակինթի,
Եվ վերջապես օդին մեջ անձրևաթափ կճայթի.
Որոտը միշտ մոմռալով կերթա զերդ քարը գալարուն
Ջախջախելու կրանիդները շրջակա լեռներուն.
Եվ վեհությունն այս ցասկոտ ա՛լ կսկսի պակվիլ
Կայծակներու շողշողուն նարոտներով հրատեսիլ։
Այսպես եղավ հովիվն ալ։— Մարո՛, Մարո՛, գոռաց ան,
Դուստր, կանգնե՛. հայրենի տանն ու գյուղի՛ն ես զուրպան
Ղզլպաշներն էին, չէ՞, միշտ այդ շուներն անուղղա՝
Որ օջախս այս մարեցին. թափի՛ մոխիրն իրենց վրա...
Դուստր, կանգնե՛. պարկս տուր, զոր նետեցի շեմին մոտ,
Բայց մեջը ո՛չ պանիր դիր, ո՛չ հաց, լեցուր լոկ վառոդ.
Դուստր, կանգնե՛, բայց մի՛ տար հովվական ցուպս անվտանգ,
Որ լոկ հոտիս կազդե վախ, և շուներուս՝ պատկառանք,
Հրացա՜նս տուր այս անգամ, զոր գոմին վրա, գաղտնափակ,
Ձեղնահարկեն կախեր եմ Քրիստոսի խաչին տակ։
Ես լեռ կելլեմ։ ա՛լ կուզեմ ըլլալ հովիվ գայլերու.
Ժանիքի դեմ ես ժանիք, թաթի դեմ թաթ վրիժառու.
Թող Ոսոխները գիտնան՝ որ խաշնարածն այս երկրին
Պիտ չթողու որ հանգիստ ուտեն խլած ոսկորնին։
Ալ կարգն իմս է, որ իջնեմ սար ի վար ձեռքս հրազեն
Տված կաթիս փոխն առնել իրենց սրտին արյունեն։—
Այսպես ըսավ։— Ու երբ իր ուզածն առավ, ան առանց
Ողջույն տալու իր հոտին, դամ լսելու մորս թախանձ,
Դուրս խոյացավ հապշտապ։ բայց ես նորեն անգգայաբ

Իր ետևեն կանչեցի.— «Պապո՜, պապո՜, գիս ալ տար։»—
Ետև դարձավ այս անգամ, նայեցավ հեղ մ'հասակիս.—
Այլևս հղոր էր բազուկս, ու բոցերու մեջ հոգիս.
Խոյանքներու հասունցած կորյուն մ'էի պնդացյալ։
Ձեռքիս բռնեց ու մեկտեղ ելանք սարեն հաղթաքայլ։
Վրեժը մեզի սնունդ տվավ, մահն եղավ մեզ դաշնակից.
Եվ ձորերուն մեջ մերին, լեռներուն վրա ծաղկալից,
Ան ծեր հերոս մը եղավ, եղա աշուղ մ'ես փոքրիկ
Եվ իր փառքերն երգեցի իր տկճորովը գողտրիկ։

ԱՐՄԵՆՈՒՀԻՆ

Ա

Այս առավոտ իր բանակով Շահ Աբբաս
Ձերդ վագրերու հովիվ մ'անցավ գետն Արազ։
Մտրակելով ալիքներու մեջեն ան
Իր հետ անցուց ավար մը բյուր Հայերու՝
Որոնց կեսին դիակներն հեղձ լաստ եղան
Մյուս կեսին համար ափունքն հասնելու։

Հիմա գետին ընդդիմակաց եզերքին
Ջորքը կանգներ է վրաններն ըսպիտակ,
Որոնք թվին պիտի հեռվեն նայողին
Արագիլներ որսերն իրենց թևին տակ։
Պահապաններ շուրջն ի դետ կան Թուրքին սեգ.—
Ջուրն է պատվար, և փապարները՝ հայեկ։

Կիջնե արևն լեռան ետև, ամեն ոք
Իր արյունոտ կապուտն ըրած բարձ իրեն՝
Արդեն կհանգչի վրաններուն տակ անհոգ։
Իսկ գերիներն, անքուն, լռիկ կարտասվեն։—
Թիբերն անոնց վիշտն եթե նո՛ւյն իսկ փակի,
Սակայն հոգին միշտ լալու բա՛ց կձգե։

Բ

Մեկը միայն չունի արցունք և ոչ քուն.
Աշտանակած ձին երբուծով կաթնագույն
Գետեզերքին վրա կսպասե առանձին։
Հրդեհելով նայվածքն հոնքերը թավուտ,
Կհառի շեշտ դեմի կանանչ հովիտին՝
Ուր շոճերուն ետև արփին մայրամուտ,

Կհոսեցնե երկնքի լալն ու ոսկին։
...Ան վսեմ է, ահեղ, զերդ ա՜նգղ մ'որուն
Կեռ կտուցեն կկաթկթի տակավին
Արյունն որսին։ Մորուքին տակ ծփծփո՛ւն,
Զոր հովը մերթ ձիուն բաշին կխառնե,
Լանջքը՝ պատյան տիտոան, սիրտն իր՝ վագրի է։

Աբբասն է ան.— Շահ Թահմազի թոռը շահ.—
Այսօր ահա իբրև հրեշտակ կշողա
Արեգակն իր ճակտին, լուսինն իր ձիուն.
Այսօր հաղթված Երևանի, Դավրեժի
Պարիսպներուն վրա մտքովն իր կանգուն
Կսպասե ո՛վ գիտե ի՛նչ նոր բալիշի։

Ո՛վ Փատիշահ, հա՛պա դարձիր, դարձիր քու
Վրաններուդ՝ լի գանձերով պատվական.
Եվ հաղթությանդ սա օրը, դի՛հ, հագվե՛ դու
Հայաստանի դիպակն, ոսկին, շափյուղան,
Ու մեր գինվույն, մեր արյան մեջ, անտարբեր,
Մորուքդ հինա դիր յոթն օր յո՛թը գիշեր։

Բայց խույր կապել չես ուզեր այն դափնիով,
Զոր խոնարհած ճակատներե ես քաղեր։
Երբ երիվարդ անհանգիստ դափրելով
Կփշրե տակդ բզեզներն ու խիճեր,
Ո՛վ շահ, ըսե՛, անհագ աչքով դուն այսպես
Արեգակեն, լեռներեն ի՞նչ կսպասես։

— Կսպասեմ իմ գեղագանգուր Ավարիս,
Զոր բերի հետս հովիտներեն Արամյան,
Թող ըլլան գինդ ականջներուն հարճերուս
Մարգարիտներն Հայաստանի. թող ըլլան
Իշխաններու խլաներն ստար ձիերուս.
Ես կսպասեմ գեղագանգուր Ավարիս։

Արմենուհի մ'է ան. աղջիկ Մելիքի
Մ'որուն բերդն հին զորքերս ըրին գոմ մ'ավեր։
Երբ ձորե ձոր այդ գեղուհին քաջազգի
Կորսար եղնիկ, որսացի զինքն ես անվեր։
Ջտեսավ ան հրդեհն իրենց դղյակին.—
Համբույրներս իմ՝ աչքերն աղվոր փակեցին։

Գեղեցիկ է Արմենուհին.— ճակտին վրան
Լուսնկան իր արծաթ կնիքն է դրեր։
Հավատացե՛ք ինձ, Ալլահին աչքն է ան,
Ուրկե կառնեն աստղերն իրենց ճաճանչներ.
Հուրիներուն թագուհին է սևագես,
Իրանը զիս պիտի պաշտե, և զինք՝ ես։

Սա հովտին մեջ աղբյուր մը կա մեղմալու՝
Որուն ավազն ոսկի է, ջուրն է արծաթ.—
Զինքն հոն տարին յոթն աղջիկներ՝ լվալու
Ճամփուն փոշին, խայթն արևուն բոցացայտ։
Թևերուս մեջ պիտ՝ ըլլա այս գիշեր ան
Դշխո մ'հաղթված, ես իր գերին հաղթական։

Կխորհի ա՛յսպես.— երբ հովտեն դուրս հանկարծ
Մայրամուտի բոցերուն մեջ թաթախված
Կտեսնվի Արմենուհին՝ թվելով
Հսկա շուշան մ'որ արևեն կբռնկի։
Կիջնե մեղմիկ հեղեղատի մը ճամփով՝
Ըսքողված նուրբ պատմուճանով լոգանքի։

Մերթ աղջիկները թուփերեն տարփատենչ
Երկար քղանցքն իր կապատեն, կերևն

Իրենց գլխուն վրա շքեղ թասին մեջ
Կավը, հայլին, սանտրը լինդով ոսկեղեն,
Եվ ծամակալն ու մաքմանն իր թանկագին,
Զոր ղրկած է Դամասկոսի խանուհին։

Եվ կիջնե ան՝ նայվածքը վար խոնարհած՝
Ամչնալով ինքն իր աղվոր իրանեն.
Եվ մինչ անդին Աբբաս աչքերն իր հառած
Հոգիին հետ կբերկրի լո՛ւռ շամբշորեն,
Արմենուհին ծայրովը թուխ մազերուն
Կսրբե շիթ մ'արցունք այտեն վաք սահուն։

Եվ կհասնի ճամբարին մեջ։— Շահն հանկարծ
Հառաջ կուգա, կուտա նշան, կկեցնե
Խումբն ու նժույգին ճոխ բաշերեն վար հակած՝
Աղջիկներուն աղախին ա՛յսպես կըսե.
— «Բամբշի զարդով ու երգերով սիրարծարծ
Պատրաստեցեք. լուսնկային հետ կուգամ։»—

Ու թողլով սանձը ձեռքեն վար թեքաքամ,
Կխթանե լուռ բանակին մեջե ձին...

Գ

Ճերմակ վրանն, ուր կմտնեն խմբովին
Աղջիկներն այն, է պճնված վարդերով.
Լավ գոցված են ապարումներն հողմախով.
Կմխան ներսը հալվեներ միշտ բուրյան.
Ու կերևի, ծածկված գայլի մորթերով,
Խորը բազմոց մ'հուրիներու գրգարան,

Արմենուհին ավասիկ այդ բազմոցին
Նստած է արդ, դեռ մատերեն և ծոցեն
Վճիտ ջուրերը աղբյուրին կկաթին։
Ցոթն աղջիկներն ա՛լ հոն պատրաստ բերեր են
Հինա, ծարիր, յուղ անուշ, զարդ շոշակի.

Եվ կույսն իբրև աստվածուհի մը մե՞րկ է...

— Ո՛վ Մարմին հայ կույսերու, ո՛վ սուրբ Սափոր,
Նահատակի, բանաստեղծի, հերոսի
Սաղմն և աճյունն օր մը կրելու դու սովոր։
Ո՛վ վեհ Արձան, աստվածակերտ, ես քեզի
Վաղը պիտ՝ գամ և ճակատիս ուղփաճեմ
Դափնեպսակն ու փուշպսակը փետեմ

Գիրգ ծոցիդ մեջ՝ որ Նիրվանան է ցավին։
Պիտի երդնում ուխտս, ըմպեմ բերկրանքս հին
Աչքերուդ մեջ, և վայելեմ հպումեդ
Խոր հեշտությունը վերքերուս փակվելուն.
Ո՛վ Շուշանի թաղար, Մատյան խնկավետ՝
Ուր կգրե Աստված, մարդիկ կընթեռնուն։

Ո՛վ դու Աղբյուր կաթի, գինվո Ողկուզակ,
Որ կխայծիս այգիի մեջ շերտափակ.
Ո՛վ դու կովի, խաղաղության գոց Մեհյան՝
Որուն սեմեն կանցնի ուխտյալը միայն,
Այն ձեռքն օտար զերծ չըլլա բնա՛վ նզովքե,
Որ կհանդգնի բանալ դռներդ նվիրական։—

Եվ կույսն իբրև աստվածուհի մը մե՞րկ է...

Դ

Առաջինն այն աղջիկներեն նուրբ լաթով
Մուր Ղուրանեն պատվիրաններ բանված են,
Կչորցնե կույսին մարմինն ուսերեն
Մինչև սաթի գարշապարներն՝ երգելով.
— Արմենուհի՛, շատրվան մ'ես դու մեր մեջ,
Եվ շուրջդ մենք ծփծփուն
Նունուֆարներ դալկահար.
Աստղերն ի վեր գեղգեղուն,
Արմենուհի՛, շատրվան մ'ես դու մեր մեջ։

Երկրորդ աղջիկն ոսկի սանտրով կսանտրե
Թոնուտ մազերն ամպերու պես սևորակ.
Գլխուն վրա կբանա խազ սպիտակ
Նման վտակի մ'արծաթահոս, ու կերգե.
— Արմենուհի՛, Ֆիրդուսիի քնարն ես դու,
Երբ քամին զերդ բամբռահար
Կուգա լեռնեն նվագել
Մազերուդ մեջ բյուրալար.
Արմենուհի՛, Ֆիրդուսիի քնարն ես դու,—

Երրորդ աղջիկն իրարու հետ կզոդե
Նրբին հոնքերը թխաթույր ծարիրով.
Ու թարթիչները մեղմաբախ մրրելով
Կհառի պիշ նայվածքին մեջ ու կերգե.
— Արմենուհի՛, հոնքերդ են նման շին տառին՝
Գծված փետրով ագռավի,
Աչքերդ կաթի մեջ ինկած
Մեղուներ են ծարավի.
Արմենուհի՛, հոնքերդ են նման շին տառին։

Չորրորդ աղջիկը համեմաշրով կօծանե
Շրթունքներն իր կակաչ, թուշերն զգայուն.
Կգետեղե զույգ փոսին մեջ այտերուն
Զույգ համբույրներ գորովական, ու կերգե.
— Արմենուհի՛, այտերդ են վարդ ու շուշան.
Ու սոխակ մ'է քու լեզուն՝
Ատամներուդ փղոսկրե
Վանդակին մեջ գեղգեղուն.
Արմենուհի՛, այտերդ են վարդ և շուշան։

Եվ հինգերորդ աղջիկն հինա կդնե
Անոր մատերը հինայով հայկական.
Կծարուրե արմունկներուն զույգ բերանն
Եվ պտուկներն ըստինքներուն ու կերգե.
— Արմենուհի՛, ծիծերդ են զույգ մ'աղավնի՝
Որ կուրծքիդ վրա կնիրհեն.
Թևերդ ուսեդ վար սողուն

Սաթ ակռայով օձեր են.
Արմենուհի՛, ծիծերդ են զույգ մ՚ադամանի։

Ու վեցերորդ աղջիկն յուղով կոծանած
Կլորությունն որովայնին կմբանման,
Եվ կոռոգե հեղուկներով հոտեան
Կուսափթիթ աղվամազերն ու կերգե.
— Արմենուհի՛, պորտդ ձյունի մեջ փոս մ՚է,
Զոր այծի մ՚ոտքն է թողեր.
Ագռամեջդ է հոր մ՚ուրտեղ
Իպլիսն իր գանձն է դողեր.
Արմենուհի՛, պորտդ ձյունի մեջ փոս մ՚է։

Ու յոթերորդ աղջիկն ահա կդնե
Լուրթ քողեքներն ու գինդերն իր շողաթծարծ.
Կձգե ուլն, հնդեղ լույսի, քայն հյուսված
Քենտերի լալ մարգրիտներով ու կերգե.
— Արմենուհի՛, դու մեծ ջահն ես Մզկիթին,
Զոր կանգնեց Շահն Իսպահան.
Գոհարազարդ այդ ծոցդ է
Լիճ մ՚ուր աստղեր կլողան.
Արմենուհի՛, դու մեծ ջահն ես Մզկիթին։

Հետո բոլոր յոթն աղջիկներն իրենց մեջ
Պարփակած կույսը աչքերով թախծալից
Ջերդ վարդենվո մը շուրջը պարսն ելևէջ
Մեղուներու, կերգեն մեկտեղ, ձայնակից.
— Ամբողջ չքնաղ, ամբողջ մաքուր դշխո մ՚ես,
Արմենուհի՛։— Արշալույսն ես,
Որ կծագի լեռներուն վրա Իրանի,
Արմենուհի՛։— Դու գինին ես
Փատիշահին, թույնն հաշագկոտ հարեմի.

Արմենուհի՛։—
Ամբողջ չքնաղ, ամբողջ մաքուր դշխո մ՚ես,
Արմենուհի՛։—

Կելլա լուրթյուն և ըստվեր...

Կույսն ոտք կելլե և կրսե.— Ո՛վ իմ քույրեր,
Ամբողջ չքնաղ, ամբողջ մաքուր եթինք մ՚եմ,
Զոր պիղծ կուռքի մը զոհելու կտանին,
Անոր արյունն ես այս գիշեր պիտ՚ ընեմ
Փատիշահին թույնը, գինին հարեմին։

Կհեռանան աղջիկներն հույլ քայլերով,
Խոր լռություն մ՚իրենց ետեր թողլով։
Երբ կմնա կո՛ւյսն ըստվերին մեջ առանձին,
Կսքողե դեմքը ձեռքերով մաքրափայլ,
Հուսակտուր կիյնա խորքին մեջ բարձին
Եվ կսկսի արտասվաբուխ հեծկլտալ...

Ե

Ո՛վ Շահ, եկուր.— ահա լուսնակն անցնելով
Վրանին բաց թողված դռնեն մեղմասույզ
Կողողե որդ իր շարմղուն շողերով։
...Բայց կուլա կույսն, ի՛նչ փույթ, կուլա ամեն կույս,
Երբ ճակատեն քակեն պսակն երկնային,
Կամ կտրեն թելն իր մարգրտե վզնոցին,
Ո՛վ Շահ, եկուր։

Զ

Կհասնի արքան. կուռա ձին
Թիկնապահի մ՚որ կտանի կենդանին
Ջրելու գետին մեջ աստղերով առլցուն։
Ինք կմտնե վրանեն ներս։ Խույրին վառ
Ադամանդեն կսփռվի Հայուհվույն
Դեմքին վրա՝ լույս և հոգիին մեջ՝ խավար։

— Արմենուհի՛, կրսե, ինչո՞ւ դուն կուլաս.
Թող արցունքդ այդ սրբե փառքն իմ խլաս։
Եթե սրտիդ այս սիրտս չէ՛ քավական,

Կամքդ օրենք գահիս, ձիուս սանձ ըլլա,
Միայն ինձ թող՝ այդ մարմնույդ մեջ սիրական
Պահ մը գոնե մոռնամ ըլլալս իմ արքա։

— Իմ մարմինս է հրաշաղված իմ հոգվով.
Եթե դպչիս մեկուն, մյուսն ո՞հ կսպաննես.
Մին մատնիով է կնքված, մյուսն աղոթքով...
Հեռո՜ւ ինձմե.— ո՞հ դու պիղծ ես, գինով ես
Գինիով սուրբ սեղանին իմ Աստուծույն...
Հեռո՜ւ ինձմե. կրբուրե շունչդ արյուն։

— Ես գերիդ եմ. կույս ոտքերուդ տակ ահա
Կմերկանամ զենուզարդես, անունես—
— Դու վագր մ'ես՝ որ ճիրաններդ արյունլվա
Նայվածքներուս առջև հիմա կամփոփես,
Որ տարածես զանոնք հետո իմ սրտիս։—
— Միշտ պիտի քեզ սիրեմ։— Խամրե՞ս պիտի զիս։

— Ո՛վ հուրի, այդ աչքերդ հոգվույս մեջ արդեն
Շահը գերի մ'ըրին, Աբբասը՝ Մեհնուն...
Ո՜ն, վրաս լեցուր սև մազերդ այդ ուղխորեն,
Եվ ծոցդ, հետին բերդ, հանձնե՛ իմ բոցերուն։—
— Ծոցս է խորան, օծված խորանը չէ որջ։—
— Թո՛ղ, թո՛ղ մարմինդ, երբ կթովե ան զիս։— Ո՛չ։

Ինչպես թռչնո մը բույնին աչքն իր հառած
Կմագլցի ծառեն կատու մը վայրի.
Կամ ինչպես օձն, որ կաթին հոտը առած՝
Ծծկեր ուլի մը բերանին կերկարի,
Այսպե՛ս կույսին կդիմե Շահն ու արբշռուն
Կփաթթվի հոլանի մերկ սրունքներուն։

Արմենուհին բազմոցեն խրո՛խտ կոստնու վեր,
Փութորկելով ուսերուն շուրջն իր վարսեր։
Կգնե մերկ ոտքն Արքային ծոծրակին
Ջերդ Տիրամայր վկանդած քարբն ոխերիմ.
Ու այսպես կանգուն շողերուն մեջ լուսնակին,
— Ո՛վ Շահ, կըսե, բանակներուդ ուժն ունիմ։

Եվ կելլե դուրս։ Երբ կանացի հրապույրին
Կուռ շղթաները մի առ մի կլուծվին,
Աբբաս իր մեջ կզգա խրոխտանքն արթնցած։
Փոշիներեն մորուքն ընդոստ կառնե վեր,
Եվ կժողվե պերճ ծիրանին գետնամած,
Որուն վրայե կույսն առաթուր անցած էր։

Կրունկներեն Հայուհին լույս սփռելով,
Կհեռանար հավերժահարսի քալվածքով...
Շահն ետևեն՝ թուրին հենած՝ կմոնչե.
— Գնա՛, կաքա՛վ, դուռը գոց է վանդակիդ։
Ուշ դիր, Արազը թևերդ այդ չթրջե.
Կամ չսպաննե կարծելով զորք մ'ըղքեզ վիթ։

Գնա՛, վաղն ես արեգակին հետ կուգամ,
Տռփիր՝ կուրծքիս ու երկայրիս՝ թերաքամ։
Կճեղքեմ սիրտդ, եթե զայն դու չբանաս,
Ու անոթի գայլերու՝ այդ անզգամ
Արյունդ խանձ կընեմ, ծամերդ երագազ։
Գնա՛, վաղն ես արեգակին հետ կուգամ։—

Է

Հոն ժայռ մը կա՝ որ պատռած լա՛նջքը երկրին
Կբարձրանա գետին վրա առիշեղ.
Ջուրերն այնտեղ սահանքելով մոլեգին՝
Կսասանեն թե՛ ժայռը, թե՛ վարսագեղ
Մորենիի ճյուղեր կախված կատարեն.
Հետո լուանին տակ կսահին լռորեն։

Այնտեղ կելլե Արմենուհին սրտախռով
Ու զերդ եղնիկ մը հալածված կինճերեն
Կխուզարկե շուրջն անհանդարտ աչքերով.—
Ոչ մեկ հնար խուսափելու.— կհսկեն
Ջորքերն հեռուն, ու գետն իբրև պահակ շուն
Կոռնա շեմին վրա բանակին միշտ անքուն։

Կդիտե կույսն երկա՞ր ալքերն ահարկու
Բնազդով մ՚անոնց մեջ սև բախտն իր կարդալու,
Կդիտե լուռ և արտասվել կսկսի։
Երբ որ հովն իր մազերն առած միասին,
Կտանի վեր մինչև լուսնին մեկուսի,
Ան, զերդ Ոգի, կխոսի այսպե՞ս՚ գետին.

— Ո՚վ Արազ, ո՚վ ամեհի մայր, դու որ ա՚յս
Հովիտներեն պոռոչագին կրնթանաս՚
Իբրև խեռ կով մը կաթնալից ծիծերով,
Ունեցիր հեգ ճակատագրիս վրա գութ.
Ռահ մ՚ինձի բա՚ց. թույլ տուր անցնիմ ապահով
Ալքիդ մեջեն կամ վրայեն խութերուդ։

Չկա՞ ինձի տարբեր ճամփա.— վաղն արփին
Երբ լվալ գա մեջդ վարսերն իր ծածան,
Շահի մ՚առջև, վրան գայլի մը մորթին
Պիտի քակեն արծաթ գոտիս կուսության։
Որպեսզի հարճ չըլլամ՚ ըլլամ պիտի դի.
Վաղն արյունս իմ թարթիչներես պիտ կաթի։

Մինչդեռ, ավա՚ղ, իմիններես ոչ ոք դեռ
Չիս առած իր երիվարին գավակն հույր՚
Տանիլ կուգա հայրենական իմ լեռներ։
Ի զո՚ւր երկար ըսպասեցի, արդ ի զո՚ւր
Կխուզարկեմ հորիզոններ նորանոր.—
Սա գորշապատ ափերուդ վրա հեռավոր,

Ուր կլսվին գորտերուն լոկ կառանչներ՚
Լուսինն, ավա՚ղ, կտեսնե ո՚չ մեկ խնդրակ...
Ի՚նչ, մոռացա՞ն զիս, թե կարծեցին եղած կեր
Գայլի մ՚ու ա՚լ ըսպասելով տխրունակ
Ճամփորդներեն իմ արյունլվա շապիկին՚
Առագաստիս շեմին մոխի՚ր սփռեցին։

Ի՚նչ, մայրս ալ չի՞ կարեր երգով մաղթանքի
Օժիտս թանկ.— մի՞թե ասեղն իր ոսկի

Փշրվեցավ հարսանեկան քաղիս վրա։
Եվ հայրս, որուն թևերուն տակ արծվային
Միշտ իր փառքերն երգելով ես ուռճացա,
Օ՚հ, կթողո՞ւ, որ պատին վրա ժանգոտին

,

Սակրն ու թուրն, և հեգ աղջիկն իր չելլեր
Որոնելու բայոցե բայ, լեռնե լեռ
Եվ կտրիճն այն, որ՚ ձեռքը դրած ձեռքիս վրա,
Երեք հեղ, մեր թզենվույն տակ սիրասույզ
Ուխտեց մնալ հավատարիմ՚ ինչպես սա
Մազերս՚ ուսիս, և ինչպես շուքն՚ ոտքերուս,

Մի՞թե այսօր կթողու զիս անպաշտպան.
Չի՞ գար կանգնիլ Փատիշահին դեմ առ դեմ՚
Տարածելով իր պատվույն, իմ գլխուս վրան
Հսկայական թուրին ըստվերը վսեմ։
... Ո՚վ Արազ, տե՚ս, ահա լքված ամենեն՚
Ես քու գութեդ լոկ կսպասեմ ապավեն։—

Այսպես կըսե։— Հետո այն բա՚րձր ժայռեն,
Իբրև զզվա՞նք, թե իբրև վարձք Արազին,
— Ես չգիտեմ— կհանե մանյակը վզեն
(Որով մարմինն իր հրապուրել ուզեցին)
Եվ կնետե ջուրերուն մեջ, որոնք խեռ՚
Վիշապի պես կկըլլեն այդ մարգրիտներ։

Հետո գինդերն, ապարանջաններն ու գոտին,
Բոլո՚ր մեկ, բոլո՚ր մեկ կտեղա՚
Զերդ թափթփող վարդեր տոնե մ՚երկնային՚
Անդունդին մերթ բացվող կլափին մեջ ագահ.
Վերջապես, գոհ, ան կբերկրի՚ նշանածին
Մատանվույն հետ կմնա երբ առանձին։

Կդիտե շուրջն.— հոն զինք մարդ չի լրտեսեր։
Վրաններուն վերևե մերթ ասուպներ
Կսահին նման հողմահալած հիրիկներուն.

Մերթ ալ ձիու մ'հանկարծ խրխինջը կուգա,
Զոր կարածե վտառապահ մը հեռուն...

Փախուստի ժամն, ո՜վ կույս, ժամն է ասիկա՛...

Ը

Գետին մեջ հինգ սև խարակներ միաշար
Կռնակնին ցից նման մրափող ծովխոզի՝
Կմիացնեն զույգ ափունքնե՛րն այն իրար.
Անջրպետեն անոնց՝ ջուրն հորդ կհոսի՝
Եվ կնետե զինք գլխիվար, փրփրահեր
Խորխորատին մեջ, զոր նույն ի՛նքն է բացեր։

Արմենուհին իբրև արծվիկ նորաթռիչ
Կչափչփե աչքով վիհն այն լայնալիճ
Եվ իր տեղեն, քողը հանձնած քամիին,
Կսլանա խարակներեն մեկուն վրա,
Հետո մյուսին, մյուսին հետո, չորրորդին.
Սակայն վերջինն, օ՜հ, կդավե քայլն ահա.—

Կույսին առջև մատնչորեն տարածած՝
Կանանչ ուռկան մը լոռերու՝ կբռնե զայն
Ու կքաշե անդունդին մեջ թխպամած։
Արմենուհին լպրծուն շեմին վրա մահվան,
Սարսռալով՝ թևերն երկինք կարկառուն՝
Կարձակե ճիչ մ'որ կհասնի աստղերուն։

Ընդունա՜յն է.— կատղած սագի մը հանգույն
Ահա վերեն կուգա ալիք մ'ահարկու,
Եվ խոյացած ծոծրակն ի վեր Հայուհվույն՝
Ջայն կընդունե և կտանի խառնելու
— Իբր իր տոռնեն կտրված դույլ մը չքնաղ—
Վարն ավազին մեջ անդունդին մթնշաղ...
Ու ամեն բան կլմընա՜...

Թ

Վարը հոն,
Լույսն ավասիկ կճերմկե հորիզոնն.
Ու շոճերուն գագաթներն հիր կարյունքն.
Ցուրտ նշուլին մեջ ագռավներ սրաթև
Վարդ ամպերուն մխրճելով կտուցնին՝
Կերթան առջի ճառագայթին տալ բարև...

Կուգա՜ Արփին ահավասիկ.— Շա՜հ, եկուր։—
Հոն, ուր Արազն իր հոսանքեն կդադրի,
Արմենուհին ջուրերուն վրա ելած լուռ
Կսահի նման ցողունաբեկ կոկոռի։
Երբ ալ քու թո՜ւյնդ եղավ մահվանն իր դալուկ՝
Քեզ կսպասե ան դագաղին մեջ հեղուկ։

Շուրջը գլխուն մազերն անհուն ցիրուցան,
Գետին մինչև զույգ ափերուն կհասնին.
Փրփրածնումդ հավերժահարսի մ'է նման՝
Ինկած փափուկ ցանցին մեջ նո՜ւյն իր քողին.
Ալյակին տակ բաց բիբերն իր գեղանի
Դեռ կերազեն կարծես լեռնե՛րն հայրենի...

Ու կտանի՜ Արազը զինք, կտանի՜...
Երկու կողմեն երկու զեփյուռ ուղեկից
Լալով կերգեն եղեգներուն մեջ դողդոջ.
Դժգույն լուսինն երկնքին վրա՝ թախծալից
Հուշարկավոր կելլա մեռած իր քրոջ...
Ու կտանի Արազը զինք, կտանի՜...

Գետին հետ կույսն անտառին մեջ չմտած՝
Կաղմկին զույգ ափերն իրար դեմ հանկարծ...
Մին Աբբասն է, որ հլած է փնտրելու
Արմենուհին.— իսկ մյո՞ւսը.— մյուսն ահա
Կոստնու թուփերն, ու ճեղքած մեն մի պրտու՝
Կմտնե գետն.— Առյուծ մըն է.— կհևա։

Հոն եզերքին Շահը կեցած մտախոհ՝
Կերազեր իր Ավարին վրա, որ մնաց
Մահվան մեջ կույս. և կուսության մեջ՝ դշխոյ։
Այդ կյանքին հետ կզգար թուրն իր ջախջախված
Եվ կխորհեր առջևն այդ սուրբ դիակին,
Թե ան իրավ ուժն ուներ իր բանակին։

Երբ դեմ առ դեմ հոն իրարու կհանդիպին
Թագավորներն երկու՝ երկու ափերեն,—
Շահն ու Առյուծն,— ու խոյանքով միասին
Ջուրերուն մեջ իրենց որսին կդիմեն,
Մինն մոնչել կսկսի, մյուսն՝ ըսպառնալ,
Եվ Ավարն այն կուզեն տանիլ երկուքն ալ։

Կխանձի խոլ տենչով գրկել հեղ մ'Արքան
Հայուհին մարմինը ողջ թե մեռած.
Սև գանգուրներն անոր կուզե որ ըլլան
Պարանոցին համար հուռութք դիվ'հալած,
Մարգարտաշող բիբերը զարդ իր գահին,
Եվ սիրտը ջահ՝ զինք տանելու Ալլահին։

Ու մերկ թուրով կխոյանա մոլեգնոտ
Առյուծին վրա և կսկսի մարտը գոռ...
Հոն մինակ են դեմ առ դեմ, ծնոտ առ ծնոտ.
Սուր ժանիքներն ու պողպատիկը ագռոր
Կխառնվին իրար՝ զիրար կկրծեն...
Մերթ կխոցե Շահը գազանն երբուծեն։

Յոթն անգամ խրոխտ մոնչելով կենդանին
Կդնե թաթն ուսերուն վրա Աբբասին,
Ու յոթն անգամ իրարու հետ կխառնին
Մեկուն մորուքն և գոռոզ մազերը մյուսին։
Եվ կփրփրի գետն այս կռվեն, կպզտորի,
Իր ծփանքեն կույսն անոնց մեջ կօրորի։

Ու կոգորին.— կհոսի արյունն ու հոսան իր
Կըլլա անոնց վայրագությանը դրդիչ։

Առյուծն ագին միշտ զարնելով կողերուն
Կխթանե կատաղությունն ավելի.
Աբբասին գոռ խոյանքեն չո՛ւրը ցայտուն
Կհասնի մինչև ամպերուն ծոցն ահալի։

Բայց ոտն առ ոտն ավազին մեջ կխրին
Հաղթ հեսկերն իր լեցված ամբողջ ալիքով,
Եվ կարծրակուռ ժանիքին մեջ գազանին
Թուրն իր հանկարծ կկոտրի կրա՛կ ցայտելով։
Երբ կմնա անզեն, ի զո՛ւր կջանա
Հեծնել ոսոխն և ընդողնել վիզն հսկա։

Կոստնու գազանն ու առած մեջն երախին
Գետեն կհանե ջրաթաթախ Հայուհին.
Կույսին ճերմակ ձեռքը, շուշան տարփալի,
Կիյնա՝ մեռած՝ կենդանիին բաշերուն.—
Առյուծին վեհ գլխուն վրա կփայլի
Նշանածին մատնին ատոզի մը հանգույն։

Ալ ընդունայն է մաքառիլ.— Վեռ արքան
Ոչ ափին մեջ նիզակ ունի, ո՛չ հրացան,
Որ սեգ ոսոխն իր ճամփուն վրա ընկրկե,
Խլե անոր արյուն կաթող մոթներեն
Գոհար աղջիկն այն աչքերով կրակե,
Որոնց բոցերն հանգած դեռ սիրտը կայրեն։

Արդ կզարնե, կփըշրե հոն խարակին
Թուրին մնացած կեսն անպետ, սիրտն իր վհատ.
Ու կարդալով հազար նզովք Դժոխքին՝
Կդառնա իր վրաններուն՝ հուսահատ։

Առյուծն անբիծ կույսը առած կտանի
Լեռներն ի վեր, ավերակ բերդն հայրենի...

ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Հանձա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ,
Ա՛լ վերածնե փլատակներեն, և փառագոչ
Քնարդ ա՛ռ։

Հանո՛ւն Ույժին, հանո՛ւն Գեղին, մտիր մեհյանն
Աստվածներուն,
Ջահը ձեռքիդ՝ բագնե բագին համասփռե
Հուր ու արյուն։

Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սրտին վրա
Լեցո՛ւր, լեցո՛ւր։

Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարեն կույս,
Մե՛նք, Ջավակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալույս։

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՆԻՆ

Կուզեմ ըլլա քու մարմարիո՛նդ պեղված
Ոլիմպոսի ամենեն խոր արգանդեն.
Եվ իմ մուրճիս տակ ըզգենու հրեղեն
Միս մը կնոջ, լույսով, տենդով սրարբած։

Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուզի՝
Հավերժին մեջ անմահացած ըզգա զինք.
Գիծերդ անեղծ ըլլան, ըլլան քու ըստինք
Դաշնակություն մ'ուր կենսահյութը հուզի։

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգվույն պես,
Եվ հեթանոս այդ մերկությանդ ներքև
Տառապի մարդն, ու չկրնա դպչիլ քեզ։

Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարգև,
Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթվիլ՝
Որպեսզի կուռդ ըմպե արյանս հուսկ կաթիլ։

ՎԱՆԱՑՈՒՐ

«...Ամենաբեր նորոց պտղոց տոնից
հյուրընկալ դիցն Վանատրի.»
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Նստած պարարտ եզիդ վրա, օ՛ Վանատուր,
Մեկ ծագեն մյուսը կանցնիս
Հայրենական դաշտերուն։
Մեռա՞ն բոլոր մեծ աստվածները, իրենց
Բագիններուն վրա մամուռը կաճի։
Անմահ եղար դո՛ւն միայն
Նման հողին և կրակին, ու նման
Օվկիանոսի աղերուն։

Ուսերուդ հիր պատմուճանեն դեռ կուգա
Գինիի հոտն Ամանորի տոներուն։
Հակառակ ա՛յնքան դարերու ավերին՝
Բիբերդ դեռ զվարթություն կբխեն.
Ու կենեղուտ դեմքիդ վրա
Արբեցողի կարմիր ծիծաղն է ծեփված։
Ու երբ պարարտ եզիդ վրա կայցելես
Ծաղկամիսեն Միգաբեր,
Անեզրությունն հայրենական դաշտերուն,
Կհոսի ալի՛քը կյանքին
Ակոսներեն հայրենակա՛ն դաշտերուն։

Ահա գարունն ու զարթումներն իր առույգ.—
Հիրիկներո՛վ պսակվե, օ՛ Վանատուր։
Ճամփուդ վրա ճառագայթներ կհոսին
Երակներո՛ւդ պես զեղուն.
Եվ կթաղվին կանանչին մեջ ցողաթուրմ
Բոլոր քարերն ըսպիտակ։
Կտուրներեն գեղջկական
Կբարձրանա ծուխը, խունկի պես խաղաղ։
Թող ես վարդով և ուլունքով գեղաշար
Քառամանյակս կախեմ
Պարանոցեն քու եզիդ,
Հլու եզիդ՝ որ դարձած՝
Մերթ կլիզե բոբիկ ոտքերդ աստվածի։
Օ՛ իր պոչյունը գերազոր, որ ահա
Քարանձավե քարանձավ
Կարթնցնե թմրած օձերն ու արջերն
Ու խաղաղ կյանքն արևուն տակ կպոռթկա։
Աստղերը մեղր կծորեն երկնքեն
Նայադներու սափորներուն մեջ մարմար,
Արշալույսված աղբյուրներուն եզերքեն
Աղավնիներ կլոգնան
Իրենց կտուցեն մարգարիտներ սրսկելով։
Ծիծաղե՛, օ՛ Վանատուր,
Քու հեթանոս ծիծաղներովդ վճիտ,
Չի բնությունն արթնցա՛վ իր քողերեն.

Եվ բերկրությունն, արգասավոր և անհուն,
Օդին մեջեն կանցնի կերթա ու նման
Մեծ կարապի մը վայրի,
Քու հաղթանա՛կդ կերգե։

Ահա ամառն ու իր անդերը խարտյաշ.—
Որաներո՛վ պսակվե, օ՛ Վանատուր։
Պճեղներուն տակ եզիդ
Մատղաշ ցորյանն անտառացավ. այժմ իր
Ծովերուն մեջ ոսկյա լոգանքդ ըրե՛։
Թուփերուն՝ տակ ծաղկահեղց
Բույներն են լի՛ օրհնությամբ,
Եվ արտույտին երգն արևե՛ն մեզ կուգա։
Քու արգավանդ անույշ շունչդ է, որ կանցնի
Դալարավետ բլուրներուն կողն ի վար։
Երդիկին վրա քնացող
Գեղջուկին աչքն ալ կբանա Արշալույսն,
Եվ կփակե Լուսընկան։
Ճյուղերն են լի համեմներու բույրերով,
Ավերակներն իսկ մոխրպատ՝ են զեղուն
Եղիճներու, մոլոշներու հունձքերով։
Ուռենիին տակ, Վանատո՛ւր, կզոհեմ
Նոխազը, քեզ նվիրված,
Նոխա՛զն, որուն լուսեղ մազերն հորդահոս
Քամակին վրա՝ ակոսի պես կճեղքվին.
Նոխա՛զն, որ միշտ կկրծեր
Սուրբ շերտափակն այգիիդ։
Արյո՛ւն խմե ու մի՛ս կեր, օ՛ Վանատուր,
Քու հինօրյա խրախներովդ հեթանոս,
Չի հասկաթուռ ցորյանին մեջ փայլակող
Գերանդիներ քե՛զ կերգեն։

Ահա աշունն ու արյուններն իր հուռթի.—
Որթատունկո՛վ պսակվե, օ՛ Վանատուր։
Նիզակդ ա՛ռ, որուն վրա ոլորուն
Բարունակներ կծաղկին.
Թող ես եզիդ եղջյուրներն

Ողկույզներո՛վ զարդարեմ։
Մրգածառերն, հղի կնոջ մը նման,
Կհևան իրենց բեռին տակ.
Բուներն համակ կպչուն են քա՛ղցր հույզով.
Կորիզն ամեն պտուղի
Քու սերմովդ է պնդացած.
Եվ քու եզիդ շողիքով
Օծված է հողը բեղուն։
Ամբարներն ողջ՝ խաղաղությամբ կլեցվին,
Եվ կարասներ՝ ցնծությամբ...
Թող թեղերուն մեջ ուտե եզդ գարի՛ն
Աստղերու պես։ Իսկ դուն, Աստվածդ զվարթ,
Աստվածդ գեր, վարդերես,
Ա՛ռ դաշխուրանդ, ըմպե՛ արյունը աշնան։—
Աղբյուրին քով ես քեզի
Մատուակեմ թող գինի՛,
Մատուակեմ թող բոցե՛ր։
Ծիծաղե, օ՛ Վանատուր,
Օ՛, Վանատուր, կաքավե.
Չի այգիեն տերևաթափ՝ կերևան
Հավերժահարսերն, երկայնքն ի վեր ցանկերուն,
Եվ աղջիկներ, նուռ լեցուցած գոգերնին,
Դեպ ի մեհյանդ կերթան.
Չի դուն անմահ ես՝ դիքերեն վերջ մեռած՝
Օվկիանոսներու աղին պես,
Չի տաղտկալի ձմռան մեջ,
Հայրենական օջախներուն քով խաղաղ,
Ամեն կիթառ քեզ կերգե։—

ԵՐԵՔ ՔՈՒՅՐԵՐ

Անոնք երեք քույրեր էին
Նման երեք Շնորհներուն.
Երեքն երեք ուխտեր ըրին
Առջևն երեք բագիններուն։

Երեքն ըսավ.— «Դի՛ք կայծակի,
Քե՛ք կձոնեմ մազերս ոսկի։»—

Միջնեկն ըսավ.— «Զգա՛ստ Հիմեն,
Քե՛զ կընծայեմ մատնիս հրեղեն։»—

Կրտսերն ըսավ.— «Վավա՛շ Աստղիկ,
Ա՛ռ իմ կույսի գոտիս ծաղիկ։»—

Ո՛վ որ մազերն ձոնեց Զևսի՝
Ցոթը ազգի յոթ խույր կապեց
Գահին վրա Արտաշեսի։

Ո՛վ որ մատնին տվավ Հիմենին՝
Ցոթը չքնաղ հերոս ծնավ
Գերահզոր Հայաստանին։

Ո՛վ կույս գոտին մեջքեն ձգեց՝
Ան՝ տառապյալ քույրը եղավ,
Եվ բոզնոցին մեջ նուռ ծախեց։

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

Ապարանքին մեջ մարմար կախարդական Երազին,
Ուր աստղակուռ ջահեր լույս անձրևելով կվառին,
Ես արքա մ'եմ այս գիշեր Արևելքի ճոխության,
Եվ ունիմ գահ ու գանձեր, ճերմակ կիներ հերապանծ։
Բազմոցիս վրա՝ զարդարված հովազներու մորթերով՝
Գլուխս հեցած դաստակիս և հեշտության մեջ գինով,
Ընկողմանիկ կդիտեմ Ջերքեզուհի մը անձնյա՝
Որ կպարե իմ առջև, մարգարտահեռ գորգին վրա։
Իր հոտևան մազերեն և մարմինեն ծալ ի ծալ
Կհոսի ծով մ'հեշտության, ուր կսիրեմ ես լողալ։

Զգեցեր եմ փառահեղ պատմուճաններս ոսկեթաթ
Բանված հազար աստղերու արցունքներովը սուտակ.
Շուրջը գլուխիս փաթթեր եմ ապարոշս իմ ձյունափայլ՝
Ծանր՝ նման իմ փառքիս, հանճարիս պես՝ բյուրածալ։
Մատնիներով ադամանդ ծանրաբեռնված ձեռքիս մեջ
Համբիչս հի՛ռ կգլեմ մեծ սաթերով փողփողէջ։
Ինկեր են վար ոտքերիս անխնամ գորգին վրա քրքում
Հողաթափերս ոսկեհյուս և թաշկինակս ապրշում։
Իսկ զետեղված է իմ քով, կենսաժպիտ, փրփրադեզ,
Հսկա բաժակը գինվո, որ հրաշքով մը կարծես
Դեռ նոր հոսված արյան պես կպճլտա իմ առջև։
Սակայն բիբերս ծարավ գույն ու մարմնո գեղաձև՝
Մարգարեի մ'աղոթող բիբերուն պես տեսլացած՝
Անհունորեն սուզեր են հորձանքին մեջ ճախրասլաց
Այն թխաշվի աղջկան, Ջերքեզուհվույն համպարձ՝
Որ իմ առջև կպարե՛, միշտ կպարե՛, կպարե՛...
Իր շարժումն հո՛ւյլ է երբեմն, ու իր հասակն է նման
Հողմնասարսուռ եղեգին, բույր ու փրփուր, երգ համայն.
Իսկ երբեմն այնքա՛ն զորեղ թափ մը կուտա ոտքերուն,
Որ խարույկված բոց կըլլա՝ քամիներեն ծփծփուն։
Օ՜, ան միսին ձևերուն և ծալքերուն հանճա՛րն է.
Գիտե հեղուլ հորդառատ նայվածքներե, մարմինե
Բոլոր հրապույրը կընոչ և տոփիները հեշտին,
Որոնք նման ծովերու առջև անզուսպ կփրփրին։
Ու կպարե՛, կպարե՛, հորձանապտույտ կպարե՛...
Քրտինքներով կպտղի ճակատն հստակ փայլարե։
Վեհ հասակն իր կախարդի՝ մազերուն տակ ծածկված՝
Ուռենիի խոովքն ունի՝ լըճակին վրա ցոլացած։
Մերթ դեպ ետև կթեքի, մերթ ալ դեպ ի ընդառաջ.
Հազիվ եղած շամբ ճկոն, կըլլա բարտի մ'աննվաճ.
Եվ մերթ ցնցուն ոստումով կարծես իրանն հրաշագեղ
Հանկարծակի կփշրե փոշիաբար զերթ բյուրեղ.
Ու հազիվ հաղ դաշնակում մ'իր մարմինեն եղծանած՝
Նոր թեքումով կհորինե նոր դաշնակում մը հանկարծ։
Մարգարտահեռ մուճակներն, ուր ոտքերն իր ծուլվեր են,
Կարծես հազիվ կհպին գորգին վրա նկարին.
Ու իր հատուկ ճախրանքեն կառնու հով մ'այնքան ծավալ

Որ կմարե երբեմն հա՛պ ու կարծարծե երբեմն ալ
Իր ականջին օղերուն փայլատակները լազվարթ
Ու իր բոլոր քայլերուն ճառագայթները զվարթ։
Ու կպարե՛, կպարե՛, կատաղորեն կպարե՛,
Միշտ հպատակ ցոփ կամքիս՝ որ զինք ընդմիշտ կվարե։
Գլուխեն վեր կնետե նուրբ պատմուճանն հապշտապ.—
Կմերկացվին ըստինքներն ու պարանոցը կարապ,
Ու որովայնը բարի՝ իր սև պորտով կնքված,
Եվ հույր բումբերը, բոլո՛ր մյուս մասերն առեղծված,
Համակ խորհուրդը միսին ու իր անճառ ձևերուն,
Ուր դրեր է իր վերջին հանճարը միտքն Աստծուն։
Երբ կտեսնե իր աչքով մերկությունն իր բյուրեղյա՝
Հրապույրներու այդ բոլոր շռայլման վրա կամչնա.
Այն ատեն ցունց մը կուտա փոթորկալից մազերուն,
Որոնց քամին թափընդթափ կերթա մարել սրսփուն
Ադամանդե ջահերն այն մարմարակերտ պալատին,
Մարմարակերտ պալատին ձեղնալույսերը ռեգին։
Ո՜վ մերկություն հրաշագեղ, Հավերժահա՜րս ամոթլյած՝
Որ խորհուրդի մը նման մթության մեջ ես ղողված...
Այն ժամանակ կոստնում վեր կիրքերուս մեջ ծարավի՝
Թողլով որ ձյուն ապարոշս իյնա ոտքիս տակ լուծվի։
Մթարին մեջ առխարխափ Ջերքեզուհին կգտնեմ՝
Առաջնորդված իր կուրծքին հևքերեն բուռն ու վսեմ,
Եվ քրտնաթոր դաստակեն պինդ բռնելով՝ մեկուզի
Կպառկեցնեմ բազմոցիս մորթերուն վրա հովազի։
Օ՜ մագնիսով և լույսով թրծուն մարմինն աղածրի,
Որ թևերուս մեջ կաթի՝ արյունի պես կփրփրի.
Օ՜ իր մազերն հորդածուփ, որոնց մեջ ես կլողամ
Խորը անոնց խեղդվելու վտանգներով հարատամ.
Օ՜ ջերմությունը սատափ բազուկներուն տարփակեզ,
Որոնցմով վիզս զորեղ կպարուրե օձի պես...
Հուսկ իրարու կմիանանք մենք համբույրով մը ճղոր...
Երբ կծծեմ բերանիս մեջ առած շրթներն իր բոսոր,
Երբ ժամերով կքամեմ բյուր երակներն, հոլորեն,
Օ՜հ այն ատեն ճաշակած կըլլամ կարծես համարեն
Հին դարերուն հեթանոս դահամունքներն հազածն,
Հնդկաստանի համեմներն, համայն խունկերն Արաբիոս

ԿԼԵՈՊԱՏՐԱ

Կյուղնոսին վրա քարավազ
Հնչեց տավիղ, հնչեց վին...
Եթովպացի մ'ոպնիազ
Կերգե՝ քիթին վրա կուրին.

«Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ,
Արծաթ ցոուկիդ ես գերի.
Մեջդ սիրտ մը բոցանուտ
Դափնեվարդի պես կայրի։

«Դշխո՛, նավակդ բուրյան
Ունի սատափ թևակներ,
Որոնց ծայրեն կտեղան
Ադամանդյա կայլակներ։

«Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ.
Ահա Տարսոնը գինով,
Կուզե Իտալը անգութ
Շղթայվիլ մեղկ թևերով։

«Բամբի՛շ, դեմքեդ կցոլան
Բոցեր՝ գետի երեսին.—
Լուսինն այսպես կուգա ման
Ջուրերուն վրա Նեղոսին։

«Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Ծաղկածիծաղ ափն ի վեր.—
Նուռ մ'ավասիկ կարմրակուտ
Այգիեն մեջդ է ինկեր։

«Դշխո՛, վրադ պարզեր են
Ամպհովանի մ'ոսկեթույր։
Առջևդ խունկ կծխեն
Յոթը նաժիշտ, յոթը քույր։

«Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Եվ օրորե թագուհին...
Մեր տակ կերգե ջուրն ընդփույթ,
Պատմելով թովքն անդունդին։

«Բամբի՛շ, ծոցիդ բուրումեն
Վիհին օձերն արթնցան.
Շուրջդ ահա կարտասվեն
Մարգարիտներ մոգական։

«Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ.
Տարսոնն հեռուն կերևա.
Ջահեր կայրին բոցանուտ
Նիզակներուն ծայրին վրա։

«Դշխո՛, կողեն նավակին
Ներս քաշե ձեռքդ քնքույշ.
Մատնիդ կիյնա խորն ալքին.—
Կընկղմի կյուսդ, ըզգո՛ւյշ։

«Սահե՛, ո՛վ նավ, վիհին վրան՝
Բաբելոնյան կախ պարտեզ,
Ուր Շամիրամն էր՝ շուշան,
Կղեոպատրան վարդ մ'է վես։

«Բամբի՛շ, գոհարը թագիդ
Եղավ քաղքին ա՛լ փարոս։
Ալքը քեզի անքթիթ
Հոն կսպասե Անտոնիոս։

«Սահե՛, ո՛վ նավ, շո՛ւտ սահե,
Քանի որ մեջդ է Իսիս՝
Ցոուկդ աշխարհը կշահե՝
Քանի որ մեջդ է մայիս։

«Դշխո՛, երկիր պագին ա՛լ
Լեգեոններն Հռովմի։

Ըզքեզ դատող սալարն ալ
Հմայքեդ դողալ կթվի։

«Կեցի՛ր, ո՛վ նավ, շո՛ւտ կեցիր,
Ափը կելլե թագուհին,
Երգս ալ կըլլա ցանուցիր.—
Պետք է փոխեմ լարերս հին»։

Գուսանն ա՛լ վինը չածեց.
Իսկ համբույրով մ'այն գիշեր
Կին մ'Իտալիան նվաճեց,
Մարդ մը՝ Բուրգերն հաղթաժեռ։

Օ՜ ՏԱԼԻԹԱ

Կարմրաշռայլ լույսերուն մեջ կվառի
Կապելադ, օ՜ Տալիթա։
Բեր գարեջուրն, և թող փրփուրն հոսանուտ
Մատերդ ի վար պղպջա։

Ի՜նչ փույթ թե ես ազնվական կթվիմ,
Ունիմ ձեռքեր քնքշենի.
Եվ ի՜նչ փույթ թե դուն աղջիկ մ'ես ցլեբաց
Որ բանվորներ կընդունի։

Կատեմ կիներն՝ որք դիմացն հայլիին
Դիմաներկեր կշաղվեն.
Կծծցնեն Մերակույտի անդամներ
Տոփանքներով տարորեն։

Դահլիճներուն փարթամ կիները կատեմ.—
Իրենց կավատն է՝ ոսկին.
Ձիրենք սիրողը կսպառեն, և իրենք
Տան շնիկեն կսպառին։

Բե՛ր, Տալիթա՜, բե՛ր գարեջուրն, ու նստե
Ծունկիս վրա՝ թռչլ տալով
Որ աղախնի կարգ քղանցքեդ երևնան
Բումբերդ՝ սև գուլպայով։

Թող ճրագներդ հլուծին մինչև առավոտ,
Եվ թող շեմին վրա երգն
Գինով աշուղն՝ հառած բիբերը մեզի,
Բիբերը զուրկ կրակե։

Թող մազերուդ ոսկի հյուսակերը քակես
Գավաթին մեջ բյուրեղյա,
Եվ ծունկերես վար սրունքներդ օրորես՝
Մինչև որ սերս հասուննա։

Ինձի ի՜նչ փույթ թե շրթունքներդ են խածեր
Նավաստիները կոպիտ,
Եվ հոսեր են քրտինքն իրենց տոփանքին
Աչքերուդ մեջ ու ծոցիդ։

Այսօր կուզեմ կուրծքիդ վրա գինովնալ
Ինչպես զինվոր մը արբուն.
Կուզեմ պարպել գավաթդ, և դուն ալ պարպես
Սիրտս՝ նուռի պես հասուն։

Այսօր կուզեմ դահլիճին մեջ ծաղրված
Սերս առչեդ պղծել,
Խաբված հոգիս բերել ռամիկ աղջկան
Գարեջուրով մը ծախել։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱՂՆԻՔ

Մորճագմբեթ բաղնիքին ներքնադուռն հույլ կբացվի։
Եբենոս դուռն հաստաբետ, որ կծեծվի միշտ թակով
Եվ անընդհատ կքրտնի, կճռնչե ուժասպառ
Հուրիներուն ետեեն, որք դանդաղ կմտնեն։

Բոլոր մերկ են ու չքնաղ.— թևերն իրենց ծալեր են
Լանջքերնուն վրա հոյաշեն՝ որոնց վրա կդիզվին
Կույտերն իրենց ծիծերուն, պտուկներով թխագեղ։
Սատափազօծ սանդալներն հատակին վրա կհնչեն.
Սրտերնուն հեքն աղվական, ձայներն իրենց քաղցրանույշ
Բաղնիքեն ներս կփոխվին անդնդասույզ ղողանջի.
Աստղերուն պես՝ լողացող մառախուղին մեջ աղոտ՝
Իրենց աչքերը խոնավ նշողյուններ կարձակեն,
Եվ գոլորշին, իր տամուկ շղարշներով կպատե
Մարմինն իրենց, որ պտղիլ կսկսի ա՛լ քրտինքով։
Հուրիները կլոգնա՜ն.— Պորտաքարին կիզանուտ
Ոմանք պառկած նվաղկոտ նայվածքներով կերազեն։
Լուսացնցուղ գմբեթեն արևուն շողը ճերմակ
Ներս կմաղվի՝ մարգարտյա հորդ անձրևի մը նման.
Եվ ծփանուտ գոլորշին կդառնա ծով մ'արծաթյա՝
Ուր լյուղ կուգան կարապներն Արևելքի Հեշտանքին։
Սպածանին՝ որ կպած է զիստերնուն լոռի պես,
Ա՛լ կնետվի. մարմինները կփոխվին արձանի.
Եվ մազերնին հյուս առ հյուս, ծովերու պես կքակեն,
Ուրկե երբե՛մն կիյնան գոհարներու հատիկներ։
Օ՜, ծամե՜րն այդ, ծամե՜րն այդ, որոնցմով ա՛լ կծփա
Կարծես բաղնիքը ամբողջ. և պորտաքարը մարմար
Կթխանա անոնց հորդ սևափրփուր ալիքով։
Գլուխն իրենց կսանտրեն ոսկեդրվագ սանտրերով,
Երկա՜ր, երկա՜ր, մինչև ծայրն անծայրածիր մազերուն
Կերթան իրենց մատվները ծեքծեքուն ու դանդաղ,
Միշտ լողալով կայծերուն մեջ մատնիի ադամանդ։
Անոնք երբե՛մն կզգան նվաղումներ ու երբեմն
Հանկարծակի կսարսռան, երբ գմբեթեն կկաթի
Ցուրտ ցող մ'իրենց ծոծրակին հեշտագրգիռ փոսին մեջ։
Ահա հարյուր ծորակնե՜րն, ահա մարմար ծորակնե՜րն
Իրար ետև կբացվին՝ աղմկահույզ կարկաչով.
Մոխիրի պես գորշ շոգին կբարձրանա ծուփ առ ծուփ.
Դատարկ գուռերը բոլոր կենդանություն կստանան.
Ջուրը կհորդի ամեն կողմ, ջուրը կերգե քաղցրահունչ.
Հուրիները կլոգնա՜ն.— Գուռերուն շուրջ հավաքված

Գանովայի՛ Շնորհներ, կարծես իրար կփարին։
Եվ կխառնեն ծիծերնին, կխառնեն ժիր թևերնին
Եվ սրոնքնին պաղպաջուն, և պորտերնին կոշարա,
Ուրկե մուշկի հատիկներ, տարրալուծված, կբուրեն։
Մարմարներուն վրա նստած զիստերն իրենց՝ կընդլայնին,
Ուր կխմեն հեշտությունն իրենց տակեն սահող ջրին։
Ոսկի թասերը ահա քարերուն վրա կհնչեն։
Տոսախ թասերն, որոնք մերթ սիրտերու պես կճայթին՝
Այդ անպատում մերկությանց ծառայելու ժամանակ։
Կքրքրի կավն ահա, ծոթրինաբույր կավը զով,
Նաղկահյութով զանգված՝ զոր մեր նախնիք կուտեին։
Մազերն անով կծեփվին, ու կդառնան ապրշում։
Լանջքերն անով կօծանվին ու կըլլան նման փրփուրի.
Անոր խյուսովը պաղուկ և լպրծուն շաղախով
Կզովանան հուրիներն, որովայնին կհղկեն
Գետի խիճին պես ողորկ ու թավշորեն օծանուտ։
Կեռան ջուրերը, կլվան Կրակներն այդ պաշտելի.
Կփրփրին օճառներն՝ Մաքրություններն անգամ մ'ալ
Իրենց մածան լույսերուն մեջ մաքրելու ի խնդիր։
Ջուրն, որ ամեն կողմանե, պորտաքարին շուրջն ի վար
Կհոսի կերթա՝ կոյուղին իսկ բուրումով լեցնելու,
Գո՛րշ է կավով ու կիրով, լեղի կիրով հերաթափ
Եվ իր ուղխին հետ մեկտեղ մերթ կգլե, կտանի
Թխակուտակ թնճուկներ, անութներու գանգուրներ,
Եվ խոիվներն աղվամազ այդ կիպերյան լուսեղեն
Արձաններուն կենեղուտ՝ որոնք այլևս ուժաթափ
Կլեցնեն հուսկ թասերն, թասերը հուսկ կպարպեն։
Գուռերն հե՛ղ մ'ալ կհորդին, բաղնիքն հեղ մ'ալ կաղմկի,
Ջուրն եռեփուն կվազե՛, հե՛ղ մ'ալ կլողան հուրիներն։
Կբոլնկի մորթերնին վարդի մը պես բոցավառ.
Եվ նվաղուն բիբերով, թասերն՝ իրենց գլուխին,
Կուրծքերնուն վրա միշտ գրկած դեզերն իրենց ծիծերուն՝
Այլևս դուրս կփութան, շարան շարան, հևասպառ,
Անգայտացած շոգիով, կակաչներու պես բոսոր...
Օ՜ գանգուրներն հորդառատ՝ իրենց կուրծքին վրա մերկ,
Օ՜ գանգուրները խխում, կաթիլներով ծանրացած,
Որոնք բոբիկ ոտքերնուն սատափ ցողեր կծորեն...

Ի՜նչպես պատմել ձեր օծումն, ի՜նչպես պատմել ձեր զարդերն
Երբ մարմիններդ կսրբեք, և կուռքի պես կհագվիք...
Թող համբուրեմ մազերնիդ՝ կնդրուկներով օծանուտ,
Որոնք, գիշերը, լուսնին տակ, կբուրեն բարձին վրա.
Եվ հոնքերնիդ ծարուրված, ամպանման թարթիչնիդ,
Եվ լա՜նջքը ձեր, որ փաղփուն մանյակներով ոսկեշար
Ամուսնական անկողնին նշողուն ջա՜հը կըլլա.
Թող համբուրեմ պորտը ձեր, ուր ծրարած կծածկեք
Թե՛ Արաբիո հաշիշներն և թե՛ մուշկերն Ափրիկյան։
Ձեր տուներն այժմ կերթաք գոհարներով բեռնավոր...
Թող սալարկները Քաղքին ձեր քայլերեն թարմանան...
Ցուրտը խածնե թուշերնիդ ու այտերնիդ բոսորե։
Վարշամակեն ձեր տամուկ, քղանցքներեն ծփծփուն
Արտաբուրե՛ և հորդի՛ լոգանքին հոտը ծոթրին.
Եվ լեցընե գոհեներն, հրրապարա՜կն և ուղի՜ն.
Ավելցած մասն այն հացին, զոր դուք բաղնիք կտանիք,
Զոր թասին մեջ կդնեք, և կծածկեք ղենջակով,
Թող արձակե՛ բուրումն իր՝ տարաշխարհիկ համեմով,
Զի այն ատեն փողոցներն Արևելյան Քաղաքին
Պիտի ըզգան, թե Մայիսն հետքերնուդ վրա կծաղկի,
Եվ թարմացած մայթերեն Գարո՜ն, Գարո՜նը կանցնի։—

ԳՐԳԱՆՔ

Ափը լճակին մենավոր՝
Ուր տնակս իմ կախարդորեն շիներ եմ՝
Ձեռն ի ծնոտ ըսպասեցի իր գալուն։
Նռենիին՝ տերևներուն տակ բոսոր,
Նուռի մը պես ճեղքված,
Սիրտս, շիթ շիթ, արյուն թորեց ծունկերուս՝
Կարոտը սե՜ռս արյունեց.
Եվ ամիսներ բովանդակ

Եղնիկի պես լացի գոհար արցունքներ
Ափը լճակին մենավոր։

Ու վերջապես ան եկավ
Այգիներեն քաղցրաբույր՝
Ուր ողկույզներն, ըստինքներու պես լեցուն,
Հողին վրա կկախվին,
Մոր մը գրկեն, որ իր մազերը խարտյաշ
Ամեն առտու, ճաճանչներու պես սանտրեց,
Շուշաններու պարտեզեն՝
Ուր տատրակներն Անմեղությո՛ւնը կերգեն՝
Ան վերջապես ա՛լ եկավ։

Ո՛վ վարսագեղ հովվուհիս,
Որ աղբյուրի լույսեն ծլած խոտին մեջ,
— Գալու համար իմ սիրույս—
Լքեց անթիվ գառնուկներն իր մոլորուն.
Եվ զարնելով փարախին դռան քարին վրա,
Խորտակեց սրինգը տոսախ
Խենթի մը պես կողկողագին ողբալեն,
Ո՛վ վարսագեղ հովվուհիս։

Երբ ներս մըտավ իմ շեմես,
Ջյուն կարապներս օձաճապուկ վիզերնին
Կարկառեցին դեպ անոր,
Դեպ մարմարե իր ոտքերուն համբույրին։
Եվ շունս հլու, փորին վրա սողալով,
Եկավ լիզել կրունկներն անոր ադամանդ,
Ժպիտներով աչքերը լի, վիթի պես,
Ան ներս մըտավ իմ շեմես։

Տնակըս բույրո՜վ լեցվեցավ,
Զի ծոթրիններ ծորեցան
Պատուճանին քղանցքեն,
Զի արևով օծված ոսկի մազերեն
Բուրյան մեղրեր ծորեցան.
Եվ բիբերեն՝ մարգրիտներու պես փաղփուն՝

Թափթրփեցան ասուպներ.
Տնակս լույսո՜վ լեցվեցավ։

Մեզ գրգարան շինեցի.—
Գարնան բոլոր վարդերը գոգ գոգ բերած՝
Հարդարեցի մեր անկողինն հիմենի.
Նունուֆարներն, որոնց ծղոտները կակուղ
Հոտող սուրիս ներքև արյուն ծորեցին՝
Մեր գըլխուն տակ բարձ եղան.
Ծաղիկներովն հողին և ջինջ ջուրերուն,
Աղվամազով տատրակներու դունչերուն
Մեզ գրգարան շինեցի։

Վարդերուն վրա փրփրեցավ
Իր մերկությունն երեք անգամ կաթնային։
Հնդկաստանի յուղերով
Լույսերու պես օծեցի շեկ վարսերն իր.
Եվ ծալերուն մեջ մարմինին՝ իմ բոլոր
Խնկամաններս քրմորեն պարպեցի։
Ան, առաջին համբույրիս տակ խռոված,
Օշնանի պես պղպջուն՝
Վարդերուն վրա փրփրեցավ։

Ու քնացավ կուրծքիս վրա...
Օ՜ մատերս իմ, որ ժամերով լողացին
Մազերուն մեջ հորդառատ.
Օ՜ բերանս իմ, որ բերնին վրա զգլխիչ՝
Խմեց սափորն իր սըրտին։
Իրար հյուսված մենք բաղեղներ խանդակաթ
Ծաղիկներուն միջև հե՛ղ մ՚ալ ծաղկեցանք։
Ան քնացավ կուրծքիս վրա...

Կարապներն ա՛լ թուխս նըստան.
Ծղեղնուտին մեջ քամին մեղմ նըվագեց
Մլարձակման մեծ օրենքները Գարնան.
Նունուֆարի հոտված ծղոտները դարձյալ
Ջուրին մեջեն արձակեցին փթիթներ։

Մերին սըրտերն ունկնդիր
Իրարու մեղմ տրոփյունին՝ նընջեցին.
Եվ լիճին խորն, աստղերուն վրա թևամփոփ,
Կարապներն ա՛լ թուխս նստան։

...ՈՎ ԼԱԼԱԳԵ

Կհիշե՞ս, ո՛վ Լալագե.—
Ես քեզի հետ, ծանր ամիսին հղությանդ,
Այգիս մեջ ման եկա
Պտղաբերձ օր մը աշնան։
Մայրամուտին շողերուն տակ դալկահար
Ծառերն էին ոսկեձույլ։
Եվ ողկույզներն աչքերու պես հրեղեն
Քաղցրություններ կծորեին հողին վրա։

Օ՜ իմ այգիս, օ՜ իմ այգիս կութքի՜ մեջ...
Հարյուրավոր ժիր գերիներս հլու՝
Երկայնքն ի վեր ցանկերուն՝
Կկթեին սարբինան.
Եվ կողովներն հյուսված էին հրաշագեղ
Մայրամուտի ոսկեառէջ նշույլներով...
Անապատի անծանոթ երգ մը՝ շուրթին,
Եթովպուհին խնձորենին կթոթվեր
Ծիծերն ի վար, գոգին մեջ։
Հոն, տղաներ խառնածին՝
Կանանչացած, լեղակե թուխ ձեռքերով
Կժողվեին ընկույզներ։
Անդին բլուրեն վար, դեպ Քաղաքը, ճոնչուն,
Մեծդի եզներ, որոնց եղջյուրն այգեպանն
Որթատունկի սաղարթներով է պսակեր,
Կքաշեին սայլերն ամբողջ բեռնաբարձ
Ողկույզներու դեզերով

Եվ ալիքով գինիի։
Եվ փարչին մեջ, աղբյուրներուն վրա բոլոր
Տերևներ լյո՜ւղ, տերևներ լյո՜ւղ կուգային...

Արդ հիշեցի՞ր դուն այն օրն, ո՜վ Լալագե։
Ակոսներուն և կողերուդ ընդմեջեն,
Այն ծանր ամիսն հղությանդ,
Կանցներ ալիքն հողին հորդող ույժերուն։
Արեգակի արյունին նուռն էր՝ ծոցիդ
Մեջ հասունցած։ Բուներն ի վար ծառերուն
Կծորեին շիթ առ շիթ
Հույզերը՝ նման արցունքի։
Քու համբուրված մարմինդ պես ծանրակիր
Հողն էր թրջված, էր կպչուն
Քաղցուներով և մեղրով։
Անուշաբույր իր բեռին տակ կկքեր
Դեղձենին քեզ նմանակ,
Քու ծիծերուդ նմանակ
Ողկույզներն այն լեցուն էին՝ ապագա
Միծաղներով, ցնծությունով և կայթով։
Ու իրիկունն այն կուռեր կո՜ւրծքը հողին...
Հնձաններուն քովեն անցանք մենք դյութված
Խազմուզին բարկ բուրումեն։
Գերուհիներ, պարեգոտին հանգրհած
Մինչև իրենց պորտին տակ,
Կկոխեին խաղողն ատոք, թրջելով
Մինչև իրենց պորտին տակն, ո՜վ Լալագե։
Վայրածփիկ մազերնուն ծայրը հատակ
Կներկվեր բոսորագեղ հույզին մեջ,
Եվ քովն իրենց հնաբույր լայն կարասներ
Նվիրագործված ամեն տարի, ծոցիդ պես,
Լեցուն էին գինիներով— ծոցի՞դ պես—
Լեցուն շողո՜վ, հաղթանակո՜վ, բերկրանքո՜վ,
Հավերժական կյանքերով։
Հետդ անցանք ծիծաղներու, երգերու
Մեջեն առույգ, զոր աշխատող հոգիներ
Կպոռթկային տերևներուն ներքևեն.

Ու բուրումներն աշունին
Կհասնեին մինչև աստղերն արծարծուն.
Ու այգին, լի պտուղներով բազմազան,
Կարծես կայրեր, կծավալեր խունկ մ'անույշ
Վա՜ր, մինչև Քաղաքին վրա հեթանոս,
Քաղաքի՜ն վրա, որ միշտ, տոնի խրախի մեջ,
Կսպառեր հողն ու ավիշները հողին։
Այն ատեն (թույլ կուտա՞ս ինձ
Խոստովանիլ, Լալա՜գե)
Ես ունեցա ընդվզումներ արյունի,
Ու ցանկացա արեգակին, հողին պես
Ուռճացընել ինձ մերձեցող ամե՜ն հունտ.
Ու, թո՜ւյլ տուր ինձ խոստովանիլ, Լալա՜գե—
Երբ դուն անդին՝ կարկառուն նուռը ծառեն
Կքաղեիր. ու հետո
Կխածնեիր լիարբերան հեշտանքով
Անոր բոսոր մարգրիտներուն շարքն անույշ՝
Ես ասդին թուխ Սթովպուհին, որ ջլեբաց՝
Հնձանին մեջ կճմլեր կուզն,
Համբուրեցի՜... բռնած հնդիկ ծամերեն՝
Պառկեցուցի ժպտագին գլուխը կուրծքիս
Եվ հեշտաբո՜ւռն շրթներով, Լալա՜գե,
Համբուրեցի՜...
...Բայց դուն ինչո՞ւ կարտասվեաս։
Այն հեռավոր աշունին
Բուրումներուն մատնչությանը համար,
Ո՜վ աշնագեղ Լալագե,
Արտասվել չա՜րժեր այսօր։—

«ՕՐՀՆՅԱԼ ԵՍ ԴՈՒ Ի ԿԱՆԱՅՍ...»

Մարիա՜մ, այս անկողնին վրա երբ նստիս,
Ու ես առջևդ, գորգին վրա ծնրադիր,
Համբուրեմ խաժ երակներն
Այդ ձեռքերուդ, որոնցմե լույս կծորի,

Մարիա՜մ, տաք շրթունքներուս տակ կզգամ
Էա՜կ մ'որ, լուռ, արյունդ ումպ ումպ կխմե։
Այն գիշերեն, երբ մազերդ այդ բարձին վրա
Անփութորեն լեցուցած,
Ոտդ հաճույքին բացիր, և բուռն հաճույքեն
Քրտինք մ'առատ քունքերդ ի վար հոսեցավ,
Եվ կուսությունդ մեռավ
Արգանդիդ մեջ և աչքերուդ երկնաթույր,
Այն գիշերեն՝ թարթիչներեն կոպերուդ
Մե՜ղր ծորեց, դուն եղար
Հեզահամբույր, լռակյաց,
Ջյունափետուր դուն աղավնյակը եղար,
Որ արևուն տակ կծկված՝ կերազե
Բույնին վրա շինվելիք...
Կդիտեմ արդ քաղցրիկ հյուծումը դեմքիդ
Եվ բաց շապկիդ մեջեն ծիծերդ, որոնց մեջ
Կբաժնվի կյանքդ, և դուն
Բաժնվելով մա՜յր կըլլաս։
Մեն մի զարկին մեջ երակիդ ես կզգամ
Տրոփյունը նո՜ւյն իմ սրտիս
Եվ բողբոջումը արյունիս ծաղկին,
Որուն բուրումը կարբեցնե զիս և քեզ
Եվ սերն է մեր երկուքին։
...Օրհնյալ ըլլաս, Մարիա՜մ,
Դո՜ւն, որ անհուն գորովով
Կողերդ ինձի՜ կուտաս և ո՜սկրդ ուրիշ
Ոսկրի մ'համար կքամես,
Դո՜ւն, որ կըլլաս ամենեն
Մաքուր ակոսն ակոսներեն բեղմնավոր
Ու ամենեն չքնաղ թաղարը բոլոր
Թաղարներեն շուշանի՝
Օրհնյա՜լ ըլլաս հավիտյան։
Դո՜ւն, որ, զգոն, կկրես
— Խեփորին մեջ ինչպես մարգրիտ մը ազնիվ —
Աստվածատիպ Մարդը խո՜րն այդ արգանդիդ՝
Օրհնյա՜լ ըլլաս, Մարիա՜մ...

ՀԻՆ ՍԵՐ

Մամ ու ծերուկ, երկու թարշամ հոգիներ,
Եկան նստիլ շուքին ներքև ծիրանվույն՝
Որուն քնքույշ ծաղիկներն էին զարդարեր
Օր մը գլուխը հանվույն։

Անոնք սաստիկ կդողդոջեն, իբր ըլլան
Սիրահարներ հանկարծ իրար հանդիպած.
Բայց քովերնին՝ ցուպերն իրենց լոկ կմնան
Խոտին վրա՝ գրկված։

Ջունին այլևս հրդեհումներն արյունին.
Անոնց հոգին համբույրի երգը չունի.
Ոչ ալ հոգնած կողերնուն մեջ կծաղկին
Սերմերը՝ նման շուշանի։

Պապուն նայվածքն աչվքներուն մեջ մամուն
Կնվաղի՝ չթափանցած դեռ սրտին.
Եվ կմսի գաղջ ճառագայթն արևուն
Անոնց ծոցին մեջ ցրտին։

Եթե փորձեն իսկ տարփանքի փորձ մ'անմեղ
Գարնան դրդիչ բուրումներեն սարբած՝
Կփշրի սիրտն, իբրև բաժակ մը բյուրեղ
Հանկարծ կրակին դեմ ճաթած։

Վարդերն անցա՜ն, անցան բոցերն այտերե.
Սերն անոնց կայծ մ'է մոխիրին մեջ թաղված,
Ջոր հիշատակն իր շունչով իսկ կմարե
Վայրկյան մ'հազիվ արծարծած։

Ու հիմակ այս գարնանային իրիկունն,
Երբ կբուրեն կինամոնները բլրան,
Կիյնա անոնց միտքը հին սերն հանկարծույն՝
Հին աղոթքի մը նման։

Եվ կհիշեն, շուքին տակ նույն ծիրանվույն,
Մեռած գգվանքն, իրենց տարփանքը հեշտին,
Հետո համբույրն ու հետո ճի՛շը մամուն՝
Եվ իրարու կժպտի՛ն...

ՎԵՆԵՏԻԿ

Ծավի Վենետիկ, փառապանծ Տիկին,
Զոր Իտալիան գինիով սնույց,
Եվ Արևելքն իր զարդերով անգին
Պճնեց վեհ ճակատդ ու ոտքերդ լույծ։

Ադրիականին բամբիշն ես հավետ,
Զարդարված՝ ջուրե ժապավեններով,
Լիտոյի արևն, ելլելով ծոցեդ,
Թագ կըլլա գլխուդ և կընկղմի ծով։

Կհեղու երկինքն, իբրև սիրահար,
Աստղեր գրկիդ մեջ, աստղեր մազերուդ։
Ծովն առջևդ սփռե՛ր է գորգ ու գոհար.
Զույգ կապույտի մեջ Ծրա՜զ մ'ես կապույտ։

Կոթնած՝ բարձերուն վրա փրփուրե՝
Որքա՜ն թովիչ ես, երգն ալքերուն լուրթ
Երբ որ կունկնդրես,— ո՛վ Քաղաք ջուրե,
Ո՛վ Լաբյուրինթոս քայլերու պանդուխտ։

Ունիս ճամփաներ նեղ ու օձհոլով,
Կեսը սալաքար, և կեսը՝ ալիք.
Հոն կրնանք, ընկերս ու ես, խոսելով
Երթալ,— ես՝ ոտքով, նավակի մեջ՝ ինք։

Անիվն անոնց մեջ ակոս տեղած չէ.
Եվ ոչ ալ պայտն հուր կայծեր սերմանած.—

Ձկնորսին սանդա՛լն հզոր կհնչե
Հո՛ն, ուր ճեմեց Տոժն օր մը սիգընթաց։

Անթիվ կղզիներ, շենքեր վրանին,
Կոր կամուրջներով են շղթայարկված,
Կարծես կուզ ուխտերն են Ճարավանին,
Անապատին մեջ ժայռերու փոխված։

Կլվա ջուրն հի՛մը տուներուն գեջ՝
Փոշի առ փոշի ծեփը լիզելով։
Երկու կղմինդրի անջրպետին մեջ
Կածե սլականջն ի՛ր ձվերն ալեխառով։

Պատուհաններուն տակ ջրանցքներ շափյուղա
Հայլի են կարծես՝ զոր ծովն է հղեր,
Ուր աստղերուն մեջ, լուսնին քով, կրնա
Վենետկուհին իր դեմքը զետեղել։

Որմերուն ըստվերն հեհև կնազի
Ալիքներուն վրա, ալիքն՝ որմերու։
Տունը ջուրին մեջ նորե՛ն կսկսի,
Միշտ քայքայվելով՝ առանց փլչելու։

Դռներուն խոնավ շեմը կոնտոլ մ'է.—
Անզույգ Քաղաքին անզո՛ւյգ կարկուրա,
Որ գիշերվան մեջ՝ ճակտին կկրե,
Միակ աչք մ'հրեղեն,— փայտե՛ կիկլոպա,

Որ լորտուի պես սև, սողագընաց,
Կամուրջներուն տակ կսահի կանցնի,
Ինչպես զղջումին տակ մե՛ղքն ամոթխած...
Ա՛յս տարբերությամբ՝ որ մեղքն աչք չունի։

Ահա Մեծ-Ջրանցքն, ո՛վ Քաղաք-դշխուդ,
Որ կոր երիզով քեզ կպարուրե,
Իբր Ադրիականն իր թևը կապույտ
Վիզդ անցըներ, որ թուշդ համբուրե։

Սուրբ Մարկո՛ն ահա, թանգարան անհուն
Գեղարվեստներու, բրածո սուրբերու.
Անոր կից պալա՛տն ահա Տոժերուն.—
Խորանը գահեն քա՛յլ մըն է հեռու։

Ահա Փիոմպիներն, որոնց տակ հավետ
Այսօր կմնչեն տատրակներ հլու.—
Երնե՛կ քեզ, անկմանդ մեջ իսկ, ո՛վ Վենետ,
Բանտերդ են փոխված թռչնո բույներու։

Եվ ա՛յլ տաճարներ, ա՛յլ ապարանքներ,
Կոթողներ կրոնքիդ, հանճարիդ հսկա,
Ալիքներ անոնց առջև կերգեն դեռ
Փառքդ անցյալ՝ գրված ծովերուն վրա։

Ու հառաչանքի կամուրջն ավասիկ,
Կամուրջն, որուն վրա, իրիկնադեմին,
Երգը լսեցի ջուրերուն հեզիկ,
Երբ կուգար աչքերս համբուրել քամին։

Կանգնած՝ արևուն առջև մայրամուտ՝
Սերտեցի գույներ, շողեր մեղմընթաց.—
Քու երկնքիդ մեջ և քու ջուրերուդ՝
Հոգիս նկարչի վրձին մ'էր գտած։

Ո՜րքան ալիքներ, ալիքներ լաջվա՜րդ,
Ալիքներ նարի՜նջ, հակի՜նթ ալիքներ...
Ո՛վ Վենետիկ իմ, լճակդ զվարթ
Թիցիանոյի երանգապնակն էր։

Պիտի քնարս իմ քեզ հիշե հավետ,
Քու փառքդ մուրճի, փառքդ վրձինի.
Պիտ հիշե և՛ խուցն այն տխրավետ
Կանանչ ջրանցքին վրա սուրբ Գարմինիի։

Իր պատուհանին ձողերուն առջև
Էր, որ ես լացի, նայելով լուսնին,

Կամքս բանտարկված։ Հոն սիրտս հևիհև
Ըմպեց հեռացող երգը ձկնորսին։

Դարձյալ անկից էր, որ ես առջի հեղ
Տեսա Լինտան, կույսն ատամներով բրինձ,
Որ նստած իր հոր նավակին մեջտեղ՝
Կհյուսեր ուռկան մ'ու կժպտեր ինձ...

ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔԸ

Ջորերուն մեջ, սարերուն վրա կարածեր
Ան ամեն օր ուլն իր կապույտ աչքերով.
Ոտքերը մերկ էին և միշտ ալ վստահ
Մեն մի քայլին՝ շուշանի վրա կոխելու։
Ճերմակ կրծքին մերկության վրա վիժանուտ
Ոսկի հերքեն կծորեին ծոթրիններ.
Ո՛չ մրտենին և հասմիկները գլխուն
Կթոշնեին, ո՛չ ալ վարդերն այտերուն.
Ան միշտ կերգեր, ու երգն իր
Կծիծաղե՛ր սրտին մեջ։
Իր ըզգեստիկը կապույտ
Երկնքի մեկ ջինջ կտորեն էր ձևված.
Եվ հովվական իր ցուպն էր օձ մը բրածո՝
Քարացա՛ծ օձ, որ իր մաքուր ձեռքին մեջ
Դեղձիի ճյուղ մը եղավ։
Երբ վտակին եզերքեն
Ան կքշեր ուլն իր կապույտ աչքերով,
Ծառերուն մեջ գաղտագողի՝ լուսնկան
Իր ետևեն կքալեր.
Եվ լուսնկան տարփատենչ բիբն էր գուցե
Եհովային, կույսերու հի՛ն Սիրահար։

Բայց իրիկուն մ'ան հովտեն ձայն մը լսեց՝
Որ զինքը, վա՛ռն, աղբյուրին քով կկանչեր.

Երգ մ'էր կարծես, ա՜յնքան աղվոր և դյուրիչ,
Որուն իր ուլը ճերմակ
Վիզը տնկած, խոտը բերանն, ունկնդրեց.
Նոր երգ մ'էր ան՝ որ կըսեր.
«Ճերմա՜կ աղջիկ, ճերմա՜կ աղջիկ, վա՜ր եկուր,
Եվ աղբյուրին քով ուլդ ինձի զոհ ըրե։
Թզենիին շուքին տակ,
Ճերմա՜կ աղջիկ, ճերմակ ուլդ ինձ զոհ ըրե։
Այս լեռներուն ես Ոգին եմ լիազոր,
Իմ շունչիս տակ՝ թե ուզեմ՝
Գետերն արծաթ կհոսեն
Եվ հեղեղները՝ ոսկի.
Հասած տեղն իմ համբույրիս
Կանցնի սարսուռն, որ բաղձանքն է ծնունդին.
Իմ գրկիս մեջ շուշաններ վա՜րդ կդառնան,
Եվ կույսերն ալ՝ թագուհի։
Ես քու զոհիդ արյունեն
Դաշտերն ամբողջ ծաղիկներով կլեցնեմ,
Եվ ուլիդ տեղ թիթեռնիկներ կարածես.
Ճերմա՜կ աղջիկ, ճերմա՜կ աղջիկ, վա՜ր եկուր»։
Ան լսեց այս ձայնը, երկա՜ր ու երկա՜ր,
Որ կարծես իր արյունին մեջ կխոսեր.
Լսեց, ու լուռ, աստղերուն տակ հառաչեց։
Հետո դյութված՝ ցուպն առավ
Ու քշեց ուլը ճերմակ՝
Բլուրեն վար՝ դեպ ի հովիտն հեշտաբույր։

Հոս է աղբյուրն, հոս թզենին, և կզգա՞ս
Արու Ոգին, որ ծոթրինի և թյումի
Զգլխիչ հոծ բույրերով
Գրկեր է քեզ։— Զոհդ ըրե՛։—
Ջինջ ու ողորկ քարերուն վրա աղբյուրին՝
Ծունկին վերև ան պառկեցուց ուլն՝ որուն
Փոքրիկ եղջյուրն ավազին մեջ խրեցավ։
Ո՛հ, ինչ արբշիռ էր պահն ու ո՜րքան անուշ.—
Ան կհավատար թե զոհելեն վերջը դեռ
Պիտի ուլն իր ողջ մնա,

Պիտի մարգին մեջ պապալն և ոստնու։
Ան՝ մահն ի՛նչ էր, կանգիտանար,— ու երգե՜ց,
Երգեց բնության ներշնչման տակ մեկն այն մեծ
Հանույքներեն, զոր կուտա
Ջոհագործումը անձին.
Երգեց գարունն հասակին,
Դաշնակությունն իր էության, և առանց
Ուլին կապույտ աչքերուն
Ազիողորմ նայիլն իրեն՝ տեսնելու,
Դրավ դանակն անբիծ վզին և արբշիռ,
Երգը շուրթին՝ զայն հեշտանքո՜վ մը զոհեց.
Ծունկին վրա այն մոլորիչ Ոգիին՝
Ճերմակ աղջիկն իր ճերմակ ուլը զոհե՜ց։

Բայց իր զոհեն նոր ծաղիկներ չբուսան,
Եվ ինք չեղավ թիթեռներու հովվուհի.
Պղտորեցավ աղբյուրն ուլին արյունեն՝
Ուր ջուրին հետ պիտի ան ալ չկրնար
Խմել աստղերը ցոլացիկ երկնքին.
Խոտերուն մեջ ցուպն հագավ
Իր նախկին բնույթը օձի.
Լուսինն իջավ լեռնեն վար,
Եվ ինք մութին մեջ, սարսռուն,
Բոբիկ ոտքով մեռա՜ծ ուլին քով կանգնած՝
Լացա՜վ, լացա՜վ և արյունլվա ձեռքերով
Իր թաց աչքերը շփեց,
Մինչ գլխուն վրա կթոշնեին հասմիկներն,
Հրապուրված կույսն իր անուշ Մեղքը լացավ։

ԱՆԱՀԻՏ

Խոտին մեջ է թաղված բագինդ։ Ջեն ծխար
Խունկերն անուշ, զոհն այնտեղ չի՜ արյունիր։
Կուգա լոկ բույր մը համպար
Խորխի, զոր հոն թողեր է օձ մը կարմիր։

Հոն կնստիմ, խո՜նջ ուղևոր։ Ձիս կարծի,
Եվ Վահագնի զամբկին կարծես հոտն առած՝
Կտղուցեն խոլ կխանձի։
Բայց արևեն մեզ չի գար ոչ մեկ աստված։

Անհետացան անդարձ խորերն անտառին
Քուրմերը լայն թեզանիքով։ Չի՛ երգեր
Սիծերդ՝ վինը Վրույրին,
Բագինիդ շուրջ կհեծկլտան եղեգներ։

Ձես հանգրձեր պատմուճանդ ալ. ո՛չ մեկ վիթ
Նիզակահար՝ կներկե ծունկդ արյունով։
Թանգարանին մեջ անդրիդ
Կտաղտկանա, և չի՛ պսակվիր գարունով։

Բայց դուն կապրիս, պիտի ապրիս հավիտյան,
Ո՛չ երկրիս վրա. երկինքի՛ն մեջ, Անահի՛տ։
Ահա կ'ծագի լուսնկան,
Եվ կծագիս դարձյալ՝ մահիկը ճակտիդ։

Քեզ կտեսնեմ աստղերուն մոտ։ Սիծերեդ
Լույս կհոսի աղբյուրին մեջ՝ ուրկե խմող
Եղնիկին դունչը նամետ
Եվ եղջյուրները կօծանվին ոսկեշող։

Վա՛ր կնայիս.— Օրիորդները վարար
Կզգաստանան. դինիին տաշտը կիյնա
Բագոսուհվույն ուսեն վար։
Կաղոթե կույսը ծնրադիր մահճին վրա։

Կապարճդ ուսիդ, լարած աղեղդ լայնշի՝
Կվարես սայլը լուսնակին լռելյայն...
Կյանքն անտառին կշարժի.—
Ձեռքիդ ջահեն վախցած՝ գայլերը կոռնան։

Կերազե դաշտն.— ու կոկոնները վարդին,
Փքիններուդ խայթին ներքև, մի առ մի,

Բերանիդ պես կբացվին։
Կեռա ավիշն այգիին մեջ վաղեմի։

Կհոսես ծիծերդ, կանցնիս կերթաս,— բայց մարդիկ
Ձեն պաշտեր քեզ. տա՜ր մը սոսկ կընդունին։
Քանդած են հովն ու ալիք
Մեհյա՛նդ իսկ Քերսոնեսի ափունքին։

Միայն, գիշերն, որսական շունդ լքված
Կտեսնե վերն անցքդ, մահիկը ճակտիդ,
Ու բագինիդ վրա նըստած՝
Կնայի քեզ և կուլա, օ՜ Անահիտ։

ԱԿԱՆՋՆԵՐՈՒՆ

Մարգարտածո՜ց ականջներ, գանգուրներուն տակ սիրուն,
Ամենանուրբ մասն եք դուք իր նրբագեղ մարմինին.
Լոկ դո՜ւք կրնաք հաղորդել երգը քնարիս լարերուն
Իր ըսքողված հոգիին։

Թիթեռնիկի՞ կնմանիք, թե ծովամույն խեփորի՝
Որ խմած է բուստին լույսն և նվագներն անդունդին.
Ա՜յնքան փոքրիկ եք՝ որ տղեկ մ'իր ափին մեծ աղսծրի
Պիտ՝ ամփոփե ձեզ դյուրին։

Ո՜վ բավիղներ նրբակերտ, ո՜վ ոլորտներ վարդագույն՝
Որոնց մեջեն, չեչքարե մը վար թորող ջուրին նման,
Բոլոր ձայներն աշխարհի կհասնին մինչև իր հոգվույն
Եվ խորհուրդնե՛ր կդառնան։

Ուշիմորեն կամփոփեք ձեր ձագարին մեջ բյուրեղ
Անծանոթ խոսքը բոլոր դաշնակավոր իրերուն,

Հեռավոր երգն աստղերուն, որ անհունին մեջ լուռեզ
Կծովանա՝ փողփողուն։

Երբ ձեր քունկին առընթեր բռնեմ Հրազա ազամանդ՝
Աղավնյակի մը կարմիր սրտին նման բաբախուն,
Թափանցկությամբ մը վճիտ կբռնկի ձեր թաղանթ
Կակաչի պես հմայուն։

Սրտիս վրա՛, ականջնե՛ր, խոնարհեցեք սրտիս վրա՛,—
Դեռ չերգված կույս երգեր հոն կրզզան անհամբեր՝
Ինչպես քնքույշ և խլրտուն բժոժներուն մեջ ասկյա
Լուսակարոտ թիթեռներ։

Եվ թողեք, գո՛ղտր ականջներ, ձեզ համբուրեմ զգայնոտ,
Տամուկ լեզվովս հպիմ խորշերը ձեր սատափյա,
Որ ան սարսռա անապատում հեշտանքներով ջղայնոտ՝
Քնարիս պես դյուրազգա։

Թույլ տվեք ձեզ ողբերգեմ՝ Գեղեցկության դաշույնին
Բյուր հարվածներն հոգվույս մեջ, և զույգ մ՝արցունք աչքերս
Տրտմորեն վար կախեմ ձեր բլթակներեն փափկագին՝
Իբրև օղեր՝ ընծա ձեզ։

ՍԱԴՈՒԴՆԱԿԱՆ

Այս իրիկուն նորեն Քաղաքն հեշտանքի,
Ծովափին վրա, գոհարազարդ բոզի պես,
Անթիվ ջահերն իր կվառեն։ Երբ տակավ
Հոնդյունները սղոցին կլռեն,
Եվ սալին վրա մուրճերն ալ չեն կայծկլտար։
Ան՝ խորտակված ատփորեն հանկարծ թափվող
Հին գինիի մը նման՝

Կփրփրի՝ կպղպչա իր կարմիր
Կիրքերուն մեջ։— Երեկոյան խորշակով
Բլուրներեն այգեվետ
Հոտ մ՝ողկույզի փողոցներն հորդ կլեցնե,
Ու կծու աղը ծովուն
Կուգա ռունգերը գրգռել կողուցի.
Այն ժամանակ մեհյաններեն դուրս կելլեն
Քրմուհիներ սաղուռնական տոներուն.
Կանցնին կիներ՝ վարդ դրած
Իրենց քունքին ու գոտիին վրա արծաթ.
Կանցնին մարդիկ, նվագներով ու պարով.
Պոռնիկ մ՝հանկարծ, անոնց մեջ,
Կարձակե հերքն իր կրունկները մինչև,
Եվ լողալով գանգուրներուն ծովին մեջ,
Կծիծաղի՛, կծիծաղի՛ խելահեղ
Երեսն ի վեր քարձ կավատի մը հարբած։
Քաղքին պատերն անբարիշտ
Կարմրաշռայլ լույսով մ՝ամբողջ ծեփված են.
Եվ նռնենին, լապտերներով պաճուճված,
Պատշգամին տակ կծաղկի հեշտօրոր։
Սալարկներեն վար գինինե՛ր կհոսին.
Տան շեմերն են թրջված
Մամացներով ու մաղձով.
Դուռներեն վար կկախվին
Հոմանիի դրասանգներ.
Եվ գիշերվան լոգարանները բոլոր
Կքրտնին գմբեթներովը իրենց,
Որոնց ներքև կթալկանա հեշտությունն,
Ու կզեղուն կոշարաները զմուռս.
Ամփիթատրին մեջ, փրփրած,
Կհոսի արյունն, ու մեհյանին մեջ ծածուկ
Կհոշոտվի հազածոն.
Բոզնոցներուն դռան առջև,
Որոնց պագշոտ ծերպերեն
Թխակարմիր շառայլներ դուրս կնշոպին,
Կիներ պառկած՝ կունկընդրեն
Փողոցներեն անցնող ձայները դափին,

Ու տուփագին ու զոշաքաղ ակնարկով
Կխայտացնեն պորտերնին...
Բոլո՛ր, բոլո՛ր կընեն
Սադուռնական գինարբուքները, մինչև
Արշալույսին ծագիլն արյան քողերեն։
Գալատներուն մեջ՝ խրա՛խ,
Գողոտային վրա՝ շուրջպա՛ր,
Եվ մթնշաղ անկյուններուն մեջ, ավա՛ղ,
Ումպետ հոսումն ուղխորեն
Առնական գա՛ղջ սերմերուն։
Գերիներ, մերկ, ներբաններնին այրելով
Հրաբորբոք կուպրին վրա մայթերուն
Կհայթայթեն, վազն ի վազ,
Խեժն այդ փրփրած հրդեհին.—
Ոմանք ըշտապ կտանին
Համադամներ, ոմանք գինի՝ փարչերով.
Խառնածին մ'իր գոգին մեջ
Ծաղկի պսակները դիզած՝
Կերթա արբշիռ ճակատներն իր տիրերուն
Արտախուրել բաղեղներով, վարդերով.
Եվ Պահլավուն մը հուժկու,
Կույս մը շալկած մազերեն՝
Գատրիկներու ոսկեճամուկ սեղանին
Կտանի զոհ մը իբրև...
Գինի, ուտին ու տուփանք
Քաղաքին վրա, կպանծացվին տավիղով.
Քաղաքի՞ն վրա, որ նստած
Ափը ծովուն, գոհարազարդ բոզի պես
Կպճնե ծոցն իր՝ ջահերով անհամար.
Եվ քաղաքին վրա ո՞ւր ես դուն, Էրոս,
Խա՞յթն էր ոսկի փքինիդ
Որ շաղաշույտ այդ ժողովուրդը կտրեց...
Ո՛չ, ո՛չ, Էրո՞ս.— Տատրակի պես տարագիր
Այդ ոստանեն խույս տվիր։
Աստվածներու կղզիին մեջ՝ այժմ դուն,
Լուսնկային հետ քնքշորեն կհսկես
Սոխակներու բույնի՞ն վրա։

ԳԻՆԱՐԲՈՒՔԵՆ ՎԵՐՋ

Սրահն է լո՞ւ։— Կոչնականներն հեռացան։
Ջահերն ոսկի դեռ կվառին մոլեգնած,
Եվ կհեղուն, սեղաններուն վրա անձայն,
Արյունն իրենց երակներուն բորբոքած։

Վիճը լռեց։— Կթափառի նվաղուն
Երգն իր վերջին, զոր հարբած սիրտը չըմպեց։
Անոնց բերնին վրա և ցոփ աչքերուն
Կսփռե քունն իր չղջիկի թևը մեծ։

Սեղանին վրա է ամեն ինչ ցիրուցան։
Սափորին մեջ կերազե մաս մը գինի։
Նուռ մը լքված, ակռաներու վերքեր վրան,
Ջահերուն տակ, ջահերուն հետ կարյունի։

Եվ կփշրի բաժակ մ'հանկարծ, հեծելով
Լռության մեջ։ Ձայն ճեղքած էր նախապես
Կին մը արբշիռ՝ երբ կներկեր կտղանքով
Գինիին խորն ատամներն իր, բուստի պես։

Ծաղկամանին մեջ կթոռմին հիրիկներ,
Որոնց բույրով գուսանն եղավ սիրարբած։
Աթոռին վրա հողմահա՛ր մ'է մոռցվեր՝
Ձերթ հոլաթև մեծ թիթեռնիկ մը մեռած։

Դուրս կհոսին բաց մնացած դուռներեն
Գաղջ ալիքներն հալվեներուն և մուշկին։
Եվ քրքիջներն ու կտղուցներն համորեն
Հայլիներուն խորության մեջ կմեռնին։

Կաշխատին հոն միայն երկու գերիներ,
Մին՝ աղախին, մյուսը՝ ծառա մ'անճոռնի,
Որ կխմե մերթ ավելցուկ գինիներն
Ու կհամբուրե ընկերուհին, գողունի...

ՄԵՌԱՎ ԱՍՏՎԱԾՆԵՐՈՒՆ

Արյունափառ խաչին տակ,
Որուն թևերը տրտմություն կծորեն
Աշխարհիս վրա բովանդակ.
Ես՝ պարտված, Արվեստիս դառն սրտեն
Կողբամ ձեր մահն, ո՛վ հեթանոս Աստվածներ։
Մեռավ Խորհուրդն. և Բնությունն է արյունե՛ր
Օրենքներու կարկինին սուր սլաքով։
Զանձրո՛ւյթը մնաց, պճնված փուշ պսակով։
Մարդն է ինկած գարշապարին տակ հոկա
Խուլ Աստուծո մը հրեա։

Դիո՛ս, մեռար։ Մեռար դուն,
Ո՛վ Ապողոն, որուն կառքեն քառաձի
Կուգար խրխինջն Արևուն։
Կայծակն անտեր՝ աստղերուն մեջ կհածի
Կույր օձի պես։ Սիրամարգներ չեն քաշեր
Հերայի սայլն՝ որ ուներ լույս սարիքներ.
Ոչ ալ կհոսին, իբրև սերմեր դիցական,
Զևսի անձրևն ոսկի, արյունն Ուրանյան։
Չե՛ն արծարծեր ոտնաթևերն Հերմեսին
Աստղերը որբ երկինքին։

Անտառին մեջ, Անահի՛տ,
Ալ չեմ լսեր շանդ հաչյուններն՝ ետևեն
Նախընտրած գեր երեիդ.
Կապարճդ հողին տակ կփտի. լիճերեն
Ջուրն իր խմել կերթա եղնիկը անվախ.
Չի՛ պսակվիր Պանը շոճով. ամեն ցախ
Անոր շունչով նորեն առույգ չի՛ ծաղկիր։
Դափ չե՛ք զարներ, Այծեմարդե՛ր բարեկիր,
Լոկ կտեսնեմ Ավանդությունն, որ կուլա,
Նստած կոճղի մը վրա։

Հավերժահարսե՛ր մեղաք դուք.—

Կխածատեն փրփրուն գետերը՝ ցավեն,
Իրենց ափերն հեղհեղուկ։
Նայուհինե՛ր, եղեգներուն ընդմեջեն
Ա՛լ չեք երգեր՝ երբ որ ցաթեն լուսնկան.
Կանանչ լոտերն այժմ կըլլան ձեզ պատան։
Լուսազմայլիկ աղբյուրին մեջ չեմ տեսներ
Բիբերուդ կայծն, անբա՛խտ Նարգիս։ Տատրակներ
Երբ գուռին մեջ կուգան լվալ կտուցնին՝
Դողոշներեն կխրտչին։

Քեզմե, ո՛վ վեհ Պոսիդոն,
Ովն է թափուր։ Անտառներեն բուստերու
Չի՛ խոյանար բարձրահոն
Քառանժո՛ւյգդ փրփրագեղ. ոչ ալ քու
Երեքարձենդ կառխրթե դրդրդմամբ
Նվիրական դելփինին նուսն ապստամբ։
Մեռավ Սիրենը ժայռին տակ Սիկիլյան.—
Կանցնի նավաղն անկե առա՛նց դյուությյան։
Զըլլար փրփուրն՝ Աստղիկ ոչ ալ կոնքը՝ կուր.—
Ով՞ն, Աստվածնե՛ր, ծո՞ն է տխուր։

Տանս ակութեն, թերափնե՛ր,
Ո՞ւր հեռացաք, ո՞ր ջերմեռանդ սրբուհին
Ձեզ իր խաչովն է փշրեր,
Ձեր մեջ պապերս պապե՛րն իրենց դրոշեցին՝
Ընծայելով ամեն օր աղ ու նեկտար։
Ձկաս, Է՛րոս. պիտի քույրս իմ սիրահար
Որո՞ւ ձոնե դահամունքներն իր ուխտին.
Ձկա և՛ դուռը պահպանող Շան անդրին...
Միայն սնարես կախվեր է խաչ մ'հաղթական՝
Ուր կա լոկ փառքը Մահվան։

Եվ այժմ այդ խաչին տակ,
Որուն թևերը տրտմություն կծորեն
Աշխարհիս վրա բովանդակ,
Ես՝ պարտված, Արվեստիս դառն սրտեն
Կողբամ ձեր մահն, ո՛վ հեթանոս Աստվածներ։

Տեսե՛ք, բոլոր մեր անտառներն ու ծովեր,
Աղբերակներն ու երդիկները խաղաղ
Ամայացա՜ն ու տաղտկացա՜ն։ Այժմ, ավա՜ղ,
Մարդն է ինկած գարշապարին տակ հսկա
Եալ Աստուծո մը հրեա։

ԲԵԳԱՍ

Բե՛գաս, հրեղեն ձիս,
Երկնամուխ լեռն արևուն մեջ կշողա
Ձերթ շափյուղա.
Իր կատարին աստղապսակ պիտի զիս
Տանիս։
Ձետեղիցի քամակիդ ավասիկ թամբդ, ծեփված Ադամանդով
Եվ դրի սանձդ՝ հյուսված
Շանթով.
Եվ նուսիդ վրա զերթ մրրիկ
Եռ նետվեցա ավասիկ։
Դե՛հ, թող մտրակս, հավետ լույսերու մեջ թաթաղուն,
Կողերուդ շուրջը սուլե օձի նման գալարուն.
Եվ դուն
Անդունդներուն վրայեն և վրայեն ձյուներուն
Տար զիս
Արևո՜ւն։

Ահա դափրեց բարձունքն ի վեր բարձրավիզ.
Ռունգերն հզոր բացվեցան
Լեռնեն իջնող պաղ քամիին հանդիման.
Եվ բաշերն իր լուսալիր
Եկան մինչև թևերուս մեջ փրփրիլ։
Գլուխն ընդվիզ
Այնքա՜ն հպարտ կբռներ՝
Որ կհպեր

Կզակիս։
Ու ան վարգե՜ց, վարգե՜ց, վարգե՜ց քառատրոփ...
Լեռը թնդաց.
Կցայտեին սմբակներեն ոսկեմած
Աստղեր բորբ.
Փապարներուն մեջ ամփոփ
Հզի օձեր ձագերն իրենց վիժեցին,
Բայց իմ ձին
Լոկ կլսեր պինչերուն մեջ մռնչող
Քամին։
Օ՜ երբուծն հույր՝ մկանունքով բլրավետ,
Ուր արյունն իր զսպված հրաբուխի պես հավետ
Կեռար,
Կընդհարեր միշտ սեպերուն դեմ մրրկաբեր
Ու վերքերով կպանծար։
Օ՜ պոչը իր լուսացնցուղ, աղեղնաձև,
Որ գավակեն կհոսեր
Ձերթ արև։
Օ՜ գլուխն իր պերճասոսորդ, մեծդի բիբերն՝ ուր կայրեր
Կարծես անհունն արփախայտ.
Եվ սմբակներն ոսկեկուռ, որոնց ներքև իբրև պայտ
Լուսնկաներ դամեցի,
Ժայռերուն վրա Իդեալի մը պողպատ
Կերգեին երգն առնացի,
Զոր խմելու համար ես սիրտս բացի
Ձերթ ծովու
Խեցի։

Ու բարձրացա՜վ, բարձրացա՜վ
Վայրենարշավ.
Միշտ նորահայտ միջոցներ անակնկալ բացերու
Նայվածքն հազիվ ընդգրկած՝ արշավն ընդհուպ կսպառեր
Լեռնալանջին վրա հսկա նոճիներ
Եվ գիհիներ խնկարկու,
Որոնց մեջեն ան կանցնի նման կայծակին։
Ի զո՜ւր մաղերս հողմավար կատարներուն շոճիին
Կկառչին,

Ի զո՜ւր ծաղկած վարդենին բռնել կուզե քղանցքես
Հարսիս պես.—
Անոնց մեջեն ես կվարգեմ սրընթաց.
Ուսերս ամբողջ, ասպանդակներս ոսկեմած
Ծաղիկներ հիր կողողեն...
Ես կվարգեմ թամբին վրա լուսեղեն
Ջերթ թառած
Շահեն։

Ահա պարեխը կուգա թումբ կանգնելու արշավիս,
Բայց իմ ձիս
Փայլակնաթափ դռույթին տակ կքանդե զայն քար առ քար,
Կհեղու
Լեռն ի վար։
Ո՜ւր որ դոփե սմբակն՝ հոն կբանա վիհ ծուխերու,
Ո՜ւր որ բախե լանջը գոռ՝ կթոթափե փշրված
Կայծ։
Կբարձրանա ամպին վրա իր կուտակած փոշիին.
Աստեղաբիր կլողա լուսալիքին մեջ բաշին.
Կվրնջե ցնծագին՝
Ոռնգերը բաց
Անհունի՜ն։

Վա՜ըը, այնտեղ, երանավետ այգիեն
Ցանկապատին վրա ծռած ողկույզներու բիբեր մեծ
Ի զո՜ւր, ի զո՜ւր կկանչեն
Զիս իրենց.
Եվ ծառեն վար նուռ մը ճեղքված՝ բերնի պես՝
Կաղաղակե ետևես։
Եվ կիներ, վարն, հովիտներու աղբյուրեն
Ի զո՜ւր ինձի կերկարեն
Լույս սափորներ, ուր կթեր են հեշտությունն
Իրենց մարմնույն
Եվ համբույրի մ'անձկությունով՝ համորեն
Գինին իրենց ծոցերուն։
Փոխան իրենց օրորին՝ երիվարիս ցունցը խեռ Ամրեցի,
Փոխան իրենց գգվանքին՝ հոգիիդ վրա լիզումներ

Բոցի։
Շուրջս ի զուր ջրվեժներ կմոլեգնին ու կերգեն՝
Կաթի նման փրփրադեզ,
Հետո մեղմիկ կսահին զմրուխտ մարգին ընդմեջեն
Օձի պես.—
Իրենց ջուրեն ես ավելի կսիրեմ
Գաղջ փրփուրներն երիվարիս երախին,
Զոր խլած բո՜ւռն քամին
Կլվա
Անոնցմով բոց աչքերս իմ կամ արևուն երկնաճեմ
Աչքն հսկա։

Վե՜ր, դեպի բարձո՜ւնքը, Բեգա՜ս...
Կռանակուռ լույս պայտերդ ահավասիկ կթաղես
Պորտերուն մեջ ոպնիազ
Վիշապներուն.
Եվ դուն
Ջախջախելով հրեշներուն
Կուռ պատյանին մեղեսիկներն հրակեզ՝
Կծառանա՜ս, կծառանա՜ս մոլեգին
Կատարն ի վեր հաղթական
Լեռան։
Ննջող գազան մ'ավասիկ խրխնջյունեդ արթնցած՝
Նետվեցավ ծոցը վիհին
Զարհուրած։
Եվ անգղներ ժայռերու կատարներեն կթռափին
Զորերուն խորը մթին։
Ահա փախչող վարազահավ մ'իր մախիզ
Խլուրդ բզկտող կտուցեն,
Վերեն,
Շիթ մը արյուն կայլակեց իմ գլխարկիս
Արծվային
Փետուրին...
Ա՜լ քեզ համար ամայի՜ են գագաթներն ահարկու.
Ո՜չ ջրվեժի մռունչ կա, ո՜չ հրավեր կիներու.

Մեզ չի՛ հասնիր կալին մեջ պոռոչող ձայնն երինջին.
Կարծես արդեն մեր գլուխները աստղերու կամարին
Կդըպչին։

Վե՛ր, վե՛ր, Բեգա՛ս...
Բայց, հեռուն, ի՞նչ սպիտակ տարածություն լուսափառ
Ճառագայթեց աչքերուդ մեջ ամեհի.
Ցուրտ սլաքներով դժպհի
Լուսնակին պես կարյունին ահա բիբերս փարփառ.—
Օ՜, Բեգա՛ս,
Կատարներուն ձյունն է այս.
Ձմեռներու մեջ բյուրավոր՝ բյուր աստղեր
Իրենց ծոցեն սառնաշիթ
Հո՛ն են, հո՛ն են տեղացեր
Ձյունն այս վճիտ։
Բեգա՛ս։
Այդ ծովուն մեջ բյուրեղե
Նետվե՝
Դլբնի լանջքով հորդե ուղիդ երկնահաս։
Լողա՜, լողա՜...
Անապատի ավազին մրրիկներուն փոխարեն
Փորիդ ներքև կփրփրին
Մրրիկնե՛րն այդ լուսեղեն
Ձյունին։
Նա՛վը եղիր կենդանի՝
Որ զիս առած կտանի
Աստեղազարդ նավահանգիստն հեռակա
Երկնի։
Լողա՜, Բեգա՛ս, լողա՜...
Մեր երազին ճեղքե՛ ակոսը հսկա։
Բացած փոսերը պայտերուդ լուսագին,
Հետքիդ վրա, շուշանի պես թող ծաղկին։
Ի՜նչ փույթ, թե ձյունն իր տակ ծածկած է հավետ
Նենգություններն անդունդին,
Եվ մենք կրնանք ըլլալ հանկարծ գահավեժ.
Միշտ Աստղերո՜վ թաթախված պիտի իջնենք խորն ալքին
Ջերթ ջրվեժ։

Բեգա՛ս, Բեգա՛ս, կաղնիացո՜ւր վիզդ վեհ.—
Ահավասիկ ձյունահյուս մ'աստվածաբնակ գագաթեն
Մրրկելով ճամփուն վրա փրփրուն փոշի մ'համորեն
Կուգա մեզ։
Ո՜հ, ի՜նչ պայքար, Բեգա՛ս.—
Անոր վրա պերճասոսորդ կխոյաս.
Առջի ոտքերդ լուսադրոշմ պայտերով
Աշխույժով
Արդեն ահա փրխրուն ծոցին մեջ անոր
Կմխրճին ահավոր...
Ո՜վ Ձիս-Աստված,
Այն հյուսն արդեն պորտիդ ներքև է լայնշի
Եղած
Փոշի։
Լո՜դա, Բե՛գաս, լողա...
Զգեցեր ենք պատմուճանն կույս տարրին փողփողուն,
Բուքը կհալի լանջքիդ տակ, ռունգերուդ մեջ բաբախուն։
Դե՜հ, խոյանք մ'ալ, ոստում մ'ալ,
Զի բարձունքները շողալ
Կսկսին,
Հորիզոնները ծավալ
Կբացվին։
Դե՜հ, խոյանք մ'ալ, ոստում մ'ալ.—
Նպատակի կատարին ադամանդները անհալ
Շողացին.
Եվ իմ ձին
Փայլակելով Գաղափարն աչքերուն մեջ ոռնական՝
Կոթողվեցավ-պինչերը բա՜ց արևուն—
Լեռան
Գլխուն։—
Օ՜, Բե՛գաս։
Կողերուդ մեջ գալարվող լիաթոք հևքդ ահա
Ռունգերեդ դուրս ողողեց հորիզոններն հեռակա։
Օ՜, Բե՛գաս,
Ահա կապույտը վճիտ՝ շողակնաշող ալիքով՝
Ջերթ ծով.
Ահա Արևն հրմազ

Լոկ ի՜մ վրաս...
Տիրապետման մեջ լույսին կանգուն՝ թագն ենք աշխարհին,
Երկինքը՝ թագը մերին.
Եվ մեր ներքև Երկիրն է՝ բուռ մը ցեխի հանգունակ,
Աստղերն են մեր ոտքին տակ,
Որոնք ծույլ ծույլ կսողան կայծակներով բեռնաբարձ.
Կտեսնե՞ս վարը,— հանկա՜րծ
Թուխ ամպրոպի մը խորեն փայլակ մը աչքն ամեհի
Կբանա,
Հետո դարձյալ, խուլ որոտ մ'արձակելով, կթաղվի
Երկրիս ցեխին մեջ հսկա։
Կտարածվի քու խրխինջդ անհունին մեջ ալեկոծ,
Եվ աստղերուն ժայռակույտերն ոսկեզօծ
Շունչեդ ահա կարծարծվին
Իբրև բոց։

Բե՛գաս, ահա՛ վար կիջնեմ թամբիդ վրայեն վերատին,
Բաշերուդ հետ կհանձնեմ անտառներն իմ մազերուն
Հովերո՛ւն.
Եվ կթողում, որ Մրրիկն իր պատմուճանը ծփուն
Հաղցնե հաղթ մարմինիս,
Եվ լոգցնե Արեգակն իր շողերով ոսկեզօծ
Աստվածացած միսս բաց
Եվ հոգիս։
Տե՛ս, աշխարհիս զառամած քամակին վրա կոթողուն՝
Իր հերկերուն մեջ թափուր՝
Սիրտս, ուր հանճարս կապրի, կսերմանեմ լիաբուռ.
Ի՛նչ որ Արևն ինձ կուտա, զայն կուտա միտքս Մարդուն.
Տե՛ս, աստղերու ժպիտներ և հուր վարդեր անթառամ
Կտեղամ
Որդիներուն մեջ կավի.
Կտարածեմ Երկրիս վրա արշալույսի ծիրանին.
Մինչդեռ դյուրավ կրնայի
Տարածել շուքն հասակիս՝ Երկրագունդին վրա փանաք
Ու խավարե՛լ զայն համակ։

Բեգա՜ս, Բեգա՜ս, այժմ երբ ե՛ս կպարզեմ

Առագաստները Մտքիս լույսին վրա ծովացած
Եվ քնարիս լարերով՝ քու բաշերովդ հյուսված
Կերգեմ
Արեգդեմ
Ազատությունը Մարդուն և գերությունն Աստուծո,
Բեգա՛սդ իմ հաճո,
Դուն իմ քովիկս կանգուն
Բաշերդ ու պոչդ հանձնելով ցրտասարսուռ քամիին,
Վիզդ ծռե սիրասուն,
Ծռե՛, և քու առջի ոտքովդ ներբին
Փորե ընդթափ կույս ձյունը կույս բարձունքին.
Փորե՛, Բեգա՜ս, փորե՛, մինչև որ գտնես
Լուսածաղիկ էտլվայսները անտես,
Եվ ճարակիս, նոթի Մտքիս հետ միասին,
Էտլվայսներն Երազին։
Հոս, ձյուներուն ու լույսին
Մեջ թաթախված՝ խաղաղորեն կծաղկին
Էտլվայսներն Երազին։

ՀԱՐՃԸ

...զի ոչչ գեղեցիկ էր, և երգեր ձեռամբ։
Մ. Խորենացի, Գիրք Բ

Ա

Գարնանամուտ երեկո մ'իր պալատին մեջ մարմար
Բակուր, Սյունյաց Նահապետ, շքեղ հանդես մը կուտար,
Երբ Ուղևոր մը հանկարծ մրրկարշավ կհասնի
Լուսնկափայլ ճամփայեն՝ մեծ դուռն քով արքենի։
Ձին կհևա, ու բերնին փրփուրն հողմեն միշտ խլված՝
Կթրջե թամբն համորեն, ասպանդակներն ոսկեմած։
Հեռուներեն ան կուգա, զայս կմատնե թե՛ փոշին,
Որ դիզվեր է խավերուն մեջ թիկնոցին թավիշին,

Թե նժույգին վրնջյունն աստեղացունց մաքրությամբ,
Որ կխնդրե ախոռին գոլուտ հանգիստը անթամբ։
Բակուր այդ հյուրն իր անձեն և անունեն կճանչնա.—
Բագրատունի Տրդատն է, հզոր իշխան, ու փեսա
Տիրան հայոց արքային, որ կփախչի Մարաստան.
Կփախչի ան, զի կինն իր՝ Տիրանի դուստրն աննման,
Գանակոծեր էր խստիվ, պալատեն դուրս արտաքսեր,
Նուզելով, իբր անարգանք, անոր խարտյաշ գանգուրներ։
— Տրդա՛տ,— կըսե Նահապետն,— այս գիշեր քուկդ է իմ տուն.
Մարաց աշխարհն հեռու է, և դու անշուշտ պարտասուն.
Մտի՛ր սրահը տունին, թող իրարու դեմ փշրին
Մեր բաժակներն, ու մեր սերը մկրտե թող գինին։—
Եվ կոչունքի կրազմի Բագրատունին վտարանդի
Աչ կողմը ճիշտ Բակուրին՝ որ իր կարգին կնստի
Գահի մը վրա՝ որուն լայն թիկնատեղն է քանդակված
Բագոսը՝ եզ մ'որթերով պսակելու ըզբաղած։
Սեղանին շուրջը արդեն Մեծամեծներն հայկազուն
Դեմ հանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծանուն
Աստիճանին համեմատ; այլ սուրերու մեծության։
Հոն են ճորտերը Սյունյաց գավառներուն երկտասան,
Լեռան ազատ զավակներ, միշտ զրահի մեջ կուրծքերնին,
Որոնք հզոր կումբի պես ջահերուն տակ կփայլին։
Հոն կան նաև բդեշխներ, ազատանին քաջարի,
Որ կպատմեն թե ինչպես Կորսան վարազը վայրի։
Ազնվատոհմ սեպուհներ ոսկեճարմանդ խլաներով,
Գինվո բաժակ ի ձեռին կծիծաղին կես գինով։
Պալատին մեջ ծով մը կա ծիծաղներու և լույսի,
Որ գաղջորեն ծուփ առ ծուփ դռներեն դուրս կհոսի։
Կոչնականները զարմիկ պատերն ի վար կախեր են
Որսի գալար շեփորներն ու վահաններն ոսկեղեն.
Եվ նիզակները, դեռ թաց վարազներու արյունով,
Տրձակ տրձակ կհանգչին հսկայափեղկ դռան քով։
Լայնակոնք սրահը քսան սյուներով է կառուցված,
Որոնց վրա կշողան քսան ջահեր դեմ դիմաց.
Եվ այն քսան սյուներուն մեջեն քսան գերիներ
Կբերեն թանկ սաներու վրա՝ խորված երեներ,
Որոնց շոգին քմպարար կբարձրանա ոլորուն,

Ջահերուն շուրջ կազմելով խլատեռեր ծփծփուն։
Ըսպասներն ալ սեղանին մեծարժեք են. և կարծես
Արծաթազօծ դգալներն ու դանակները նույնպես
Փողփողումին տակ լույսին փայլակներ են աղմկոտ,
Որ կծփան դիպակյա նվարտանին վրա փութկոտ։
Ծաղկակալներ են դրված երկայնքն ի վեր սեղանին,
Որոնցմե եղկ բուրումներ շուրջը արբշիռ կսփռին.
Ծաղիկներուն ընդմեջեն, քրքիջներուն հետ թրթռուն,
Կնշմարվին ըսպիտակ ակռաներն հույր ճորտերուն.
Եվ գինիին թանձր հոտն և խահերուն գոլորշին
Վեր բարձրացած՝ կսքողեն կատաղությունն այդ ճաշին։
Կուգա համեղ գերերին, որով Սյունիքն է առատ,
Ջոր եփեր են տատրակի սրտիկներով անարատ,
— Աղավնիի սիրտ ուտենք,— կդոչե ճորտը Բալի,—
Որ ունենանք վագրի լյարդ։— Ես այդ մասին ավելի,—
Կկատակե հանկարծ մին, կընտրեմ սի՛րտը կնոջ։—
Ծիծաղներով այն ատեն կից վերնատունը ամբողջ
Կալեկոծի, ուր ժողվված հայ տիկիններ բազմական
Կընեին նույն խրախճանքները նույն շուքով տոնական։
Այն ատեն ներս կմտնեն երկու ջուխտակ գերիներ,
Կրելով երկու ջուխտ վարազ՝ սաներու վրա ոսկեհեռ.
Եվ ուրիշները նույն թիվով՝ իրենց ուսին վրա ունին
Ըսկուտեղները նուռին, սափորներն հորդ գինիին.—
Հաղթանա՜կն է այս խրախին։ Հեղեղ մ'հանկարծ վարդերու,
Իբրև ամեն տիկին վար արձակեր սիրտն իր աղու,
Վերնատունեն կտեղան կոչնականաց վրա գինով։
Քանի մ'ասպետ կկոփեն վահանն իրենց աշտեով։
Աղավնիներ ավասիկ կամարին տակ կճախրեն,
Եվ ծայրն իրենց թևերուն մխրճելով ծուլորեն
Շատրվանին մեջ, որ լույս կողբա բակին առընթեր,
Կուգան իրենց թռիչներեն վար անձրևել մարգրիտներ։
Ու վարդ, տատրակ հոն խառնված հեղեղներով ճաճանչի
Կստեղծեն դրախտ մ'ուր կարմիր Հեշտության նուռը կաճի։
Մատուռակներ ավասիկ կարապնավիզ սափորով
Բաժակներուն մեջ գինին կհեղուն դեմքով մ'անխռով։
Բագրատունին այն ատեն, կորովաբիբ Տրդատես,
Դաշխուրանն իր վեր կառնու, և.— Ասպետներ, կըսե, ես

Վանատուրին սերմնահորդ և տուփածոց Աստղիկին,
Անոր, որ հուրն է արու, անոր, որ հողն հեշտագին,
Կրՙպե՞մ ի փառս։ Անոնց տոփին ու համբույրները հավետ
Այգիներուն մեջ ձեր թող ծավալանան ծաղկավետ։—
— Ձեր թագավոր աներոջ,— կրսե Բակուր,— սուրբ կյանքին
Ըմպենք, որ մեզ կպահե խաղաղության մեջ հեշտին։—
— Թագավորի՞ն, որ կհանգչի,— աղաղակեց ճորտ մ'հանկարծ,—
Ձյուներուն մեջ Մասիսի։ Այս հայտնությունն հեղակարծ
Ներկաները ապշեցուց։— Մեռա՞վ արքան մեր հայոց...—
— Արդ իր դիակը կիշխե հավերժանիստ սառին ծոց։
Գուժկան մ'երեկ ագռավի երագությամբ հոս հասավ,
Պատմեց, թե ի՛նչպես Տիրան խեղդված էր բքազրավ։
Կրսեն, թե թագը միայն ձյուներեն դուրս է մնացած,
Որուն վրա կշողա դեռ հայ արևը Մասյաց։—
Ներջան ըրավ սև լուրն այս պալատին մեջ բովանդակ
Գինեփրփուր բաժակե մ'ավելի և՛ըս արագ,
Որ միմիայն արբեցուց բերկրանքներով անպատում
Տրդատի սիրտն, որ մինչև արքային մահն էր տրտում։
— Խմե՞նք,— ըսավ,— ու տոնենք Արշակունի գահերուն
Թավալումներն անդունդի և մեղկանքի մեջ փցուն։—
Եվ հազիվ հազ շրթներուն դրավ գավաթն հրահոսան՝
Վերնատան մեջ աչքերն իր զույգ մ'աչքերու դիպեցան։
Կին մը իրեն կնայեր, կղգար սրտին մեջ շմոր.
Իր կազմին վրա կհիանար, առնագեղ, խրոխտ և հզոր։
Հզոր՝ վիզովն առյուծի և բիբերով աստղահեռ,
Որոնց բոցեն այրելու համար անգամ մ'իսկ բավ էր,
Որ անոնց մեջ հանդգներ առնաբաղձ կին մը նայիլ։
Հզոր մարտիկ գլուխով, լայնշի լանջքով անարդիլ,
Որ ճոշանին մեջ կուռեր կոհակի պես փրփրադեզ.
Հզոր՝ թիկնով մեծադիր, բազուկներով առնագեղ,
Որոնց միջև կսիրեն կիներն իբր օ՛ձ գեղածալ
Բյուր ձևերով գալարվիլ ու ծվարիլ ու տաքնալ։
Վերնատան կինը սարսռաց։ Տրդատ մեկ ձեռքը հենած
Սեղանին վրա, մյուսով տաշտը բերնին, գլխիբաց,
Անոր կապույտ աչքերուն հառած աչքերն իր մթին՝
Խմեց երկա՞ր, փրփուրեն մինչև մրուրն— իր գինին։
Հետո ծոցեն դուրս քաշեց խուրձ մը դեղձան մազերու,

Մութ ամպեն դուրս մացառվող ճաճանչներու պես աղու,
Եվ անով իր գինիոտ բերանն աղեկ մը սրբեց...
Անոնք մազերն էին իր գոռոզ կնոջ, զոր բրածեծ
Ըրավ ու այսպե՛ս ահա ծաղրեց այն էգն անուղղա,
Եվ ապշեցուց ամենքն այդ իր անսովոր գործին վրա։
Հազիվ Տրդատ սեղանին դրավ գավաթը թափուր՝
Լույսերու հոծ ծովուն մեջ թնդաց սրահն ընդհանուր.
— Վարձա՞կն ահա, տեղ բացեք, վարձա՞կը, վարդ տեղացեք.
Մազերուն մեջ, ոտքին տակ մարգարիտնե՞ր լեցուցեք։—
Սանդուղներեն վերնատան վար կիջներ կին մը խաժակ.
Կթրվռային գլխուն շուրջ աղավնիներ սպիտակ։
Ճաճանչավուխտ քողին մեջ աստղ մ'էր ան, որուն մեծ
Աչքերուն մեջ սևեռուն Տրդատ գինին իր խմեց։
Այն ժամանակ սրահ մտան հինգ ծերունի գուսաններ,
Ուսերնուն վրա վիժանուտ.զանգուրներով լուսահեր.—
Ոլորակեց տավիղն հեշտ, փանդիռն հնչեց փառակոչ,
Նման արծաթ կարկուտի երգ ջաղբեց դա՛փը դողդոջ.
Եվ յոթնաղի քնարին որովայնին մեջ տոսախ
Նվագի ծով մ'ըսկսավ մրրկոտիլ աղեբախ։
Հետո հանկարծ միացած բոլոր լարերն իրարու
Պանծացուցին անգամ մ'ալ փառքերը հին դարերու,
Երգը հզոր դիքերուն, Դիցուհիին ոսկեմայր,
Երգն աստղահմա քուրմերուն, որոնք բագնին վրա մարմար
Վզան օձեր այրեցին բոցերուն հետ ծառացող.
Երգն ասպետի մը զարմիկ, դյուցազներու զինաշող,
Որոնք նման կայծակի՝ տեգերն իրենց պիրկ ձեռքին՝
Փաղանգներուն կազմը կուռ արյունառուշտ ճեղքեցին.
Հնչեցուցին երգերն հուսկ մեհենական պարերու,
Սերն հայկազուն կույսերուն և հարճերուն գինարբու,
Որոնք այգվույն զովալից հովանիին տակ պառկած
Լույս ծոցն իրենց կթողուն սեպուհներուն համար բաց։
Կոչնականները համուռ դեպ գուսանները դարձան,
Որոնց մեջտեղ սկսած էր պարել կին մը գեղձան։
Վարձակն էր ան, Նաղենիկ նազելագեղ անունով։
Հասակն ամբողջ կթրթռար բարտիի պես հողմախառով.
Դաշներգը իր ջիղերուն գաշներգին հետ լարերուն
Կմիանար, ֆոփոխ համանրվագ մ'հարատևուն։

Յոթն հարճեր հերքը խարտյաշ մատվիններով նախանձոտ
Արաբական յուղի մեջ օծաներ են քաղցրահոտ.
Եվ գլխուն շուրջը պսակ մը վարդերու հյուսեր են,
Որոնք եթե ճզմվին, անշուշտ արյուն կծորեն։
Կշողշողան ունկերուն ծայրը օղեր փողփողէջ,
Աստղերու նման ցոլալով անրակներուն փոսին մեջ.
Արմունկեն վեր աջ բազուկը կխածնե սեղմորեն
Լուրթ մարգրիտով հելուզված ապարանջան մ'ոսկեղեն.
Իսկ վիզեն վար մինչև ծայրն ստինքներուն սևապտուկ
Կբոլորվի վառ մանյակ մը լույսերով հեղեղուկ.
Եվ այնքան նուրբ է զառքաշն՝ որ կբխե դեպ ի դուրս
Ազդրներուն գաղջությունն և կաթնագույնը սնդուս.
Մուճակներուն մեջ խարտեշ կաղապարված ոտքերն ալ
Դուլթ տալով կսկսին հատակին վրա պար դառնալ։
Կոչնականները լոիկ հիացումով քարացած,
Մարմնակարկառ, ապշոպյալ, աչվընեռով լայնաբաց,
Կդիտեն զինք։— Նազենիկ նախ կօրորե մեղմորեն
Ալապաստրե ուսերուն վրա գլուխն հրեղեն՝
Ներկաներուն շրջելով զույգ մը աչքերը աղվոր,
Ուր կընկղմի մարդ հեշտին, բայց դուրս կելլե վիրավոր։
Վեր կվերցնե հոլանի բազուկներն իր հուլորեն
Լայնշի քողին կապուտակ խաղաղության ընդմիջեն,
Զույգ մը տոսախ բամբիոները մատերուն մեջ ճարտար
Հանկարծակի կհնչեն, կըլլան պարին կառավար։
Մարմինն ընդհուպ կզոփա, կուտան ոտքերը դուլթ,
Եվ ան իր իսկ շարժումին անդունդին մեջ հորձանուտ.
Կարծես վայրկյան մը այլևս աչքերե կանհետի՝
Ինչպես երկնի մեջ կորսվող լուսադայլայլ մեղեդի։
Օ՜ այդ մեծ պարն հեթանոս՝ որ Աստղիկի կձոնեն,
Գեղեցկության այդ աղոթքն, աղոթքը այդ մսեղեն.
Օ՜ այդ իրանը ճապուկ ելևէջովն ստինքին,
Որոնց մեջ կաթն իսկ կեռա հուզումներեն սաստկագին.
Օ՜ թևերն իր լուսածղի՝ օձերու պես պարարակ՝
Կարծես երկար կրթված կախարդ սրինգով ներդաշնակ.
Եվ զիստերն իր սարսռագեղ, գեր երաստանը շամբույշ.
Եվ բոլորին իբր առանցք մեջքն ուռիի պես քնքույշ,
Որուն շուրջ մարդ պիտ՝ ուզեր բաղեղի նման փաթթվիլ,

Եվ վերջապես հյութասպառ բաղեղի նման թառամիլ։
Բամբիոներն իր կհնչեն ձեռքերուն մեջ սաստկորեն
Իբրև օրենք մարմինին բյուր ձևերուն հոյաշեն.
Բամբիոնե՜րն իր կհնչեն, ու անոնց երգը բյուրեղ
Կքաղցրանա մեղրի պես ջահերուն տակ լուսագեղ.
Եղունգներով հինայված մատերեն վար աղածրի
Դաշնակություն մ'հրաշալից մազերուն մեջ կծորի։
Բամբիոնե՜րն իր կհնչեն, այնքան ճարտար՝ որ կարծես
Անոր ձեռքերն Ապողոն թաթախեր է տարփակեզ
Սրտին մեջ իր տավիղին։ Գործիքին ձայնը կերկեր
Կզեղու սրահն, ուր շատոնց գուսաններն ա՛լ չեն նվագեր.
Կոհակներուն մեջ լոգցող աղկիոնին հանգունակ
Ան կլողա մատերուն երգերուն մեջ ներդաշնակ,
Որոնց ի լուր տատրակներ ահա կուգան խառնվիլ
Ցանցին մեջ իր մազերուն, իր մազերուն հիատեսիլ՝
Որոնք, ալիք առ ալիք, կերթան սրփոիլ ման ի ման
Ասպետներուն գլխուն վրա արշալույսի մը նման։
Կոչնականները գինվո մեջ թաթախված, տոփագին,
Բոլորը լուռ, սալացած՝ ըզմայլանքեն գեղեցկին,
Կդիտեն մրրիկն այդ կնոջ գանգուրներուն մետաքսե։
Ան կճախրե՜, կճախրե՜, կատաղորեն կճախրե՜։
Երբոր ետև կթեքի՝ կուրծքին վրա հոյաշեն
Բլուրի պես կդիզվին ըստինքներն իր սարսռալեն.
Եվ վարսերն իր վիժանուտ, ուսերն ի վար հոսելով,
Կերթան փրփրիլ հատակին, հոն կազմելով ոսկի ծով.
Ան կճախրե՜, կճախրե՜, սանձակոտոր կճախրե՜...
Հոգվույն մեջ՝ ծով, շուրջը՝ լույս, ան Կիպերյան Աստղիկն է.
Որ իր շորս կողմն հավաքած աղավնիները լուսեղ՝
Փորձեր կընե թռչելու ինքն ալ անոնց հետ մեկտեղ,
Ու հևհևուն, ծիծաղկոտ, վարդի մը պես բռնկած,
Վերջին թափով կսուզի կապույտին մեջ վիրասլաց,
Թողլով, որ քողն ամպերեն հորձանապտույտ իյնա վար։
Տիոնիսյան բագնին վրա, գինիին մեջ հրավառ։
Այսպես պարեց վարձակն ալ, մինչև որ քողն հոգիին
Հոն թաթախեց դիրտին մեջ ամեն մարդու բաժակին։
Ալ հոգնած էր ու քրտնած, կուռեր ծոցն իր լուսեղեն,
Երբոր վերջին ճախրին մեջ Տրդատ բռնեց բազուկեն

Եվ ծունկին վրա նստեցուց, գգվեց գլուխն ոսկեհեր.
Վարսերն ի վար շիթ առ շիթ կծորեին քրտինքներ.
Ձեռքերուն մեջ դեռ տենդոտ, Բագրատունվույն ճոշին վրա
Կդողային բամբիռներն իր մարմնույն պես դյուրազգա։
Տրդատ մատերը անոր համբուրելով մի առ մի
Եվ շամբշելով անոր հետ զերթ սեղեխներ վաղեմի,
— Նահապե՛տ, ո՞վ է,— ըսավ,— վարձակը այս լուսաստինք։
Եթե Աստղիկ երկնի մեջ Վահագնի օր մ'հանձներ զինք,
Ու կաթիլները սերմին ըլլային նույնիսկ աստղեր՝
Դարձյալ այսքան չքնաղ ծնունդ մը երբեք չէր բողբոջեր։
Այս կինն ինձ տուր, եթե չէ օրեն՝ որ մենք ընենք վեճ.
Արշալույսին թող մեկնիմ՝ արշալույսն այս գրկիս մեջ։—
Բազմականներն ըսկսան նախանձահույզ քրքջալ.
Բակուր ծածուկ մախանքե մ'ակռաներն իր ձյունափայլ
Սեղմեց. և նուռ մ'որ ձեռքին մեջ բռնած էր այն ատեն,
Ըսկծանքեն սկսավ ճմլել։ Ըսավ.— Իշխա՛ն քաջազեն,
Վրաց երկրեն, ուր կիները կծաղկին վարդի պես,
Ձայն նիզակովս եմ շահեր, մարտիկներու ընդդեմ վեհ
Մղելով երկար պայքարներ։ Այժմ ներե, որ ըսեմ,
Թե իմ հարքս է, և չըլլար քեզ աղախին մը նսեմ։
Եթե կուզես, որ մեր զույգ բաժակներն այս մտերիմ
Հազիվ թափուր գինեե չլեցվին արյամբ ոխերիմ՝
Թո՛ղ զայն իշխա՛ն։— Բնավ չանսաց Բագրատունին սրարբած,
Սեղանեն վեր բարձրացուց դուշխուրանն իր գինեմած
Ու ձեռքովն իսկ զայն խմցուց, ծունկին վրա, վարձակին,
Որ կժպտեր ըմպելու ատեն ժպտով մ'հեշտագին։
Իր գողտրիկ բերանին երկու կողմեն ընդհոլով՝
Թափվեցավ քիչ մը գինին ու ծոցն ի վար սահելով՝
Գնաց լճակի պես կարմիր ժողվիլ պորտին մեջ անհայտ.
Երբ դեռ բոսոր էին կզակն ու շրթունքները, Տրդատ
Ձանոնք առած թերանին մեջ համբուրեց կտզանքով՝
Ձվարթ հեղուկին մնացորդն ըսպունգի պես ծծելով։
Լռեց սրահը համուռ։— Բոլոր դարձած Բակուրին
Կնայեին, որ կլմեր դեռ նուռը մեջն ագուռին։
Ամեն մարդ հոն թափվելիք արյան մը հոտը կզգար...
Նահապետն ա՛լ վեր ցատկեց տեղեն իբրև քանասար.
Գնաց որ հարքն ազատե, ջախջախե գլուխն Ասպետին,

Որ կինն իր տան մեջ կլլկեր՝ իբր իր ողկույզն իր տաշտին։
Այս որ տեսավ Տրդատես՝ վարազացավ ու խոպաց.
Հրեղեն սյունի մ'էր նման, դահլիճին մեջ՝ վերամբարձ.
Կոպիճներուն մեջ աչքերն սկսան ժիր թավալել,
Մերթ ծովուն խորն ընկլուզվող գունդերու պես հրատեսիլ։
Ձախ թևով հարքը գըրկեց, հետո— Հա՜, հա՜, քրքջաց,—
Էգ վագրին հոտն ըմբոշխնել արու վագրի՞ն է տրված։—
Եվ միշտ ժայռի պես կանգուն, շնչելով բաց աչքերեն,
Հուժկու ձեռքով սեղանին վրայե խլեց, իբրև զեն,
Մեծաքանդակ ըսկուտեղ մ'ամբողջ պղնձով կուռ ձուլված,
Գազանացավ, փրփրեցավ, շամբշոտեցավ ու մխաց.
Եվ ուղղակի արձակեց զայն Բակուրի ճակատին...
Վերնատան մեջ ահեղ ճիչ մ'արձակեց տան տիրուհին,
Ճորտ ու սեպուհ բոլորն ալ դուրս պուղեցան զահանգած,
Որոնց բազուկն էր միշտ վատ՝ երբ հոգին էր սրարբած։
Սակայն կարծես մրգակալն այն վրիպեցավ հրաշքով,
Եվ Բակուրի լոկ մեկ ունկն արյունաոուշտ խլելով՝
Գնաց բախիլ դիմացի մարմար սյունին մեծադղորդ՝
Թոթափելով անկե վար կուճեր, կայծեր լուսահորդ։
Ոմանք սատար փութացին Նահապետին կարեվեր՝
Որուն խլված ականջեն, ճմլված քունքեն կհոսեր
Հոն գինիի սափորին մեջ արյունն իր թխագույն։
Այն ժամանակ Նաղենիկ սարսափահար, հանկարծույն,
Փաթաթվելով Տրդատի պարանոցին՝ ողոքեց.
— Այս հարկին տակ, ո՛վ ասպես, ա՛լ բաժինս է զան ու ծեծ.
Դուն որ գիտցար զիս վտանգել, ազատե արդ շուտափույթ.
Երբ ես հոժար խմեցի ձեռքեդ գինին քու սիրույդ՝
Հարկ է ասկե վերջ խմեմ Բակուրի թույնն ոխության.
Դուն հոս արյուն թափեցիր, և պիտ ե՛ս քավեմ զայն։
Զիս հեռացուր այս երկրեն եթե չէ գործ մ'արքենի։
Որ ասպետի մը վրիպած հարվածը կին մ'ընդունի։—
Ու ավելի ցած ձայնով հարեց.— Ես քեզ կսպասեմ
Արշալույսին, որ մոտ է։ Մեծ գռան քով արեգդեմ
Կա թուզի ծառ մը՝ որուն սաղարթներուն ընդմեջեն
Պատուհանիս ճրագն առկայծ ճամփորդներն հար կտեսնեն։
Հոն կսպասեմ ես քեզի վարդենիի մը նման,
Որ կոկոններն իր բանա պիտի կուրծքիդ վրա տիպան։—

— Զիուս առջի խրխինջեն պատրաստ եղիր, Նազենի՛կ,
Դեռ ճրագդ արփվույն շառայլեն չնվաղած՝ կմեկնինք։—
Ըսավ Տրդատ։ Թուրը մերկ միշտ ափին մեջ շողարծարծ,
Տալով կամա երևույթը մեկնումի մը անդարձ,
Գնաց թամբեց երիվարն ու խավարին մեջ, անտես,
Անհետացավ քառատրոփ, փայլակնացայտ ամպի պես։

Կոչնականներն ահաբեկ, կոչնականներն հիազարհուր,
Գինո՛վ ու վա՛տ, մի առ մի պարպեցին սրահն ընդհանուր.
Լոկ կույր գուսան մ'երգին մեջ անվերադարձ տեսլացած՝
Դեռ լռության մեջ կնվագեր սյունի մը հաղթ կոթնած։

Բ

Ահա առտվան շողերեն հագեր է վարդ ու սուտակ
Պատուհանին առջևի թղենի ծառն ընդարձակ՝
Որուն ետև հարճն արթուն.— Ինչո՞ւ չեկավ,— կխորհի,
Արտույտն ահա արձակեց կալին մեջ երգը բարի.
Եվ պալատին պահապան շունն արթնցած ման կուգա
Բակին մեջ՝ մերթ միզելով պատերն ի վեր շրջակա։
Ինչո՞ւ չեկավ, ո՛վ երկինք։— Հորիզոնեն հեղակարծ
Արփվույն ճաճանչն անդրանիկ սլացավ ինկավ շողարծարծ
Նազենիկի խուցին մեջ. դալկացավ լույսը ճրագին։
Օ՜, ի՞նչ խրխինջ, ի՞նչ դոփյուն, ի՞նչ փոթորկում թանկագին...
Կուգա իշխանն ազատել զինք Բակուրի նախանձեն։
Պատուհանին ներքև՞ է Տրդատ ձիուն վրա արդեն։
Բերկրանքեն հա՛րճը խայտաց. զեղան աչքերը վրդով
Անպատմելի խնդությամբ, ինչպես երկինքն՝ արևով։
Գիշերն ամբողջ ինքն հոն էր, զով խավարին մեջ արթուն,
Հանդերձներովը պարի, բամբիռներն ալ՝ մատերուն,
Աստղերուն տակ աղոթող բագոսուհվո մ'էր նման՝
Վարդերը դեռ հանդեսին մազերուն մեջ ցիրուցան.
Եվ լանջքը մերկ՝ որուն վրա թափված գինին խրախին
Տակավին միշտ կսփռեր իր զվարթ բույրը չորս դին։
— Զեռքդ երկարե,— ըսավ Տրդատ։— Դու գիրկդ բաց, կցատկեմ։—
— Գլուխդ, ըզգույշ, չփշրես լանջապանիս զրահին դեմ։—
Եվ Նազենիկ անհամբեր հեղեղին հետ վարսերուն

Ասպետին մռայլ ծոցին մեջ նետեց ինքզինքը սարսռուն,
Եվ զայն հեղ մ'ալ ողողեց մազերովն իր դարալիր։
Դափրեց նժույգն և ոունգերը փեռեկած լայնալիր՝
Հորիզոնին դարձուց գլուխն ու մտրակի մ'հարվածով
Թաղվեցավ իր արշավին ամպրոպին մեջ փոշեծով։

Փա՜ռք մեծազոր կենցաղին ասպետական դարերուն,
Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու Զորությունը արքուն,
Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցիկին, Զորության՝
Փրփուրներու դիցուհին ստինքներով ոոշնական։
Փա՜ռք ձեզի միշտ, գանգրահեր ո՛վ ասպետներ արդընկեց,
Որոնց զրահով վերտված լանջքերուն տակ բաբախեց
Սիրտ մը հավետ անձնվեր՝ տրկարներուն, ընկճվածին,
Եվ գեղանի կիներուն, անոնց մարմնույն բյուր գանձին։
Փա՜ռք ձեզի միշտ ձիամարտեր, մկունդխաղեր շանթասլ։
Որոնց օդին մեջ շաչուն տեգերն հանկարծ բռնկած
Կայծակներու խաղն եկան երկրիս վրա փոխադրել.
Վիշապասպան սուսերներ, ժանգոտելու անընտել,
Պառարշավներ փոշեմուղ, գուպարահարթ ոգորներ
Շառափնաթափ տեգ տեգի, կումբ կումբի դեմ ոսկեհեռ։
Փա՜ռք ձեզի միշտ, ո՛վ որսեր, թրթռուն ձայնով շեփորին,
Երբ լիճին քով վիրավոր կիյնա եղնիկն ողբագին,
Եվ վարազներ արդնահար կթավալին մարգին վրա,
Որոնց կողեն արյունն հորդ կրակի պես կմխա։
Փա՜ռք ձեզի միշտ ավարնե՛ր, հափափումներ կիներու,
Որոնք տվին իրենց տարփն ու համբույրները աղու
Առյուծներու քաջության և ո՛չ ոսկի հորթերուն,
Որոնց սիրտերն առավ լոկ սուրերու ծայրը փաղփուն։
Փա՜ռք ձեզի միշտ, ո՛վ դարեր ասպետական կենցաղին,
Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նման դինիին։
Առաքինի քաջության տեղ նենգն այսօր կտիրե.
Փոխան տեգին հոլանի՝ պատյանի մեջ դաշույնն է,
Որ կշողա մութի՛ն մեջ, կժանգոտի՛ արևին.
Ոճիրներն այդ խավարի լռության մեջ կդարբնվին
Մխոտ ճրագի լույսին տակ ծռած գունատ մարդերեն։
Երբ արեգակը ննջե՝ մեղքերն հայնժամ կգործեն։
Չեն պաշտեր կնոջ մարմինին դաշն ձևերն հրահրուտ՝

Լոգցված բյուր ջահերու շառայլներով հոսանուտ։
Կինը մարդուն միացնո՜ղը Աստղիկի սիրահոդ
Լուսեղ մատերը չեն բնավ, այլ շանսխուրը ցեխոտ։
Գեղեցկությունը ծնունդն է Զորության հրձանքին՝
Ինչպես մարգրիտն օվկիանի անդունդներուն մոլեգին։
Բայց այսօր չե՜ն քանդակեր սուսերներով կորովի
Գեղեցկության սուրբ Բագինն՝ ուր իգությունը խնկվի։
Բավական է լի գավաթ մը Մյունիխի գարեջուր,
Որ աճուրդի հանված սերը գնեն մարդիկ քրեիքուր։
Սեր վաճառվա՜ծ, ո՜չ նվիրված՝ ինչպես պսակ սարդենի
Զոր հերոսին համար սուրն աստվածներեն կընդունի։
Եվ այժմ մարդն այս դարուն, մարդն ըղեղին տակ կքած,
Ո՜վ ասպետներ հեթանոս, եթե բախե ոտքն հանկարծ
Ձեր բազուկի մեկ ոսկրին՝ որ հողին տակ ճերմակած է,
Անոր հսկա զանգվածեն կսարսափի, կկարծե
Ձեզ առասպել դարերու առասպելյան գազաններ,
Ո՜վ ասպետներ հեթանոս, ո՜վ ասպետի ոսկորներ։

Գ

— Տե՜ս, Նազենիկ, ինչպե՜ս դաշտն սպառեց ձիս վզանուտ։
Ա՜յնքան երագ, որ կարծես մոխիրի մեջ բոցանուտ
Սմբակներն իր խրվեին։ Ան հպարտ է, իմ Սիրո՜ն,
Երբ այդ մազերդ խառնված կզգա իր հորդ բաշերուն։
— Ո՜վ իմ ասպետս և իմ քաջս, մտրակի՜ անդադրում՝
Մինչև որ սա անիծված Սյունյաց սահմանը թողում։
Սարսափն է դեռ սրտիս մեջ, բայց մեն մի դռույթը ձիուդ
Հոգիս մեջ կսպանե երկյուղի տրոփ մը անգութ։
Ո՜վ իմ ասպետս և իմ քաջս, մտրակե՜, անդադրում։—
Այսպես անոնք խոսելով՝ հրճվանքով մ'անպատում
Կարշավեին դեպ Շիրակ։ Տրդատի լայն կուրծքին վրա
Կհանգչեցներ հարճն ամփոփ՝ գլուխն իբրև լոտնկա.
Մերթ ոտքերն իր կզարներ ձիուն փորին տղընդեր,
Մերթ Տրդատի անութին տակեն եռև կնայեր,
Հորիզոնին շրջելով կապույտ աչքերն, որոնց մեջ
Բերկրանքներ կհյուսեին շողերն առէջ առ առէջ՝

Միշտ մեծցնելով հույսը զվարթ՝ ծախված համփուն մեծությամբ։
Շանթ կտեղար արեգակը երկնքեն վար անամպ,
Իր տոթին տակ խեղդելով կենդանությունը շուրջ.
Կարծես հողին մեջ ղողված ըլլար ամեն մեկ ճեթ.
Միմիայն մերթ կլսվեր բզզոցը թավ զամբուռին,
Որ ա՜լ հոգնած ընդերկար հալածելե կենդանին՝
Արշավանքին փոշվույն մեջ կանհայտանար խորամուխ։
Անոնք իրար փաթթված կամբարտակեն սարին գլուխ։
Խուլ դրնդյուն մը հեռվեն եղավ հանկարծ լսելի,
Կարծես գետնին ընդերքեն անցներ ամպրոպ մ'ահռելի։
Տրդատ շրուշակը դարձուց, և երիվարը խոկուն
Ծամծմելե դագրեցավ պահ մը լիամբ փրփրուն։
Վարը, դեմի հովիտեն դեպի գագաթ ծառացան
Ձիավորներ զինավառ՝ մրրկարշավ ու դաժան։
Ոմանք աղեղ ունեին և ոմանք լախտ ու տապար,
Ոմանց տեգերն ուղղաձիգ արեգակին տակ փառփառ
Հանկարծակի սարեն վեր փայլատակներ ճայթռեցին.
Բակուր մեջտեղն էր անոնց՝ աշտանակած ահեղ ձին,
Կուգար լուծել իշխանեն վրեժ, պատժել հարճն անխիղճ՝
Մորթելով հոն՝ փոխանակ զայն փրկելու աղծապիղծ։
Կոչնականները բոլոր զինված էին արդ իր հետ.
Ծրեկ գինվով հղփացած, այսօր արյան հակամետ։
Երբ Բագոսեն վերջ օրրեց զանոնք Արեան արդընկեց՝
Հանդիսատես վատության հուշն հոգինին զայրագնեց.
Ըսկուտեղին արհավիրքը սյուներուն ընդմեջեն՝
Հետո իրենց սրտին մեջ վառեց վրեժի մը զեհեն։
Տրդատ երկար նայեցավ դեպ ի հրոսակն հալածիչ,
Աչքերեն թույն կհոսեին մոլուցքի զույգ մը կարիճ.
Գրկին մեջ հարճը հանկարծ արձակեց ճիչ մը տրտում.
— Ո՜վ իմ ասպետս,— ողոքեց— Օ՜հ, մտրակի՜ անդադրում.
Գերին ըլլամ քու սուրիդ, անոնց գերին մ'ըներ զիս.
Ահա տեգերն ուղղեր են միահամուռ կոկորդիս,
Ուր համբույրիդ տաքությունը դեռ, ավա՜ղ, չէ պաղեր։—
Ըսավ։ Թաղեց ասպետին ծոցին մեջ գլուխն ոսկեհեր։
Հա՜րկ էր արդյոք ճակատիդ. ո՜չ. պիտի կռիվն ունենար
Անհավասար հաղթանակ, թեև վսեր մ'հավասար։
Ու Տրդատես թոթվեց սանձն երիվարին հողմասլաց,

Երկրադղորդ թնդաց դռուլթն, փոշին ելավ և սուրհաց։
Ու սկսավ հալածումն հսկաներուն սանձարձակ։
Ողոքեց հարճը նորեն.— Ո՜վ իմ ասպետս վրիժակ,
Ես կտեսնեմ անութիդ տակեն զանոնք, որ կիշնեն
Բլուրն ի վար, աչքերնին մեյ մեկ անդունդ լուսեղին.
Հարյուր ձիեր կարկառեր են վիզերնին դեպ ի մեզ,
Որոնց շունչերը կելլեն պինչերնեն տաք մոխրի պես։
Օ՜, մտրակե՜, մտրակե՜, երբ բռնեն զիս՝ վագրի նման
Պիտի կրծեն ոսկորներս, լակեն արյունս լման։
— Հեղեղին մեջ մազերուդ փակե աչքերդ, իմ Աղվոր,
Եվ կուրծքիս վրա քնացիր օրորումովն այս հզոր,
Անոնք այստեղ չհասած՝ մենք Շիրակ ենք գիրկ գրկի։
Ու լայնալանջ երիվարը մտրակեց ուժգնակի։
Անցավ խորունկ փապերեն, հեղեղատեն մեծագոգ,
Ընկղմեցավ խորն հովտին, ճեղքեց ավազն հրաբորբոք.
Եվ ուղղաբերձ, մեծաշունչ, համբարտակեց սարն հսկա,
Թավալելով հետքն ի վար ապառաժներ, որոնց վրա
Լուսնանման կուռ պայտերն իրենց դրոշմը դրին.
Կատարներեն լեռներուն թռավ նման արծիվին՝
Ճապուններուն մեջ որսն իր սեղմելով միշտ ավելի.
Ժայռերն ի վար խոյացավ ջրվեժին պես փրփրալի՝
Հորձանքին մեջ տանելով լեռան ծաղիկ մը կարմիր՝
Իբրև դաշտին մեկ ընծան տրված վիհին լայնադիր։
Ու մտրակե՜ց, մտրակե՜ց, երբ որ հանկարծ լսվեցան
Իր ետևեն սուլումները նետերու դավաճան։
— Ասպե՜տ, ասպե՜տ, մահն հասավ մեր թիկունքեն, կշչա.
Օ՜, կվախնա՜մ, կվախնա՜մ. ուսիդ վրայեն նետ մ'ահա
Հրախայթոց օձի պես շշչալով սլացավ։
Վայրկյա՜ն մըն ալ և անոնք կուգան կհասնին մեծարշավ.
Աղեղներեն լայնալիճ կարծես արյուն կկաթի
Եվ կներկե ձիերուն հորդ հորդ բաշերը կաթի։
Ասպե՜տ, ասպե՜տ, մի՛ մատներ զիս անոնց խեռ մոլուցքին,
Ես քու գերին, ձիդ ըլլա թող գերին քու մտրակին։—
Այսպես ըսավ Նազենիկ, լալ սկսավ դառնահեծ
Եվ Տրդատի կուրծքին վրա գլուխը այնքա՜ն սեղմեց,
Որ զրահին մեջեն իսկ կլսեր տրոփը սրտին։
Գանգուրներն իր հողմածուփ ձիուն բաշին կխառնվին.

Ինքը կսարսռա վարմն ինկած աղավնիի մ'հանգունակ։
Սարսափելի էր տարափը նետերուն մահարձակ,
Որոնք ջուրի նման օդն եռանդնահորձ ճեղքելով,
Կերթային մահը երգել փախստական զույգին քով։
Այն ժամանակ Տրդատես գլուխն իր դարձուց մրրկահեր
Եվ հեգնորեն մռնչեց.— Հալածեցե՛ք, դե՛հ, գայլե՛ր,
Մինչև շնչատ վար կախվին ձեր լեզուները դողդոջ.
Արձակեցե՛ք կռնակիս ձեր ասեղները կնոջ։—
Ըսավ. և նժույգն այս անգամ խթեց այնքան ուժգնալի,
Որ արշավանքն եղավ շտապ մտածումեն ավելի։
Ահա ձո՛րն ինք կսուզի, սարի՛ն մյուսները կելլեն.
Կփայլակե ինք սարին, անոնք ձորին խորերեն
Կփոթորկվին։ Եվ նման զույգ մ'ամպրոպի մոլեկան
Լեռնահարթին վրա անգամ մ'այնքա՜ն իրար մոտեցան,
Որ պտի շանթը ճայթեր, պիտի պոռթկար նետն արյուն,
Եթե Տրդատ ըզգեցած չըլլար քիմուխտ հաստատուն։
Անոնց հանած փոշիներն իրար միացան՝ կազմելով
Հրատապ ամպ մը խարտյաշ՝ կարծես հղի արյունով։
Այն ժամանակ պիտ' հազիվ արձակեր տեգն իր Բակուր,
Որ ճեղքե թիկն ասպետին և հարճին լանջը փրփուր,
Երբ վիհ մ'հանկարծ դժոխորկոր լեռան գլխուն փեռեկված
Արհավիրքով մ'ընկրկեց հալածողները սրընթաց։
Ճողոպրեցավ Տրդատես և լեռն ի վար ուղղակի
Դիմեց անտառ մը մռայլ, որ սահմանն էր Շիրակի։
Բակուրի խումբը կեցավ հառաչակուլ, ոգեսպառ,
Կատաղության խարույկով ամբողջովին բոցավառ։
Ա՛լ հուսահատ՝ աղեղները պրկեցին տղընդեր,
Լարերն եղան լայնալիճ, անձրևեցին փքիններ.
Նետե դատարկ կապարճներն եկան լեցվիլ վրեժ ու ոխ։
Հազի՜վ թե ծոցն անտառին կընդգրկեր զույգը փախչող՝
Բակուր իր նետը վերջին, հերձակ մ'ամբողջ ժահրաշիթ,
Արձակեց ա՜յնքան զորեղ, թիրախին այնքա՜ն ճշգրիտ,
Որ օձի նման շշալով թունոտ լեզվովը սաղապ
Տրդատեսի անութին տակեն սողոսկ անցավ թափ,
Ու մխվեցավ վարձակին ծոծրակին մեջ լուսաբուխ
Եվ հոն մնաց հորդառատ մազերուն մեջ խորամուխ։
Երեք անգամ սրսփաց զարնված աղվոր աղավնին,

Երեք անգամ չուզելով՝ կարծես թողուլ իր հոգին։
Այս բանը ո՛չ Տրդատես նկատեց, ո՛չ ալ Բակուր.
Իրենց անզուսպ մոլուցքին փոշիներեն դարձած կույր
Բնավ չտեսան, թե ինչպե՛ս կփշրվեր ու կիյնար
Դաշնակության ու գեղի աստվածակերտը գոհար.
Միայն նժույգը վրնջեց ու երեք հեղ սարսռաց,
Երբ սառեցավ փորին վրա զարնվող ոտքը հանկարծ։

Դ

Իշխան մ'է կառուցված սահմանին վրա Շիրակին,
Գործ արքունի ճոխության, մեծազանգված, ահագին։
Լայն դռներն իր կբացվին ճամփուն վրա հրատոչոր,
Դուրս շնչելով զովություն և աղբերուն հոտը չոր։
Արևուն դեմ կիզանուտ ապաստան մ'է մշտազով.
Ճամփորդներն հոն կհասնին տոթեն թխացած ծոցերով
Եվ հոնքերնին բեռնավոր փոշիներով տապախարշ.
Հո՛ն կհասնին սայլերն հույլ գոմեշներե ծանրաքարշ.
Եվ կաղացող ջորիներն ու կարավանն էշերու՝
Քաղցրաողկույզ խաղողին կողովներուն տակ հլու։
Հո՛ն կհասնին՝ շար ի շար ուղտերը հաղթ՝ բեռնավոր
Տարաշխարհի զանազան համեմներով քաղցրածոր,
Եվ կպառկին ծնկածալ, խրոխտավիզ կորոճան
Անծանոթ խոտն հեռավոր երկիրներուն արփական։
Թանձրակառույց իշխանը բարիք մ'է երկնատու
Երբ կհսկե ճամփուն վրա, որուն ծայրերը երկու
Հորիզոնին խորհուրդին մեջ տաղտկորեն կանհետին,
Երբ կվառե անկենդան լռության մեջ լեռնային
Իր պանդուխտի օջախներն ամեն մարդու անխտիր
Եվ հոն ամռան ջերմությունը մարելու ի խնդիր
Թանին ալիքը կհոսի երակներու մեջ ծարավ։
Բայց միշտ հասնիլն հոն՝ անկե մեկնելեն քաղցր չէ բնավ.
Ավասիկ այդ իշխանն է՝ ուր կուգա Տրդատես,
Ապաստանիլ նետերուն և արևուն դեմ հրակեզ։
Ծալքերուն մեջ թիկնոցին և գուրծքին վրա զրահապատ
Պարուրված է Նազենիկ մարմարի պես ջարդուփշար.
Այլևս, ո՛հ, չի հուզեր ո՛չ մեկ սարսուռ, ո՛չ մեկ վանկ

Ջքնաղ մարմինն իր սառած լուսարձանի մ'հանգունակ։
— Արդյոք քնացա՞վ (կխորհի՝ ասպետն հասած իշխան)
Թե սարսափեն մարեցավ ճրագի պես՝ կուրծքիս վրան։
Ի՞նչպես կրնա սալանալ այնքան եռանդ մ'հանկարծույն
Եվ տարածվիլ սրտիս վրա շիրմաքարի մը հանգույն։—
Խորհելով այսպե՛ս Տրդատ վար կցատկե նժույգեն
Եվ կիջնցնե վարձակն ալ, բայց աչքերն իր կտեսնեն
Մազերուն մեջ Բակուրի նետն ըսպաննիչ, արյունն հիր,
Որ հոսած է ծոծրակեն ժապավենի պես կարմիր։
Կնոջ մարմինը անշունչ գիրկը կիյնա ցրտագին.—
Կատաղություն ահավո՛ր ասպետական խաբկանքին...
Մազերն ամբողջ կքստմնին, երբ սիրտն անոր կտեսնե
Տիեզերքի մը սրտին նման՝ դաղրած տրոփելե,
Երբ կխորհի, թե կինն այդ մեկ թարթափին մեջ աչքին
Գեղեցկության հեթանոս ուներ գանձերը անգին,
Թե իր մարմինն էր լոգցած երկնի շողով անշեջ,
Մեղր ուներ իր թուշին տակ, լույս ուներ իր ծիծին մեջ.
Եվ իր ձեռքին ու ոտքին մատերուն ծայրն էր խտացած
Տիեզերքն այս հարդարող ճարտարությունն առեղծված.
Եվ խորհեցավ վերջապես՝ սրահին մեջ Բակուրին
Աստվածացումն իր միսին, փոթորկումները պարին,
Եվ առջի հեղ ըլլալով ապառաժ մարդն այդ լացա՞վ...
— Ո՞վ պատրանքի արցունքներ հերոսներուն մեծհամբավ,
Որոնք երբեմն սրտի խորեն կհոսին տխրամած
Հին օրերու հաղթության պսակներուն վրա դեղնած։—

Ե

Բարտի մը կար հինավուրց՝ զոր ձեռքերովն իր բարի
Իշխանին քով տնկեր էր Դիցանույշ մ'անտառի.
Սակայն այդ օրն ոստ առ ոստ ան կչորնար տրտմորեն
Տերևներն իր դալկահար հողին վրա ոզբալեն։
Ո՛վ գիտե ո՛ր մրրկածուփ գիշերվան մեջ Արամազդ՝
Զարկեր, պատռեր էր անոր սիրտն իր շանթով մեծասաստ.
Եվ գլուխն իր գեղուղեշ, որ կհասներ արևին՝
Արդ սոսափներ չէր երգեր, կնիզակվեր դեպ երկին։

Հո՜ն, ահա այդ բարտիին շուրջը եկան հավաքվիլ
Անտառաբնակ չորս քուրմեր՝ հագած կնգուղ և ջանջիլ.
Ու Տրդատի հրամանով, անոր բունին ճիշտ ներքև,
Միահամուռ փորեցին Նազենիկի փոսը սև.
Ու երգեցին Աստղիկին։ Տրդատ սրտեն շանթահար՝
Անոր դեռ թա՜րմ դիակն առած գրկին մեջ կուլար։
Երբ զայն փոսին հանձնեցին մազերուն մեջ շաղապատ
Դեռ Բակուրի նետն ոսկի կփայլակեր լուսացայտ։
Իշևանին քով տնկված վաղնջական այն բարտին
Վերընձյուղում մ'ըստացավ բուժելով վերքն իր սրտին,
Երբ որ Հարճին լույս մարմնույն ավիշներով կենսահորդ
Թաթախվեցան հողին տակ արմատներն իր խորդուբորդ,
Եվ ըսվեցավ, թե անոր տերևուտքին մեջ դողդոջ
Ջքնաղ հոգին վարձակին բնակեցավ դար մ'ամբողջ,
Լուսնկային ժպտեցավ, ծոծրակին վերքը տվավ ցույց,
Հովերուն հետ պար եկավ, բամբիռներն իր հնչեցուց։

ԳՈՂԳՈԹԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐ

ԱՍՏՈՒԾՈ ԼԱՅԸ

Գեղեցիկ բաները արցունքի մեջ կծնանին։
ՌԸՆԱՆ

Երբ միջոցին մեջ տեղի տված չէր
Դեռ Ոչնչությունն այս Տիեզերքին,
Դեռ կարծեմ Աստված բան մը կորոներ՝
Որ դարման ըլլա տաղտուկի վերքին։

Շրջան ըրավ Ան միջոցը մեկեն,
Եվ հոն իրմե զատ բան մը չգտավ.
Էություն մ'ուզեց իր էութենեն.—
Իր էությունն իր արձագանքն եղավ։

Հետո դառնալով, տխուր և մորմոք,
Համբ Լռության և կույր Ոչինչին՝
Ան իրենցմե ինչ մ'ուզեց, և անոնք
Ինքզինքնին տվին կամ բան չտվին։

Երբ Անհունն այսպես դատարկ գտավ Ան,
Իր մեջ ըզգաց խոր, դառնակսկիծ ցավ.
Եվ Լռության վրա ու Ոչնչության
Հուսահատութենեն սրտաբուխ լացավ։

Վարն իր արցունքներն ուզածը տվին՝
Կազմելով մեյմեկ աստղեր երկնքին.—
Եվ Բանաստեղծին նման Աստված ալ
Որպեսզի ստեղծե, հարկ եղավ նախ լալ։

ԼՈՒՅՍԸ

Դուն կփայլիս մեծության և զոհագործումին համար։
ՌԻԿ-ՎԵՏԱ

Կերթամ աղբյո՜ւրը լույսին...
Ուղին երկա՜ր է. սայլարկված է ուղին
Կայծքարերով, ցանկված՝ մուրտի փուշերով.
Ուղին շեղ է ճառագայթի մ'հանդունակ։
Անկե կելլեմ՝ հենլով դողդոջ ծունկերուս,
Եվ ծունկերես, զոր գամեցին եղբայրներս,
Արյունս տաք կբխի։
Հեքն է կուրծքիս, թարթիչներուս վրա՝ փոշին։
Սիրտս սափորն է դատարկ,
Ու ես կերթամ դեպ ի աղբյուրը լույսին...

Լույսն աղվոր է, բարձրության մեջ՝ հոսանուտ,
Խոնարհումին մեջ՝ արդար։
Օր մը տեսա էութենեն մաս մը սուրբ

Մորս հոգվույն մեջ ճաճանչագեղ և ցաթած
Մեր գյուղակին մեկ վաղեմի հերոսին
Հողակույտին վրա դալար։
Միջօրեին՝ զայն տեսա,
Որ նման մեծ թիթեռնիկի մ'ըսպիտակ՝
Կքալեր գաղջ պատուհանիս քարին վրա,
Որ մայթերեն կամ աղծապիղծ ճամփային,
Ներողամիտ գթությամբ,
Կհոսեր նոր կթված կաթի մը պես եղկ,
Որ իրիկունն, հորիզոնե հորիզոն,
Կերիզանար գետերու պես հակինթի
Կամ կկազմեր, երկինքներուն վրա խաղաղ,
Անրջական ավազաններ, որոնց մեջ
Կբռընկեին նունուֆարե կղզյակներ։
Զայն ես տեսա՝ և հոգվույս մեջ արթնցավ
Պանդուխտի տենչ մը անորոշ և լկիշ
Դեպ ի գավառ մ'անծանոթ, լի արևով.
Եվ արդ կ'երթամ դեպ ի աղբյո՛ւրը լույսին...

Լույսն է Մտքիս հարսը, աղջիկն՝ Աստուծո.
Ան գինին է Տիեզերքի բերկրության,
Որ իրիկուն մը, կողեն դուրս Հիսուսին,
Հեղեղորեն հոսեցավ,
Ներումի պես հոսեցավ, վա՛ըը, Մեղքին
Սեղանին շուրջը հավաքված մարդերուն
Անհուսության ըսկիհներուն մեջ դատարկ։
Լույսը արյո՛ւնն է բնության,
Գիշերվան թագն ու պատմուճանն է օրվան.
Աստվածային Ակնին է՝
Որ, երկունքի մեջ մեռած մոր մը նման,
Կստեղծե իր վախճանելու ժամանակ,
Ակնին՝ հրեղեն բիբերով,
Որուն հոգին ամեն գարուն կտրոփի
Հյուլեին մեջ և մարդկային մտածման,
Որուն համար զոհերով դեռ կմխան
Նվիրական ափերը հորդ Գանգեսին։
Ու ես կերթամ դեպ ի աղբյո՛ւրը Լույսին...

Լույսը մարմարն է երկնային հանքերուն.
Որով Արվեստն, անմահական երազով,
Կքանդակե ձյունամարմին աստվածներ։
Իր ծոցին մեջ կծնին
Մռայլ Տանդեներն ու Հոմերները հսկա,
Իր ծոցին մեջ իմաստությունը երգ մ'է,
Ջոր գիշերվան մեջ խորին
Բանաստեղծները կխմեն աստղերեն,
Որ նվագեն ցերեկվան մեջ Մարդերուն։
Ան ամենո՛ւն զինքը կուտա, ամենո՛ւն
Կբաժնվի և կմնա անբաժան
Նշխարքին պես. ան նշխարքն է, որ կիջնե
Ամեն առտու սեղաններուն վրա մեր,
Մարդեղության արյունլվա խորհուրդին։
Ու ես կերթամ դեպ ի աղբյո՛ւրը լույսին...

Քանի՞ հազար, քանի՞ հազար տարիներ
Պետք է, որ այսպե՛ս քալեմ.
Քանի՞ անգամ պետք է իյնամ, կարեվեր,
Ճանապարհիս վրա բացված
Նպատակիս ժայռափշուր մուրճերով.
Չգիտե՞մ ես.— միայն թե, ո՞վ եղբայրներ,
Ո՛վ խաչ հանող եղբայրներ,
Թողուցեք զիս ճամփորդությանս մեջ մինակ,
Այնքա՛ն մինակ և այնքա՛ն լուռ, որ լսեմ
Տրոփը սրտիս, զոր ընտրած նվագը է
Նվագներուն մեջեն բյուր.
Արևով լի և արևները տանող
Ուղիս վրա մի՛ սփռեք
Ձեր շուքը, մռայլ թևի մը պես ուրուրի։
Եվ ոչ ալ զիս կանչեցեք
Խնճույքներուն ձեր զվարթ,
Ուր բոզությունը կզարնե նվագարան։
Ընդունա՛յն է խոստանալ։
Սրտիս կույսեր,— սիրտս սափորն է դատարկ,
Ու ես կերթամ դեպ ի աղբյո՛ւրը Լույսին։

ԱՌԿԱՅԾ ՃՐԱԳ

Հաղթանակի գիշերն է այս տոնական.—
Հա՛րս, եղ լեցուր ճրագին։
Պիտի դառնա կռիվեն տղաս հաղթական.—
Հա՛րս, քիթը ա՛ռ պատրույգին։

Սայլ մը կեցավ դռան առջև, հորին քով.
Հա՛րս, վառե՛ լույսը ճրագին։
Տղաս կուգա ճակատն հպարտ դափնիով.—
Հա՛րս, բե՛ր ճրագը շեմին։

Բայց... սայլին վրա արյո՞ւն և սո՞ւգ բեռցեր են...
Հա՛րս, ճրագդ ասդի՛ն երկարե։
Հերոս տղաս հոն զարնվա՜ծ է սրտեն.—
Ա՜խ, հա՛րս, ճրագդ մարե՜...,

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ

Պատուհանիս տակեն, ամեն առավոտ,
Ուրվականի պես կանցնիս,
Եվ կուսագեղ գլուխիդ վրա կարտասվե
Տերևաթափ վարդենիս։

Լուռ թաղին մեջ կլսեմ քայլդ ու զարթնող
Շունն, որ վրադ կհաչե՜.
Կամ կլսեմ քունիս մեջեն ձայնն հազիդ՝
Որ ծոցդ աղվոր կտանջե։

Եվ կխորհիմ, թե քնատ ես և նոթի.
Իրանդ հովեն կդողա.

Եվ կնստի գանգուրներուդ վրա, քո՛ւյր,
Եղյամն իբրև շափյուղա։

Կամ մուճակներդ են պատռտած, փողոցին
Ջուրն անոնց մեջ կճողփա.
Կամ ետևեդ շվայտորեն կսուլե
Սրիկա մը անոպա։

Եվ կխորհիմ, թե տան մեջ մայրդ է հիվանդ.
Ցամքած է ձեթն ալ ճրագին.
Ու դուն կերթաս գործատան մեջ աշխատիլ
Լույսին համար ու կյանքին։

Ես կխորհի՜մ— և խենթի պես կբաղձամ
Վար իջնել, քո՛ւյր դալկադեմ,
Քո՛վդ իջնել, համբուրել ձե՛ռքդ նիհար,
Եվ հծծել.— «Քեզ կսիրեմ։»—

Կսիրեմ վիշտդ, որ իմ վիշտս է գերագույն,
Կսիրեմ կուրծքդ քանդված,
Որուն մեջ դեռ կհամառի Սերդ երգել
Արտույտի պես սրարբած։

Կսիրեմ քու անոթությունդ ու ծարավդ,
Եվ ոսկորներդ ուժասպառ.
Ես կսիրեմ կույս աղիքներդ ցամքած,
Մազերուդ սուգն՝ ուսեդ վար։

Եվ ես կուզեմ ամփոփել քեզ սրտի՜ս վրա
Ցատրակի պես տարագիր,
Տալ ուժս քեզ, մրցանակներս փառքի
Եվ ազգանունս անբասիր։

Կուրծքս վահան ընել կուրծքիդ նշավակ
Եվ քողն ըլլալ պատիվդ,
Կրանիդե բազուկիս տակ պաշտպանել
Սեռդ ու գեղդ անժպիտ։

Կուզեմ քեզ տալ ինչ որ պայքարն ինձ տվավ.
Ինչ որ խլեցի մարտերով.
Քեզ պսակել արյունիս գույնն ունեցող
Հաղթանակիս վարդերով։

Միայն թե դուն չըլլաս դժգույն ու քաղցած.
Արևուն տակ չհաղաս.
Մորդ վերև չմարի ճրագն ու, ո՛վ քույր,
Դուն գործատուն ա՛լ չերթաս։

ՍՊԱՍՈՒՄ

Ահավասիկ շուրջն ընթրիքի սեղանին
Նստան տղաքն ու կինը ծեր բանվորին։
Մեջտեղը լուռ կպաղի
Ոսպապուրն իր գոլորշիին մեջ անդորր։
Մայրը հացերը լեղի
Իր սրտին պես բաժնեց կտոր առ կտոր
Տղոցն համար և ամուսնույն, որ գործեն
Պիտի դառնա... կսպասեն...

Մխոտ ճրագին շառ լույսեն
Հացերն ամբողջ կարմիր են.
Կարծես անոնք թորեին
Արյո՞ւն նման Քրիստոսի մը կողին։
Ջուրը գույնով քացախի
Կերազի հոն ըմպանակին մեջ մեծդի։
Խաղաղավետ օրհնությունով մ'ընդհանուր
Օծված սեղան, հաց և ջուր,
Կընեն աղոթքն ըսպասումի մը երկար,
Երբ իրիկունն հոգնած բանվորը չի՞ գար։

Ի՞նքն է.— ահա գոռ սանդալներ կհնչեն
Մայթին վրա փողոցին...

Ի՞նքն է.— ո՛հ, ո՛չ.— դրացին,
Որ տնակին առջևեն
Կանցնի դանդաղ երգին հետ իր քայլերուն։
Խե՜ղճ որդիներ, կի՞ն դժգույն...
Նորեն գլուխնին կխոնարհեն հուսակտուր
Սեղանին վրա, ուր կպաղի ոսպապուրն։
Ո՛հ, ուշացավ ծերունին.
Անոնք գիտեն՝ որ ունին
Աշխատանքները վտանգ.
Ունի պայթում՝ ամեն հանք.
Անոնք գիտեն՝ որ սանդուղներն որմնադրին
Մատնչորեն կկոտրին։
Եվ մեքենան կկասկե
Զինքը կրթող թևը ժիր.
Անոնք գիտեն, որ աշխատիլն է ոճիր,
Երբ լուսնկան երդիկին վրա կհսկե։
Կուգա՜.— ահա դուռն հյուղին
Լալաճռինչ բացվեցավ իր շեմին վրան.
Ի՞նքն է.— ո՛չ, ո՛չ.— է քամին,
Որ բոթաբեր դրացիի մը նման
Ներս կմտնե, կսողոսկի ճրագին մեջ
Ու բոցին տակ ծխահարույց կմեռնի։
Նոթի տղաներն աղիողորմ աչքով գեջ
Կնային մորն երեսն ի վեր տխրունի...
Ինչո՞ւ չեկավ... ո՞ր անիծված ընկերներ
Զինքը՝ իրենց ճամփուն մեջ են մոլորեր։
Ցուրբ զո՞հն եղավ բանթողի,
Թե կխմե արդ օղի
Գինետան մեջ, սեղանին տակ թքնելով։
Չեկա՜վ.— ահա մորը կուրծքին վրա խորով
Կրտսերագույնը լալեն
Ննջեց...— և դեռ կսպասեն։
Ո՞վ կհաղա դռան առջև.— ա՜ն է, ա՜ն։
Անոնք հաղն այդ կճանչնան։
Կճանչնա կինն ամուսնույն
Շուքն իսկ ջուրին վրա հոսուն։
Ան կերևա ավասիկ.

Գլուխն է փոշոտ, փոշոտ լոդիկը բզիկ,
Եվ իր կապույտ տաբատն հին
Շպարն ունի շաղախին։
Դժնե բիբերը արյունի մեջ ի լող
Կթավալին կոպերուն տակ շլմորուն։
Կնեատ մուրճը փողփող
Օջախին մեջ.— ու դռան մեջը կանգուն
Սեղմած կռուփները ջղուտ
Կաղաղակե կնոջ՝ մռունչով մ'առյուծի.
— «Բոզ հերատուկ, չսպասեցիր դուն ինձի»։—
Շունչը՝ լեցուն գինվո հոտով ժանտաժուտ՝
Կհուզե հյուղն համորեն։
Կինն ու տղաները զարհուր
Կուլան... լացով կօծանեն
Սեղանն՝ որուն վրա պաղե՛ր է ոսպապուրն։

ԸՆԿԵՑԻԿԸ

Բուքը կմռնչե։— Շքեղ տան մ'առջև,
Կես գիշերին, հո՛ն, մայրը առավ կանգ։
Հույզեն կդողա սիրտը, զերթ տերև.
Մարմինը ձյունեն հագեր է պատանք։

Կնիրհե գրկին մեջ դեռ երեխան.
Գուցե անոթի, գուցե նվաղած...
Կաթեն կաթիլ մը, մարգարտի նման,
Բերանին վրա ցուրտեն է պաղած։

Պետք է լքե՛լ հոս։— Ի՞նչ նկուղի մեջ
Ծնավ ծաղիկն այդ՝ զարնված եղյամեն...
Ունեցա՞վ շապիկ, կամ օրոցք մը գեջ...
Հրեշտակ մ'իջա՞վ վար՝ ժպտելու իրեն։

Հայր մ'հավատարիմ ունեցա՞վ արդյոք,
Որ խառներ քրտինքն՝ իր արտասուքին.
Թե կույս մը խաբված սիրով մը բորբոք
Անոր մայր եղավ՝ նախ չեղած դեռ կին։

Զգիտեմ.— միայն այդ մայրն է դժգույն՝
Խոնավ քարին տակ բուսնող սեզին պես։
Ոտքերն են բոբիկ, հասակը նկուն,
Զոր պիտի փշրե ցուրտ քամին կարծես։

Թոշնած են ծիծերն՝ ուրկե բխեցուց
Սերը՝ կաթի տեղ՝ շիթ մը շարավի։
Մերթ թափը հովին կուրծքը կուտա ցույց,
Ուր վիշտն է պառկեր, ձյունը կմաղվի։

Պետք է լքե՛լ հոս.— կդընե տղան
Ծածքին տակ քիվին, տան շեմին վրա...
Իր կանեփ շալով կսքողե վրան.
Ինքն երկնքին տակ, մերկ, կդողդղա։

Ձայն կհամբուրե և կուզե փախչի՛լ...
Բայց սիրտը քայլին չի հպատակիր.—
Ո՜հ, ի՛նչպես բաժնել, փետել հոգեխիլ
Իր աղիքն՝ որդվույն աղիքեն կարմիր։

Եվ հոն կսպասե մինչև արշալույս.
Խելահեղ ուրուն կըլլա գիշերվան.
Ու երբ որ տղան կուլա սրտահույզ՝
Մարմար շեմին վրա մերթ կօրորե ձայն։

Կխորհի.— գուցե ունենա որդին
Վաղը այս կյանքեն կյանք մը լավագույն.—
Դրվի օրորան, ծիծերն ըստընտուին
Իրեն ավելի՛ առատ կաթ մ'հեղուն։

Ունենա գուցե նույնիսկ խաղալիք.—
Պուպրիկ մ'իրեն պես բեհեզներ հագած.

Մարդիկ զայն կարծեն իշխան մը փոքրիկ.
Եվ զայն իր հրեշտակն ընդունի Աստված։

Ա՛յդպես կխորհի մայրը դողդոջուն,
Մայրը՝ հոն հագած պատանքը ձյունին...
Այգը կծագի. փողոցներն համբուն
Կյանքի շշուկով տակավ կլեցվին։

Կերգե աքաղաղն, որդին կճըչա,
Չի կոպերն անոնց շո՛ղն է համբուրած։
Մայրը խելացնոր, մայրը ակամա,
Ըշտապ կփախչի՛... սիրտը հոն թողած։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՍ

> Ֆերրա՞ղա... երբ քո ամայի պալատներդ քաջ քարի վրա չմնան՝ քերթողի մը բանտը փառքիդ մեծագույն տիտղոսը պիտի ըլլա։
>
> ԼՈՐՏ ՊԱՅՐՈՆ

— Ըսե՛, ծիծեռնա՛կ,
Ճանճ մը կտուցիդ կերթաս ծաղկավետ ո՞ր այգեստաններ.
Ո՞ր աշտարակն է, որ գաղջ արևու մեջ է ընկղմեր.
Ըսե՛, ծիծեռնա՛կ։
— «Մետեխի բանտին պատին նորոգել կերթամ բույնս ամա՝
Որուն մեջ ձյո՛ւն է տեղացեր ձմեռն, ու այնտեղ հիմա
Օձ մը ծվարած, գլուխը պոչին տակ, լուռ կմրափե։
Օձի շապիկով կերթամ կարկտել բույնս կանեփե»։—
— Ա՜խ, գնա՛, ծիծառ, երգը կտուցիդ։
Միայնության մեջ մեծ Եղբայր մ'ունինք մենք հոն կալանված.
Թեզաններն ի վար կհոսեն թոքերն արյուն մ'անձնուրաց։
Հաց մ'են դրեր իր քով, մոխիրո՞վ թրուն, դառնահամ բլիթ,
Եվ կուժ մ'որուն մեջ ծռած կարտասվեն մողեզներ դեղին։

Սիծա՛ռ, շող մը տար լուսնեն՝ որ օծե բիբերն անժպիտ,
Երգ մ'որ ըսփոփե հոգին, ուր տրոփեց հողը մայր Երկրին։
Ա՜խ, գնա՛, ծիծառ, համբույրս կտուցիդ։

— Ըսե՛, իմ կոռ՛ունկ,
Դեպի հորիզոն նետի պես սլաքած վիզդ բոցեղեն՝
Այսպես ո՞ւր կերթաս ուրախ կրկոցով երդիկիս վրայեն.
Ըսե՛, իմ կոռ՛ունկ։
— «Կովկասը լիճեր ունի՝ որոնց մեջ եղեգներ ջով ջով
Բարձր ուռճացած արև կշնչեն փրփրուն կատարով,
Ու լքվածներու տնակներ կան հոն, որոնք կբաղձան,
Որ իրենց շեմին երգեմ, իրիկունն, երգերս ըսփոփման»։—
— Ա՜խ, գնա՛, կոռ՛ունկ, հույսը կտուցիդ։
Բայց բանտի մ'երդին պահ մը ամփոփե թևերդ հոգնած։
Հոն Արվեստի քուրմ մը կա, որ նվագեց Վիշտն համատարած
Ըստեղնաշարին վրա աստղերուն՝ մատերով վճիտ։
Արդ իր գանգին ջահն արյուն կծեփե պատերն Ոճրի Տան։
Կոռ՛ունկ, պսակ տար իր ջախջախ քնարին սա ճյուղը փթիթ՝
Զոր մենք ամենքնիս օծանեցինք մեր ողբովն հավիտյան։
Ա՜խ, գնա՛, կոռունկ, արցունքս կտուցիդ։

— Ըսե՛, արագի՛լ,
Գորտ մը, զմրուխտի նման, բերնիդ մեջ դեպ ո՞ւր կուտաս խույսդ
Ո՞ւրտեղ օգոստոսն իրենց փոսերեն իժերն հանեց դուրս.
Ըսե՛, արագի՛լ։
—«Հեռո՛ւն, կտեսնեմ գլուխներն ադամանդ լեռներուն Կովկաս՝
Որոնց կողերեն ձորերը կհոսի արևն հրամազ։
Գարունն է պճներ հոն հարսի նման բարտի մը վսեմ,
Իր սոսափյունին մեջ քույնս ուտիով ես պիտի հյուսեմ»։—
— Ա՜խ, գնա՛, արագի՛լ, կարոտը կտուցիդ։
Հոն կապանքի տակ ձայրենիքն ունի հանճար մ'ողջակեզ։
Գրիչը մատերուն մեջ խորտակեցին ճառագայթի պես։
Արագի՛լ, վրայեդ փետուր մը ձգե բանտն իր մահարիթ՝
Ուր ան օրե՝ օր իր գերեզմանին համար կ'հասուննա։
Ի՞նչ փույթ, թե խլված փետուրեն՝ թևդ այդ արյունի շիթ շիթ.—
Անով հաղթանակն ան պիտի գրե իր Ուխտին հսկա։
Ա՜խ, գնա՛, արագի՛լ, սիրտս կտուցիդ։

— Ըսե՛, խրո՛խտ բազե.
Ճեղքելով անտառը կայծակներուն, ամպերուն խորեն,
Ի՞նչ կատարի վրա կերթաս քթվտել պորտդ լուսեղեն,
Ըսե՛, խրո՛խտ բազե։
— «Ռուս հորիզոնեն գաղթող մրրիկներն ինձ հոտը բերին,
Հոտ դիակներու, հունդերը կարմիր բեղուն ժանտախտին.
Հզոր թռիչներես վար գաղջ արյուններ ես անձրևելով,
Կերթամ արածիլ մարդկային բիբերն ու սիրտերն համով»։—
— Ա՜խ, գնա՛, բազե՛, կայծակը կտուցիդ...
Բայց մեռելներն այդ զոհերն են լույսի.— անոնց մի՛ դպչիր.
Սիրտեր՝ որ վրեժեն չեն գիտեր պաղիլ.— անոնց մի՛ դպչիր։
Այլ այնտեղ Պայքարն Առաքյալ մ'ունի բանտին մեջ կրանիտ.
Թևերովդ հուժկու զա՛րկ, փշրե՛ խախամն իր լուսամուտին,
Եվ շանթը կտուցիդ՝ Հույսն երգե՝ թառած իր ուսին վճիտ։
Ըսե՛, թե շուտով մենք պիտի կանգնենք արձանն իր փառքին։
Ա՜խ, գնա՛, բազե՛, դափնի՛ մը կտուցիդ։—

ՄԵՌՆՈՂ ԲԱՆՎՈՐ

Քամին կոռնա ու տնակն իր հիմերեն կցնցե
Իբրև ահեղ դամբարան։
Ծյուրախտավոր բանվոր մ'հոն կվախճանի մազկոհնչ՝
Խարին վրա հոտևան։

Հանո՛ւն պատառ մը հացի՝ գործատան մեջ թաղեց ան
Ճառագայթներն հոգիին.
Տվավ փերթ-փերթ, որ ուտեն մեքենաները վիշապ
Միսերն հուժկու կռնակին։

Անիվներուն ակռաներն ողնածուծո՛վն օծանեց
Եվ սրբեց իր մազերով.
Հնոցին դեմ՝ մերկալանջ, ժահրոտ օդին մեջ՝ մղձուկ
Ապրեցավ միշտ մեռնելով։

Արդ տապալող նոճիի հանգույն բան մ'է այդ տղան,
Այդ հա՛ղթ ռամիկն երբեմնի։
Երկաթներու հետ պայքար մ'եղավ իր կյանքն հարատև.
Արդ կփշրի զերթ վանի։

Գերեզմանին դեղին հո՛ղն իր աչքերուն վրա կապույտ
Սփռեր է Մահն անժպիտ.
Մեղրամոմի պես մարմինն ահավասիկ կհալի
Մատերն ի վար շիթ առ շիթ։

Ի զո՛ւր գարունն երազեց և հովերուն մեջ ազատ
Կաղնիացումն հասակին.
Ի զո՛ւր տենչաց երգով լի շրթունքներն իր երկարել
Աղբյուրներու ջինջ ակին։

Արևուն տեղ՝ դալկություն, շուշաններու տեղ՝ մրուր
Պսակեցին ճակատն իր։
Սիրո երգին փոխարեն՝ եկավ փրփրիլ շրթունքին
Հրատապ հազ մը կարմիր։

Արդ կհազա՜, կհազա՜, իր զոհի գլուխը դրած
Ծոցին մեջ մո՛ր աղեկե՛զ,
Որուն կուրցած աչքերեն իսկ արտասուք կբխին՝
Հողեն պտղող ջուրին պես։

Վար կկախվի սնարեն Հիսուսի խաչը կարմիր,
Բայց ճակատին վրա չինկած
Շիթ մ'Արյունեն փրկության, որ սառե՛ր է խաչին վրա—
Ինք կմեռնի, վաստակած։

Քամին կոռնա և տնակն իր հիմերեն կցցնե
Իբրև ահեղ դամբարան...
Ու սև կատուն տնակին կմլավե՜ խելահեղ,
Ճանկռթելով շեմքը դռան։

ԽԱԲՎԱԾ ԿՈՒՅՍԵՐ

Կաշխատէիք հյուղակին մեջ, ճրագին տակ արդար,
Հարուստներուն պատմուճան, մերթ ալ պատանք կարելով։
Ասեղն հյուծած մատներնուդ մեջև ցուրտեն կսարսռար...
Հոգինիդ էր անվրդո՜վ։

Բայց հեշտությունն ամբարիշտ կդավեր քա՛ղցր ձերին
Եվ ծախեց ձեր հոգիները գնելով մարմիններդ։
Անմեղությունն անպաշտպան՝ կուրությունն մ'է երկնային,
Զոր խաբեցին ուխտն ու ժպիտ։

Օ՜ այն հարուստ պարոններն, այն հոպիտները շքեղ,
Որոնք ոսկի ցանեցին՝ որ բոզությունը հնձեն,
Ձեր հյուղերեն ներս մտան սիրահարի պես անմեղ,
Եվ դուրս ելան քրքջալեն։

Ձեր սիրտն անոնց համար լո՜կ բաժակ մ'եղավ գինիի,
Զոր, պարպելե վերջ, հարբածը կկոտրե հաճույքով։
Ու օր մ'ալ երբ մայր եղաք, անոնք ըրին ձեզ այրի,
Արցունքներու մեջ թողլով։

Եվ փողոցնե՜ր ինկաք.— Դուք օր մ'աղնի՜վ բյուրեղներ,
Կոխոտվելով մարդերեն, եղած եք այժմ ցեխ։
Սակայն ոճիրն հոպիտին արգանդնուդ մեջ գոհար մ'էր,
Եվ կմեծնար սիրազեղ։

Դուք կոչվեցաք Գաթինա և կամ Ֆանթին արտալած,
Որ պաշտպանեց բոզությամբ իր մայրությունը անզեն.
Մարգարիտա կոչվեցաք՝ Դժողքեն իսկ պղծված,
Մարիամ՝ պղծված Երկինքեն։

Ես կտեսնեմ ձեզմե մին կեցած ահա հորին քով։
Սրտաճմլիկ փորին վրա կիներ ծածուկ կժպտին։
Իրմե հեռու կխուսեն կույսերն անբիծ՝ զինք թողլով
Իր դույլին հետ՝ առանձին։

Ահա ուրիշ մը լքված՝ խավարներուն մեջ հյուղին...
Կհանդերձե նորածինն իր վարսերով տխրաշուք.
Քնքույշ բերնին կճմլե ծիծերն, ուրկե կծորին
Կաթերու տեղ՝ արտառուք։

Խարտիշուհի մ'հերատե՜ւկն ահա կըլլա փողոցին
Եվ իր սերը կդնե հացի մ'համար գրավի։
Ու օր մ'ալ, երբ ճաբահատ՝ դուռը զարնե բոզնոցին,
Դժո՜խքն իրեն կբացվի։

Եվ դուք, ծեփած սնգույրով բոլոր ամոթն այտերնուդ,
Ահա կանցնիք բյուրավոր տուփանքներուն ընդմեջեն.
Ա՛լ միսերնիդ կլկտան, բաց ի ձերին մայրագութ
Նվիրագործված ըստներեն։

Ես կարտասվեմ ձեր վրա, ո՛վ տաբաբախտ իմ քույրեր.
Ես ձեր այպանքը կուլամ, աչքերս այպեն փակելով.—
Գինետան հույր տակատին կատարն եք դուք պսակեր
Ձեր կուսության պսակով։

Ձազրաթորմի ձեր մազերն հոգվույս վրա կսողան,
Շնչելով քեն մ'արյունիս, օձերու պես թունավոր.—
Եվ ես քենո՜վ կանիծեմ դարուս կավատ Մարդկության
Ոսկի Հորթերը բոլոր։

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Արեգակին մեջ ամռան, որուն բոցով կմրկին
Արծաթացոլ գմբեթներն ու տանիքները Քաղքին,
Կցցվի բա՜րձր կատարը գործատան մշտատոռ։
Մուխը բարդ բարդ կպոռթկա բուխերիկեն լայնորկոր՝
Ճակատն երկնի ծեփելով կարծես կուպրով թանձրամած։
Կսողոսկին շոգիներ պատերուն շուրջը քրտնած.

Ու կմոնչե գործատունն ընդերքներեն բոցավետ։
Մենք, ո՜վ Ընկեր ջահակիր, այնտե՛ղ մտնենք քեզի հետ,
Մենք, սերմանող մրրկի, տառապանքի հնձողներ։
Օ՜, ի՜նչ ժխոր, ի՜նչ պայթում. ալիքն օդի ջերմաջեր
Մարմինս ամբողջ ողողեց ծծումբի պես հոսանուտ։
Ի՜նչ թավալում ահավոր զանգվածներու մառախլուտ...
Հազարավոր բանվորներ մկանունքով կստեղծեն՝
Ողջագուրված՝ պողպատին բիրտ ուժին հետ համորեն.
Կծառանան բոցին հետ ու մոխիրին հետ կիյնան
Ու կպրկեն, կկրծեն ու կկոփեն հաղթական,
Մինչև որ նյութն ապստամբ գեղ ու արժեք կստանա,
Հոն բուրդն ըլլա՝ լուսակիզ, քրտինքն ըլլա՝ շափյուղա։
Եվ կմոնչե Աշխատանքն, Աշխատանքն հոն կստեղծե
Իբրև վիշապ՝ բռնված օձագալար երկունքե։
Փողրակներուն ընդմեջեն, մինչև չորս ծագն Աշխարհին,
Կհոսին միշտ ծուփ առ ծուփ տաք ալիքներն ոսկիին։
Մեքենաներն հոս կիշխե՛ն ըղեղին վրա մարդերուն,
Իբրև հրեշներ վիթխարի, որջի մը մեջ մշտարթուն։
Հաստ գլաններ զուգարշավ, գլուխներով ահագին,
Մինչև ձեղուն խորդալով կծառանան, կընկղմին
Հետո իրենց կլանող անդունդին մեջ մթապատ։
Դատարկին մեջ սուլելով կթավալին անընդհատ
Հսկայածիր անիվներ, ու ակռանին իրարու
Լինդերու մեջ մխրճած՝ կոռնան նման շուներու։
Փոկերը պիրկ կձգվին ճախարակե ճախարակ,
Ու կհոսին խժալուր՝ ջրվեժներու պես արագ՝
Լիսեռներու գոգավոր շրջանակին ընդմեջեն.
Մեքենական կազմածքին անոնք ջիղերն են հրեղեն,
Որոնցմե մին թե բեկտի՝ աշխարհներն այդ ներդաշնակ
Կջախջախեն մեկզմեկ, աստղափշուր, եղերգակ,
Գուժելով մահն Ոսկիին և փրկությունը Ուժին։
Կարկահներու անհամար կկոցներուն մոլեգին
Մեջեն կանցնին պատառները բուրդերուն մեծաշահ.—
Գեղմը փափուկ, ձյունեղեն, ատամներով պողպատյա
Կհոշոտվի գեշագեշ՝ անբծության նմանակ.
Եվ ծվենները թռչուն թիթեռներու պես ճերմակ՝
Գլաններու կատարին, պատերուն վրա կթառին,

Եվ կամ կիշնան լույսի պես բանվորներու գլուխին։
Թելերն հետո նրբոլոր, առէջներուն ընդմեջեն,
Ճաճանչի նման հապշտապ կխուսափին ուղխորեն
Եվ շար ի շար, լուսաբեկ, բյուրապատիկ թելերով,
Կջրվեժվին ճախրին վրա ճախրակներուն մշտհոլով,
Որոնք արբշիռ կդառնան ու կփաթթե՜ն, կփաթթե՜ն
Ջանոնք իրենց հաստաբեստ իրաններուն վրա շրջկեն։
Մեկ ծայրեն մյուսը կեռա գործատունն այս հաղթակերտ,
Մեկ ծայրեն մյուսը կոռնան մեքենաները ժմերտ
Իրարու մեջ թավալող և իրարմե արտալած
Աշխարհներու հանգունակ, անհունին մեջ խենթացած։
Կզեռա վարը կաթսան գոլորշիով առլցուն։
Ընդհատ ընդհատ պուղելով մեծ կափարիչն։ Որմերուն
Աղյուսներն հար արյուններ կքրտնին շոգիեն.
Ձեղունն ի վար կկաթին արտասուքներ օդեղեն։
Կյանքը այստեղ կստեղծե խավարին մեջ մեռնելով...
Վա՜ղը, հնոցն անդադար դեռ կկատղի բոցերով,
Ոսկի՜, ոսկի՜ կլափե, դուրս կփսխե միշտ մոխիր
Եվ ծուխին հետ միասին տարածելով լույս մը հիր՝
Կարծես արյուն կծեփե մեքենաներն ու մարդեր։
Այս գեհե՜ն մ'է, գեհե՜ն մ'է, ուր կհուսան, ո՜վ Ընկեր,
Սա բանակները կմախք, սա բանվորները ոսին
Եվ միշտ ի զուր կխնդրեն ազատությունը օդին,
Որուն մեջ խլուրդն իսկ լույսով և բուրումով կարբենա.
Ի զո՜ւր անոնք կերազեն հողին համբույրը հսկա՝
Զոր լիաբուռ սերմանողն անմահության է հնձող.
Ի զո՜ւր կուզեն, ծիտին պես, լոգանքն երկնի լուսաշող.—
Աչքերն անոնց կկուրնան արեգակի կարոտեն։
Միշտ կա երկաթն իրենց շուրջ, երկաթի ժխորն համորեն։
Մեքենա՜ն է իրենց տերն, իրենց օրենքը անեղծ,
Որ կմոնչե անդադրում հոգիներուն մեջ տխեղծ,
Որուն անոնք կաղերսե՜ն, կծառայե՜ն, կհուսա՜ն,
Եվ փոշիին կրմպեն ուղխն՝ աղբյուրին տեղ ոռնական։
Հնոցին բոց երախեն, ժանիքներեն ճախրակին
Որպեսզի հացը կորզեն՝ տվեր են կյանք գարնային։—
Պատերն ի վեր կզգայուեն անմարսելի արյուններ.
Եվ իրար մեջ թավալող անվակներն այս գահավեժ

Կհափշտակեն իրարու լինդե մխեր գեշագեշ։
Ես կտեսնեմ այս պահուս, որ աղմուկն այս խելահեղ,
Մշտաթավալ, շոգեմուղ մեքենաները ժանեղ
Դահիճի պես կարմի՛ր են և կպոռթկան ձեղունին
Ջիրենք ճնշող մեծ Եղեռն, անպատմելի Եղեռն հին՝
Որ կսողա կռանակուռ իրենց փորին մեջ անկուշտ։
Երեկ, Ընկե՛ր, սրատամ սա ճախարակն արյունռուշտ
Կատաղորեն հափափեց, փշրեց ոսկոր առ ոսկոր,
Աչքերնին լի գարունով զույգ մը կտրիճ գործավոր։

Ու դեռ կհոսին ծուփ առ ծուփ մինչև չորս ծագն Աշխարհին,
Փողրակներուն ընդմեջեն տաք ալիքներն Ոսկիին։—

ԳԻՐՔԵՐՈՒՆ ՄԵՋ

Խոժո՛ռ գիրքեր, մեծ գիրքեր,
Ահա ճակատս այսօր ձեր էջերեն
Վեր կառնեմ, դեպ ի արևն
Ու կանիծեմ բաբունորեն բոլորիդ...
Բայց երկնային շողն ինչո՞ւ
Հանկարծակի աչքերուս մեջ կսառի։
Եվ քայլերս այս, որ գիտության կրանիտե
Ապառաժեն վերամբառնալ իշխեցին,
Մարգերու վրա ինչո՞ւ համար կդողան։
Ո՛վ խաբեբա գիրքե՛ր, գիրքե՛ր մահաբույր,
Ես կտեսնեմ, որ ինձի
Ոչի՛նչ տվիք, առիք ամե՛ն բան ինձմե,
Առիք գարունս և գարունն իմ հասակիս,
Առիք վարդերը ճակտիս՝
Ձեր էջերուն մեջ դալկորեն թափթփած
Եվ ջնջեցիք Աստուծո, որուն հավատալն
Եթե իրավ պատրանք է,

Սակայն ո՛չ կյանքն, այլ Մահվան
Ճշմարտությունն է պարտվողը միայն,
Այսօր ահա, գրկած նոճի մը տրտում,
Գերեզմա՛նն եմ իմ սրտիս,
Որն իր թույնով թունավորված զերթ կարիճ,
Այրեցավ իր իսկ կրակեն։
Հանդեսներու խնծիղներուն դեմ փակված
Պատուհանես չանցա՛վ զեփյուռն Ապրիլին։
Արշալույսներն երգեցին
Եվ սրսկեցին մարգրիտներ.
Հարսնևորները, թմբուկով ջահակիր,
Դնելով պսակ մը շեմիս,
Տանս առջևեն կաքավեցին ու անցան։
Դուռս փա՛կ էր, մնաց փա՛կ,
Դամբարանի մը նման,
Ուր հեգ մեռելը պառկած
Լռության մեջ կծյուրի։
Ես ծյուրեցա... ո՞վ խոլություն մարդկային,
Որ մարմինիս կաթիլներովը լեցնեմ
Հոգվույս բաժակը լուսեղ։
Եվ այսօր, որ ավանդական ծամուն հետ
Եկավ Աղջիկն ըսպասված
Մռիլ ուսես և գիրքիս վրա ինձ ժպտիլ,
Շրթներուս վրա մեռա՛ծ է
Վաղանցավոր կյանքիս համբույրը արդեն,
Համբույրն, որ հեշտ նախերգն է
Իմաստնագույն կյանքերուն.
Եվ վերցնելու համար, վայրկյա՛ն մը գոնե,
Ձեռքն իր քնքույշ, բայց ծաներացած՝ գարունով,
Իմ ձեռքս է տկա՛ր, դողդոջո՛ւն...
Եվ— ո՛վ վիճակ ահռելի—
Սիրտս ծովուն ափին լքված խեփորն է,
Որուն մեջի կենդանին
Արդեն մեռա՛ծ է ջատոնց։

ԴԱԴԱՐ

Միջօրեի դադարն է գեհենամոունչ գործատան.—
Ինչպես վիշապ մը թմրած՝ կնիրհե հնոցը տիտան,
Բուխերիկին կլափին մեջ պահ մը ծուխն է խեղդվեր.
Ներսը գլանները արշավ և անիվներն ընդհոլով
Հանկարծ կեցեր են՝ իրենց ընթացքին մեջ խոկալով.
Այդ անդորրին մեջ միա՜յն կարծես կըլլան լսելի
Մեքենական ճախրանքին հոգնած հևքերն ահռելի։
Ընկե՛ր, թույլ տուր շողշողա երկաթներուն գագաթին
Բանվորներուն քիրտն առատ, զոհարն իրենց ճակատին.
Թույլ տուր, որ ներս մացառվող արևուն մեջ, թոչըտուն,
Ջմրուխտ ճանճերը բզզան՝ հեգնելով կյանքը մարդուն։
Կանգնե՛ դուն մայր դռան քով.—

Տե՛ս, պատառուն շապիկով
Անոնք փողոց կխուժեն և կընդլայնին իբրև ծով։
Ռամիկ ուժին բանա՜կն է, և հանճա՜րն է վաստակին,
Որ կրեր է դարերու կոթողն իր հաղթ քամակին։
Սա փոշիով և կուպրով ծեփված գլուխները տիտան,
Որոնց վարսերը երբեք աստղերուն մեջ չլոգցան՝
Կկարկառվին խենթի պես, դեպ ի հովերը քաղցրիկ,
Գարնան բույրով կողողեն իրենց բիբերը հրձիգ։
Մերերն ունին կռնակներ ծալված մինչև գերեզման,
Որոնց խորեն կլսվի՛ն ճարճատյուններ ողբական՝
Համրորեն վար թավալվող ողնային փուտ սյուներու։
Եվ կույսերն են դալկահար, կմախներ թոռմած վարդերու.—
Թիթեռներուն թևին վրա զո՞ւր կշողա թանկ փոշին,—
Հնոցին մոխի՜ռն է ցանվեր իրենց երկար թարթիչին։
Ահա մայրերն աղճատված և արգանդները անբավ,
Ուր սերմի հունդն արցունքի կաթիլներու փոխվեցավ.
Ահա ծիծերը, քամված ողկույզներու հանգունակ,
Որոնցմե բյուր սերունդներ խմեցին մաղձ ու պատրանք։
Հարյուր հազա՜ր են անոնք.— բանակներ են զոհերու,
Զոր կտանին միշտ Ոսկյա Հորթին առջև մորթելու.
Ունին դաղված դաստակներ, և կռնակներ ողնտեռ.

Ծուխերուն մեջ լողացող մեծ բիբերնին աստղահեռ
Այժմ միայն թիթեղի կարձակեն փայլը աղոտ.
Իրենց սրտին ծաղիկներն են խամրած, ծղոտ առ ծղոտ։
Ճակատնե՜ր լի խորշոմով, խորշոմնե՜ր լի քրտինքով.—
Արյունոտ հաց մ'են կրեր՝ իրենց հոգին ծախելով։
Գիտեն որ այդ վաստակով պատանք մը լոկ կըստանան.
Բախտ մ'է սակայն ունենալ կուշտ փոր մը՝ օրը մահվան։
Հարյուր հազա՜ր են անոնք.— անոնք են որ կանգնեցին
Անմահությունն բուրգերուն և խորհուրդներն սփինքսին։
Կմախնին, մարմար առ մարմար, սանդուղ եղավ գահերուն,
Ուրկե Դենպետն ու Արքան ելան մինչև աստղերուն.
Մինչև այսօր հիմին տակ պալատներուն, կգըտնես
Շուշանն անոնց կրծոսկրին, անբավ սրտերն ողջակեզ.
Անոնց արյան շաղախն են պատերը մռայլ Ելտրզին.
Վատիկանի կամարներն, հողաթափերը Պապին
Անոնց լուսեղ քրտինքին մարգարիտներով են ծեփված.
Անոնց խոփին նախ հանձնեց կորդ բնությունը՝ Աստված.
Կուռքերն անո՜նք դրոշեցին, և նույն անո՜նք զոհ եղան.
Խաչն անոնցմով ճաճանչեց, բայց ուրիշներ փրկվեցան.
Հրդկեցին միշտ իրենց հաղթ ոսկորներով կարծրացած
Հաղթողներու նժույգներուն լայնշի պայտերը արծարծ։
Փեռեկտեցան պարեխներն անոնց ուժին դեմ ռամիկ
Եվ հոսեցին ոսկիի և արյունի ջերմ ալիք։
Եվ մեր դարուն Հաղթության Կամարն այսօր կհանգչի
Հարյուր հազա՜ր բանվորի ուսերուն վրա արճիճի։
Ու երբ այսօր ելլելով գործատուներն՝ կցրվին
Կորագրլուխ, մերկալանջ, անոնք նման են գերիին,
Զոր աճուրդի կհանեն տոնավաճառ օրերուն։
Նման գետին, որ ակեն դուրս ժայթքելով փրփրուն
Կբաժնվի սրբընթաց առվակներու անհամար,
Անոնք կերթան ծավալիլ գետերուն մեջ հազար.
Բյուրապատիկ գլուխներու անդրնդածին ալիքով
Քաղաքն ամբողջ կողողեն, ամեն անկյուն հորդելով։
Բոլոր քաղցա՜ծ են, քաղցա՜ծ, քոսոտած շան մը նման՝
Զոր խաշնարածը հոտեն հալածեր է անգուման։
Սակայն իրե՜նց է ինչ որ կիյնա կտուցեն վար ցինին.
Իրե՜նց է խյուսը թեփին, բայց ո՜չ նկանն ալյուրին,

Խառնապուրներն իրե՛նց են, զոր գլխահակ կլակեն
Ճակատներե վար՝ անոնց մեջ քրտինքներ հոսելեն.
Նեխած միսերն իրենց են, ու բորբոսները հացին,
Զոր կգնեն ումպ մը ջրով կրպակներեն փոշոցին.
Երշիկն իրե՛նց է, լեցված ճաբպովը ծեր ջորիի,
Հետո ծխամո՛րճը սնցած,— միակ ապո՛փն հոգիի։
Ահա՛ բոլոր հույսն անոնց, երազն անոնց փորերուն՝
Զոր կերազեն գործատան միջօրեի հեշտ ժամուն...

Ու կքալե՛ն, կքալե՛ն, փոշվով, կուզրով միշտ ծեփված,
Նեղ կուգան այդ ուղխերուն պողոտաներ լայնաբաց։
Իրենց հորձանքը կարծես խուլ զայրույթով կփորե
Դղյակներու հիմունքներն ու սալարկներն որձքարե։
Կարծես մեռե՛ր են Քաղքին մեջ մյուս կյանքերն ինքնագոհ,
Միայն Սարսափն այդ ահեղ բանակներուն՝ կուտա գրոհ.
Սիրտերն հզոր կորոփե՛ն, և միշտ կըլլան լսելի
Սովալլուկ կողերու բաբախյուններ ահռելի.
Կկճրտվին ափոանե՛ր, ու կծամվին լեզունե՛ր.—
Քաղցը ինքզինք կկրծե, գազանի պես շաղղակեր։
Ախորժակներն, ավելի գրգռված եղկ արևեն,
Կզայրագնին ու քարեն իսկ հացի հոտը կառնեն։
Դուն կլսե՞ս, ո՛վ Ընկեր, գոհներեն բյուրավոր
Մշտագալար փորերու խուլ աղաղակն ահավոր։
Բիբերն հանկարծ կընդլայնի՛ն, և ըղեղները կեռա՛ն.
Կսեղմվին բռունցքներն, ուր կձուլվի Ապագան.
Ճարճատյունին ընդմեջեն կմախներու տրտմագին
Աստվածային ոճիրներն կանչող ձայնե՛ր կլսվին։
Օ՜ այդ սիրտերը հսկա, որոնց տրոփները, նման
Փոսապեղի մը բրիչին հարվածներուն, կթնդան.
Օ՜ բազուկներն այդ բատրուկ, խարանված բորբ երկաթով,
Որոնք կարմի՛ր պիտ՝ ըլլան օր մը գանգե՛ր դարբնելով.
Օ՜ այդ քայլերն, որոնց բիրտ սանդալներուն հունչը գոռ
Փողոցներուն թե՛ երգն է, թե՛ մահաղանգն ահավոր.
Օ՜ իրաններն այդ ռամիկ, այդ մարդակներն՝ որոնք ցանգ
Աշխարհը վեր են բռներ, ու փտեր են անոր տակ...
Ատոնք բոլոր մրրի՛կ են, ատոնք բոլոր կայծա՛կ են՝
Որոնք գոռան պիտի օր մ'ու Մարդկությունը սարսեն։

Վաղն, ո՛վ Ընկեր, պիտի այս ամբարտավան Քաղքին վրա
Ճայթի Ամպրո՛պն, ու վառե հազար ջահերն իր հսկա,
Չի կտեսնե՞ս գոհերն, հույր աղիքները անոր,
Գետնահարկերը խոնավ, կոյուղիներն աղբաթոր.
Եվ կտեսնե՞ս անոնց մեջ Քաղցին ճիվաղն հոգնահեռ՝
Որ քինահույզ կսողա, կուշտին կկրե կայծակներ.
Վաղն, ո՛վ Ընկեր, ո՛վ Ընկեր, Քաղքին վրա այս գոռոզ
Պիտի Ամպրո՛պը ճայթի, վառե ջահե՛ր բաբբարոս։—

ՄԱՅԻՍ ՄԵԿ

Քնարս այսօր, կտրտելով լարերն իր,
Ձե՛զ կկանչե Արևելքեն Արևմուտք,
Ո՛վ դուք
Հացի զոհեր, որ ունիք միշտ արևու
Պասուք։

Այս առավոտ՝ գտա հասակս թաղված
Հեղեղին մեջ շուրջս ծաղկած վարդերուն...
Եվ կանգուն՝
Խմեցի ավիշն հողին, երգերը բոլոր
Բույսերուն։

Ինձի եկեք, ես կախարդն եմ Մայիսին.—
Ձեր քրտինքն ես կընեմ գոհար ցողն անգին
Վարդին.
Կհեղում ձեր ոսկորներուն մեջ ցամքած՝
Արփին։

Ինձի՛ եկեք գործատունեն, ուր երկար
Շաղվեցիք դուք մեր Աշխարհին ցեցակեր
Նո՛ր հիմեր.
Փուռեն, որ ձեր գլխուն, սրտին վրա՝ մոխիր
Է ցաներ։

Ինձի՛ եկեք նավարանեն, ուր կռեցիք
Նավեր՝ վաղվան ձեր դագաղները պողպատ։
Ելե՛ք արդ
Աղիքներեն հողին, ճահճին արգանդեն
Դա՜շտն ու ա՜րտ։

Ինձի՛, ինձի՛ եկեք այսօր բոլորնիդ.
Սիրտս ա՜յնքան բոց ունի, հոգիս այնքա՜ն լույս,
Որ ձեր խյուս
Ցեխերեն իսկ կշաղվեմ նո՜ր Մարդկություն
Եվ նո՜ր Հույս։

Հերի՛ք հյուծաք նկուղներուն մեջ խոնավ,
Եվ ունեցաք միշտ կարոտ, նման խլուրդի,
Օդի
Եվ ժանգի պես երկաթներուն փարեցաք
Նոթի՜։

Թող ձեր մուրճն ա՛լ չկայծակե սալին վրա.
Մխվա՛ծ մնան թող ատամները սղոցին՝
Հեցին.
Կոճղին խրված՝ թող խեժերեն ժանգոտի
Կացինն։

Ի՜նչ փույթ, թե որբ մնա շարժիչ մեքենան,
Եվ գործատան մեջ ճիվաղներ սողան լուռ.
Ի՜նչ փույթ ո՜ւր
Դառնա ճախրակն, ու խորտակվին լույծ փոկերն
Ընդհանուր։

Դե՛հ, քրտնաբույր ձեր շապիկներն հանեցեք.
Թող ճենճոտած ձեր գդակները նետվին
Հնոցին.
Գլուխնիդ այսօր պիտի սուզեմ արևուն
Բոցին։

Ինձի՛ եկեք, եկեք ինձի՛, Եղբայրնե՛ր,

Ձեր ամենուդ այսօր տոնն է Մայիսի,
Վասն զի
Հողն ըստեղծիչ, ձեր ըստեղծիչ արյան լոկ
Կխոսի։

Ձեփյուռն ահա՛,— ո՛վ տառապյալ հոգիներ,
Ձեր կուրծքերուն բացե՛ք վերքերն իր անգին
Խունկին.
Աղբյուրն ահա՛,— թող գլուխնիդ իր լույսին
Հակին։

Դեղձին ահա՛,— ծաղիկներն իր կանձրևե
Ձեր կոշկոճված ձեռքերուն վրա արյունոտ.
Եվ կարոտ
Կգգա մայրին, որ գրկեք զինք թևերով՝
Վիրոտ։

Ահա արևո՜ն, Արևո՜ն ահա. լոկ ձեզի՛
Այսօր կնայի, կհամբուրե միայն ձե՛ր
Ճակատներ.
Ան՝ բոլոր մյուս ճակատներուն վրա իշխող
է թքեր։

Ձե՛րն են դաշտեր, ձե՛րն է Քաղաքն, որուն լուռ
Փողոցներեն պետք է անցնի լոկ այսօր
Ձե՛ր թափոր,
Դրոշներ ծփան, ծաղկին հույսեր, և գոռա
Շեփոր։

Հանգի՜ստ երգեն թող ձեր բոլոր արծիվներ.
Հանգի՜ստ երգե քնարս, որուն, ձեզ համար,
Իբրև լար,
Ես արծիվի տվի այսօր աղիքներ,
Որ գոռար։

Թող ձեր շեմերը ողողվին վարդերով։

Երբ գոտ լուսինն ու իր բիբերը բոցե
Հածե՝
Բալասանո՞վ թող այս գիշեր ձեր դուռներն
Օծե...

ՀՐԱՇՔԻՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Աղջի՛կս, եկո՛ւր քեզ տանիմ
Բլուրին գոտի եղող ճերմակ ուղիեն
Վճիտ Աղբյուրն Հրաշքին։
Հիվանդներուն թափորն անոր կդիմե
Արևին տակ հազալով։
Լուրթ ու կարմիր վարշամակով, խոռներամ,
Կերթան դանդաղ.— կլսե՞ս ձայնն աղոթքին
Բլուրին գոտի եղող ճերմակ ուղիեն։
Ձեռքդ ինձի տուր, դո՛ւստր, աչքերդ ծածկե
Ցյունասպիտակ քողիդ տակ՝
Որ ըզգաս խոր— մինչև դպչիլը հոգվույդ—
Արեգակին հոտն առողջ,
Որ շուրջը մեր կբարձրանա ավասիկ
Անդորրավետ այգիեն։
Տերևներուն տակ լայնշի
Կկարմրին ողկույզներն ո՞րքան ատոք.
Որթատունկեն կորակոր
Կարծես գինին— որ աշնան
Ծունկերուդ ուժ պիտի տա—
Հողին վրա պիտի թափի անհամբեր։
Քալե՛, աղջի՛կս, քալե՛,
Մո՛տ է Աղբյուրն Հրաշքին։
Վատախտարակ ամբոխը զայն չծածկած,
Աղջի՛կս, տե՛ս, ի՞նչպես հզոր կբխի
Ժայռին ծոցեն գուռին մեջ։

Սարավանդեն թխապտուղ մորենին
Անոր վրա է կախվեր։
Ո՞րքան մարգրիտ ակին մեջ.
Եվ գուռին մեջ ո՞րքան լույս։
Հովիտին խորը թաքնված
Ան ադամանդ ու երգ է,
Երգ մըն է ան՝ մենության մեջ գլգլուն,
Որուն ի լուր մայր բնությունը շուրջի
Գիշերվան մեջ կավշավետի, կմեղմե
Ցլարձակման աշխատանքն իր ծանրակիր։
Հեռուներե՞ն ու խորերե՞ն ան կուգա.—
Կանցնի թաքուն անձավներե, ուր առկախ
Շթաքարեր կան լազվարթ
Նայադներու աչքերուն պես արտասվող,
Ուր կա սառույց բյուրեղյա՝
Որուն հազիվ կհասնին
Մայրիներուն վիմապատառ արմատներն.
Հոն կան բրածո ադամանդյա խլուրդներ,
Մարգարտացած հին օձեր,
Հոն կան հուրեր, լույծ ոսկիի լճակներ,
Լայնածավալ անտառներ՝
Իրենց մեջի մրրիկներով ածխացած...
Հեռուներե՞ն ու խորերե՞ն ան կուգա։
Եվ կպատմեն, թե առած է ա՛յն օրեն
Պայծառությունն իր լուսեղ՝
Երբ սրբուհի մը մոտակա գյուղերեն
Եկավ անոր մեջ լվալ
Համեստ աչքերն այր մարդե բնա՛վ չհամբուրված։
Ո՞հ, ջուրն է սուրբ, աղջի՛կս, ջուրը դեղ է՝
Գերեզմանի հոտ բուրող
Ամեն տեսակ ախտերու։
Հիվանդներուն հոտն ահա
Ի՞նչպես՝ անոր լույսին վրա կհակի։
Կրմպե՞ն, կրմպե՞ն և՛ ջուրին մեջ կհազան.
Կրմպե՞ն, կրմպե՞ն և ջուրին մեջ կտքան։
Կինե՞ր են, տե՛ս, որ բնավ
Վարդ շրթունքներ և վարդ այտեր չունեցան.

Ծխախոտի արտերուն մեջ թունաբեր՝
Ծառին բունին վրա բուսնող
Սունկերուն պես դեղնեցան։
Իրենց արգանդը երբեք
Բեղմնավորել չզորեց սերմն առնական։
Կըմպե՜ն, կըմպե՜ն և կկապեն մաքրենի
Մորենիին ճյուղերուն
Հարսանեկան նուրբ նարոտնին իբր նվեր,
Ու ավասիկ պտուկներն իրենց ծիծերուն
Անգամ մըն ալ կթաթախեն Աղբյուրին
Զովության մեջ ու կըմպե՜ն...

Տղաքներ են, պատանիներ ջլախտավոր,
Գործատունի մեջ ծնած,
Որոնց աչքին մեջ խուժեց
Արյուն մ'հիվանդ ու տեռատես, կամ որոնց
Թևն ու սրունքը, մեքենան հաստաբեստ
Իբրև վիշապ մ'ամեհի՝
Խլեց, խառեց, կուռ ժանիքովը կասկեց.
Կուգան ահա նվիրական ջուրին մեջ
Լվալ իրենց Աշխատանքի վերքերուն
Բերանն հրաբորբ և բիծերն
Իրենց երկար թարթիչին։
Կույսեր են, տե՜ս, ժանեկազարդ քույրեր են,
Որ բարձին վրա հալեցան
Փրփուրներու պես անգայտ,
Որոնց թոքին կեսն, ավա՜ղ,
Դատարկեց որդը սիրո
Եվ արդեն իսկ պտտցուց
Սրտերնուն վրա իր սողոսկյունը ցրտին։
Ահա լայնշի քողերուն տակ կհակին
Աղբյուրին վրա, կխմեն փա՜կ աչքերով.
Ավերն իրենց դեմքերուն
Չտեսնելու համար խորունկը ջուրին՝
Կխմեն փա՜կ աչքերով։
Եվ կզոդեն մազերնեն փունջ մ'օծանուտ
Մորենիին՝ արդեն նվերով բեռնավոր,

Ու կդառնան մրմունջներով աղոթքի
Բլուրին գոտի եղող ճերմակ ուղիեն։

Դո՜ւստր, ահա մինակ ենք.
Հավատքը թող տաք անձրևի մը նման
Մեր սրտերուն մեջ ցողի։
Եկո՜ւր, եկո՜ւր, ո՜վ իմին Սերս անուշիկ,
Զանակացող ավազուտին վրա նուրբ
Ծալլե ծունկերդ դողդոջ
Եվ Աղբյուրին վրա ծռե։
Ահա ես քողդ ե՛տ առի.— որքան լույս
Ճառագայթեց դեմքիդ վրային՝ ակին մեջ.
Կարծես բերնին մեջ Աղբյուրին՝ երկինքեն
Աստղ մ'ինկեր կցոլա։
Ըմպե՛, աղջի՛կս, ըմպե՛...
Եվ թող կուրծքիդ տակ մեռնի
Եղեռնավոր սերն այն հպարտ պարմանին՝
Որ քեզ տվավ իր մատանին, սիրտը՝ ոչ։
Մի՛, մի՛ հազար, ըմպե՛, ըմպե՛, աղջի՛կս, ըմպե՛։
Այս ջուրը ջինջ Աստվածամոր արտասրով
է քաղցրացած,— թախիծդ ընդհուպ կբուժե.
Նորեն այտերդ գինիի մեջ թաթախված
Շուշանի պես՝ պիտ՝ բուրեն
Գեղ և առույգ թարմություն.
Եվ երբ քալես, պիտի սրսփա միսդ հույր
Բյուր ձևերով ներդաշնակ։

Ըմպե՛, աղջի՛կս, ըմպե՛.
Եվ Աղբյուրին ձոնելու
Նվերդ ահա՛, կտրոփի ափիս մեջ.—
Տատրա՜կն է այս Աստղիկին,
Վարդ կտուցով, փետուրներով ձյունաթույր,
Տատրա՜կն, որ միշտ թևածեց
Շուրջը գլխիդ. ըստինքներուդ վրա թառած՝
Խմեց ջրիկն իր անհագ
Սրտիդ ակեն վիրավոր։
Այս՝ քու հիվանդ սիրույդ պատկերը,— մորթե՛,

Գուռին քարին վրա մորթե՛։
Հերիք ծոցիդ մեջ գգվես
Գլուխը ժիր և մագիլներն իր խոցող։
Հերի՛ք լուսեղ ափիդ մեջ
Կերցնես կուտն իր անգին.
Աստղիկի այդ տատրակը վարդ կտուցով,
Գուռին մամռոտ քարին վրա,
Մորթե՛, աղջի՛կս, մորթե՛։

ԼՔՈՒՄ

Կորիցեն օրն՝ յորում ես ծնայ։
Հովբ.

Իրիկուն է։— Մեր տան դռան առջևի
Պարտեզին մեջ բարտիներուն ըստվերներն
Անհունորեն կերկարին։
Իրիկուն է։— Այնտեղ մինակ և տրտում,
Ջրհորին եզրն արմկած՝
Վար կնայիմ, կնայիմ խորն և կուլամ։
Ներսը, տան մեջ, հանդարտավետ երգելով՝
Հանիիս հետ մայրս խաղող կհնձանե,
Ու եղբայրներս, իր չորս դին,
Ողկույզներուն բույրեն արբշիռ՝ կկայտռեն...
Ո՛չ ոք, ո՛չ ոք գիտե վիշտն,
Որ թոքերուս մեջ, զերթ խաշխաշ թունաբեր,
Արագորեն կուռճանա.
Ո՛չ ոք գիտե, թե ի՞նչ կերպ
Հուսահատություն՝ օրե օր զիս մահվան հետ
Կընտելացնե, թե կերթամ ինչ ճամփայով
Կյանքիս մոխիրն ես իմ ափին մեջ կշռել.—
Մահկանացու նայվածքներու վարագույր
Պիտի ըլլա սարդի ոստայնը, զոր ես

Լությամբս հոգվույս ավերին վրա կհյուսեմ։
Դո՛ւն գիտես լոկ ճակատագիրս ահավոր,
Ո՛վ Լուսնկա ուրվադեմ,
Որ հորին մեջ տրտմաթախիծ կժպտիս
Եվ զիս քեզի՛ կկանչես։
Դո՛ւն գիտես լոկ, թե ի՞նչ հողով թունավոր
Թրծըված է բաժակն այն,
Որով կյանքս իմ խմելու եմ սահմանված.
Ու կխոկաս բախտիս վրա, կգթաս.
Յուրաքանչյուր շիթն արցունքիս՝ որ կիյնա
Խորության մեջ ջրհորին՝
Կայլայլե դեմքդ ու հառաչել կուտա քեզ։

Կանո՞ւխ է դեռ,— իմ ձեռքերս իմ արյան մեջ
Թաթխելու դեռ կանուխ է։
Երբ շիրմաբույր իմ գոյությանս կարոտ
Սրտերուն մեջ, սրտերուն հետ նախ մեռնիմ,
Եվ հանձնեմ քնարս աստվածներուն ոլիմպյան,
Որ կդարձնե դեռ հաճո
Իմ կյանքս ուրիշ արեգնամոլ կյանքերու.
Երբ հույսի Ուղտն, ա՛լ խոնջ, ծալե ծունկերն իր
Անապատին մեջ օրերուս անծաղիկ,
Այն ժամանակ, մտերի՛մ հոր,
Ամեն անոնք, որ ինձ դափնի կքաղեն,
Պետք է դառնան, թող դառնան,
Շուրջն եզերքիդ մեռելապսակս հյուսելու,
Քանզի այն օրն, անիծելով հայրական
Համբույրը կույր՝ որ եղավ
Իմ սև սերմիս առաջնորդ,
Դարձյալ քեզի՞ պիտի գամ,
Քու երազկոտ, նիրվանական ջուրերո՞ւդ,
Ուր ճակատեն կսրբվի՝ արևուն
Խարանը պիղծ, կլվացվի ամեն տարը,
Ու ամեն հոդ կհաղթվի, կթողու
Հոգին ազատ, հոգին մաքուր, մտնելու
Գիրկն Հանգիստին։— Դարձյալ քեզի՞ պիտի գամ,
Այսպես խաղաղ իրիկուն մ'երբ տնակին մեջ

Մայրս կերգե, ըզբաղած։
Մահվան սաստիկ ծարավեն՝
Զդնելով ուշ եզերքիդ բաղեղին,
Որ գթութեամբ պիտի կառչի քղանցքիս,
Պիտի նետեմ մարմինս այս խոնջ, կարևեր,
Խորհուրդիդ մեջ... իմ հետին ճիչս օրհասի՝
Խորութեան մեջ դարձդարձիկ՝
Պիտի գանգյուն տա քարերուդ միջև թուխ,
Որուն ի լուր՝ մերձակա
Դոնեն մայրս իմ լեղապատառ պիտ՝ վազե.
Սակայն զարթնուն պիտի քնացող ալիքներդ
Ու զիս ընդհուպ ընկլուզեն.
Հետո իրենց սովորական պշնումով,
Աղիտավոր գահավիժման ամեն հետք
Պիտի ջնջեն։ Լռութիւնն՝ իր պատռված
Պատանքը վրաս պիտի հյուսե վերստին
Եվ Լուսնկան (որ պիտ՝ փշրի անկումես
Մնունդ տալով հազարավոր աստղերու),
Հետո դարձյալ, խաղաղիկ,
Պիտի առնե ձեն իր նախկին, պիտ՝ ըլլա
Ջուրերուդ վրա՝ իմ անձնասպան հոգիես
Բողբոջած մեծ արյունլվա նունուֆար
Մ՚որուն արմատն ոչ ոք գիտե թե ուր է։

ՍԻՐՏՍ Է ՀՈԳՆԱԾ...

Սիրտս է հոգնած, վիրավո՜ր.
Ո՛չ մեկ գարնան ծաղիկներուն կսպասե,
Կին մը ապուշ մոլուցքով
Ջայն բզկտեց. արդ տասը լույս մատերեն
Արյուններս են, որ, հատերու պես նուռի,
Կաթիլ-կաթիլ կծորին...

Սիրտս է հոգնա՜ծ,
Ու սերս իր մեջ վիրավոր։

Քնարս է տրտում, փշրվա՜ծ.
Կսպասե ոչ մեկ տոնական գինիի.
Կին մ՚անգիտակ ոճիրով
Անոր լարերն աղիքներուս պես փետտեց
Ու տոսախե պորտին մեջ
Կթեց թույներն իր ծիծերուն ու լեզվին...
Քնարս է տրտո՜ւմ,
Ու երգս իր մեջ վիրավոր։

ՎԱՐՈՒԺՆԱԿԻՍ

Աղվո՜ր, աղվո՜ր, աղվո՜ր վարդն իմ Գարունիս՝
Որ սրտիս վրա բացվեցար,
Եվ քեզի հետ բացիր հոգիս վշտահեղձ
Նոր երազի մը պայծառ։

Հին օրորանն, որ, թաղարի պես լքված,
Կըլլար խշտյակը սարդին,
Կենդանացա՜վ ճովողյունով, բույնի պես
Պաճուճվեցավ վերստին։

Արև մը նոր, շողերուն հետ աչքերուդ,
Շեմիս վրա ցաթեցավ.
Եվ վանդակին մեջ կաքավս իմ վիրավոր
Կարկաչեց երգ մը անձկավ։

Դուն սենյակե սենյակ թռար դեղևուն
Բույնեն ինկած ծիտի պես.
Ջայնեդ դյութված՝ այցելեցին տնակիս
Սերոբեներ լուսագես։

Աղվո՜ր, աղվո՜ր, աղվո՜ր վարդն իմ Գարունիս,
Եկուր նստե՛ ծունկերուս.
Թող լուսնակի պես՝ մռայլ ծոցս ողողեն
Ոսկի վարսերդ սնդուս։

Շղթայե վիզս այդ թևերովդ քնքույշ
Նման ծաղկե մանյակի.
Ժպտե՛ ինձի, որ ցուրտ անդունդը սրտիս
Արշալույսով բռնկի։

Խոսե՛ ինձի, անծանոթ խոսքը, զոր դուն
Երկինքեն հետդ բերիր,—
Կբանա շողը՝ վարդն, իսկ շուրթը մանկան՝
Աստուծո մատը կարմիր։

Նայե՛ ինձի, լուսնակն ինչպես կնայի
Դամբանին խորը խավար.—
Սերս մեռած՝ պիտի առնե հարություն
Ու պիտ՝ ապրի քեզ համար։

Քեզի համար, որուն միսն է գոյացած
Շուշաններու թերթերեն,
Միռոնաբույր շապիկն հյուսված է թևով
Թիթեռներու նկարեն։

Քեզի՜ համար, ո՜վ իմ քերթվածս անմահ՝
Զոր արյունովս հղացա,
Զոր երգեցի, հպելով սրտիս լարերուն
Լարն ամենեն դյուրազգա։

Քու ձե՜ռքդ լոկ դեռ կբռնե զիս կանգուն
Ավազներուն վրա փառքիս.
Եվ մազիդ մեկ թելը բավ է կապելու
Տիեզերքին հետ՝ հոգիս։

Վարուժնա՜կդ իմ, իմ փափկասո՜ն Դիցուհիս,
Ո՜վ քնարե դու հոգյակ,

Թող որ արցունքս, որ այտերուդ վրա կիյնա,
Ըլլա ծիծաղ կամ սուտակ։

Բիբերդ թող սրսկեն աստղե՛րն երկնքին
Իմ խորշոմած ճակատիս,
Որ իր վրա, թագի պես, բա՛ռներ բռնեց
Խոր սպիները սրտիս։

Չի ես անդո՜ւնդն եմ՝ որ կըլլա երջանիկ
Փոսուռայի մը լույսով.
Անապա՜տն եմ, որ երկինքին կժպտի
Իր ծլարձակ մե՜կ բույսով։

ԱՆԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Պիտի մեկնիս։— Սև պարեգոտդ ես հագած.
Ներքև քու այդ բաղեղնազարդ փեղույրին՝
Դուն կթվիս զոհ մը ինձի՝ բարձրացած
Մարմարակերտ բագինին։

Զո՜ւր հուսացի օծումն հոգվույդ սիրահալ.—
Դուն փափկությունը չունեցար կիներուն.
Մատերդ հինա չներկեցիր, և ոչ ալ
Հավերուն կուտ տվիր դուն։

Միշտ սերտեցիր Մարգարեներն ահվիրա
Քու կուսական գիշերներուդ մեջ արդար.
Եվ Բրյուտոմի եղեռնաբույր գանգին վրա
Գարուններով թուխս նստար։

Դուն կկեցիր դավեր, և ռումբ շաղվեցիր.
Գաղափարի հուրե՛րն աչքեդ բխեցան.
Սև գանգուրներդ, ուսերուդ վրա ցանուցիր,
Եղան դրոշակը մահվան։

Ռունգերդ արդ կբաբախեն բոցանուտ
Հորիզոնին դեպ ի հովերը անհուն.
Կը փրփրի մարմինդ մեջ կենեղուտ
Հրդեհն հզոր գահերուն։

Բո՞ց կտանիս պալատներուն, թե ժանտախտ...
Տրարվեր են շանթեր սրտիդ մեջ խորով.
Օրենքներուն, թագերուն վրա ձեռքդ է լա՛խտ,
Գիրգ ձեռքդ՝ լի վարդերով։

Հակառակ իմ տարփանքներուս՝ կերթաս դու։
Զո՞ւր տեղ ըզքեզ խնդրեցի հարսն իմ հյուղին.—
Սիրտդ է պտուղ մը նոնագեղ՝ որ կհեղու
Թո՞ւյն՝ ափին մեջ բացողին։

Գնա՛,— և ես թող միամիտ հավատամ
Թե պիտ՝ դնեմ օր մը գլուխդ պսակներ,
Եվ ռումբը սա՝ զոր հիշատակ քեզ կուտամ՝
Օր մը Աշխա՛րհն է ջահեր։

ՄԱՏՅԱՆՆ ԱՀԱ...

Բարեկամիս՝ Հովհ. Պալյանին

Մատյանն ահա, զոր խոստացա... Երբ գտնես
Հոն դարերու կյանքին Երազն անհատակ,
Եվ Բագոսի քրմուհիներ վարդերես,
Որ կպարեն բլուրին վրա, լուսնին տակ։

Եվ աստվածներ՝ որ կուզեն սիրտն Հոմերին
Դեռ ողջակեզ կամ Մեսալին մ'հրաչյա,
Որ պատանքի տեղ կսփռե ծիրանին
Սերեն մեռած ասպետներուն մարմնին վրա,

Երբ հոն գտնես դուն Պոմպեի գիշերներ,
Նո՛ւռն՝ հրաբուխին բարանին վրա հասունցած,
Հետո այս Դարն՝ Հիսուսի պես կարեվեր՝
Արշալույսի մը երկունքեն բռնված։

Երբ հոն գտնես սրտեր ճրագի պես մարող,
Մաքառումներն երկաթներուն ու մարդուն,
Ցեխեն կանգնող Ոճիրը խեթ, անսքող,
Որ կխմե արյունն անմեղ վարդերուն,

Ո՛վ բարեկամ, խորհե, թե Երգս է պատմեր
Ցավն հաճույքին և հաճույքները ցավին.—
Սիրտն ըսկիհ մ'է, ուր երբ լեցվին գինիներ,
Աստվածներու սուրբ արյունին կփոխվին.

Խորհե, թե սանձն արևաբիբ Բեգասիս
Ոչ ոք կրցավ իր ափին մեջ ամփոփել.
Ագռավներու կոնչյունները մախիզ
Խրտչեցնել չկրցան վազքն անարգել.

Խորհե, թե միշտ քննադատն է միաչյա,
Եվ ներքինի՝ բարոյագետը խոհեմ.—
Տառապած Սիրտն ո՞վ պիտի կշռել կարենա
Նժարին մեջ՝ Տիեզերքին դեմ առ դեմ։

Ա՛ն լոկ կրնա ճանչնալ Երազը սրարբած,
Ով կարբենա կյանքի դիրտովն ու խունկով,
Ա՛ն որ Մարդն է՝ լույսով, ցեխով թրծված,
Ա՛ն որ մարդն է՝ սրբագործված արցունքով։

Ո՛Վ ԴԱՐ, Ո՛Վ ԴԱՐ...

Ո՛վ Դար, ո՛վ Դար, Ապագան արփագունդի մը նման՝
Արշալուսված արգանդեդ պիտի ելլե շողարձակ։
Վերջալույսին գինիներն և անուշ կաթն աստղերուն
Հսկայական քու ծիծերդ գեղեցկորեն կուռեցնեն։

Ոճիրներու քամնելի անկողնին մեջ պառկեցար,
Թալթլեցավ մեծ Երազդ արյուններու լիճին մեջ.
Բայց վերևեղ սավառնող հյուսիսայգերը բոլոր
Կողերուդ մեջ ծորեցին արարչահյութն Աստուծո,
Եվ գաղափարն, իր թևերն արծվի պես տարածած,
Կհսկե քու երկունքիդ գալարումները հզոր։

Պիտ՝ ըլլաս ջա՛հն Հավերժին, հո՛ւյսը, Կյանքին պիտ՝ ըլլաս,
Ժամանակի պարեխին ճակատին վրա երկնամուխ
Ամպրոպաճայթ կայծակներ պիտի անունդ կռեն.
Մարգարտահեռ պիտ՝ ըլլան մագաղաթներն, որոնց մեջ
Կամքիդ հրդեհն ու մուրճիդ կայծերն պիտի ծրարվին։

. . . . . .

Ժողովուրդներն ավասիկ կխորտակեն շղթաներն
Եվ անոնցմով տերն իրենց կատաղորեն կձաղկեն։
Արևելքն իսկ կզարթնո՛ւ նման այն թարմ հարսին,
Որ վարդի պես դուրս կելլե առագաստի քողերեն.
Ավանդական քաղաքներն, անրջանքով պարսպված,
Արդ կխոռվին ծովու պես և հնոցի պես կեռան,
Ուր կհալի լուծն երկաթ, օրենքն ոսկի կձուլվի։
Մոխիրի և կապարի հրեղեն անձրև կտեղա
Իրանին վրա։ Կմեռնին կարապներն ալ Մեղկության
Իսպահանի արյունոտ վարդերուն տակ՝ գլխիկոր...
Կասասանի Սասանաց Տունն հիմունքին վրա զաղփաղփ։
Էնճումանի շեմին վրա կկոտրի թուրն արքային...

Ի՜նչ վաստ փախուստ Շահերու, Սատրապներու կոտված՝
Որոնք կերթան ծառայել Արևմուտքի թագերուն
Գոգնոցի պես առջևնին կապած իրենց ծիրանին։
Ամեհագեղ երիվարն աստեղաբիբ Զինյալին՝
Հրեղեն պայտն իր կդնե Դարեհներուն գահին վրա՝
Թողլով, որ իր հետքին վրա ծլի Հույսի վարդենին.
Եվ արյունած ժողովուրդն, հավատքով լի, կօրորե
Շիրիմին վրա Իրանին՝ Պարսկաստանի օրորան։

Հո՜ս, ուր Սուրբ կհնձեր Հայաստանեն Բյուզանդիոն,
Նո՜ր արշալույս կպոռթկա նահատակներուն շիրիմեն։
Հայը՝ լքված դարերեն, բայց Հավերժեն ընտրված,

Նո՜ր Իսրայել, մոխիրով ու կայծովն իր օջախին
Գիշերը ռումբ կշաղվե, առտուն պատրանք կզգենու՝
Եվ իր արյան օվկիանին վիհին հատակը իջած՝
Կխուզարկե իր սրտով, հանճարովն իր կգտնե
Ազատության մարգարիտն, ո՜վ Դար, թագի՛դ իսկ համար։
Աչքերը ա՛լ մարդկային խեղճին արփվույն կբացվին.—
Կրնա դահիճը ննջել, զի Մոնղոլն ա՛լ կզարթնու,
Ու եղեռնի սուսերներն այս օր ահա կշողան
Ավելի՛ բարձր ու արդար հաղթանակի մը համար։
Ըստամպոլի ուղիներն, առջի անգամ ըլլալով,
Ժողովուրդի հեղեղներ կառաջնորդեն դեպի վեհ
Նպատակի մը ազնիվ, այսօր այլևս հասկցված.
Դուրս կփսխե բռնակալն իր արյունները լակած.
Եվ Ասիո շեմն արդեն ծիրանեփայլ կկարմրի...
Մինչդեռ անդին գեղեցիկ խոյացումով կքանդեն
Գոգն ու Մագոգ իրենց հաստ, ավանդական պարիսպներն,
Եվ զմռսված կուռքերուն, կնքված հին օրենքին
Թավալման ձայնը կուգա շեփորներու երախեն.
Ասդին՝ արդեն ռուսական Մարդերուն վրա կորոտան
Հրավերները կովին և խոստումներն Երազին...
Բևեռներուն մեջ ռումբերն ամպերու պես կգոռան։
Սառնակույտերը, նման ադամանդյա ժայռերու,
Կթավալին։ Արջերն իսկ ընդվզումի շեփորեն
Սարսափահար աչքերով հյուսիսայգին կնային։
Մինչ կկանգնեն բանտերն հաղթ, անդին կիյնան պալատներ
Հավնոցներու պես անարգ՝ մրրիկներեն գերփված։
Կանցնին ռումբերն Ֆինլանտեն մինչև Կավկասը խրոխտ,
Եվ պայթումի մեջ իրենց, իրենց բոցին մեջ աղվոր,
Վարդենիի հրավառ անտառակներ կծաղկին։
Կարթննան ճիշմ հասակներն, ուժ ստեղծող կարթննա՝
Բոցն ու արյունը իրենց հեղեղին մեջ հափափիչ
Կառնեն, կգլեն, կքշեն, կընկղմեն վիհն Անցյալին
Կռարձաններն ոսկեձույլ, քրմապետներն ընչաքաղց,
Օրինագիրքն յուղոտած և գայիսոնը ցեցոտ։
Կանցնի՜ն, կանցնի՜ն Աստվածներն, անմահացած մարդորեն,
Պրոմեթեներ, որոնք հաղթ հասակներով արփամերձ,
Վերն, Աստուծո ոտքին տակ մանգաղն իրենց երկարած՝

Կհնձեն դաշտերն աստղածուփ, անդաստանները լուսնին
Ու երկնային կրակով երկիրը մեր կցանեն։

Ո՜վ Դար, ո՜վ Դար, Ֆերրերի արյունաթաթախ խրոխտ Ոգի...
Կըլլա Սպանիան հրաբուխ և Բորթուգալը՝ հրդեհ։
Ցուլ ժողովուրդն եղջյուրներն իբրև շանթեր կցցե
Մատրիտի մեղկ գահին դեմ, ճորտն Հռովմի Աթոռին։
Կուատալուփ կկարմրի ըմբոստներու արյունով
Եվ իր սահանքը կերգե պարեխներու մեջ,— Վրե՜ժ...
Անտալուզի աղջիկնե՛րը, շուշանով պսակված,
Խոստովանիլ չեն երթար, այլ փաղանգին մեջ ըմբոստ
Կառուգանան։ Դրոշակներն ընկերահաշտ հայրենյաց
Քամիներուն կհանձնեն մազերնուն հետ թխածուփ։
Մարդկային Միտքն Ընկերավոր կո՛ւգա բանալ վերջապես
Իմաստության ըսփինքսին ապառաժե շրթունքներն.—
Հրեշն ամենուն կխոսի, կսորվեցնե ամենուն.
Կպատռտե անխնա ճիրաններուն տակ արնոտ
Ստության Գիրքը բոլոր դասակարգյալ քուրմերուն։
Արևելքեն Արևմուտք և Հյուսիսեն մինչ Հարավ
Քաղցը կոռնա շան մը պես, քաղցն Հիսուսի պես կուլա.
Ու վերջապես միակ Զոհ ու վերջապես միակ Ույժ
Իմաստությունն ա՛լ կըլլա՝ ցարդ Տառապյալն ըլլալուն.
Ա՜ն, աշխարհի իբր առանցք, կըլլա օրենք մ'աննման,
Զոր չճանչցավ Սոկրատես, հազի՛վ Քրիստոս երազեց։
Ո՜վ Դար, ո՜վ Դար, դու Նեռի աշխարհացունց մռա՛յլ Ոգի...

Եկեղեցին կսարսի իր սեմերուն վրա կավե։
Բոլոր շղթան Իմաստակ Ուսուցումին չի՛ զորեր
Ավետարանը լծել անոր ոգվույն հետ անհաշտ։
Հովիվներուն սրտին մեջ կհայտնվին գայլերն հին,
Կնախընտրեն ա՛լ հոտերն, հոգիներն ա՛լ կսիրեն
Երթալ ազատ թափառիլ աստղերուն տակ խորհուրդին՝
Քան թե հլու մակաղիլ ճիրաններու տակ նենգող։
Լոմաներու փոխարեն՝ Պապերն ի զուր կտքնին
Բանալ դռները Դրախտին՝ բալլիքներով ժանգոտած։
Վանքերու մեջ բողությունը շվայտորեն կկտղի.
Զույգ մեղքերն այր ու կնոջ՝ կապրին միակ ցանկությամբ...

Կըլլա Հռովմ նոր Սոդոմ, Երուսաղեմ՝ նոր Գոմոր։
Աստուծո գառը ի զո՛ւր իրենց խրոխտ բագնին վրա
Անոնք կհանեն աճուրդի, շռայլորեն կբաշխեն
Արքայության հաճույքներն ու կրակները Դժոխքին.
Մենաշնորհով կրոնքներուն անոնք ի զուր կսպառնան.—
Ժողովուրդն ա՛լ կմոնչե՜ վերքին ցավեն դարավոր.
Կուզե որ Աչքն Աստուծո՝ ազատ մարդուն խիղճին մեջ
Ազատորեն ցոլանա... Սավոնառի հետ հոգին
Ահա նորեն կարբենա մենաստանի մեջ ապրող
Անկեղծներուն սրտին մեջ,— Ըմբոստությունը նո՛ւյնիսկ
Բաղեղնապատ վանքերուն կամարին տակ կփրփրի։
Ջորս ծագերու չորս գոռող Եկեղեցիքն ահավասիկ
Իրարու դեմ անգամ մ'ալ ընդդիմամարտ կփշրին։
Ո՜վ Ոռունո, այն խարույկն, ուր սուրբի պես այրեցար,
Եվ որուն կայծը— ըսե՞մ— բուրվառե մ'իսկ դրվեցավ,
Այժմ վրեժիդ ի խնդիր զայն կարծարծեն զավակներդ,
Եվ անոր մեջ կնետեն հասուններուն կեղծ ուրարն,
Աղերսարկու կոնդակներն, բոլոր թուղթերն իմաստակ,
Եվ հիշատակն արյունոտ Գալվիններու, և մատնին
Քարձ Պապերուն, որով քսան դարեր ամբողջ կնքեցին
Ճշմարտության լույս բերանն ու լույս ըղեղը մարդուն։
Պատրիարքներ գահազուրկ, Պատրիարքներ ընկեցիկ,
Որոնք եղան ներքինին Համիդներու Հարեմին,
Որոնք իրենց լանջախաչն արյուններով պճնեցին,
Կթավալին ավասիկ ճակատագրին մրրկեն,
Եվ Մարդկությունն ողջակեզ ու Մարդկությունը հերոս,
Ճակատագիրը իսկ է, արդարադատ Նեռն իսկ է՝
Զոր ինքն Աստվա՛ծ խոստացավ, զոր ինքն Աստվա՛ծ ուղարկեց։
Ո՜վ Դար, ո՜վ Դար, դե՜հ անցիր, և թող քու մեջ միշտ ապրին
Ջղաձիգ մարտ, ողջակեզ, պայքար, անկում, հաղթանակ...
Հավերժության ծոցին մեջ Սափոր մ'ես, լի արյունով
Ե՛վ ըղեղով, և՛ կամքով, և՛ զոհերու հավատքով։
Վառ հնոց մ'ես, ուրկե դուրս, ճակտին դրած Արշալույս,
Պիտի աշխարհը ելլե նորոգվա՜ծ ու գեղեցե՜կ
Եվ պիտ՝ ըլլա արժանի Արևին շուրջ դառնալուն...

Ո՜վ Դար, ո՜վ Դար հուսագեղ, դու Մարդկությա՜ն Առավոտ...

(ԿՆՈՋՍ ԱԼՊՈՄԸ)

ԴԱԼԱՐ ՃՅՈՒՂ

Կկարդայի Դանտեն մռայլ
Աստվածային Դժոխքն իջած.
Պատուհանես եկավ շողալ
Լույսն առտվան, ցողով դեռ թաց։

Հոն— արևո՜տ, արևո՜տ էջ—
Ֆրանչեսգա Տա Ռամինին
Դեռ կցանկար, արցունքին մեջ,
Տագրին համբույրն իր բերանին։

Երբ երևցա՜ր...— դրիր մոր պես
Գրքին մեջ, հո՜ն, ճյուղ մը դալար.
Ըսիր.— «Հերիք։ Իջնենք պարտեզ,
Վա՜րդ մ'է բացվեր քեզի համար։»—

ԳՈՒՇԱԿԸ

Ձեռքս բռնեց գուշակն և իր
Քարայրին քով ինձի ըսավ.
— «Ափիդ մեջ կա երեք կնճիռ,—
Երեք ճամփա առջևդ ելավ։

Մին ցամաքեն քեզ կտանի
Լուսնի լույսով մինչև անտառ՝
Ուր կպարե կույս մ'հոլանի...
Ցուպդ կոտրե՛ ու մի՛ երթար։

Մյուսը ծովեն է ակոսվեր.
Քեզ կտանի կղզին դալար՝
Ուր կվազեն ոսկի գետեր...
Ղեկդ փշրե՛ ու մի՛ երթար։

Երրորդ՝ ճամփան է երկինքին.
Պարզե՛ թռիչներդ սեփական.
Մինչև աստղերը սիրտդ այրեն՝
Շարունակե՛ դուն այդ ճամփան»։

ՀՄԱՅՔԻ ԱՂԲՅՈՒՐ

Խորհուրդներու աղբյուրին վրա,
Ուրկե կը մպեն լոկ հուրիներ,
Ջյունագանգուր պառավն ահա
Բուի աչքերն է սևեռեր։

— Ջադո՛ւ մարե, ջադո՛ւ մարե,
Ակը սարեն ի՞նչ կբերե։

— Կբերե սա խոյը, որուն
Նուսին վրա եթե հեծնես,
Քեզ կիջեցնե խորն ալքերուն,
Եվ դուն Խորհուրդը կտեսնես։

— Ջադո՛ւ մարե, ջադո՛ւ մարե,
Ջուրը ակեն ի՞նչ կբերե։

— Կբերե գորշ խոյը, որուն
Եղջյուրներուն եթե հեծնես,
Կբարձրացնե քեզ արևուն
Եվ դուն Անհունը կտեսնես։

— Ջադո՛ւ մարե, ջադո՛ւ մարե,
Ջուրն աղբյուրեն ի՞նչ կբերե։

— Կբերե, տե՛ս, խոյն ըսպիտակ,
Որուն գեղմին եթե հեծնես,
Քեզ կտանի մինչև դղյակ,
Իշխանուհին հոն կտեսնես։

— Սպիտակը կեցո՛ւր, մարե,
Ջուրն աղբյուրեն լո՛ւյս կբերե։

ՍՊԱՍՈՒՄ

Դռանս առջև կծփա
Ծովն աստղերով ցոլցոլուն.
Սյուներուն տակ մարմարյա
Կսպասեմ Նա դառնալուն։

Առագաստն իր չեկավ դեռ
Ըլլալու գեթ ինձ պատան...
Արցունքներս են, ոչ աստղեր,
Պճներ ծովուն իր ճամփան։

Ալիքներ մեղմ կաղոթեն,
Կողողև լույս մը սյուներ.—
Եկա՞վ... Օ՜, ո՛չ... իմ գավթեն
Լուսնակն իր տեղ կելլե վեր։

ԼՈԳԱՆՔԵՆ ՎԵՐՋ

Լոգանքեն վերջ՝ հետդ առանձին՝
Քալենք, քալենք ծովափին վրա,
Հուրերուն տակ արեգակին,
Մինչև որ թաց հերքդ չորնա։

Նուրբ ավազին ծոցը ջերմիկ
Թաղվին ոտքերդ հոլանի,
Ջոր հևիհև մեն մի ալիք
Գա համբուրել...ու չհասնի։

Հուսկ արբենա ծովով, երկա՜ր,
Բերանս ծով աչքերուդ վրա.
Արևուն տակ, ուսերդ ի վար,
Մինչև որ թաց հերքդ չորնա։

ԴԱՐՁ

Ես հեռավոր տնակ մ'ունիմ
Շինված լիճին ափն ամայի։
Դուռը բաց է.— հոն մտերիմ
Ճրագս է վառ ու կնայի։

Անկե մեռել մ'հանեցին դուրս.—
Աքսորեցին հոգիս անկե։
Այժմ շեմին վրա կատուս
Աղիողորմ կմլավե։

Օր մը նորեն դառնամ գուցե,
Մարա՜ծ գտնեմ ճրագս հավետ.
Դողդոջ ձեռքս դուռը գոցե,
Ու լամ լացող կատուիս հետ։

ԼՈՒՍՆԻՆ

Ճերմակ լուսին, ո՞ւր կերթաս...
— «Հյուղակներուն խավարին
Կտանիմ շողը լույսին։»
Գնա՛, լուսին, դյուր կերթաս։

Գոհար լուսին, ո՞ւր կերթաս...
— «Դույլերուն մեջ արծաթի
Կտանիմ կաթ հիվանդի։»
Գնա՛, լուսին, դյուր կերթաս։

Լռիկ լուսին, ո՞ւր կերթաս...
— «Կերթամ բերել ես քեղի
Յարիդ խոստումը կույսի։»
Լուսի՛ն, լուսի՛ն, զո՞ւր կերթաս։

ԲԱՐՏԻՆԵՐԸ

Տանս առջևի ջրհորին քով
Պապս է տնկեր զույգ մը բարտի.
Լույսն Աստղիկին դողդոջելով,
Անոնց վրա նախ կկաթի։

Այնքան մոտիկ են իրարու՝
Որ նույն սյուքով կթրթռան.
Մեկն իր երգը երբ որ թողու՝
Մյուսն իր շունչով կավարտե զայն։

Մրրիկներուն մեջ հերարձակ
Գրկված, խոր, կհեծեծեն։
Եվ կբզզան լուսնակին տակ
Փեթակներու պես լուսեղեն։

Հարսս է ու ես անոնց կոթնած,
Կնստինք հոն, ամեն գիշեր։
Տերևներն հար կերգեն հուզված
Ա՛յն՝ որ կզգանք ու չենք հիշեր։

Մազերն անոր՝ երբ մազերուս

Խառնել կուգա հանկարծ քամին՝
Ջույգ բարտիները սիրասույզ
Աստղերուն մեջ կհամբուրվի՛ն։

ԱՍՏՂԻԿԻՆ

Քու մարմարյա հպարտ վիզդ է՝ որ այսօր
Դուրս կարկառված կործանումեն դարերուն՝
Իբրև շուշան կամ նունուֆար մը աղվոր
Կիշխե բոլոր մեծ Սրտերուն վրա խոհուն։

Աչքերուդ մեջ ամբողջ լույսը կցոլա
Հելլենական մշտապայծառ երկնքին,
Ցայտեց հոգի մ՝ այդ բիբերդ մարմարյա՝
Երբոր ինկան մուրճին ներքև հանճարին։

Արձանե՛դ իսկ գորով ու կյանք կբխի՝
Կարծես ծնած ըլլայիր նոր՝ ծովեն գեջ,
Կարծես վիհին լույս կաթիլները աղի
Դեռ շողային այտերուդ զույգ փոսին մեջ։

Բայց քու թևերդ ո՞ւր մնացին, ո՛վ Աստղիկ,
Խորը ծովո՞ւն, թե տարրերուն՝ ընկղմած,
Դեռ կորոնեն սիրո մարգրիտն ըզմայլիկ՝
Ճակտին համար մեր Աշխարհին զառամած։

ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՆ

Հողակույտն էր ավերակ
Արքաներու արքային,
Որուն ոսկի գահին տակ
Արքաները կուլային։

Ան պատերազմ միշտ ըրավ՝
Որ սուրն երբեք չպազի։
Հողն արյունի էր ծարավ,
Ինքը ծարավ էր հողի։

Գերեզմանեն ծռած վար՝
Ըսի.— «Աշխարհք թող գիտնա,
Որ բանաստեղծ մ'ընկերվար
Անգութ արքան կգթա...

Ըսե՛, ի՞նչ բան դուն կուզես.—
Շիրիմ կանգնե՞մ քու վրա։»—
Ըսավ.— «Հո՞ղն առ վրայես,
Հո՞ղն առ, սիրտս թեթևնա։»

ՁՈՆ

Օր. Վ. Պ.-ին

Վարդ քաղեցիր,— սիրտ թող ըլլա
Հավատարիմ ու անձնվեր.
Կյանքիդ դժվար ճամփուն վրա
Քեզի զոհե իր արյուններ։

Աստղ ուզեցիր,— արև ըլլա
Եվ պարուրե քեզ շողերով.
Մազերուդ վրա ոսկի տեղա
Ու սրտիդ մեջ խինդ ու կորով։

Պահապան մը ուզեցիր,— ան
Գարնան պայծառ լուսնակն ըլլա,
Եվ հրեշտակին պես սիրական
Հսկե անքուն բարձիդ վրա։

Զա՜յն մ'ուզեցիր,— երգս ըլլա՝
Որ աստուծմե ինձ կհոսի.
Ան արև՛ է, սի՜րտ լուսնկա,
Չի ան երա՜զ կուտա քեզի։

12 փետրվարի, 1914

Պերա

ՄՈՒՍԱՅԻՆ

Թե ջլապինդ մշակն ի՛նչպես կփարի
Իր կոր մաճին, կպատռե լանջն հողերուն,
Եվ սահանքին տակ արփական շողերուն
Ի՛նչպես կբլլան լոկ ակոսները՝ բերրի,

Թե շիկագույն ցորյանն ի՛նչպես կալին մեջ
Կբրգանա, և աղորիք կմոնչեն.
Ի՛նչպես կհորդի քացխած խմորը տաշտեն,
Զոր հուսկ կեփեն գեղջուկ փուռին մեջ անշեջ,

Թե կսփռե Հա՜ցը, Հա՜ցը սրբազան,
Ի՛նչ բերկրանքներ, արարչական ի՛նչ կորով,
Սորվեցո՛ւր ինձ, ո՛վ հայրենի իմ Մուսան.

Սորվեցո՛ւր ինձ.— պսակե քնարս հասկերով,
Զի կալին մեջ, զով շուքին տակ ուռիին
Ահա կնստիմ, ու նվագներս կծնի՛ն։

ԱՐՏԵՐՈՒՆ ՀՐԱՎԵՐԸ

Գյուղակներեն հորիզոնները մինչև
Կտարածվի մեր մայրությունը հողի։
Գարունն եկա՛վ.— չի բավեր ձյունը թեթև
Ա՛լ ծածկելու մեր մերկությունը հղի։

Վերադարձեք մեր ծոցը, ո՛վ մշակներ,
Առավոտներն արդեն Ապրիլ կբուրեն.
Սառեն լուծված կկարկաչեն առվակներ.
Մեր տաք կողեն ծլավ նարգիսը արդեն։

Միգի եկեք.— ձեր սերմով լի բուռերուն
Մենք կսպասենք կիներու լուռ ըղձանքով.
Ճաճանչն արդեն խրվեցավ մեր սիրտերուն։

Պիտի լեցվին քրտինքներու համրանքով
Հասկերը շեկ, ու պիտի ո՞րքան բերկրինք,
Երբ առջի հեղ խոփը ճմլե մեր ըստինք։

ՄՇԱԿՆԵՐԸ

Մշակնե՛րն են իմ գյուղիս, դաշտի հզո՛ր զավակներ,
Քրտինքներով մարգարտյա բնության թա՛գն են հյուսեր։
Կբաբախե սիրտն հողին իրենց բրդոտ կուրծքին տակ,
Ու իրենց լայն երակին մեջ կհորդի արեգակ։

Երբ որ քալեն՝ մայր երկիրն իր արգանդեն կսարսռա.
Բայց չի խամրիր ծիլ մը իսկ գարշապարնուն տակ հսկա։
Գլուխն իրենց, զոր կհակեն առջևը սուրբ խորանին,
Պսակված է միշտ ոսկի փոշիներովը հարդին։

Ակոսներուն մեջ անոնք խինդ կցանեն, և Աստված
Իրենց ճակտին ակոսեն բարություններ կհնձե։
Ավիշներու հոսուն երգն անո՛նք միայն են լսած։

Եղին շողիքն ի՛նչ փույթ, թե իրենց ձեռքերը կօծե,
Եվ ախորի հոտ կուգա իրենց նախշուն լոդիկեն.—
Նախ անոնց լայն ափին մեջ կծլին սերմերն համորեն։

ՀԱՐԿԻՔ

Եղներս են խարտյաշ, լույս ճակատներով,
Ջոր պաճուճեր եմ նուախայով կապույտ։
Գարունի առտվան օդեն են գինով.—
Կնային, խաղա՛ղ, դաշտերուն անքույթ։

Ջմեռը զանոնք խարո՛վ սնուցի.—
Մեհյանին պարարտ կուռքերն են կարծես։
Իրենց սանտրված պոչը թավարծի
Կլիզե իրենց կողերն՝ օձի պես։

Կսիրեմ անոնց նյուսը բյուրածալ,
Ռանգերնին տամուկ, բիբերնին խոշոր՝
Ուր կա դաշտերուն երազն անայլայլ,

Ե՛վ ճոճքը իրենց, և՛ պոչյունն հզոր
Հորիզոններե՞ն, երբ կերթան անվերջ
Եղջյուրնին մխած Արշալույսին մեջ։

ՀԵՐԿԵՐ

Հո՛, հոո՛, հոո՛, հոո՛.— հողին տակ հընդյունն է արորին՝
Լուրթ մշուշին մեջ առտվան, կողին վրա բլուրին
Կերթան եզները հուժկու՝ զանգակներով դաշնավոր
Ու մսուրին վերջին հարդը կորոճան գլխիկոր։

Սարին ուսեն ծլլացող արեն ահա կծագի
Ու մշակին ճակտին վրա կդնե համբույրը ոսկի։
Մարդը կերթա երգելով՝ մաճն ափին մեջ պնդաջիգ,
Ու իր ճամփան կգծե իր հոգիին պես ուղիղ։

Հո՜, հոո՛, հոո՛, հոո՛.— Ակոսները կբացվին մխալով,
Եվ կդիզվին արգավանդ հողակոշտերն իրար քով։
Մեկ ծագեն մյուսն հուլորեն կսողա խուփը պողպատ,
Կհեղեղե հերկերուն մեջ իր լույսերը արծաթ։

Իր տակ ճմլված, կարեվեր, կգալարվի հույր ճեթեն։
Կահարեկին խլուրդներ իրենց խուղին մեջ մթին։
Բունծերն ահա կոռոգվին մերթ օձերու արյունով,
Զոր ըսպանած է արորն անոնց գլուխեն անցնելով։

Արևն արդեն կհոսե իր երակներն հրածորան
Ակոսներուն նորաբաց արգանդի մեջ հոտևան։
Հո՜, հոո՛, հոո՛, հոո՛.— Անդաստանն է կորդացած այս տարի,
Բայց հերկերուն շարքն արդեն անհունորեն կերկարի։

Եզները հաղթ թափ կուտան, դողացնելով մերթ քնդ մերթ՝
Սուր խթանեն՝ ըստևներն իրենց փորին լուսաշեթ։
Ի՜նչ փույթ, թե ճյղուղն արորին խուփին դեմ հանկա՛ծ կուլա,
Եվ կծորի մշակին քիրտը ամեն գուղձի վրա։

Դեռ սուրբ կոչնակը գյուղին, սարին հետև չհնչած՝
Բլուրին կողը ամբողջ պիտի ըլլա թխացած,
Եվ պիտի լայն ակոսները շար ի շար ավարտին՝
Օծված շաղովն իրիկվան, շողիքներովն հարկիքին...

Այն ատեն, երբ արտին ծայրն հասած, ճիգով մը դողդոջ,
Տղմուտ արորն հողին մեջ հանկարծ կասի,— Մշակը խանջ
Պիտի խորհի անկասկած— հանո՜ն վաղվան հունձքիդեն,
Թե կարասի՛ մ'ոսկելից կառչեր է խուփը խսկույն։

Սերմանո՜ղն է։— Հաղթահասակ կկանգնի
Մայրամուտին շողերուն մեջ ոսկեթույր։
Ոտքին առջև անդաստաններն հայրենի
Կտարածեն մերկությունին անպարույր։

Ա՛խ է ամբողջ ցորեններով աստղահատ
Խորունկ գոգնոցն։ Հերկերն հերվան՝ ծարավի՝
Կսպասեն իր լայնշի բուռին, և բուռն այդ
Արտերուն վրա՝ զերթ արշալույս կբացվի։

Մշա՛կ, ցանե՛.— Հանուն տանդ սեղանին
Թևիդ շարժումն անպարագի՛ծ թող ըլլա.
Վաղը՝ նետած ցորեններդ այդ կթափին
Օրհնության պես թոռնիկներուդ գլխուն վրա։

Մշա՛կ, ցանե՛.— Հանուն նոթի թշվառին
Թող գոգնոցեդ կես չելլե ափդ բնավ.
Աղքատ մ'այսօր ճրագին մեջ տաճարին
Վաղվան հունձքիդ համար վերջին ձեթը դրավ։

Մշա՛կ, ցանե՛.— Հանուն Տիրոջ նշխարին
Թող մատներդ հորդին սերմեր լուսեղեն.
Վաղը ամեն մեկ հասկի մեջ կաթնային
Պիտ՝ հասուննա մաս մ'Հիսուսի մարմինեն։

Ցանե՛, ցանե՛.— Նույնիսկ հեռու սահմանեն,
Աստղերու պես, ալիքներու պես ցանե՛։
Միտերն ինչ փույթ, թե հատիկներդ կավարեն.—
Տեղը Աստված պիտի մարգրիտ սերմանե։

Լեցո՛ւր ակոսն, հորդե՛ հերկերը բերրի,
Հողին ծոցն ոսկի լույսեր թող հոսին։
Օրը ահա կիրիկնանա.— կերկարի
Շուքը թևիդ հորիզոնն՝ աստղային։

ՏԱՓԱՆ

Տափա՜ն, տափնե, կոշտերն հարթե,
Թազե ցաներն հողին մեջ.
Ցորենն՝ ոսկի, սերմն՝ հակինթ է,
Երբ միանա հողին գեջ։

Տափա՜ն, թևերդ տարածե,
Գրկե արտերը հուռթի.
Հունտն այսօրվան՝ վաղը հունձ է՝
Երբ գուղձին տակ կանհետի։

Տափա՜ն, ըմբոստ խուրը փշրե,
Գոցե վերքերը խոփին.
Հերկն աննվաճ ալիք մըն է՝
Զոր կանդորրես դուն հեշտին։

Տափա՜ն, տափնե, կոշտերն հարթե,
Փակե բերանն ակոսին՝
Ուր ամեն մեկ ցորեն սաթ է.—
Թող սարյակներ չտանին։

Տափնեց տափանն, հարթեց կոշտեր,
Հղկեց անդերը անհուն...
Այժմ հողին տակ կուռին հունդեր
Ինչպես ծիծերն ուլերուն։

ԱՌԱՋԻՆ ԾԻԼԵՐ

Ձեղուն ավիշն հողերուն տակ պայթեցուց
Սերմերն։ Արտերս այս գիշեր
Կանանչցեր են լուսնկային տակ գարնան...
— Մայրի՜կ, ինձի ծիլ մը բեր,
Քրտինքիս ցողը վրան։

Կատաղորե՜ն, կատաղորե՜ն հորդեր են
Տե՛ս, ցորեններն աղածրի։
Դաշտերն հագեր են զմրուխտե պատմուճան...
— Քույրի՜կ, ծիլ մը բեր ինձի,
Եղիս շողիքը վրան։

Կիսողիսողին արտավարե արտավար
Կարծես կանաչ մոմիկներ։
Ամեն ընձյուղ մարգրիտ մ՚ունի իր բերանն...
— Հոտա՜ղ, ինձի ծիլ մը բեր,
Արևուն շողը վրան։

Կզարդարե ամայությունը հողին
Մատղաշ ծաղի՜կը հացի։
Կանանչին մեջ կոշտերը թուխ կլողան...
— Հարսնո՜ւկ, ծիլ մը բեր ինձի,
Մատերուդ բույրը վրան։

Ծիլ արտերուս մեջն է ծլեր նշենիս,
Հոն միսմինակը ծաղկեր...
— Մայրի՜կ, քույրի՜կ, հոտա՜ղ, հարսնո՜ւկ սիրական,
Բերեք անկե ծաղիկներ,
Բերեք վարդագույն ծաղիկներ,
Հնձվորին հո՜ւյսը վրան։

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

Դաշտերուն վրա իր տրտմությամբ համառող
Անձրևը չէ՛ ասիկա։
Գարնան ջաղրն է՝ որ ցանքերուն վրա անհուն
Լուսացնցուղ կտեղա։

Աստղերն անհայտ, կարծես հալած արևեն,
Տեղատարափ կթափին,

Եվ կլվան իրենց լույսին մեջ փաղփուն
Անդաստաններն ու այգին։

Կապույտն հանկարծ կուլա բուռն ծիծաղեն,
Եվ կտեղա ադամանդ.
Կլուսնան կույր աղբերակներն ու կերգեն
Իրենց ծնունդն արգավանդ։

Անհունն ի վար կհեղեղվին շառաչով
Մեծ կաթիլներ շափյուղա,
Լի արևով, ցնծությունով, կապույտով,
Ծիծաղներով սատափյա։

Մարգերը թաց կարտաշնչեն զովություն...
Կլվացվին գառնուկներ...
Բո՜ւյրը հողին, հողին բո՜ւյրը, ծավալուն,
Կլեցնե գյուղն ու եթեր։

Ու արտերո՜ւս, արտերո՜ւս մեջ քրտնաշատ
Իմ ցորյաններս համեցող
Նոր ուժերով հորդահոսա՜ն կընձյուղին
Կայլակներու մեջ ի լող։

Եվ մաքրված անտառին մեջ, այս պահուս,
— Ըստ իմ գյուղիս հեքիաթին—
Կծնի եղնիկն, գոտին տակ ծիրանի,
Եղնորդ մը՝ նման լուսինին։

ՑՈՐՅԱՆԻ ԾՈՎԵՐ

Հովե՜ր կանցնին.—
Ու ցորյաններս հուշիկ-հուշիկ կարթննան.
Իրենց խորքեն կհոսի դող մ'անսահման։
Գեղադալար կողերն ի վար բլուրին
Սովե՜ր կանցնին։

Հովե՜ր կանցնին.—
Ա՜յնքան կհորդի, կկատղի դաշտը հուռթի,
Որ պիտի հոն արածող ոչը խեղդի։
Գոգին մեջեն ալետատան հովիտին
Սովե՜ր կանցնին։

Հովե՜ր կանցնին.—
Ու ցորյանին պատմուճանները ծփուն
Մերթ կպատռին, մերթ կկարվին փոզփոզուն։
Ըստվերի մեջ, լույսերու մեջ փրփրագին
Սովե՜ր կանցնին։

Հովե՜ր կանցնին.—
Քիստերուն տակ կալեծփին եզիներ՝
Ուր լուսնակն իր սափորին կաթն է հոսեր։
Կալերեն գյուղ, գյուղեն մինչև ազորին
Սովե՜ր կանցնին։

Հովե՜ր կանցնին.—
Զմրուխտներով կծփա դաշտը անհուն։
Միտը կերգե թառած հասկի մ'օրորուն՝
Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին
Սովե՜ր կանցնին,
Հովե՜ր կանցնին։

ԿԱԿԱՉՆԵՐ

Քո՜ւյր իմ, ցանքին մեջ կակաչներ կան, քաղե՜.—
Ահա սիրող սիրտերու պես կարյունին։
Պիտի իրենց բաժակներեն բյուրեղ
Եմենք ալիքն արևին։

Անոնք ա՜ինչափ բռնկեր են՝ որ կարծես
Հրգահն իրենց կայրն դաշտերը անհուն։

Գիտի իրենց բաժակներեն հրակեզ
Եմենք կայծերն աստղերուն։

Քույր իմ, քաղե՛, լորի մը պես ծածկված.
Ցորեններուն մեջ՝ որ մեղմիկ կնազին։
Գիտի իրենց բաժակներեն բոսորած
Եմենք արյունն ակոսին։

Անոնք ծռած արտույտներու բույնին վրա
Լալ շողերով ողկույզ-ողկույզ կծփան։
Գիտի իրենց բաժակներեն հակընթյա
Եմենք խոստումը Գարնան։

Քաղե՛, քո՛ւյր իմ, կակաչ չէ, բո՛ց քաղե դուն.
Հրդեհն իրենց լեցուր գոգնոցդ կույսի։
Գիտի իրենց բաժակներեն փափկասուն
Եմենք կրակներն Հունիսի։

Ծաղկե՛ր, ծաղկե՛ր են բերնիդ պես քնքշենի,
Կխոսակցին ցորյանին հետ օրորուն։
Գիտի իրենց բաժակներեն ծիրանի
Եմենք գաղտնիքն հասկերուն։

Քաղե՛, քո՛ւյր իմ, պիտի պսակվինք անոնցմով
Վաղվան զվարթ տոնին համար գյուղակին։
Եվ պիտ՝ այդ բաժակներեն, պարելով,
Եմենք գինին Տարփանքին։

ԱՆԴԱՊԱՀԸ

— «Ծհե՛. եհե՛. արտերուն մեջ մարդ մարդաձայն չմնա՞»։
Հովերուն հետ սարեն եկող անդապահին աղաղակն է։

Ուսընդանուի պարկը կախած և մասրենի ցուպ մը ձեռքին՝
Ցորյաններու զմրուխտին մեջ կթափառի ան առանձին։

Արևներուն մեջ ելոդա, ինչպես ամռան իշամեղուն։
Աչքերուն մեջ կծավալի կանանչ երազը դաշտերուն։

Գիշերը մերթ սարին նստած լուսինին դեմ կածե արինգ,
Երովիլակը ցանքին մեջեն, միակ ընկեր, կլսե զինք։

Երգերուն տակ անդորրական հասկերն համայն կծոցվորին.
Կկատաղի՝ երբոր զանոնք իր թևին տակ լլկե քամին։

Ան սարսափն է բոլոր անոնց՝ որ կավրեն անդ ու անդասան.
Կխռովեն շողքն արևուն, կկոխկրտեն հացը վաղվան։

Ինչ խլուրդներ է ըսպանած, և պնդագլուխ ինչ գոմեշներ
Հաբվածներեն իր ճարահատ ճահիճներն են ապաստաներ։

Ան դեռ երեկ քաղվորներու չքնաղ երամ մ՝հալածելով՝
Հարսի մը ոտքը չախչախեց սատկած իշու մ՝հաղթ ծնոտով։

Ու սարին վրա միշտ հովերո՞ւն, հովերո՞ւն հետ կաղաղակե.
— «Ծհե՛. եհե՛. արտերուն մեջ մարդ մարդաձայն չմնա՞»։

ՀԱՅՈՒՆ ԱՐՑ

Արտս ոսկո՞ւն է...
Նման բոցերու
Ցորենն է բռնկեր՝
Առանց այրելու։

Արտս ոսկո՞ւն է...
Երկինքն է կրակ.
Հողը խորխոլած
Ծղոտներուն տակ։

Արտս ոսկո՜ւն է...
Քառաշար հասկեր
Քառաշար սաթով
Արև՜ն են հագեր։

Արտս ոսկո՜ւն է...
Բոռ, մեղու, պիծակ
Քիստերուն մեջեն
Կանցնին զերթ փայլակ։

Արտս ոսկո՜ւն է...
Մերթ կելլե, հովեն,
Դեղձանիկ մը թի՜ռ,
Ոսկեծուփ ծովեն։

Օրո՜ր, ոսկո՜ւն արտ,
Օ՜ր տուր, հասո՜ւն արտ,
Գամ ոսկիդ հնձեմ
Մանգաղով արծաթ։

ՀՈՒՆՁՔ

Թող սոթովին թեզանիքներ, գերանդիներ թող հեսանվին.—
Այսօր երկու հազար մշակ կհնձեն ցորե՜նը և գարին։

Քա՜ղցր է թաղվիլ հասկերուն մեջ՝ որոնց քիստերը խարշափուն
Կխառնվին բանջ կուրծքերու անտառացած թուխ մազերուն։

Քա՜ղցր է լողալ համառորեն որաններուն մեջեն հեղեղ,
Ըզգալ ուռիլը բազուկին երակներուն արևազեղ։

Ահավասիկ գերանդիներ, կատաղությո՜ւն փայլատակի,
Ցորեններուն մեջ իբր արծաթ կընկղմին, դուրս կելլեն՝ ոսկի։

Հասկեր կիյնան շարվե-շարան, և կարյունին կակաչներ լուռ.
Թլուրներուն կողը խարտյաշ կծալվի լայնասարսուռ։

Ցփանքներ նո՜ր ծփանքներու ներքև ընդմիշտ կփլուզին.
Ալիք կելլան ակոսին մեջ ծովե՜ր, ծովե՜ր, ծովե՜ր դեղին։

Ու կընդլայնին դաշտեր, սարեր, խոզաններով միշտ քստմնած,
Հովիտին մեջ հեղեղներ կան՝ որ կցամքին կամաց-կամաց։

Հանկարծ թուփեր կհայտնվին կամ կցցվի քար մը ճերմակ.
Առվակ մ'հեռուն կփալփլի, որ կնիրհեր վարսակին տակ։

Մշակներ կան՝ որ փարշն իրենց բերանին դրած, Արև՜ն ի վեր,
Կրմպին երկա՜ր ջուրը գլգլուն՝ զոր աղբյուրեն հարսն է բերեր։

Ոմանք իրենց ափերուն մեջ՝ մերթ կփշրեն հասկ մը ատոք,
Եվ կօրհնեն թիվն հատիկներուն ու կծամեն հետո զանոնք։

Հոտաղներ կան արտերե արտ՝ որ ժիրաժիր կհեսանեն
Աղոտ մահիկը մանգաղին՝ աղմկելով լուռ միջօրեն։

Եվ կհնձե՜ն.— միշտ կհնձե՜ն, թևի ամեն լայն շարժումի
Ամառներու բերկրությունն է՝ որ քիստ քիստ կծավալի։

Օ՜, ի՜նչ կոծեր, հորիզոնե հորիզոն ի՜նչ նվաճումներ,
Ի՜նչ հեծկլտանք հաճարներու, ի՜նչ փլուզվող օվկիանաներ։

Ու կհնձեն, դեռ կհնձե՜ն.— մինչև շուքերը երկարին
Եվ շփոթվին իրարու հետ ա՛լ սահմաններն անդաստանին։

Այն ատեն լուռ ճամփուն վրա կտեսնվին, շարան-շարան,
Հնձվորները, որ դեպ իրենց տնակներուն ճրագը կերթան։

Գերանդիներն անոնց ուսին կցոլցոլան լուսնկային,
Կհովանան անոնց քրտնած կուրծքերն անուշ ծմակներին։

Իսկ անդորրին մեջ դաշտերուն ահա ծղրիթ մը արթնցած
Կլեցնե իր երգերով ամբողջ Անհունն ատաղձված։

ՀՈՒՆՁՔ ԿԺՈՂՎԵՄ...

Հունձք կժողվեմ մանգաղով,
— Լուսնակը յարս է—
Ակոս ակոս ման գալով։
— Սիրածս հարս է։—

Գլխեբաց եմ ու բոբիկ,
— Անո՜ւշ են հովեր—
Արտերուն մեջ թափառիկ։
— Մազե՜րն են ծովեր։—

Ցորեն, կակաչ, կարոտով,
—Կաքավը կուվա—
Կապեցի մե՛կ նարոտով։
— Ձեռքերն են հինա։—

Հասկերուն մեջ, վերևեն,
— Ասուպը անցավ—
Աստղեր մյուռոն կծորեն։
— Դեմքը լուսացավ։—

Քանի խուրձեր շաղերով,
— Վարդենին թաց է—
Ես կապեցի խաղերով։
— Ծոցիկը բաց է։—

Արտս խոզանով մնաց
— Կերթա՞ լուսնակը—
Դեղերով լեռ եմ շինած։
— Սի՛րտս է կրակը։—

Մանգաղս քարին եկավ.
— Ցարս յա՜ր ունի—
Քարեն լորիկը թռավ։
— Լե՜ռդս կարյունի։—

ՍԱՅԼԵՐԸ

Գյուղին ճամփային սայլերը կերթան
Հունձքով բեռնաբարձ։
Մայրամուտին մեջ շարժուն բուրգեր են՝
Ճաճանչներ հագած։

Թխադեմ տղաներ, դեղերուն վրա,
Կխթանեն մերթ
Մեծդի եզերուն կողը սրսփուն,
Կողը լուսաշերտ։

Դոմեշներ, համառ, ետև կարկառած
Իրենց մութ լեզուն՝
Կքանդեն որան՝ որ կհեղեղվի
Իրենց նուսերուն։

Ցորեններ ի լյուղ պերճ արյունին մեջ
Իրիկնադեմին՝
Նոր պսակ կըլլան պսակին վրա
Անոնց եղջյուրին։

Ճամփան, արտերեն կալերը մինչև,
Կծփա հասկով՝
Զոր ուշ մնացած հավեր կքրքրեն
Զվարթ կտուցով։

Ճամփան խարտյաշ է, կարմիր է ճամփան,
Որուն եզերքին
Արյուն կծորե չափազանց հասուն
Փոշոտ մորենին։

Սայլերը կերթան, անդորրության մեջ
Աղաղակելո՜վ...
Կտանին արև, հրդեհ կտանին
Հսկա դեզերով։

Կտանին հեղեղն ահա լեռնացած
Քշտինքի, Հույսի,
Որ լուծեն մինչև անիվներուն վրա
Առատ կհոսի։

Կերգե՞ն տղաներ, խթանելով միշտ
Կողը եզերուն...
Ջինջ անհունին մեջ զիրենք կօրորե
Ցունցը դեզերուն։

Կերգեն ճպուռին, մանգաղին նման,
Կերգեն հովի պես,
Մինչ հասնին կալերն, ու հոն տարածեն
Հունձքը ծովի պես։

ՃԱՐԱԿՈՒՄ

Բլուրին գաղջ կողին վրա ընկողմանած
Սրինգ կածեմ.
Եզներս լայն հովիտին մեջ, սրտի երգով,
Ես կարածեմ։

Լուսնակն իջած է մանգաղված լուռ արտերուն
Մակերեսին.
Կծավալե խոզաններուն մեջեն հեզիկ
Կաթը լույսին։

Ջինջ գիշեր է։— Երգս անհունն անհուն, խաղաղ,
Կծփծփա.
Եվ սրինգս, հովերուն հետ, իր ծակերեն
Շաղե՞ր կուլա։

Հեռո՞ւն կլսեմ բոժոժներն իմ նախիրներուս,
Որոնք կարծին

Ցոբյաններուն ծիղն՝ ոռոգված մեղրերուն մեջ
Սիր Կաթինին։

Կլսեմ մուշ-մուշ ճարակումն՝ առվեզերքի
Թուփերուն մեջ՝
Ուր մոգին իր դունչը մխած՝ կրզկտե
Խոլորձը գեջ։

Ցուլերն ամեն, գլուխնին կախ, կարծես դյութվա՛ծ
Ինձ կերևան.
Գոմեշներուն բիբերն ահեղ՝ ատողերուն տակ
Մերթ կշողան։

Կրնե միջատ մը, շուրջն անոնց, ճաճանչաթիռ
Միշտ ելևէջ։
Ճերմակ եզը կարծես կուռք մ'է, ձուլված լուռնին
Արծաթին մեջ։

Կճարակի՞ն,— հովուն տված թավ պոչերնին.
Եվ կխմեն
Իրենց մազոտ ու բարախուն ականջներով
Սրնգիս ակեն։

Կճարակի՞ն,— բուռ ակռաներն իրենց՝ մինչև
Կանանչանան,
Եվ որովայնն անպարագիծ լեցվի՛, լեցվի՛
Մարագի նման։

Այն ատեն ա՛լ դաշտերուն մեջ կմակաղին
Մեծազանգված,
Մեկը մյուսին կռնակին վրա, որոճալով,
Դունչը դրած։

Մինչև որ ա՛լ Արփին ծագի, լույսն արտին վրա
Իջնե սարեն,
Եվ ժողվե ցողն, հակինք հակինք, անոնց խանձող
Եզջյուրներեն։

ԽԱՉԲՈՒՌ

(Աստվածամայր սեղանին)

Քեզ կբերեմ, Մա՛յր, հունձքերուս նախընծան։
Չոհագործե՛, սեղանիդ վրա՝ ուր, դարե՛ր,
Փեթակներուս մեղրամոմերը դեղձան
Լույս ու արցունք են հոսեր։

Դո՛ւն, սուրբ պաշտպան հայրենական հողերուս՝
Որոնց տվիր անմահութիւնը դրախտի.
Միլը ծաղիկ ըրիր, հույսը՝ Արշալույս,
Որ խրճիթիս կժպտի։

Դո՛ւն, Խաչբուռն այս, զոր իմ ձեռքով եմ հյուսեր,
Ընգունե՛, Մա՛յր։ Բյուր հասկերո՛ւս մեջ ասոնք
Կնազեին կույսերու պես շիկահեր,
Արևահե՛ղց և ատո՛ք։

Գերանդիիս տակ, գլուխնին դեռ ցողով,
Լուսնեն հնձված ճառագայթի պես՝ ինկա՛ն։
Ոչ մի արտույտ քանդեր է իր կտուցով՝
Անոնց շարքերը լման։

Ես հյուսեցի զանոնք, գիսակ առ գիսակ,
Տալով խաչին ձևը Որդվույդ կարեվեր՝
Որուն արյունն, ամեն Զատկի, սո՛ւրբ կրակ,
Մեր ակոսներն են խմեր։

Իմ հույսերուս, իղձերուս հետ հյուսեցի։
Անոնց մեջ է հույզը արտին, հուրն արևուն,
Խոփին փայլակն ու թեկս թափն առնացի,
Գաղատանքն իմ թոռներուն։

Մա՛յր, Խաչբուռն այս օրհնե՛. և տուր արտերուս
Ամառն՝ ոսկի, ինչպես գարունը՝ մարգրիտ.
Որքան ամբարքս լի ըլլան՝ շահեր լույս
Գիտի տան քու խորանիդ։

Ըրե այնպես՝ որ— նման հի՛ն օրերուն.—
Երբ դաշտերե դաշտ ժուռ գալու դուն ելլես՝
Փուշեր չգա՛ն ոտքերուդ տակ՝ այլ սարսռուն
Կակաչներ՝ մեր սրտին պես։

ԿԱԼԵՐ

Կալերուն մեջ ես կնստիմ երազուն
Հովանիին տակ էշիս՝
Որ քովս սա կոճղին կապված, կշփե
Աղու ծնոտը՝ ուսիս։

Տափաստանին վրա, խաղաղ, կփռվի
Ճերմակ ալիք մ'արևու՝
Որուն մեջ լյուղ կուգան դեզերն, և կրիան
Եկեր է հոն տաքնալու։

Թևը հովին, ծաներացած գաղջ բույրերով,
Հազիվ ծուլ-ծուլ կշարժի։
Կովին ըստվերը փառահեղ լույսին վրա՝
Սև կարկտան մ'է լայնշի։

Շինականն իր կահն ու կազմածը բերած՝
Հոն հիմներ է նո՛ր գյուղակ...
Հեռուն՝ լքված իր մամռապատ ջեմին վրա
Կհսկե գամփռը մինակ։

Կալերուն մեջ դեզը՝ ծեփված արևով՝
Կարծես տնակ մ'է ոսկի։
Տերևախիտ ծառին զով շուքը կըլլա
Առագաստ մը նոր հարսի։

Ու ես նստած հովանիին տակ էջիս՝
Կերգեմ քաշերը հողին՝
Որոնք մանգաղն հազիվ կախած պատն ի վար՝
Կկրթեն ցուլը՝ կամին։

Կերգեմ հոտաղն՝ որ կհարթե կալատեղ
Լողքարին զինքը լծած,
Մինչ քրտինքով կթրջվի շապիկն իր
Կուրծքին վրա՝ պատռտած։

Կերգեմ հարսերն՝ որ հինան դեռ մատներուն՝
Կմաղեն ժիր-ժի՜ր գարի.
Կթափթփին իրենց մաղին ծակերեն
Կարծես շիթեր գոհարի։

Կերգեմ մշակներն՝ որ սայլերուն կատարին
Աստվածներու պես կանգուն՝
Երկժանիով կատաղորեն կքանդեն
Ճակատն հսկա դեզերուն։

Կա՜մը կերգեմ, որ կնավե շուրջն հունձքին
Իբրև հրագույն լիճի վրա,
Հետո ցորենն աշխարհածուփ՝ որ արդեն
Հարդերուն մեջ կլողա։

Օ՜, ի՜նչ քաղցր է երթալ խառնվիլ էութեամբ
Այդ սրբագույն վաստակին.
Տրեխներեդ մինչև մազերդ համակվիլ
Մղեղներուն մեջ դեղին։

Փուռի կայծի՜ն, տաշտի հացի՜ն ի խնդիր
Ըլլալ Պա՜նը կալերուն,
Վերադարձնել ջաղացքներուն սրտին մեջ
Իրենց երգերը անհուն։

ԿԱԼԵՐՈՒ ԳԻՇԵՐ

Ամառվա՜ն քաղցր գիշեր,— գլուխը կամին վրա դրած
Աշխատանքի սուրբ Ոգին կալերուն մեջ կննջե։
Կլողա մեծ Հոութեանն աստղերուն մեջ ծովացած։
Անհունը՝ բյուր աչքերու թարթափով՝ զի՜ս կկանչե։

Կերգեն, հեռուն, ծղրիթներ։ Ջուրերուն մեջ լճակին
Կըլլա հարսնիք մը ծածուկ նայադներու՝ այս գիշեր։
Սյուքն հուզելով ուռենին ափերուն վրա գետակին՝
Կարթնցնե անծանոթ լարերու վրա նվագներ։

Ծոթրիններու բույրին մեջ, պառկած կատարը դեզին՝
Ես կթողում որ սրտիս դպչի ամեն մեկ ճաճանչ.
Ու կարբենամ գինիովն Անհունի մեծ կարասին,
Ուր կճմլվին ասուպներ քայլի մը տակ անճանաչ։

Հե՜շտ է մտքիս ընկղմիլ կապույտին մեջ լուսալիք,
Նավաբեկիլ— թե հարկ է— կրակներուն մեջ վերին,
Գտնել աստղեր նորանոր, կորսված հի՜ն հայրենիք,
Ուրկե ինկած հոգիս դեռ կուլա կարոտն եթերին։

Վերանալ քա՜ղցր է ինձի թևերուն վրա լռության,
Լսել մի՜այն Միջոցին շնչառությունն անխոով,
Մինչև աչքերս գոցվին քունի մը մեջ դյութական,
Ու կոպերուս տակ մնա Անհունը իր աստղերով։

Այսպե՜ս, ա՜յսպես կննջեն գյուղին մարդիկը ամեն.—
Հոտաղն է իր սայլին վրա, վերմակին տակ լուսածոր,
Հարսն է դեզի կատարին՝ ծոցը բացված զեփյուռեն,
Ուր կպարպե Հարդգողն իր կաթը սափոր առ սափոր։

Եվ այսպես՝ օր մը պառկած փողփողումին տակ երկնի,
Իմ ծնողներս մշակ՝ զիս հղացան կաթոգին,
Ջիս հղացա՜ն սևեռած իրենց աչքերը բարի
Վերն ամենեն մեծ Աստղին, ամենավառ Հրայրքին։

ԿԱՄՆԵՐԳ

Կամ կքշեմ վաղվան հույսով՝
Արևն առած ճակտիս վրա։
Հորիզոնը, անհուն լույսով,
Իմ աչքերուս մեջ կլողա։
— Դարձի՛ր, կամրս, արագ դարձիր, հիո, հիո.
Նվաճե դեղերը հունձքերուս ժիր, ժիր։

Կթուչտի շուրջը կալին
Իշամեղուն, բռնկած գոհար,
Ոչ թափ տալով խոպոտ տաղին՝
Լծկանն առաջ կմղե հար։
— Դարձի՛ր, կամրս, արագ դարձիր, հիո, հիո.
Քանդե պսակն որաներուն, ժիր, ժիր։

Վարոցս սուր, հսկա մասուր,
Հոտված՝ սրտեն անտառներուն՝
Իմ ծույլ եզիս կողեն հաստույր
Մերթ կքաղե կաթիլ մ՚արյուն։
— Դարձի՛ր, կամրս, արագ դարձիր, հիո, հիո.
Խուզե հասկին բոց մորուքը, ժիր, ժիր։

Հորձանքին մեջ աշխատ հունձքին
Ես կլողամ երգերուս հետ.
Մղեղներուն հետ միասին
Կրմպեմ խարին հոտն արփավետ։
— Դարձի՛ր, կամրս, արագ դարձիր, հիո, հիո.
Կույս հատիկին պատռե քողը, ժիր, ժիր։

Ի՜նչ փույթ քաղցած ըլլան եղներ,
Ու մշակներն ալ՝ ծարավի.—
Խոտն է կանանչ ձորին մեջ դեռ,
Թանն աղբյուրին մեջ կպաղի։
— Դարձի՛ր, կամրս, արագ դարձիր, հիո, հիո.
Հասկին սրտեն սուտակ թափե, ժիր, ժիր։

Ջուր տեղը չէր կա՛մրս աղվոր,
Որ օծեցի քեզ կուպրերով,
Ջինեցի պորտդ սևավոր
Կայծքարե սուր ակռաներով։
— Դարձի՛ր, կամրս, արագ դարձիր, հիո, հիո.
Կրծե՛ հարդին ոսկիները, ժիր, ժիր։

Ցորե՜ն ահա, ցորե՜ն ահա,
Մշուշին մեջ մղեղներուն,
Անհունորե՜ն կարշալույսնա։
...Զվարթությո՜ւն խրճիթներուն։
— Կեցի՛ր, կամրս, ա՛լ կեցիր դուն,
Խաղաղությո՜ւն խրճիթներուն...։

ՄԻՋՕՐԵ

Այս այն ժամն է, երբ կալին մեջ Աշխատանքն առած կանգ՝
Արևուն տակ կհևա։
Կենչե մեն մի մշակ։
Քարայրին մեջ հեռակա
Հեծեծագին կմեռնի զով Զեփյուռը ամրափակ։

Միջոցին սիրտն՝ հրեղեն ցանցի մը մեջ սեղմված՝
Կբաբախե հազի՛վ հազ։
Լռության մեջ շողարծարծ
Ի՜նչ հծծյուններ, ի՜նչ երազ,
Եվ ի՜նչ բույրեր առտվան եղեգներուն կտրված։

Կքնանան անտառներ թուխ կողերուն վրա սարին՝
Արծաթահյուս քողի տակ։
Կապույտին մեջ, առանձին,
Կերթա ամպ մը կաթնոքակ,
Փափուկ բուրդեն ծվեններ թողլով ժայռի կատարին։

Գընդունի հողն իր սրտին մեջ՝ իր սրտեն ճեղքվելով
Լույսին նիզակն արյունոտ։
Աղբյուր մը հոն, ծառին քով,
Կհեծեծե նվաղկոտ՝
Իր ոռոգած ծաղիկին վրա մեռնի՛լ լուզելով։

Գոմեշներ՝ լուծը լքած ճահիճին մեջ կպառկին
Իրենց բերնեն հոսելով
Թելերն արծաթ շողիքին։
Սայլերն, անդին, դեզին քով,
Հսկա ցուկները ցցած՝ դատարկությա՛ն կնային։

Այս այն ժամն է, ո՛վ հոգիս, որ ճպուռին պես մինակ՝
Կատարներուն վրա մնաս.
Անդորրին մեջ անապակ
Դուն քու երգով արբենաս,
Ինչպես արևն իր լույսով, իր լույսին հետ մի՛ս-մինակ։

ԳՈՒՌԸ

Իրիկվան մեջ, գյուղին քով,
Կմրմնջե գուռն ուռիին տակ շքեղ։
Զայն կլեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,
Աստղը՝ բյուրեղ արցունքով։

Խորհուրդին մեջ ըստվերին
Կնունքի չինչ ավազան մ'է կարծես ան,
Ուր քաղցրորեն կմկրտվի լուսնկան՝
Տղու մը պես նորածին։

Հոգնաբեկ խումբն եզներուն
Հոն կդիմե արահետեն ճախճախուտ,
Ուրկե կհոսի, ճապաղելով, ջուրն անփույթ՝
Մարգերուն տակ՝ պսպղուն։

Կոզեր կողի դեմ ահա՛,
Եվ գավակներ գավակներու կընդհարին.
Հանկարծ մոլուցք մ'եզջյուրներու ահագին
Կատատանի գուռին վրա։

Միահաղույն կերկարեն
Վիզերն իրենց, և ոունգերնին հարդամած
Հատակ ջուրին ադամանդին մեջ մխած՝
Հավերժորե՛ն կխմեն։

Կրմպեն ալիքն անապակ,
Լույս ծյուրումը պարեխներուն սառնակերտ.
Ու չեն խրտչիր լուսնկայեն, որ մերթ մերթ
Կլողա իրենց բերնին տակ։

Կվերցնեն երբեմն, հա՛գ,
Հզոր գլուխնին ու կնային սարերո՛ւն...
Կսորսորա իրենց դունչեն՝ քարերուն՝
Ջուրը երակ առ երակ։

Անդեորդն հոն, մահակին
Վրա կոթնած՝ կսուլե երգն հեշտօրոր,
Մինչև վետ վետ ցամքի հեղուկը բոլոր,
Մնա մամուռն՝ հատակին։

Կերթան հետո, օրորուն,
Գոմին խաղաղ գավիթին մեջ պառկելու.—
Կկարկաչե գյուղամեջեն, զերթ առու,
Ջանգակն իրենց վիզերուն։

Ու երբ գարձյալ գան առտուն,
Գիտի գտնե՛ն հսկումին տակ ուռիին
Գուռը նորե՛ն լեցված երգովն աղբյուրին,
Եվ արցունքովն՝ Աստղերուն։

ԵՐՆՈՒՄ

Իրիկվան մեջ հովերն հեռուն
Երբ դուրս կելլեն քարայրներեն՝
Մեկ ծայրեն մյուսը կալերուն
Ա՛լ կամնված հունձքը կերնեն՝
Հրծծելով երգն Աշխատության.
— Երնե՛, էրան, ե՞րնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։

Հարս ու աղջիկ պարմանիներ,
(Ժպտուն վարդեր մասուրի քով)
Իրենց ձեռքին հոսելիներ՝
Գճեղքեն թեղն, հույսերու բով.
Ու կպոռթկա երգն հաղթական.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։

Ժիր շարքերուն մեջ ի՞նչ խուճապ
Ելլող իջնող բազուկներու...
Հեղեղներ են, որ հապշտապ
Վեր կնետվին՝ սաթ տեղալու.
Ու կեռա երգն ալետատան.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։

Հովեր կանցնին խարտիշահեր,
Թողլով, որ վա՛րը երկարին
Հարդգողի լույս ճանապարհներ,
Ուր սարյակներ կթափառին՝
Սուլելով երգը ցնծության.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։

Ուսերե վեր ի՞նչ փոթորիկ,
Ի՞նչ փաղփումներ մազերու մեջ...

Ցորենին հետ, հատիկ հատիկ,
Կթափի ցողն իրիկվան դեջ։
Ու կըղձա երգն երանության.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։

Ու երբ ոսկվով ծեփվին կալեր,
Հարսերն ոսկի քողեր առնեն,
Եվ ցորյանի ձուլվին սարեր,
Ջոր գա լուսնակն օրհնել վերեն՝
Գիտի նվաղի երգն աղվական.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Ափ մը ցորյան ափերուդ մեջ
Թող լեցնեմ, կորիճ Որդիս,
Կորիճ Որդիս, գոտի՛ն մեջքիս.
Թող մաճակալ բազուկներեդ
Քսան ցուլի արյուն անցնի,
Եվ եղևնի քու հասակեդ
Քսան տունի սյունը կանգնի.
Ու երբ թիվովը մատերուդ
Սերմանես քու սերմընցուն՝
Հնձես թիվո՛վն աստղերուն։

Ափ մը ցորյան գլուխդ ի վար
Թող որ թափեմ, թոռնի՛կ սիրված,
Թոռնիկ սիրված, ցո՛ւպս ծաղկած.
Թող ճակատիդ վրա գրվի
Հարյուր սաղմոս իմաստության,
Եվ ուսերուդ վրա դրվի

Տապանակը ըզգաստության.
Ու երբ հոտիդ օր մ'այցելես՝
Թող քու ափիդ գարիին
Հազար ոչխա՜ր երկարին։

Ափ մը ցորյան մազերուդ մեջ
Թող որ տեղամ, վա՜րդ թոռնուհիս,
Վարդ թոռնուհիս, պսա՜կ շիրմիս.
Թող այտերուդ վրա շողան
Ամեն գարուն նո՜ր կակաչներ,
Եվ ալքերուդ մեջը լողան
Ամեն ամառ նո՜ր ճաճանչներ.
Ու երբ տնկես ճյուղ մ'ուռիի՝
Ամեն ապրիլ դուն տեսնես
Իր շուքին տակ կանա՜նչ քեզ։

Ափ մը ցորյան ծոցերուդ մեջ
Թող որ ցանեմ, Հա՜րես աղվոր,
Հարսս աղվոր, սե՜րս հեռավոր.
Թող անկողնիդ ակոսին մեջ
Հասկ մը ծլի՝ լման շարքով,
Եվ օրորած օրոցքիդ մեջ
Արշալույսնե՜ր ննջեն փառքով,
Ու երբ կթես քառասուն երինջ՝
Դուլլերուդ մեջ մակրդի
Կաթը՝ արծաթ, դալն՝ ոսկի։

Ափ մը ցորյան, ափ մը ցորյան,
Ա՜յ իմ պառավ, ա՜յ իմ Աննա,
Մեր գլխուն ալ թող որ տեղա.—
Թող չսառի՜ արևն աշնան
Մեր մազերուն ձյուներուն մեջ,
Ձմարի՜ մեր մոմն իրիկվան
Ժամուն մարմար սյուներուն մեջ.
Ու երբ դրվինք ա՜լ գերեզման՝
Մեր ներքև հո՜ղը, Աննա՜,
Քիչ մը կակո՜ւղ թող ըլլա։

ՎԵՐԱԴԱՐՁ

Այս իրիկուն ձեզի կուգանք, ե՜րգ երգելով,
Լուսնակ ճամփով,
Ո՜վ գյուղակներ, գյուղակներ.
Ձեր բակերուն մեջ ամեն
Թող գամփռներն արթննան,
Եվ աղբյուրները նորեն
Դուլլերուն մեջ քրքջան.—
Ձեր տոներուն համար դաշտեն՝ մաղերով
Վարդ ենք բերեր՝ խաղերով։

Այս իրիկուն ձեզի կուգանք, սե՜ր երգելով,
Սարի ճամփով,
Ո՜վ հյուղակներ, հյուղակներ.
Ծղջյուրներուն դեմ եզին
Թող ա՜լ բացվին ձեր դուռներ,
Թոնիրը մխա, պսակվին
Կապույտ ծուխով կտուրներ.—
Ահա ձեզի հարսերը՝ նո՜ր մանչերով՝
Կաթ են բերեր՝ փարչերով։

Այս իրիկուն ձեզի կուգանք, հո՜ւյսն երգելով։
Արտի ճամփով
Ո՜վ մարագներ, մարագներ.
Ձեր պատերուն մեջ խավար
Թող նոր արևն շողե,
Երդիկներուն վրա դալար
Լուսնակն ալյուր թող մաղե.—
Ահա ձեզի բերեր ենք խար՝ խուրձերով,
Հարդը՝ անուշ ուրցերով։

Այս իրիկուն ձեզի կուգանք, հա՜ցն երգելով,
Կալի ճամփով,
Ո՜վ ամբարներ, ամբարներ,
Ձեր մութ ծոցին մեջ հսկա

Թող բերկրության շող ցաթի։
Սարդոստայնը ձեր վրա
Թող ըլլա քող մ'արծաթի.
Չի բերեր են սայլե՞ր, սայլե՞ր շարքերով
Ցորե՞ն՝ հազար պարկերով։

ԱՄԲԱՐՆԵՐ

Տնակին մեջ մթնշաղ, կտուրին տակ հայրական,
Ամբարնե՞րն են, շար ի շար, նոր բերքերով ծոցվորած։
Իրենց լայնշի արգանդեն՝ թանձր բույրերը կուգան
Աշուններուն պտղալից և արտերուն մանգաղված։

Հո՞ն է վիգը թխահատ, հո՞ն է գարին իլաձև.
Հո՞ն, քամվելով ակոսեն ու հոսելով սարն ի վար,
Ցորյանն հեղե՞ղ է կազմեր։ Անոնք ոսկի և արև
Գրկած կարծես թե ըլլան արշալույսներ ամպածրար։

Գերաններեն ծխապատ և մենավոր պատերեն
Սարդն անոնց վրա է փռեր պատմուճանները մոխրոտ։
Մերթ անոնց վրա կցաթե շեշտակի լույս մը վերեն,
Տատամսելե վերջ երկա՞ր շուրջն երդիկին արևոտ։

Անոնք իրենց ծոցին մեջ դանձերն հողին ծրարած՝
Կարծես լռիկ կհեգնեն ձմեռն ու սովը վաղվան...
Իրենց առջև, մշտարթուն, թավ պոչին մեջ ծվարած,
Կհսկե տանը կատուն, Համբարուի մը նման։

ՄԱՐԱԳՆԵՐ

Առվույտի՛ մարագ, լեցուն բույրերով
Խունկի, հաշիշի,
Երբ դուռդ բանամ, ցուլերը բոլոր
Ճակատով լայնշի
Կպոռոշեն խո՛լ, կտրելով իրենց
Վզտեքը կաշի։

Ոլոռնի՛ մարագ, լեցուն լեռնաբույր
Հազար ծաղիկով,
Երբ մսուրներուն խուրձերդ տանիմ
Կողով առ կողով,
Կխնկե ծոցիս, թեզանիքիս մեջ
Համեմդ՝ օրերով։

Հարդերու՛ մարագ, երդիկեն նայող
Արևով լեցուն,
Դու, որուն կակուղ դեզին վրա պառկած,
Կցկնի կատուն,
Դու, որ կարծաթես դունչը գառներուն՝
Օրհնյա՛լ ըլլաս դուն։

ԱՂՈՐԻՔ

Է՛յ աղորիք, դարձի՛ր, դարձի՛ր,
Նստած կանանչ խորը ձորին.
Աղաղակե՛ երգդ խորին
Դեպի լուսնակին արծաթածիր։

Դուն դողդոջուն տնակ մըն ես
Ալյուրոտած պատերով՝ ուր
Կարծես կուլան հիաղարհուր
Ջրանույշներ հագած բեհեզ։

Միշտ կհսկե մեջդ, արթուն,
Աղորիպանը ճեփ-ճերմակ,
Եվ ըստ պետքի՝ մեղմ կամ արագ
Կլարե սի՛րտդ բաբախուն։

Է՜յ աղորիք, բանտվա՜ծ մրրիկ
Ծառերուն մեջ, Աղա՜, աղա՜,
Փրփուր խմե՜, ալյուր տեղա՜.
Քարե կուրծքեդ տեղա՜ բարիք։

Կեցո՜ւր գետակն ընթացքին մեջ
Իր ծփանուտ բաշեն բռնած։
Ջրվեժն ահեղ երգի փոխած
Պոռթկա վիհեն վար գահավեժ։

Սայլե՜ր, սայլե՜ր անծայրածիր
Ջաղացքներուն ճերմակ ճամփեն
Աղոնն իրենց քեզ կբերեն...
Է՜յ աղորիք, դարձի՜ր, դարձի՜ր։

Ցորեններ թող ալյուր ըլլան
Պորտին մեջ ժիր երկաններուն,
Որոնք բռնված տենդով մ'անհուն
Կմրոլտան ու հիռ կուգան։

Ցորեններ թող ըլլան փոշի
Ջիրար գրկող քարերուն տակ.
Ջիրար կրծող ժայռերուն տակ
Ցորեններ թող ըլլան նաշիհ։

Մինչև լեցվին շարան-շարան
Պարկերն ու վե՜ր կանգնին նորեն.
Եվ սայլերն ալ ճռվողելեն
Ոսկին թողած՝ լույսով դառնան։

ԱՆԴԱՍՏԱՆ

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությո՜ւն թող ըլլա...
Ո՜չ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին.

Ու երբ հնչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությո՜ւն թող ըլլա։

Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիությո՜ւն թող ըլլա...
Ամեն աստղե ցող կայլակի,
Ու ամեն հասկ ձուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Ծիլ ու ծաղի՜կ թող ըլլա։

Հյուսիսային կողմն աշխարհի
Առատությո՜ւն թող ըլլա...
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի՝
Բերկրությո՜ւն թող ըլլա։

Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերում թող ըլլա...
Ծաղկի՜ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությո՜ւն թող ըլլա։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ. Վարուժանի երկերի ժողովածուն Երևանում առաջին անգամ լույս է ընծայվել 1946-ին (Դանիել Վարուժան, Երկեր, կազմող՝ Սողոմոն Տարոնցի)։ Սակայն այստեղ սխալմունքով, արձակի բաժնում զետեղվել են Հրանտ Մամուրյանի որդի Վարուժանի մոդեռն հոսանքի ընդօրինակությամբ ստեղծած պատմվածքները, որոնք անհարիր են քերթողի մեծ արվեստին։

Ներկա ժողովածուն Վարուժանի երկերի չորրորդ հրատարակությունն է։ Այս հրատարակության համար հիմք են ընդունվել նրա բանաստեղծությունների առաջին տպագրությունները. «Սարսուռներ»-ը, Վենետիկ, 1906, «Ցեղին սիրտը», Կ. Պոլիս, 1909, «Հեթանոս երգեր»-ը, Կ. Պոլիս, 1912 և «Հացին երգը», Կ. Պոլիս, 1921։

Հատորից դուրս են մնացել պարբերականներում տպագրված քերթվածների փոքր մասը, որը չի մտել հեղինակի կենդանության օրով լույս տեսած հատորներում։ Դուրս է մնացել «Սարսուռներ»-ի մեծ մասը։ Մնացած հատորների ամբողջականությունը հիմնականում պահպանված է։

Պահպանված է նյութերի այն դասավորությունը, որ կատարել է հեղինակը, շտկված են նախորդ հրատարակություններում թույլ տրված վրիպումներն ու տպագրական սխալները։

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

Վարուժանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն, որ տպագրվել է նախ 1905-ին՝ Մխիթարյանների «Գեղունի» հանդեսում, ապա 1906-ին, առանձին գրքով՝ Վենետիկում։ Քերթողի կազմած այս ժողովածուից Մխիթարյանները կբրճատել, հանել են գրեթե կեսը, մանավանդ այն բանաստեղծությունները, որոնք ուղղված են եղել թուրքական իշխանության դեմ։ «Սարսուռներ»-ը և «Ցեղին սիրտը» Մխիթարյանների հրատարակությամբ տպագրվել է նաև 1944-ին, Վենետիկում, մեկ հատորով՝ հատվածաբար։ Գրքի վրա գրված է. «Հրատարակություն դպրոցական գործածության համար, պատրաստված գրական և գաստիարակչական պահանջներու համաձայն»։

ՑԵՂԻՆ ՍԻՐՏԸ

Առանձին գրքով առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսում, 1909-ին, տպաքանակի մի մասը՝ 1910-ին։

Առաջին տպագրության շապիկը զարդարված է Մ. Խորենացուց բերած բնաբանով («Ընդ եղեգան փող բոց ելաներ»), ապա գրված են գրքի երեք բաժինների խորագրերը՝ «Բագինին վրա», «Կրկեսին մեջ», «Դյուցազնավեպեր»։ Այս վերջին բաժնից ներկա հրատարակության մեջ չի զետեղված «Եիկիտ Տոնել» դյուցազնավեպը, որը հեղինակի սկզբնական գործերից լինելով, բավական անմշակ է։ Մնացած բաժինները զետեղված են ամբողջությամբ, բացառյալ մի քանի գեղարվեստորեն ոչ ակնառու գործերի։

6. «Մարած օջախ»— առաջին անգամ տպագրվել է 1907-ին, Վենետիկի «Բազմավեպ»-ում, № 2, էջ 86—87։ Բանաստեղծության 28-րդ տողն սկսվում է այսպես.

...Օրեն (երբ գիշերը բոլոր
Կյանքն հաճնեղով ննջ գայլին, քան թե մարդուն,
Դիմեց դեպի ճերմակ լեռներն հայրենի)։

Բերված տողերից առաջինի սկզբում Մխիթարյանները հանել են «կոտորածի» բառը, որպեսզի թուրքին դեմ նակառակ քան չլինի։ Հեղինակը հետագա հրատարակության մեջ վերականգնել է այդ, դարձնելով՝ «Կոտորածի օրին»։

7. «Օձը»— առաջին անգամ տպագրվել է 1907-ին, «Բազմավեպ»-ում, № 7—8, էջ 373—374։ Մխիթարյան հրատարակության մեջ կրճատված է քերթվածի բնաբանը՝ «Իսկ ապրող հայերն ալ՝ ապես ապրեցան»։ Այս բնաբանով բացահայտվում է օձի և պատանու այլաբանությունը, որ ուղղված է թուրքական բռնակալության դեմ։

10. «Կարմիր հողը»— առաջին անգամ տպագրվել է 1906-ին, Փարիզի «Անահիտ» հանդեսում, № 3, 4, 5, էջ 89։ Հետագա հրատարակության մեջ կատարել է զգալի փոփոխություններ, մշակելով և հղկելով առանձին տողեր, հատվածներ։

11. «Հորս բանտին մեջ»— Առաջին անգամ տպագրվել է 1906-ին, «Բազմավեպ»-ում՝ «Հորս բանտը» վերնագրով, № 9, էջ 415։ Հետագա տպագրության ժամանակ կատարվել են մի շարք փոփոխություններ։ Օրինակ, «Ոճիրի մեջ արտալած»-ը մշակված օրինակում դարձել է «Եղեռնի մեջ, արտալած», «Եվ Հիսուսներ մատնված»-ը՝ «Եվ Հիսուսներ թքքնված» և այլն։

14. «Վաղարարուհին»— Առաջին անգամ տպագրվել է 1906-ին, «Անահիտ» հանդեսում, № 8—9, էջ 176։ Հետագա հրատարակության ժամանակ փոփոխվել են մի շարք տողեր։

15. «Ալիշանի շիրմին առջև»— Առաջին անգամ տպագրվել է 1904-ին, «Բազմավեպ»-ում, «Բանաստեղծ Նահապետի շիրմին առջև» վերնագրով (№ 6, էջ 244)։ Հետագա տպագրության ժամանակ կատարել են մեծ փոփոխություններ։

16. «Ջաբդը»— Առաջին անգամ տպագրվել է 1907-ին, «Բազմավեպ»-ում, №№ 10, 11, 12, էջ 177։

22. «Կռվի երգ»— Առաջին անգամ տպագրվել է 1906-ին, «Շիրակ» հանդեսում, № 1, էջ 24։ Հետագա հրատարակության ժամանակ հեղինակը փոփոխել է հատկապես հետևյալ տողերը.

...Աստղիկը թույլ կրոգանա լկված՝
Եվ անկնուն՝ ճակատագրեն ավելի
...Դու, ո՜վ կաքավ, կարշնեղ արծիվ պիտ՝ ելլաս,
...Եվ թերևս հոն պիտ մեռնիմ (ինչո՞ւ չէ)։

21. «Արծիվներու կարավանը»— Առաջին անգամ տպագրվել է 1906-ին, «Շիրակ» հանդեսում, № 2, էջ 99։ Հետագայում հեղինակը էական փոփոխություններ է կատարել։ Օրինակ.

Եվ ռազմիկներն ամպի մը պես դալարդիր,
Լեռան կողեն կմոնչեն կսպառնան...

Մշակված օրինակում դարձել է՝

Եվ ռազմիկներն, ընձաղուծներ դարձած,
Ընդասկով ամեղամուռնչ վայրկյանին
Լեռան կողեն կմոլեգնին, կսպառնան...

ՀԵՔԱՆՈՍ ԵՐԳԵՐ

Առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսում, 1912-ին։

Մամուլում և գրական երեկույթներում «Հեքանոս երգեր»-ի շուրջը կարծիքների տեսական բախումը ներգրավում է ժամանակի գրական հասարակայնությանը։ Պարբերականներից մասնավորապես «Շանթ»-ը և «Հայ գրականություն»-ը հրատարակում են հոդվածների մի ամբողջ շարք՝ ընդհանրապես խիստ բարձր գնահատելով «Հեքանոս երգեր»-ը։

1. «Նավասարդյան»— Առաջին անգամ տպագրվել է 1914-ին, Դ. Վարուժանի և Հ. Սիրունու կազմած «Նավասարդ» գրական-գեղարվեստական տարեգրքում, իբրև հեքանոս նոսանքի էությունն արտահայտող նախաբան։ Վարուժանի «Երկեր»-ի սովետական հրատարակություններում «Նավասարդյան»-ը զետեղվել է «Հեքանոս երգեր»-ի սկզբում։ Ներկա հրատարակության մեջ պահպանում ենք այդ կարգը, քանի որ այդ քերթվածը, իրոք, այդ շարքի նախաբանն է։

12. «Վենետիկ»— Առաջին անգամ տպագրվել է 1909-ին, «Անահիտ» հանդեսում, № 3—4, էջ 70—71։

13. «Առաջին մեղքը»— Առաջին անգամ տպագրվել է 1907-ին, «Անահիտ» հանդեսում, № 1—2, էջ 32։ Ստորև բերում ենք բնագրից մի նմուշ, որը հետագայում էական փոփոխության է ենթարկվել.

Մերմակ կուրծքին մերկությամբ վրա երկարած
Սև մազերն իր, ներքինի պաշտոնով,
Կսևնային ավելի.
Ո՛չ մրտենին և հասմիկները գլխուն
Կթոշնեին՝ ոչ երգերն իր շրթունքին։

17. «Մեռած աստվածներին»— Առաջին անգամ տպագրվել է 1911-ին, «Անահիտ» հանդեսում, № 7—8, էջ 188։

19. «Հարճը»— Առանձին գրքով տպագրվել է 1966-ին, Հալեպում և 1977-ին, Երևանում։

21. «Լույսը»— Առաջին անգամ տպագրվել է 1909-ին, «Անահիտ» հանդեսում, «Աղբյուրը լույսին» (№ 3—4, էջ 70—71)։

22. «Առկայծ ճրագ»— Առաջին անգամ տպագրվել է 1910-ին, «Հողդար»-ում, № 5, էջ 1։

35. «Սիրտս է հոգնած»— Առաջին անգամ տպագրվել է 1911-ին, «Հողդար»-ում, № 1, դեկտեմբերի 17-ին։

40. «Դալար ճյուղը»— 1923-ին տպագրվել է «Նավասարդ»-ում (էջ 294)։ Խմբագրության կողմից տրված է հետևյալ ծանոթագրությունը. «Իր չորս հատորներեն՝ Մարսուններ, Ցեղին սիրտը, Հեթանոս երգեր, Հացին երգը,— դուրս մնացած շատ մը տաղեր ունի Վարուժան։ Այդ երգերը հավանաբար շուտով հատոր մը կազմեն «Կնոջս ալպոմը» խորագրին տակ։ Տիկ. Արաքսի Վարուժան—Արիկյան մեզ կտրամադրեն անոնցմե ութը, մեկ մասը անտիպ, մեկ մասն էլ պարբերականներու մեջ ցանված տարիներ առաջ։ Վեցը կհրատարակենք ստորև։ Դրանք են՝ «Դարձ», «Գուշակը», «Լոգանքեն վերջ», «Հմայքի աղբյուր», «Դալար ճյուղը», «Սպասում»։

47—51. «Լուսին», «Բարտիներ», «Աստղիկին», «Արքայից արքային», «Զոն»— այս հինգ քերթվածները նույնպես, ինչպես վերոհիշյալ վեցը, դուրս են մնացել 1912-ին Վարուժանի հրատարակած «Հեթանոս երգեր»-ից։ Դրանցից առաջինը առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի 1912-ի «Ամենուն տարեցույց»-ում, երկրորդը՝ Լ. Էսահանյանի «Դանիել Վարուժան» ուսումնասիրության մեջ, որ լույս է տեսել 1919-ին, Պոլսում, երրորդը՝ Մ. Պարսամյանի 1931-ի «Կյանք և Արվեստ»-ում՝ «Միլոյի Աստղիկին» վերնագրով, չորրորդը՝ Գահիրեի 1926-ի «Եգիպտահայ տարեգիրք»-ում, հինգերորդը՝ 1925-ի «Ամերիկահայ հանրագիտակ»-ում։

Ներկա հրատարակության մեջ, ինչպես նախորդներում՝ վերոհիշյալ քերթվածները զետեղված են «Հեթանոս երգեր»-ում, նկատի ունենալով դրանց հարազատությունն ամբողջ շարքին։ Այդ գործերը ցանկում դրել ենք «Կնոջս ալպոմը» խորագրի տակ։

ՀԱՑԻՆ ԵՐԳԸ

Առաջին անգամ առանձին գրքով տպագրվել է 1921-ին, Կ. Պոլսում, հեղինակի մահից վեց տարի հետո։ Գրքի առաջին երկու էջերում հրատարակիչները գրել են հետևյալ ծանոթությունը. «1915 ապրիլ 11, 24-ի շաբաթապտիկ գիշերվան ճիվաղը՝ որ պատահայ մտավորականության ոչ կյանքին և ոչ ալ ստեղծագործական որոնումներին խանձից, իր ճիրանները մխրճեց նաև Դանիել Վարուժանի դարակներեն ներս։

Տարված այլևայլ ձեռագիրներու կարգին էր պատրաստության մեջ եղող «Հացին երգը» զոր Եղեռնի և Աստելության այդ պաշտոնյաները չարախինդ զոհունակությամբ մը հափշտակեցին։

Կորուստը անխուսափելի էր, եթե անսպասելի զուգադիպություններ չնպաստեին անոր փրկության։ Գրաքննության մոտ ծառայող տխրահռչակ հայու մը անմեկնելի պատրաստակամությունը և, մյուս կողմե, կատարված որոշ զոհողություն մը հաջողեցան ետ խլել այս գործը՝ որ մասնավոր նվիրականություն մը կստանար հեղինակին նահատակությամբ։

Թերևս Վարուժան ժամանակ չէ ունեցած լրացնելու իր այս վերջին աշխատությունը, զոր, ինչպես միշտ, մասնավոր հոգածությամբ մը ծրագրած ու դասավորած է իր հոգիին խորը։

Թեև «Հացին երգը» նույնպես, ինչպես որ է, ամբողջություն կներկայացնե, բայց հավաքածուն պիտի պարունակեր նաև քանի մը լրացուցիչ քերթվածներ՝ որոնց վերնագրերը նշանակված գտանք բանաստեղծին գրպանի տետրակներուն մեջ, հետևյալ շարադասությամբ. Ալյուր, Ախառը, Թթխմոր, Փուռը, Հայրենի սեղան և Հացին երգը»։

«Մուսային»— Առաջին անգամ տպագրվել է 1913-ին, «Շող» հանդեսում, № 25, էջ 6։

«Արտերուն հրավերը»— առաջին անգամ տպագրվել է 1913-ին, նույն տեղը։

«Անգաստան»— առաջին անգամ տպագրվել է Լ. Էսահանյանի «Դանիել Վարուժան» ուսումնասիրության մեջ և քանի որ իր բնույթով հարազատ է «Հացին երգը» շարքին՝ ինչպես նախորդները, այնպես էլ մենք դնում ենք այստեղ։

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ազատ— բուռ, ափ
Ազազուն— չոր, վտիտ
Ախերոն— Աքերոն առասպելական գետը։ Երբեմն՝ դժոխային
Ակութ— կրակ պահելու տեղ, օջախ
Ակոապլիկ— ատամները թափած
Անիպարան— ահեղ պարանոցով, վիզը խրոխտորեն պարզած
Աղարծի— մատղաշ, մատաղահաս
Աղամաղ— ծուռումուռ, շեղված
Աղեբախ— աղիքներից շինված նվագարանի լարերին բախելով հնչեցնելը
Աղերեկ — ալեխառն, ալիքանման մաղ՝ բաշ, մորուք
Աղծապիղծ— կեղտոտ, պղծված
Ադկիոն— ծովային թռչուն, ձկնկուլ
Ադոբկեր— աղոթող, աղոթարար
Անռել — տրորել
Ամա— ամայի
Ամազան — քաջ, խիզախ կին։ Առասպելական ամազոնուհի
Ամբարձ— վեր բարձրացած
Ամբուսք— ամպրոպ, փոթորիկ
Ամենազեղ— ամեհի և գեղեցիկ
Ամոթլյած — ամոթխած, ամաչկոտ
Այպանք— ամոթանք, նախատինք
Անարգել— ստիպարի, անճառելի
Անգայտ— նոսր, ցանցառ, նոտրք
Անդ— հանդ, դաշտ

Անդեղյա — դեղթափ, ցավի և թույնի դեմ եղած դեղ։ Հակաթույն
Անդեռդ— հովիվ, տավարած
Անդույr— անդորր, հանգիստ, խաղաղ
Անբրոց— թոնրի և հնոցի կրակի խառնիչ
Անձկավ— կարոտով, անձկությամբ
Անձնյա— փարթամ, թիկնեղ, մարմնեղ
Անճառ— անպատմելի, անթարգմանելի, անասելի
Անճիազ — անկարոտ, անկարիք
Անոպա— կոպիտ, բիրտ, տմարդի
Անուղղա— անուղղելի, ծուռ
Անպատում— անպատմելի, անասելի
Անպարագիծ— լայնածավալ, չընդգրկվող տարածություն
Անպարույr— անպարագիծ, անսահման
Անվեr— վերք չունեցող, չվիրավորված
Անֆույթ— հանգիստ, խաղաղ
Աշտանակել— ոստյունով ձիու վրա բարձրանալ՝ հեծնել
Աշտե— երկարակոթ նիզակ
Ապալեr— ամայի, մերկ, լերկ
Ապաժույժ— անտանելի, թափված արյուն, արյունահեղություն
Ապշոպ— խլել, շորթել, հափշտակել
Առաքուr— ոտքի տակ տալով, կոխկորտելով
Առիշեղ— շեղակի, շեղորեն, թեք
Առխթել— խթելով, հրելով առաջ մղել
Առլեփ— զառիվայր, թեքություն
Աստղաճեռ— աստղավառ
Ասպարr— վահան
Ավելածու — ավլող
Ատակել— կարողանալ
Ատոֆ— հասուն, լեցված հասկ
Արաղչի— թեթև բարակ գլխարկ
Արբշիռ— արբած, հարբած, զեխ, շվայտ
Արդբեկեց— տեգահար, տեգի զարկից ընկած
Արյունատողիֆ— արյունախառն թուք
Արտալած— հալածված, դուրս քշված
Արտախուրել— պսակել
Արտասr— արցունք
Արքենի— արքայական, հաղթանդամ, փառահեղ

Բ

Բատուց— տան ներսի պատին կից կիսապատ, որի վրա ամաններ են շարում
Բալիշ— հաղթանակի համար տրված պարգև, զարդ (Իրանում, Թուրքիայում)
Բաղրջուկ— ուտելու կանաչ բույս, փիփերթ

Բամբիշ— պալատական կին, թագուհի
Բայաց— գազանների և սողունների որջ
Բանդագուշանք— ցնորում, զառանցանք, գլխին զոռ տալ
Բատա— բախտ, երջանկություն
Բարուանակ— ճյուղ, ոստ
Բդեշխ— սահմանապահ կուսակալ
Բեկտել— կոտորել, կտրտել, խպառ փշրել
Բժժանք— դեղ կամ իր, որ եթե մարդ կրեր՝ ազատ կմնար հիվանդությունից, աչքով տալուց։ Հուռութք, կախարդության, վհուկության
Բժան— աղոտ տեսնող, ճպրոտ աչք
Բլչակնած— աչքը մթագնած
Բուծ— ծառի բնի և ճյուղերի միջի հյութ
Բյուրաղի— բազմալար
Բումբ— սրունքի մտոտ մասը
Բունծ— հողի կոշտ
Բուստ— մարշան
Բվինակ— բուի մի տեսակը, բվեճ
Բրաքիոն— դափնի, հաղթության պսակ
Բֆազրավ— բքամահ, բքից խեղդված

Գ

Գաղափարապաշտ— ըստ արևմտահայերենի՝ իդեալիստ
Գաղտնամես— գաղտնապահ, խարդախ
Գանգյուն— թնդյուն
Գելոց— գործիք, որով տանջարանում պրկում, ճնշում են մարմինը
Գենենամոունշ— դժոխային մոունշ
Գեղոն— գրական մի ձև արևմտահայերի մոտ, գովք, ձոն և միաժամանակ բալլադ
Գեղարդ — փայտե կոթով սուր զենք, որի ծայրին ամրացած էր տափակ կամ եռանիստ երկաթյա տեգ
Գեղուղեշ— գեղեցիկ ճյուղերով
Գեշ— թաց, խոնավ
Գերերին— սև կեղևով համեղ սունկ
Գերփված — ավերված, քարուքանդ եղած, կողոպտված
Գիճ, գիճի — փշատերև թուփ, որի պտուղները գործ են ածում իբրև խունկ
Գին— ոչխարի հոտ
Գիրգ— փափուկ, փափկասուն, քնքուշ
Գլեր— գլորել, քաշել
Գոռեխ— իշամեղու
Գոլատ — գոլ, տաքուկ
Գարգոնա— դժոխքի կատաղի կին
Գուճ— ծնկների ծալք

Դուշ — փայտե փոքրիկ աման
Դուպար— կռիվ, մենամարտ, մրցություն
Դռեն— փողոց
Դրգանք— գուրգուրանք, գգվանք, փափկություն
Դրգարան— գուրգուրանքի տեղ

Դ

Դանամունք— նվեր, ընծա, կաշառք
Դանճակ— կանաչ, դեղին, թանկագին քար
Դաշխուրան— թաս, կոնք
Դառնակոշկոճ— սաստիկ շարդված, խոշտանգված
Դաստապան— թրի կոթ
Դաստառակ— թաշկինակ, մաքուր կտավից երեսսրբիչ
Դարալիր— փարթամ ու առատ մազեր
Դափր, դափրել — ձիու ոտքի դոփյունը, քառատրոփ արշավել
Դեղեուն— դողդոջյուն, երերուն
Դենպետ— կրոնապետ, զրադաշտական կրոնի պետ
Դետ— գիտող, հսկող, լրտես
Դլփին— դելֆին, ծովային կաթնասուն կենդանի
Դվարած— տավարած, հովիվ
Դրուժան— ուխտադրուժ, խոստումնազանց։ Դավաճան, խարդախ
Դժնիկ— մի տեսակ փուչ
Դժպնի— տհաճ, անախորժ
Դիմամարտ— հակամարտ
Դիրտ— մրուր
Դիցանույշ— [illegible] հավերժահաճոտ, սատվածուհի
Դիք— հեթանոսական աստվածներ
Դյար— գյուրին, հեշտ, թեթև
Դշխո— խլխող կին, թագուհի, տիկնանց տիկին
Դռայք— արշավ, գրոհ, խուռներամ շարժվել
Դռասանգ— թարմ ոստերից ու ծաղիկներից պատրաստած հյուսակ, որով զարդարում են դռները, պատուհանները, պատշգամբները

Ե

Եղիճ— փշախոտ
Եղկ— գաղջ, գոլ։ Եղկելի, խղճուկ, թշվառ, ողորմելի
Եղեռդ— եղնիկի ձագ
Եռանգնանարհ — եռանգագին հորձանք տալ
Երագ— արագ, շտապ

Երազազ— կենդանիներ բռնելու ցանց
Երաստան— նստուկ, նստատեղ
Երբուծ— լանջի, կրծքի միսը
Երեսակել— երեսը պատել, ծածկել
Երեքարձիկ— երեք սուր ծայր ունեցող, եռաժանկ
Երկնապող— դեպի երկինք սաստիկ սլացող

Զ

Զազրաբորմի— գարշելի, զզվելի, նողկալի
Զանեղած— զարհուրած, սարսափած
Զաղփաղփ— խախուտ, խարխլած
Զամբուռ— իշամեղու
Զանակ— ոսկեփոշի
Զառոքաշ — ոսկեթել, ոսկեկար հանդերձ
Զարմիկ— ազնվացեղ
Զգայազիրկ— զգալու կարողությունից զուրկ
Զգայռել— զգվել, որձկալ
Զոշամաղ— դրամաշորթ, ագահ, այլանձակ
Զոփալ — դողդողալ, դողալ։ Ծփալ, ծփանքով շարժվել
Զոփի — պար, ոտքերով գետինը դոփելով

Է

Էլի լամա— (հրեերեն) ասված ինչո՞ւ
Էլվայս— առյուծամազիլ կոչված ծաղիկ

Ը

Ըզգլխանք (զգլխանք)— արբեցում
Ըղաբույս— բնածին, բնատուր
Ըղարմ— թմրած, անզգայացած
Ըղեռլով— իրար հետ դարձող, պտտվող, հոլովվող
Ըղուլեել — վիզը ոլորելով հաղթահարել
Ըղոգեած— շոքած, ծունկի եկած
Ընկերվար— սոցիալիստական
Ընկլուզել— խորասուզել, ընկղմել, շրասույզ անել, խեղդել
Ընշատուկ— ունչը՝ քիթը ծռմռող, ծամածռվող (կապիկների մասին)
Ըսբար (սբար)— ձիու թամբի ծոպավոր ծածկոց

Ընպծանի (ապծանի) — գոգնոց, առջևը կապելու լաթ
Ընաեեր (ասեեր) — սրինգներ

Թ

Թաթի ի թաթալ — թաթից թաթ, ձեռքից ձեռք
Թալթել — այս ու այն կողմ նետել, թապլտվել, Թալկանալ, նվաղել
Թանալ — թրջել, թաթախել
Թասուն — հևացող, շնչարգել
Թաքթաքուր — պահվռտելով, թաքնվելով, գաղտնի
Թավարծի — թավամաղ, բրդոտ
Թեռ — չուխայե կամ բրդե թել
Թենակ — թիկ, նավարկության թիակ, ձող
Թերաթափ — կիսով չափ թափված
Թերափ — տան կուռք, բժժանք
Թերամամ — անկատար, թերի, կիսով չափ, կիսաբաց
Թիարան — տաժանակիր աշխատանքի վայր
Թխայրաց — հրդեհից, ծխից սևացած
Թնծկալ — կնծկնծալ, կաղկանձել, լացը զսպելով հեկեկալ
Թյում — անուշահոտ բույս, ուրց
Թանուտ — թաց, խոնավ
Թունել — թունավորել
Թրան — շաղվելը, հունցելը՝ ալյուրի, մոխրի
Թրած — թրով խլված, առնված

Ժ

Ժանր — թույն
Ժանեղ — մեծ, ուժեղ ժանիքներ ունեցող
Ժանեռաժուտ — ժանտից ժանտ, դաժանից դաժան
Ժմեռա — հանդուգն, լիրբ
Ժռռատ — ատամները թափած
Ժույժ — համբերության ուժ, ժուժկալ

Ի

Իլանձ — իլիկաձև
Իպլիս — ըստ արաբների՝ չար ոգի, սատանա
Իսկունի — թագուհի, տիրուհի, աստվածուհի

Լ

Լախուրտ — լախտ
Լայնափեռեկ — լայնորեն պատռված
Լերկակարկառ — մերկությամբ դեպի վեր ցցված, կարկառուն
Լզվռտիլ — շարունակ լվզել
Լծրնկեց — անհնազանդ, ապստամբ
Լկամ — սանձ, երասանակ
Լկտալ — թուլանալ, կախվել
Լման — լրիվ, ամբողջապես
Լմել — ճմլել, տրորել
Լյուղ — լող
Լոդիկ — թիկնոց, վերարկու
Լոմա (լումա) — դրամական ընծայաբերում՝ իր ուժերի ներածի չափով
Լոռ — շրային կանաչ, գորտնբուրդ
Լույծ — հեղուկ, հոսանուտ
Լուսածդի — լուսաթև, լուսաբազուկ
Լուտաս — լատոս, սպիտակ ծաղիկ

Խ

Խազմուզ — նոր քաշած գինի
Խախամ — քայքայվածություն, փտածություն
Խան — խորտիկ, համադամ կերակուր
Խայր — պտուղ, բերք, ընծա
Խանքուտ — ծոպ
Խառել — ոլորելով պոկել
Խար — չոր խոտ
Խարակ — հողակոշտ, հերկված արտի մեջ չհերկված հողակտոր, խութ, ժայռ
Խարտ — արու ձի կամ էշ
Խեեշ — լկտի, լիրբ, անպատկառ
Խեշակ — նեցուկ, խշմար
Խեռ — անհնազանդ, ըմբոստ
Խեփոր — խեցեմորթիների պատյանը
Խլա — պատմուճան
Խլատեռ — թանկ քող, շղարշ
Խնում (Վարուժանի երկերում) — գանգուրները սատրիկ թրջած
Խնծիղ — ուրախություն, հրճվանք
Խեռլ — խցկել, գոցել, սեղմել
Խոլորձ — խոտաբույս
Խոշյուն — խշշոց, սոսափյուն
Խոշոշել — խոշխոշելով սպանել, մորթել

Խոպալ— հարձակման մղվել, միանգամից հարձակվել
Խոտել — արհամարհանքով դեն գցել, երես դարձնել, անարգել
Խոտորնակ— ծռված, շեղակի։ Թյուր, սխալ։ Հակառակորդ, ընդդիմացող
Խորգալ— խռռալ, խառանչել, փնչալ
Խարխ— օձի շապիկ
Խարխալ — ճաքճքած
Խորհրդապաշտ— սիմվոլիստ
Խույր— թաց
Խուռնախիտ— շատ խիտ, խիտ կերպով խռնված
Խուսող— խուսափող
Խախտացնել — խոռոտ տալ, գրգռել
Խրախ— խրախճանք, կերուխում, խնճույք

Ծ

Ծարիր— այքը քաշելու սև դեղ, սուրմա
Ծեծեհում— կոտրտվել, կոտրտվելով նաղ անել
Ծյուրախտ— թոքախտ

Կաճ— կարասի, տնային շարժական ինչք
Կամշոտ— քմահաճույքներ ունեցող, տրտնջոտ
Կայք — ուրախ ցատկոտել։ Պարելը, պար
Կայտռել— ուրախ, աշխույժ վազվզել, թռչկոտել, ցատկտալ
Կապելա— գիներտուն, պանդոկ
Կառ— փշատերև բույս, կանկառ
Կառանչ— գոչ, կռինչ (թռչուններին)
Կասկել— մեքենայի հարվածից մարմնին պատճառված խանգարում, ուղղարում
Կավշեվետ — կենսահյութ, ավիշ է տալիս
Կարկաճ— ասեղնագործելու մեքենա, դազգահ
Կարկաուռա— նավակ
Կարմրաշառայլ— կարմրաշող, լուսահորդ
Կարմրավերտ — կարմիր գույնի հյուսվածք, կարմրազրահ
Կարշնեղ— ջղուտ, մկանուտ
Կենեզուտ— կյանքոտ, առույգ, զվարթ, կենդանի
Կկել— հյուսել, նյութել, գործել
Կզկաթ— կարոտագին, կաթոգին, խանգակաթ
Կիզանուտ— դյուրավառ։ Կիզիչ, այրող
Կինամոն— դարչին
Կինճ— վայրի խոզ, արու վարազ
Կիպերյան— կիպրոսյան, կիպրոսցի

Կլափ— երախ, ծնոտ, կզակ, դունչ
Կկոց— մագոգ, ոստայնակի գործիք
Կյուս— կախարդանք, հմայք
Կնգուղ— սրածայր գլխարկ
Կնյուն— ուղիղ և ճկուն բույս, որից փսխաթ են գործում
Կոնդակ— կաթողիկոսի պաշտոնական գրություն
Կոնտալ (գոնդալ)— փոքրիկ մակույկ, որով համփորդում են վենետիկի ջրե փողոցներով
Կոնֆ— տաշտ, լագան
Կոշարտ— խունկ պահելու ման
Կոշկոնված— ծեծված, խոշտանգված
Կոշկոռ— հողի կտոր, կոշտ
Կոչնակաև— հյուր, հրավիրյալ
Կոչունք— հյուրասիրություն
Կորդակ— սաղավարտ
Կուզ— խաղողի ողկույզ
Կուբ— այգեկութ, խաղողաքաղ
Կուն— մարմար
Կումբ— վահանի մեջտեղի ուռուցիկ մասը, պորտը
Կուր— մակույկ
Կուրտ— կտրած, ներքինի
Կաղուց— տուփանք
Կտտանք— մարմնական տանջանք, խոշտանգում
Կրկնոց— վերնազգեստ, վերարկու

Հ

Հազ— կուշտ
Հազածո (յազածո)— կուռքերին զոհված
Հալվե— խեժ, խունկ
Հակեիռ — մի ոտքի վրա ձգվելով և լսողությունը լարելով
Հաղթաժեռ— վիթխարի՝ հսկա, վիթխարահսկա
Համբարտակել — բարձրանալ ամբարտակի՝ բարձունքի վրայով, թռչանալ
Համբարու— տնային ոգի, դև, հուշկապարիկ
Համբուն — համակ, ամբողջ, ամբողջապես
Համեճալ— հապաղել, ուշանալ, դանդաղել
Համարեն — բոլոր, բովանդակ, ընդհանուր
Համպարե — համպար (յամպար)— անուշահոտ թուփ, որից անուշահոտ յուղ ստացվում
Հայեկ— նայելու տեղ, դիտարան
Հանգունակ— նման
Հանգրճել— քղանցքը ամփոփել, թևքերը քշտել
Հանի— մամ, տատ

Հաշտարարոտ (յաշտարարոտ) — նախանձոտ, խանգոտ
Հարաղ— երեսի ծածկոց, քող
Հանկարծուտ— լեցուն հասկ
Հասպիս— շողափայլ հանքատեսակ, ծիածանաքար
Հաստիչ— ստեղծող, հաստատող
Հաստույր— ուժգին, սաստիկ
Հարկիք— մի լուծ եզ, ամոլ
Հափափում— հափշտակություն, առևանգում
Հելուզված— հյուսված
Հեղ— անգամ, մի անգամ
Հեղակարծ (յեղակարծ) — հանկարծ, անակնկալ
Հեղգալ — ծուլանալ, ժրությունը, աշխույժը կորցնել
Հեգց (յեղց)— լի, լեփլեցուն
Հենասանոր— գործելու ատամաձև գործիք
Հեռ (յեռ) — մոտեմոտ շարված, հյուսված, գամված
Հեսկ— ոտքի փաթաթան։ Բրդե հագնելիք, որ հագցնում են ոտքին՝ կոճերից մինչև ծունկը
Հեստ, հեստի— անհնազանդ, ըմբոստ
Հեստակողմ— եռևի կողմը
Հերատուկ— անամոթ, պոռնիկ
Հերձակ— սլաք, նետ
Հերյուն— բիզ
Հեցած— հենած, կոթնած
Հիազարհուր— հիանալի և զարհուրելի
Հիռ— ման գալ, պտտել
Հիր— կարմիր, ծիրանագույն
Հիրիկ — եռագույն ծաղիկ, եռագույն մանուշակ
Հյուլ— հյուլե, ատոմ
Հոգեղեռ— հոգին տեսնող, կռահող, վերլուծող
Հոգեխիլ— հոգուց խլված, առնված
Հոմա— սրբազան խմիչք՝ ըստ զրադաշտական պարսիկների
Հոյն— հոն
Հոսեան— հոտավետ, անուշահոտ
Հուլարեն— ծուլորեն, դանդաղորեն
Հույլ— խումբ, բազմություն։ Փունջ
Հույր — գեր, պարարտ
Հուռութ — կախարդանք, չար աչքից հեռու պահող զորություն, հմայիլ
Հուսկ— վերջին
Հրմազ— հրամազ, ոսկեմազ
Հռաել (յռաել) — ճյուղը կամ վազը կտրել

Ձ

Ձար— մազ՝ ձիու պոչի, այծի միրուքի

Ղ

Ղազել — ծածկել, գոցել, պահել, թաքցնել

Ճ

Ճանճնչավուխտ— փայլուն, գույնզգույն
Ճամուկ — գույնզգույն, խայտաբղետ
Ճապուկ— ճկուն, դյուրաթեք
Ճապատ — մագիլ, ճիրան
Ճարակում— տավարի արածելը
Ճեռ— զավակ, սերունդ
Ճիզմ— մատղաշ, դեռաբույս
Ճղուղ— անվի շառավիղ
Ճոչ, ճոչան— գրահ, լանչապանակ

Մ

Մագլել— մագլցել
Մագիրիճ — հոգեվարքի վերջին բոպեն
Մալ— հարստություն, ունեցվածք։ Տավար, ապրանք
Մաղսխ— կաշե տոպրակ
Մախանք— ներքին չարություն, նախանձ, խանգ
Մախիզ— զվվելի, գարշելի, գանելի
Մախր (մարխ)— վառելու յուղոտ փայտ
Մածան— մածուցիկ, կպչուն
Մամաց— նոր մարտածը ատամոքսի մեջ
Մամուկ— ատրպ
Մայա (ճուն.)— կախարդություն, ցնորքի և երազի ատելածություն
Մարգարտանեռ— մարգարտաշատ, մարգարտազարդ
Մարդակ— տանիքածածկ, բարակ գերան
Մարեռնի— մաքրափայլ, հստակ
Մարման— թաշկինակ, սավան
Մեծդի— մեծ, խոշոր
Մեկոն— խաշխաշ, հաշիշ
Մեղեսիկ— սուտակ, ամեթիստ
Մեսնիա— մեհիտ, մզկիթ
Միանդայն— բոլորը մեկ, միակտուր, միաժամանակ
Միանգեղ— մկանուտ, գեղեցիկ մկաններով
Միանդխաղ— նիզակախաղ, ձիավազք
Մղեղ— հարդի մանրուքը, փոշին
Մղձուկ— խեղդուկ

Մոլեգնադուլք— մոլեգին կերպով գրոհ տալ
Մոլոշ— բաղրջուկ, փիփերթ
Մոծիր— մոխիր, կրակի կայծ
Մորճ— դալար կանաչ
Մորմ— մորմենի, մորենի, շան խաղող
Մարուկ— իշի կամ ձիու քուռակ
Մուեզզին — մահմեդական աղոթարար, աղոթքի կանչող
Մույք— հենարան, նեցուկ
Մուշկ— անուշահոտ յուղ

Ն

Նախճիր— կոտորած, արյունահեղություն
Նամետ— թաց, խոնավ
Նայադ— գետի և ծովի հավերժահարս
Նայուճի— հավերժահարս
Նաշիճ— մանր ու մաքուր ալյուր
Նավասարդ— ըստ հին հայկական տոմարի տարվա առաջին ամիսը
Նարոտ— գույնզգույն թել, հյուսվածք
Նենգժոտ— նենգության մեջ վարպետ, չարամիտ
Նեռ— այն ոգին, որը վերջ է բերելու աշխարհին
Նժդեհ— օտարական, թափառական, եկվոր
Նիրվանա— ըստ հնդիկների՝ երանության, մոռացության աշխարհ
Նկան— բլիթ, հացի տեսակ
Նշավակ— նախատինքի առարկա
Նշկանում— անհնազանդություն, ապստամբություն
Նշողյուն— փայլող, շողշողուն
Նոթի— անոթի, սոված
Նուս— կոնակ, թիկնամեջք (եզան և ձիու)
Նուսխա (արաբ.)— համաչափ, հատուցք
Նվարտան— ծածկոց

Շ

Շաղաշույտ — ցոփ, ցանկասեր, անառակ
Շաղղակեր— հում-հում ուտող, գիշակեր
Շամբուշ— մոլեգնորեն կրքոտ, պագշոտ
Շանսխուր— պոռնիկի վարձատին
Շառ— թունդ կարմիր, բոսորագույն լույս
Շառայլ— ուժեղ, պայծառ լույս, շող, ցոլք, ճառագայթ
Շառափնթափ— լույս թափող, շողարձակ
Շափուլյա— կապույտ, թանկագին քար

Շերտափակ — շերտերով, ցցերով փակած, փայտե ցանկապատ
Շշլալ— շառաչել, ֆշշալ
Շինատա— արաբական տատ, որի ձեռագիրը նման է աղեղի
Շլմորուն— վարանած, շփոթված, իրեն կորցրած
Շմար— շփոթ, աղմուկ, գժտություն
Շողիք— եզան բերանի լորձունք, թուք
Շոպել— ձեռք գցել, հափշտակել, կորզել
Շրուշակ— ձիու բերանակապ, սանձ
Շրջկեն— պտտվող, թափառող, շրջուն

Ո

Ոգար— կռիվ, պայքար
Ոլոռն— պատուտակ, բույս, գլուլ, բակլա
Ոլորակել— ոլորելով ներդաշնակ ձայն հանել, երգել, նվագել
Ողիկ-ողիկ— հունգուր հունգուր լաց լինել
Ոնտեռ— տրորվելուց մեջքի վրա գոյացած վերք
Ողոքել— աղերսել, աղաչել
Ոպնիազ— սև, ամուր տեսակի փայտ, եբենոս
Ոսիկ— վտիտ, նիհար
Ովանենա— ցնծության բացականչություն, կեցցե
Ուռա — ցորենի կամ գարու կապած խուրձ

Պ

Պախարց— սանձ
Պակուցում— վախ, սարսափ
Պանլավուն— պահլավ ցնցից տերված, վարուժանի մոտ՝ զարմիկ
Պաղլեղ— քիմիական աղ, շիբ
Պասմա— լիթ
Պասուք— ծարավ, պապակ
Պատրուն— պատրող, պատրանոտ
Պատրիկ— ազատանի, ազնվական՝ հին Հռոմում
Պարարակ— պարարտ, գեր
Պարեխ— ժայռի կտոր, ցցվածք
Պերճասասարդ— պերճ պարանոց ունեցող, Ցիսաքանչ պարանոցով
Պլշկիլ— կեղտոտվել, աղտոտվել
Պոնչյուն— եզան, գոմեշի բառաչ
Պշնուլ— զարմանալ, շվարել
Պորտաքար— լողաքար բաղնիքում
Պորփյուր— կարմրագույն քար

Գուղել— ցրվել, ջրել, վանել
Գուպրիկ— խաղատիկնիկ
Գրիսմակ— պրիզմա
Գրտու— ճահճային բույս, եղեգնաբույս

Ջ

Ջախել— ջախջախել, փշրել
Ջաղրել— հորդ անձրև տեղալ, տեղատարափ
Ջամբել— կերակրել, սնել
Ջայլ— բազմություն, մեռելի վրա լացող կանանց խումբ
Ջանջիլ— կտավի ազնիվ տեսակ
Ջով—ընձյուղ, խոտից ոլորած առասան, որով զամբյուղ են գործում։ Փունջ, տրցակ
Ջորդան— ջրորդան, խողովակ

Ռ

Ռան— ճանապարհ
Ռանվիրա— ճանապարհ բացող, հարթող
Ռեդիճ — դալուկ, դալկագույն
Ռոշճական— լուսավոր, պայծառ

Ս

Սադուռն—(Սատուրն)— հին հռոմեական Սատուրն աստվածը՝ ժամանակի և պտղաբերության։ Սատուրնյան տոն — շվայտության, ցոփության, սանձարձակ ուրախության, վայրագ դիներրության օրեր
Սադրանք— վատ արարքի դրդելը, թելադրելը, չար խրատ
Սալացած— պաղած, քարացած
Սալար— զորապետ, զորահրամանատար
Սակր— տապար, կացին
Սաղապ— շարժուն, երերուն։ Փոփոխամիտ
Սան— պղնձյա կարաս
Սատան— սատանա, չարք
Սատրապ— կուսակալ, բռնապետ, բռնակալ
Սարբինա— խեչակ, խաղողի որթը բարձրացնելու նեցուկ
Սարդենի— դափնի
Սարիմ — չվան, շղթա
Սեղեխ— սիրեկան, տարփածու
Սեպուհ— ասպետ, ազնվական

Սլականը— ջրային խեցեմորթու մի տեսակ
Սկուտ — սկուտեղ, սկավառակ, պնակ
Սնգույր— գեմքի շպար
Սնդուս — գիպակ, նուրբ կերպաս
Սարատան — հոսուն, հոսանուտ
Սրտուկ— ծառի, բույսի մեջ սպունգանման թեթև ու կակուղ նյութ, միջուկ

Վ

Վայրոնակ— վայր հակած, գլխիկոր
Վանի— բյուրեղ
Վատախտարակ— թշվառ, չարաբախտ, անբախտ
Վարազանավ — անգղների ցեղին պատկանող թռչուն
Վարգել— սրընթաց վազել, սուրալ
Վարմ— թակարդ, ցանց, որոգայթ
Վարշամակ— գլխի և երեսի ծածկոց
Վարուժան— արու թռչուն
Վարուժնակ— արու թռչնակ
Վեստ— ազնվական տոհմից ծագած
Վերա — մեռաղալարից հյուսված ցանցավոր զրահաշապիկ
Վերոված— վերտով զրահավորված
Վզան— վիզը տնկած, բարձրավիզ
Վիզ — օգնական, զորավիգ։ Ջ. (բուս.) գյուղուլ
Վիժանուտ — առատորեն ցած թափվող՝ տարածվող (Վ. վարսերը)
Վիմուտ— քարքարուտ, ժայռուտ
Վին — երաժշտական գործիք
Վկա— կրոնի համար նահատակված մարդ, նահատակ, մարտիրոս
Վկանդել— հաղթել, տիրել, ընկճել
Վսեր— հանդուգն, լիրբ
Վրիժակ— վրեժխնդիր, վրիժառու

Տ

Տափանակ— տուփ, գանձանակ, սրբության անոթ
Տարատա— փռված, ընկած, մեռած
Տառատակ — յափնշի, հովվի թաղիքե վերարկու
Տարմ— խումբ, երամ
Տարփ— տարփանք, սիրո կիրք, տոփանք
Տարփանեղն— տոփանքի, կրքի մեջ խեղդված
Տեատես— այն կինը, որն ունի դաշտանի մշտական արյունահոսություն
Տիսեռ— կոկորդիլոս
Տիեղծ— ալյանդակ, ոգեղ

Տկնոր— տիկ, նվագարան (պարկապզուկ)
Տզրնդեր— փորը ուռած, տռուզ, տռզած
Տմույն— գունատ, դժգույն
Տոռն— չվան, թոկ։ Կապանք, շղթա
Տռամ— դրամա, դրամատիկ, վիճակ
Տրմուղ— դժվարքասանձ,, անվարժ կենդանի

Ր

Ռաբբի (հրեական) — ուսուցիչ, ուսուցչապետ, վարդապետ
Ռաբունորեն — ուսուցչի պես, իմաստունի պես

Ց

Ցաքել — ծագել
Ցանգ— ցանկություն, տենչանք
Ցնծամույն— ցնծության մեջ խեղդված

ՈՒ

Ուծացնել — օտարացնել, խորթացնել
Ուղխ— ջրի հոսանք, վազող առատ ջուր
Ուղփաճեմ— լուսավոր, երկնային
Ումպետ— փուչ, անպիտան
Ույծք— բացվածք, ճեղքվածք
Ունշ— քիթ
Ուռնակուռ— կռանով կոփված, շինված
Ուռնահարդ — կռանով հարդարած, ուղղած
Ուսրեղանուք— ուսից մինչև թևի, անուքի տակ
Ուրար— ժապավենաձև կտոր, որ սարկավագները կրում են ձախ ուսի վրա եկեղեցիներում, սպասարկության ժամանակ
Ուրվազ — զորեղ, ուժեղ
Ուռֆազ — դժնի, գժնդակ

Փ

Փաղփուն— փայլուն, պսպղուն
Փայլար— փայլուն բյուրեղաթերթ, հանքային քար
Փանամ— չնչին, անպետք, փուչ

Փանդիռ— երեք լարանի նվագարան
Փապար— խոռոչ, քարանձավ, ավերակ
Փառփառ— վառվռուն, զվարթ
Փեղույր— գլխարկ՝ տղամարդու կամ կնոջ
Փեռեկաթել — պատառել, ճեղքռտել
Փողփողէր— փայլփլելով իջնող
Փոսապեղ— փոս փորող, պեղող
Փոսուռա — կայծոռիկ, լուսատտիկ
Փսոր— փշրանք
Փցուն— անպետք, պակասավոր, պիղծ
Փֆին— նետ
Փֆուռույց— քամուց ուռած, փքված

Ք

Քաղցու— նոր ճմլած խաղողի հյութ, գինի, մանաղ
Քայռ— մանյակ
Քանասար— կատաղի գայլ
Քարք— թոնավոր սև օձի մի տեսակ
Քարձ— անմազ, գոշ, մորուքը ցանցառ
Քեզի— կառքի, սայլի, արորի երկար ձողը։ Նավի ղեկ
Քիմուխտ— ողորկ, բարակ կաշի
Քրքում— աչքի թարթումն
Քիրտ— քրտինք
Քնքնած— դզզած, ծվատած
Քմածին— կամայական, քմահաճ
Քմպարար— քիմքը գրգռող, գիտցնող, պարուրող
Քնքանց— օձի կամ փղի կնճիթի գալարումները։
Քոզեմ— ձեռքի ապարանչան
Քրեիքուր— վատորեն, նենգորեն
Քրքում— զաֆրան, շաֆրան, անուշահոտ ծաղիկ

Օ

Օրեկ— հնացած
Օշնան— մի տեսակ բույս, որի արմատից փրփուր է ստացվում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԻԱՄԱՆԹՈ

Սիամանթո (Ատոմ Յարճանյան)—Հ. Գ. Ռշտունի 7

ԴՅՈՒՅԱԶՆՈՐԵՆ

Հույսին ճամփան 21
Աստվածացումը 24
Արշալույսները 26
Ճակատամարտը 28
Հաղթանակեն հետո 31
Հանգրվանը և վաղորդայնը 32

ՀԱՅՈՐԴԻՆԵՐ

Ա. և Բ

Դարերու վրեժ 35
Հողին ձայնը 37
Զգուսին թափորը 42
Անդրանիկ 46
Աղբյուր Սերոբ Վարդանյան 47
Երիմյան Հայրիկ 51
Կովկաս 54
Ահաբեկիչներ 57
Մենախոսություն 60
Ատելության կոչ 63

Գ.

Որբերու ճակատագրեն 68
Սովամահ 71
Բանտերուն խորերեն 76
Կախաղաններու կատարեն 80

ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՋԱՀԵՐ

Մահվան տեսիլք 83
Ավերումի գիշեր 84
Թաղում 86
Արյուն 86
Ափ մը մոխիր, հայրենի տուն 88
Հիշատակ 89
Գթություն 91
Անդրշիրիմյան աղաղակ 91
Մեռելոցի օր 93
Արյուն է որ կտեսնեմ 94
Հոգնություն 96
Հայրենի աղբյուր 98
Արցունքներս 99
Ձեռքերդ ինձ երկարե 100
Խավար 101
Ծարավ 102
Ես երգելով կուզեմ մեռնիլ 103
Սուրիս կայծերուն առջև 104
Հույսին համար 106
Ասպետին երգը 108
Ջարշարանքի երազ 115
Հոգեվարքի իրիկուն 116
Աղոթք 117
Հանգստի իրիկուն 118
Գիշեր մը 120
Հոգիս 122
Մահերգ 123
Որբերը 125
Քնարիս լարերը դեռ թաց են 127
Գաղափարին 128
Ջարշարանքի տեսիլներ, Ուրվականները 129

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԵՍ

Սուգ 132
Գարը 134
Քավություն 136

Զավակը 137
Ղոգանքը 139
Դաշունը 141
Խալը 144
Իրենց երգը 146
Կուլրը 148
Թթենին 151
Խեղդամահ 153
Հաղթանակ մը 155
Բնության լացը (Սիհուն) 158

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՎԵՐ

Հայրը հոգեվարք 162
Հարսին երազը 164
Ծղրարդն իր եղբոջը 165
Մոր մը երազը 166
Կաղանդի խրիկոն 168
Սեր 170
Գերեզմանները ապաշավ 171
Մայրը իր զավակին 173
Առաքյալը 174
Որդին իր հոքը 175
Այցելութիւն 176
Հայ դաշտերուն պաղատանքը 178

ՅՈՒՐԲ ՄԵԱՐՈՑ

Ներբողական 180
Սուրբին աղոթքը 182
Տեսիլքը 185
Գյուտին փառքը 185

ԿԱՄՔԻ ԻՐԻԿՈՒՆՆԵՐ

Ա. Խոսքեր անծանոթ անցորդին 189
Բ. Թող զորությունը ձեզ խոսի 190
Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ 192
Մեծ ծերունին կխոսի 194
ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 197
ԲԱՌԱՐԱՆ 203

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Դանիել Վարուժան—Հ. Գ. Ռշտունի 209

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

Մասալին 223
Հայր, օրհնե՛ 226
Հաշիշ 227
Մոխիրներուն առջև 229
Հիվանդ է 231
Ավազանի ձուկերուն 233
Երազ և խոհ 235

ՑԵՂԻՆ ԱՒՐՏԸ

Զոն 238
Նեմեսիս 239
Խազինե վրա 250
Հայրենիքի սգին 250
Անի ավերակներուն մեջ 253
Ողբամուքիւն 260
Մարած օջախը 260
Օձը 264
Թխապարտները 267
Վաղվան բողբոջներ 270
Կարմիր հողը 272
Հորս բանտին մեջ 274
Կարոտի նամակ 276
Մեր կռունկը 278
Լվացարարուհին 280
Ալիշանի շիրմին առջև 281
Ջարդը 285
Հայհոյանք 295
Կիլիկյան մոխիրներուն 298
Կրկեսին մեջ 302
Վերածնուիթյուն 302
Ապրիլ 304
Գատվեր 305
Կռվի երթ 307
Աբժիվներու կարավանը 309
Հայրենի լեռներ 311
Առևանգիչը 314
Վահագն 316
Գասպ 319
Առաքյալը 321
Գյուցազնի մը սուրին 326
Վիրավորը 327
Հաղթողը 330
Սեբաստացիներու տիկինը 333

ԳՅՈՒՅԱԶՆԱՎԵՑԵՐ

Հովիվը 337
Արմենուհին 344

ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ

Նավասարդյան 360
Գեղեցկության արձանին 361
Վանատուր 361
Երեք քույրեր 364
Հեթանոսական 365
Կզեոպատրա 368
Օ՜ Տալիթա 370
Արևելյան բաղնիք 371
Գրգանք 374
...Ո՞վ Լալագե 377
«Օրհնյալ ես դու ի կանայս» 379
Հին սեր 381
Վենետիկ 382
Առաջին մեղքը 385
Անահիտ 387
Ականջներուն 389
Սապունական 390
Գինարբուքեն վերջ 392
Մեռած աստվածներուն 394
Բեգաս 396
Հարսը 403

ԳՈՂԳՈԹԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Աստուծո լացը 420
Լույսը 421
Անկայծ ճրագ 424
Բանվորուհին 424
Սպասում 426
Ընկեցիկը 428
Գատգամավորներս 430
Մեանող բանվոր 432
Խաբված կույսեր 434
Մեքենաները 435
Գիրքերուն մեջ 438
Դագար 440
Մայիս մեկ 443
Հրաշքին աղբյուրը 446

Լքում 450
Սիրտս է հոգնած 452
Վարուժնակիս 453
Անիշխանուհին 455
Մատյանն ահա... 456
Ո՛վ դար, ո՛վ դար... 457

ԿՆՈՋՍ ԱԼԳՈՄԸ

Դալար ճյուղ 462
Գուշակը 462
Հմայքի աղբյուր 463
Սպասում 464
Լոգանքեն վերջ 464
Դարձ 465
Լուսնին 465
Բարտիները 466
Աստղիկին 467
Արքայից արքան 467
Զոն 468

ՀԱՅԻՆ ԵՐԳԸ

Մուսային 471
Արտերուն հրավերը 472
Մշակները 472
Հարկիք 473
Հերկեր 473
Ցան 475
Տափան 476
Առաջին ծիլեր 476
Գարնան անձրև 477
Ցորյանի ծովեր 478
Կակաչներ 479
Անդապահը 480
Հասուն արտ 481
Հունձք 482
Հունձք կժողվեմ 484
Սայլերը 485
Ճարակում 486
Խաշբուռ 488
Կալեր 489
Կալերու գիշեր 491
Կամներգ 492

Միջօրե 493
Գուբը 494
Ծրնում 496
Օրհնություն 497
Վերադարձ 499
Ամբարներ 500
Մարագներ 500
Աղորիք 501
Անդաստան 502
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 505
ԲԱՌԱՐԱՆ 511

ՍԻԱՄԱՆԹՈ, ՎԱՐՈՒԺԱՆ

ԵՐԿԵՐ

СИАМАНТО

ВАРУЖАН

(Сочинения)

(На армянском языке)

Издательство «Советакан грох», Ереван, 1979 г.

Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Ա. Գ. Հակոբյան,
Կ. Ա. Շադրաքյան

ИБ № 1934

Հանձնված է շարվածքի 5.10.78։ Ստորագրված է տպագրության 12.03.79։
Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։
Տպագրություն՝ բարձր։ 31,15 պայմ. տպ. մամ. Հրատ. 22,85 մամ.։.
Պատվեր՝ 2420։ Տպաքանակ՝ 51000։ Գինը՝ 2 ռ. 10 կ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.